ԳԱՐԵԳԻՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Բ

Տ 9

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСКУССТВА

ГАРЕГИН ОВСЕПЯН

МАТЕРИАЛЫ И ИССЛЕДОВАНИЯ ПО ИСТОРИИ АРМЯНСКОГО ИСКУССТВА

ТОМ
II

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1987

7891

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԸՆԴՀ. ՄԱՍ

ԳԱՐԵԳԻՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅ ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

Ա 76071

ՀԱՏՈՐ
Բ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ
1987

ՀՀԳԱ-ԱՍՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՇՈՒՏ. ՊԱՀԵՍՏԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԳՄԴ 85դ (22)
Հ 872

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
բանասիրական գիտ. դոկտոր Ն. Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Գիրքը հրատարակության է երաշխավորել գրախոս՝
ճարտարապետության դոկտոր Ս. Խ. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆԸ

Բնագիրը պատրաստել և ծանոթագրել՝
արվեստագիտության թեկնածու Մ. Մ. ՂԱՉԱՐՅԱՆԸ

Հովսեփյան Գ.

Հ 872 *Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության /[Պատ. խմբ.՝ Ն. Հ. Մուրադյան].—Եր.: ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1987:*

Հ. 2 /[Բնագիրը պատրաստել և ծանոթագր. Մ. Մ. Ղազարյանը].—1987.—364 էջ, 76 թերթ նկ

Հատորում, ժամանակագրական կարգով, զետեղված են հոդվածներ հայկական մանրանկարչության, գերեզմանական կոթողների, կիրառական արվեստի ու առանձին հուշարձանների, հայկական ճարտարապետության վաղ շրջանի գմբեթների մասին:

Գիրքը նախատեսված է արվեստաբանների և ընթերցող լայն շրջանների համար:

Հ $\frac{4901000000}{703(02)-87}$ 88—86 ԳՄԴ 85 դ.(22)

© *Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1987*
Նանոթագրությունների համար



Հ. Գյուրջյան, Գարեգին Հովսեփյանի
դիմաքանդակը։ 1935 թ.։

զԴարօնից սուրբ Փրկիչն շինեաց»[4]: Եկեղեցու շինության համար բոլորի սկզբնական աղբյուրը Ղևոնդն է, իսկ սրա համար էլ, հավանորեն եկեղեցու շինության արձանագրությունը, որի հետ գրական առնչություն է նկատվում[5]. միայն Վարդանն է, որ ավելի տեղեկություն է տալիս քան Ղևոնդը և նորա հետևողները «Ջորս ըստ պատկերին» շարականի ծագման մասին:

Աշոտ պատրիկը Ղևոնդի կողմից որակվում է որպես «փոյթ յուսումնասիրութիւն» և Ասողիկ կողմից որպես «ուսումնասէր» մի իշխան. մենք առիթ ենք ունեցել ցույց տալու, թե ինչպես սույն Աշոտ պատրիկի խնդիրքով Դավիթ Հարքացի փիլիսոփան գրել է յուր հավատո ճառերից մեկը՝ «Դաւթի փիլիսոփայի ի խնդրոյ Աշոտոյ պատրիկի» վերնագրով[6]: Աշոտի կողմից առաջադրված հարցերը և Դավթի կարճառոտ լուծումը ապացույց են, թե իրոք այս պատրիկը պիտի լիներ ուսումնասեր և հետաքրքրվող՝ ժամանակը հուզող դավանաբանական-փիլիսոփայական խնդիրներով, ուրեմն և անկարելի չէր, որ կարող լիներ մի շարական գրել կամ գրել տալ ժամանակակից Սահակ Ջորափորեցուն, ինչպես վերագրում է սրան շարականների հեղինակների ցանկը[7]. սակայն մեզ պակասում են միանգամայն գրական ցուցումներ այդ մասին: Ընդհակառակը՝ շարականի բովանդակությունը և ուրիշ տվյալներ թելադրում են ոչ միայն հեղինակ ընդունել Գրիգոր Մագիստրոսին, այլև ստացող Հավուց թառի այն Ամենափրկիչ սրբության, որ համարվում է նույն՝ Աշոտ պատրիկի վերոհիշյալ պատկերի հետ, և այժմ պահվում է Ս. էջմիածնում:

Բ

Հայտնի է, որ Գրիգոր Մագիստրոսը շինել է Հավուց թառի Ամենափրկիչ կոչված եկեղեցին. մատենագրական հնագույն տեղեկությունը տալիս է Վանական, որ շատ քիչ արձագանք է գտել հետագայում, մինչև որ 1721 թվին, երբ Աստվածատուր կաթողիկոսը սկսել էր մի նոր եկեղեցի շինել, երևան եկավ հին շինության հետևյալ արձանագրությունը.

«Թուին ՆԿԲ ի թագաւորութեանն Դագկայ եւ ի հայրապետութեանն տեառն Սարգսի ես Գրիգոր մագիստրոս վերստին շինեցի զեկեղեցիս յիշատակ ինձ եւ ծնողացն իմոց. նա և ի տերանց աշխարհիս գանձագին արարի զվայրս սորա

---

[4] Հրատ. էմինի, Մոսկվա, 1860, 51:

[5] Նահապատեանց, Ստորագրութիւն Կաթուղիկէ էջմիածնի և այլն, 1842, 62:

[6] Արարատ, 1906, 270, 1907, 81, 274:

[7] Շարական, էջմիածին, 1861, եր. Բ, «Գրիգոր Մագիստրոսն զՋորս ըստ պատկերին (գրեաց, երգեաց), զոր այլք Խառհակայ Ջորափորեցւոյ տան»: Ձեռագրերի մեջ կան այս ցանկի օրինակներ, փոքր-ինչ տարբեր իրարից:

լերամբն եւ դաշտամբն եւ ամենայն կազմութեամբն որ ի սմա, քառադէմբ չորս անկամբ յաջամբ և ահեկամբ ի դիմաց և ի թիկանց. և տուաք յիշատակ անջնջելի արձանագրով եւ աշխարհական թագաւորի թղթովն եւ կայսերական կնքովն. հաստատեցաք ձեռագրով և հայրապետական նամակաւն. և ի նուագարտս տաճարիս, զոր շինեցաք ղհայրենիս մեր սուրբ եկեղեցւոյս՝ որ է Հայոց Թառ, հանգստարան եւ աւթարան անձեռագործ սուրբ պատկերին Յիսուսի Քրիստոսի որ ի փայտին, խնդրելին Յովհաննու աւետարանչին, հրամանաւ մաւր տեառն մերոյ սուրբ Աստուածածնին. եւ նորոգեալ հաստատեցաք վերստին զսուրբ ուխտս վերջինս քան զառաջինն. Աստ եղաք զվէմն հաւատոյ հիման սուրբ եկեղեցւոյ. Գրիգոր Վահրամ պատանին» (պիտանին. Ջամբռ և Շահխ.)[8].

Մենք չենք ուզում այստեղ զբաղվել արձանագրության գյուտի և բնագրի վերաբերյալ խնդիրներով. մեզ համար էականը ընդհանուր բովանդակությունն է, որ կեղծիք համարելու ոչ մի հիմք չունինք, թեև բնագրի և հնագրական ձևերի ճշտությունը պահված չէ. առաջին արտագրող քուրդ Հոհաննեսը հասկացողության չուներ կրճատումների կամ ուղղագրության ճիշտ պահպանության կարևորության մասին: Արձանագրության վավերականության մի արտաքին ապացույց կարող է ծառայել և այն հանգամանքը, որ Պռոշ իշխանի մեծ արձանագրությունը Գնդարդի վանքում 1283 թվի, ադրված է սորանից և առնչության է նկատվում երկուսի մեջ, որ հասկանալի է, երկու վանքերի խիստ մերձավորության պատճառով[9]: Սանոր է արձանագրության նաև, ինչպես կտեսնենք քիչ հետո, Մանուել Բջնեցին, որ ապրում էր ԺԴ դարու կեսերին:

Արդ, ո՞վ է այստեղ հիշված Գրիգոր Մագիստրոսը: Մեր մեջ հայտնի են այդ անունով և իրար ժամանակակից երկու անձնավորություն. երկուսն էլ Պահլավունի: Մեկը հայտնի մատենագիրն է, Վասակ Հոլոմի որդին, նաև Բջնեցի կոչված. մյուսը Կեչառիսի Լուսավորչի դռան արձանագրության Գրիգոր Մագիստրոսը, որդի Հասանա, որ շինել է Կեչառիսի եկեղեցին, դարձյալ «ի թագաւորութեան Գագիկ և ի հայրապետութեան տն Սարգսի». և նույն պիտի լինի Հասանա որդի Ապիրատի հետ[10]: Մեր այս արձանագրության մեջ հիշված Գրիգոր Մագիստրոսը, անկասկած, Վասակ Հոլոմի որդին է, հայտնի մատենագիրը. նրան է հատուկ կայսերական (բյուզանդական) հաստատությունների և պարգևների հիշատակությունը արձանագրությունների և թղթերի մեջ[11], որ

---

8 Ջամբռ. Սիմէոն կաթողիկոսի, 276: Շահխ, Բ, 294: Ալիշան. Այրարատ, 354:

9 Նույնատիպ արձանագրությունը տ. մեր Նորագյուտ կամ Փոշյանը, Վաղարշ., 1928, պատկ. 30 և եր. 102:

10 Մատթէոս Ուռհայեցի, Էջմիածին, 1898, 10—11: Վարդան Պատմիչ, Մոսկվա, 1860, 131:— Մխիթար Այրիվանեցի, Մոսկվա, 58:

11 Կոստանյանց, Գրիգոր Մագիստրոսի թղթերը, 1910, 104: Կեչառիսի նույնատիպ արձ. մեր Գրչ. Ար., Բ, 15:

հետևանք էր Բագրատունյաց անկումից հետո ստեղծված քաղաքական կացության և Գրիգորի ձեռք բերած դիրքի և ազդեցության։

Արձանագրությունը գրված է ոչ Նկթ (=1013) թվականին, այլ բովանդակության նայելով՝ Բագրատունյաց անկումից՝ 1044 թվականից հետո, երբ Գրիգոր բարձր պաշտոն էր ստացել Բյուզանդիայում։ Բայց եկեղեցին շինված է և կալվածք գանձագին արած նշանակված թվականին, այսինքն Գագիկ Ա-ի (981—1020) և Սարգիս կաթուղիկոսի (992—1020) օրով, ուստի և խոսք կա աշխարհակալ թագավորի Բզնի և հայրապետական նամակի մասին. մեկով հաստատված է, որ նա «ի տէրանց աշխարհիա», այսինքն թագավորական համարված երկրամասում, գնել էր այդ կալվածքը, իսկ մյուսով, թե վանքը Պահլավունյաց սեփականություն էր, ինչպես և քիչ հետո (ՆԶ=1031 թ.) թագավորական և հայրապետական հրամաններով եպիսկոպոսարան էր հիմնել Բջնի քաղաքում[12]։ Կայսերական կնիքով հաստատությունը կատարված է շատ ավելի ուշ, երբ նա հոգալ էր սկսել յուրաշնն կամ Պահլավունյաց ուրիշ եկեղեցիների մասին, որպիսին կնշեռւցքն էր, Մարմաշենը[13]։

Արձանագրության մեջ տեղեկություն չկա, թե փրկչական պատկերը, «որ ի փայտին» և որի համար հատուկ «աւեթարան» էր շինած, ծագմամբ ո՞րտեղից է. բայց նա հին է քան արձանագրությունը, հին է մինչև առաքելական շրջանը ըստ ավանդության։ Դրական հնագույն տեղեկությունը, բացի արձանագրությունից, տալիս է միայն Վանականը, ԺԴ դարու առաջին կիսում. յուր «Հարցմունք»-ի մեջ հայտնում է, թե Գրիգոր Մագիստրոսը «Դարուն եկեղեցի է շինել և ծախիւք պատկեր բերեր և անդ եդեալ»[14]։ Վարդանի Աշխարհացույցը, որ ԺԴ դարու երկրորդ կեսի գործ է, և համենայն դեպս ԺԴ-ի երկրորդ կեսից առաջ, Հավուց Թառը նույնացնում է Դարյունից եկեղեցու հետ. «իսկ ի կողմ Դաւնոյ Տարաւնէից մեծ եկեղեցին, որ է Հայոց Թառ, ուր կայ կենդանագիր պատկերն փրկչական»[15]. մենք կտեսնենք, թե ինչ է հասկանում հեղինակն այս խոսքերով։ Մանուել Բջնեցին[16], որ ապրում էր ԺԴ դարի վաթսունական թվականներին, այս սրբությանը նվիրած գանձի մեջ ունի ավելի մանրամասնություններ նորա ծագման և Հավուց Թառում հաստատվելու ավանդության նկատմամբ։ Սրբու-

---

12 Շահխ. Բ, 181։ Ալիշան, Այրարատ, 271։

13 Արձանագր. Կիլաւոխի մեր Գրչ. Ար., Գ, 21։ Գրիգոր Մագիստրոսի Թղթերը. Կ. Կոստանյանց, 1910, ԽԳ։

14 Չեռ. էչմ. № 1515։

15 Թոփչյան, Յուցակ Ձեռագրաց հայկ վարդ.-ի 1898, Ա, 77։

16 Տե՛ս մեր «Ագիրեկենց և նրանց շինարարությունը», Բանբեր էչմ. Գիտ. ինստիտուտի, 1922, 192—193։ Մանուել Բջնեցին մեկն է յուր ժամանակի ամենանշանավոր եկեղեցականներից. ծագմամբ եղիվարդի Ագիրեկենց իշխանական տնից. Բջնի և Արարատյան երկրի եպիսկոպոս. ստացել է ձեռագրեր յուր կողմից ոտանավոր հիշատակարաններով, նաև մի փառավոր, նկարազարդ Աստվածաշունչ Անիի Հովհաննես Ոսկիփոր եպիսկոպոսի ձեռքով գրված։ Բացի Ամենափրկչին նվիրած գանձից, Մանուելն ունի և ուրիշ գանձեր։

թյան ծագումը կապված է խաչելության պատմության հետ և համեմատ է արձանագրության. սուրբ կույսին մխիթարելու և նորա տրտմությունը մեղմելու համար՝

«Յովհաննէս երթեալ, զկիպարին առեալ, ի խաչէն մնացեալ.
Հրաշալի կոփեալ, դէմ խաչին կացեալ, արտասուօք հայցեալ.
Տուր տր ընծաեալ՝ մաւր քո կարաւտեալ զտիպ ածագրեալ»:

Տերը հրաշագործում է, և երբ կույսը տեսնում է, ասում է.

«Սա է ստուգագրեալ որդին իմ խաչեալ, փրկիչ անւանեալ»:
Ապա այս պատկերը «ի Հռոմ վերածի»:

4[17]. Իսկ Մագիստրոսի Գրիգոր Հայկազնի չետ ժամանակի
5. Շինէ տեղ ուխտի յիւրում կայանի ի Տարոն երկրի:
6. Ի սմանէ որդի Վահրամ պատանի ի Հռոմ յուղարկի.
7. Հնդրել փափաքի զտիպս այս հրաշալի տալ իւր նահանգի.
8. Իսկ սորին որդի յոյժ վերապատուի ի գահընն Հռոմի.
9. Եւ տրւեալ զինդրելի, զգանձն անթաքնելի առանց պատճառի:
10. Առեալ գայ անտի զտիպս այս տենչալի սըրտիւ բերկրալի:
11. Իսկ Մագիստրոսի մնծօ (S!) հանդիսի ընդ յառաջ շարժի.
12. Ի ծունկս անկանի զրոշմի քի յորդ արտասուելի.
13. Բարձեալ ի յուսի, բերեալ դնէ յուխտի, յարկ իւր կայանի.
14. Իսկ չետ այս բանի, չետ ժամանակի աւուրք անցանի:
15. Վասիլ արքայի՝ Գէորգ իշխանի, ոստ Բագրատունի.
16. Փոխելով անտի բերեն հրրճուալի տունս այրդին.
17. Յիւր նըմնարկելի ուխտըն հրաշալի որ Հայու թառի:

Ահա, և այլն[18]:

Մենք դիտմամբ այս ամբողջ հատվածը մեջ բերինք, որովհետև, թվում է, թե այստեղ ընագրի տողերի մեջ փոփոխություն է կատարվել (այսպես է նաև Երևանի ձեռագիրը). ութերորդ և իններորդ տողերը չեն կապվում իրար հետ. բոլորովին անկապ է նաև տասն և հինգերորդ տողը ներկա տեղում և խանգարում է 14 և 16 տողերի տրամաբանական միությունը. մինչդեռ եթե իններորդ տողից հետո դնենք տասն և հինգերորդը և սորան կցենք տասներորդը, ամբողջ հատվածի միտքը և տրամաբանական կապը կվերականգնվի: Եվ հիրավի նույն գանձի մի ուրիշ տան մեջ այս գրության համար պարզ ասված է, «մեզ տրւեալն ընծայ յարքայէն Վասլայ և Գորգ իշխանայ»:

Ըստ այսմ խաչելությունից հետո՝ պատկերն ընկել է Հռոմ (հեղինակը

[17] Հատվածը մեջ է բերված տան չորրորդ տողից:
[18] Ամբողջությունը տ. Հավելված 1:

հասկանում է բուն Հռոմը), «ուր կա շիրիմ հօտաոյ վիմին», Գրիգոր Մագիստրոս յուր Վահրամ պատանի որդուն ուղարկել է խնդրելու այդ պատկերը. Վահրամ պատիվներ է ստանում Հռոմա գահույքից. Վասիլ արքան և Գորգ իշխանը նվիրում են այս անթաքնելի գանձը. Մագիստրոս ընդառաջ է գնում սրբութեան՝ և ուսի վերա բարձած՝ բերում դնում է յուր կայանի՝ «ի Տարոն երկիրն», ուխտի մեջ. ժամանակ անցնելուց հետո՝ փոխադրում է յուր հիմնարկելի (թե՞ հիմնարկած) Հայոց թառի ուխտը:

Թովմա Մեծոփեցին ևս տալիս է տեղեկություն Ամենափրկչի ծագման և Հայաստան բերելու մասին. նա պատմելով յուր ուսուցիչ Հովհաննես Մեծոփեցու մահը Հավուց թառում, հայտնում է, թե գնացել էր այնտեղ երկրպագելու «առաջի պատկերին Ամենափրկչին, որ և դրոշմեալ եղև աղօթիւք սուրբ աւետարանչին Յովհաննու ի վերայ սրբոյն Դոդզոթայի ի խնդրոյ տիրամօր Աստուածածնին: Եւ յետոյ պարգևօք տուաւ Աշոտոյ թագաւորին և Հռոմոյ թագաւորէն, և բերեալ եղև ձեռամբ կիւրապաղատ իշխանին»[19]:

Ի վերջո Հավուց թառի վանքի և նորա սրբութեան մասին հիշատակություն ունի և Սիմեոն կաթողիկոս[20]. Մագիստրոսի շինած վանքի առաջին վանահայր համարելով նորա որդուն՝ Վահրամ—Գրիգորիսին՝ Նշ Ք=1023 թուին. բայց ուխտն ավելի հին է, Աշոտ պատրիկի հիմնած, նույնացնելով տեղի անունները ու սրբությունները: Հակասությունների մի բավիղ, որ թվում է, թե դժվար է միջից դուրս գալ:

Գ

Փորձենք լուծել հանգույցը, սկսելով նախ տեղի անունների շփոթությունից: Վանականի խոսքերը, թե «Դարոն եկեղեցի է շինել (Գրիգոր Մագիստրոս) և ծախիւք պատկեր բերեր և անդ եդեալ», ինքնըստինքեան չի պարզում տեղի խնդիրը, բայց այդ հասկանալի է դառնում մասամբ, Աշխարհացույցի խոսքերով, թե «իսկ ի կողմն Դառնոյ Տարաւնէից մեծ եկեղեցին, որ է Հայոց թառ», և ապա ավելի Մանուել Բջնեցու տեղեկությամբ, թե Մագիստրոս նախ «շինէ տեղ ուխտի յիւրում կայանի ի Տարաւն երկրի», ապա ժամանակ անցնելուց հետո, այնտեղից փոխադրելով «յիւր հմնարկելի ուխտն հրաշալի՝ որ Հայու թառի»: Այստեղ երեք հեղինակների կողմից տարբեր ձևակերպություններով հայտնված անունը նույնն է, ճիշտը Վանականի խոսքերի մեջ պահված՝ «Դարոն», որ չպետք է շփոթել Կոգովտի Դարոյն, Դարոյնք անունով ամրոցի հետ, սեփականության բազդատությունների, որտեղ և Աշոտ պատրիկը յուր եկեղեցին շինեց և նվիրեց «զկենդանագրեալ. զպատկեր մարդեղութեանն Քրիստոսի»: Վանակա-

19 Փարիզ, 1860, 61: Թովման ակնարկ ունի այդ պատկերի մասին նաև յուր մեծ հիշատակարանի մեջ. հրատ. Կոստանյանի, 1892, Թիֆլիզ, եր. 68:

20 Ջամբռ., 1873, 275:

նրանի հիշած «Գարուն»-ը նույն է Հասանգալեի հետ՝ Բասենում, ինչպես պիտի այդ Զաքարիա պատմիչ[21]։ Ալիշանի բերած մի հատվածից ևս երևում է, որ հին բժշկարանները հրաշալի համաստիւնու ծաղկի տեղը համարում էին Միրանյաց լյարը, որ գտնվում է Հասանգալեի մոտ. «Երթ, ասէ, ի Բասեն և խնդրեա զգիօղն որ կոչի Գարոյնս...»[22]։ Ժամ դարում այս վայրը Գրիգոր Մագիստրոսի սեփականությունն էր. այստեղ էր նորա կինը, Գրիգոր Վկայասերի մայրը, երբ որդին այցելության եկավ նորան։ Սրբությունների և նրանց տեղերի անունների նույնությունն ու նմանությունները, չփոթությունների ծագման գլխավոր պատճառներից մեկը պիտի համարել, որի մեջ ընկած տեսանք Ջամբռի հեղինակին, բայց նաև, երկու սրբությունների նույնացնողներին, որ կտեսնենք հետո։

Այժմ անցնենք պատմական անձնավորությունների հիշատակության խընդրին։ Գրիգոր Մագիստրոս Բջնեցու ծննդյան տարեթիվը չգիտենք. գիտենք, որ նա մեռավ մոտավորապես 1058 թվին[23]. գիտենք նաև, որ 1021 թվին[24], երբ սելջուկները առաջին անգամ մտնում են Անիի թագավորության սահմանները և ընդհարվում նորա հոր՝ Վասակ Պահլավունու հետ, նա պետք է երիտասարդական այնպիսի հասակում լիներ, որ հայրը տունն ու բերդը նորան հանձնել և ինքը պատերազմ գնալ կարողանար, բացի դորանից ինչպես Կոստանյանն[25] է մատնանշում, Վասակ Պահլավունին մոտավորապես 50 տարեկան պիտի լիներ այդ ժամանակ։ Այս հանգամանքները կշռելով՝ Գրիգոր Մագիստրոս պետք է լիներ մոտավորապես 40 տարեկան, եթե այդպես է սորա որդին Գրիգոր Վկայասեր, որ մեռավ 1105 թվին, ոչ միայն Կ. Պոլիս ուղարկվելիք պատանի չէր լս

նը ԺԴ դարից ոչ ուշ, հավանորեն հայսմավուրքական բնավորությամբ։ Արդյո՞ք դա այն Գորգ իշխանն է, որին հիշում է և Ուռհայեցին իբրև Վասակ Պահլավունու ազատներից մեկը, որ ժամանակակից կլինի և Վասիլ կայսեր, դժվար է ասել։ Հավուց թառի մի մասի «արքայաշէն» լինելու ավանդությունը կար մինչև ԺԸ դարու սկիզբը[27]։

Մանուկ Բջնեցու մնացած տեղեկությունները հասկանալի են վերև մեջ բերված արձանագրությամբ և մեր սրբության հետ կապված «Ջորս ըստ պատկերի քում ստեղծեր» շարականով[28]։ Պատկերի ծագման պատմությունը Հովհաննես առաքյալի ձեռքով, նույնանում է արձանագրության հետ. իսկ գանձի վերև մեջ բերված 6—8 տողերը՝ Վահրամ պատանու Հռոմ ուղարկվելու և վերադարձվելու հատվածով, առնված է արձանագրությունից և շարականից, միայն սխալ հասկացված և մեկնված նորա կողմից։ «Վահրամ պատանի» խոսքերը գանձի մեջ արձանագրության վերջին խոսքերն են, որ վերագրված են Գրիգոր Վկայասերին Մանուկ Բջնեցու կամ մի այլ աղբյուրի կողմից, իսկ Սիմեոն Կաթուղիկոսը, որ Վկայասերին նույնիսկ վանքի առաջին վանահայր է համարում Նշ=1023 թվին, պատմական անկարելիություն է, քանի որ այդ թվականներին նա մանուկ էր կամ նույնիսկ, գուցե ծնված չէր, մանավանդ գիտենք, որ Գրիգոր Վկայասերը երիտասարդական հասակում ամուսնացած էր և աշխարհական[29]։ Ուրեմն և «Գրիգոր—Վահրամ պատանին» խոսքերը Մագիստրոսի նույնանուն որդու հետ կապ չունին, այլ արձանագրության գրչի անունն է[30], պատահար միայն նույն Վկայասերի անվան հետ։ Ավելացնենք նաև, որ ամենևին հայտնի չէ, թե Վկայասերը պատանեկության ժամանակ Գրիգոր կոչված լինի. ընդհակառակ, հայերը որդուն «Վահրամ», «Վեստ Վահրամ» է անվանում[31]. Գանձակեցին էլ հայրապետական կոչման հետ է կապում Գրիգորիս անունը[32]։

Ինչ վերաբերում է Բջնեցու «իսկ սորին որդի յոյժ վերապատուի ի գահընն Հռոմի» խոսքերին, առնված է շարականից, Մագիստրոսն ընդունելով «զտիպն ածային», տոն է կատարում և երգում է՝

«Ջերգոյս շարականին, Ջորս ըստ պատկերին, որք ի կարգ խաչին։
Դու տր միածին զտիպ քո բերկրածին, տաճար քո կազմին.
Ջնորոգեալ անձին տաճարս այս լերին քեզ ի բնակութիւն։
Եւ կեցո զորդին, քու տր ծառային, զտիպ քո բերողին.
Ջպատուեալն ի Հռոմին, անդ ուր կա շիրիմ հօատոյ (s!) վիմին»։

---

27 Շահխ. Բ, 293։

28 Ամբողջությունը տ. Շարական, էջմիածին, 1861, եր. 495։

29 Ուռհայեցի, Վաղարշ., 154։

30 Այս եզրակացության հասնել էինք առանց ուշադիր լինելու Ալիշանի կարծիքին (Այր. 355), որ հետո նկատեցինք։

31 Կոստանյան, Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, 235, 237։

32 Ղուկ. հրատ. 89։

Մանուել Բջնեցին, գրելիս բառացի, շարականից առնելով այս հատվածը, քացարձակ հակասում է ինքն իրեն՝ Հռոմը նույնացնելով Իտալիայի մայրաքաղաքի հետ, մինչդեռ յուր իսկ խոսքերով սրբության ընծայողը Վասիլ արքան էր. Ժամ. դարու առաջին կիսում հայերը հարաբերություն չունեին Հռոմի հետ. համբրոնացին էլ շարականի «զոր ի Հռոմայ գահիցն վերապատուեցեր» հատվածում է Բյուզանդիայի մարդով[33]: Մանուելի սխալ բացատրության նպաստել է «կենցո զորդի ծառայի քո» խոսքերը, վերագրելով այն Մագիստրոսի որդուն, որ անկարելի է, ոչ միայն վերևի բացատրություններով, այլև ամբողջ շարականի բովանդակությունից դատելով, որ քիչ հետո կտեսնենք:

Թովմա Մեծոփեցու ասած տեղեկությունը մեր պատկերի ծագման ավանդությամբ նույնանում է արձանագրության հետ, իսկ Հայաստան բերելու մասով՝ բոլորովին տարբեր: Ո՞ր Աշոտ թագավորն է Հռոմից թագավորից նվեր ստացել և ո՞վ է կյուրապաղատ իշխանը, որի ձեռքով բերված է ընծան. արդյո՞ք ակնարկ է այդ Աշոտ առաջին (886 թ.) և Բարսեղ Ա կայսեր (867—886) հարաբերության[34], թե շփոթություն է Աշոտ պատրիկի անվան հետ կապված պատմության. ավելացնենք, որ Աշոտ Գ Ողորմածի անունով էլ կան խաչերի և կնիքի վավերագրերի ավանդություններ: Բայց Թովման այս տեղեկությունը չի քաղում անմիջապես գրավոր աղբյուրից, այլ նրանց վերա եղած բերանացի ավանդություններից, ուստի և պատմական տեսակետով պակաս արժեքավոր:

Աղբյուրների այսպիսի վերլուծությունից և համեմատությունից հետո՝ պարզ է, որ Հավուց թառի սրբության ծագման և Հայաստան բերվելու երեք աղբյուր ունինք՝ Վանականի հակիրճ տեղեկությունից զատ. արձանագրությունը, շարականը և մի անհայտ աղբյուր Վասիլ արքայի և Գորգ իշխանի հիշատակությամբ: Առաջին և վերջին աղբյուրների ժամանակագրությունն իրար չեն հակասում. պետք է պարզել միայն, թե «Զորս ըստ պատկերի» շարականը Աշոտ պատրիկի՞ն է, ինչպես ընդունում է Վարդան պատմիչը և նորագույն բանասերներից ոմանք, թե՞ Գրիգոր Մագիստրոսինը:

Եթե համեմատելու լինենք շարականը արձանագրության հետ, շատ մեծ աղերս կգտնենք նրանց մեջ. շարականի մեջ պարզ արտահայտված է այն միտքը, որ հեղինակը նորոգել է մի տաճար՝ «զնորոգեալս է մէնջ զտաճարս ընկալ քեզ ի բնակութիւն», որ միանգամայն համապատասխան է արձանագրության «վերստին նորոգեցաք», «և նորոգեալ հաստատեցաք զսուրբ ուխտս» խոսքերին: Շարականի հեղինակը շեշտում է նույնիսկ յուր շինած կամ նորոգած տաճարի առավելությունը կամ պայծառությունը առաջինի համեմատությամբ. «որ զվերջինս զայս հրաշազարդեցեր քեզ շափ բնակցութեամբ հիմնափայլեցեր, պանծալի և զփայլեալ փառս տանս այս վերջինս քան զառաջինն»:

[33] Թուղթ առ Լևոն, ինչպես և առ Ոսկան միաձևակեաց:

[34] Մոսկվա, 1861, 116: Յայսմաւուրքից առնված, հավանորեն:

Ավետիքյանի բացատրությունը[35] հին և նոր ուխտի, այսինքն քրիստոնեական և հրեական եկեղեցիների համեմատության իմաստով, անտեղի է և անհամապատասխան շարականի ամբողջական բովանդակության: Բառացի նույն են նաև արձանագրության «աստ եղաք զվէմն հաւատոյ հիման սուրբ եկեղեցւոյ» և շարականի «ուր եդին զվէմն հաւատոյ հիման սուրբ եկեղեցւոյ» խոսքերը, միայն այն տարբերությամբ, որ շարականի «ուր եդին» բյուզանդիան է ակնարկված, իսկ արձանագրության «աստ եղաք»՝ Հավուց խոռի տաճարը:

Արդ, ինչպե՞ս հասկանալ այս հարաբերությունը: Կոստանյանց[36] արձանագրության այս նմանությունը բացատրում է փոխառությամբ շարականից, որի հեղինակ, սակայն, Աշոտ պատրիկն է ընդունում, որ անհարիր է և անհասկանալի: Շարականը նվիրված է մի նորոգված և ոչ նոր շինած տաճարի նավակատյաց տոնին[37], ինչպես Աշոտ պատրիկի հիմնած Դարյունից եկեղեցին էր. սա մի շատ կարևոր հանգամանք է, որ չպետք է վրիպի մեր ուշադրությունից շարականի ծագման ժամանակը որոշելու խնդրում: Հասկանալի չէ նաև, թե ինչու՞ Մագիստրոսը յուր արձանագրությունը գրելու համար փոխ պիտի առներ շարականի խոսքերը, մանավանդ, եթե նա միայն արտաքին շենքի փառավորությունը կամենար հայտնել. այդ նմանությունը երկու գրության մեջ ներքին, հոգեբանական կապակցություն է մատնանշում, երկու գրությունների հեղինակի նույնությամբ հասկանալի և ոչ սովորական գրական փոխառությամբ: Արձանագրության հեղինակի վերջին նորոգած ուխտը առավել է, քան առաջինը, որովհետև այնտեղ է դրել «զվէմն հաւատոյ», որ Քրիստոս ներկայացնող պատկերն է. ճիշտ այդպես է մտածում և շարականի հեղինակը յուր նորոգած տաճարի համար: Ահա իսկական պատճառը երկուսի նմանության:

Բայց ավելին կա. շարականի բովանդակությունն էլ միանգամայն համապատասխան է Գրիգոր Բջնեցու քնավորության և հոգեբանության, ինչպես արձանագրությունը, այնպես էլ շարականը գրված է նորա կյանքի այնպիսի մի շրջանում, երբ նա բյուզանդական բարձր պաշտոնյա էր, այսինքն Բագրատունյաց անկումից հետո. Լաստիվերտցին 1045 թվին է նշանակում Գրիգոր Պահլավունու մագիստրոսության պատիվ ստանալու ժամանակը, ուրեմն և այդ թվականից հետո՝ մինչև Կոստանդին Մոնոմախի վախճանը (✠ 1954 թ.) պետք է նշանակել Հավուց թառի, Կեչառիսի և Մարմաշենի մասին եղած հոգացողությունները: Նա սիրում է թվել կայսերական գահույքից ստացած շնորհներն ու տիտղոսները. «Մագիստրոս» «ածապահ կիտաւն և դուլ»[38], «եկ տէր իմ, Վասպուրականի և Տարօնոյ և Մանազկերտի, Արճիշոյ, Բերկրոյ, Միջագետաց տէր

---

35 Բացատրություն Շարականաց, 1844, Վենետիկ, 521—524:

36 Արարատ, 1897, հուլիս «Հին հիշատակներ»:

37 Ամբողջությունը տ. Շարական, էջմ., 1861, 495:

38 Զեռ. էջմ. Գր. № 223: Հազարտողդյանի սկզբնավորության մեջ:

և մանուկներն մագիստրոս, վէստ և դուք»[39]: Ինչպիսի ուռուցիկ խոսքերով է հիշում Կոստանդին կայսեր շնորհած հրովարտակի և ոսկի մատանու մասին՝ Մարմաշենի Սոսթենես վանահորը: Ճիշտ նույն հոգեբանությունն է և շարականի «Կեցո զորդի ծառայի քո, զոր ի Հռոմայ գահիցն վերապատուեցեր» խոսքերի մեջ, որ որդուն չէ վերաբերում, ինչպես հասկացել է Մանուել Բջնեցին, այլ իրեն, հետևելով Սաղմոսի խոսքերին՝ «Կեցո զորդի աղախնոյ քո, նմա»: Այդպես էլ վարդանը վերագրել է Աշոտ պատրիկի որդուն, մինչդեռ այդ մասին խոսք չկա Վանանդի կամ նորան հետևող Ասողկի մեջ: Այս բոլորից հետո եզրակացնել կարող ենք.

ա. Աշոտ պատրիկի և Հավուց թառի Ամենափրկչի նույնության համար չունինք ցուցում հին աղբյուրներում. այդ շփոթությունը ծագել է տեղերի և անվան նմանությամբ, այն էլ ուշ ժամանակներում:

բ. Աղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանց տեղեկությոն և նկարագրության նյութ եղած Ամենափրկիչը ծագմամբ կապված է Գրիգոր Մագիստրոսի հետ և ոչ Աշոտ պատրիկի. տեղով և ծագման ժամանակով տարբեր են երկու Ամենափրկիչները:

գ. Հավուց թառի արձանագրության և շարականի աղերսն ապացույց է նրանց հեղինակների նույնության, որ Գրիգոր Մագիստրոսն է և գրել է յուր կյանքի այն շրջանում, երբ բյուզանդական բարձր պաշտոնյա էր:

Դ

Մագիստրոսի արձանագրությունից տեսանք, որ յուր շինած տաճարից առաջ՝ Հավուց թառում եղել է մի այլ եկեղեցի. Այրիվանեցին ՆՇ—ՆԿ (1001—1011) թվականների մեջ նշանակում է. «շինի Հաւոյ թառ ի Դէորգ իշխանէն Քեղոյ». արդյո՞ք սրան են վերաբերում արձանագրության խոսքերը առաջին ուխտի մասին, թե մի ավելի հին շենքի, դժվար է ասել, համենայն դեպս ավանդության կար ուխտի ավելի հնագույն ծագման նկատմամբ: Մանուել՝ Բջնեցին «աթոռ Տրդատայ (Տրդատայ թա՞խտ) և մեր Պարթևայ որդոյն Անակայ», «դիր Մեսրոպա» և «տեղ Սահակայ թարգմանչացն» է համարում. մինչև իսկ բառախաղությամբ «թառ թարգմանութեն» կոչում: Նույն վանքում գրված հիշատակարանի հեղինակ ևս, «Նաթանայէլ եպիսկոպոս Հայոց թառոյ», որ պետք է ապրած լինի ԺԴ դարի երկրորդ կեսին կամ ԺԵ-ի վերջերին, որի խոսքերը առիթ կունենանք մեջ բերելու, կրկնում է նույն մտքերը և ապա ավելացնում, թե «յետոյ նորոգեաց սպարապետն Գորգ իշխան»: Առհասարակ Գառնիի այդ շրջանի

39 Կոստանեան, Գրիգոր Մագիստրոսի թղթերը, 213: Տե՛ս և նորա արձանագրությունը Կշիռատաց վանքում, մեր Գրչ. Աբ., 21:

վանքերի՝ Գեղարդ, Աղբոց Ս. Աստվածածին, Հավուց Թառ, Հնութիւնը կապում են Լուսավորչի և Սահակ Պարթևի հետ[40]։

Այս ավանդությունների մատնանշած ժամանակից ոչ մի մնացորդ չունինք Հավուց թառում. որմերի և թափված հին քանդակների հնությունը հաստում է ԺԴ—ԺԱ դարերը միայն. 1679 թվի մեծ երկրաշարժը հատկապես կերպարանափոխ է արել վանքի արտաքին տեսքը[41]։ Ընդհանուր տեսարանի մասին գաղափար է տալիս պատկեր 1, որ նկարված է հարավային կողմից. պարսպի մեջ նկատված ավերակների խմբից առաջինը պետք է լինի Մագիստրոսի շինել տված, պատի ստորին մասի մնացորդից դատելով. արևմտյան կողմից մնում է դեռևս գավթի բարձր կամարը, իսկ հատակին՝ դրսից և ներսից հաստ սյուների մնացորդներ, խոյակներ (պատկ. 9) ու խարխոխներ և բազմաթիվ քարեր քանդակներով, որ թվում է ավելի հին, քան ԺԴ դարու գավիթներն են. տարաբախտաբար դրանց լուսանկարները չունինք, որ կախված էր վիթխարի քարերի դասավորությունից և մասամբ պեղումներից, որ իմ կարողությունից վեր էր. բայց եթե ստուգվի մեր միտքը, կունենանք հնագույններից մեկը՝ ԺԴ դարում տիրապետող, բայց ԺԱ դարում արդեն գոյություն ունեցող ժամատուն—գավիթներից, որի մի օրինակը Հոռոմոսի վանքն է, Հովհաննես—Սմբատի շինած՝ ըստ արձանագրության 1038 թվին։ Այս գավիթ կամ ավելի հավանական է նորա տաճարի հարավային պատին պիտի լիներ Քուրջ Հովհաննեսի ընդօրինակած արձանագրությունը։ Արևելյան կողմից սորան կըցված տաճարը, հավանորեն Ս. Կաթողիկին էր, որ Ամենափրկչի հետ հիշվում է արձանագրությունների և հիշատակարանների մեջ ԺԴ դարի սկզբից և հետագայում՝ ԺԵ և ԺԶ դարերում. նաև Աստվածածին, Ս. Հարություն, Զանգակատուն։

Կրիգոր Մագիստրոսի եկեղեցուն կից է արևելահյուսիսային անկյունից մի այլ եկեղեցու ավերակի մնացորդ, որ հավանորեն Գեորգ իշխանի եկեղեցին է, իսկ սրանց հյուսիսակողմը, բարձր պատերով ավերակը՝ Աստվածատուր կաթուղիկոսի սկսած և լեզգիների արշավանքի հետևանքով[42] կիսատ մնացած շենքն է որի մանրամասնությունների մասին գաղափար է տալիս պատկեր (պատ. 1), ներսի աբսիդի և կից ավանդատների հետ միասին։ Պատերի մեջ գործադրված են երբեմն և հին եկեղեցիների քանդակներից. թափած կան դուրսը կամ հատակի վերա, ինչպես աստղաձևերը, իրենց մակերևույթի քարերով՝ ԺԵ դարի, հավանորեն զանգակատան շենքից, ոչ ուշ քան ԺԴ դարի առաջին քառորդը։ Այջ և ձախ թևերի պատերի մեջ (պատկ. 1) հագցրած խաչքարերը,

---

40 Գեղարդի մասին տե՛ս Հովե. կար. Դրասխանակերտցի, Ղուկ. հրատ., 335։

41 Շարժի մասին Զեռ. էջմ. № 548, 347։ Զալալյան, Ճանապ. ի մեծն Հայաստան, Տիխիս, 1842, բ, 127։ Նաև մեր «Նաղդաչյանք», Ա, 258։

42 Նահխ., բ, 293, Զեռ. էջմ. № 616, 205ա։

աջ դասի ավանդատան դռան ճակատաքարի վարդյակը և ուրիշ շատերը ԺԴ դարի գործեր են, իսկ մնացածը, գուցե, ավելի հին։ Մնացորդներից մեկն է պարսպի պատի մեջ հագցրած խաչքարը (պատկ. 2), որ ուշ չէ, քան ԺԱ դարի սկիզբը. մի ուրիշ ավելի փոքր խաչքար (պատկ. 3) նույնպես պարսպի մեջ հագցրած, արևելյան կողմը, 1081 թվի արձանագրությամբ[43].

Յիշէ Քս զՀասան զորդ /ի Սմբատա զծա/
ոա քո և ողորմեա նման ամեն /թվ. ՇՀ էր։

Արձանագրության յուրաքանչյուր տողը կազմում է խաչի շրջանակի մի կողը, երկու գծի մեջ առնված. սա միակ գրավոր հիշատակարանն է Մագիստրոսի արձանագրությունից հետո՝ ԺԱ դարի ընթացքում, որ ունինք Հավուց Թառում։

Բլրի արևմտյան ծայրին (պատկ. 1, 3, 6), (պատկ. 4) կիսականգուն ներկա շինքը, թեև չունի շինության թվականով արձանագրություն, բայց անպայման ԺԴ դարի շինք է, շարվածքով, գունդգունդ քարերով (սիրելի ԺԴ դարի, հատկապես Անիի շրջանի, ճարտարապետության մեջ) և սակավաթիվ զարդաքանդակներով, դռան և լուսամուտների շուրջը (պատկ. 5 և 6). երկրաչափական այն հյուսվածքը յուր քանդակման նմանակով, որ մենք նկատում ենք արևմտյան դռան գլխին որպես լուսամուտի շրջանակ, հատուկ է ԺԴ դարին (պատկ. 7), (պատկ. 5)։ Բայց արձանագրությունների ուսումնասիրությունն էլ ցույց է տալիս, որ շինքը ԺԴ դարի առաջին կեսի գործ պիտի լինի։

Տաճարի արևմտյան պատին քանդակված արձանագրությունները կապ ունին շինության ծագման ժամանակի հետ. դռնանից առաջինը, թեև հիշատակություն չունի շինության մասին, բայց յուր գրված տեղով, դրանդիի դուրս ընկած կամարի վերա (պատկ. 7), (պատկ. 5) ինքնին ապացույց է, որ եկեղեցու նախնական արձանագրություններից մեկն է. ոմն Կուկորի կողմից, որ յուր տունը, այգին, ջրաղացը և երկու աղբին հող նվիրում է Ամենափրկչին։ Վանքի արևմտահյուսիսային անկյունում մի խաչքարի մոտ սուկն Կուկորի գերեզմանաքարն է, հետևյալ արձանագրությամբ.

Թվ ՈՂԵ. /փոխնցաւ/ պարոն Կուկորն
ի քս յե/շեցէք յա՛ղաւթս ձեւ։

«Պարոն» տիտղոսը ԺԴ դարում նորա իշխանական ծագումն է հաստատում. որոշել չենք կարող որ տոհմից, բայց, հավանորեն, Պահլավունյաց մի ճյուղի, որոնց սեփականությունն էր այս վանքը Սիմեոն Երևանցու և այլ ավելի հին գրավոր հիշատակարանների վկայությամբ, որ կտեսնենք հետևյալ գլխի մեջ։

[43] Տե՛ս և մեր Դրլ. Ար., Գ, եր. 16, 22։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ

II 76021 A

Կուպրի արձանագրությունից բարձր, լուսամուտի ձախ կողմը, Մխիթար «վարպետ»-ն է, որ այստեղ քարգործ, Հարտաբապատ է նշանակում. նա «հրամանաւ Իրիգորիսի» սալել է եկեղեցու հատակը։

Դրանից ավելի բարձր արձանագրությամբ՝ ուն «Մարգիս Երևանալ (ոյրդի Մէհնեվանա թոռն Մարեմտորդ» միաբանել է Հավուց թառին և յուր արդար ստացվածքից «աւժանդակ» եղել «ի շինութի եկեղեցւոյ»։ Արդ այս Մարեմտուր հաղվագյուտ անունը կրկնված է նաև մեթձակա Գեղարդա վանքի Ս. Աստվածածնի արձանագրությունների մեջ, որ մի տեսակ ժողովածու է, կարծում ենք, ԺԲ դարի կեսերից հետո նվիրատուների արձանագրությունների, արտագրված այստեղ 1258 թվին քարայրի արևմտյան պատի նորոգության ժամանակ. դրանից մեկը թվագրված է ՈՒՉ=1177-ին, որով հայտնվում է, թե Ստեփանոս Կոտայեցի նվիրած Քարափատղոցը «խառնեցաւ Մարեմտորդն մեծաւ աշխատութիւք», այսինքն երկու նվիրատուների պարգևած կալվածքը խառնում և մի ամբողջության են կազմում։ Ստեփանոսն առանում է չորս պատարագ, իսկ Մարեմտուրը ութ՝ «ւգ։ աւրն հաւրն ու ւգ։ աւր մաւրն եւ ւբ։ աւր Սիրիրբախտին»[44]։ Անհավանական չէ, որ ԺԲ դարի կեսերին ապրող այս Մարեմտուրի թոռը լինի մեր շինության օժանդակող Մարգիսը։ Այս բոլոր հանգամանքները ի մի կշռած, կարծում ենք, որ եկեղեցին շինված է ԺԲ դարի առաջին քառորդին[45]։

Սույն եկեղեցու արձանագրությունների մեջ երկու անգամ հիշատակություն կա Հավուց թառ և Ամենափրկիչ անվանակոչության. առաջինը պարզապես ուխտի ընդհանուր անունն է, որ հաճախ կրկնված կտեսնենք հիշատակարանների մեջ ԺԲ դարի յոթանասունական թվականներից սկսած. արդյո՞ք Ամենափրկիչ չէր կոչվում հենց այս շենքը, որով և կարելի էր կասկածի ենթարկել մեր եզրակացությունը նորա ծագման ժամանակի նկատմամբ։ Այսպիսի ենթադրության դեմ է միանգամայն քուրդ Հովհաննիսի պարզ վկայությունը Մագիստրոսի արձանագրության տեղի վերաբերմամբ. «Վերոյ գրեալ արձանս գրեալ կայր ի վերայ սուրբ Ամենափրկչին արքայաշէն դարբասին դուրս գոյս հարաւակողմն ի վերայ մեծ լուսանցոյց պատուհանին, որ ի շարժմանէն խախտեալ կայր»[46]։ Այստեղից պարզ է, որ Ամենափրկիչ պիտի կոչված լինի մագիստրոսաշեն եկեղեցին, որի վերա և բնականաբար, քանդակված էր արձանագրությունը. անհասկանալի կլիներ, եթե բլրի վերա շենքը սրբության սկզբնական «աւթարան»-ը լիներ և արձանագրությունը տարբեր տեղում գրված։

---

44 Մխիթարեան Ստեփ. վարդ. Մատենագրութիւն Այրի վանից սրբոյն Գեղարդայ. Վաղարշ., 1873, եր. 49։ Ստուգված և լուսանկարված մեր կողմից։

45 Ճարտարապետ Թորամանյանցն ևս հաստատեց մեր կարծիքի ճշմարտությունը ի նկատի ունենալով քարերի դասավորման տեխնիկան ԺԲ դարում։

46 Շահխ., Բ, 293։ Ալիշան, Այրարատ, 355։

Շնորհի ԺԴ դարի գործ համարելու դեմ մի ուրիշ դժվարություն ևս կա, որ պիտի պարզել. արևելյան պատի վերա լուսամուտի աջ կողմից ոմն Գրիգոր կատեպանի արձանագրությունն է (պատկ. 8), (պատկ. 6) լուսամուտի կողքին.

Ես Գրիգոր կատէպանս էտու իս դին
ի սբ ուխտս եւ սպասաւորքս գրէցին
իբ ժամ։ ի տարոջն կատարիչքն
ապրնին յայ ամէն[47]։

Ո՞վ է այս Գրիգոր կատեպանը։ Հայտնի է, որ Բագրատունյաց անկումից անմիջապես հետո՝ Անիի կառավարիչներ նշանակվեցան մի շարք բյուզանդական պաշտոնյաներ՝ կատապան (κατεπάν) տիտղոսով. դոցանից վերջիններն էին «Բագրատ Հայրն Սմբատայ և Գրիգոր որդի Բակուրանին, վրացի ազգաւ», որոնց ձեռքից Արփասլանը խլեց Անին[48]։ Կատեպան և կատապան բառերը արտաքին կազմությամբ մոտ են իրար և նույնանալ կարող են. բայց ո՞ւմն են նրանք այստեղ և ըստ նշանակության. ժողովրդական գավառաբարբառի հետ կապված չէ՞ ընծայաբեր Գրիգորի այդպիսի կոչումը։ Արարատյան բարբառով «կատէպան» նշանակում է այգեպան. հետևյալ գլխի մեջ կտեսնենք «շրխտ» Գրիգորի արձանագրությունը, որ հովիվ է նշանակում։ Ինչպես էլ լինի, այս արձանագրությունը ապացույց չէ, թե եկեղեցու հնությունը մինչև ԺԴ դար կարող է հասնել։ Հնագրական տեսակետներով նա համապատասխան է ԺԴ դարին. տառերի քանդակման եղանակից և ձևերից զատ՝ աչքի են ընկնում բազմաթիվ կցվածքները (ligature) այս փոքրիկ արձանագրության մեջ, որ բացի «յայ» և «ամէն» բառերից, որոնք ավելի հին են, հատուկ են ԺԴ դարին, և շատ հաղվագյուտ ավելի վաղ ժամանակների համար. եթե իրոք այս արձանագրությունը Բակուրանի որդի Գրիգորինն է, նշանակում է արտագրված է այն՝ ԺԴ դարում հին վավերագրերից, և եկեղեցու ծագման համար նշանակություն ունենալ կարող չէ։

Այս եկեղեցուն՝ հարավային կողմից՝ կցված է մի այլ երկարավուն մատրաձև շենք, որ ծածկել է նրա մի արձանագրության կեսը, լավագույն ապացույցը, որ ավելի հետո է ծագել։ Մի հիշատակարանի համաձայն՝ ՉՀ=1321 թվին[49] «Կարապետ որդի Տիրատրոյ ի շահաստան դղեկէս Դառնոյ» մի ավետարան է նվիրել «ի մեր նորաշէն եկեղեցին ի սբ Կարապետն», որ կարծում ենք այս մատուռը պիտի լինի (պատկ. 5 և 6)։ Շինության արձանագրության մի մասը

---

47 Ընդգծված տառերը կցված են այստեղ և ուրիշ տեղերում։

48 Ոտնայեցի, Վաղարշ. 1898, 148։ Ալիշան, Շիրակ, 97։ Մանրամասնություններ Գրիգոր Բակուրանի մասին Nic. Jac. Marr, Arkayn. Mongolskoe Nasvanie Xristian. S. Peters. 1905, 20 և շար.։

49 S. Ավետիքեան Սմբատ, Յուցակ Ն. Ջուղայի № 154 (=№ 34 Ամենափրկիչ վանքի)։

միայն ընկած է ցած, մյուս մասերը կորած. այս սուրբ Կարապետը չպետք է շփոթել ՈԿԲ=1213 թվին շինված գերեզմանական խաչքար՝ նույնանուն մատրան հետ, որ Գրիգորես և յուր աշակերտակիցները կանգնեցրել են իրենց ուսուցիչների հիշատակին պարսպից դուրս, արևելյան կողմը, բավական հեռավորության վերա. նորա մոտ է և մի այլ խաչքար—մատուռ, ԺԹ դարի սկզբից, որոնց մասին խոսք կլինի հետևյալ գլխի մեջ։ (պատկ. 11,13), (պատկ. 8)։

ե

Այժմ փորձենք ի մի ամփոփել այն տեղեկությունները, որոնք վերաբերում են վանքի և դրա հետ Ամենափրկիչ սրբության պատմության, որով կարևոր ապացույցը տված կլինենք, թե անընդհատ պահվել է այն յուր տեղում մինչև ԺԸ դարի կեսերը և ապա փոխադրվել էջմիածին, ուր և մնում է այժմ։

Մագիստրոսից հետո՝ ավելի քան մի դար որևէ տեղեկություն չունինք ոչ վանքի և ոչ փրկչական պատկերի մասին, բացի 1081 թվականի այն փոքրիկ խաչքարի արձանագրությունից (պատ. 4), (պատկ. 3) որ մեջ բերինք նախընթաց գլխի մեջ։ Ո՞վ է Սմբատա որդի Հասանը, դժվար է ասել, բայց հավված ենք Պահլավունյաց տան պատկանող մի անձի հիշատակ համարել այդ խաչը, որոնք ամենայն հավանականությամբ պահպանել են իրենց իշխանական և հոգևոր կապը վանքի հետ մինչև վերջին դարերը, ըստ վկայության Սիմեոն կաթուղիկոսի, որ հիմնված էր պատմական ավանդության վերա, և որի համար հավանական ապացույցներ ունինք ԺԳ և ԺԵ դարերում[50]։ Արձանագրությունների և գրավոր հիշատակարանների պակասությունն ընդհանրապես ԺՍ դարի կեսերից սկսած մինչև ԺԲ-ի կեսերը, երբ սկսում է հոգևոր կյանքի մի նոր բողբոջ, հատուկ է մեր բոլոր վանքերին, սելջուկյան սարսափների տակ դադարել էր, գրեթե, հայ շինարարությունը, դրա հետ և վիմական տարեգրությունը մինչև ԺԲ դարի վաթսունական թվականները։ Մեր ձեռք Այրիվանքում ևս այս շրջանի հնագույն արձանագրություններն սկսվում են 1163 թվականից։ Դարի վերջին տասնամյակից մի նշանավոր ձեռագիր ունինք այդ վանքում, որի հիշատակարանի մեջ խոսք կա և Աստվածընկալ սուրբ նշանի մասին, որ կարծում ենք մեր պատկերն է, խաչի վերա փորագրված[51]։

---

50 Փիդալեմյան, Նոտարք, 221։ Ձեռ. էջմ. № 1124/2838 (Հավել. 2)։

51 Ձեռ. էջմ. № 482 փ. ց. մեծագիր և հին Տոնապատճառը, գրված ՈԼԹ = 1190 թվին Թղթի վերա, արևելյան խոշոր բոլորգրով (անցման երկաթագիր), Այրիվանքում. տե՛ս մեր Գրշ. Աբ., Գ, 65։ ՈՆԹ=1200 թվին նվիրված է «յածընկալ սբ նշին» Գրիչ Փիլիպպոս քահանայի ձեռքով. «Հրամանաւ տն Գրիգորիսի սպասաւորի սբ նշանիս, որ խոսանում է չորս պատարագ նվիրատուին. յուր մահվանից հետո, «սպասաւորք սբ նշանիս» պարտավոր են կատարել այդ խոստու-

Արդյո՞ք նույն չէ սա այն Մխիթարի հետ, որ հատուկ արձանագրություն ունի ժամատան դուրսն ընկած խոյակներից մեկի վերա, որի համաձայն հիմուն դահնկան է նվիրել վանքին և մի ժամ սուացել տարին. (պատկ. 9), պատկ. 7)

1. ես Մխիթար սպասաւոր տր Վրբա
2. նխի հաու ։ծ։ դահնկանի տունս
3. եւ հաուն ինձ Ա։ աւր ժամ ի
4. տարոջն։

Այդ դեպքում պետք է կարծել, որ արձանագրությունը կատարված է նորա երիտասարդության ժամանակ, ԺԲ դարի վերջին տասնամյակներում, երբ նա աշակերտ կամ սպասավոր էր տեր Վրթանիսի մոտ և հետո արդեն վարդապետ դարձավ ԺԳ դարի առաջին քառորդին։

Հավուց թառի առաջին պարզ հիշատակությունն ունինք «Յովսէփոս Նորոգ վկայի» պատմության մեջ, որ նահատակված է Դվին քաղաքում Հայոց Ո. Ժ. և Ի.(= 1170) թվին, «յամսեանն Ահոկի, որ ասր քսան էր», և որի մարմինը Սարգիս անունով մեկը, որդի Ջավախի, բերում և թաղում է «յուխտն հռչակաւոր ի հաւուց թառ», «յարեւելից կողմանէ Հանդէսի դիւղաքաղաքին Դաունոյ»։ Ժամանակակից Դավիթ քահանան Մխիթար անունով մեկի խնդիրքով, որին Ալիշանը վանքի առաջնորդ կամ միաբան է կարծում, իսկ Գալուստ Տ. Մկրտչյանը (Միաբան) նույնացնում է Գոշ Մխիթարի հետ, գրել է նորա վկայաբանությունը, կցելով և մի սրտառուչ ներբող[52]։

ԺԳ դարի սկզբին՝ 1205 թվին, հիշվում է «Եղիայ ի Հաւուց թառոյ այն որ գեղեցիկ կարգաւորեաց զպաշտօն վանից իւրոց, որպէս թէ ամենեցունց ընդ մի բնաւն հնչել. եթէ բարձր և թէ ցած և ոչ հարստահարել ընկեր զընկեր»[53]։ Նա ևս մասնակից էր Լոռվա ժողովին, իբրև մեկը ժամանակի նշանավոր վարդապետներից։ Նա հիշված է 1214 թվին նույն վանքում գրված ձեռագրի հիշատակարանի մեջ, «ածապատիւ և կենծայնուն վարդապետ» տիտղոսներով. ձեռագրի ստացողներն են Թադեոս և Հայրապետ կրոնավորները, գրված և նկարազարդված Իգնատիոսի ձեռքով «ի վանքս որ կոչի Հաւուց թառ, ընդ հովանեաւ սբ կաթողիկէիս և մեծահռչակ սուրբ նշանիս Ամենափրկիչ անուն կոչեցեալ, յառաջ-

---

մը։ Ձեռագիրը նշանավոր է և յոր կազմով Ոն թվականից Յոդիկ անունով մի կնոջ արդյունքով և Ակոբ քահանայի ձեռքով։

52 Ձեռ. էջմ № 3777, 462բ։ Ձեռագիրը ծագմամբ, գրչին, ժամանակակից է դեպքին։ Վկայաբանությունը հրատարակել է Գալուստ Տ. Մկրտչյան, Արարատ, 1897, 42։ Քաղվածքներ ունի ներբողի հատվածներով Ալիշան. Այ., 356, 358։ Վարդան Պատմիչ հիշում է Հովհաննի Նահատակությունը «յամսեան Ահոկի ի քսան», առանց հիշտ տարեթիվը նշանակելու՝ 1168—1172 թթ. մեջ։ Քաղվածորեն տե՛ս և Յայսմաւուրք. Մարգաց, ԺԴ. և Յունիս ԺԲ։ Հովհաննի վկայի պերեդմանի մասին հիշում է և Մեծոփեցին (Հրատ. Փարիզ, 61։)

53 Գանձ., Ղուկ. հրատ., 1909, 162։

նորդութեան սուրբ ուխտիս, հովի և ամենաբարւոյ Պաւղոս վարդապետի...»։ Վանքի վարդապետներն են եղիա և Մխիթար, իսկ փակակալը Հակոբ ընտիր քահանան. հիշված են և ուրիշ միաբաններ, որոնց թվում և «Դէորգ»[54]։ Այս ընծայաբերության համար ունինք և հատուկ արձանագրություն բլրի վերայի եկեղեցու հյուսիսային պատին, բարձր լուսամուտի տակ երկրորդը (պատկ. 10)։

1. Կամաւն այ մեք նուաստ քահանայք Թադէոս եւ Հայրապետ ստացաք աւետարան
2. զարգարեալ ոսկով եւ արծաթով[55] ի մեր արդեանց եւ տուաք ի սբ ուխտըս եւ այլ արդիւնք եւ սպ
3. ասաւորքս եւտուն։ ւԲ։ աւր ժամ մեզ ամի ամի կատարիչքն աւրհնին ի տէ[56]

Եղիա և Պողոս վարդապետներն էլ հիշված են Հավուց թառի մի ուրիշ արձանագրության մեջ, պարսպից դուրս, արևելյան կողմը գտնված խաչարձան մատուռի հյուսիսային պատին (պատկ. 11)։

1. Այս արձան սբ աւծեալ աւր
2. եամբա քի կանգնեցաւ ի վերա
3. գերեզմանաց ածասէր քահանա
4. ի Յոհանիսի փակակալի սրբոյ կա (փեցացած)
5. Թողիկէից եւ երկու հղբարց իւր (փեցացած)
6. թաղեալք ընդաջմէ եւ ընդ ահէկէս
7. Յովսէփա եւ Վարդա ձեռաւք սպասաւուրա(ց)
8. բանի եղիաի եւ Պաւղոսո հւ միաբան հղբարց
9. աղաչեմք յիշեցէք ի քս.

Արձանագրությունը պետք է ավելի հին լինի, քան 1214 թվականի հիշատակարանը. որովհետև եղիան այստեղ Պողոսի հետ կոչված է միայն «սպասաւոր բանի», մինչդեռ 1214 թվին «ածապատիւ և մեծանուն վարդապետ».

---

54 Ալիշան, *Այր.* 356։ Բառեղ Սարգսյան, *Մայր ցուցակ Վէնետ.*, 513։ Իգնատիոս նկարչի մասին տե՛ս մեր հոդվածը, Սիոն, 1932, հունիս, նև.։

55 «Զարդարեալ ոսկով եւ արծաթով» բառերը միայն կազմին կարող են վերաբերիլ. Հայոց մեջ շատ հազվագյուտ է արծաթի գործադրությունը մանրանկարչության մեջ։

56 Այս և Հավուց թառի արձանագրությունների, գրեթե, ամբողջությունը առաջին անգամն է մատչելի դառնում բանասիրության. Ալիշանը յուր Այրարատի մեջ հրատարակել է միայն մի քանի նեղը, որ ցույց են տրված համապատասխան տեղերում, ծանոթությունների մեջ։ Առաջին անգամ գրի ենք առել պրոֆ. Մառի հանձնարարությամբ, երբ 1910 թվին աշխատակցում էինք Նորան Գառնիի «Ցրտաշունչ թախտի» պեղումների ժամանակ. բայց հետո կրկին գրի ենք առել, լուսանկարել և վերստուգել երրորդ անգամ այս աշխատության համար։

առաջին որակումը գործածական էր միայն մեծ եպիսկոպոսների և կաթողիկոսների համար։ Հենց հիշատակարանի հեղինակ և գրիչ Իգնատիոսը նույն «աստուածապատիս» տիտղոսը գործադրում է Խծկոնից Աբաս եպիսկոպոսի համար, որի օրով վանքին նվիրաբերված է նորա գրած և նկարազարդած մի ուրիշ ավետարան[57]։ Հավուց թառի փակակալն է՝ ըստ 1214 թվի հիշատակարանի՝ «Յակոբ ընտիր քահանայ», որ հավանորեն արձանագրության մեջ հիշված Հովհաննես քահանայի հաջորդն էր, և որի գերեզմանին տափակ քարը գտնվում է դեպի բլրի եկեղեցին տանող ճանապարհի վերա, մեծ ավերակների և այս տաճարի մեջ. «Յակոբ /Ւաճանե/ա յիշ/ես», եղիայի հեղինակության և հռչակին ապացույց կարող է լինել և այն հանգամանքը, որ Թովմա Մեծոփեցին յուր աշակերտակից վարդապետների հետ Հովհաննես Մեծոփեցուն թաղում են «ի հանգստարանի նոր վկային Յովսէփայ և եղիա վարդապետին ի մեծահանդէս ուխտն Հայոց քաղ»[58]։

Սարգիս քահանան 1211 թվին բլրի վերայի եկեղեցու արևմտյան պատի առաջ, դռան ձախ կողմից կանգնեցնում է մի խաչ, որի պատվանդանն է միայն մնացած արձանագրության հետ (պատկ. 12), (պատկ. 9)։

ՈԿ (պատվանդանի հյուսիսային ճակատին)
Ես Սարգիս անպիտան քահանայ կանգ-
նեցի զսբ նշան/քս ի բարեխաւսութի
ինձ եւ ծնաւղաց իմոց եւ շնորհալարդ/
աշակերտի իմոյ Աշոտոյ որ եւկրպագէք
յիշեցէք աղա[59]։

Երկու տարի հետո, 1213 թվին, մի խումբ աշակերտներ մի խաչարձան մատուռ են կանգնեցնում իրենց ուսուցիչների հիշատակին պարսպից դուրս, արևելյան կողմից, Հովհաննես փակակալի և յուր եղբայրների հիշատակին կանգնած խաչարձանի մոտ (պատկ. 13)։

Թվ. Ո։ Կ։ Բ։ Շնորհիւն այ մեք նու
աստ աշակերտք Սիքա եւ Սիմաւոնի
Սոսթանէս եւ Մաթէոս։ եւ Գրիգորէս շի
նեցաք զսբ Կաբապետս ի վերա շիրմա
ց սոցա եւ առաջնորդք սբ ուխտիս սահ
մանեցին ։Բ։ ճրագալոյցն վս հոգո

57 Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի 1236 թվի ավետարանը. տե՛ս մեր հոդվածը՝ Սիոն, Իգնատիոս նկարիչ և Շոթոռվանց տոհմը. 1933 հունիս և շարունակությունը։

58 Թովմա Մեծոփեցի, Փարիզ, 53, 61։

59 Համ. Ալիշան, Այր., 355։

ց նոցա եւ այլ ննջեցելոց որ յայսր (տ!)
Հանգստարանի[60]

Տարաբախտաբար մեզ հայտնի չեն այն ուսուցիչների անունները, որոնք երախտապարտ են զգում վերոհիշյալ աշակերտները։

Ծղիային և Մխիթարին ժամանակակից էր Գեորգ կամ Գորգ Հայր, որը մի արձանագրություն ունի բերի եկեղեցու հյուսիսային պատին, անմիջապես մեծ լուսամուտի տակ, և որի անունը հիշված էր նաև վերոհիշյալ ավետարանի հիշատակարանի մեջ. (պատկ. 10).

Շնորհիւն աՅ Գորգ Հայրն եկեղս Նաու դիմ
այգին ի սբ ուխտս եւ սպասաւորս նաուն ։Ջ։ ասր
ժամ ։բ։ Ինձ ։բ։ Շողոկաթ ։բ։ Ստեփանոսի։

Ժամանակակցության փաստ կարող է լինել այն հանգամանքը, որ նույն գրչությամբ և անմիջապես Մխիթարն ևս ավելացնում է յուր արձանագրությունը։

Եւ ես Մխիթար վՂ եւ քոյր իմ Թամար որ զմեր այգին տուաք
զսեւահողն եւ ժամ գրեցին ։բ։ Ինձ ։բ։ Թամարին ։բ։ Սաթարին։
Ա։ իմ Հարն եւ մարն։ կատարիչքն ասրնի ին ամ[61]

---

[60] Համ. Ալիշան, Այր., 356։

[61] Սեբաստիայի Ս. Նշանի ձեռագրներից № 153 ըստ Տ. Բորգոմ արքեպս. Դուշակյանի, գրված Մխիթար գրչի ձեռքով, որ ապրում էր ոչ վաղ, քան ԺԲ դարի վերջերին կամ ԺԳ-ի առաջին քառորդը, որովհետև, ի միջի այլոց արտագրում է և Դավիթ Քոբայրեցու «Ընդանուրին Նահապետացն» և՝ այլն աշխատությունը։ Ձեռագիրը թվական չունի, բայց ցուցակագրողի տված տեղեկությամբ «անցման» գրով է և յուր «Ինաղրոշմ» նկարագրով ժողովածուի հնագույն ձեռագրերից մեկը. այսինքն գրված է արևելյան բոլորագրով, որ գործածական էր ԺԲ—ԺԳ դարերում ճառընտիրների համար՝ հատկապես, Արևելյան Հայաստանի վանքերում։

Ստացողը նույնպես Մխիթար էր կոչում, էջ 500. «Ձշմարիտ Քրիստոսի բանին նորընծայ սպասաւոր վարդապետ». էջ 525. «Ձընտրեալն եղբայր սրբազան զվարդապետ Մխիթար աղաչեմ տառապեալս համանուն լիշել ի ոէր, եւ խնդրել ողորմութիւն յԱստուծոյ»։

Հայմանորեն այս ստացող Մխիթար վարդապետը նույն է եղիայի ժամանակից և այս արձանագրության Մխիթար վարդապետի հետ, որովհետև ձեռագիրը սեփականություն էր Հավուց Թառի, մի հետին հիշատակարանի համաձայն, էջ 35. «Քիրքոս Հայոց Թառոյ է, որ է աղօթատեղ սուրբ Լուսաւորչին եւ հաստատուցյց հաստատեաց եւ հանդիսացոյց տեղի Թարգմանութեան եւ առն իմաստութեամբ (!) սուրբ հայրապետն Սահակ եւ սուրբ վարդապետն Մեսրոպ եւ յետոյ Նորոգեաց սպարապետն Գորգ իշխանն»։ Ձեռագիրը կարող էր պահված լինել Հավուց Թառում գրչության ժամանակից. ինչպես պահվել էր նույն տեղում 1214 թվի ավետարանը մինչև 1618 թիվը։

Նույնիսկ ասատ և հավանորեն նույն ձեռքով մի հիշատակարան կրկնվում է, էջ 212. «Ամատանաւր լիշեցէք ի սուրբ եւ ի մարքարեալ յաղաւիս ձեր զիս զմեղապարտ զնուասս եւ զհողոյ հատասար նաթանայէլ եպիսկոպոս Հայոց Թառոյ, որ է սկիզբն սորայ ի սուրբ Լուսաւորչէն նոցա (!) եւ

Սույն հայր Գորգի կամ «Հայր Գէորգ»-ի տափակ գերեզմանաքարը Ապլ Նեկեր վարդապետի հետ գտնվում է մի կոտրած խաչքարի առաջ, պարսպից դուրս արևելյան գերեզմանատունը.

Գէորգ /հայր է Ապլ/ Նէկեր վարդ.

ԺԹ դարում Հավուց թառն էլ մեկն է Արևելյան Հայաստանի նշանավոր վանքերի շարում, որ հավանություն գիր են տալիս 1846 թվին Կոստանդին կաթողիկոսի կանոնական թղթին[62] և առհասարակ մասնակցում եկեղեցական ժողովներին և խնդիրներին։

Նույն թվին բլրի վերայի եկեղեցու արևմտահյուսիսային անկյունում քաղվում է «պարոն» Կուկորը, որի գերեզմանաքարի արձանագրությունը տեսանք վերև։ Նա ունի առանձին արձանագրություն եկեղեցու արևմտյան դռան դրանդիի դուրս ընկած կամարի վերա (պատկ. 11), (պատկ. 8)

«Շնորհեա այ Ես Կուկորս... (քարը կոտրած, բայց կարելի է լրացնել) /անարժան ծառա Ամէնափրկչին Հաու զիմ տունն զայգին զզաղացն եւ :Բ: աղբիւր[63] ի սբ ուխաս / եւ սպասաւոր Հա ... (կոտրած) /ուն։ Ա : ժամ ի/մ Հայրն :Ա։ իմ մայրն Ա. ամ/ուսնո/(փակագծից առաջ երկրորդ տառը կասկածելի, մնացածը կոտրած) յ իմ Մահանին կատարիչքն աւրհնին»։

Կուկոր անունով մեկի հիշատակությունն ունինք և Կիշառույքի Ս. Նշանի մի արձանագրության մեջ. Գրիգորի որդի Մխիթարիչը յուր «ախբին» այգին Երևանում նվիրում է վանքին և տառնում հինգ ժամ Մխիթարչին, երեքը «տիկնաց տիկնա Կոկորին մայրն», չորսը Գրիգորին, երեքը Մամիկին։ Գրիգորն ու Մամիկը, պետք է կարծել, նվիրատուի ծնողներն են, տիկնաց տիկնան՝ կինը և Կուկորը՝ որդին։ Արձանագրությունը գրված է Տ. Գրիգորիսի և Գրիգոր վարդապետի ժամանակ, «յառաջնորդութի Համազասպ», որոնք ապրում էին ԺԹ դարի վերջերին և ԺԴ-ի սկզբին. Գրիգոր վարդապետը Մոնոնիկ կոչվածն է, որ մասնակից էր Լոռվա և Անիի ժողովներին[64]։ Տիկնաց տիկնան հիշվում է Հա-

---

Հիմնարկութիւնամբ հաստատեալ եւ հանդիսացեալ ի սուրբ Թարգմանչացն Սահակայ եւ Մեսրոպայ։ Նաթանայել եպիսկոպոսն ապրում է ԺԹ դարի երկրորդ կիսում կամ, որ ավելի հավանական է, ԺԸ-ի վերջերում. որովհետև այգ ժամանակների համար միայն տեղեկություն չունինք վանքի մասին։ Ձևագիրը ՌՃՁԸ (= 1739) թվին սեփականություն էր ոմն Կարապետ քահանայի։

62 Գանձ., *Թիֆլիս, Դուվ. Հրատ., 278, 294* և շարունակություն։

63 Նշանակում է ադբատ, պարարտացրած հող։

64 Գանձակեցի, *162, 166*։

վուց թառի «արքայաշէն» դարբասի գավթի հսկա խոյակներից մեկի արձանագրության մնացորդի մեջ, որով Հավուց թառի և Կեչառույքի Կուկորների նույնության հավանական է դառնում.

«Շնորհիւն այ ես Տիկնաց տիկին յան
տիկին միաբանք սբ ուխտիս/մեր առ-
դեանց եւ սպասաւորք/սորին ։ գ։ աւր ·
ժամ»։

Արձանագրության մասերը կորած են կամ փլատակների տակ թաղված։ Վարդանի Աշխարհացույցը Հավուց թառի սրբությունններից մեկն էլ համարում է Թադեոս առաքյալի աջը, որի սկզբնականը կազմված էր ՉԻԴ (=1275) թվին, ինչպես կտեսնենք քիչ հետո։

Վանքի պարսպից դուրս, դեպի Դառնի տանող ճանապարհի աջ կողմը ոմն Հակոբ կանգնեցնում է մի խաչ 1278 թվին.

«Ես Յակոբ ... (քահանայ) կանգնեցի
զսբ նշան սի բարէխաւս ինձ եւ ծնողաց
իմոց, որք երկրպագէք յիշեցէք յա-
ղաւթս. թվիս. ՉԻՀ»։

Գերք և Շաքար ամուսինները 1293 թվին միաբանում են Ամենափրկչիա և 1000 սպիտակի կալված գնում ուխտի համար (պատկ. 10)։

1. Կամօքն այ ես Գերք եւ ամուսին իմ
Շաքարս միաբանեցաք Ամենափրկ-
չիս (իս-ը չ-ի բոլորակի մեջ)
2. եւ գնեցաք զՏանձուտն (կարելի է վեր-
ջին վանկը ան կամ նա կարդալ) Ջաշիկի
նորքին ի ։ռ։ սպ։ եւ տուաք ի սբ
ուխտս եւ
3. սպասաւորք տեղեցս խոստացան ի
տարոյն ։գ։ աւր պատարագել զքս
։բ։ աւրն
4. ինձ եւ ։բ։ Շաքարին կատարիչքն
աւրհնեն ի ՉԼՒ։ թվ։

Այս թվականից առաջ և 1214-ից հետո՝ «շպետ» (հովիվ) Գրիգորը և ոմն Փառանց արդյունք են տալիս վանքին.

1. Անուամբն այ ես Գրիգոր շպետ ծառայեցի զնկղնեցիս (տ!) եւ ետու զար
2. զիւնս իմ եւ սպասատուրքս ինձ ։զ։ աւր ժամ գրէցին որ խափանէ գատի ի տնէ։

Սորա տակը նուն գրչով.

«Ես Փառանց տվի արգիւնս ։Բ։ ժամ տվին ։Ա։ ինձ ։Ա։ իմ մատնա»։

Այս երկու արձանագրությունները գրված են Թագեոս և Հայրապետ քահանաների (1214 թ.) և Գերք ու Շաքար ամուսինների արձանագրությունների միջ, որով և նրանց ծագման postique-ն ու antique-ը հայտնի, այսինքն 1214 և 1223 թվականների միջ։ Սույն Գրիգոր շպետը նվեր ունի տված և մերձակա Աղջոց Ս.Ստեփաննոսին, որ կարծում ենք գրված պիտի լինի զարի երեսնական թվականներին, արձանագրության տեղից դատելով. Հավուց Թառի արձանագրություններն էլ մոտավորապես նույն ժամանակը պետք է դնել (տե՛ս պատկ. 10)։

Ամենավաղ քահանան գնել է Բանանց գյուղի (Գանձակի շրջան) եկեղեցու «Պապ» կամ «Մեր» կոչված ձեռագիր ավետարանը «ի գաւառէն ի վանացըն Հաւու Թառու» և Ջոհ (=1294) թվին կազմել տվել Գերգ անունով մեկին, որ կարող է վերոհիշյալ Շաքարի ամուսինը լինել (Հավել 3.)։ Ստացողն ու կազմողն ունին իրենց հիշատակարանները միևնույն գրով, ինչպես և նորոգված մասն է։ Ավետարանը ծագմամբ ավելի հին է, հնագրական և մանրանկարչական նշանների՝ ոչ ուշ քան ԺՍ դարը. տարաբախտաբար, վերջին հիշատակարանը ընկած լինելու պատճառով, հնարավորություն չունինք գրիչը, տեղն ու ժամանակը ճշտիվ որոշելու, որ Հավուց Թառում գրված լինելու դեպքում, հնագույն հիշատակը կունենայինք, գուցե և կարևոր ծանոթություններ վանքի մասին. բայց ուշադրության արժանի է և այն երևույթը, որ այնտեղ է նորոգվել և ծախվել այդ նշանավոր ձեռագիրը[65]։

Օրբելյանի ընդդեմ Անավարզեցու գրած ձեռնարկին (1296 թ.) ստորագրում

---

65 Ավետարանը մեծադիր է, մագաղաթ, խոշոր, բոլորաձև երկաթագրով, երկսյուն. մանրանկարչական պատկերներ, զարդեր և զարդագրեր չունի, եին սկզբում չեն եղել, ընկած են առաջին թերթերը. միայն Մատթեոսի մեջ, միջին լուսանցքում կան ձողիկի վերա փորր թռչուններ՝ կարմիր կա՛մ սև գունավորությամբ։ Սկզբից պակասավոր է և բնագիրը. սկսվում է Մատթ. ե. 20 «Բայց ասեմ ձեզ, եթէ ոչ առաւելուցու արդարութիւն ձեր աւելի...»։ Բացի վերոհիշյալ երկու հիշատակարաններից, կան և ուրիշները 1453, 1461, 1511, 1625 և 1805 թվականներով։ Տե՛ս և Քարխուդարյան, Արցախ, 273։

է Արեւելյան Հայաստանի նշանավոր եպիսկոպոսների և վարդապետների հետևնաև «տէր Մխիթար Հաւուց Թառոյ եպիսկոպոս»[66]։

Հավուց Թառում Գրիգոր գրիչը գրել է մի ավետարան «ի թուականութեանս հայոց ՉԽՉ (= 1297), ի թագաւորութեանն բարեպաշտ և ածաւէր թագաւորին հայոց Հեթմոյ՝ մեծի և յաղթողի և կաթողիկոսութեան հայոց տն Գրիգորի և յաշխարհակալութեն Ղազան խանին և ի մերոյ նահանգի տէրութեան Խոշաբի և Զաքարեայի որդոյ Նորին և ի տէրութեան մերոյ սուրբ ուխտիս Հայոց Թառոյ պարոն Բհսութեայիս և խոյանձայիս... ի սբ և ի հռչակաւոր յածարնակ ուխտիս Հայոց Թառ յորջորջելոյ՝ ընդ հովանեաւ կաթուղիկէ եկեղեցոյ սբ Սիոնի և ածընկալ սբ Ամենայփրկչիս, ի ձեռն սուրա բա(զում) աքանչելիք եւ պէս պէս բժշկու (թիւ)նք կատարին»։ Ստացողն է Քուրթ և յուր ամուսինը՝ Ալեր, իսկ նրանց ծնողներն են Մխիթարիչ և Մամխաթուն։ Գրչին օգնել է նրա հոգևոր եղբայրը՝ գեւոաբուլս Մխիթար քահանան[67]։

Աբրահամ վարդապետի մասին հիշատակություն ունինք և նորա աշակերտենոք քահանայի կանգնեցված խաչքարի արձանագրության մեջ, կից Սարուխբ քահանայի կանգնեցրած խաչքարին, որոնք ընկած են և միայն պատվանդաններն են մնացել։

«... (Նուա)սա քահանա էնոք կանգ
... (հցի վս) աչս բարեխաւս ինձ և
... (ծնաւ)ղաց իմոց եւ Աբրահամու վդ
ապետին իմո աղաչեմ յիշեցէք ի քս»[68]։

Նույն Գրիգոր գրիչը մի տարի հետո՝ «ի թվ։ Չխէ։ (ի) մեծ մէնաստանիս Հայոց թառ ընդ հովանեա (ւ ս)ք Ամենափրկչիս» Սուրբ կուսակրոն քահանայի խնդիրքով, որ Այրիվանքի միաբաններից էր, գրել է մի Սաղմոսարան (Հավել. 4)։

«Կարապետ որդի Տիրատրոյ ի շահաստան տղեկէս Գառնոյ» կրկին ստանում է մի ավետարան յուր ամուսին Եսուկանի հետ և ընծայում «ի սբ մենաստանն ի Հայոց թառի մեր Նորաշէն եկեղեցին ի սբ Կարապետն»։ Հիշատակարանը գրված է «ի թուականու ես Հայոց ՉՀ(=1321) ի շահաւոր ամիսն յԱրեանց եւ յառաջնորդութի սրբոյ ուխտիս Հայոց թառոյ տր Յովանիսի և տր Յարգսի մերոյ Նահանգիս վերադիտողի». վերջինը հավանորեն Բջնիի եպիսկոպո-

---

66 Օրբէլյան, Ղուկ. հրատ., Թիֆլիս, 1911, 417։

67 Ձեռ. էջմ. № 1124/2838 (Հավել.2)։ Այստեղ հիշված խոշաբը Իվանե ամիրեկի թոռն էր Ավագի դուստրը, որ ամուսնացավ Ապաղայի մոնղոլ Սահիպ դիվանու հետ (Օրբ. 448). սրանց որդու՝ Զաքարեայի անունը հիշվում է Բջնիի, Գնաւարգելի և Գառնիի արձանագրությունների մեջ. վերջինը՝ Տրդատա Բախտում՝ պրոֆ. Մառի պեղումներով երևան հանված։ Իսկ Բհսութեան և յուր կինը հավանորեն Պահլավունիք են, որոնց և պատկանում էր վանքը։

68 Տողերի առաջին տառերը մենք ենք լրացնում. պակասավոր է։

սրն է։ Կարապետ որդի Տիրատրո պետք է շինած լինի այն փոքր եկեղեցին, որ կցված է բլրի վերայի եկեղեցուն, հարավային կողմից (պատկ. 5 և 6), (պատկ. 4)։

Մոտավորապես նույն ժամանակները՝ 1317 թվին կամ քիչ հետո՝ Ստեփաննոս Հռվանիսենց[69] յուր նվերներն է տալիս վանքին և տարեկան երեք ժամ ստանում, արձանագրելով բլրի վերայի եկեղեցու հյուսիսային պատին, փոքր լուսամուտի կողքից (պատկ. 14)։

«Շնորհիւն այ ես Ստեփաննոս Յոհաննենց եւոս վկեր ...(?) հոդ
են վանս (?) զվարդննց (?) եւ այլնեց (?)
եւ այլ արդիւնս ի սբ ուխտս եւ միաբանքս էտուն մեզ ։։ ժամ ամեն ամին
ինձ»։

Մենք կարող ենք նույնպես մոտավոր կերպով որոշել նույն եկեղեցու արևելյան պատին լուսամուտից վեր եղած երկու արձանագրությանց ժամանակը (պատկ. 8). նոցանից վերինը, որի առաջին երկու տողերի սկզբնավորությյան քարերն ընկած են, գրված են Թամարի և Աթաբեկ Շահնշահի անվան հիշատակությամբ։ Դա Շահնշահ Գ-ն է, որի եղբայրն էր Զրվանշահ, հիշատակված իբրև Անիի և Բջնիի տեր 1357 և 1358 թվականների հիշատակարանների մեջ. բայց նաև Հանավանքի՝ բանասիրության դեպևս անծանոթ՝ մի արձանագրության մեջ «դիտոփալ Թամարի» հետ, որով այլևս կասկածի տեղիք չի մընում նորա անձի և ժամանակի վերաբերությամբ[70]։ Մեր արձանագրություններըն, իհարկե, կարող են մի քանի տարի առաջ կամ հետ լինել նշանակվածթվականներից.

1. ... (Սկզբում թիվն է եղել, ապա)
/Շնոր/հիւն այ եւ ողորմութիք մեր

[69] Այս Ստեփանոսը գառնցի պիտի լինի, նույնպես և ջրաղացի տեր, որ երեք օր «Մոնպենց» սուրբ Աստվածածին վանքին՝ Գառնիում «։։ ուր ջաղաց» է տվել և տարին երկու պատարագ առացել։ Այս արձանագրությունը քանդակված է Մոնպենց վանքի գերեզմանատան ժառուտի հյուսիսային պատին որպես անմիջական շարունակություն ոմն Թերխաթունի և յուր Ամիր որդու արձանագրության ՉԿԶ (= 1317) թվից. Ստեփանոսի արձանագրությունն էլ նույն թվականից պետք է ընդունել։

[70] Արձանագրությունների և հիշատակարանների մեջ աթաբակության տիտղոսով հանախ հիշվում է և Շահնշահ Բ, որ վախճանվեցավ ՉԿԲ թվականին (Սարգսյան, Տեղագրություն, 131, Ալիշան, Շիրակ, 62, Կոստանյան, Վիմական տարեգիր, 160), և որին չպետք է չփոթել մեր այս արձանագրության Շահնշահի հետ, որ Զաքարյաններից նույնանուն երրորդն է։ Սորա մասին տե՛ս մեր Հաղբակյանք, 15 և 229, նաև Ձևո. էջմ. 230/1519, 29ա։

պրացն

2. ... (հավանորեն «դիտոփայ») թամար
ին և աթաբակ (միջին վանկը եղծված).
Շահան շահի (շա, շա վանկերի ա-ն
շ-ի բոլորակի մեջ) մեք

3. մեղուցել (կիսով չափ եղված) ծա-
ռայքս մուրահր[71] ամիր Սարգիս նո-
րագաւթեցի և ամ ու ս ին իմ էր
մա նի

4. և եղբայր իմ Ամիր մի աբ ան ի ցաւ
արբոցս (ս-ն ց-ի բոլորակի մեջ) և
տվամ ձէր եւ ան զմեր գ ան ձ ագ ին
նայրենիք (ք-ն կասկածելի)

5. այգին ի (տ!) ջաղաց... (երեք տառի
տեղ չկարողացա կարդալ) ան մ ար ծ։
ի տեղ ժամ ար ած ակ եկեղեցեացս։
մր Աթն եւ այ

6. /լ միաբան/ (մեծ ենք լրացնում. կիսով չափ
կոտրված է) քս խոս /տացան ի տ/ ա-
բրին։ ։Զ։ պատ ։Բ։ Ամիր Սար գ սի ն
։Բ։ էր մ ան է։ ։Բ։ Ամիրին կատ

7. ար իչին (ք-ն չ-ի բոլորակի մեջ) օ՛հ։

Նույն պատի վերա երկրորդ արձանագրությունը

1. Կամ ատն այ ես Բէս ու լ ուն դուս-
մր Մենասին Երեւ ան եցի։ մի աբ ան
ար բոցս տվի զիմ

2. ձիթենեց այգին ։ժե։ մրծի (ի-ն ծ-ի
բոլորակի մեջ) տեղ սբ Х։ (Սղագրություն,
որ ենշանակում է «եկեղեցի») մր Աթն
եւ մի աբ ան քս գրեցին ։Զ։ ատատ։
իտ

3. արոջն ։Դ. ինձ ։Ա։ Մէնասին ։Ա։
իմ (?) հանին հատատուն պահողքն
ահնին

---

71 Այս բառն անհասկանալի է ինձ։

Գրիգոր մագիստրոս (փակագրով)

Երկու արձանագրություններն էլ ժամանակակից են իրար, նույն գրչի ձեռքով, նույն տեր Աբրահամի առաջնորդության ժամանակ։ Հնագրական տեսակետով արձանագրությունները հետաքրքրական են քանդակման եղանակով, կցումների համախմբման և գրերի ձևերով։ Հազվագյուտ է արձանագրությունների մեջ և X նշանագրությունը «եկեղեցի» նշանակությամբ, բայց հաճախ՝ ձեռագրերի մեջ։

Մի շարք ևս արձանագրություններ կան սույն եկեղեցու հարավային պատին, արևելքից դեպի արևմուտք։ Առաջինն է Հուսեփ Գայլկոնցի անունով (պատկ. 15)։

1. † Կամաւ այ ես Յուսեփ Գայլկոնց եւ
2. ու զդարապասի խաչի այգոյն բաժին
3. ն գիմ ի սբ ուխտս եւ եաուն ի տար
   ոջն ։գ։ աւր
4. ժամ ։Ա։ ինձ ։Ա։ Վաշլկանն ։Ա։
   Գալկոյն որ խափ
5. է գատի յայ։

Նույն գրչի ձեռքով քանդակված է և Գրիգոր քահանա Գոնբնոնցի այծանագրությունս։

1. Կամաւ այ ես Նու (աստ)[72] քահանայ
2. Գրիգոր Գոնբնոնց եաու գիմ այգին և
3. խաչ եւ այլ արդիւնք զոր ունէի ի
   սբ ուխտս
4. եւ խոստացան ի տարոջն ։գ։ աւր
   ժամ ։Ա։ ինձ ։Ա։ իմ հայրն Սարգսի ։Ա։ իմ մայրն Քրիստոնէ կատարիչքն աւր հնեսցին եւ որ խափանէ պատժին յայ։

Սրանից դեպի արևմուտք Կունդիկի և Ստեփանոսի արձանագրություններն են, երկուսն էլ մի գրչի գործ.

1. Կամաւ այ ես Կունդիկ եւ կենակ
2. ից իմ Սամքան միաբան եղաք ի
   սբ ու

---

[72] Կիսով չափ կտրած և եղծված՝ փակագծի մեջ առնված մասը։

3. խաս տվաք վինչս գրէչին ։Բ։ աւր ժա
4. մ ։Ա։ ինձ ։Ա։ Մամբանին։

Սորա տակը, նույն գրչի գործ (պատկ. 15)։

1. ես Սահականոս հաու զարդունս իմ
   ի սբ ուխտս եւ հաուն
2. ։Ա։ ժամ ինձ եւ ծնողաց իմոց։

Սրանից դևպի արևմուտք եղել է մի արձանագրություն յոթ տողից բաղկացած, արևի ժամացույցի տակ, մեծ մասով ծածկված հարավից կցված մատուռի պատով, որ Տիրատուրի որդի Կարապետի շինած Ս. Կարապետը համարեցինք։

Մի արձանագրություն էլ ունինք նույն պատի վերա՝ դրսից Ս. Կարապետ մատուռից դևպի արևմուտք արձանագրությունը միայն խոշորացույցով կարելի է կարդալ։

1. Աւգնութ[ի]ւն ա՜յ ես Խուցիկ սղ
2. է միաբան սբ ուխտիս Հաու թա[ռ]
3. ո եւ հաու գ.../իմ կր/ (մաշված,
   լրացնում ենք) պակն եւ ։Բ։
4. դահնկան եւ սպասաւորք սբ քաւար
5. անիս խոստացան ի տարոջն ։Ա։ աւր
   ժամ
6. կատարիչքն ... /աւրհնին/ յա՜յ։

Եկեղեցու ներսն ևս հարավային պատին կա հետևյալ արձանագրությունը.

1. ե ... իր մայրս տուի ։Բ։ դահնէ
2. ան եւ միաբ ան ք գրէչին ինձ ։Ա։
3. աւր ժամ ի տարոջն որ խափանէ դա-
   տի յա՜յ։

Զախ ավանդատան դռան գլխին երկու տող արձանագրություն կավճացած։ Իսկ հարավային պատին արևմտյան փոքր ավանդատան մոտ կա հետևյալ արձանագրությունը.

1. † աբ[ա]ւ յ[ի]ւ ես Վարդան պաստեղաո-
   նութե (?)

2. էկեղեցոյս յիմ արդար վաստակո
3. ց եւ սպասաւորք սբ ուխտիս սահ
մանեցին :Բ:
4. աւր ժամ ի տարոջն տալնի :Խ: իցն
:Ա: ինձ :Ա:
5. ամուսնոյն :Բ: թխակայ: խափ:անիչքն
պատժե /ա/ց
6. ցին եւ կատարիչքն աւրհնին յայ[73]:

Մի վերջին արձանագրություն էլ սրա տակը՝ Ագուլեցի Աստվածատուր եպիսկոպոսի կողմից, որ կտեսնենք յուր տեղում։

Մի շարք արձանագրություններ ևս ունինք պարսպի մեջ եղած ավերակ եկեղեցիներից մեկի՝ կարծում ենք Կաթուղիկեի պատի վերա, որ արևմուտքից դեպի արևելք հետևյալներն են (պատկ. 16)։

1. Կամաւն այ եւ սր Ներսէս Ջարաբէրդ
2. ո քվերորդի սր Սարգսի միաբան ե-
ղէի սբ ուխտս
3. հաու :ճ:Խ: զէհնկան եւ վդբս եւ
միաբանքս գրէցին
4. :Դ: աւր ժամի նձ որ չաւի կենդանի
Լմի մ ծնողացն
5. որ խափանէ գատի յայ:

Իբրև շարունակություն հինգերորդ տողի՝

Ես Ամէնաղէկ միաբան եղ
6. է սբ ուխտիս էտու սակաւ արդիւնք
եւ գրէցին ինձ :Ա: աւր ժամ:

Սրա տակը.

1. Կամաւն այ եւ Շրուիկ ծառա այ որ
դի Գրիգոր
2. ո միաբան եղէ սբ ուխտիս եւ տուի
:Ջ: դահէկան
3. Եւ վդբ եւ եղբարք գրեցին :զ: ժամ

[73] Այս արձանագրության կցվածքները ճշտությամբ չեն պահվել. մութն ընկնելու պատճառով միայն կարողացված ենք։

(գրիչը վերև կամեցել է «աւր» գրել ժամից
առաջ, բայց գրել է միայն ա)։ ։Բ։ ինձ

։Ա։ Սքէ (!) կատրի

4. չքն աշնէք (տ!) եւ որ խափանէղ ատի
աէ

Սրա տակը.

!. ես ներսէս որդի Յովանիսի էտու
զնծայս իմ (տ!)
2. գրէցին ։աւ աւր ժամ ինձ որշափ
կենդանի եմի մ հաւրն։

Գետի միջին մասի վերա, նախընթացներից դեպի արևելք՝ իրար տակ՝ հետևյալ արձանագրությունները են փորագրված.

1. Շնորհին այ ես Անդրէաս տո։ի։ զիմ
2. արդենց այգին ի սբ ուխտս եղբարքս եատն ։գ։ ժամ
3. ։Բ։ ինձ ։Ա։ Յուսկանն կատարիչքն աւրհնին։

Սրա տակը.

1. Ի Քրիստ. ... ՃՃՉ (ճարյուրավորը փճացած) ես Յովանէս Անկցի որդի Սարգսի միաբ
2. ան սբ ուխտիս էտու ։Չ։ դ։ յիմ տապանատունս եւ սպասաւ
3. որքս գրէցին յամէն ամ ։ղ։ աւր պատարագել ինձ քս զատ
4. կին կատարիչքն աւրհնին ի տէր ով խափանէ մեր մեղա
5. ցն տէր է առաչ այ։

Սրա տակը.

1. Ես Շիրիկ ծառա այ Միաբան եղէ
սրբոցս
2. եւ եառու ։Ի։ դ։ եւ գրեցին ։Ա։
ժամ ինձ ի տարին։

Ըստանէից դնպի արեւելք, պատի շարունակութեան վերա.

1. Կամաւն այ Յակոբ սարկ... (թափած)
2. ց տուի արդիւնս ի սբ կաթող ... (թափած)
3. սալեցին եւ միաբանքս սահ... /մանեց/
4. ին ինձ ։Ա։ աւր ժամ որ խափանէ
մեր մ
5. Հաւացն տէր է։

Որպես շարունակութեան հինգերորդ տողի՝

5. Ես Անդրէաս եառու զ
6. արդիւնս իմ ի սբ ուխտս եւ եառուն
ինձ ։Բ։ ժամ։

Պատի շարունակության վերա կան դարձյալ արձանագրության մնացորդներ, որոնցից ամբողջության չի դուրս գալիս։

Աբգ, ո՞ր ժամանակին են պատկանում այս արձանագրությունները։ Սոցանից մեկը միայն ունի թվականի մնացորդ, Հովհաննես Անեցու արձանագրությունը. թվականի հարյուրավորը պակաս է, բայց հնագրական նշաններից դատելով, արձանագրությունը կարող է ԺԹ դարու կամ ԺԹ դարի առաջին կեսի գործ լինել, ուրեմն և պակաս տասը Ձ կամ է կարող է լինել, իսկ ամբողջ թիվը ՉձՇՁ կամ էձՇՁ։ Հավանական ենք համարում երկրորդը։

Մի ուրիշ արձանագրություն սրանից դեպի արևմուտք Ներսես եպիսկոպոս Ջարաբերդցու արձանագրությունն էր, որի ժամանակը նույնպես մոտավորապես որոշել կարելի է։ Ջարաբերդի հիշատակություններին արդեն մատնանշում է, թե ո՞վ պիտի լինի Ներսես եպիսկոպոսի մորեղբայրը։ Ջարաբերդը գտնվում է Թարթառ գետի ափին՝ նորա Թրղի վտակի խառնարանում դեպի երից մանկանց վանքը տանող ճանապարհին, Դոփյանց իշխանության մեջ։ ԺԹ դարի վերջերին և ԺԴ-ի առաջին քառորդին էլ ապրում էր Սարգիս եպիսկոպոս՝ Դոփյան, որի Գրիգոր Դոփյանի, որ Տարսայիճ Օրբելյանի և Մինախաթունի դստեր ամուսինն էր։ Սարգիսը իբրև եպիսկոպոս հիշատակվում է 1311, 1312 թվերին և վախճանված է 1233 թվին[74]. նա վարդապետ էր ԺԳ դարու յոթանասունական

[74] Բարխուդարյան, Արցախ, 205, 206, 290։

թվականների սկզբին, երբ Հաղբատի եպիսկոպոս Հովհաննես (երրորդը նույն դարում, նույն վանքի նույնանուն եպիսկոպոսներից) «Թոռն Դոփին» կանգնեցնում էր յուր Ամենափրկիչ կոչված նշանավոր խաչարձանը, իսկ քիչ ավելի վաղ նույն Հաղբատում «ի վարժս կրթուիւն բանի պարապալ»։ Նա Հովհաննես եպիսկոպոսի ձեռնասունն էր և եղբորորդին, իսկապես եղբոր թոռը, որովհետև Հովհաննես եպիսկոպոսը Սարգսի հոր՝ Գրիգոր Դոփյանի հորեղբայրն էր, Հասան Դոփյանի կրտսեր եղբայրը[75]։ Այսպիսով, Ներսես Չարաբերդցու արձանագրության թվականը նշանակել կարող ենք 1233 թվից հետո՝ մինչև դարի կեսերը։ Հովհաննես Անեցու և Ներսես եպիսկոպոսի արձանագրություններով էլ պետք է պարզված համարել այդ ամբողջ խմբի ծագման ժամանակը։

Ձեռագրական հիշատակարանների և արձանագրությունների այսչափ մեծ թիվը, որոնց մի մասն էլ մեր ձեռքը չեն հասել, աշակերտների և վարդապետների անունների հաճախությունը ապացույց է, թե վանքը յուր սրբությամբ, նաև իբրև հոգևոր կենտրոն, մեծ հռչակ էր վայելում և դիրք ուներ ժթ դարի վերջերից մինչև ԺԴ-ի կեսերը, որ և հաստատում է Մանուել Բջնեցին հետևյալ խոսքերով.

«Ցնծա, հրաշարան, ո՛վ համալսարան, ուխտ հըռչակ անուն
Սբ֊ըդ մենաստան Հայու թառ անուան թառ թարմանում֊ի»

Այնուհետև մոտ հիսուն տարի տեղեկություն չունինք վիմական և ձեռագրական աղբյուրների պակասության պատճառով, իբրև հետևանք մոնղոլական պետության հոգևարքին ծագած խռովությունների և ապա կանխիմամբ և նորա որդիների արշավանքների. ժողովուրդը կողոպտված և աղքատացած, բնականաբար, պիտի պակասեին և նվիրաբերություններն ու շինարարությունները, որոնց հետ և կապված էր վիմական արձանագրությունների ծաղկումը։ Այս երևույթը ընդհանուր է բոլոր վանքերի համար. բայց Թովմա Մեծոփեցու տված տեղեկությունը վանքի և նորա սրբության մասին 1410 թվին[76], ցույց է տալիս, թե վանքը շեն էր և պահել էր յուր հռչակը, ինչպես և հաստատվում է հետագա իրողություններով։

Սարգիս և Դավիթ քահանաները 1423 թվին մի Մաշտոց են նվիրում «ի սուրբ ուխտն Հաւուց թառ ի դուռն սուրբ Կաթուղիկէին եւ սուրբ Աստուածածնին եւ սուրբ Յարութեան եւ ամենազօր սուրբ Ամենափրկչին»։ Նվիրատուներից

[75] Մանրամասնություններ կտեսնենք ԺԳ գլխում։ Ձեռ. էջմ. № 2604։ Բարխ., Արց., 408։

[76] Թովմա Մեծոփեցի, *Փարիզ*, 61։

«Սարգիս ծերունի եւ պատուական քահանայն ի սուրբ ուխտէս Հաւոյ թառ, գիւղին պատրաստացաց», իսկ Դավիթը գրիչն է, որ սկսել է Այրիվանքում և վերջացրել «յաստուածապահ գիտելաքաղաքիս Դաունի»[77]: Ապա սրբասեր և հուսակրոն Մատթեոս քահանան «յարարատեան գաւառէ, աննդհամբ ի բարձրագիտակ, յականատուր եւ ի գերահռչակ սբ ուխտին Հայոց թառոյ» ՊՀԳ (=1424) թվին Սանահնում Ղազար վարդապետին գրել է տալիս մի ավետարան «պաշար եւ առաջնորդ երկնաչուք ճանապարհին եւ փոխջ մի անուշհոտ բազմերանգ ծաղկանց» որպես հիշատակ: Ստացողի հետ հիշատակվում են եղբորորդին Ամեկ, «վանելոյ սբ աւետարանիս» և «աննդակից ըստ հոգւոյ տարազատի նորին սբրբասէր քահանայի պր տր Յովանէս եւ մեծ Յովանէս, եւ տր Սարգիս եւ Գրիգոր եւ այլ միաբանելք սիրով ընդ նման», որոնք Հավուց թառի միաբաններն են: «Յիշնցէք ի քս — ավելացնում է հիշատակարանը — եւ զհիւն աւետ զիշխանն իշխանաց զպր Զալափ եւ զպր... եւ ծադկեալ զաւակաց նոցա եղիցի յիշատակ մասին աւետ»[78]:

Հայրապետական աթոռի էջմիածին փոխադրության պատմության մեջ յուր աչքի ընկնող դերն ունի և «տէր Զաքարիա Հաւուց թառոյ ի յաղատորդեաց», առավել ևս նորընտիր կաթողիկոսին գահընկեց անելու գործում, 1441—1443 թթ.[79]: Նա հիշատակված է արդեն շատ տարիներ առաջ՝ ՊԲ (=1423) թվին իբրև Հավուց թառի եպիսկոպոս. վերև հիշված Մաշտոցի Դավիթ գրիչը ժամանակի կաթողիկոսի հետ թվագրում է ձեռագիրը «եւ ի վերայ գիտողութեան սուրբ ուխտիս Հաւու թառ, հեզահոգի եւ սրբասէր եւ մաքրամիտ եւ մեծապըլի արհիապատիւ եպիսկոպոսի տէր Զաքարիայ»[80]:

Գրիգոր Մակուեցին յուր կոնդակի մեջ ուրիշ սրբությունների հետ հիշում է և «Ամենափրկիչ սկզբնատպական պատկերը»[81]:

Հիշատակարանի ընկած լինելու պատճառով թվականով անհայտ մի Հայսմավուրքի Ստեփանոս գրիչը Աստուծո ողորմությունն է խնդրում «նաև մերոյ արհեպսի տր Զաքարիայի սպասաւորի սբ ուխտի Ամենափրկչի»: Ստացողն է Սարգիս վարդապետ, որ, գուցե, նույն լինի անմիջապես հիշվելիք Սարգիս փակակալի հետ[82]:

---

77 Սուքիասեանց, Թորոս Ազդար, ց. Պոլիս, 1884, Բ, 338 և Փիրղալեմյան, Նոտարք հայոց, Կ. Պոլիս, 73:

78 Ձեռ. էջմ., № 4435 (Հավել. 5):

79 Կոստանյան, Թովմա Մեծոփեցու հիշատակարանը, Թիֆլիս, 1892, 52, 78, 80: Երիցեան Դարաճաղցի, Հրատ. Մեսրոպ վրդ. Նշանյան, Երուսաղեմ, 1915, 314:

80 Փիրղալեմյան, Նոտարք, 221:

81 Անդ, 140:

82 Ձեռ. էջմ., № 3672:

Նույն Մաթփանոս գրիչը՝ աբեղա, կրոնավոր՝ «ի թվիս Հայոց Ջ. ԺԴ (=1464) ի սբ յաթոռ Ամենափրկչիս, ի սբ ուխտս Հայոց Բաո» գրել է մի ճաշոց կամ «Տարեգիրք» յուր պատանեկութեան ընկեր Դանիել վարդապետի խընդիրքով[83]. «Եւ որ մի վարդապետի աշակերտեալ էինք ի ազայութիւնն, Հասակից (Si) եւ ի պնակիս»: Դանիել վարդապետը միաբանելով Ամենափրկչին, բացի այս գրքից, «մեծաւ յուսով եւ փափաքմամբ սիրով, ձեռն էարկ զոր եւ երկնաւման եւ փառաւոր կաթուղիկէ եկեղեցիս: Եւ վերստին կրկին զարդարեաց եւ սալեց եւ նորոգեաց»: Գրիչը խնդրում է հիշել «զմիհոդն սբ եղբարք սբ Ամէնափրկչիս զոր Մարգիս փակակ, զոր Յակոբ, զոր Մաթէոս եւ զսիրասնուդ որդիքս մեր եւ հոդելից աշակերտքս կուսակրաւն սբ քահանայքս. զհզմմալ սորա զոր Յով... (անէս?) եւ զոր Յոհաննէս, որ բազում երախտիք ունինք. սիրով եւ հնազանդութիւք. զոր Անդոն, զոր Աւետիք, զոր Դաւիթ, զոր Ղազար, զոր Ղուկաս, զոր Մանուէլ, զոր Աբրահամ»[84]:

Ջաթարիայի հաջորդ էր Յովհաննես եպիսկոպոս. Մատթեոս գրիչը նվաստ գրած յուր Ավետարանը թվագրում է ժամանակի Արիստակես կաթուղիկոսի հետ և «Տեր Յովանէսի Հայոց Բաոյ» եպիսկոպոսութիւնը, «ի վերակացութեն երկրիս պարոն Վիշելի, ի մեծ թուականիս Հայոց ՋԺԴ (=1663)»: Այս Մատթեոս գրիչը, կարծում ենք, նույն է № 4435 ձեռագրի ստացողի հետ, որով և հասկանալի նվիրատում գրված ավետարանի թվագրությունը Հավուց Բաոի եպիսկոպոսի անունով. պարոն Վիշելը, հավանորեն, Ջաթարյան իշխաններից էր և ոչ Պահլավունիներից[85]: Համենայն դեպս, Մատթեոս գրիչը գործել է այս շրջանում: Դեղարդում կամ Այրիվանքում գրել է նա մի Հայսմավուրք, որի լուսանցքների ճարտարապետական, պատկերագրական և կենդանագրական նկարչությունը նորա գեղարվեստական ունակության ակնհայտնի ապացույց-

---

83 Դանիել վարդապետ Սևանեցին է, որ յուր աբեղայության ժամանակ գրել է էջմ. № 1319/1201 ձեռագիրը, Տաթևացու Մատթեոսի մեկնությունը «յերկիրս Գեղամայ ի Սևան կղզի», «ի թվին Հայոց Ջ. (=1451)»: Սա ստացել է նաև, բացի վերև հիշված Տարեգրքից՝ և մի ավետարան 1471 թվին, գրված Աղջոց Ս. Ստեփանոսի Վարդան եպիսկոպոսի ձեռքով (Նրանի քանգ., № 134/129): Նորա հրամանով է քանդակագործված Սևանի նշանավոր դռներից մեկը՝ 1486 թվին: Տե՛ս մեր հոդվածը. Անահիտ, 1932, թիվ 5—6:

84 Ձևո. էջմ., № 3759 (Հիշատակարանը տե՛ս Հավել. 6) Թուղթ բամբակի, թերթ 942. չատ լավ բոլորգիր: Սկզբից պակաս տաս թերթ: Ունի երկու մեծ սկզբնազարդ, բազմաթիվ լուսանցքի զարդեր՝ երբեմն եղջերու, թռչուն (նաև օձ բռնած), պարիկ, մարդկային ֆիգուրներ, թևավոր կենդանիներ և.ն.: Նկարիչն ու գրիչը նույն անձն է 202բ—203ա ներքևի լուսանցքի փոքրիկ հիշատակարանի համեմատ. գրել է «տեսար անձամբ», «ի դառն և ի նուրբ ժամանակի ի մէջ ազգատեաց» (222բ 223ա): Ասեղածածկի փոխման տոնը նշանակելով հետևյալ. «Ծ» «կիրակի առաւոտեան» ներքևի լուսանցքում. «Ամհատարաժամ եղեւ եւ զղջայն տարաւ եւ աչս կուրացաւ. եւ .գ. տուն

ներ են, իսկ իբրև գրիչ՝ ժամանակի լավագույն վարպետներից մեկը, որի մասին գաղափար կարելի է ստանալ Ալիշանի տված մի նամանահանութեան[86]։ Հովհաննես եպիսկոպոսն էլ նույն պիտի լինի 1424 թվի հիշատակարանի «պր տր Յովաննէսի» հետ, որ այդ ժամանակ դեռ քահանա էր։

Մահդասի Ստեփանոսը «ի թվ. ՉԼԱ ի (= 1471) եւ ի վշտաշատ ժամանակի, ի խանութեն Ուզուն Հասանին եւ ի հայրապետութեն տն տր Ոբստակէս կթի եւ ի սբ յաթոռն էջմիածին ի յերկնագէտ եւ ի սբ ուխտս Հայոց Քառ սբ Ամենափրկչիս, որ է պատկեր տն մերոյ Յի Քի», գրում է մի ավետարան[87]։

Հովհաննես եպիսկոպոսի հաջորդը պիտի լինի Զաքարիա Բ, հիշված ՉԼԶ (= 1487) թվին, որին Սիմեոն կաթուղիկոսը սխալմամբ նույնացնում է նախընթաց Զաքարիայի հետ, որ ընդարձակ կալվածներ է գնել հինգ հազար տինարով, որն մահմեդական Ամիրքյամալ Աբդինբեկից[88]. իսկ ժամանակակից (1482 թ.) փակակալ սուրբ Ամենափրկչին էր Խաչատուր աբեղան, նախկին Սարգիս փակակալի հոգևոր որդին և հաջորդը[89]։

Նույն Սիմեոն կաթուղիկոսի կալվածագրերի քաղվածքներից երևում է, որ 1526—1577 թվականներին վանքի առաջնորդներն էին Համազասպ և Զաքարիա, Պահլավունյաց ցեղից, ինչպես և նախընթաց եպիսկոպոսները[90]։

Գրիգոր գրիչ «ի թվինիս Հայոց ՋՂԲ (= 1543)» գրել է ժողովածու մի ձեռագիր, ի միջի այլոց և Հակոբ Ղրիմեցու տումարի մենկութիւնը, սկսվածքը «ի յանեղաշէն եւ ածաքնակ գիւղն Քանաքեռ եւ կատրումն եղեւ ի մեծ մեննատանիս Հայու թառս, ընդ հովնաւ Ամենափրկչիս և սբ Աճածնին»[91]։

Ժէ դարի սկզբին՝ և ՇԱ (= 1602) թվին հիշվում է «Սահակ եպս Հաւուց թառիևցի»[92], քիչ հետո՝ Շահաբաւի արշավանքի ժամանակ, Հավուց թառի առաջնորդն էր Մանուել եպիսկոպոս, Մելքիսեդ կաթողիկոսի կուսակիցն ու գործակիցը, որ սպանվեցավ Դեղարտա ձորում մի այրի մեջ 1605 թվին[93]։

Հավանորեն սորա հաջորդն էր Համազասպ եպիսկոպոսը, վանահայր Հավուց թառի և առաջնորդ Երևանի, որի օրով 1618 թվին Մեսրոպ Խիզանցին նորոգեց 1214 թվի, իգնատիոս գրչի ձեռքով գրված ավետարանը, որ պահվում

---

86 Ձեռ. № 1005նց.։ Ալիշան, Այրարատ, 198։ Տե՛ս և մեր Աւետիքեանք, Բանբեր Հայաստ. Գիտ. ինստիտուտի, 1921—1922, Ա և Բ 196—197։

87 Ձեռ. էջմ. № 251/215 (Կատ. 244) Հավել. 7։

88 Ջամբռ, 277։

89 Ալիշան, Այրարատ, 357։ Գուցե այս Զաքարիայի հաջորդն էր ժե դարի վերջին և ԺԶ-ի սկզբում վերոհիշյալ ճեմարանական եպիսկոպոս Հայոց թառաց։

90 Ջամբռ, 277։

91 Ձեռ. էջմ. № 925նց. (Հավել. 8)։

92 Բանբեր Գիտ. ինստ. Ա և Բ, 132։

93 Առաքել Դաւրիժեցի, 1896, 17, 47, 298։ Ձեռ. էջմ., № 519. ընդարձակ հիշատակարան

էր մինչև այդ ժամանակ «ի դուռն Ամենափրկչին եւ ի ձեռն Համազասպ եպիսկոպոսին»[94]:

Սորա հաջորդն էր Մկրտիչ եպիսկոպոս՝ կուսակից Սահակ կաթուղիկոսի[95]: Սորա կամ նախորդ Համազասպ եպիսկոպոսի ժամանակակից էր Հավուց թառում «ծաղկող» հաշատուր քահանան[96]:

Ապա, ըստ Դավրիժեցու, Փիլիպոս կաթողիկոսը վանահայր է նշանակել Սիմեոն Ջուղայեցի գիտնական վարդապետին միանգամայն և առաջնորդ Երևանի, ուղարկելով «ի վանս նոցա, որ է գաւառին Դառնոյ, անուամբ Ամենափրկչին, որ մականուամբ ասեն Հաւուց թառ»[97]: Նա Փիլիպոսի աշակերտներից էր և ապա վարդապետ Հոհաննա վանքում և էջմիածնում, հեղինակ բերականութեան, տրամաբանութեան և ուրիշ իմաստասիրական աշխատութիւնների[98]: Դավրիժեցուց զատ՝ նորա մասին գովասանքով են խոսում և ուրիշ ժամանակակիցներ[99]: Նա միևնույն ժամանակ և նկարիչ էր. Առեփանոս Իւղայեցին յուր ձեռքով գրած № 1524 ձեռագիրը ծաղկել է տալիս նորան, հիշելով «նաեւ զՍիմէոն շնորհազարդ եւ քաջ բաբունի, ծաղկող եւ գազմող սորինն»: Էջմիածնի միաբաններից մեկը՝ Մովսես «իմաստութեն սիրող», 1648 թվին գրել է տալիս Դիոնեսիոս Արիսպագացու աստվածարանութիւնը, հիշելով «եւ զոսկեզօծ նկարիչ զՍիմէոն վարդապետ»[100]: Երևանում 1654 թվին, «եւ վերագիտողութեն մերոյ գաւառի տն Սիմէօնի քաջ բաբունապետի Ջուղայեցւոյ անյաղթ փիլիսոփայի, որ նստի ի սբ մենաստանն Ամենափրկիչ ի ձորն Դառնոյ», գրված է Տաթևացու (?) Հարցմունքը[101]: Մեր ձեռքն է հասել Սիմեոն Ջուղայեցու մի ոտանավոր «դրուատ»-ը Հավուց թառի եկեղեցիների մասին, տարաբախտաբար աղավաղված տգետ գրչի արատագրութեամբ: Նա բացի կաթուղիկէ, Աստուածածին և սուրբ Յարութիւն եկեղեցիներից, հիշում է՝

Շահաբասի արշավանքի, արտագաղթի, նաև Մանուել Հավուց թառի և Դեղարդի Աստվածատուր եպիսկոպոսների մասին:

94 Դավրիժեցի, *298*: Ալիշան, *Այրարատ*, *357*:

95 Դավրիժեցի, *235*:

96 Ձեռ. էջմ., № 1792 նց: Ձեռագիրը ժամագիրք է և Սաղմոս, գրված 1628 թվին Ագաբիա աբեղայի ձեռքով. հիշատակարանի վերջում ավելացրած է. «ձօդկաւոր սորա հաշատուր քՇեյ. որ է Երեանցի, Հայոց թոռն. ժզ շհի ծղկի հաս գվի»:

97 Դավրիժեցի, *235*:

98 Ձեռ. էջմ., № 4064: Հիշատակարանը հեղինակի ձեռքով գրված տե՛ս Հավել. 9:

99 Զաքարիա Սարկավագ, *35*: Ձեռ. էջմիածնի № 1881/1742 (տե՛ս Հավել. 10) նաև 1858/1827: Այս ձեռագրի հեղինակն է Սիմեոն Երևանցի կաթողիկոսը, որ Պռոկոպի Բարգմանութեան մասին խոսելուց հետո ավելացնում է. «Իսկ ի Ռձերդ թուջն մերս ս Ջուղայեցի Սիմէօն գերհմատ վրդպն, որ էր եպիսկոպոս Դռնոյ, վերստին արր սմա զնոր լուծմունս, պրդ ոճով: Նաեւ սոյնոյ վրդպիս է արիվ գբերականուին եւ գտրամաբանուին ըս լեզուիս Հայոց»:

100 Ձեռ. էջմ., № 2503:

101 Ձեռագրի №-ը չեմ գտնում տարաբախտաբար:

Մուտք Երուսաղեմ, Ավետարան, 1058 թ.։
Երևան, Մատենադարան, ձեռ. № 6201, թերթ 9բ։

Ձաճկակատուն որ ի յորջման,
Բարձրագումէթ երկնից նման.
. . . . . .
Սբ Ժամայատուս ահեղ դարման,
Խարսխէ յարկ հաստատեցաւ,
Հաստակառոյց ոյժ վիմարդեան
Կարծր վիմանց համայնման
Ծանրագումէդ հիացական։
Ի սբ ուխտիս ընդարձական
Ա. սեղան ի սայ եղան.
. . . . . .
Մեծ թագաւոր կայ աննման
Տիպ տերունոյն եւ տիրական,
Փրկիչ քաւիչ եւ ապնական,
Տեսլեամբ ահեղ եւ զարական,
Որ երկնային զաւրք ամ
Ահէ սորայ սարսեալ դողան[102]։

Վերջին տողերն, ինչպես ընթերցողը տեսնում է, նվիրված է Ամենափրկիչ սրբության։

Շահխաթունյանը սորա հաջորդն է համարում Հովհաննես եպիսկոպոսին 1658 թվին. «յիշատակել ի յիշատակարանի աւետարանի միոյ»[103]։ Հիրավի, մի քաչքաչված Հայսմավուրքի մասամբ անընթեռնելի դարձած հիշատակարանի մեջ տեղեկություն կա և սորա մասին. ձեռագիրը գրված է «ի թուականութիւն հայոց .ռ. հարիւր եւ ժդ թուին(=1664), ի գաւառս Արարադեան, ի մայրաքաղաքս, որ կոչի Երեւան, ընդ հովանեաւ սբ աճածնիս եւ սբ Երկուերեսիս եւ սբ Յակոբիս եւ սբ Կաթուղիկէիս եւ այլ բազմ սրբոցն, որ պահապան են քաղաքիս, ի հրպտութիւ սբ էջմիածնայ սրբազան կթղկսի տն Յակոբայ Ջուղայեցւոյ, եւ եպսկոպոսութիւ սբ Ամենափրկչին տր Յովանէս սրբազան վարդպի եւ աթոռակալութիւ սբ Դեղարդեանն Դաւիթ սրբազան եպսկ, որդի աղատաց եւ մեծ աղգէ. ի յաշխարհակալութիւ տաճկաց եւ դանու թե փոքր Շահապազի եւ խանութե

---

102 Ձեռ. էջմ., № 1228/1204 (տե՛ս Հավել. 11)։ Այս Սիմեոն Ջուղայեցուն չպետք է շփոթել նույնանուն դարձյալ Ջուղայեցի իրեն փոքրը անվանող վարդապետի հետ, որ եպիսկոպոս էր ձեռնադրված Հակոբ կաթուղիկոսից 1677—78 թթ. և սորա մահվան տարին, այսինքն 1680 թվին, ստանում է նրանի, Տաթևացու «Ճառեան եւ ամառան ժողովածու քարոզգիրք»-ը, Ձեռ. էջմ., № 2150/2138, Նոր Ջուղայում։

103 Շահխ., բ, 296։ Տե՛ս և Ձեռ., № 371/338։

Երեւանայ Ապաղուղի խանին, որ է որդի Ամիրգունայ խանին»[104]: Սուն Հովհաննեսի ձեռքով Պողոս Երեցը, որը վերոհիշյալ Սիմեոն Ջուղայեցու հորեղբորորդին էր, մի նկարազարդ, փոքրագիր ավետարան է տալիս 1666 թվին հիշատակ «ի վանս Ամենափրկչին, որ ի Հայոց Քաոս»: Ավետարանը գրված է և նկարազարդված Նոր Ջուղայում[105]:

Սիմեոն կաթողիկոսը հիշում է ապա Մատթեոս վարդապետ Ջուղայեցուն 1662 և 1673 թթ.: Նա նորոգել է 1671 թվին Թադեոս առաքյալի աջն ըստ արձանագրության[106]:

Զաքարիա Սարկավագը հիշում է Մարկոս վարդապետ Ջուղայեցուն Հակոբ կաթուղիկոսի ժամանակ, ուրեմն 1673—1680 թվականների մեջ[107]: Սորա ժամանակն էր, երևի, երբ կատարվեցավ Արարատյան երկրի մեծ շարժը 1679 թվի հունիսի 4-ին և վնասվեցան Գեղարդի ձորի վանքերը, որոնց թվում և Հավուց Քաոը, որ հակառն հանվանն հիշում են Զաքարիա Սարկավագը և ժամանակից հիշատակարաններ[108]:

Ժէ դարի վերջերին հիշվում է Ստեփանոս, «ի յիշատակարանի ոտնացոյց գրոց, գրել ի սոյն մենաստանի».[109] իսկ ԺՀ դարի առաջին քառորդին Մաղաքիա վարդապետ. էջմ. 1752 նժ. Հայսմավուրքը նորոգված է «Ղզրուշվ (?) Աթանասի որդի» կարբեցու ձեռքով, «թվականիս ՌՃԿԲ (= 1713), հայրապետութ՛ի տն Ազէքսանդր կ՛ելկոս յամ (S!) Հայոց, մեր հոգևոր հայրն Մաղաքիա ածաբան վրդպետն յառաջնորդ սբ Ամենափրկչի»: Միաբաններն են տեր Սահակ, տեր Ղազար, տեր Առաքել. ունի «բազում աշխատանք ի վերոյ տանս»: «Յարպատեցի (էջմիածնից ոչ հեռու մի գյուղ) մահտեսի Գալուստն» նորոգողի սպասավորն է: Այս Մաղաքիայի ժամանակն էր, որ Աստվածատուր կաթուղիկոսը (1721 թ.) երկրաշարժից քանդվածների տեղ մի նոր եկեղեցի սկսեց շինել, գործադրելով և հնից մնացած շատ քանդակված և այլ քարեր (պատկ. 2,) բայց լեզգիների (կովկասյան լեռնականներ, լեկք) արշավանքով կիսատ մնաց. Աստվածատուր կաթուղիկոսը ստիպված էր փախչել, տեղական թողնելով Սաղմոսավանքի առաջնորդ Հովսաւսի վարդապետին: Այս ժամանակն էր, որ քուրդ Հովհաննեսի ձեռքով գրի առնվեցավ Գրիգոր Մագիստրոսի մեծ ար-

---

104 Ձեռագիրը նորերս է (1931 ապրիլ) ստացված Աշտարակից. մատենադարանի վարիչ Սինեքերիմ Տեր Հակոբյանի սիրալիր ցուցմունքով օգտվեցա այս հիշատակարանից:

105 Ձեռ. էջմ., № 953 նց:

106 «Յշխն այսպէս է գրեալ. Թէ կազմեցել էր սա ի ՉԻԴ թուին. իսկ ի ՌՃԻ թուին, նա Ջուղայեցի Մատթէոս վրդպս նորոգեցի, եւ եառ յիշատակ ի դուռն սբ Ամենափրկչին»: «Գաւթար և հուշագիր անօթից և սպասուց» Սիմեոն կաթուղիկոսի ժամանակ կազմված:

107 Ջամարեան Սարկ., Վաղարշ., 1870, Ա, 56:

108 Ջամարեան Սարկ., Վաղարշ., 1870, Բ, 104: Ջալալյան, Բ, 127: Ձեռ. էջմ., № 548:

109 Շահխ., Բ, 296:

ձանագրութիւնը[110]։ Քիչ հետո Ղազար Ջահկեցին Հայաստանի մեծ սրբությունների շարքում հիշում է նաև «Ամենափրկիչ պատկեր խաչելութեան Տեառն մերոյ Քրիստոսի Աստուծոյ»[111]։

Մաղաքիայի հաջորդն էր Հովհաննես վարդապետը 1745 թվին և ապա Ազարիան 1755 թվին, որոնք նույնիսկ կալվածներ են ձեռք բերել վանքի համար[112]. Ազարիան, ինչպես երևում է, վերջին վանահայրն էր, որովհետև վանքը արդեն Ջամբրի գրության ժամանակ, այսինքն 1765—1767 թվականներին, ավերակ էր[113]։

Ը

Հավուց թառի Ամենափրկիչն այժմ գտնվում է էջմիածնում. ե՞րբ է փոխադրված այստեղ, ճիշտ թվականը չգիտենք. բայց Շահխաթունյանը ժամանակը նշանակում է «ղևկի վերջին ասպատակութենից յայս նահանգ Հայաստանի ի կովկասեան կուղակաց, եւ ի սպառ անշքանալոյ մենաստանացն յորոց կարգի եւ մենաստանին Հաւուց թառայ, բերաւ սբ պատկեր ի սբ աթոռ այսր կաթուղիկէ եկեղեցւոյ սրբոյ էջմիածնի, և կայ այժմ ընդ այլ սրբութեանց ի գանձարանի անդ»[114]։

Լեզգիների կամ լիկաց երկրորդ արշավանքը ԺԸ դարում կատարվել է 1755 թվին, այդ ժամանակներն էլ Գևղարդաձորի (Այրիվանք, Հավուց թառ և Աղջոց Ս. Սաւիփանոս) վանքերի սրբությունները Հավուց թառի Ամենափրկչի հետ պետք է փոխադրված լինի էջմիածին. Համենայն դեպս 1768 թվին, երբ Սիմեոն կաթուղիկոսի հրամանով կատարվում էր Մ. Աթոռում եղած սրբությունների և հնությունների ցուցակագրությունը, Ամենափրկիչը մտնում է ցուցակի մեջ. «Ամենափրկիչն, որոյ պատարանն է փայտեայ։ Եւ ունի ընդ իւր ա. արծաթեայ փոքր սբ նշան զանճիրով, հանդերձ մատրամայիւքս»[115]։

Որքա՞ն հին էր այդ պատարանը և ունեցե՞լ էր արդյոք հնագիտական գեղարվեստագիտական արժեք, չգիտենք. ներկա պատարանը շինված է ցուցա-

---

110 Շահխ., Բ, 293։ Լեզգիների արշավանքի և Աստվածատուր կաթուղիկոսի փախստյան մասին Մատոսեաս սարկ. Կարբեցու հիշատակարանը, Ձեռ. էջմ., № 666, 205ա։

111 Դրախտ ցանկալի, 672։

112 Ջամբր, 279—80։

113 Ջամբր, 15[.278]։

114 Շահխ., Բ.։

115 «Պատարագ եւ հաշուապիր անօթից եւ սպասուց սբ եւ միածնաիջի տաճարիս, թէ ոսկեղինաց եւ թէ արծաթեղինաց, թէ պղնձեղինաց, թէ չորեղինաց, եւ թէ այլ նիւթեղինաց։ Որ ի ՌՄԺէ (= 1768) թուոջ մերում հրամանաւ տն Միմէօն սրբն կիւրկոսին եւ ձեռամբ նորին սպասաւուր Մկըր-

կագրութիւնից տաս տարի հետո, որ մի փայտի արկղ է, երկարութիւնը 82, լայնքը 43 և բարձրութիւնը 11 սմ։ Առաքաւոտ առաջին երեսի վերա անկիւններում նկարված են՝ վերևում՝ ձախից Մատթեոս, աջից, Մարկոս, իսկ ներքևում ձախից՝ Ղուկաս և աջից Յովհաննէս։ Մատթեոս նստած է, ծերունի. հագել է կարմիր կապա և վերան ձգել մուգ կանաչ վերնազգեստ (տոգա), մանրա նկարչական արվեստի մեջ ընդունված ձևով. բաց ավետարան ձեռքին հետևյալ գրութեամբ. «Եւ առեալ/զմարմինն/ Յովսէփ պատեց սր կրտաւովք եւ եդ ի նո/որ ներդ/մանի զոր փորեաց ի/վիմի եւ թա/ւալեցոյց/եալ (sic!) կափա.»։ Ավետարանչից հետո նկարված է սորա նշանակը՝ թևավոր հրեշտակ, կարմիր կապայով, կարճթևանի դեղնավուն վերնազգեստով։

Մարկոսը հագել է դեղին կապա և աջ ուսից ձգել կարմիր տոգա. նա երիտասարդ է, նույնպես նստած. ձախ կողմը և ավետարանչի առյուծն է, բավական տգեղ. ավետարանը բաց է, հետևյալ հատվածով. «Եւ Յովսէփ /գնեաց կրտաւ եւ իջուցեալ զնա պատեց կրտաւո(վ) եւ եդ ի գե/րեզմանի/ զոր էր փորել ի վիմէ /եւ թաւա... մի.. նին»։

Ղուկասը սև մորուքով է, նստած. հագել է կարմիր կապա և վրան ձգել դանաչ տոգա. ավետարանը բաց, հետևյալ խոսքերով. «Սա չէր միաբա/... Հուդա/ ...գործս նց /Արիմաթեայ/ քաղաքէ հրէ/ից որ եւ ինքն /իսկ ակն ունէր /արքայուե այ/ յսա մատուցել առ Պիղատո/ս խնդրեաց զը /մարմինն յի/ եւ իջուցել /զնա պատ/եաց պաստառակա»։ Աջ կողմից, ներքևը, նկարված է սևագույն եղը։

Հովհաննէսը հագել է կանաչ կապա և կարմիր վերնազգեստ, անմորուս, սև երկար մազերով. ձախ կողմից թևատարած արծիվ և բաց ավետարան։

Պատկերների միջին տարածությունը ծաղկազարդված է ոսկեզօծ մակերևույթի վերա. ծաղկազարդված են նույնպես պահարանի կողքերը, կապույտ և կարմիր մեխականման ծաղիկներով։

Ներքևում գրված է շինողի հիշատակը.

«Շինեցաւ եւ ծղկցւ պհրնս սբյ / Ամենափրկչիս արդեամբք տն / Սիմէոն սբզն կիզկի սպասաւոր Մկրտիչ վրպետին ի յշակ ին /քն ծնողցն իւրոց Սարգսին եւ Մարթային եւ եղբ[ա]ցն, Պօղոսին, Ղուկա/սին եւ Յօհաննին, եւ քեռն Մարիամին եւ /ամ ննջեցելոցն իւրոց ի ռմիէ թուղ»։

տիչ եւ գրագիր Երեմին եւ լուսաբար Գրիգոր վրդ[ա]ցն գրեցաւ երկու օրինակ, ի ձեռն միոյ գրողի։ Զորս սբզն III ըն (նշանակում է կաթողիկոսն) կնքեալ, զմինն եղ լուսրրին, զի առ նա մնասցէ. եւ զմիան ի վէհարանջն եդ ի պահեստի։ Զի ըստ ժամանակի յրժմ գիտել կամիցի որ գհաշիւ սպասուց սբյ տաճարիս, համաձայնութ երկուց դաւթարաց գիտասցէ»։

Փեղկերի վերա ներսից հետևյալ պատկերները կան. ձախից խաչելություն է, որի աջ կողմից Մարիամն է կանգնած և ձախ կողմից Հովհաննեսը, ուրեմն, բարեխոսի սովորական խմբանկարը: Մարիամը հագել է կարմիր ներքնազգեստ և վերան ձգել կապույտ վերնազգեստ գլխանոցի հետ. Հովհաննեսը՝ դեղնականաչավուն կապա, կարմիր վերնազգեստով: Խաչելության հետևից երևում է Երուսաղեմը, իսկ խաչի տակ Ադամի գլուխը: Խաչելության դիմաց մյուս կողմից հրեշտակն է դեղնականաչավուն ներքնազգեստով և կարմրավուն կարճեհանի վերնաշապիկով. մի ձեռքին գործիք (?) և ավել, մյուսին նիզակ և ձող՝ գլխին սպունգ, ներքևում մուրճ և աքցան:

Ներքևի տեսարանը ձախից ավետող հրեշտակն է, ձեռքին ծաղիկ բռնած և խոսելու շարժումով. նորա դիմաց մյուս փեղկի վերա Կույսն է, ձեռքերը խաչած և ծնկաչոք. հագած է կարմիր ներքնազգեստ և վերան ձգած կապույտ կրկնոց գլխանոցով. գոտին ոսկեզօծ է. առաջին դրած է բաց Սաղմոս հեռևյալ տողերով. «Իջցէ /ոպ զանձ/րեւ ի վր գեղ/ման ոպ ըղ/ցօղ, դի ցօղէ / յերկիր /ծա /գեսցի յաւ/ուրս եր արդարուի / բազում խա/ղաղութի /մինչեւ, կատա/րեսցելուս»:

Պատկերների միջի տարածությունը՝ ոսկեզօծ մակերևույթի վերա՝ ծածկված է կանաչ, կապույտ, կարմիր գույների ծաղկազարդերով, էջմիածնի տաճարի ծաղկազարդման մոտավոր ոճով. պահարանի պատկերագրությունն էլ հնից արտանկարություն չէ, այլ 1778 թվի, այսինքն պահարանի շինության ժամանակի արդյունք:

Ը

Սուրբ պահարանի մեջ է դնեհղված Ամենափրկիչ կոչված փայտակերտ սրբությունը, որ խաչից իջեցնելու տեսարանն է. պատկերը հագցրած է մի քառանկյունի հարթ տախտակի մեջ, որի երկարությունն է 72, լայնքը 32 և հաստությունը $2^1/_2$ սմ: Տախտակը շրջանակված է հյուսկեն օրնամենտով, վերևի և ներքևի կողերը մի, իսկ աջ և ձախ կողերինը մի այլ տեսակ. խաչելության աջ կողքից շրջանակի մի մասը, խաչի հորիզոնական թևից վերև, կոտրված է (պատկ. 17), (պատկ. 10): Երկու տեսակ զարդարանքներն էլ մեր ճարտարապետական և ապա մանրանկարչական արվեստների մեջ հաճախ երևան եկող մոտիվներ են, զուտ գծերի հյուսվածք, միայն տարբեր ձևերով, ընդհանրացած ժԳ դարում յուր քանդակման այս եղանակով, իսկ ծագմամբ ոչ վաղ քան ԺԱ դարը:

Տախտակի փայտը, որի մեջ հագցրած է պատկերը, զանազանվում է բուն խաչելության փայտից, թե գույնով և թե համեմատական նորությամբ նորագ-

ված ձախ կողմից: Բուն խաչն էլ յուր ֆիգուրներով բոլորովին անաղարտ չէ հասել մեր ձեռքը. վերին ձախ անկյան վարդյակը տարբեր է, անհամաչափ մյուս երեքի հետ, և առանձին կտոր. նույնիսկ կարող ենք ասել, որ այդ վարդյակը ժամանակով ավելի ուշ է, քան տախտակի շրջազարդը, որ վարդյակին կից մասում փոփոխության է ենթարկված, հավելված վարդյակին հարմարեցնելու համար: Խաչի հորիզոնական թևերի ծայրերը նույնպես պակասավոր են. աջ թևը չունի անկյունների վարդյակները իսկ ձախ թևը կտրված է մասամբ և պարզ նկատվում է հարմարեցրած է խաչին, ուրեմն և ծագումով ավելի ուշ խաչից և նորա վերա եղած պատկերներից:

Խաչի մյուս զարդարանքը, որ ընթանում է նորա եզրերով շուրջանակի, բացի անկյունների վարդյակներից, ակների շարվածքը ունի մեջտեղ բոլորակ և սեղմած քառանկյունու ձևերով, տեղ-տեղ նկատելի են մինչև իսկ նրանց շրջանակները, մի հանգամանք, որ ցույց է տալիս, թե մեր խաչի սկզբնականը պետք է մետաղից ձուլված լիներ և ակներով զարդարված. և հետևի, պատկերների հագուստի ծալքերը, մազերի գանգուրները, խաչեցյալի գլխի վերա սավառնող աղավնու փետուրները մատնանշում են մի այդպիսի նախատիպ: Խաչի ձևն էլ սովորական չէ. ուղղահայաց թևերը համեմատաբար սովորականից ավելի երկար են հորիզոնականից. ուշադրության արժանի է այդ կողմից հատկապես վերին թևը, բոմանական կոչված խաչի նման: Ներքևի թևի ծայրին նկատելի է կոթի կամ պատվանդանի մնացորդ, որ ցույց է տալիս, թե խաչն սկզբնապես հաստատված էր պատվանդանի վերա, և ոչ հագցրած տախտակի մեջ, ինչպես այժմ. գուցե եղել է այն մի բոլորաձև բարձրություն, որ Գողգոթայի բլուրն էր ներկայացնում:

Ավելի կարևորը խաչից իջեցնելու տեսարանն է յուր հարակից մասերով. կետրոնը, բնականաբար, խաչեցյալն է, որի աջ թևը պատռած է արդեն և կախված Հիսուսի մարմինը գրկած ֆիգուրի ուսին. խաչի վերա նկատելի է բևեռի տեղը: Ձախ թևը տարածված է խաչի վերա և բևեռված, բայց մի երկրորդ ֆիգուր ձախով բռնել է Հիսուսի բազուկը, իսկ աջով աքցանը ձգել բևեռին, դուրս քաշելու համար: Երկու թևերն էլ արմունկից վերև տաշված են, իսկ ձախը նաև կարկատված: Խաչեցյալը մերկ է և երկար սփածանելիքով միայն ծածկված ամոթանքը: Հիսուսը գլուխը խոնարհել է քիչ դեպի աջ և խաչադարդ նիմբուս ունի. մազերը գանգուրներով իջնում են ուսերի վերա. այտերն ու ծնոտը ծածկված կարճ և բոլորակ մորուքով. բեխերը դեպի ցած են իջած, ծնոտի վերա կիսաշրջան կազմելով. աչքերը փակ են և դեմքը հանգիստ[116]: Հիսուսի դիրքը խաչի վերա նույնպես բոլորովին հանգիստ է. մարմինը չի ձգված և կանգնած է ուղիղ պատվանդանի վերա, որ ի դեպ, նույնպես զարդարված է ակնաշարքով, ինչպես խաչի եզրերն էին: Ոտներն ուղղված են դեպի աջ, իրար կողքի, առանց

116 Համեմատել Մանուել Բչնեցու նկարագրությունը (Հավել. 1):

մեխվելու. չեն երևում նաև արյան հետքերը կողքից կամ ձեռքի բևեռած տեղերից։

Խաչից իջեցնող ֆիգուրները, Հովսեփ և Նիկոդիմոս, նիմբուս չունեն, որ քնորոշ ավանդություն է նրանց պատկերագրության համար. աջ կողմինը՝ Հովսեփ, ունի հարթ, վերից վար սանրված մազեր, իսկ ձախինը՝ Նիկոդիմոս՝ գանգուրներով խոպոպիկներ ճակատին իջած. երկուսն էլ կարճ մորուքով և բղեղը ցած իջած դեպի ծնոտը։ Հովսեփը հագել է մինչև ոտները հասնող, բարդ ծալքերով կապա և ձախ ուսի վերայից ձգել է տոգա. իսկ Նիկոդիմոսն ունի միայն գոտևորած, դարձյալ երկար կապա, առանց տոգայի, երկուսի բազուկներն էլ հոլանի են և ոտները մերկ. Հովսեփի ձախ ոտքը կոտրած։

Հիասուսի գլխի վերա իջնում է քևատարած աղավնին, իսկ ավելի բարձր երևում է Տիրոջ աջը՝ հունա-հայկական օրհնությամբ։

Մեր սովորական հասկացողության համար տարօրինակ է նախ այն հանգամանքը, որ Քրիստոսը խաչված է ոչ թե պատժի գործիք ներկայացնող խաչափայտի վերա, այլ գեղարվեստական որոշ զարգացում ու բնույթ կրող խաչի, այն էլ, հավանորեն, ոսկերչականից այստեղ անցած։ Անշուշտ, շատ վաղ ժամանակներից խաչն այլևայլ ձևակերպություններ է ստացել և զարդարանք կրել։ Հռոմում Պուդենցիանայի (S. Pudenziana) բազիլիկայի ափսեի մոզայիկ խաչը Դ դարի վերջերի (384—398) գործ է համարվում, զարդարված գունդգունդ քարերով, թե միջին տարածությունը և թե ևերերը[117]. Բավենայի Ս. Ապոլինարի ափսեի մոզայիկ մեծ խաչը Զ դարից[118]։ կամ Հռոմի Ս. Սաբինոսինը 648 թվից[119], զարդարուն քարերով։ Ապա հիշելի է Crux Vatikana-ն Հռոմեին Բ-ի ևվերը, իսկական խաչ և ոչ պատկեր, մակերևույթը օրնամենտներով և թևերի ծայրերին ու կետրոնում մի-մի մեդալիոնով. խաչի մարմինը, պղինձ է. բայց ծածկված մասամբ արծաթի ոսկեջրած շերտով[120]. բայց սրանցից ոչ մեկը նման չէ մեր խաչին։ Համեմատաբար ավելի նման է թևերի վերջավորություններով Սերգեանովի ժողովածուի խաչը, որ Diehl-ը Զ դարու գործ է համարում, Reil-ը Ը դարից ոչ ուշ, իսկ Սմիրնովը Թ դարից առաջ, մակերևույթը զարդարված քարերով[121], սասրական ծագմամբ։ Հայ-վիրական արվեստի մեջ Ե—է դարի եկեղեցիների — գերեզմանական կոթողների վերա քանդակված խաչերը չեն նույնանում այս խաչի հետ, բացի ոմանց թևերի ծայ-

---

117 Kraus Gesch. der christiachen Kunst I գունավոր պատկերը տպրուժ։ Kondakow. Ikonographia Iesusa Xrista 18.

118 Diehl. Manuel d'art Bizantin. Paris. 1910. 205.

119 Kondakow. Ikonograph. I. X. 27.

120 Diehl. 291. Carl Maria Kaufmann. Christ. Archäologie. 1905. 530.

121 Diehl, 297. Reil. Kreuzigung Ghristi. Lpzg. 1904. 53'4. Smirnow. Wostotschnoe serebro. 7. Tabl. XV.

բերի և վարդյակների թեթև նմանությունը[122]։ Ավելի ուշ ժամանակի խաչաքանդակներ, ոչ վաղ քան Ժ—ԺԱ դարը, մոտ են այդ կողմից մեր խաչին[123]։ Այս բոլոր հանգամանքները ի մի հավաքած պետք է մեծ զգուշավորությամբ վերաբերվենք նաև դեպի ամբողջության է դարում ծագման ավանդությունը։

Ը

Խաչի ձևակերպությունից և նրա հետ կապված այս արտաքին ցուցումներից ավելի կարևոր նշանակություն ունին մեր Սրբության ժամանակը որոշելու համար խաչելության առանձնահատկությունները։ Մեր Ամենափրկիչը, թեև բուն խաչելություն չէ, այլ խաչից իջեցնելու պատկեր, բայց համեմատելի է հնագույն խաչելությունների առանձնահատկությունների հետ՝ ժամանակի վերաբերությամբ զուտ հնագիտական ցուցումներ ևս ստանալու համար։

Խաչելության պատկերները մինչև Ը դար երկու բնորոշ խմբի կարելի է բաժանել, ինչպես մանրակրկիտ ուսումնասիրությամբ ցույց է տվել Reil-ը[124]. առաջինը կարելի է Մոնցայի յուղաշշերի տիպ անվանել, որ իսկապես խաչելություն չէ, այլ այդ գաղափարի սիմվոլիկ արտահայտություն. բուն խաչելության փոխարեն խաչի գլխին Հիսուսի մետալիոնը կամ անդրին նիմբուսով Մոնցայի շշիկների հնագույնները Զ դարի վերջերից են, բայց պատկերների մոտիվներն ավելի հին, երբ դժվարանում էին դավանաբանական և գեղասիրական տեսակետներով պատկերավորել խաչեցյալ Փրկչին. նախ խաչն էր խաչելության տեղը բռնում և ապա սիմվոլիկ խաչելությունից բուն պատկերագրության անցնում։ Այդպիսի հայացքի հետ էր կապված նաև, որ խաչի կետրոնում ձևացնում էին գառն Աստուծո, ինչպես Հուստին Բ-ի վերոհիշյալ խաչի վերա ենք տեսնում. Հինգվեցյան (Quinsextum) ժողովն արդեն յուր 82-րդ կանոնով հանձնարարում է գառն Աստուծո փոխարեն՝ Հիսուսի մարդկային պատկերը գործադրել[125]։

Հայ գերեզմանական կոթողիկների արվեստն էլ, հաստատուն կերպով կապված միջագիտական-սասանյան հոսանքի հետ Դ—Զ դարերում, տալիս է նույնպիսի հասկացողությունների ապացույց։ Մաստարայում գտնվում է քառանկյունի մի կոթող, վատ պահված վիճակում, մի երեսին քանդակված է

---

122 Tschubinaschwili, Die Kirche von Mzcheta. 1921, 46 Tabl. VII: Strzygowski, Die Armenische Bankunst. 1918, 717 *(պատ. 679)*։

123 Strzygowski, Arm. B. K. 258.

124 Die frühchristlichen Darstellungen der Kreuzigung Christi. Lpzg. 1904. 51/52. 99/100· Kraus, Geschichte der christ. Kunst. I. 172—173. Pokrowski, Ocerki pamiatnikow xristianskawo Iskysstwa, Ikonographii. SP. 1910, 185:

125 Hefele. Conciliengeschichte. *երկր. հրատ. III, 340.*

ծողաբարձ խաչ, գլխին Հիսուսի անդրին՝ քառանկյունի շրջանակի մեջ[126] (պատկ. 18), իսկ խաչի ձևը հար և նման Վենինգրադի էրմիտաժի վաղ բյուզանդական բաժնում ցուցադրած մի խաչի, որի ժամանակը 400 թիվն է նշանակած, տարաբախտաբար Ն-ը չունինք նշանակած։ Կոթողի ճարտարապետական պիլաստրներն էլ մասնացույց են անում հնագույն բազիլիկաների արվեստը, որ վաղ է Հայաստանում, քան 2 դարի կեսերը. կոթողը համարում ենք ե դարու գործ։ Խաչի սիմվոլիկ գործածությունը խաչելության փոխարեն՝ հայ արվեստի մեջ պահված է նույնիսկ շատ ավելի հետո՝ ԺԴ դարում, որի մասին խոսք կլինի հետո։

Երկրորդ և ավելի տիրապետող տիպը ավետարանական պատմության (Հովհ., ԺԹ) առարկայական արտահայտությունն է, ավելի կամ պակաս ամբողջությամբ։ Մեզ հետաքրքրում է այժմ միայն Հիսուսի խաչելությունը, ուստի և ոչ այս և ոչ մյուս խմբի մանրամասնություններ չենք հիշատակում, մանավանդ, որ առաջինը կապ էլ չունի մեր Սրբության հետ։ Դռցանից հնագույնը Սաբինայի դռան խաչելությունն է, երկրորդը Պերմի սկուտեղի և ապա Բաբուլայի 586 թվի ավետարանի խաչելության պատկերը և ուրիշ մի քանի մանր իրեր։ Բրիտանական թանգարանի հայտնի խաչելությունը փղոսկրի տախտակի վերա ե դարից, հաշվի չենք առնում՝ դուտ արևմտյան ծագում ունենալու պատճառով։

Արդ, Սաբինայի դռան պատկերաքանդակի մեջ տեսնում ենք Հիսուսը խաչված է գերանների վերա, ուղիղ կանգնած, գլուխն առանց թեքելու, մազերն երկար և թափված ուսերի վերա, կարճ մորուքով և բաց աչքերով, թևերը քիչ ճկված արմունկներից, մարմինը մերկ, ամոթանքը միայն ծածկված նեղ ծածկույթով, ոտքերն իրար մոտ և դեպի առաջ ուղղված[127]։ Պերմի սկուտեղը ասորական արձանագրության հնագրական նշաններով համարված է ե—զ դարի գործ. սկուտեղի մեդալիոններից մեկը խաչելությունն է. այստեղ Հիսուս հագել է մինչև ոտները ծածկող, թևերով շապկաձև հագուստ (κολόβιον, colobium) գլխի շուրջը հասարակ նիմբուսով, երեսն ու բաց աչքերը ուղիղ դեպի առաջ։ Գլխի մազերը երկար և ուսերի վերա իջած, այտերն ու ծնոտը միրուքով ծածկված, թևերը հորիզոնական տարածված, ոտքերի տակ պատվանդան, առանց ցավի արտահայտության և հոգեկան ուժերի դեպի ընդապատը[128]։ Բաբուլայի մանրանկարի մեջ Հիսուս հագել է մինչև ոտները հասնող, անթև կոլոբիոն (κολόβιον), հասարակ նիմբուսով, գլուխը քիչ դեպի աջ ավարտակը թեքած, աչքերը բաց. ձեռքերը տարածել է խաչափայտի հորիզոնական թևերի վերա, որ բևեռված են ափերի միջից. ոտքերը նույնպես բևեռված թաթերից վեր, բայց առանց պատվանդանի. ամբողջ մարմնով, կարծես, կանգնած, առանց ցավի

126 Լուսանկարի համար պարտական ենք Թ. Թորամանյանի սիրալիրության։

127 Սաբինայի դռան պատկերը տե՛ս Kraus, I, 174։

128 Reil, Taf. II, Smirnow, Vost. serebro. Tabl. XV, 38.

արտահայտության, թեև խոցված կողից արյուն է թափված, մի հանգամանք, որ տեսարանի բարդության հետ, տեղիք է տվել կասկածելու պատկերի անաղարտ մնալու մասին[129]։

Յոթերորդ դարուց առաջ պետք է դնել Ախմիմի ոսկեթելերի խաչելությունը, նիմբուսը խաչաձև, բաց աչքերով, կարճ մորուքով, դեմքը դեպի առաջ ուղղված, ձեռքերը խաչի հորիզոնական թևերին տարածված, վերից վար մինչև ոտները հասնող թևավոր շապիկ, վերան ժապավենաձև երկու շերտով, ոտքերը պատվանդանի վերա ուղիղ կանգնած, ինչպես և եգիպտական մի ասեղնագործ, հաստաբակ նիմբուսով, դեպի առաջ ուղղված դեմքով, որ ծածկված է կարճ մորուքով, հորիզոնական ձգված թևերով։ Հագել է մինչև ոտները հասնող տունիկա, վերայից կարճ պալիում, կանգնած ուղիղ՝ կենդանի մարդու նման, լայն պատվանդանի վերա. միայն պարզ չէ, աչքերը բա՞ց են, թե ոչ[130]։

Յոթից ութերորդ դարի գործեր են իրենց ծագումով նաև մի քանի բրոնզե քուլպաններ կամ զամբարներ, որոնց օրինակները ցրված են այլևայլ թանգարաններում[131]։ Կոնդակովը համարում է Թ—Ժ դարի բյուզանդական արվեստի արտադրությունները. բայց անուրանալի է, որ նրանց ծագումը Պաղեստինից է և կամ Ասորիքից, որ հաստատել կարելի է պատկերների առանձնահատկություններով և մասամբ գլուտերի տեղով (Ասորիք, Հայաստան, Նուբիա)։ Պատկերներից մեկն էլ խաչելությունն է, Հիսուսը հագել է անթև շապիկ. խաչի թևերի տակ կանգնած են Ումրիամը և Հովհաննեսը, համեմատաբար ավելի փոքր դիրքով. ոմանց վերա նաև աջ և ձախ կողմից մի-մի դրահավորված զինվոր, նիզակով և ձողաբարձ սպունգով կամ առանց այդ նշանների. խաչի հորիզոնական թևերից վեր՝ արեգակ և լուսին։ Զրահավորված և իրենց նշանակներով զինվորների ներկայությունը համբանկարի մեջ հարկադրում է նրանց ծագումը Զ—Թ դար դնել, որից հետո արդեն ուրիշ նշաններ են երևան գալիս խաչելության պատկերագրության մեջ։

---

[129] Պատկերը տե՛ս Kraus I, 175 Beissel Gesch. der Evangelienbücher 1906, Freiburg i/B, 64. Kraus ժԱ դարն է համարում պատկերի փոփոխության ժամանակը. Անտասաս Մինեացուն վերագրված խաչելությունը նուբիական կասկածելի է համարում, թե է դարի գործ լինի (II, 313, պատկ. 225)։

[130] Kraus I, 170. Kaufmann, Die christliche Archäologie. 1905. 396—397.

[131] Դժբախտից երկուսը, որ գտնվել են Ջրաբերդի եղիշե առաքյալի կամ Ջրվշտիկ վանքում և Վարանդայի Սիամորաշեն գյուղի մոտ, հրատարակել ենք «Տարազում» 1909 № 1, «Հնումիան և վարանդայի Սիամորաշեն գյուղի մոտ, հրատարակել ենք «Տարազում» 1909 № 1, «Հնումիան նշխարներ» վերնագրով և ապա նվիրել էջմիածնի թանգարանին. մի երրորդ օրինակ ձեռք է բերել հանգուցյալ Խալիկ վարդապետը, որ գարձյալ նույն թանգարանում է այժմ։ Կոնդակովի և Ռևարովայի օրինակների մասին Russkia drewnocmu w pamiatnikach Iskysstwa. SP. wipusk IV, 1891. Otto Pelka-ն ևս հրատարակելով Նյուրնբերգի թանգարանի օրինակը, տալիս է ևվրոպական թանգարաններում գտնվածների ցանկը. երկու օրինակ էլ տևսել ենք Կաթերի թանգարանում և երկու օրինակ Լենինգրադի էրմիտաժում, ակադեմիկոս Մառի կողմից հանձնված։

Վերև թված խաչելության այս պատկերների մեջ իրենց տարբերություններով հանդերձ, նկատվում են ընդհանուրին հատուկ նմանություններ. ամեն տեղ խաչեցյալը կենդանի է, աչքերը բաց, դեմքը դեպի առաջ ուղղված, անտարբեր դեպի շրջապատը, առանց ցավի նշանների և արյան հետքերի բևեռված տեղերում: Ը դարից արդեն փոփոխության է սկսում նմանակվել խաչելությունը. երևան են գալիս նոր գծեր. Հիսուսի գլուխը թեքված է դեպի աջ և հոգևոր հաղորդակցության է նկատվում դեպի շրջապատը, մայրը կամ աջակողմյան ավազակը: Սրանց վերա ավելանում են հետո զուտ ժամապաշտական նշաններ. բևեռների տեղերից կամ խոցված կողից արյուն է հոսում և ավելի հետո այդ արյունը գետին չի թափվում, այլ հրեշտակի կամ անձնավորյալ եկեղեցու ձեռքով բռնած բաժակի կամ սկիհի մեջ[132]: Ապա խաչեցյալի դեմքը, ձեռքերն ու մարմինը ցավի արտահայտություն են ստանում. վիշտ է արտահայտում և շրջապատը: Բայց այս փոփոխությունները կատարվում են հետզհետե աստիճանաբար, սկզբում պահելով հին շրջանի մի քանի առանձնահատկությունները, ինչպես բաց աչքերը, գրեթե մինչև Ժ դարը և հետո, մարմնի ուղիղ դիրքը, ոտքերն իրար կողքի և այլն:

Այս երկրորդ շրջանի հնագույն օրինակներն ունինք բյուզանդական սաղմոսարանների պատկերագրության մեջ, որոնցից հնագույնը Խլուդովի սաղմոսարանն է, Թ դարի գործ[133]. այստեղ խաչելության երեք մանրանկարներից երկուսը անձև կոլոբիոն ունի, և միայն մեկը մինչև ծնկները հասնող ազգրոբի ծածկույթ. բոլորի մեջ էլ խաչեցյալի աչքերը բաց են, գլուխը դեպի աջ թեքված, նկատվում են բևեռների տեղերը ոտքերի և ձեռքերի վերա, բայց առանց արյան նշանների և ցավի արտահայտության: Հիսուսը կանգնած է ամենուրեք պատվանդանի վերա, ուղիղ և հանգիստ, առանց անդամների ձգման, ոտքերը դեպի աջ: Իններորդ դարի գործ է նաև Գրիգոր Աստվածաբանի ճառերի պատկերագրությունը, պատրաստված բյուզանդական, հայազգի կայսր Բարսեղ Ա-ի (867—886) համար, ըստ Բայսելի 875 և ըստ Կոնդակովի 880—885 թվին[134]. այստեղ խաչելության պատկերագրությունը կրում է արդեն միջնադարյան արվեստի հայտնի նշաններ. Հիսուսը, թեև կենդանի և ուղիղ կանգնած պատվանդանի վերա և երկար կոլոբիոն հագած, բայց արյուն է հոսում բևեռների տեղերից, Մարիամը գլուխը խոնարհած ողբում է, իսկ Հովհաննեսը վշտ-

---

132 Հայ մանրանկարչության մեջ ԺԱ—ԺԲ (պատկ. 22) և մանավանդ ԺԳ դարում են երևում այս առանձնահատկությունները (տե՛ս պատկ. 32, 33, 34):

133 Materiali Gretscheskoi rukopist psaltiria IX weka. N. P. Kondakowa, Moskwa 1878: Սրան, գրեթե ժամանակակից է Փարիզի Ազգային մատ.-ի Սաղմոսարանը, իսկ Բարբերինի և Լոնդոնի օրինակները ԺԱ դարի, թեև նույն խմբագրությամբ: Sotschinenie Buslaewa. I, 1903.

134 Beissel, Gesch. der runng. Bücher. 40. Kondakow, Istoria Bisantijskawo iskusstwa, 108.

տահար դեմք ունի։ Ժ և հետագա դարերի խաչելությունները նոր գծերի հետ առանց բացառության ունին վերոհիշյալ առանձնահատկությունները. տանջվող և մեռնող Հիսուսի պատկերագրությունն սկսվում է այսպիսով Թ դարում և տիրապետող դառնում Ժ-ում։ Ավելացնենք, որ հատկապես խաչից իջեցնելու և թաղման պատկերագրությունները իրական մնացորդներ ունին բյուզանդական արվեստի մեջ միայն Թ դարում, Դրիզոր Աստվածաբանի վերոհիշյալ երկի մեջ, իսկ արևմուտքում Թ—Ժ դարում Անգլերի և Էգբերտի ավետարաններում, իսկ ԺԱ դարից Զալցբուրգում և Բանբերգում կամ Ռեգենսբուրգի շրջանում գրված ձեռագրերի մեջ[135]։

Ժ

Հայոց մեջ այս խնդիրը յուր զարգացման հատուկ ուղի ունի, կապված եկեղեցու ընթացքի և դավանաբանական որոշ հայացքի հետ. բայց ինչպես բյուզանդական և արևմտյան եկեղեցիների մեջ, այնպես էլ Հայոց՝ այս հարցում ծագման նախահայրենիքը Սրուսաղեմն է և ապա Սորիքը մինչև Ը դարը։ Մեր վիմական, նախնական պատկերագրության մեջ՝ Ե—է դարերում, երևան չի գալիս ոչ մի տեղ խաչելության, ևս առավել հետագա իրողությունների՝ խաչից իջեցնելու և թաղման տեսարանները, թեև բոլորովին հաղվագյուտ չեն տերունական, սրբոց և նույնիսկ կենցաղական քանդակներ, գերեզմանական կոթողների և եկեղեցիների պատերի վերա։ Խաչի քանդակն այլևայլ պեսպիսությունների հայտարարն է քրիստոնեության և նորա խաչեցյալ հիմնադրի անձնավորության. այդպիսի մի օրինակ տեսանք վերև Մաստարայի կոթողի վերա. չեն պակասում Դ—Զ դարերում պակի մեջ առնված հավասարակող խաչերի և երկու կողմից աղավնիների խմբակցությունը, որ նույն գաղափարի արտահայտությունն է։

Վեցերորդ դարի վերջում հիշվում է «զմարմնացելոյն Աստուծոյ զպատկերըն», բայց չկա որևէ ցուցում, թե դրա մեջ նաև խաչելության պատկերը պիտի հասկանալ[136]. խաչելության և թաղման պատկերագրության եզակի հիշատակություն կա միայն Վրթանես Քերդողի «Յաղագս պատկերամարտից» գրության մեջ[137]։ Օձնեցին ևս յուր Պավղիկյանց շառի մեջ պաշտպանում է միայն խաչերի և երկու կողմից աղավնիների խմբակցությունը, որ նույն գաղափարի արտահայտությունն է։

Վեցերորդ դարի վերջում հիշվում է «զմարմնացելոյն Աստուծոյ զպատկերըն», բայց չկա որևէ ցուցում, թե դրա մեջ նաև խաչելության պատկերը պիտի հասկանալ[136]. խաչելության և թաղման պատկերագրության եզակի հիշատակություն կա միայն Վրթանես Քերդողի «Յաղագս պատկերամարտից» գրության մեջ[137]։ Օձնեցին ևս յուր Պավղիկյանց շառի մեջ պաշտպանում է միայն խաչերի և երկու կողմից աղավնիների խմբակցությունը, որ նույն գաղափարի արտահայտությունն է։

Վեցերորդ դարի վերջում հիշվում է «զմարմնացելոյն Աստուծոյ զպատկերըն», բայց չկա որևէ ցուցում, թե դրա մեջ նաև խաչելության պատկերը պիտի հասկանալ[136]. խաչելության և թաղման պատկերագրության եզակի հիշատակություն կա միայն Վրթանես Քերդողի «Յաղագս պատկերամարտից» գրության մեջ[137]։ Օձնեցին ևս յուր Պավղիկյանց շառի մեջ պաշտպանում է միայն խաչերի և երկու կողմից աղավնիների խմբակցությունը, որ նույն գաղափարի արտահայտությունն է։

Վեցերորդ դարի վերջում հիշվում է «զմարմնացելոյն Աստուծոյ զպատկերըն», բայց չկա որևէ ցուցում, թե դրա մեջ նաև խաչելության պատկերը պիտի հասկանալ[136]. խաչելության և թաղման պատկերագրության եզակի հիշատակություն կա միայն Վրթանես Քերդողի «Յաղագս պատկերամարտից» գրության մեջ[137]։ Օձնեցին ևս յուր Պավղիկյանց շառի մեջ պաշտպանում է միայն խաչերի և երկու կողմից աղավնիների խմբակցությունը, որ նույն գաղափարի արտահայտությունն է։

---

135 Beissel, 128, 213, 310, Kraus II, 345, 214.

136 Կաղանկատուացի, հրատ. Շահնազարյանցի, Փարիզ, 404։

137 Տաշեան, Ցուցակ Վիեննայի Մխիթ.։

արանց երկրպագելով «ոչ յերկուանամ նմին ինքեան բազմելոյն ի նոսա Քսի զերկրպագումն մատուցանել, ոչ հայելով յերևելին առաւել, քան զանտեսանելին ի նման գանձանալ ընդ միտ ածելով»[138]։

Դևոնդը ևս հիշում է արաբացիների կողմից «զկենդանագրեալ պատկերս ճշմարիտ մարդեղութեան Տեառն մերոյ և Փրկչին և նորին աշակերտացն» կամ «և զնմանութիւն պայծառացեալ խաչին Քրիստոսի» խորտակելու մասին, Ը դարի առաջին քառորդին և հետո[139]։ Այս ցուցումների մեջ ամենաշատը կարելի է ենթադրել խաչի հետ թերևս և խաչելության գոյությունը, բայց ոչ երբեք խաչից իջեցնելու և թաղման պատկերների, որ ինչպես տեսանք արևելյան մյուս եկեղեցիների մեջ էլ ավելի վաղագույն շրջանների համար տեղեկություն չունինք։

Ութերորդ և իններորդ դարերը, արաբական տիրապետության ուժեղ ժամանակները, աննպատակ էին հայոց մեջ ֆիգուրատիվ արվեստի զարգացման և տարածման համար, և հիրավի, Այսմավուրց աթոռի հետ կապված Ը, Թ և Ժ դարերի խաչի սրբությունները ոչ մեկը այդպիսի բնույթ չուներ, ինչպես պարզ տեսնել կարելի է Օրբելյանի խաչերի հաճախ կրկնած նկարագրություններից[140]։ Տաթևի և Գնդեվանքի որմնանկարչության բովանդակության մասին Ժ դարում մեր տեղեկությունները սուղ են, իսկ Գագիկ Վասպուրականցու Աղթամարը, որ Հայաստանի համար բացառիկ կերպով այնքան հարուստ էին և Նոր կտակարանի և սրբոց հետ կապված քանդակներով, չունի մեր նյութին վերաբերյալ պատկեր։ Հայ եկեղեցին խաչելությունից, բայց մանավանդ խաչից իջեցնելու և թաղման պատկերավորությունից ավելի շեշտել է այս շրջանում և պաշտաման ու արվեստի առարկա ընդունել խաչի նշանը. այսպիսի հայացքի արդյունք են և ապացույց խաչի շարականների ծաղկումը է դարում և խաչերի ու խաչքարերի արվեստի ծաղկումը է դարից առաջ, և մանավանդ ավելի հետո առանց պատկերագրության, երբեմն միայն սիմվոլիկ նշաններով։ Անանիա Սանահնեցին ԺԱ դարի առաջի կեսին մերժելով խճողված պատկերապաշտությունը, ավելացնում է. «ես զՔրիստոս կենդանի պատկեր միշտ ի խաչին խոստովանիմ», իսկ հակառակորդները (հուլները և վրացիք) «առավել քան զխաչ և զկենդեցի պատուին և պաշտին զպատկերս»[141]։ Նման դիրք ունին բռնած նաև Խաչիկ կաթողիկոսը և մանավանդ Հովհաննես Սարկավագ վարդապետը[142]։ ԺԳ դարի սկզբում իսկ Մխիթար Գոշը պարզ և որոշ հայտնում է. «յոյնք և վիրք զպատկերագրութիւն առաւել պատուին և հայք զխաչ»[143]։ Խաչով խաչելությու-

138 Յովհաննու Իմաստասիրի մատենագրութիւնք, Վենետիկ, 1893, 35, 39, 40, 42։

139 Եզնկի հրատ., Սպ., 1887, 100, 152։ Համ. Ասողիկ, Շահնազարյանցի հրատ., 130։

140 Գաւոմ. Նահանգին Սիսական, Թիֆլիս, 1911, 203, 215, 219, 231, 319։

141 Ձեռ. էջմ., № 518։

142 Ասողիկ, Շահնազ. հրատ., 227—228։ Ձեռ. էջմ., № 518։

143 Արարատ, 1901, 562։

նը արտահայտելու ավանդությունը մնոած չէ հայոց մեջ նույնիսկ այս դարում. էջմիածնից ոչ հեռու՝ Աշտարակ գյուղաքաղաքում, Թումաս քահանան կանգնել է 1267 թվին մի հոյակապ խաչարձան, առանց խաչելության պատկերի, մինչդեռ խաչի հորիզոնական թևերից վեր քանդակված են արեգակ և լուսին, խաչելության հարակից նշանները (պատկ. 44)։

Բայց այս տեսությունը հիմք չպետք է ծառայե եզրակացնելու, թե խաչելության պատկերագրությունն իսպառ վանված էր հայ եկեղեցական արվեստից մինչև տասներորդ դար, մանավանդ քաղկեդոնիկ հայերի շրջանում, երբ արդեն մանրանկար ունինք ձեռագրերի մեջ, իսկ խաչից իջեցնելու՝ ԺՍ դարից։ Մեր նպատակն էր միայն պարզել, թե խաչելության պատկերագրության գործածությունը չպետք է ընդհանրացած լիներ մինչև Ը դար, իսկ խաչից իջեցնելու տեսարանը ևս առավել, իսկ այնուհետև էլ միայն հազվագյուտ երևույթ, որի մի օրինակն ունինք ԺԳ դարից (պատկ. 21), (պատկ. 13)։ Խաչքարը պատկերվում է Վայոց ձորի Հիրհիր ավանում, Շահումնեցի իշխանների կնտրոնն էր[144]։ Արձանագրությունը մեզ տեղեկություն է տալիս կանգնեցնողի և թվականի մասին.

«Թվ. ՉԼԵ։ /Ես Ամ/ բարս կ/անգնեցի/ խաչս որ/դոյ
իմոյ Շահագին յաղաւթ յիշէք»։

Խաչքարը յուր օրնամենտացիայով և քանդակման եղանակով համապատասխան է ԺԳ դարի արվեստին, բայց խաչի ձևը կետրոնի պատկով, մանավանդ խաչեցյալի երկար կոլոբիոնը, գլխի հազիվ նկատելի դեպի աջ թեքումը, գուցե, և բաց աչքերը, ոտքերի դիրքը ավելի հին ավանդության են մատնանշում օրինակի ծագման, քան մեր Ամենափրկիչը։ Տարաբախտաբար տեղում որևէ նկատողություն չենք արել Մարիամի և Հովհաննեսի շարժումների և դեպի խաչեցյալն ունեցած հարաբերության մասին. իսկ լուսանկարի մեջ բոլորովին պարզ չէ, բայց հավանական է հանգիստ, առանց վշտի արտահայտության։ Բուն խաչքարի մեծությունն է 1,7×0,77 սմ։

Ժ դարից և ԺՍ-ի առաջին քառորդից արդեն ունինք խաչելության մանրանկարներ հայ արվեստի մեջ, որոնք հաստատում են մեր տեսությունը Ամենափրկչի ծագման ժամանակի նկատմամբ, համեմատության նյութ տալով վիեննայի Մխիթարյանները հրատարակել են օտարազգի հայագետների հոդ-

---

144 Շահումնեցիք մնկն էին Զաքարյանց օրով Հայաստանի քաղաքական վերածնության իշխանությունները, և ենթարկվում էին Օրբելյաններին, որպես նրանց սպարապետներ։ ԺԳ դարի կեսերին սպանվում է այս տոհմի արական սերունդը և մնում է միայն Ամադին իշխանի և նորա կնոջ Թուխթանի միակ դուստրը Նաթեն, որին տան փեսա են բերում և հայրենյաց ժառանգ կնոջ Թուխթանի միակ դուստրը Նաթեն, որին տան փեսա են բերում և հայրենյաց ժառանգ Բուրթել Օրբելյանի թոռն և Բեշքենի որդի Կուվը։ Թուխթանեն էր «դուստր Իանէ Որու տան իշխեցողի, քոյր քաջ քարտուղարի և երջանիկ բարեմասնեի Յովհաննէս վրդի», որ հայտնի Որոտնեցին է։ Հիշ. Վարդապետի ավետարանի, մեր ժողովածուից։

վածների մի ժողովածու, նվիրված Հանդես ամսօրյայի քառասնամյակին[145]։ Այդտեղ ի միջի այլոց August Merk-ի մի հոդվածը կա Die Miniaturen des armenischen Evangeliars № 6 der Wiener Mechitharisten Bibliothek վերնագրով. ձեռագրական հատակոտորը համարվում է հեղինակի կողմից ոչ ուշ քան ԺԴ դարը. մեր կարծիքով ԺԴ դարի վերջերից կամ ԺՍ դարի սկզբից։ Մանրանկարներից մեկը խաչելության պատկերն է, ԺԴ դարի նույն պատկերագրության հատկանիշներով. խաչեցյալի գլուխը քիչ թեքված դեպի աջ, թևերը ձգված արմունկների մոտ զգալի շեփով. մայրը թևև վշտի արտահայտություն չունի, բայց աջ թևը դեպի խաչեցյալը բարձրացրած. Հովհաննեսը ևս մտածման մեջ է, գլուխը աջ թևի վերա հենած, իսկ ձախը թեթև դեպի խաչը մեկնած. ամոթանքը ծածկված սփածանելիքով մինչև ծնկները, նշաններ, որոնցից մի քանիսը մոտենում են մեր Ամենափրկչի խաչելության։

Մի երկրորդ մանրանկար խաչելության առնված է Կարնո Շխնոց գլուղի ավետարանից, որի անունով և կոչվում է ավետարանը, վերջին պատերազմի ընթացքում էջմիածին բերված. գրված է1938 թվին Եվարգրիս (sic) գրչի ձեռքով. «Գրեցաւ սուրբ աւետարանս այս ձեռամբ իմով Եարգրիս մեղուցեալ աւ անարժան կրաւնաւորի՝ ի թուականութեան հայոց ՆՀԷ ի հայրապետութեան տն Պետրոսի և գնի նորա կենդանութեան նստաւ այդ հայրապետ որ կոչի անուն նորա Դիոսկորոս և ի թագաւորութեանն յունաց Միխայելի բարեպաշտի»։ Ձեռագիրը զարդարված է խորաններով և տնօրինականներով, արժեքավոր հայ արվեստի համար բերած նորություններով. մանրանկարներից մեկն էլ (7բ) խաչելությունն է (3½×24,2 սմ), որ աչքի է ընկնում յուր բարդությամբ (պատկ. 22), (պատկ. 17)։ Աջից և ձախից խաչված են երկու ավազակները, իսկ խաչի տակ կանգնած են ոչ միայն Մարիամը և Հովհաննեսը, այլև դինվորներից մեկը խաչեցյալի աջ կողմն է խոցում, մյուսը ձախից սպունգ մոտեցնում Հիսուսին. Մարիամի հետևից էլ կանգնած են երկու կանայք, իսկ Հովհաննեսի հետևից՝ հարյուրապետը։ Հիսուսի գլուխը թեքված է դեպի մայրը և մեխված տեղերից արյուն է կաթկթում, նշաններ, որոնք մատնանշում են ավելի ուշ ժամանակի ծագում, քան մեր Սրբությունը։

ԺԱ

Մեզ մնում է քննության առնել Հավուց թառի Ամենափրկչի խաչեցյալի գլխին սավառնող, թևատարած թռչունը և վերից օրհնող աջը։ Թռչունը ավելի

---

145 Monumenta Armenologiea. «Հիշատակարան՝ Հանդես Ամսօրեայի քառասնամեակի, նվիրված սուրբ Ղազարի հայագետների», 1927, Վիեննա։

նման է արծվի[146], բայց աղավնի է այստեղ, ընդհանրացած քրիստոնեական արվեստի մեջ իբրև Ս. Հոգու կամ մարդկային հոգու նշանակ. վերջին նշանակությամբ օրինակներ ունինք կատակոմբաների մեջ Դ դարից էլ առաջ, իսկ այնուհետև շատ հաճախ Դ—Զ դարի փղոսկրի դիպտիխների կամ սարկոֆագների վերա, խաչի հորիզոնական թևերին դեմ առ դեմ զույգ աղավնիներով կամ մի-մի հատ Քրիստոսի մոնոգրամի կամ խաչի պլխին[147]:

Նույն երևույթը նկատում ենք և Դ—Ե դարի հայ արվեստի մեջ, ինչպես էջմիածնի հյուսիսային պատին (պատկ. 23), (պատկ. 18) կամ Աղցի սուրբկրյա գերեզմանատանը՝ պատկի մեջ առնված հավաստարակող խաչի հորիզոնական թևերին, երկուսն էլ Քրիստոսի անվան փակագիր, Մաստարայի վերոհիշյալ կոթողի մյուս երեսի վերա, խաչի պլխին (պատկ. 25).[148] Նաև Ապարանի շրջանի Ափնա գյուղի ավերակ, բազիլիկ եկեղեցու դռան ճակատաքարի քանդակի մեջ զարդերով և ձևակերպությամբ նման քաստաղի կամ Բաշ-Ապարանի ավագ ժամանակակից և յուր տեսակի մեջ հայ ճարտարապետության ամենաթանկագին մնացորդներից մեկի ճակատաքարին: Ափնա գյուղի եկեղեցին համարում ենք ոչ ուշ քան Զ դարը, իսկ Քաստաղինը՝ քան Ե դարը, որ առիթ կունենանք պարզելու հատուկ աշխատության մեջ, ինչպես և գերեզմանական կոթողների պատկերագրությունը մինչ է դար:

Զույգ աղավնիները նկատում ենք և ավելի հետո՝ խաչքարերի վերա: (պատկ. 4, 27): Այս վերջին յուրատեսակ խաչքարը դասվում է Վեդիի ակումբներում՝ Մանկուսի հին գերեզմանատանը (մեծ. 1,17 × 0,85) ուր կա մի այլ խաչքար Քրիստոսի մոնոգրամով (վեցթևանի խաչ), մի ուրիշը Գառնիում, որ է դարից ավելի վաղ շրջանին են պատկանում[149]:

---

[146] Արծվի խաչելության հետ երևան է գալիս իրանական արվեստի մեջ, որ ըստ Strzygowski-ի մեծ կապ ունի արևելքի հետ: Reil-ը krenzigung 121 և տես տա. V կապուտ է դիցաբանության հետ:

[147] Kraus I, 99, 253. Kaufmann, Christ. Archäol. 294. 311—313. 506.

[148] Աղցինը լուսանկարված է Աշխարհիկ Քալանթարի ձեռքով դիպչից պատրաստած կաղապարից, իսկ Մաստարայինը Թորամանյանի ձեռքով. երկուսին էլ խորին շնորհակալություն:

[149] Յուր ձեռքով, խորհրդանիշներով և հին թվականով մի կարևոր խաչքարի մասին տեղեկություն է տվել Խաչիկ վարդապետը, Վայոց ձորի և Զանգեզուրի սահմաններում եղած Դուշրիբլաղ գյուղի [այժմ՝ կնչուտ—կազմող] մեջ: Խաչի բարձրությունն է մոտ վեց մետր, աչքի չափով, յուր ձևով նման մահմեդական գերեզմանաքարերին, այսինքն վերևի մասը բոլորակ ու լայն, որ հնազհետև նեղանում է դեպի պատվանդանը (այդ ձևի մի խաչքար տե՛ս մեր Նաղարակիանը, Ա, 135). արևմտյան երեսին քանդակված է մի պարզ խաչ հորիզոնական թևերից բարձր դեմ առ դեմ երկու աղավնի, ապա թևերի ծայրերին արագիլ, իսկ հիմքի մոտ ուղղահայաց ձողի արմատում երկու բազ, որոնց ոտներից ցած երկու օձ (?) օղակ են կազմում իրար փաթաթված: Հորիզոնական թևերի տակ կա հետևյալ արձանագրությունը. «Սուրբ Գէորգ / ես արարիչ (?) Ուսէլի ծառա քրիս: Իսկ խաչքարի հետևը, դեպի արևելք. «Քի սարերուն (?) բարեհոգութիւին (?) տէր տէր Յեսանեան Սունեաց եպիսկոպոսի. ի թագաւորութեան Վասակա տէր Բարգենի որդի Սիւ-

Խաչելություն: Ավետարան, XI դ.:
Երևան, Մատենադարան, ձեռ. № 7736, թերթ 19աբ

Իբրև Ս. Հոգու նշանակ հնագույն օրինակն ունինք կատակոմբաների մեջ Բ դարից, իսկ Գ—ե դարերում սարկոֆագների և փղոսկրի դիպտիխների վերա[150] մկրտութեան հետ կապված, ինչպես և մեղանում Օձունի գերեզմանական նշանավոր կոթողի մկրտութեան տեսարանի մեջ, ոչ ուշ քան Զ դարի առաջին կեսը։ Բալխի գերեզմանական մի ուրիշ կոթողի վերա մկրտվող Հիսուսի գլխին իջնում է աղավնին՝ կոցին պսակ բռնած (պատկ. 28), դարձյալ ոչ ուշ քան Զ դարը։ Բայց այդ միակ երևույթը չէր. Վրաստանս քերթողը Ազվանից գրած թղթի մեջ բողոքում է այդպիսի հասկացողության դեմ, համարելով այդ՝ ոչ համապատասխան Քրիստոսի աստվածութեան գաղափարին, այլ նեստորական. «Ինչ գՀոգուն սրբոյ պսակ բերել, զայդ ոչ ուստեք լուայ յԱստուածաշունչ գրոց յկեզեցւոյ... ո՞ւմ բերէ պսակ, քանզի պսակ յանարգութենէ հռիսացելոյ բերի եւ զոչ պատուական ի պատիւ հաստացանելոյ, այլ ոչ այդպէս...»[151]։

Ս. Հոգին աղավնու կերպարանքով երևան է գալիս Հոգեգալստյան և էտիմացիայի պատկերագրության մեջ, որոնցից, սակայն, շատ հին օրինակներ Հայտնի չեն, եթե չհաշվենք Բարթլայի Հոգեգալստյան մանրանկարը[152]։ Իբրև ավետարանիչների նշանակներ ձեռագրերի մեջ կրկնվում է հաճախ Ը դարից սկսած, որ երբեմն արտահայտվում է նաև Տիրոջ օրհնող աջով[153]։

Հնագույն երևույթը օրհնող աջի պատկերագրության ունինք Վիեննայի Ննդոց գրքի Աբրահամի զոհաբերության մանրանկարի մեջ և Բավիենայի Ս. Վիտագիոսի մոզայիկներից Աբելի և Մելքիսեդեկի նույն տեսարանի մեջ, առաջինը ե և երկրորդը Զ դարի գործ։ Երկուսը միասին՝ այսինքն աղավնին և

նևաց իշխանի Ըրվականութեան Յկն։ էր. ես Դաւիթ կանգնեցի զխաչս վասն իմ Հոգեացս զիս աղաչես յիշեցէք»։

Հարցական նշանները գրել ենք, կասկածելի համարելով բնիերցումը և օձերի ներկայությունը խաչի պատվանդանի տակ։ Բայց այդչափ Ըուշումների ներկայությունը ինքնըստինքյան ապացուցյ է մի հավելադրում, սխմվոլիկ ձևակերպության, կրկնակի հետաքրքրական յուր հին բվականով։ Հիշված ձեեսնեկաս նախկոպսոը Տաթևի Առաքելոց վանքի շինող է, որի մասին հարուստ տեղեկություններ է տալիս Օրբելյանը (Դուվ. հր., 224, 234 եվն)։ Վասակն ու Բարգենը Սյունյաց թագավորող տան իշխաններից էին. Վասակը Իշխանիկ կոչվածն է, իսկ Բարգենը նորա եղբոր՝ Աշոտի որդին (Օրբ., 170, 175—177, 184/5 և այլն)։

150 Kaufmann, 367, 371. 356.

151 Արարատ, 1896, 481։ Պատկ է դնում Աստվածածնի գլխին երկնքից սավառնող հրեշտակը գերեզմանական կոթողի մի քանդակում, ոչ ուշ քան Զ դարը, որ գտնվում էր Ուջանի և Աղցի մեջ՝ Հաջի-Բայրամ գյուղում. այժմ էջմիածնի պատկան թանգարանը բերված Սևանքարիմ Տեր-Հակոբյանի ձեռքով։

152 Kondakow, Istoria Bisantijskawo Iskusstwa. 74. 180 և այլն։ Kurnitschnikow, K Ikonographii soschestwia swiatago ducha, Drewnosti. Trudi Mosk. Arch. Obschestwa. XV, wipusk. II. Beʼssel, Gesch. der Evang.-Bücher. 64.

153 Beissel, 104, 292, 49։ Մեղանում Օրթաքիլիսայի ավետարանի մեջ 1166 թվականից Հռովմկլայի գպրոցի գործ։ Kaufmann, 392. 472.3. Pokrowski, Otscherki Pamiat. Xrist Iskusstwa. sp. 1910. 102.

աջը երևան են գալիս հնագույն պատկերագրության մեջ միայն մկրտության տեսարանում, ինչպես մեր էջմիածնի փղոսկրի կազմով ավետարանին կցված մի մանրանկարի մեջ, որ 9 դարի գործ է համարվում, և Օձունի գերեզմանական կոթողի վրա, իսկ միջին դարերում օտար և հայ մանրանկարչության մեջ շատ հաճախ, նաև որպես Աստուծո ներկայության նշան[154]:

Հազվագյուտ է երկուսի միատեղ երևույթը խաչելության պատկերագրության մեջ. անշուշտ խաչի վերա իջնող աղավնու պատկեր ունինք շատ վաղ, Բավննայի սարկոֆագների պատկերագրության մեջ[155], բայց այստեղ աղավնին մարդկային հոգու պարզ նշանակ և ոչ Ս. Հոգու: Ի դարի Տանձերի եկեղեցու փղոսկրի տախտակի խաչելության գլխին Տիրոջ օրհնող աջն է երևում, բայց, պակասում է աղավնին. նույնը Լոթարի (+ 855) խաչի գլխին, որ պահ է բռնած[156]. ժ-ի դարի առաջին քառորդում Հնրիկոս Բ-ի ավետարանի տախտակի խաչի գլխին նույնպես Տիրոջ աջն է, իսկ էսսենի մի ավետարանի փղոսկրի տախտակի վերա աջը՝ հաղորդության պահ բռնած[157]:

Եթե մինչև է դար հազվագյուտ էր խաչելության պատկերը արվեստի նյութ դարձնել, հավանական չէ ամենևին, որ խաչելության մյուս անձինք ևս: Մկրտության համար ավետարանական պատմությունը պարզ ցուցումներ էր տալիս գեղարվեստական այդպիսի շարադրության, բայց ոչ երբեք խաչելության կամ խաչից իջեցնելու համար. միայն դավանաբանական-մեկնաբանական որոշ հայացքներ կարող էին արվեստագետին միտք տալ այդ իրողությունների հետ կապելու և մյուս անձանց ներկայությունը. հիրավի, այս նյութի հետագա զարգացումն ու փոփոխակները այլևս ոչ մի կասկածի տեղիք չեն թողնում, թե նա ծագումով և զարգացմամբ կապված էր իրենց սրբասացության դավանաբանական-ժամապաշտական բացատրությունների հետ:

Երից սրբասացության վեճը ծագեց 9 դարի առաջին կեսում և որոշ կերպարանք ստացավ Հուստինիանոսի 551 թվի հրովարտակով և 553 թվին գումարած ե տիեզերական կոչված ժողովի մեջ. բայց հակառակ նորա փորձերի, որի համար հիմք էր ընդունել Լևոն Բյուզանդացու ձևակերպությունը.— ἕνα τῆς ἁγίας τριάδος πεπονθέναι ἐν σαρκί: միությունը արևելքի մեջ գլուխ չեկավ: Հայոց եկեղեցին ներսես Բ-ի գլխավորությամբ Դունա ժողովում ընդունեց երեք սրբասացության մեջ, Պետրոս Թափիչի՝ ὁ σταυρωθεὶς δι᾽ ἡμᾶς— «որ խաչեցար վասն մեր» — բանաձևը, որ դավանաբանական պարզ արտահայտություն ստացավ Ը դարի եկեղեցական մատենագրության մեջ, թեև դորա

---

154 Beissel, 131, 221, 202: Հայոց մեջ ժ-ի դարում հանդիպի (տե՛ս հետևյալ գլխի մեջ) և էջմիածնի № 361/3784 ավետարանների մանրանկարներում:

155 Kraus I, 253:

156 Beissel, 309. Kraus II, 383.

157 Beissel. 312—313:

արձագանքները տեսնում ենք Զ դարի վերջերին և Ը դարի առաջին քառորդին՝ Վրթանես Քերթողի Աբրահամ կաթուղիկոսի անունից Աղվանից գրած թղթի մեջ[157ա]: Օձնեցու և Խոսրովիկ Թարգմանչի երկերից երևում է, որ հայերը երկար սրբասացությունը երգում են ի դեմս Որդվո, նորա խաչելությունը դավանելով, որպես ընդունելի մի պատարագ «կամօք Հօր և հաճութեամբ Հոգւոյն»[157բ]:

Նույն դիրքն են բռնած հայերը ժե. դարու առաջին կեսում և հետո, երբ այդ վեճը ավելի խիստ կերպարանք էր ստացած հայոց և հունաց մեջ. Անանիա Սանահնեցին, նաև Հաղբատացի կոչված, կրկնում է, գրեթե Օձնեցու մտքերը, բայց ավելի որոշ, սրբասացությունը Որդու անունով է ասվում «սակս զերախտիս երիքանձնեայ աճումբանն յոյշ առնելոյ հաւատացեալ ժողովրդոց, վասնզի Քրիստոսիւ ծանեան զերից անձնաւորութեանն գիտութիւն. եւ զի կամօք եւ ներգործութեամբ ամենասուրբ երրորդութեանն առատեալ բաշխեցան մեզ պարգեւք փրկութեան ի ձեռն խաչելութեանն Քրիստոսի, զոր սուրբ աւազանիս առաքեալքն զանապականութիւն, զոր առաքեալն Պօղոս մեկնէ զխորհուրդ մկրտութեանն ի մահ որպէսզի Աստուծոյ եւ ընդ նմին թաղելոյ, զի ի մէջ երրորդութեանն Քրիստոս ճանաչի եւ խաչին չարչարանքն, ընդ նմա եւ մահն և թաղումն և յարութիւնն, որով կանք տայ տիեզերաց»: Հույները իրենց սրբասացությամբ «զաւառաւածութիւն Հօր եւ զհզօրութիւնն Որդւոյ, իսկ զանմահութիւնն սուրբ Հոգւոյն» են տալիս—որի դեմ մաքառում է նա. իսկ մենք «եւ զաւառաւածութիւնն եւ զհզօրութիւնն եւ զանմահութիւնն միով երեսաց որդւոյն Աստուծոյ տամք», բայց զորանով «հայր եւ հոգին ընդ չարչարանօք ոչ անկանի, որպէս եւ ոչ ի մարմնաւորութեանն, բայց կամակցութեամբ միայն, որով գործեցաւ փրկութիւն աշխարհի». ուստի հայերը «յաւէտ պնդութեամբ եւ քաջահաւատ յուսով քան զամենայն ազգս բուռն հարեալ զսրոբէասացիկ զերգոյս հանդերձ խաչեցարիւդ զմահ Քրիստոսի հանապազ պատմելով»[158]: Երեք սրբասացությունն ըստ այդ կապված է եռաչի մարգարեի տեսլյան մեջ (Զ գլ.) սերովբէների փառաբանության հետ, որպիսի միտք արտահայտված է նաև Օձնեցու վերագրված մի ճառի մեջ[159], իսկ ավելի պարզ Պողոս Տարոնեցու կողմից[160]:

Մեր պահպանած, ուրեմն, ոչ այլ ինչ է, բայց եթե Քրիստոսի խաչելության «կամօք Հօր եւ հաճութեամբ Հոգւոյն», կատարված պատարագի արտահայտություն արվեստի մեջ, որ մեզանում կարող էր ընդունելության գտնել Ը դարից ոչ վաղ, իրենց սրբասացության վիճեների հետ կապված. մենք կտեսնենք, որ

---

157 ա Արարած, 1896, 254. Թուղթ Յովհաննու երուսաղէմի եպիսկոպոսի առ Աբաս Աղուանից կաթուղիկոս: Ապա՝ 482, 484:

157 բ Յովհաննու Իմաստասիրի Օձնեցոյ Մատենագրութիւնք. Վենետիկ, 1834, 105, 112: Խոսրովիկ Թարգմանիչ, հրատ. մեր ձեռքով:

158 Ձևս. էջմ., № 1110, եր. 157, 158—160:

159 Արարած, 1896, 198:

160 Ձևս. էջմ., №141, 723ա:

Նույնիսկ երեք սրբասացության խոսքերը այս պատկերագրության մաս են կազմել, որպես թե Հովսեփ Արեմաթացու կողմից երգված՝ խաչից իջեցնելու ժամանակ։

Խնդրի այսպիսի բազմակողմանի քննությունից հետո, կարծում ենք, այժմ պարզ է, որ Հավուց թառի ներկա պատկերի ծագումը մինչև է դար և Աշոտ պատրիկի անվան հետ կապելու ավանդությունը պատմական լինել կարող չէ. նույնացումը կատարված է տեղերի և անունների շփոթությունից։ Հնագիտական նշաններից դատելով, հայ և օտար արվեստների համեմատությամբ, այլև դավանաբանական հայացքների վերլուծությամբ, նորա նախատիպը ծագել կարող է Ը դարից հետո՝ Թ-Ժ դարերում։ ԺԱ դարից արդեն ունինք Դրիդոր Մագիստրոսի արձանագրության մեջ այս «որ ի փայտին» պատկերի հիշատակությունը, որ անընդհատ շարունակվում է նորան նվիրված վանքի արձանագրություններուն և ձեռագրական հիշատակարանների մեջ մինչև մեր օրերը։

ԺԲ

Հավուց թառի խաչից իջեցնելու պատկերագրությունը միակը չէ հայ արվեստի պատմության մեջ. ԺԴ և հետագա դարերում կրկնվում են նույն մոտիվները փոփոխակներով խաչքարերի պատկերագրության մեջ հենց Ամենափրկիչ անունով, սերտ կապ ցուցադրելով հայ եկեղեցու դավանաբանական հասկացողության հետ։ Բայց դրանցից էլ առաջ՝ ԺԱ-ԺԲ դարերում ունինք խաչելությունն և խաչից իջեցնելու մանրանկարներ, որոնք զարգացման միջին օղակն են հնագույն շրջանի և ԺԴ դարի քանդակագործական պատկերագրության մեջ։

Դոցանից հնագույնը Սեբաստիայի վիլայեթի Խանդալ ավանի եկեղեցու մեծադիր ավետարանն է, 46×30,16 սմ մեծությամբ[161], մագաղաթ, խոշոր երկաթագիր, նկարազարդված և գրված «ձեռամբ... (մի բանի տառ ջնջված գուցե գրչի ձեռով) Սամուէլի նուաստ քահանայի եւ յետին գրչի, ի թագաւորութիւնն Հոռոմոց որ կոչի Միխայլիս[162] եւ ի թուականութիւնն Հայոց ՆՂ (=1041) եւ ի կաթողիկոսութիւնն տն Պետրոսի Հայոց կաթողիկոսի եւ վերադիտողի. յորժամ Յաւանէս Հայոց կա (սխալմամբ գրչի կողմից, ինչ գուցատ՝ ընդգծվածը) թագաւորն վախճանեցաւ ի քս եւ նա զթագաւորութիւնն (տ!) իւր որդւոյ եղբաւր իւր որ կոչի Գագիկ»։ Արվեստը թեև պարզ և նախնական, բայց վերին աստիճանի հետաքրքրական յուր զուտ արևելյան բնավորությամբ,

---

161 *Տեսել ենք. նկարագրել և մանրանկարները լուսանկարել 1914 թվին, երբ ակադեմիկ Մառի միջնորդությամբ՝ Գիտությանց նեմարանից ստացած հանձնարարականով ճանապարհորդում էինք Փոքր Ասիայի հայաշատ քաղաքները, հայ մանրանկարչական արվեստի նյութեր հավաքելու։*

162 *Միխայել Դ-ն է. մեռավ 1041 թ. դեկտ. 10-ին։*

առանց բյուզանդական ազդեցության. պատկերներից մեկը (9բ) խաչելության և խաչից իջեցնելու տեսարաններն են, կազմված Հովհ. ԺԹ գլխի պատմության համեմատ։

Այստեղ (պատկ. 29) տեսնում ենք, որ Հիսուսը բևեռված է տախտակաձև խաչափայտի վրա, թևերը քիչ ճկված, երևում են բևեռները ձեռքերին. ոտքերն էլ մեխված են պատվանդանի վրա. խաչափայտի գլխին կպցրած է հորիզոնական ցուցանակը, բայց առանց գրության։ Լուսապսակը բոլորակ է և խաչազարդ. երկար մազերը կախված են ուսերին, մորուքը կարճ, աչքերը բաց, դեմքով և մարմնով դեպի աջ թեքված. մերկ է, բայց ամրոխանքը մինչև ծնկները հասնող շապկաձև փաթույթով ծածկված. ոտքերն իրար կողքի, քառանկյունի պատվանդանի վրա մեխված, նման Հավուց թառի Ամենափրկչի պատկերագրության։ Խաչափայտը հաստատված է բարձրության վրա, երկու ցցով ամրացրած. խաչափայտի տակ Ադամի գլուխը, խաչի հորիզոնական թևերի վերա արևգակ և լուսին։ Մարիամը և Հովհաննեսը կանգնած են աջից և ձախից. առաջինը բարեխոսի դիրքով, աջ ձեռքը մեկնած, իսկ ձախը կրծքին որպես երկյուղածության և վշտի թեթև արտահայտության նշան. նա հագել է մինչև ոտները հասնող ներքնազգեստ և վերան ձգել կրկնոցը՝ ծնկներից ցած հասնող. գլխին լաչակ, որի մի ծայրը պարանոցի տակով անցնում է աջ ուսից։ Հովհաննեսը աջ ձեռքը դրել է այտին, իսկ ձախում մագաղաթի փաթույթ բռնել. ներքնազգեստը մինչև բոբիկ ոտները, իսկ ուսերի վերայից ձգել է տոգա. մորուք չունի, աչքերն ու դեմքը վարմացքի արտահայտությամբ։ Երկուսն էլ հասարակ, բոլորակ լուսապսակներով։ Աջ կողմից մի փոքր ֆիգուր նիվակով ծակել է Հիսուսի կողը, որտեղից արյան շիթեր են կաթում, իսկ ձախից մի ուրիշ՝ դարձյալ փոքր ֆիգուր՝ սպունգն է մոտեցնում Հիսուսին. այս երկու ֆիգուրները ադոտ նկարված. բարձունքի վերա դրված է մի դույլ, որ բռնել է ձախ ձեռքով։

Խաչափայտի բոլոր պարագաները՝ պատվանդանով, գողգոթայի բլրով, ցցերով և Ադամի գլխով, արեգակով և լուսնով կրկնված են և խաչից իջեցնելու տեսարանի մեջ. Մարիամ և Հովհաննես իրենց տեղերում և նույնպիսի հագուստով։ Նույնն է և Հիսուսի դիրքը. միայն այստեղ պոկված է աջ ձեռքը, որ Մարիամը բռնել է վերնազգեստի փեշերով, իսկ Հովհաննեսն աջով բռնել է խաչեցյալի ձեռքը, որ պոկված է խաչափայտից և կախ ընկած. ձախը դրել է կրծքին որպես երկյուղածության նշան։ Հիսուսի աջ կողմից սանդուղ է դրված խաչափայտին հենած, որի վերա բարձրացել է մի ֆիգուր և գրկել իրանը իջեցնելու համար. նա հագել է մինչև ծնկները հասնող բաճկոն (տունիկա), ոտքերին երկարավիզ կոշիկներ, մազերը սև, միրուքը սրածայր։ Հիսուսի ձախ կողմից մի ուրիշ ֆիգուր նման զգեստով, աքցանը ձգել է և կամենում է Հիսուսի ոտքն ազատել բևեռից. սրանք ավելի փոքր են Մարիամի և Հովհաննեսի համեմատությամբ և նիմբուս չունին, ինչպես և Հավուց թառի պատկերի մեջ տե-

սանք։ Խաչի հորիզոնական թևերից վեր երկու տեսարանների մեջ ևս նկատվում են բոլորաձև արեգակն ու լուսինը կիսախավար վիճակի մեջ։ Խաչելության և խաչից իջեցնելու մանրանկարները զրված են իրար կողքի և մի ընդհանուր շրջանակ ունին, որ ամբողջության սկզբունական օրինակը մի պատկեր է նշած։

Մի ուրիշ մանրանկար նույն զույգ տեսարաններով ունինք էջմիածնի № 362/3784 ավետարանի մեջ, 9r գրված 1057 թվին, Մալիսինե քաղաքում. Մովսես քահանայի որդի Թովմա երեցի ձեռով (պատկ. 30), (պատկ. 19)[163]. Երկուսի նմանությունը շարադրության կողմից ակնհայտ է մինչև իսկ փոքրիկ մանրամասնություններով, այն տարբերությամբ միայն, որ սորա նկարիչն ավելի անկար է. կան և տարբերություններ, որոնցով նախնականությունը օրինակի ծագման կողմից էջմիածնի ավետարանին պիտի տալ, որի մասին քիչ հետո խոսք կլինի։

Մի երրորդ՝ միայն խաչելության՝ մանրանկար ունինք Թիֆլիսի Մոդնու եկեղեցու նշանավոր ավետարանի մեջ, այժմ Երևանի թանգարանում, № 207. չափսերը՝ $41^1/_2+31,8$ սմ, հաստ մագաղաթ, խոշոր երկաթագիր, տալիս բախտաբար գրության հիշատակարանը, ուր և թվականը պիտի լիներ, ընկած։ Բայց ի նկատի ունենալով հնագրական և մանրանկարչական տվյալները, պընդել կարող ենք, որ ԺԱ դարից վաղ և ԺԲ-ի վերջերից ուշ լինել կարող չէ։ Տեղը չէ մեր այս ենթագրության հիմունքները բացատրել, բայց հենց միայն խաչելության նկարագրությունն ու համեմատությունը նույն նյութի պատկերագրության հետ, բավական է հաստատել այդ կարծիքը։

Խաչելությունը՝ 19ա. $36\times24,6$ սմ, կանգնած է մի գնդաձև բլրի վերա, հետևը զաշտանկարով, խաչափայտի հիմքում Ադամի գլուխը։

Խաչելության երկու կողմից կանգնած են Մարիամը և Հովհաննեսը իրենց տեղերում (պատկ. 31), (պատկ. գուն. II) Մարիամը հանգիստ, բարեխոսի դիրքով, աջ ձեռքը մեկնած, իսկ ձախը փաթույթ բռնած. Մարիամը հագել է սպիտակ, մինչև ոտները հասնող, շնորհալի ծալքերով և քղանցքները ժապավենած (?) ներքնազգեստ, իսկ վերևից մինչև ծնկները հասնող կրկնոց. գլխի լաչակի եզրերը սպիտակ ժապավենով շրջանակված դեմքին և պարանոցին։ Ցավի արտահայտության ոչ մի նշան, միայն ձախ ձեռքը կըրծքին և աջը մեկնած աղոթողի կամ բարեխոսողի դիրքով. դեմքը լուրջ, գլխի շուրջը հասարակ լուսո պսակ, իսկ ոտքերին փափուկ մաշիկներ։ Հովհաննեսը հագել է մինչև բոբիկ ոտները հասնող պարեզոտ և ուսերին ձգել նույնպես

---

163 *Մեր զբոսության Աբրահամը՝ § 53։ Մանրանկարը տե՛ս և* Macler, Miniature arméniennes Paris, 1913, pl. XII, Fig. 24.

սպիտակ տոգա. գլխի մազերը կարճ կտրված, անմորուս, բոլորակ նիմբուսով. նա ևս ցավի արտահայտության ոչ մի նշան չունի, բայց մտազբաղ։

Ավելի փոքր դիրքով երկու կողմից մի-մի ֆիգուր. աջինը հագել է մինչև ծնկները հասնող, բաց-կապտավուն, թևեթ տունիկա, գոտկակապի տեղում քիչ ծալված, նեղ անդրավարտիքով, ծնկներից ցած խրած կոշիկի մեջ։ Գլուխը վեր է բարձրացրած, մազերը կարճ, առանց նիմբի. երկու ձեռքով նիզակը բարձրացրել է դեպի խաչելյալի կողը, որտեղից արյուն և ջուր է ցայտում։ Ձախ ֆիգուրը նույն զգեստն ունի, միայն տունիկան մուգ գույնի, ոտքի մեկը հետ դրած, ձախ ձեռքին դույլ, իսկ աջով երկար ձողի գլխին ամրացրած սպունգը բարձրացրած։ Խաչելության երկու կողմից բարձրանում է մի-մի սրածայր, պալատանական սար, որոնց նմանությունը տեսնում ենք և ժ—ԺԱ դարի բյուզանդական մանրանկարչության մեջ։

Խաչափայտը զարդարուն է սև և սպիտակ շերտերով, վերին թևը խաչաձևով վերջացած. առանց ցույցանակի. հաստատված է Golgothայի բլրի վրա, ուր երևում է և Ադամի գլուխը։ Խաչելյալի թևերը ճկված են թեթև, բևեռների տեղերից արյուն է ծորում, իրանը թեքված է քիչ դեպի աջ, ամոթանքը ծածկված սպիտակ և նուրբ սպածանկիքով. ոտքերն ուղիղ, իրար կողքի բևեռված են բառանկյունի և ակներով զարդարուն պատվանդանի վրա։ Աչքերը բաց են, դեմքն ուղղված դեպի մայրը, կարճ մորուքով, իսկ գլխի մազերը ուսերին իջած երկճյուղ. բոլորակ նիմբուսը ակնառարդ խաչով։ Հիսուսի դեմքին ցավի արտահայտության նշան չկա. աջ կողմից գրված է. «Ահա որդի քո», իսկ ձախից՝ «Ահա մայր քո», համեմատ Հովհաննու ԺԹ գլխի։ Խաչի հորիզոնական թևերի վրա գրված է «Խաչելութիւն». բոլոր գրություններն էլ երկաթագրով։ Խաչելության հորիզոնական թևերից վեր, աջ և ձախ կողմից երևում են երկու հրեշտակի անդրիներ, սպիտակ տոգայով և տունիկայով, դեմքերն ու աչքերը զարմանքի արտահայտությամբ, իսկ ձեռները երկյուղածության, ակնածներին լանչիքի, իսկ ճակատին կապի նշաններով, որ հատուկ է բյուզանդական արվեստին ևս։ Ավելի բարձր՝ աջից արեգակն է, կարճ ճառագայթներով և կիսադեմ պատկերով, իսկ ձախից լրիվ դեմքով լուսինը, բայց ադոտ ճառագայթներով։

Մեր ցուցադրած այս մանրանկարների մեջ համագրված ձևակերպությունը հարակից է խաչելության և խաչից իջեցնելու պատկերագրությանը ամենավաղ ժամանակներից սկսած։ Արեգակի և լուսնի երևույթը բացառությամբ Սաբինայի դռան և բրիտանական թանգարանի փղոսկրի տախտակի խաչելության[164] նկատվում է ամեն տեղ. նույնիսկ վերջին պատկերի մեջ նկատված գնդիկները առիթ կարող են տալ քան կրաուղի կարծելու, թե արդյո՞ք արեգակ և լուսին չեն[164]։ Բաբուլայի մանրանկարը, Մոնցայի յուղաշշերի, Ախմիմի ոսկեթելերի, Եգիպտոսի ասեղնագործի, բրոնզի բուրվառների և այլն խաչելությունների

164 Gesch. d. r christ. Kunst. I, 173/4.

մեջ և ապա այնուհետև մինչև ԺԲ դարի վերջերը՝ քիչ բացառությամբ՝ խաչելության կամ խաչից իջեցնելու պատկերագրությունների մեջ նկատելի են այդ երկու լուսավորները, արեգակը աջից և լուսինը ձախից։ Նրանց երևույթը քրիստոնեական արվեստի մեջ առնված է ոչ միայն ավետարանական պատմության հետեանքով, այլև հեթանոսական ազդեցությամբ. ուստի և, երբեմն, երևան են գալիս իբրև անձնավորյալ պատկերներ կամ հեթանոսական աստվածությունները. այսպես Ե—Զ դարի սարկոֆագների, Զ—է դարի փղոսկրի քանդակազարդ կազմերի վրա, որոնցից մեկն է և էջմիածնի հայկական ավետարանի կազմը, իսկ մանրանկարչական արվեստի մեջ Թ—Ժ դարէ ձեռագրերում շատ հաձախ[165]։ Ամենից սովորականը մեր մեջ արևագիի և լուսնի բոլորաձև, խավարած երևույթն է, իբրև արտահայտություն բնության տխրության, կատարված անլուր ողբերգության հանդեպ, բայց ունինք նաև դիցարան բնույթ կրող երևույթներ, որ կտեսնենք հետևյալ գլուխների մեջ։

Ծարիամի և Հովհաննու պատկերներն էլ ընթացակից են խաչելության կամ խաչից իջեցնելու պատկերագրության, ինչպես մեր մանրանկարների մեջ էլ տեսանք, ամենահին մնացորդներից սկսած, բացառությամբ Սաբինայի դռան։ Բրիտանական թանգարանի փղոսկրե տախտակի խաչելության և Բաբուլայի մանրանկարի մեջ Մարիամը և Հովհաննեսը կանգնած են խաչեցյալի աջ կողմից, իսկ այնուհետև սովորական է Մարիամն աջից և Հովհաննեսը ձախից, իրենց արտահայտության ձևերի փոփոխությամբ, ընթացակից խաչելության պատկերագրության պատմության։ Բրիտանական թանգարանի խաչելության մեջ անհաղորդ են նրանք կատարված ողբերգության, լուրջ, առանց սգո նշանների, ինչպես խաչեցյալն էլ առանց ցավի արտահայտության, Մարիամը կոնքերի, իսկ Հովհաննեսը ոտաբոբիկ[166]։ Մոնցայի յուզաշշերի պատկերագրության մեջ ևս չկան ողբի նշաններ. Մարիամը կանգնած է աջից բարեխոսի դիրքով, իսկ Հովհաննեսը մյուս կողմից, ձախով ավետարան բռնած և աջը վեր բարձրացրած իբրև ավետարանիչ և վկա կատարված իրողության։ Բրոնզի բուլվառների (պատկ. 19,20), Լիխաչովի կնիքի[167] դիմքերի նկատմամբ դժվար է ճիշտ բան ասել, բայց դիրքերից երևում է, որ նախընթաց խմբին են պատկանում։ Ս. Ուդովի սաղմոսարանի խաչելության պատկերներից մեկում Մարիամը և Հովհաննեսը կանգնած են ձախից, Մարիամը աջը ծնոտին և թաշկինակը ձախ ձեռքին, իսկ Հովհաննեսը մի ձեռքը այտին զարմացքի արտահայտությամբ[168]։ Ժ դարից արդեն ընդհանրացած է աջից Մարիամին տեսնել և ձա-

---

165 Kraus I. 206. II. 339. Beissel, 248, 300, 314 5: Pokrowski. Xrist, Iskust. 67, 185 (պատկ. 137)։

166 Kraus I, 174:

167 Istoritscheskoe Lnatschenie italo-gretscheskoj Ikonopisi isobrajenia Bogomatori 1911, sp. 141.

168 Kondakow, Miniaturi gretscheskoJ rukopissi psaltira IX weka. Moskwa, 1878:

խից Հովհաննեսին, մնկը թեթև ոդրով հաղորդակից որու չարչարանքին, մյուսն իբրև ավետարանիչ և վկա. այսպես է Դաւիթի որմնանկար խաչելության մեջ, որ ծ դարի գործ է[169]: Էլմալըքիլիսայի ժ—ԺԱ դարի[170], Փարիզի մնգալիանների կաթինեան փղոսկրի հոափեղի պահարան խաչելության, ըստ Diehl ի ժ—ԺԱ. դարի, կան և ավելի ուշ կարծողներ: Իսկ ավելի հետո Մարիամի և մասամբ Հովհաննեսի ոդրի արատհայտությունը խիստ կիրպարանք է ստանում, ինչպես Լենինգրադի Ալեքսանդր Գ-ի թանգարանի խաչելության մեջ, ըստ Կոնդակովի ԺԱ—ԺԲ դարի գործ, բայց ծ դարի դրոշմով[172]. դրանի մասնց պահարանի խաչից իջեցնելու տեսարանը խիստ ոդրացող Մարիամով և Հովհաննեսով, ինչպես և Փարիզի Ազգային Մատենադարանի № 54 ձեռագրի խաչից իջեցնելու մանրանկարի մեջ[173]: Այդ հատկությունները միզանում երևան են գալիս ԺԳ դարում, ավելի կիլիկյան շրջանի մանրանկարչության մեջ, ինչպես Կոստանդին կաթուղիկոսի Եղբոր որդու համար Թորոս Ռոսլինի նկարած ավետարանը, կամ Սմբատ Գունդստապլի Ավետիք նկարչի կողմից, և Երուսաղեմում պահված վասակ արքայեղբոր և կնոջ թագուհու ավետարանների մեջ (պատկ. 32, 33, 34, 35), (պատկ. 20, 21)[174]:

Հիսուսի կողը խոցող և բացակ մատուցանող ֆիգուրները չենք նկատում առաջին շրջանի պատկերների մեջ, բացի Բաբուլայի մանրանկարներից, որ առաջին տեսանք, համարվում է փոխոխության ենթարկված հետագա դարերում, բայց արդեն հիշատակված Կոստանդին Հռոդոսացու և Հովհան Դամասկոսցու կողմից (Ը դարի առաջին կեսը), իսկ պատկերագրության մեջ երևան են գալիս Պերմի սկուտղի և Մոնցայի յուղաշշերի, ինչպես և Հռոմի Մարիա Անտիկուայի խաչելության հետ, ավելի ուշ՝ Թ դարում Ելուդովի Սաղմոսարանների, իսկ ծ դարում նաև մանր արվեստի արտադրությունների մեջ: Սրանց պատկերագրական հերևույթն ու զարգացումը կապված էր ավետարանական պատմության և ապա Քրիստոսի արյան զավանաբանական ու ժամապաշտական հայացքի հետ, ուստի և սկզբում մնկը միայն վիր բարձրացրած նիզակով և մյուսը յուր եղեգնի ծայրին ամրացրած սպունգով, ապա ակնհայտ խոնարհած նիզակով և արյան կաթիլներով կամ հոսանքով: Նիզակավորը ավետարանի հարյուրապետն է, ըստ ավանդության Ղոնկիանոս կամ Ղինկիանոս[175] կոչված հենց բաւական է, ըստ ավանդության Ղոնկիանոս կամ Ղինկիանոս[175] կոչված հենց

---

169 Diehl. L'art Byz. 465: 499:

170 Անդ, 540:

171 Անդ, 621: Բաւլ. ոտա թարգմ. Wisant. Iskusstwo. 1883, 189/20.

172 Ikonographia Iesusa Xrista. Tabl. XII բնագիրը 81: Մենք հավված ենք Diehl ի հետ (554) ավելի ուշ ժամանակի գործ համարելու:

173 Diehl, 649, Pokrowski, Xrist. Iskusst. 147, 8:

174 Առաջինն այժմ չգիտեմ, ո՞րտեղ է. Սմբատ Գունդստապլի ավետարանն այժմ գտնվում է Երևանում № 211, որ բերված է Նոր Նախիջևանի Ս. Աստվածածին եկեղեցուց. Երուսաղեմի ձեռագրերների №№ 2568/13, 88ա և 2563/8, 362բ:

175 Ձևս. էջմ., № 589 նժ. 372բ, Տոնական:

յուր զինքի (ցնորէ) անունով, իսկ մյուսն էլ հրեա է համարվում, ավետարանի (Մատթ., իէ, 48) «մի ոմն ի նոցանէ» խոսքի համաձայն, Սանհիտրոն կոչված։ Դունկիանոսը մինչև իսկ սրբերի շարքն է մտած. բայ ավանդության, նա միականի էր, արյան ցայտելով կույր աչքի մեջ՝ բժշկվել է և հավատացել Քրիստոսին[176]։ Այս ավանդությունն էլ յուր ազդեցությունն է ունեցել Դունկիանոսի պատկերագրության մեջ. նկարվում է գլուխն այնպես վեր բարձրացրած, որ արյունը ցայտեր աչքի մեջ։ Զավանաբանական հայացքի հետ կապ ունի, անշուշտ և այն հանգամանքը, որ Դունկիանոսը և Սանհիտրոն նկարված են ոչ միայն փորր դիրքով, ինչպես էջմիածնի վերև հիշված ձեռագրի մեջ, այլև հագիվ նկատելի են նրանց պատկինները, հատկապես գլուխները։

Այս նկարագրություններից և համեմատություններից երևում է, որ մեր մանրանկարիչներն իրենց օրինակների ծագմամբ ընդհանրապես Թ—Ժ դարերի պատկերագրության դրոշմ ունին. նախնականությունը առանց թվականի էլ առաջին երկուսի կողմն է, որոնք ավելի մոտ են Խլուդովի սաղմոսարանի և Գրիգոր Աստվածաբանի ճառերի պատկերագրության, հույների ավելի պակաս արտահայտությամբ և ֆիգուրների դիրքերով, թեև դեղարվեստական կողմից թուլ։ էջմիածնի № 362/3784 ձեռագրում, օրինակ, Դունկիանոսը նիրոջ բրռնել է ձիշտ այնպես, ինչպես Խլուդովի սաղմոսարանի մանրանկարի մեջ, կամ Հովհաննեսը ձեռքը ծնոտին դրել, թեև դիրքերը տարբեր։ Այս ձեռագիրը մի քանի տարի հետո է գրված Խանդալի ավետարանից, բայց համեմատաբար ավելի է պահել նախնականության նշանները, քան մյուսը. այստեղ չկա արյան ոչ մի նշան, մինչդեռ Խանդալի ավետարանի մեջ Դունկիանոսը յուր նիրոջը խրել է արդեն Հիսուսի կողը, որտեղից արյան կաթիլներ են թափվում։ Նաչափայան էլ միանգամայն պարզ է, անմիջապես հաստատված Գոշգոթայի բլրի մեջ, ուր և մեխված են Հիսուսի ոտքերը, առանց քառանկյունի պատվանդանի, ինչպես Խանդալի ավետարանի մեջն է կամ Մողնու ավետարանի և Հավուց թառի Ամենափրկչի, որոնք այդ կողմից նման են իրար և կողմնակի կերպով հաստատում են մեր կարծիքը վերջինիս ծագման խնդրի նկատմամբ։ Խաչից իջեցնելու պատկերի մեջ ևս Հիսուսը կանգնած է ուղիղ գեների վերա. Նիկոդիմոսը թեև գրկել է Հիսուսին ճիշտ այնպես, ինչպես Հավուց թառի Ամենափրկչի կամ Խանդալի ավետարանի մեջ, բայց առանց սանդուղի վերա բարձրանալու։

Մողնու ավետարանն էլ մեր այս երկու ձեռագրերից քիչ հետո միայն կարող է ծագած լինել. Մարիամը և Հովհաննեսն իրենց կեցվածքով, ձեռքերի դիրքով, մասամբ և դեմքի արտահայտությամբ նման են Խանդալի ավետարանին. բայց Հիսուսի իրանն ավելի է թեքված դեպի աջ, արյունն էլ ավելի ուժեղ հոսանքով է դուրս ցայտում խոցված կողից. իսկ Դունկիանոսը գլուխն այնպես է բարձրացել, որ արյունը աչքի մեջ ցայտել կարողանար։ Հիսուսի

176 Հայսմավուրք։

մարմնի դիրքը, արյան հոսման ձևը, գույն և հրնշտանիների անդրիներ, մնացորդներից դատելով՝ ավելի մոտ են Դափնիի որմնանկար խաչելության, որ ԺԱ դարի գործ է[177]։ Մարիամի և Հովհաննու կնցվածքը և հրնշտանիները մանրամասներով Սալերնոյի Պալերատուլի բուն խաչելության առանց ներքևի տեսարանների, ըստ ոմանց ԺԲ դարի, իսկ ըստ Կրաուսի ԺԱ դարի գործ, բյուզանդական և տեղական լատինական ազդեցությամբ[178]։

Մոռնու ավետարանը համարում ենք ԺԱ դարի վերջերի, ոչ ուշ քան ԺԲ դարի գործ։

ԺԳ

ԺԳ դարի Ամենափրկիչ խաչարձանների պատկերագրությունը բոլորովին նույն չէ, բայց շատ նմանություններ ունի նախընթաց պրակում նկարագրված խաչելության և խաչից իջեցնելու մանրանկարների և մասամբ Հավուց Թառի Ամենափրկչի հետ. որքէ խոսքով մեր քննության նյութ եղած մոտիվների զարգացման երրորդ օղակն է Հավուց Թառի Ամենափրկչից սկսած։ Տարաբախտաբար ԺԱ և ԺԲ դարերից նկարալարդ ձեռագրեր քիչ են հասել մեր ձեռքը, հասածներն էլ պակասավոր վիճակի մեջ. Դափիի Բագրատունի կարևոր ավետարանը ընդված է յուր շատ նկարներից[179]. մի բարբարոս ձեռք կարել, հանել է պատկերների մեծագույն մասը, բնագրից դատելով՝ նաև խաչելության և խաչից իջեցնելու տեսարաններով մի քանիսը։ Ո՞վ գիտե, թե հենց մեր Ամենափրկիչ խաչարձանների պատկերագրության նախագաղափարները չկային այնտեղ. համենայն դեպս, կարծում ենք, թե նրանց ձևակերպությունն արդեն ԺԱ—ԺԲ դարերում վերջացած պիտի լիներ հայ արվեստի մեջ, որպես հետևանք դավանաբանական այն հայացքի, որ հայ եկեղեցին որդեգրել էր «Մուրբ Աստված»-ի կամ երեք սրբասացության նկատմամբ։

Բայց անցնինք հուշարձանների ծանոթության։ Դռցանից հնագույնը ինձ հայտնիներից Հաղբատի Ամենափրկիչն է, որ կանգնել է նույն վանքի առաջնորդ Դուխյան Հովհաննես եպիսկոպոսը 1273 թվին (պատկ. 36), (պատկ. 22), Համազասպ կոչված գավթի և բուն տաճարի մեջ ընկած սրահում։ Երկու արձանագրություն մեզ տեղեկություն են տալիս հուշարձանի ծագման մասին. առաջինը գտնվում է խաչարձանի հետևի երեսին.

1. Շնորհաւք սբ երրորդութեն եւ որդ
2. մուբը սբ նշանիս ես տր Յովանէս

177 Diehl, 465, 435.

178 Gesch. der christ. Kunst II, 41.

179 Ձեռագիրը պահվում է Երուսաղեմի Հայոց մատենադարանում՝ № 2556/1։

3. Նուաստ ծառայ ծառայիցն այ շինեցի
4. զպաւիթս զքրատունս եւ զսրահ նորի
5. ն ածի զպաղատս զքիճն եւ կառւ կազմե
6. լ զմեծածախ պահարանն ու (?) Բրդաձորս սբ ն
7. շանին գնեցի զգեղն Բալա եւ ընծայեցի
8. սբ նշիս (առանց պատուի) կանգնեցի զխաչս վս արեւշ
9. առուփն աթաբակ ամիր սպասալար պար
10. ոն Սադունին եւ զաւակաց նորա եւ յիշ
11. առակ անանց ինձ եւ ծնողաց իմոց
12. եւ եղբարց եւ հոգեւոր որդո իմո Սար
13. զիս վարդապետի այլ եւ սահմանե
14. ցի ծառ զարդարին իրից ար ար աց
15. ն բ սպիտակ յէրէցն առալ եւ մի աբ
16. անքս էառն մեզ զառիկին ձ
17. բազալոյցն զամէն էկեղեցիքս
18. պատարագիլ կատարիչք նաւրհն։

Նույն խաչքարի կողի վերա է երկրորդ արձանագրությունը.

1. թվին ՉԻԲ
2. յիշխանութեն եւ ի
3. տէրութեն սբ ուխտիս սրաբ
4. ակ ամիր սպա
5. սալար պար
6. ոն Սադո
7. ւնին նս տր
8. Յուվանէս
9. կանգնեցի զխ
10. աչս Ամենափրկի
11. չ աւգնական պարո
12. ն Սադունին եւ յ
13. իշատակ հոգ
14. ոգո (կրկ.) իմո[180]։

---

180 Առաջին արձանագրությունը կրկնված է Տիրլեմանի և Վաչեի խաչարձանի հետևը, որ գտնվում է Պողոսա կոչված սրահում, տաճարի արևելյան կողմը։ Հաղրատի այս և մնացած բազմաթիվ արձանագրությունները առուցել ենք և գրի առել անձամբ. համ. Հնախօսական Տեղագրութիւն Հաղրատայ Ռ. Երվենկեանց. արտատպ. «Արարատ»-ից 1886, 43/4։ Ջալ. Ճանապ., Ա 70։

Այստեղ հիշված անձնավորությունները շատ ու քիչ ծանոթ են մեզ իրենց պատմական անցյալով. Սադունն իշխանի մասին գրել ենք մեր «Զագավանիից ժողովը» վերնագրով հոդվածի մեջ[181]. նա Մահկանաբերդի իշխանն էր. հայրը Շերբարոթ, պապը Սադուն Ա, իսկ մեծ պապը Ամիր-Քուրդ, Վրաց Գեորգ Գ-ի ժամանակ Տփղիսի ամիրան և նորա գլխավոր օգնականը Օրբելյանների ապստամբության դեմ մղված պատերազմի մեջ. այս Քրդի հրամանով է շինված Սևանի փայտակերտ հնագույն դուռը: Զաքարե և Իվանե սպասալարների մայրը Սահակդուխտ՝ Սարգիս մեծի կինը՝ Քրդի քույրն էր, իսկ Զաքարիա մեծի թոռնորդին Մխարգրձել Շահնշահը այս Սադունի փեսան, նորա Նալդիզ դստեր ամուսինը: Սրանց փեսան էր նաև Սմբատ Օրբելյան, Լիպարիտի որդին, Տաթևի և Նորավանից առաջնորդ Հովհան Օրբելի եղբայրը[182]: Սադունի որդին էր Խուսրու Բուլան, որի որմանկար պատկերը գտնվում է Հաղբատի տաճարի Տարավարին պատին՝ ներսից, և հրատարակել է ակադեմիկ Մառը[183]:

Նրանց իշխանությունը տարածված էր Կայենո և Մահկանաբերդի գավառներում, համանուն բերդերով. հոգևոր կենտրոններից գլխավորը Հաղբատն էր, որի արձանագրությունների մեջ, բացի վերոհիշյալներից, մի քանիսի մեջ հիշվում են Սադունի անունը, բայց նաև Մակարա, Դեղձուտի և երկրորդաբար Առաքելոց, կերանց և Մորո ձորո վանքերը[184]. Դեղձուտի վանքը ծաղկած էր իբրև մտավոր կենտրոն հենց այս Սադունի ժամանակ[185]:

Հովհաննես եպիսկոպոսի և նորա հոգևորդի Սարգիս վարդապետի մասին մի անգամ խոսք եղավ արդեն Դ գլխի վերջում, երբ կանգնում էինք ներսես Զարաբերդցու արձանագրության ժամանակը որոշել Հավուց թառում: Հաղբատի և այլ վայրերի բազմաթիվ արձանագրությունների մեջ Հովհաննես եպիսկոպոսը հիշվում է որպես շինարար, նվիրերնկալ և առաջնորդ, բայց նաև ձեռա-

---

Ե. Լալայան, Ազգ. հանդ., VII և VIII, 406: Ընդգծվածները կցումներով: Նկարելու համար տեղն անհարմար, ուստի և չի նկարված:

181 Շողակաթ, Ռ. էջմիածնի հայագիտական ժողովածու. Վաղարշ., 1913, 26:

182 Մեր Հաղբակիանք, 6, 12, 81: Հաղբատի արձ. Երզնկյան, 28: Օրբելյան, Դավ. Հրատ. գլ. կգ:

183 Christ. wostok. sp. 1912. t. I, 351, Tabl. XXI.

184 Ջալալյան, 152, 156: Բարխուդարյան, Արցախ, 342, 378. Այստեղի հիշատակությունը տե՛ս նաև Խոսակերտի արձ. Սիսն 1933, մարտ, եր. 84 և քիչ հետո Փոքր Ամրոսակի արձանագրության մեջ:

185 Ձեռ. էջմ. № 528ՆԺ. հիշատակարանից. «Գեորգ որդի Պարոտա թոռին Հաբարայ, յերկրէն Հաչենոյ ի մեծաճոչակ քաւարանէն Գանձասարայ մանացու էր ակն էյերկիրս Մահկանաբերդոյ ի վանս Դեղձուտի առ ոտս Առաքել վարդապետի». հիշատակարանը գրված է մի թվին ՉԻԲ ագռաւոսի ։Ժ։». Նա խնդրում է հիշել Վահրամ և Սահմանոս հոգևոր եղբայրներին, որոնք ոչ միայն ձեռագրի օրինակն են շնորհել, այլև մի միում իսկ պանդխտանէաքն: Նրանք այդ օրերում գնում են իրենց երկիրը՝ Այրարատյան գավառը և գրչին մենակ թողնում. մի

գրական հիշատակարանների մեջ որպես մեկնման, վարդապետ և սրբագրող։ Նա Համազասպ Եպիսկոպոսի հաջորդն էր, ավելի նշանավոր շինարարի, որ կենդանի էր դեռևս 1261 թվին, իսկ 1265 թվին Վարդան վարդապետը գրել է յուր երգոցի մեկնութիւնը Հաղբատում «յարհի եպիսկոպոսութեն ... Յովանիսից»[186]։ Նույն մեկնութեան ուրիշ ձեռագրերից պարզվում է, որ հեղինակը հորդորված է գրելու «յարքեպիսկոպոսէն Հաղբատայ եւ յաշակերտաց իւրոց»[187]։ Արարածոց մեկնութեան մի հիշատակարան տալիս է նոր տեղեկութիւններ. գրիչը խնդրում է գրքի հեղինակ Վարդանի հետ հիշել «եւ զմեծապատիւ արհիեպիսկոպոսն մեծահռչակ սբ ուխտին Հաղբատայ զսբ Յոհաննէս, որ զաւրինակն էր սբագրել եւ զնոր[ին] ձե[ռաւո]ւն զնդաւորդին հարապա[տ] Սարգիս քահանայ, որ ի վարժս կրթ[ութե]ան և պարապեալ, որ եւ շնորհեաց իսկ զաւրինակս»[188]։ Այս Սարգիսն է, որ վերև բերված արձանագրութեան մեջ՝ 1273 թվին արդեն վարդապետ է հիշված։ Վարդանի աշակերտներից՝ Տիրացու և Հովսեփ գրիչները 1267 թվին գրել են իրենց ուսուցչի խմբագրած «Պատճառք տաւնից տրունաց» տավար և կարևոր աշխատութիւնը Հաղբատում «յամենայն[ին] սբ Յովի մեծի հռետորի եւ սբ վիրապիտողի»[189]։ «Հռետոր» տիտղոսը միջին դարերում գործադրվում էր վարժապետ կամ գիտնական վարդապետների համար, սուրբ Հովհաննես եպիսկոպոսը կոչված է, հիրավի «անյաղթ գիտնական» մի արձանագրութեան մեջ[190]։ Հոհան Երզնկացին 1284 թվին յուր «Յա-

---

հանդամանք, որ ցույց է տալիս, թե Դեղձոտի վանքը հոգևոր կեդրոն էր Առաքել վարդապետի օրով, որին աշակերտելու էին գալիս այլևայլ գավառներից և ձեռագիրներ գրում։

Նման տեղեկութիւն ստանում ենք և Կաուց անապատից բերված № 471 նմ. տավար Տանապատճառի հիշատակարաններից, գրված Շմավոն գրչի և Գրիգոր քահանայի ձեռքով, ում սպասաւոր Բանի Սարգսի պատվերով «զժար ի գիտ գրշաց» այս մատյանը։ «Արդ ես Սարգիս յարժ էի զեզրել առ ոտս կենդանի վիմիս Առքել վարդ։ ի գաւառիս Մահկանաբերդո ի պատրոնութիւն աթապակ Սադունին, եւտ զրել զգիրքս գայս այլ եւ այլ գրշաց, զի օրինակ չգտանէաք զկարգ տասցուածոց լիմանեալ Տիաքնարանին ի Գեղիկ. ի թիվ. Հա. ՁԻԳ. եւ զպատճառանէաք զկարգ տասցուածոց լիմանեալ Տիաքնարանին ի Գեղիկ. ի թիվ. Հա. ՁԻԳ. եւ զպատճառանէաք զկարգ տասցուածոց լիմանեալ Տիաքնարանին ի Գեղիկ. ի թիվ. Հա. ՁԻԳ. (թվականը լուսանցքում, ձեռամբ ոմնէից ի քառակին, ձեռամբ կուսակրօն Գրիգոր ք՚ի թվ. ՁԻԳ (թվականը լուսանցքում, բայց նույն գրչի ձեռքով և բանաքով) որ և նման եւ ծնողաց իւր ողորմեացի տր Յով։

Սույն հիշատակարանի տակ տարբեր գրչով ավելացրած է. «Ի եւ աքին Հար. ՈՀ (=1309) թուին փոխնցաւ ի քս վէրն Ոգ։ Յիշատակն աւրհնութ[ի]ւն»։ Առաքել վարդապետն անկասած վանականի աշակերտն էր, վարդանի և Կիրակոսի ընկերը, որին հիշում է Մաղաքիան, Ապ., 1870, 12։

186 Ձեռ. էջմ. № 1155։

187 Ձեռ. Տաթևի № 9, այժմ էջմ., № 4139։ Նաև, № 1203/1190։

188 Ձեռ. էջմ. № 2604 (վիպագծի մեջ առնվածները լրացնում ենք, ցնցակեր են)։

189 Ձեռ. էջմ., № 4139։

190 Կայենս բերգի հանդեպ Փոքր-Ալթոռակի գոմերի մոտ, Ջորագետի ձախ ափին մի խաչ-

զագս երկնային շարժման» աշխատությունը գրել է Վախթանգ իշխանազն պատանու խնդրքով և «մեծազգ եպիսկոպոս տէր Յոհան յաղնուական զարմից եւ բարեառնմից հարց ծնունդ» հորդորանքով[191]. Նորա տոհմական ծագման մասին ավելի պարզ տեղեկություն է տալիս Թոմա քահանայի 1285 թվի արձանագրությունը «ի հայրապետութիւն սո՛ւ Յ՚Հանիսի Թոռն Դոփինն», որ հետո կտեսնենք[192]:

Այս Հովհաննես եպիսկոպոսի ժամանակ և հավանորեն նորա գլխավորությամբ է գումարվել Հաղբատի ժողովը, որի դրաղման նյութը մոտավորապես կարելի է կռահել Զաքարյանից ժողովի կանոններով: Պինդել չենք կարող, բայց հավանական է, որ Սահմանոս Օրբելյանի ձեռնարկին մտորագրող Հովհաննեսը նույնն է մեր այս եպիսկոպոսի հետ[193]: Սորա ժամանակ 1278 թվին, յուր եղբորորդի Օիվլուսան դրամական մեծ ներիրաբերության է անում վանքին, որի համար կանգնում է հոյակապ խաչարձան, կրկնելով յուր Ամենափրկչի հետևի մեծ արձանագրությունը և այստեղ: Սորա օրով Բարսեղ քահանան 1279 թվին շինել է Ս. Զորավարը յուր սրտով: Հովհաննես քահանան յուր Հունան, Դավիթ և Մխիթար եղբայրների հետ կանգնել է մի խաչ և շինել կամուրջ, վիպարտի որպի Պաճաճ իշխանը և ամուսինը Ռուքա՝ Մամիկոնյանց տոհմից՝ 1280 թվին շինել են մի-մի խորան, որոնց առջև և թաղված են: Իսկ յուր անձնական շինարարության մասին ամփոփ տեղեկություն ստացանք Ամենափրկչի մեծ արձանագրությունից. «շինեցի զպատիճս, զգրատունս եւ զսրահ նորին, ածի զպատատն պիճն եւ եռու կապմել զմեծածախ պահարանն Բրդաձորոյ սուրբ Նշանին...., կանգնեցի զխաչս (Ամենափրկիչ կոչվածը)», որ մի հոյակապ հուշարձան է այս վաստակավոր մարդու գեղեցկագիտական ճաշակի և հասկացողության:

Խաչարձանի բարձրությունը հատակից մինչև գագաթը 5,17 մետր է, պատվանդանի լայնությունը միջին մասում 1,47. բուն խաչի բարձրությունն է 2,17, իսկ լայնքը 1,08 մետր, երեսը դեպի արևմուտք: Ճակատի գարնեզի վերա ելնդավոր տառերով գրված է. «Ձամբարձաւ ած՚ աւրհնութիւ եւ տո՛ւ մեր ձայ». գարնեզի տակ խորաքանդակ. «աւրհնեալ են վաոք սո՛ւ ի/ տեղոջ իւրում»: Խաչելության ցուցանիշի ելնդավոր տառերով մակագրված է. «սայ է թագաւոր

արձանի վերա. «+ Կամաւքն այ՚ ի տրութի՛ պարոն Սաղումին եւ ի հայրապետութիւն տո՛ր Յ/ովաննէսի անյաղթ պետականին»: Արձանագրության թվականն է ՉԻՔ (=1280):

191 Հրատարակությամբ Հովսեփ արքեպիսկոպոս Արդուինյան. 1792. Նախիջևան: Ձեռ. էջմ. № 2173, 150ա:

192 Տե՛ս և մեր աշխատությունը «Վախտանգ որդի Ամենկա», Սիոն, 1932—1933:

193 Շողակաթ, Վաղարշ. 1913, 22: Նաև առանձին տեսրակով:

հրէից», իսկ փոսում, ուր վեցթևան սերովբեն են, արեգակն ու լուսինը: Զարդերի մեջ ընդհանուր տառերով գրված է. սբ սբ սբ տր զաւրութիւն». Հիսուսի գլխին խորաքանդակ «Յս Քս»: Հորիզոնական տախտակի վերա խորաքանդակ. «Ձեր որ զիրիկին առարին տարածեցիք ի խաչիս», տարաբախտաբար աղտոտուրս եկած մեր լուսանկարում: Խաչափայտի ներքևի մասում, ուր կանգնած է Հովսեփը Հիսուսի ոտքերի մոտ խորքանդակ է. սբ աճ խբ եւ հղիար սբ եւ անմահ որ խաչեցար որդւոբմեա տր Յովաննիսի»—սակս շարունակությունը Գողգոթայի բլրի կիսաշրջանի վերա ընդհանուր — «ին սատցողի սմա ամենն». վերջին բառը գարձյալ խորաքանդակ:

Խմբանկարի կետրոնը խաչեցյալի պատկերն է, մակերևույթից քիչ դուրս ընկած, բայց ոչ մարմնավորած, այլ հարթ. ձեռքերը գամված են, թևերը քիչ ճկված և գլուխը դեպի աջ թեքված: Մաղերը ալիքաձև, դանդուր, երկու խոպոպներով իջնում են ձախ ուսի վերա, թուխ ներկված. մերուրը բաղդատ խուրմած: Ամոթանքի ծածկույթը, որ իջնում է մինչև ոտները, գորշ է: Ոտները մեխված են իրար հակառակ ուղղութեամբ, կրունկներն իրար կողքի: Ուսի թրանից պատվանդան ունի, որի վերա «սբ սատուած»-ն էր գրված, և հատատված կիսաշրջանաձև Գողգոթայի բլրի վերա, որի տակ եռամասնյա կամար և վերին ճակատի կամարի տակ Ադամի գլուխը. կամարների դաշտը արմավենիների զարդերով ծածկված: Խաչի վերին և հորիզոնական թևերը խաչաձև վերջավորություն ունին:

Խաչի հորիզոնական թևերի տակ կանգնած են՝ աջից Մարիամը և ձախից Հովհաննեսը[194]. Մարիամը ձախ ձեռքը դրել է կրծքին, իսկ աջն առաջ մեկնել, երեսը քիչ վեր, աչքերը դեպի հեռուն սևեռած և ոչ դեպի որդին: Քիթը կոտրած է: Գլխի լաչակը ճակատին և ուսերի վերա ծալքերով, իսկ կրինոցը ուսերի վրայից առաջին մասում իջնում է մինչև ծնկները, հետևից ավելի երկար և վերից վար ծալքավորած: Ամբողջ ֆիգուրը մակերևույթից քիչ դուրս է ընկած, բայց ոչ մարմնավորված, այլ հարթաքանդակ: Հովհաննեսը մի ձեռքը ծնոտին, մյուսը կրծքին, թվում է փաթույթ բռնած. մերուքի և բեղանի մոտ քիչ վնասված է: Հագել է երկար պարեգոտ և վերայից տունիկա ձգել: Մարիամից ցած խաչի պատվանդանի մոտ կանգնած է Հովսեփ Արիմաթացին, գոտեորած պարեգոտով, գոտու կապերը կախված. մյուս կողմից չորել է Նիկոդիմոսը, մի ձեռքին ունելիք, բևեռն է կամենում հանել, իսկ մյուսը քիչ վեր բարձրացրած: Նիկոդիմոսի մերուքը երկար է և ներկած, իսկ Հովսեփինը բոլորակ, խուրմած:

---

194 Երզնկյան (էր. 42) կարծում է Մարիամ Մագդաղինացին է. նույն սխալը կրկնում է Ե. Լալայան. Ազգ. հանդ. VII և VIII, 405:



Խաչից իջեցում։ Նկարիչ Սարգիս Պիծակ։ Մարիուն թագուհու ավետարան, 1346 թ.։
Երուսաղեմ, Ս. Հակոբյանց վանքի մատենադարան, ձեռ. № 1973, թերթ 258բ։

Խաչի հորիզոնական թևերից ցած, խաչքարի երկու կողերի վերա վեց-վեց ֆիգուրներ կան, ձեռքերը բաց, աղոթողի դիրքով, որ 12 առաքյալներն են, կնցկածքի և գեմքերի տարբեր ձևերով և արտահայտություններով։

Խաչի հորիզոնական թևերից վեր, աջից ճառագայթներով սկավառակի մեջ արևագալ, իսկ ձախից լուսին, նրանց տակը մի-մի քառաթև քերովբե, իսկ կողերից մի-մի կանգնած ֆիգուր, ձեռքերն իրար մոտ, ինչպես առաքյալներինն էր, գեմքերը նայողին դարձրած։ Ներկած են եղել զգեստները, բայց այժմ խունացած. ձախ ֆիգուրի տոգան կարմրավուն է, միրուքը քիչ թուխ։ Ավետարանիչների ներկայացուցիչներն են դրանք։ Խաչելության ամբողջ մակերևույթը, ֆիգուրներից զատ, զարդարված են արմավենիկի և բուսական մոտիվներով։

Խաչելության պատկերագրության գլխին դրված է մի առանձին քար, որ հետևան է կազմում, վերևը գարնելով, ուր փորագրված է «Համբարձաւ ած» են. սաղմոսի խոսքերը, իսկ մնացած մասը գոգաձև է և պատկերաքանդակներով ծածկված։ Կեդրոնում բոլորակ և խոր սկավառակի մեջ Ամենափրկչի անդրին է, աջով խաչակնքում է և ձախով փաթույթ բռնած. նիմբուսը բոլորակ է և գույս ընկած, մազերը ոլորուն գանգուր և միրուքը կլոր. վերան ձգել է ծալքերով հարուստ ծիրանի։ Սկավառակը բռնել են երկու ծնկաչոք հրեշտակ, աջից և ձախից. քանդակագործը չէ կարողացել մարմնավորել ծնկներից ցած ծալած ոտքերը, կարծես փափուկ շոր լինի ծալած։ Հրեշտակների երկար պարեգոտի ծալքերը վերից վար շարունակվում են չոքած մասերում. նրանք գեմքերը դարձրել են դեպի կողքերից կանգնած ֆիգուրները, որ խաչազուխ գավազան ունին ձեռքերին։ Այդ ֆիգուրները նիմբուսով են. աջով գավազանն են բռնել, ձախը դեպի համբարձող Տերը բարձրացրել։ Նորա հագել են երկար, մինչև ոտները հասնող պարեգոտ, լաթով գոտևորած, վերնազգեստի փեշերը փողոն

դարանը բերված ավետարանով, ինչպես և Ճարտարապետական աննման ստեղծագործություններով, ապացույց կարող են լինել, թե Հաղբատում չէին պակասում արվեստագետներ, գույներով կենդանացնելու քանդակագործական այս հոյակապ աշխատանքը[195]: Արձանը կանգնած է շենքի մեջ՝ սրահում, և ոչ ազատ բնության, ուրեմն և արվեստասերը պետք է գործադրեր համապատասխան միջոցներ, յուր գործը տպավորիչ դարձնելու համար: Հնագիտական առանձնահատկությունների մասին կխոսենք հետո:

ԺԹ.

Այս միևնույն Ամենափրկչի երեք փոփոխակներն ունինք ԺԹ դարի Մանիկոնյանների կալվածներում, երեքն էլ ժամանակակից Հաղբատի խաչարձաներին. դորանից հնագույնը Վեղիի ակունքներից ոչ հեռու՝ Ջղինգյոլ կոչված գյուղի սահմաններումն է՝ ՉԻՀ=1279 թվականից (պատկ. 37ա, 37բ), (պատկ. 23), մանկուց պատմական կենտրոնից քիչ դեպի հարավ-արևելք: Տարբերաբաբար այս փառավոր հուշարձանը, գարձյալ Ամենափրկիչ անունով, որ յուր պատկերագրությամբ պակաս հետաքրքրական չէ Հաղբատի նույնանուն խաչից, իսկ գեղարվեստական քանդակագործությամբ ավելի բարձր, կանգուն չէ այլևս. բուն խաչը երկու կտոր է արած, իսկ մնացած մասերը քարուքանդ, ցրված, հատատուն պատվանդանի շուրջը (պատկ. 38): Տեղացի թուրքերի պատմելով՝ անհայտ անձնավորություններ փորել են խաչարձանի տակը ոսկի գըտնելու հույսով, որի պատճառով և փուլ է եկել հուշարձանը. բայց հավանական է, որ գոհ է դարձել այն հայ-թուրքական ընդհարումներից առաջ եկած թշնամական զգացման, որովհետև խաչարձանը շուռ գալով՝ այդպիսի ավերման և ցրվածության ենթարկվել չէր կարող:

Բուն խաչի երկարությունն է 2,92 մետր (վերին կտորը 1,83, ներքևինը 1,07), լայնքը 1,15 մետր, պատվանդանի մնացորդի բարձրությունը 0,62, իսկ լայնքը 1,04 մետր, նախնական լայնությունից պակաս, կոտրտված լինելու

---

195 Խաչքարերի դումավորելու կամ ներկերով պատկերավորելու սովորության ապացույցներ երևան եկան և Անիում՝ ակադեմիկոս Մառի պեղումներով՝ Պապկա և Վախրամինի եկեղեցու մոտ, 1912 թվին: Այդ եկեղեցու արևմտյան կողմը նույն են խաչքարեր, հատատված բարձր, ելքնած, դարձյալ ներկերով պատվանդանի վերա: Համարեքերի տակ նույն տարածությունը ծածկված է հին գերեզմաններով: Տարաբախտաբար հնարավորություն չէ եղել արտանկարելու այդ, որովհետև արևը զարկելուն պես նրանք սկսել են դույները և փշրվել ծնկը (մեր հոդ. Հովհ, 1912, 453. Անիի ներկա տարվա պեղումներից վերնագրով):

Նման երևույթ, բայց զարգանկարչության նկատմամբ, տեսնում ենք Այրիվանքում՝ Պապաքի ժամատան խաչքարերի վերա:

պատճառով։ Այս չափերը ցույց են տալիս, որ սա մի մեծ և փառավոր հուշարձան էր, որ բարձունքի վերայից իշխում էր Վեդիի ամբողջ միջին հովտի վերա, երևսը դեպի արևմուտք, հռանկյունաձև ճակատով ծածկի տակ, կողքերից և հետևից սրբատաշ քարերով պատված։ Խաչարձանի ճակատին ելնդավոր խոշոր տառերով գրված է.

Տր աւծ ողորմի պարոն Գրիգոր ո(196) եւ
Մամքանա հայր եւ մայր Մամիկոնին։

համբաքանդակի կեսորդը խաչելությունն է. խաչի գլխին քառանկյունի տախտակաձև հարթության վերա ելնդավոր տառերով գրված.

Սայ է թագ Յաւ որ հրէից.

Տախտակի մի կողմը (խաչեցյալի աջ) արևգակն է ճառագայթներով՝ առասպելական թռչունի մեջքին, զարդերի հետ հյուսված «արևգակն» ելնդավոր վերտառությամբ, իսկ մյուս կողմը լրացած լուսին՝ եղջերուի մեջքին «լուսին» վերտառությամբ։ Խաչի անկյունից մի աջ հայկական օրհնություն է տալիս, տակը նման տառերով «աջ ան» գրված, սորա տակ մի աղավնի լուսո պսակով և «Հոգի աւ» վերտառությամբ։ Խաչեցյալի գլխին «Յս քս», իսկ խաչի հորիզոնական թևերի վերա «ձեռք որ դերկինս աւ արին սխարածեցեր ի խաչս» խորաքանդակով։ Խաչված Հիսուսն ունի կարճ մազեր և երկճյուղ մորուք. բոլորակ նիմբուսի վերա խաչի նշան. մերկ է և միայն ամրոխանքը ծածկված սփածանեղիքով, աջ թևը պոկված է և կախված, որ բռնած, համբուրում է մի կանացի ֆիգուր, բոլորակ լուսո պսակի վերա «ածածին» գրած։ Նա հագել է մինչև ոտները հասնող զգեստ, գլխին և ուսերին ձգված է լաչակ, ծնոտի տակից կապ անցկացրած։ Խաչեցյալի մյուս կողմից կանգնած է մի այլ ֆիգուր, նիմբուսի վերա «Յովհաննէս» գրված. դեմքը եղծված է, ինչպես և ֆիգուրի առաջին կողմը, բայց երևում է, որ ուսերին տոգա ունի ձգած, ուրեմն և սուրբական զգեստավորությամբ և դիրքով։

Ավելի ներքև, աջից կանգնած է մի այլ ֆիգուր, երկար զգեստով, լաթի գոտին մեջքին կապած, ձեռքերը վեր բարձրացրած, աղոթողի դիրքով, գլուխն էլ վեր ուղված՝ երգում է «սբ ած», որ ելնդավոր և զեղչիկ տառերով գրված է արմավենիկի զարդաքանդակների և ցողունների մեջ, Հովսեփ Արիմաթացին է. նորա դիմաց Նիկոդիմոս։ «Սբ ած»-ի շարունակությունը՝ «սբ եւ» գրված է Հիսուսի ոտքերի մոտ, իսկ մնացածը «Հզար սբ եւ անմահ որ խաչեցար ողորմեա պարոն Մամիկոնին» ոտքերի տակ, խորաքանդակ։ Խաչի մակերևույթը ծածկ-

196 Երկրորդ գ-ի գլուխը կոտրած։

ված է արմավենիկի և ցողունների հյուսկեն զարդարանքով, իսկ լուսնի և արեգակի մոտ, ևլնդավոր գծերի հյուսվածքով[197]։

Պատվանդանի մնացորդի վերա նկատվում է մի ձիավոր, որ աջ ձեռքով նիզակը շամփրել է յուր վերա հարձակվող վագրի բերանի մեջ, թևքված դեպի առաջ, դեմքը նղծված է, բայց երևում է մերուքը. բարձր գլխարկը անորոշ ձևակերպությամբ, հավանորեն նման Զաքարեի և Իվանեի գլխարկին (տես՝ մեր Հաղբակյանք, շապկի նկարը). հագել է մինչև ծնկները հասնող երկար հագեստ, կողքից կախված է երկար թուրը, որի երկրորդ կեսը՝ դեպի ծայրը՝ նղծված։ Նկատելի է մասամբ ձիու զարդարանքը՝ կրծքի և աղդրերի վերա. ձիու պոչը կեսից հանգույց արած։ Պատկերաքանդակը յուր ամբողջությամբ հիշեցնում է սասանյան ձիավորը, որ արծանը կանգնող Մամիկոնն է, Դրիդորի և Մամգանի որդին և Սարժիգովսկին սխալմամբ նույնացրել է Վարդան մեծ Մամիկոնյանի հետ։ Դիմացի վագրը մի քանը բարձրացրել է դեպի ձիավորը. նղծված է գլխի մասը, բայց նկատելի են բաշը, անդամների գծագրությունը և մեջքի նռակի շերտերը։ Պատկերաքանդակի վերև գրված է խորքանդակ. «Մամիկոն ծառա այ կանկնի[ց] զամենափրկիչն ի բարէ—ներքին գարնանի վերա — խաւսութ»։ Մի ընկած քարի վերա նկատվում է թվականը դեպի ձախ բոլորակի մեջ առնված. «ի թիվս (վերջին տառը գուցե և ն) ՉԻՀ»[198]։

Այժմ տեսննք ովքեր են խաչարձանի կանգնող Մամիկոնը և նորա ծնողները Դրիդոր և Մամգան։ Այս հարցի պատասխանը որոշելուն նպաստում են մի քանի արձանագրություններ, որ գտնվում են Վեդիի վերին ակունքների նույն շրջանում, ուր մեր հուշարձանն է։ Վեդին այստեղ կազմված է երկու մեծ վտակներից, որոնք բխում են Ջղինի և Ճերմանիսի ձորերից և խառնվում իրար պատմական Ուրծում, ներկա անվանակոչությամբ Քեշիշքյանդ կամ Քեշիշզաղ (այժմ՝ Դեղարոտ, Արարատի շրջան—կազմող), Դարաբաղլար (այժմ՝ Ջիմքենդ, Արարատի շրջան—կազմող) և Դահնաղ գյուղերի մոտ. առաջին վտակի ճյուղերի վերա են ընկնում Խոյրով, Ջիմ, Մանկուս, Աղբիլիսա (այժմ՝ Ազատ, Վարդենիսի շրջան—կազմող) և ապա Ջղինգյուղ և Քյուրսուղ գյուղերը. վերջին երկուսը բաժանված են առաջիններից խաչդարաի կոչված (մեր Հուշարձանի անունով) անտառապատ ձորագոգով։ Այդ բոլորը գյուղերում կան ավելի կամ պակաս չափով հայ շինարարության հետքեր և մնացորդներ, մինչև այժմ դեռևս բանասիրության անհայտ. մեր խնդրի լուսաբա-

---

197 Strzygowski-ն մեկնից տասնյակով լուսանկարը և հարկավոր տեղեկությունները արձանագրությունների հետ, հրատարակել է Die Baukunst Armenier աշխատության մեջ, եր. 259. սխալմամբ Հովսեփի և Նիկողոսի պատկերների համար գրում է. „Links eine Gestalt mit dem Haupte Iohannes Taufers, rechts Iosef".

198 Այսպիսի կենցաղական իշխանական պատկերագրությունների մասին տես Orbeli, Bitowie reliephi հէն. SP., 1915. Ottisk is sapissok Wost. Otdel. imp. arx .o·wa: *Մեր Հաղբակյանք հէներ. 82, 55։*

նուիյան համար կարևորները Մանկուս և Աղբիլիսա նախկին թուրքաբնակ գյուղերում: Վերջին գյուղում դեռևս կանգուն են սագաշեն, փորբիկ եկեղեցու պատերն ու ափսիդը. շենքը, թեև ճարտարապետական առանձին արժեք չունի, բայց պահված են մի քանի արձանագրություններ, որոնք տեղի պատմության մասին մեզ նորություններ են տալիս: Բեմի ճակատի՝ 70×58 սմ մեծությամբ կա հետևյալ արձանագրությունը (պատկ. 39ա).

Ես Գրիգոր եւ ամուս(ի)ն իմ Մամքան մ/
եր զրամով շինեց/աք ձիթահանք եւ.../
տվաք ածածնին մեք ազատ արարաք/
զվանքս միաբանաւքս յամէն չար/
է վս փրկութե հոգ/մերոց որ խափան.../

Նույն բեմի մի այլ քարի վերա՝ 64×47 սմ մեծությամբ՝ կա մի արձանագրության հետևյալ մնացորդը (պատկ. 39բ).

. . . . (որ)դի Մարծպանա
. . . . ի սբ ածածինս եւ?
. . . . աւառ? շինեցա(ք?)
. . . . (աղ)բիւրս վս հոգոյ իմ (ո)
. . . . յ: Ա: շինական խ. . .
. . . . (աղ?)ատ յամ
. . . . (է)արէ այլ շահ ու պէն
. . . . ՅԺՐ հայրապետ
. . . . . .

Առաջին տողի մեջ անշուշտ հիշված էր արձանագրողի անունը, ոմն «(որ)դի Մարծպանա»: Գանձակեցին[199] հիշում է «Գրիգոր իշխան որդի Մարզպանին՝ եղբայր Ասլան պէկին, Սարգսի եւ Ամիրային յազգէ Մամիկոնէից», որ իրեն տեղեկություններ է հաղորդել Թաթարների կրոնի և սովորությունների մասին. մի երկրորդ անգամ հիշում է եղբայրներին, երբ առիթ է ունենում խոսելու Վաչուտյան Քուրդ իշխանի և նորա կնոջ՝ Խորիշահի մասին՝ «յազգէ Մամիկոնէից, դուստր Մարզպանայ՝ քոյր Ասլան պէկին եւ Գրիգորոյ»: Մարծպանի՝ «որդի Սարգսի Թոռն Համազասպեանց յազգէ Մամիկոնեանց», և նորա որդիների հիշատակությամբ բազմաթիվ արձանագրություններ ունինք այլևայլ վանքերում. Գոշա վանքի մի արձանագրությամբ՝ «ես Մարզպան իշխան եւ որդիք իմ Ասլան բէգ եւ Գրիգոր միաբանեցաք սբ Աստուածածնին» և տալիս են Ողջաբերդում մի այլի ևս. «ազատ յամէն հարկէ»[200]: Դեսղի Ս. Հարությունն

199 Դուկ. հրատ., Թիֆլիս, 259, 354:
200 Ագգ. հանդ., 24:

և Ս. Գրիգոր (Բարձրաքաշ) եկեղեցիների բազմաթիվ արձանագրություններից երևում է, որ այդ վայրը նրանց իշխանության կենտրոնն էր, տոհմի ուրիշ իշխանների հետ նաև վերոհիշյալ Մարծպանի և նորա որդիների շինարարության, վիրաավության և անունների հիշատակությամբ[201]: Հենց մեր այս «Գրիգոր որդի Մարծպանայ» յուր հոր մահվանից հետո տալիս է վանքին Գրիգորաշեն գյուղի հետ «Սիրեկայ գոմոց տափն եւ մեծ կռատվարն, Ագատակի փայտաշէնու կէսն, զաւազ սուրբ Նշանն, աւետարան պատուական, գրեան եւ զարդ եկեղեցոյն եւ այլ արժիւքք»: Սույն արձանագրության մեջ հիշված է և նորա սմուսինը Մամքան, որով այլևս տարակույս չի մնում, թե մեր հուշարձանի և Աղքիլիսայի արձանագրությունների Գրիգորն ու Մամքանը և թերի արձանագրության Մարծպանի որդին ովքեր են: Նրանք Մամիկոնյանց տոհմից էին, որ Դսեղի և շրջակայքի հետ, կալվածներ ունեին նաև Վեդիի վերին ակունքներում՝ Մամիկոսի և Ճերմանիսի ձորերում, որ հաստատվում է արձանագրություններով և ձեռագրական հիշատակարաններով[202]:

Մամիկոնի հիշատակություն ունինք նաև Դսեղի «Սիրուն խաչ»-ի արձանագրության մեջ, որ կանգնել է ոմն Հայրադեղ որդի Թերին (պատկ. 40).

1. Իշխանութեն: Մամիկոնեն եւ որդոյ նորայ Վարդանայ: եւ Հայրադեղս որդի Թերի
2. Ս կանկնեցի սբ տրունայիանս յի
3. շատակ ինձ եւ Ասլանբէկին եւ ծնողաց մերոց որք երպագէք[203]:

Սիրուն խաչը անթվական լինելով՝ կարելի է մտածել, թե, գուցե, կանգնած է նա սույն Մամիկոնի նույնանուն թոռնորդու ժամանակ. ներքին Մանկուսում, գյուղից դուրս, դեպի Ջիմ տանող ճանապարհի եզերքին, ուրիշ խաչքարերի հետ՝ կա և մեկը, դեռևս կանգնուն, 1,3×0,85 մ մեծությամբ, որ հետևյալ արձանագրությունն ունի.

Ես Արղունս թո(ռ)
ն մեծին Մա(մի)
կոնա ասպարա
պետին կանկ(նեց)
ի վհաչս ի փր(կու)

---

201 Գրի ենք առել և լուսանկարել անձամբ. հմմ. Ջալ., Ա, 117, 24, 110, 112:

202 Տոհմի պատմության և շինարարության մասին ունինք առանձին աշխատություն (ԺԴ դարից սկսած):

203 Այսչափ է արձանագրությունը: Խաչարձանի բարձրությունն է 2,37 մ, լայնքը 1 մետր, վերևի պատվանդանը, որի վերա հաստատված է խաչը 1,32×0,7 մետր. երկրորդը 1,34×0,48 մետր. երրորդը 1,5×0,35 մետր:

(Թ)ի ինձ որդիմոյ (si)
Մամիկոնա եւ ամուսո(si)
իւր խաչունին[204]։

Բայց Սիրուն խաչի աղնիվ արվեստը աղաղակում է, որ նա ԺԴ դարի գործ է և ոչ ԺԴ դարի վերջին տասնամյակների, երբ մոտավորապես պետք է ապրած լիներ Արղումի որդի Մամիկոնը։ Ավելացնեմ, որ այս ժամանակ Դսեղում այլևս շինարարության մնացորդներ չկան, երևի, տոհմի նվաղելու և աղքատության պատճառով, որպես հետևանք մոնղոլական պետության անկման հաջորդող խառնակ ժամանակի և Լանկթամուրի արշավանքների։ Արձանագրության մեջ հիշված Ասլանբեգը հավանորեն Մարծպանի որդի և Գրիգորի եղբայրն է համանուն Մամիկոնի հորեղբայրը։ Մամիկոն մեծը վերջին արձանագրության մեջ կոչված է «ասպարապետ», որ հետևանք էր Զաքարյանց շրջանի պետական կազմակերպության, որ բացատրել ենք մեր «Խաղբակյանք կամ Պռոշեանք» աշխատության մեջ[205] և այստեղ երկրորդել չենք կարող։

ԺԵ

Հիշեցինք արդեն, թե Մամիկոնյանց կալվածներում այլևս երկու Ամենափրկիչ կոչված խաչարձաններ կան. դրցանից մեկը նրանց կեդրոնական ավանում, Դսեղի մեջ, հին գերեզմանատանը (պատկ. 41)։ Խաչարձանը բարձրանում է երեք մեծ, իրար վերա դրված քարերով պատվանդանի վերա. ներքևի քարերը սև են, իսկ վերինը, որի վերա խաչն է հաստատված, կարմրավուն. նույն գույնն ունի և բուն խաչարձանը։ Պատվանդանի վերևի քարի երեսին իրար հետևից շարքով քանդակված են չորս պարզ խաչեր, իսկ նրանց տակը հետևյալ արձանագրությունը։

1. Ի թվ. ՉԼ (=1281)
2. Ողորմութիւն այ ես Տէրունս որդի Խալըլին իմ եղբէրացովս
3. կանկնեցի զ
4. էչս (պակասում է խ) յանուն Գրիգորո որ զուր եւ մահո
5. ւամբ ի քս փոխեցաւ որ էր պարծ[206]
6. անաց ... մեր որք երկրպագէք
7. յաղաւթս յիշեցէք

---

204 Փակագծի մեջ ասնվածները վճացած, մենք ենք ավելացնում։

205 Վաղարշ., 1928, եր. 16—21։

206 Երրորդ, հինգերորդ և յոթերորդ տողերը գրված են պատվանդանի հարավային երեսին։

Խաչի պատվանդանի վերա՝ հյուսիսային կողմը գրված է «Վարհամ քիշեցիք», որ քարտրծն է, իսկ Գրիգորը, որի անունով խաչըն որդի Տերունը յուր եղբայրներով կանգնել է այս արձանը, ամենայն հավանականությամբ, Գրիգոր Մամիկոնյանն է, Մամիկոնի Հայրը և Մարծպանի որդին։

Տարաքանդակի կենտրոնը այստեղ ևս, բնականաբար, բուն խաչելությունն է, խաչափայտի վերին և հորիզոնական թևերի ծայրերը կրկնախաչ. Հիսուսը գլուխը թեքել է դեպի մայրը, որ կանգնած է աջ կողմից և երկու ձեռքով բռնել է որդու խաչից պոկված ձեռքը և համբուրում է։ Խաչեցյալի լուսապսակը մանրաքուլիքից փորը-ինչ դուրս է ընկած, նույնը և Մարիամինը, որի վերա գրված է «ածածինն»։ Հիսուսը մերկ է, ամոթանքը միայն ծածկված մինչև ծնկները, ոտները իրար կողքի դամված և դեպի աջ ուղղված. իսկ Մարիամը գլխին լաչակ է ձգել, որ անցնում է պարանոցի տակով և ծալքերով իջնում ուսերին. վերան ձգել է կարճ վերնազգեստ, իսկ նորա տակից մինչև ոտները հասնող վերնաշապիկ։ Մարիամի հանդիպակաց կողմը «Յովհաննէս»-ն է, ինչպես և գրված է լուսապսակի վերա. նա աջը դրել է ծնոտին, իսկ ձախը կրծքին. գիմքը կլոր, առանց մորուքի, քիչ եղծված. գլխի մազերը թափված ուսերին։ Վերնազգեստը ծալքավոր, և հասնում է մինչև սրաքիթ կոշիկ հագած ոտները։ Սրանից ցած ծոնկի է չոքել Նիկոդիմոս, նիմբուսի երևզավոր վերտառությամբ համեմատ, ունելիքը մեկնելի է Հիսուսի ոտքից բևեռը հանելու համար. ունելիքի մասը քիչ կտրըված։ Մյուս կողմը՝ Մարիամից ցած՝ «Յովսեփ»-ն է ըստ նիմբուսի գրության, ձեռքերը մեկնած աղաչավորի ձևով և գլուխը վեր բարձրացրած, գոտին՝ մինչև ծնկների գլուխը հասնող՝ կապայի վերայից։ Խաչի պատվանդանի տակ, որ Գողգոթան է և եռամասերով ձևացրած, նկատվում է «Ադամ»-ի գլուխը։ Խաչելության գլխին գրված է յոթցանակ—տաստակը, վերան երևզավոր տառերով «սայ է թագաւոր հրէից» գրված։ Յոթցանակի տակից «աջ ան» խաչակնքում է, ձախ անկյունից դեպի աջ մեկնված, իսկ նորա մոտ աղավնակերպ Հոգին՝ «Հոգի այ» գրված. հորիզոնական թևերի վերա խորաքանդակ գրերով. «ձեռք որ զերկինս ար արին տարածեր ի խաչիս»։

Խաչքարի ճակատին՝ կետրոնում Ամենակալի անդրին է սկավառակի մեջ, աջով խաչակնքում է, իսկ ձախով մի ժապավեն բռնել (բաց մատղաթի) վերան «ես եմ լոյս աշխարհի» խոր քանդակված։ Աջից երևում է ճառագայթարդակ «արեգակ», ծաղկազարդի մեջ սիրուն գրված, զարդարուն թևերով և պոչով թռչունի մեջքին. իսկ մյուս կողմից «լուսին» մի կենդանու, թվում է մեջքը շորով ծածկված եղի վերա։

Խաչի ֆոնն ամբողջապես ելնդավոր արմավենիկի և ցողունների զարդարանք է, իսկ վերևի ճակատը եռագիծ հյուսվածքի մի ժապավեն։

Երկրորդ Ամենափրկիչ խաչարձանը Մամիկոնյանց իշխանության մեջ

գանվում է Մարդ գլուխից դնալ արևելահարավ հինգ կիլոմետրի չափ հեռավորության վրա, այժմ «Ճգնաւորի թալա» կոչված գյուղացիներից։ Այստեղ մի փոքրիկ հարթության վրա, անտառի բացատում, մեծ ու փոքր խաչքարերի մի խումբ կա, որոնցից 1231 և 1245 թվականներով, նրանց միջ և 1285 թվից Ամենափրկիչ կոչված խաչը՝ նման Դսեղի հուշարձանին։

Խաչի բարձրությունն է պատվանդանով մոտավորապես 3,50 մետր (բուն խաչքարը 1,62×0,95 մ, վերին պատվանդանին բարձրությունը 0,53, լայնքը՝ 1,29 մետր, գրչնեղավոր պատվանդանը 1,33 մ բարձր և 1,55 մ լայնքը), հետևը այսպիսի արձանագրությամբ (պատկ. 42)

1. + Ի թվի ՉՀԴ (= 1285)
2. Կանգնեցաւ խաչս (si) ի նեղ եւ ի դա
3. ան ժամանակս թագաւորութիւն
4. Գեմեարի որդոյ Գաւթի ի հայրապետութիւն ան
5. Յհանիսէ Բոռն Գաւթին։ Ես Բոռս քահանա
6. եւ եղբայր իմ Տիրացու կանգնեցաք զամենափրկի(ն)
7. ՚ի յիշատակ հայր մեր Գրիգոր Եահանաի եւ մայր մեր...
(կտորած երկու տող)
8. յիւն Բանուշահի։ եւ քոյերաց մերոց Տիրանց...
(մի կամ երկու տող կտորած)
9. եւ ? Տիրամարին։ Ես Տիկնանցին։ եւ Տիրոցին եւ փեսա...
(ևս կտորած)
10. .. (մե կտորած) ան պատճառ քահանայից խաչտարս (si) եւ...
(կտորած)
11. եւ Մարգարին։ Ով ածայսերիք որ եւ կարդացէք
12. .. (զմե կտորած) զուցկեզս յիշեցէք ի քո[207]։

Մարդի Ամենափրկիչը (պատկ. 43) շատ է նման Դսեղին, գուցե և հենց նույն վարպետ արվեստավորի գործը, միայն համեմատաբար ավելի լայն է և կարճ։ Ճակատի վերին մասը ջարդված է, ուստի և դժվար է ասել, չի՞ր արդյոք Ամենակալը, որ Դսեղում կա, թե ոչնչացած է. բայց մնացած մասերի նմանությունը ակներև է։ Խաչի ցուցանակի վերա միայն երկրորդ տողն է կարդացվում, առաջինը ջարդված է և մի փոքր մասը միայն նկատելի «... /աւար

---

[207] Երկրորդ տողում առաջին բառի ց-ի մեջ ա գրած։ Նույն տողում երկրորդ բառի ա-ն չ-ի բոլորակի մեջ. վերջերորդ տողի վերջին վանկի ա-ն ց-ի բոլորակի մեջ. նույն տողի վերջին բառի առաջին վանկի գ-ի բոլորակի մեջ ամ գրված։ Ընդգծվածները կցումներով։ Ամբողջ արձանագրության մեծությունը 1,62×0,92 մ, տողի մեջ գրի բարձրությունը 7 սմ։

Հրէից». ցուցանակի տակից երևում է «աջ ան», պատկերը և նշոգալոր գրերը, իսկ դրա տակը «Հոգի այ» աղավնակերպ պատկերով։ Ցուցանակի երկու կողմից իրենց սովորական տեղերում, արեգակը ճառագայթավոր սկավառակի մեջ առաստղական թռչունի մեջքին, մոտը բարձրաքանդակ «Ա», իսկ մյուս կողմը լուսինը ցլանման, մեջքը պարզարուն լաթով ծածկված կենդանու վերա, կողքին «Լ» գրած։ Այստեղ ևս խաչափայտի վերին և հորիզոնական թևերի ծայրերը խաչաձև վերջացած։ Խաչեցյալը թեև գլուխը թեքել է դեպի աջ, բայց չի նայում մորը, որ բռնել է որդու խաչից պոկված թևը և համբուրում է։

Հովհաննեսը, Նիկոդիմոսը և Հովսեփը նույն դիրքն ունին, ինչպես և Դանդում. կրկնվում է մինչև իսկ Հովհաննու կոշիկի սրաքիի ձևը։ Միայն Հովսեփի թևի վերա ձգված է «կտաւ», որ չի նկատվում մյուսների վերա. բայց այստեղ էլ պահասում է «ձեռք, որ վերինն արարին» ևն. մակագրությունը։ Հովսեփը գլուխը վեր է բարձրացրել և երդում է «որ ած», խոշոր և դուրս ընկած տառերով գրված բերանի մոտից, ինչպես և Մամիկոնի խաչարձանի վերա, արմավենիկի զարդերի և ցողունների մեջ խառն։ Դողգոթայի բլուրը այստեղ ևս ձևավորած հինգ կամարներով, ինչպես և Դանդում, մեջտեղի կամարի տակ Ադամի գլուխը, ընդհանուր ձևակերպությամբ նման և Մամիկոնի խաչարձանին, միայն այնտեղ չոթ կիսակամարով, տարածության մեծ լինելու պատճառով։ Խաչքարի դաշտը ծածկված է արմավենիկների և ցողունների սիրուն քանդակներով, երեքի մեջ էլ մոտավոր նմանությամբ։ Բայց նրանց մեծ և առանձնահատուկ նմանությունը երևում է արեգակի և լուսնի դիցաբանական ձևակերպման մեջ. Ջղինի, Դանդի և Մարցի Ամենափրկիչները այդ կողմից կատարելապես նման են իրար, որով և պարզ է նրանց ծագման սերտ աղերսն իրար հետ։ Այս նմանությունները ի նկատի ունենալով, կարող ենք ասել, որ թեև Հաղբատի Ամենափրկիչը մի քանի տարով հին է Մամիկոնյանների շրջանում եղած Ամենափրկիչներից, բայց սրանց նախնական օրինակը չէ. նման խաչքարերի փոխանակներ Հայաստանում բացի մեզ հայտնիներից պետք է ավելի տարածված լինեին, որին ապացույց կարող են լինել Ամենափրկիչ անունով եկեղեցիների գոյությունը, այլև նման մոտիվների մնացորդներ քանդակագործության և մանրանկարչության մեջ, որոնց մասին կխոսենք քիչ հետո։

Արեգակի և լուսնի երևույթը խաչելության և խաչից իջեցնելու պատկերագրության մեջ տեսանք վերև (ծԲ գլ.), հիշեցինք և նրանց դիցաբանական երևույթը 6—է դարերի սարկոֆագների և փղոսկրի քանդակների պատկերագրության մեջ. անկասկած հնթանոսական-դիցաբանական ծագում ունին և մեր Մամիկոնյանց շրջանի երեք Ամենափրկիչների վերա նկատված ձևակերպությունները, ինչպես և մեր մանրանկարչական արվեստի և ոսկերչական քանդակագործության մեջ հավելուսնի պատկերագրությունը խաչելության

գլխին[208]: Էջմիածնի մատենադարանի և ձեռագրանի վարիչ Սեմենքիրիմ Տեր-Հակոբյանը հայտնել է մեզ, որ Արագածի փեշերին, տեղը լավ չէ հիշում, տեսել է գեղեցմանական մի քառանկյունի կոթող, որի վերա քանդակված է եղել արևագլ կենդանու մեջքին: Այդպիսի կոթողները, որ բավական բազմաթիվ են մեր մեջ և գեռևս քանասիրության անծանոթ, իրենց ծագմամբ մեծ առընչություն են ցույց տալիս սասանյան միջագիտական արվեստի հետ և Դ—Զ դարերի մնացորդներ են: Տեր-Հակոբյանի տեղեկության առաջության դեպքում, պետք է կարծել, որ դիցաբանական այդ պատկերավորումն էլ հայ քրիստոնեական արվեստին անցել է գեղարվեստական նույն հասանքների հետ, իսկ սրանից, գուցե, ասորա-բաբելական կամ հետիտյան դիցաբանությունից: Հուսնի և արեգակի տեղը մեծ է արևելյան ազգերի դիցաբանական պատկերացումների մեջ. «անասնային կերպարանքով կենդրայացվի ավելի իբրև կենդ, նապաստակ, շուն, խոյ, ցուլ, եղն. ասոնց մեջեն նշանավորագույններն են ավելի հղչյուրավորները՝ իրենց կիսալուսնի նմանության պատճառով»[209]:

ԺԶ

Ամենափրկիչ խաչի պատկերագրության ավելի մեծ տարբերություններով մի փոփոխակ եղել է Արագածի արևելյան կողմը Ապարանի շրջանի Աստվածընկալ գյուղում. նույնանուն տաճարը յոթ գավթով շինել են Վաչուտյան Քուրդ իշխանը և յոթ ամուսինը Խորիշահ դուստր Մարծպանա՝ Մամիկոնյան տոհմից: Տաճարի Աստվածընկալ անունն արդեն մատնանշում է խաչելության կամ խաչից իջեցնելու պատկերագրությամբ մի սրբության կամ խաչարձանի գոյությունն այդտեղ, թեպետ այդ մասին չկա հիշատակություն շինության սկզբնական արձանագրության մեջ, ուր եկեղեցին «սբ կաթողիկէ» է կոչված: Համանական է, որ այդպիսի խաչարձան կանգնել են ավելի ուշ, քան ՈՂԳ= 1244 թվականը, երբ տաճարն է շինված: Կարծում ենք, ունինք այդպիսի մի խաչարձանի կտորը՝ «Թ. Զ» = 1251 թվականից. տաճարի հարավային կողմը հին, բազիլիկ եկեղեցու մնացորդի խորանում ընկած է մի խաչքարի բեկոր, նուրբ քանդակներով և ընդավոր գեղեցիկ գրերով. աջի և ազաջնու պատկերների վերա «աջ այ» և «հոգի այ» վերտառությամբ. սրանց տակը խաչակնքող

---

208 Տե՛ս մեր «Մի էջ հայ արվեստի և մշակույթի պատմությունից» հոդվածը «Տաթև»-ի Զ գրքի մեջ 238—239. նույնը և առանձին դրքույկով. 1930. Հալեպ, 46—47: Նաև Ձեռ. էջմ., № 7566. խաչից իջեցնելու մանրանկարի գլխին, Պարսամ ծագկողի ձեռքով, 1508 թվին:

209 Հանդ. Ամս. 1920. 270. հոդված Մատիկյանի՝ «Աբեղը և լուսինը»:

մի անդրի, որ Քրիստոսն է։ Ավելի ցած հորիզոնական ուղղությամբ մի տող արձանագրություն, շարունակությունը վերից վար, այսպես.

. . . . . ային Ղազարոյ եւ Վ

Հավանորեն արձանագրությունը շրջանակ էր կազմում բուն խաչին, որ խաչելությունն էր պատկերավորում հնագույն ավանդության համաձայն։

Այսպես ուշ ժամանակում այդ երևույթն, այսինքն խաչով խաչելությունն արտահայտված, անհարիր ենթադրություն չպիտք է երևա, քանի որ ունինք փաստական մնացորդ հենց նույն Արագածոտն գավառի Աշտարակ ավանում, Կարմրավոր Աստվածածին եկեղեցւց բարձր, դեպի Մողնու տանող պողոտայից աջ գտնված գերեզմանատան մեջ (պատկ. 44), (պատկ. 24) [210]։ Խաչարձանի ծագման հանգամանքները բացատրող արձանագրությունը հետևյալն է, որ գտնվում է գարնելի և մեծ պատվանդանի վերա.

1. ի թվ. ՉԺԷ. ի թագաւորութիւնն.... (անմ)
2. ահին այ ես որ (թ)ումաս կանգնեցի զայ նշա
3. նս վասն չարիքս կենաց պարոն Սադունին եւ զաւակաց իւրոց
4. եւ հիշատ
5. ակ հոգո ի
6. մո եւ ծն
7. ողաց իմո
8. որք երկրպ
9. ագէք կենս
10. արեր նշ
11. նիս գմեզ
12. յիշեցէք
13. ի քս

Այստեղ հիշատակված պարոն Սադունը մեզ հայտնի է արդեն Հաղբատի Ամենափրկչի արձանագրությունից. տարաբախտաբար ոչինչ գիտենք արձանը կանգնող «որ Թումաս»-ի մասին, որ հավանորեն եպիսկոպոս էր, «աէր» կոչմանը նայելով, գուցե, Հոհաննու վանքի, թեև ուրիշ աղբյուրներից հայտնի չէ։

Խաչի երկու կողմերից և պատվանդանի վերա եղած արձանագրությունից, որ մի ամբողջություն էր և դավանաբանական բնույթ ուներ, ուրեմն և կարևոր խաչարձանի հասկացողության համար, փչացած է և բոլորը չի կարդացվում.

210 Այս գեղեցիկ խաչարձանի պատկերը տպել է A. Tchobanian. La Roseraie d'Arménie III. 1929, եր. 260, մեր ուղարկած լուսանկարից։

Աե՛ս անեղ անմահ... (յաւ) խոչնից ... ի?
սբ կուսէն .../... (առեգակի և լուսնի
պատկերների տակ) /է ... ձին հեղ .. ին
դրունք դժոխոց ... զաոչին տեղին տայ
ի (աչ կողմից նայողի վերից վար) /ր ծնընդ?
(բուն խաչի տակ) եւքն մայրեն .../

Խաչարձանի բարձրությունն է 6,39 մ, բուն խաչի լայնքը 1,71, իսկ մնացած մասերում զանազան[211]*։ Կենտրոնական մեծ խաչի գլխին ծաղկաղարդ եզնդավոր գրերով կարդացվում է.*

Սբ աե՛ Յս Քս որդի այ.

Սրա տակը, երկու զարնեղների մեջ, խաչի վերին թևի երկու կողմից անոթող կենդանիների մեջքին արեգակ և լուսին, որ բանել են երկու թևավոր հրեշտակներ։ Մեծ խաչի հորիզոնական թևերի տակ քանդակված են զարդալ միմի խաչ, որոնց արմատներից ոչ միայն արմավենիկի ցողուններ են դուրս եկել և դեպի վեր բարձրացել, ինչպես սովորական են մեր խաչքարերի արվեստի մեջ, այլև հաստատված մի-մի բոլորակ վարդյակի վերա, որոնց մակերևույթը ծածկված է նույն արմավենիկների և ցողունների հյուսվածքով։ Մեծ խաչը յուր հերթին հաստատված է մի փոքր վարդյակի և պատվանդանի վերա։ Խաչերի դաշտերը զարդարված են արմավենիկի ցողունների քանդակներով։

Այս նկարագրությունից պարզ է, որ այստեղ մի սովորական խաչ չէ, որ ունինք, այլ խաչով խաչելության արտահայտություն, որի ապացույցներն են արեգակի և լուսնի դիցաբանական երևույթները, ինչպես և ճակատի մակագրությունը «սբ աե՛» և այլն, կամ շրջանակի եղծված արձանագրությունը, որի իմաստն է մոտավորապես, թե Անեղն ու Անմահը մարմնանալով և խաչվելով փրկվել են զևրված հոգիները (դրունք դժոխոց)։ Հենց այս մտքով էլ այս տեսակի խաչքարերը իրենց պհսպիտություններով Ամենափրկիչ անունն են կրում, և ինչպես կտեսնենք, նույն միտքն էլ քանդակագործական պատկերագրության նյութ է դարձել հետին ժամանակի մի օրինակից դատելով։

Վեդիի ձախ վտակի ակունքների մոտ՝ Շահապլու (այժմ՝ Շաղափ, Արարատի շրջան—կազմող) Դադրլու (այժմ՝ Լանջանիստ, Արարատի շրջան—կազմող) գյուղերի մեջ, Զինջիրլուի Ս. Կարապետից դեպի հյուսիս, դեպի Վեդիի հովիտը նայող սարալանջի վերա, գտնվում է մի մատուռ, Աղքիլիսա կոչված։ Մատուռը շինված է «ի թվ. ՉՈԵ» Ռուբեն, Խաչատուր և Եղիա եղբայրների

---

211 *Բուն խաչը 1,96×1,28 մետր,—առաջին պատվանդանը 0,77×1,71 մետր լայնքը, դուրս ընկած 0,18 մետր. երկրորդ պատվանդանը գարնեղից մինչև երրորդ պատվանդանը 1,9 մետր։*

կողմից. արևմտյան պատի մեջ՝ դռան կողքին՝ հագցրած է մի խաչքար, որ Խաչատուր եղբայրը կանգնել է յուր ավագ եղբոր հիշատակին.

«Ի թ. ՉԽԲ. Ես (Խաչատուր) կանխնկի
զխաչս ի բա/բէխաւսութի Ք(ր)ստոսնին/
եւ մեղ եւ ծնողաց մեր»։

Խաչի ճակատին էլ կա հետևյալ արձանագրությունը.

«+ Մ(ե)նան ‖ տրունական Ք(ր)ստէնին լեր
բար(է)խ(ա)ւս ի յահեղ աւուր դատաստանին»։

Այս վերջին արձանագրության երկու տողի մեջ, ուղիղ խաչի ճակատը կիսորոնում փորագրված է հետևյալ խմբանկարը. Աստվածածին Հիսուս գըրկին երկու կողմից մի-մի հրեշտակ, երկար զգեստ և գոտեկապ. պատկերներից վերև «Դաթ». «Յս Քս». «Միքայէլ» գրված. խաչի վերին անկյուններում դարձյալ մի-մի հրեշտակ, որոնց միևերից վեր մարդկային գլխով մի-մի գլուխ «արեգ» և «լուս» գրված։

Այս նկարագրություններից պարզ է, որ այստեղ ևս խաչելության և նորա հետ կապված փրկության գաղափարն է ներկայացված, թեև խաչելյալի փոխարեն մանուկ Հիսուսն է մոր գրկում։

Ամենափրկիչ խաչքարերի կամ խաչից իջեցնելու պատկերագրություններ պեսպիսությունները, բնականաբար, երևան են գալիս և հայ մանրանկարչության մեջ, բայց մեր նպատակից դուրս է այս հարցին հետևել յուր բոլոր բովանդակությամբ, իբրև օրինակ միայն բերենք Թորոս Ռոսլինից և Սարգիս Պիծակից մի երկու մանրանկար։ Առաջին երկուսը Ռոսլինի գործերն են (պատկ. 45 և 46), (պատկ. գուն. III), մեկը Սեբաստիայի ավետարանից և մյուսը Երուսաղեմի № 1956, որոնք բոլորովին տարբեր ձևակերպություն ունին, քան մեր խաչքարերի պատկերագրությունը։ Համեմատաբար նման մասեր ունի Սարգիս Պիծակի պատկերը, թեև ամբողջությունը նույնպես տարբեր (պատկ. 47), (պատկ. գուն. IV)։ Սարգիս Պիծակի մանրանկարի մեջ տեսնում ենք կրկնապատ նույն խաչափայտը արիգակի և լուսնի պատկերներով։ Հովսեփը բարձրացած սանդուղի վերա՝ գրկել է մարմինը աջով, և ձախ ձեռքին ունելիքով կամենում է ազատել խաչեցյալի ձախ ձեռքը. Մարիամը համբուրում է որդու աջ ձեռքը, որ պոկված է արդեն, նման Ամենափրկիչների պատկերագրության։ Խաչեցյալի ձախ կողմից, ուր սովորաբար Հովհաննեսն է կանգնած, ծունկ է չոքած Մարիամ Թագուհին, ձեռքերն աղոթավորի նման մեկնած, գլխի մոտ մակագրված է. «Մարիամ թ(ագուհի) /հայ/ոց»։ Իբրև մոտիվ նոր է խաչափայտի հորիզոնական թևերի վերա արմավենիկների տեսնելը, որ խաչի բերած անմահության կամ փրկության գաղափարն է մատնանշում, ապա գա-

գաղը, ուր պիտի ամփոփեր Հովսեփ Հիսուսի մարմինը: Վերին շրջանակի վերա գրված է. «Ի խաչէն ի վայր առնուլն լքա», իսկ ներքևում «Սարդիս նըւաստ քահանայիս»[212]:

Նույն նյութի հետ կապված մի վերջին հուշարձան էլ ունինք ժէ դարից Սևանի վանքում, ուր բերված է վաքսուն տարի առաջ Աֆանդու նախկին թուրքարնակ, այժմ Նորաշեն կոչված՝ գյուղից, որ գտնվում է լճի հարավային ափին՝ դեպի Բայազիտ տանող ճանապարհի վերա: Խաչի կազմողն է, այսինքն արվեստավորը, Տրդատ՝ Հայրապետ արհեպիսկոպոսի բարեխոսությամբ հա-մար, 1653 թվին, ճախատի արձանագրության համեմատ (պատկ. 48)[213]:

\+ Սբ խչս բարէխաւս Հյրապէտ արհէպիս

\+ ին + յիշեց զքս, թվ ռՃբ Տրդատ (si) կզմղ

Խաչարձանի կիտրոնում խաչելությունն է. Հիսուս խաչված է մի զարդագրուն խաչի վերա, ուղիղ կանգնած, ծնկներից էլ ցած հասնող, քղանցքները զարդարուն՝ կողքերում հագած, կրունկներն իրար կողքի և ոտների ծայրերն հակառակ ուղղությամբ: Քրիստոսի գլխի մազերը երկու ոլորուն և երկար կախվիկներով իջնում են ուսերից էլ շատ ցած. անդամները ոչ մի կարկամունք կամ ցավի արտահայտություն, որ ենթադրել է տալիս, թե առնված է մի նախնական օրինակից: Խաչեցյալի երկու կողմից ծունկ են չոքած, գլուխներն ու դեմքերը վեր բարձրացրած՝ աղաչավորի դիրքով՝ երկու ֆիգուր, որ անշուշտ Հովսեփ և Նիկոդիմոսն են, և ոչ երկու կանայք, ինչպես նկարագրել էր մեզ հանդուցյալ Գյուտ եպիսկոպոսը:

---

212 Առնված է Նրուսաղեմի Հայոց № 1973 ավետարանից, 258բ: Ավետարանը գրել է Ներսես գրիչը 1346 թվին Սիս մայրաքաղաքում և նվիրել Մարիամ թագուհուն, որ Օշին պայլի, Կոռիկոսի տիրոջ, դուստրն էր յուր Հոհաննա երկրորդ կնոջից, «որ յառաջ թագուհի էր Աւշին թագաւորին» սուն ավետարանի հիշատակարանի համեմատ (տե՛ս և Սամ. Անեցու ժամանակագրութիւն, 1893, շար., եր. 157) և Կոստանդին թագավորի (1344—1363) կինը: Կոստանդին թագավորի մայրն էլ, Պաղտին մարաջախտի կինը, կոչվում էր Մարիամ (համ. Ալիշան, Սիսուան, 243, 544):

Մարիամ թագուհու և այս մանրանկարի գունազարդ արտանկարությունը՝ նկարիչ Եղիշե Թադեոսյանի ձեռքով կատարված, պիտի հրատարակենք մեր մանրանկարչական աշխատության մեջ, ուստի այստեղ մանրամասն նկարագրության չենք տալիս (ձեռագիրը պահպանվում է Անթիլիասում: Ամփոփ է—կազմող):

213 Մեր ձեռքի տակ եղած պատկերը թիչ ադուռ լինելով՝ այս լուսանկարն էլ ստացել ենք ուսուցչապետ և Լենինգրադի էրմիտաժի արևելյան բաժնի վարիչ Հովսեփ Օրբելուց, որին և հայտնում ենք շնորհակալություն:

Խաչի բարձրությունը է 2½ արշին, իսկ լայնությունը 1 արշին, որ մեր խնդրքով համառոտ նկարագրել և հաղորդել էր Գյուտ եպիսկոպոսս:

խաչելության տակ ավերումն ժժոխոց. Հիսուս զարձյալ երկար կավիկնեբով, սրածայր մորուքով, զոտևկապ երկար պարեգոտով, ոտքերի տակ «դրունք ժժոխոց», աջով բռնել է Ադամի ձեռքը. վերջինս էլ յուր հերթին բռնել է Եվայի ձեռքը: Հիսուս ձախով խաչագլուխ զավազան ունի, ներքևի ծայրը նիզակաձև, որ խրել է զալարված վիշապի բերանը. նման մի վիշապ էլ աջ կողմից: Ավելի բարձր՝ Հիսուսի աջ կողմից խաղողի ողկույզներով կենաց ծառն է և զորանից էլ բարձր արձանագրության տակ՝ Ամենակալն է, նստած չորեքկերպյան աթոռի վերա, որի նշանակների զասակորության մեջ ամենատարաննների կարգով չէ, այլ վերին շարքում մարդ և արծիվ, ներքևում առյուծ և եղ: Ամենակալը զուտ արևելյան զգեստավորությամբ, այսինքն երկար պարեգոտի վերա հագել է աքա. գլխի մազերը երկար կավիկնեբով իջնում են ուսերից կրծքի վերա, ինչ սրածայր մորուքով, աջով խաչակնքում է, ձախ կրծքին դրել: Նորա տակ մի քառանկյունու մեջ Աստվածածինն է, Հիսուս մանկանը խանձարուրքի մեջ պատած՝ գրկել է ոչ սովորական ձևով, այլ կիսահորիզոնական ուղղությամբ, որի նման մի օրինակ էլ ունինք Հաղբատում, Սմբատի որդի Քրդի հիշատակին, եղբայր տեառն Բարսղի, Սմբատ և Ուքան որդիների կողմից ՈԿԲ=1200 թվին կանգնած խաչքարի վերա: Նորա տակ եղած առանձին քառանկյունու մեջ երկու կենդանիների՝ եղ և էշ՝ պատկերագրությունն է, հաստատ ապացույց, որ Տըրդատը կամեցել է ծննդյան տեսարանը ներկայացնել:

Սրանից էլ ցած երեք թագազարդ ֆիգուրներ կանգնած են իրար կողքի, ձեռքերն ապրեզների ձևով բռնած, ափերը դեպի դուրս, որ մինչև այժմ էլ մնացել է Հայոց եկեղեցու մեջ նորընծա ձեռնադրվողների համար, երբ բեմի վերա ծունկ չոքած, երեսները դարձնում են դեպի ժողովուրդը: Առաջին միտքը, որ ծագել կարող է, նրանց նույնացումն է մոգերի հետ, բայց դրանք արքաների դասն են վերջին դատաստանի տեսարանի հետ կապված, իբրև խաչարձանի ձախ կողմի պատկերագրության մաս, ապա թե ոչ նրանց բերած ընծաները մատնանշած կլինեին արվեստագետը: Հիրավի հակադիր կողմից՝ վերից վար վերջին դատաստանն է պատկերավորած. ամենից բարձր Հիսուսի գլուխն է, աջից և ձախից արեգակն ու լուսինը, իսկ սրանց տակը չորս հրեշտակներ, փողերը բերաններին: Ապա սրանց տակը քառանկյունու մեջ՝ մեղքի և արդարության կշիռքն է. սատանաներից մեկը մեջքով բարձրացնում է մի թաթը, իսկ մյուսը փայտով ցած քաշում, որպեսզի մեղքն ավելի ծանրանա. մի մոտիվ, որ հաճախ կրկնված է հայ մանրանկարչության մեջ: Երրորդ քառանկյունու մեջ մեղավորների դասն է պատկերավորած երեք ֆիգուրներով, ինչպես հանդիպակաց կողմը պատկված կամ թագազարդ արդարները տեսանք:

Այսպես բարդ է Սևանի խաչարձանի պատկերագրությունը, բայց ըստ էության նույն է Ամենափրկիչների զաղափարի հետ, և հատկապես մոտ Աշտարակի՝ Թումաս քահանայի կանգնած խաչարձանին, միայն այնտեղ միայն



Խաչից իջեցում: Նկարիչ Թորոս Ռոսլին: Ավետարան, 1265 թ.:
Երուսաղեմ, Ս. Հակոբյանց վանքի մատենադարան,
ձեռ. № 1956, թերթ 171ա:

արձանագրությամբ էր արտահայտված, այսօրով պատկերներով։ Ուշադրության արժանի է կենաց ծառի պատկերագրությունը իբրև նշանակ դրախտի, մեղքից աղատ կյանքի կամ փրկության, դիպի ուր տանում է նախագծնողներին խաչեցյալը, ավերելով դժոխքը և հանելով նրանց վիշապի կամ սատանայի գերությունից։ Հիսուսի պատկերագրությունն էլ չին-մանդղլական դրոշմ է կրում յուր երկար ծամերով, սրածայր մորուքով և դեմքով. մի հանգամանք, որ նախնական օրինակի ծագումը մինչև ԺԴ—ԺԴ դար է տանում, թեպետ խաչեցյալի կանգնած, խաղաղ դիրքը շատ ավելի հնագույն ավանդության պահպանությամբ։

ՀԱՎԵԼՎԱԾ

I

Ձեռ. Լշմ. № 469/427 296ա

ԳԱՆՁ ԱՄԵՆԱՓՐԿՉԻՆ Ի ՏՐ ՄԱՆՈՒԷԼ ՔՋՆ.

Ա՛հա զարուքի մեծի նըշանին մեր փրկագործին
Ամենափրկչին սբ կերպարանին, ճոխ ճոխ քանդակին
Ահել տեսակին, որ զմանուքի ի խաչ բարձողին. բիրէ ի լանձին,
Տարածմամբ բղկին, խոնարհմամբ գլխոյն. խրփմամբ աչերին։
Յաջ կողմն Յովսեփին, ձախ Նիկոդիմին, իջուցողք մարմնին։
Աջ հաւր եւ հոգին, վերուստ նրևին, գրոշմամբ ահագին։
Զոր հայցմամբ կուսին, կոփեալ գրոշմեցին. ձեռք սըրբազանին։
Սբ աշակերտին Որոտման որդին՝ լանջոք փարողին։
Յաղագս ծնողին, կարաւտեալ սըրտին, զորդին ի խաչին։
Ձեռամբ սիրելոյն՝ այս հրաշագործին՝ յորդւոյ միածնին։
Որպէս ի նախկին, ձեռըն Մովսեսին տախտակ կըտակին։
Ահա ուշեալ Ամենափրկիչ յուսացելոցս ի քով կեցուցիչ։ Ազ.

Աւրդ մեկնաբանեալ, տամ ձեզ ճանաչել գլխոյն այս հրաշացեալ։
Յաւուրն այն վրիժեալ, որ զորն ըմբռնեալ, ի խաչ բեւեռեալ։
Աշակերտին ընտրեալ, լըրմամբ ահի լեալ, բոլոր փախուցեալ։
Յոհաննես ընտրեալ, բազմաց ծանուցի լեալ, նա ոչ երկուցեալ։
Այլ անդրէն մնացեալ եւ սպասօրեալ կուսին սըրբասնեալ։
296բ *Իսկ կոյսն սըրտմեալ / հրէիցն յահի լեալ, ի թաքուստ կացեալ։*
Սըրտիւ փափաքեալ, լերդիւ ցամաքեալ՝ զորդին կարօտեալ։

Յոհաննէս երթեալ, զկիպարին առեալ՝ ի խաչէն մնացեալ։
Հրաշալի կոփեալ, զէմ խաչին կացեալ, արտասւօք հայցեալ։

Տուր ար ընծաեալ՝ մաւր քո կարաւտեալ զտիպ ածագրեալ։

Տր հրաշագործեալ, կոյսն յորժամ տեսեալ, յոյժ խանդագաստեալ։
Եւ զբրկապատեալ, զերեսօքն ածեալ, արտասւօք թացեալ։
Եւ զայս ասացեալ. սա է ստուգագրեալ, որդին իմ խաչեալ։
Փրկիչ անւանեալ. Ահա ասկնեա։

Նոր նորոգողին, նորակերտողին նոր կերպ ահագին։
Ով տախտակ բանին, և տիպ արարչին, հիւսմամբ սբ խաչին։
Նըման ըստաւաջին տախտակից կտակին, որ ի Սինահին,
Յայն օրէնս հին, դու ի նորըս կրկին մնդ պատւաստուիլ (տ!)։
Զքեզ նորոցս լեառն, ձեռն աշակերտին ի Դողգոթային.
Զայն ձեռք Մովսեսին կոփեալ զործնդին զքեզ բաներգեսին։
Զայն ի զուարճութիւ Մարիամ նախկին, քեռ Ահարոնին։
Իսկ դու բերկրութիւ փափաքեալ սըրտին Մարիամ կուսին։
Որպէս տիպ վերջին կուսական ծնողին ի յօր վախճանին։
Զոր հայցմամբ զընդին, զրոշմեաց զկիպարին՝ մածմամբ յերեսին։

Այն ի բերկրութիւ սբ մեռաւանին, որպէս դու կուսին.
Զայն հարդուդիմին, բերեալ հակապին (տ!) զքեզ Մագիսարոսին։
Այն կայ պահեստին Որշտունեաց լերկրին, ի Հոգեց վանին։
Իսկ դու յայտնագոյն յԱյրարատ երկրին՝ ի Հայու քաո սբ ուխտին։

297ա Վասն այս ըստ կարգի կարճառոտ // պատմի սակս այս պատճառի.
Թէ ուր եւ ուստի ևկն յայսըմ տեղի փրկչիս աշխարհի,

Զոր յետ քի՝ տիպս այս նաղելի ի Հռոմ վերածի։
Իսկ Մագիսարոսի, Գրիգր հայկազնի, յետ ժամանակի։
Շինէ տեղ ուխտի, յիւրում կայանի ի տարուն երկրի։
Ի ամանէ որդի վահրամ պատանի ի Հռոմ յուղարկի։
Խընդրել փափաքի զտիպս այս հրաշալի տալ իւր նահանգի։
Իսկ սորին որդի յոյժ վերապատուի ի գահըն Հռոմի։
Եւ տալեալ զխընդրելի զգանձն անթաքնելի առանց պատճառի։
Առեալ գայ անտի՝ զտիպս այս տեառնալի, սըրտիւ բերկրալի։
Իսկ Մագիսարոսի մնծօ հանդիսի՝ ընդ յառաջ շարժի։
Ի ծունկս անկանի՝ զրոշմին քի յորդ արտասուելի։
Բարձեալ ի յուսի բերեալ դնէ յուխտի, յաբկ իւր կայանի։
Իսկ յետ այս բանի, յետ ժամանակի աւուրք անցանին։

վասիլ արքայ՝ Դիոդէ իշխանի, ոստ Բագրատունի։
Փոխելով անտի բերին հրաշալի տունս Աշրարպին։
Յիւր հիմնարկելի ուխտըն հրաշալի՝ որ Հայոց Թառի։ Ահա։

Իսկ Մագիստրոսին յորժամ եղ հարկին զտիպն ածային։
Արար խրախուճի տանեախմբութի վեսիին աւր միասին։
Եւ ի գիմս գրոշմին եւ յեկեղեցին երգեաց զուարճութի։
Զերգըս շարականին։ Զորս ըստ պատկերին, որք ի կարգ հաշին։
Գու որ միածին զտիպ քո բերկրածին. տաճար քո կազմին։
Զնորոգեալ անձին տաճարս այս լիցին քեզ ի բնակութի։
Եւ կեցո զորդին, քում որ ծառային, զտիպս քո բերողին։
Զպատուական ի Հոոմին անդ ուր կա շիրիմ հօատոյ վիմին։
Որ զկենդանագրին զտիպդ ածաին կերպին ծառային։
Շնորհեցեր կերկին գրոշմամբ ի փայտին մեզ (մեզ) յաւատուճի,
Որ երեր յանձին զբարձօղ իւր բնօին զկերպ եւ զնմանութի։
Ի փառս վերին, հաւր քո եւ հոգւոյն սուրբ երրեակ անձին։ Ահա։

Երգեա վեհագոյն, երգեա գերագոյն, խորան բարձրագոյն,
Դուսոր դու վերնոյն, նոր սիոն անուն, զշխոյ բարձրելոյն։
Ով այ տուն, կանկնեալդ ի վերջնոյն, գեր քան զառաջնոյն
Շինեալդ ի սըրբոյն Մագիստրոս անուն, ազգս պահլաւուն։
Քանզի շնորհատուն եւ քեզ գախսն զտիպն իւր հոմանուն։
Զաւծեալն ի հոգւոյն ըզսիրելիշ անուն կոչմամբ սիրուհոյն։
Զայն որ խաչելոյն շնորհեալ սըրբոհոյն զրոշմամբ սիրելոյն։
Յրդեհումն մարմնոյն, բերկրութըն հոգւոյն, մաւր տըրամեցելոյն։
Եւ մեզ փառատուն չախտից եւ փըրկումն ի չար չամպրոպոյն։
Արդ տանեա զտան զրոշմիս գերագոյն, մայր լուսո սիոն։
Գոչեա բարձրագոյն, կոչեա միաբուն զազգս հայկազուն։
Զհովիւ քո արիուն, զպետ քո եւ զրաբուն մանկամբ քո սպասուն։
Սոքօք միաբուն, մաղթեա խաչելոյս վս մեծ յուսոյն։
Զի յօւրն յեսեւում առնէ արժանաւն զմեզ խաչի լուսոյն։ Ահա։

Լըրմամբ բախանայ, լուսով զուարճանայ լեառըն Քօշանայ։
Ի տան այսմաւրեա առ//աւել ցընծայ նըման Վարագայ։
Քանզի է ի նմա տեղին գերագայ, ուր փըրկչին կայ։
Մեզ տուեալն ընծա յարքայէն Վասլայ եւ Գոդէ իշխանայ։
Յեհեմա արեգակնանա յարեւելըս գայ յերկիր Արամայ,

Գաւառ Դեղամայ, տունս Արարատայ, յաթոռ Տրդատայ
Եւ մեր Պարթեւայ որդոյն Անակայ ի դիր Մեսրոպայ
Ի տեղ Սահակայ Թարգմանչացն ի սմայ բնակի բզմամեայ
Ի քով Քաւշանայ բլրին Քարսաղեայ։
Իսկ ի գալ սորա յուխտըն վերակայ, անդ ուր այժմ կայ
Զայնք ելին ի նմա, թէ աստ հաճեցայ որում բնակիլս։ Ահա...

Հընչես հրաշարան հընչմամբ մեծածայն, լեառն արքայ Քոշան
Իբրը լիբանան կամ Սինէական եւ պիտաւրական։
Իբրև զպատանման կամ զտորոսական պլեատըն արհիական։
Իբրև զկովկասան զՈլոմպիաթան լերամբք մեսսասան։
Զի ի քեզ եդան յարկ և կայարան ուխտից մաքրական
Զմեծըդ մենաստան, զոր կանգնեաց արքայն և Դէտրդ իշխան.
Եւ զտիպ տիրական կանգնեցին արձան յայդմ յարկ և խորան։
Յընծա հրաշարան, ով համալսարան, ուխտ հրաշակ անուան։
Սբըդ մենաստան Հայու թառ անուան, թառ թարգմանութեն։
Յընծայ մաքրական, մեղաց քօսարան սբրբոց բնաբան.
Դիր նախադրական տեղի սբրբութեն եւ մաքուր կայան։
Յընծա միաբան բազմահոգի խորան զըմբեթչարին երկայն։
Զի քեզ եդեալ կան զրոշմ իշխանական, տիպ արքայական
Յընծայ միա/բան ուխտիւք սբրբազան մանկամբ քո ախան։
Սոքօք միաբան մաղթեա մաքրական զրոշմիտ տիրական.
Զի յօտր լըրման յորժամ գայ փայլման լուսով գերազանց
Զմեզ առնէ արժան։ յիշեա։ եւ եւս. զանձն։

(Ա)*մանափըրկիչ դիւաց հալածիչ, այսոցս պատժիչ*
Ամենափրկիչ լեգէոն զընդին խսպառ սատակիչ
Ամենափրկիչ բէլիար բամից ընկճիչ եւ բեկիչ։
Ամենափրկիչ Սադելի սաքրիչ, սատանի սուգիչ.
Ամենափրկիչ բեհաթին բեկիչ, չարին կործանիչ։
Ամենափրկիչ յօերժահասիչ, սաստիչ սատանիչ
Ամենափրկիչ հիւանդաց բուժիչ, ախտից փարատիչ։
Ամենափրկիչ սըկարաց զաւրիչ, ակնելոց կանկնիչ.
Ամենափրկիչ գերեաց ազատիչ, կապելոց լուծիչ
Ամենափրկիչ, հնձելոց վարիչ, կարողացուցիչ
Ամենափրկիչ պրսակ արքայից, պատիւ բարձունից.
Ամենափրկիչ, փառք քահանայից քոց պաշտաւնէից.
Ամենափրկիչ, պարծանք հալկաղնից, տուն քրիստոնէից.
Մեղաց մեր քօիչ, աշխարհի փըրկիչ, կենաց պարգեւիչ։ Ողորմեաց։

Ձեռ. էջմ. № 1124/2838

Դուխասի վերջում, գրչի ձեռքով.

Ձգրիպոր գրիչ անարժան ծառայս այ յիշեսջիք աղաչեմ։
Հովհաննու վերջում.

Փառք ամենայնսուրբ երրորդութիեանն հայր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ այժմ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն։

Ի թուականութիեանս հայւոց ՉԽԹ[1] ի թագաւորութիեանն բարեպաշտ եւ ածասէր թագաւորին հայւոց Հեթմոյ՝ մեծի եւ յաղթողի։ եւ ի կաթողիկոսութիե հայւոց տն Գրիգորի։ եւ յաշխարհակալութիե Զաքարիայի որդոյ նորին եւ ի տերութիեան մերոյ սուրբ ուխտիս Հայւոց թառայ պարոն Բիւրութայինն եւ Խոյանձայինն...[2] ի գառն աւ յանբարի ժամանակի աւարտեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ Գրիգորոյ նուաստ եւ փցուն գրչի, յոգնամեղ եւ փանաքի եղբարս. ի սբ եւ ի հոչակաւոր եւ յածաբնակ ուխտիս, Հայւոց թառ յորջորջելոյ՝ ընդ հովանեաւ կաթողիկէ եկեղեցոյ սբ Սիոնի եւ ածընկալ սբ Ամենայփրկչիս ի ձեռն սորա բազ(ու) մ սքանչելիք եւ պէս պէս բժշկու(թիւ)նք կատարին։

Արդ աղաչեմ զամենեսեան որք աւգտիք ի սմանէ, ընդաւրինակելով եւ կամ ընթերցմամբ վայելելով, յիշեսջիք առաջի աստուծոյն վաս մեր ամենամաքուր գառինն քի զատացող պատառամասս տն գՔուռդն եւ զամուսին իւր զԱպերն եւ զծնօղս նոցայ զՄեհեաան եւ զՏատիկին եւ զայլսն ամենայն[3] որ առացան զսա իւր յիշատակ եւ ծ(նո)ղաց իւրոց, որպէս զի յոյսն մեր քս շն(որ) հնսցէ թողու-թի յանցանաց նոցա։

Վասն որոյ ես մեղաւոր Գրիգոր գրիչ աղաչեմ յիշել ի քս եւ դիս եւ զծնաւղսքն իմ։ զԱբբահամ ուսուցիչն իմ եւ զմխիթարիչ հայր իմ. եւ զմամախաթուն մայր իմ եւ զեղբարս, զի բաղում աշխատանաւք եւ ահիւ գրեցի զսա. եւ արարէք ողորմութի առ իմս աղբատու(թ)իւն եւ հայցեմք ի քէ ով դասք լուսերամիկ մեղուցելոյս թողութի գտանիլ յաւուրն մեծի եւ իմոց ծնողացն որք ըստ մարմնոյ եւ ըստ հոգւոյ եւ ած որ առ(ատ) է ի պարգեւս ձիրս եւ անթերի եւ անկարատ

---

1 Վերջին երկու տառերը՝ ԽԹ փչացած, եւ երկար գիծն է երևում և Ը-ի պոչը։

2 Բայ մի տող չափ։

3 Ընդգծվածը տարբեր թանաքով, բայց անկասկած նույն Գրիգոր գրչի ձեռքով գրվածք փակագծի մեջ առնվածները փչացած են, մենք ենք լրացնում։

յամենայնի, ասացէ մասն բարի ամենեցուն յանբաւ եւ յանհնաւի մեծութիւն գանձուց ողորմութեանն իւրոյ, յիշողացդ եւ յիշեցուիցս. եւ ինքն եղիցի աւրհնեալ յաւիտեանս յաւիտենից ամէն ամէն:

Ի վերայ ամենայնի փոխատուն բարեաց(ց յ)ս ասացէ վարձս բարեաց դեռաբոյս քահանայի եւ մեր սիրելի հոգեւոր եղբարս Մխիթարայ, որ ասպնական եղեւ ի գործ սբ աւետարանիս:

3

Գանձակի շրջանի Բանանց գլուղի «Պապ» կամ «Ծեր» ավետարան

Ած ողորմի կազմողի սորայ Գևրգայ եւ իւր ծնողաց ամէն: Թվականութիւս հայոց ՉԽԹ: Զպատահական (si) քահանէ ղԱմենասադ որ հալալ վաստակով իւրոց քսասգաւ սայ յիշատակ իւր եւ ծնողաց որք կարդէք (si) ասացէք ած ողորմայ իւր եւ ծնողի իւրոց ամէն:

Հովհաննու վերջում՝ կցված նորոգված երկու թերթին. նորոգությամբ և ձիշատակարանի գիրը նույն.

Ես անարժան և մեղու(ց)եալ սուտանուն կոչեցեալ Ամենասադ հա(լ)ալ արդանց իմոց գնի(ց)ի զսբ աւետարանս ի գաւա(ռ)էն Գառնու ի Վանացն Հաւուց Թառու ի բարեխաւսութիւն ինձ եւ ծնողաց հաւր իմոց Խասիլայ[4] եւ մաւր իմուշ (մի տառ) այ[5] եւ ամուսնու իմ...(նէ?) այի[6] արդ աղաչեմ զա(մ)էն վանս սիրոյն քի որ (կա?)րդէք յաղաւթս իշէ.

4

Սաղմոսարան, մոռացել եմ նշանակել Ձեռագրի №-ը. գուցե և մասնավոր սեփականություն:

62բ . . . գրեցաւ աղաւթամատոյցս այս ձեռամ(բ Գր) իգորոյ: ի թվ Չնէ (ի) մեծ մենաստանիս Հայոց Թառ ընդ հովանաւ(ւ ս)բ (Ա)մենափրկչիս:

---

4 Ընդծվածը կասկածելի. պետք է կարդալ «իմ Մուխթարայ» մեն չի կրկնել զրիչն այդ դեպքում, որ պատահում է հաճախ, մանավանդ ազգանվանդությունների մեջ. կամ «իմոս Խաչայ»:

5 Գիծը նշան է, թե մի տառ պակաս է. պետք է կարդալ «իմ Մուշու-(շ?)այ», բայց ավելի հավանական է «իմոս Շաշայ»:

6 Փակագծինը մենք ենք ավելացրել, միացած է երկու բառի տեղ:

(Ի) խնդրոյ սրբասնոյն(դ) կուսակրաւն քահանայի Սարգիս անուն (ի մեծ) ծաղկ(ա)կ սբ ուխտէն Այրիվանից(ից) որ ստացաւ զսա չ(իշա)տակ իւրն եւ աշակեր(տաց ի)րոյ Վարդին եւ Գորգա... (մեկ կամ երկու տառ փճացած) ազգայնոցն եւ ծնաւղ(աց) իւրոց.

Արդ աղաչեմ (դ)ամենեսեան սիրով հոգոյ: (յիշես)ջիք ի քս... աջ...ն (զառաջ ասացիաւսն?) զՍարգիս եւ զՎա(րդ) եւ այլ ազգայինն եւ զմեղաւոր զրիչ եւ զամ սնուցիչ... (մեկուկես տող) զի իմ բազում յուսով ապաւինեալ առ փրկիչն ամենեցուն քս, զի աղաւթիւք ձերովք ողորմեսցի ասա գրելոցս եւ ձեզ որ յիշէքդ և նմա փառք յաւիտենս:

Զհոգիսդ եղբայր մեր զը : Մխիթար նորընծա քահանա յիշեսջիք աղաւթից մասամբն. աղաչեմ:

5

Ձեռ. էջմ. № 1133/4435

Հովհաննու վերջում.

Շնորհիւ ամն սկսաւ եւ ողորմութիւք նորին կատարեցաւ ածաբուխս աւետարանս ի փառս սբ երրորդութեն հաւր եւ որդւոյ եւ սբ հոգւոյն այժմ եւ միշտ եւ յաւիտ.

Յամենայն զգալեացս որք միանգամ ի գերագոյնէն եւ սկզբնապետագոյն պատճառէն բաղկացան, հիասքանչ եւ զարմանալի արարչակերտութիւք միայն բարգաւաճեալ ճոխութիւք պանծալի երեւեցաւ մարդկայինս սեռ շքեղացեալ բանական շնորհիւ եւ պատկերաւ զարգարեալ սկզբնաւորին: եւ արդ քանզի վրիպեցաւ սա պատուիրալանցութենէն ի փառաց պատուոյն, զոր ընկալաւ իսկ զբանն եւ ոչ ուսուեք գտեալ աւգնականութիւն մինչեւ գալ փրկչին եւ զմերս զգենլով զամ բաց ի մեղաց եւ չարչարանօք խաչին զարձոյց վերստին յառաջին պատիւն եւ ի փառսն: Եւ աւետարանական ընդելութիւն արար զճանապարհ մերոյն փրկութեն ասելով, թէ ես եմ ճանապարհն եւ ճշմարտութիւն եւ կեանք. եւ թէ ոչ ոք գայ առ հայր, եթէ ոչ ինեւ: Ե՛ւ սա է ճշմարիտ բան այ եւ աւետաւոր անվախճան կենացն եւ գուսն մտից և ելից արքայութեն երկնից եւ ճարակ իսկ:

Արդ ակնջալուր եղեալ աւետարանական հրամանին որ ասէ. գանձեցէք ձեզ գանձ յերկինս, ուր ոչ գող մերձենայ եւ ոչ ցեց ապականէ, երիցս երանեալ երջանիկս այս երրակի մասամբ առաքինութիւն հոգւոյ բարգաւաճեալ հոգւով, ի տիս համբակաց մաքուր կուսութիւք սնեալ սբբասէր քահանայս Մատթէոս, յԱրարատեան գաւառէ, սնընդեամբ ի բարձրադիտակ, յականաւոր եւ ի գերա-

հոչակ որ ուխտէն Հայոց թագուոյ։ Ան որ մեծաւ փափագմամբ ցանկացող եղեալ այսմ աճաշունչ կտակի եւ աւետարանի ան մերոյ յի քե։ Յուսալով ի բան մարգարէին որ ասէ, երանի որ ունիցի զաւակ ի սիոն և ընդանեաց ի վերինն Եմ։ Եւ սոացաւ զսա ի յիշատակ հոգւոյ իւրոյ եւ ծնաւղաց իւրոց.— Եաւսեւ իւրոյ խաղաղութիւն եւ փոխեցելոյն ի Էս քս... տի երբաւ իւրոյ Մելիխնեկի՞.— զանձ անխորտակելի պաշար եւ առաչնորդ երկնաշուռ Հանապարհին եւ փոնջ մի անուշահոտ բազմերանկի ծաղկանց՝ առ ի չրեծայս ամենասք երթողսլիին հաւր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ։

Արդ եղև զրաւ գրչութիւն սորա ի շրջագայութիւն հայկազեան տումարի. Պետ. թուի չամի որում եղեւ սատիկ մահ տարաժամ առ ի խրատ մեզոց մերոց, ի թագաւորն վրաց Ալէքսանդրեա, եւ ի բռնակալութիւն տանս Հայոց թուրքման Սքանդարի, եւ մեզ թզրլոյ քի այ, ի հայրապետութիւն ան Պաւղոսի, յաճապահ զաւառիս Լաւոյ, ի յերկնահանդէս, մեծարգոյ եւ ի գերահռչակ ուխտի Սանահին վերաձայնելոյ։ Ի զրան մաւր լուսոյ սբ Ածածնէս եւ հրաշափառ կաթողիկէ ամենասրիկոյ սբ տաճարիս եւ ածբնկալ սբ նշանացս։ Զհոգւոյ ամենամեղ եւ փշոյն զրչաց Ղազար վրդի, առաչնորդի սբ ուխտիս եւ նորին հարազատի Յովս վարդապետի (տ!) եւ Յոհս աշակերտի։

Վասն որո յիրիս անկեալ ապաշխար դամենսն, որք լուսաւորիք սոսկս, կարդալով կամ զգալափար առնելով, յիշեցեք ի քս զառացալ տաճիս զարժանապատիւ կուսակրօն քՀին զՄարիս հանդերձ ամ արեան մերձաւորաւք։ Եւ զնորաբազբոջ զհղբօրորդի նորին զՈւսեկն, զվաչելող սբ աւետարանիս։ Ընդ նոսին եւ զանբնդակից գրս հոգւոյ հարազատաց նորին զարբասէր քՀյսն զալր տր Յովս եւ զմեծ Յովս եւ զտր Սրգս եւ զԳրգր, եւ զայլ միաբանելսն սիրով ընդ նմա, յիշեցէք ի քս։ Այլ եւ զՔՀին ահւե զիշխանն իշխանաց զալր Զաւակի եւ զտր...[8] եւ զծագիկ զանկ նոցա եղիցի ի յիշատակ մասին ամենայնի։

Դարձեալ ի ծունկս անկեալ աղաչեմք մայրամած զիմօք զրնաւ զասգդ պաշտաւնէից յիշեցեք ի քս զԲարսմատար գրչս զՂզր վրդ, եւ զՅովս վարպետ եւ զտր Գրիգս կազմող եւ զանպիտան յամի զՅոհս, որ յոյժ աշխատեցաք ի գիր եւ ի ծագիկ եւ ի համաբարբառան եւ զծնօղսն մեր ամ արեան մերձաւորօք ասելով ծագիկ եւ ի համաբարբառան եւ զծնօղսն մեր ամ արեան մերձաւորօք ասելով զի խորոց սրտէ, թէ տր ած ողորմ նց։ Այլ եւ սղալանաց եւ խոշրւե գրոցս՝ անմեղ խորոց սրտէ, թէ տր ած ողորմ նց։ Այլ եւ սղալանաց եւ խոշրւե գրոցս՝ անմեղ յուսոյ զդիր լերուք, զի այս էր կար մեր ի ժմ ծիրւե։ Որով յիշողացդ եւ մեզ յուսոյ զացս առ հարկ ողորմեացի քս ած մեր եւ նմա փառք յաւիս ամէն։

---

1 Ընդգծվածը տարբեր և անվարժ գրչով ավելացրած։

8 Մի բառի տեղ բաց է թողված, բայց հետո տարբեր գրչով և թանաքով գրված, որ

Ձեռ. էջմ. № 3759,

Սեանից բերված՝ № 2, Տոնական

վերջում՝ 937. Փառք հզակի... և այլն[9]:

940. Զոր տեսեալ զայսպիսի գանձս ածային եւ պայծառ լուսով լցեալ ածային շնորհաւքն զարդարեալ փրկութիւն կենաց եւ լուսաւորիչ հոգւոց ննջեցելոցս Սրդ այսքան եւ այսու ամիս լցեալ ի բարի յարմատոց յառաջ եկեալ սբ վարդապետն Դանիէլ եկն ի սբ ուխտս Հայոց Քառ եւ միաբան եղեւ սբ Ամենափրկչիս եւ այլ սրբութեցս: Եւ մեծաւ յուսով եւ փափաքմամբ սիրով ձեռն էարկ զսբ եւ երկնանման եւ փառաւոր կաթուղիկէ եկեղեցիս: Եւ վերսոյն կրկին զարդարեաց եւ սյլից և նորոդեաց //

941. Որ եւ տարածեցաւ համբաւ սորայ ընդ ամ ծագս տիեզերաց: Զի սայ է ճանապարհ կենաց եւ դուռ արքայութեն: Սա է քաւիչ մեղաւորաց եւ առողջութի հոգւոց: Սա է ժառանգ արքայութեն, յոյս եւ ապաւէն ամ հաւատացեալ ննջեցելոց: Սա է պարիսպ ամրութեն եւ փրկիչ ամ հաւատացեալ քրիստոնէից: Սրդ եւ ես անարժան եւ սուտ անուն աբեղայ՝ Ստեփաննոս, որ ի վաղ ժամանակաց կայր բնական զուի եւ սէր եւ եղբայրութեի որ եւ մի վարպետի աշակերտեալ էինք (si), տղայութենիէ հասակիս (si) եւ պնակիտս: Եւ սա խնդրեաց զսբ տաս եւ զգանձս ածային եւ ես անարժանս հարկեցայ եւ զրեցի զսբ գիրքս՝ զգանձս ածային ես սիրոյ նորս. տիար անձամբ իմով ի դառն եւ ի խաւար ժամանակի, որ ի մեղացն եկն ի վերայ մեր ի յանաւրինաց եւ յայլակրաւնից (նոռոգած շեղագրով) եւ ի չար բռնաւորաց, ի խոնութեն Ջահանշահին եւ որդւոյ Ուսուֆին, որ մեռաւ ի խորասան եւ է տարի զաշխարհս սահման եւ երերուն պահեաց ի հարկապահանջութիւն, ի տառապանս եւ ի չարչարանս այնպէս, եւ հայր զորդիս ուրանային: ի հայրապետութե ան Գրիգորի, որ նորոդեաց (si) զսբ էջմիածինն, եւ բազում եւ մեծաւ չանիւ զարդարեաց եւ նորոգեաց եւ հաստատեաց զսբ զեկեղեցիսս քրիստոնէութե եւ պայծառացոյց եւ լուսաւորեաց զսբ զեկեղեցիս. զի սա է մայր ամ եկեղեցեաց եւ գլուխ ութե ուղղափառ հաւատոյ: ի թվիս հայոց ՋԺԹ ի սբ յաթոռս Ամենափրկչիս, ի սբ ուխտս Հայոց Քառս. գրեցաւ զսբ (si) տաս ձեռամբ Ստեփաննոս անարժան աբեղայի ի սէր Դանիէլ վրդպի: Սրդ՝ որք ուշադիր ի սմանէ կարդալով կամ աւրինակելով, չիշեսջիք

---

9 Պատմական բովանդակությունից զուրկ լինելու պատճառով, չենք տալիս այդ մասն այստեղ:

զստացաւղ սորա զվդպն եւ զծնաւղսն իւր, զհայրն՝ որ Կարապետ քհայ եւ զմայրն զՀամաւտր եւ զոր Ներսէս աբեղա, եւ զնղբայրսն զՈհաննէս, զՎրդանէս, զՅուսիկ. եւ զԴրիդորէս եւ զՍահակ, զԴանիէլ եւ զամ արեանառու մերձաւորսն եւ զի զիծուն գրիչս եւ զծնօղս մեր՝ յիշեսջիք ի սբ յաղաւթս ձեր աղաչեմ: /

942. Արդ (յեր)ես անկեալ աղաչեմ սբ բնթերցողք՝ որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով, յիշեսջիք զմեզ ի (քս? — չկա) զվերոյ գրեալս առհասարակ եւ զմիեղէն սբ եղբարքս, զմխաբանքս սբ Ամենափրկչիս զոր Սարգիս փակակալ, զոր Յակոբ, զոր Մաթէոս եւ զսիրասնունդ որդիքս մեր եւ հոգելից աշակերտքս կուսակրաւն սբ քհնայքս զկազմալղ սորա զոր Յակոբ եւ զոր Յոհննէս, որ... (չի կաղդցվում երկու բառ) ունիմք սիրով եւ հնազանդութբ, զոր Անդոն, զոր Աւետիք, զոր Դաւիթ, զոր Ղազար, զոր Ղուկաս, զոր Մանուէլ. զոր Աբրահամ եւ զամ առհասարակ, զմեծ եւ զփոքր եւ զերախտաւոր հայրն իմ զփոխեցեալն առ քս Յվս, որ բազում աշխատութբ զիուխտս (s!) ի(ո)կեաց, վասն յիշելոյ աղաւթից՝ ած ողորմի իւրեն եւ մաւրն իմոյ Էմինին, որ բազում չարչարանաւք, յուսով եւ սիրով եւ անշափ տառապանաւք ծառայեաց ինձ. քս ած միոյն հարիւրապատիկ հաստուցանէ իւրեննն. եւ ընդ կանանցն իւղաբերիցն դասակից եւ պսակից (s!) առնէ եւ ձեզ յիշողացդ եւ մեզ յիշեցելոց ողորմեսցի քս ած: Ամէն եղիցի:

Աղաչեմ զձեզ եղբարք որ անձանձիր եւ անխափան ոյժիւտակս սբ գրոցս կատարէք Շրագալուցին կամ Յովհաննու տաւնին անբիծք. շարական ածանեղ եւ աւետարան կարդան, եւ լի բերանով ած ողորմի ասցէք (si) եւ խնամով պահէք եւ ջուխտ մեզարով, ի ձէթէ եւ ի տինէ (?) պատրաստ պահէ:

7

№ 251 (Կ. 244) ավետարան բոլորագիր, գրիչն է Ստեփանոս մահդասի 94ա

239ա. Զիծուն գրիչս եւ զմեղաւք ծերացեալ մահդասի զստեփնոս յիշման արէք (s!) արժանի:

308ա. Փառք համագոյ անբաժանելի եւ միաբնական սբ երրորդութեն հաւր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն: //

308բ. Որք զմտաց աչս անաղատ եւ վճիտ ունիցի երկնա... (?) գրամամբ (s!) առ էականն լոյս:

Սովորութիւ է Աստծային արանց միշտ եւ հանապազ խոկալ յաստծային պատուիրանս ի տուէ եւ ի պիշերի միշտ վերինն խորհել ուր քո նստի ընդ աջմէ այ եւ բաղում պատճառի բաղումք փափաքին ջեմեռանդ սիրով եւ ըղձալի ցանկութիք արդիւնս եւ գործս կատարել, որպէս եւ հրամայեաց տէրն. զանձեցէք ձեզ գանձ յերկինս որ ոչ ցնդ եւ ոտիչ ապականեն եւ ոչ գողք պան հատանեն և գողանան։

Արդ եղեւ գրաւ գրչութիւն այսմ աստաշունչ աւետարանիս. ի թվ հայոց Ջ եւ Ի եւ ի վշտաշատ ժամանակի, ի խանութիւն ազգիս հասանին եւ ի հայրապետութիւն աստ որ անստակէս կիսոյ // ի սբ յաթոռն էջմիածին ի յերկնահանգէստ եւ ի սբ ուխտս հայոց բան սբ ամենափրկչիս որ է պատկեր ան մերոյ յի քի, որ է օրհնել յաւիտենս յաւիտից ամէն։

8

Ձեռ. էջմ. № 925 (Կատուց № 20). նց.

Փառք համադոյ եւ միասնակ սբ երրորդին անբաժանելիս երրի անձնաւորութեանն եւ միակ բնութեն հայր եւ որդոյ եւ հոգւոյն սրբոյ յաւիտենս յաւիտից ամէն։ Որ եաս հասանել ինձ յանմար եւ սխալագիր գրիչս Գրիգոր անուամբ միայն եւ ձեւով եղակի կրօնաւոր կոչեցոյ յաւարտ տումարին մեհնոնես (Յակոբ Ղրիմեցու) ի յուրթութին ուսումնասիրաց անձանց եւ սիրէ անսխալ գրչութ տոնից սէրունականաց զատիկն եւ զայլսն։

Արդ սկիզբն սբ եղեւ ի յանհոգաշէն եւ աստաքնակ գետնի Քանաքեռ եւ կըտրսւն եղեւ ի մեծ մենաստանիս Հայոց թառա՛, ընդ հովանաւ Ամենափրկչին եւ սբ Աստծնին եւ ի յայլ սրբուեցն, որք աստ կան հաւաքեալ. գրեցաւ գիրքս ի թվկնիս հայոց ՋՂԲ։ Ես սկիզբն գրոյս եղեւ յուլիս բ եւ կատմն ագոստոս լև. յաղագս վայելման անձին իմոյ եւ մերոյ, յետոյ եկելոց։

Արդ գրեցաւ ի հայրապետուն ազգիս Հայոց տր Գրիգորի եւ յամի նպաստուն մեծ նահանգիս Արարատեան տր Ստեփանոսին Սալամասցոյ (տ!), զի է ընդունող շնորհացն գեր ի վերոյ տուողէն անընդմիջաբար եւ բաշխող կարօտելոց անձանց միջնորդութիւ։ Զոր տր աստ պահեսցէ երկար ամաւք մաքուր առաքինութիւ յամ փորձութենէ հարատաւ եղբօրքն իւրովք ամէն։

Եւ ի բռնակալութե թորգոմեան ազգիս եւ գերող ամ քրիստոնէից. եւ ոչ կարեմ պատմել զբազմ չարիքն նր եւ կամ գրով արկանել. զի քան զայն ինչ աւելի չարիք, որ զինքն զաստրդի անուանէ, խուդաւանդ եւ մահթիզոմանն։

Արդ աղաչեմ զձեզ հառաչմամբ սրտիւք, ով մանկունք սք եկեղեցոյ, որք հանդիպիք տումրի մեկունս, ուսանելով եւ կամ ուսուցանելով կամ ընթերնակելով, չիշեցէք զվերոյգրեալդ գԳրիգոր գրոց աշակերտս յետինս ի յաշակերտաց, գհնգգս ի բարին եւ զարիացեալս ի չարն, արժանի առնէք չիշելոյ միով ած ողորմին եւ ած գչիշողդ չիշէ ի բրին ամէն։

Ընդ նմին զհոգեւոր եղբարքն մեր զտր Ածատուրն եւ զտր Վրթանէս որ կմկից եղեն մեզ եւ ցաւակից, յրմմ գրեցաք, զի գրեալ եղիցին սոքա ի գիրն կենաց ամէն։ Եւ այժմ աղաչեմք զձեզ, ով ընթերցողք սք գրոյս, զի անմեղադիր լիջիք խոշորուն գրիս, զի գիրքս կազմած էր, գոր գրեցաք ի թուխին անյարմար, առ տկարունս մերոյ անմեղադիր լերուք. բաւ է. ամենակրողին այ փառք յաւս ամէն. հյր մեր։

9

Ձեռ. էջմ. № 4064

Արդ ես անպիտան Սիմէոնս ցանկայի ի բազում ժամանակաց գրոյս մոլութեն եւ կամէի մատաղ իմով գրել ապղի ուղղեցից զս քերթողութեն արհեստին, քանզի թարգմանիչք սորա ոչ գիտելով զարուեստ քերականութեն ոչ կարացին ուղղակի թարգմանել ոպ յայտ է հրմատացելոցդ որք ընթեռնուք զսա։ Եւ նաեւ գրել ոմանն Յովանիսի գպրի եւ ի մնալն կիսակատար նաեւ աւարտակ թաղթոսի իմոյ աշակերտի սակս ոչ ձեռնհաս լինելոյ ինձ. ի գրաղանացս եւ ի տկարութենէս։ Եթէ կարացից սրբագրելոյ եւ թէ ոչ անմեղադիր լերուք։

Փառք համադոյ միափառ եզուպտիւ նահատեաց տրութեն հօր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ։ Յառաջ քան զամ յաւիտեանս եւ այժմ եւ անդրան յաւիտեանս, ամէն։ Որոյ շնորհիւ եւ օգնականութեբն յանկ ելեալ կատարեցաւ գիրքս որ կոչի մոլութեց. Նաեւ մեկնութի արարածոց վեցօրէիցն արարչութեն այ։ Ալլ եւ գգիրս ճոգւոց եւ հրեշտակաց, ժողովեալ ի մի տուի։ Ի թուականիս հայոց ռ.ղ. եւ է., յապրիլ ամսոյ քան եւ ութ եւ ի մեհեկի քան եւ մէկ։ Ձերկիրս չկայտարատայ։ Ընդ հովանեաւ երկնաշնագէտ գերաշրջակ սրբոյ աթոռոյս էջմիածնիս։ Ի հայրապետութեն ընդհանուր սեռիս հայկազեան տեառն Փիլիպպոսի սրբազան կաթուղիկոսի։ Ի թագաւորութենն պարսից փորր շահ աբասին։ Եւ ի տեղակալութեն նահանգիս գոց խոսրով խանին։ Աշխատասիրութբ նուաստ եւ անարժան Սիմէօնի, զի թէպէտ եմ չաշակերտաց երիցս երաճեալ ճգնազգեաց սրբոյ հայրապետիս սակայն գերանով մեղանացս կուրացեալ վերջացեալ գրոյս ի լուսա-

շաւիղ ընթացիկ սորա նաեւ տրուալ յամենեցունց այսր՛ինքն յաշակերտակցաց իմոց վարդապետաց։ Արդ գրեցաւ մեկնութիւն վեցօրէից արարչութեան պարզ սից մերձ յԱսպատան աթթալեանիստ քաղաքին ի գետլմատաթիճ Նոր Ջուղայ ի մենաստանի Ամենափրկչի վանացն։ Եւ գիրք հոգեացն եւ հրաշատացն ի սբ աթոռոյս էջմիածնիս. ձեռամբ բաղէոսի դպրի իմոյ աշակերտի այսմ գրչութեան արհեստի։ Իսկ մոլութիւնքն գրեցաւ ի յերկրիս Գեղամայ ի գաւառիս Մազաղայ ընդ հովանեաւ վանացս որ կոչի Հայր Յովհաննէս։ Ձեռամբ Յովաննէսի դպրի։ Եւ ես անարժան Սիմէօնս տեսուչ գոլով նահանգիս նոու գրել զգիրս զայս ի վայելումն անձին իմոյ եւ յիշատակ յետ ելից իմոց վայելողացդ։ Արդ որք պատահիցիք այսմ մատենի ընթերցմամբ կամ օրինակելով յիշէցէք ընդ նուաստ Սիմէօնս որ անուամբ եւիք կոչիմ վրդպտ, եւ տեսուչ իսկ գրծով յոյժ տարակացեալ կամ յայսմ շնորհէ։ Գարձեալ աղերսանօք խնդրեմ պատահողացդ յիշել ի սբ յաղօթս ձեր զմեծագոյն վարդապետն Յակոբ եւ Սիմէօն եւ գուսումնակիցս իմ զԱռաքել վրդպտն[10], եւ զմոսէս վարդապետն. զՅովհան եւ զմիքայել եւ զներսէս վրդպտն եւ զայլ ընկերակիցս իմ որ ի գրէն ձանձրոյթի վարկանիմ քանզի շնորհիւ ոտն յոյժ բազումք են։ Նաեւ զգրօղս սորին թաթէոսն եւ զՅովաննէսն, ազաչեմ յիշել ի քս։ Նաեւ մարմնաւոր ծնօղսն իմ զվարդան եւ զթուրվանտէն, որք կարի ծերացեալ են։ Այլ եւ զեղբայրն իմ եւ զաշակերտ զԳալուստն մաղթեմ յիշել ի քս որ տարաժամ հասակի փոխն ցաւ առ սր եւ սուք մեծ եթող ծերացեալ ծնօղացս եւ ինձ իսկ զքէհոլին։ Եւ որք ըզմնոյ յիշեն յիշեալ լիցին ի քէ որ է օրհ յաւիտեանս ամէն։

10

ՍԻՄԵՈՆ ՋՈՒՂԱՑԵՑԻ

Ձեռ. էջմ. № 1881/1742[11] *լ*

Եբ. Ռէն Փառք եւ գոհութիւն անսկզբնական էին եւ բնաւից պատճառին բոլորից հղականաց գոյից և էացուցչին եւ վայելչայարմար ըստ իւրաքանչիւր կարգի եւ տեսակի նախախնամողին եւակի տարորոշեալ եւ յատկացեալ անձանցն եւ դիմացն եւ եղակի միական բնութեն եւ էութեն պաշտելի եւ երկրպագելի տրութեն, անսահման նախագաղափարին եւ անեղ բարւոյն առաջին։ Հօր անծնի եւ անսկզբնականի եւ անժամանակ յիւրմէ ծնիցելոյն բանի. եւ անհատաբար բղխեցելոյնսիրոյ, համագոյ ընութք եւ անորոշ

---

10 Առաքել Գավրիժեցին է. Առաքելի մասին տե՛ս և № 3159։

11 Թեև ամրողջ հիշատակարանը Սիմեոն Ջուղայեցուն չի վերաբերում, այլ միայն որոշ մասեր, բայց բովանդակության կարևորության համար տալիս ենք լրիվ։

բաժանմամբ միացեալ եւ դիմօք առանձնացեալ եւ անձամբ յատկացեալ. անուր եւ անկերբ, ընդ այմ թափանցեալ եւ յամէնից գատեալ, լրնդհանուրս կայացեալ եւ ոչ ուրեք ներփակեալ եւ համս սորա սեղմեալ, յարարածս եւ արտաքոյ սորա: Որ եւ լոութիւն պատուեալ եւ պատուի եւ պատուեցի ի բոլորից գոյից, յաւիտենից յաւիտենիս եւ մշնջենաւոր գարիւ, անհուն քանակութիւն եւ անկիտ պայմանաւ, որ էր եւ է եւ եղիցի աւրհնեալ անվախճանապէս. ամէն:

Յորմէ շնորհէ սատարեալ յանդեալ աւարտեցաւ տառս մակացական եւ գիծս իմաստասիրական արուագրութիւս, փիլիսոփայական, եւ ասացուածս նըրբաճառական: Յամի հազարերորդի հարիւրերորդի եւ երկերորդի քառասնաշրջութե արամատենս, քան հոլովման մեծի չափոյն եւ պատմա-
Ա:ՀՉ ութեան ամանակի, ի մարդագ ամսոյ... (բե՛ի տեղը բաց). եւ ի յօդուածոյ քան հրի ոկմայեցւոցն քան եւ մէկ: Աւս հոլմանաւ լուսանկր եւ տիեզերածաւալ գերագահ սբ աթոռոյս էջմիածնի: Յորում միջի կայաւորեալք են բազմութիք եղբարց կուսակրօնից իբրեւ յիսնեակ թուով. միշտ յաճախունչ գիրս պարապեալք եւ յար ի քնութիս (sic) բնախօսական ուսուց կրթեալք: Ունելով գլուխ եւ առաջնորդ ուսմանս այսորիկ գնիծ հռետորն եւ անյաղթ փիլիսոփոսն ամենավսեմականի հոգւոյն ընդունարանսն. եւ գի՞նչ լեթէ ոչ երկրորդ Դաւիթ եւ Մովսէս շնորհեալ ազգիս մերում. Սկիզբն ասեմ, զմայլեալն առաստաբար ի վերնական գնդմանէն, յորմէ ուսճացան յգոնք քերթողութիւն արուեստիւ, եւ արտաքին գրոց տեղեկութիք եւ ածախօս ուսուց ծանօթացան, ըստ որում պատաճաոի եւ զգիրս գայս սուացայ: Քանզի ըստ յաւետնական իմաստութե մտաց իւրոց պարզադոյն իմացուածով քերականութի յօրինեաց եւ ուսոյց ամ ուսիք: Գոլով գաւառաւ Ջուղայեցի, որ այժմ ի Շօշ բաղաքի բր : նակեալ են արքայարանի Պարսից. աշակերտ եռամեծին եւ բազմերջանիկ վարդապետին Խաչատրոյ: Արդ սկիզբն այսր գիտութե եղեւ խոտակրօն եւ ճգնազգեաց վարդապետն Մելքիսէք, որ էր յԱրարատեանս գաւառէ, եւ ի նմանէ ծանօթացաւ սա, բայց սակայն բազմապատկաբար առաւելաւ գիտութիք սա սակս յոյժ առատութե մտաց իւրոց՝ ոգ եւ քերականութեաս իւրոգութե, որում ոչ ոք երբէք էր տեԳ:ՀՉ դեակ յազգիս մերմէ, ի վաղուց հետ մինչև ցայսօր ամանակի ըստ այսմ: / Ուստի եւ որքանութիք իմաստութե սորայ սուաւ ծանուցանի այնոցիկ մտաց, որք իսկապես կարեն բացորոշ գդիտատորութիք քերթողութեաս: Այլ մենք դարձ՞ւք ի կարգ անկեալ բանիս զոր սկսաք:

Արդ գոլով այցելու եւ դիտապետ տոհմիս հայկական, երջանիկ և ճրագնազգեաց իմն արտասանեալ՝ Տէր Փիլիպպոս բան ջանիցս մակագրեալ, որ

արդարեւ ըստ անուան իւրոյ փայլէ յաւուրս յայսոսիկ իբրեւ արեգակն միջօրէի, երանելի կենցաղավարութիւք եւ առաքինաշաւիղ ընթացիւք, պատճառ բարեաց բազմաց լինելով, ուղղութիւն կարգաց, շինութիւն եկեղեցեաց եւ այլ ամ բարեձեւութեաց: Ուստի եւ նոր նորոգեալ պայծառացոյց զտիեղերական աթոռս. թէպէտ եւ ոչ սկիզբն, սակայն ըղ: վաղճանն գեղեցկապս յանգեաց, ըստ որում Դաւիթն առաջարկութիւն եւ Սողոմոնեան եղբակացութիւն տեսանի: Վասն զի յառաջ քան զսա սրբազան եւ երջանիկ հայրապետն Մովսէս — որ էր ի սիսական նահանգէ, անհամեմատ գտեալն ամենայն որպիս, զոր ոչ ոք կարասցէ ըստ քանիննութիւն նորա արտաւիպիլ եւ գլխ է քեղ. կալչիր նպատակ զպարթեւն Սահակ կամ զմեծն Ներսէս, ըստ բնուն բարուցն, ըստ մաքրութիւն կենացն, ըստ ուղղութիւն ընթացիցն, ըստ առաւելուն արդեանցն ի վր ազգիս եւ ըստ այլոց ամ: Սա երից չոքաւ առ թագաւորն Պարսից եւ յոյժ սիրեցաւ ի նմանէ, որով եւ ազատեաց զաթոռս մեծ եւ դիմոսական հարկաց ծայրագունից, որ յանուղ-
ՌՀՐ զագործ առաջնորդաց ազգիս մտեալ / էր սա ի ներքոյ չարագոյն լծոյն այնորիկ. խափեալ եւարձ զայն երջանիկս զէտ շնորհօքն քր: Եւ զկնի այնորիկ սկիզբն արար ի մաքրել զսա յաղբեւսից բազմակուտից, լայնանիստ պարսպօք բոլորեաց եւ զերից կողմանց շինուածն ատարտեաց, որ ինչ միանգամ ըստ գ՛րկութիւն եւ ըստ պատշաճաւորեա .. պիտոյանայր, քարիւ եւ կրով կարծակառոյց ամրուք: Նաեւ զկմբեզ մեծի տաճարիս ի բաց առեալ շքեղացոյց. քանզի էր խարխալեալ եւ կարի նիստ: Եւ յետ այնորիկ եղեւ զրաւ կենաց իւրոց՝ փոխեցաւ ատտուտ յանմահական կեանսըն ի հաւատարիզ ուխմներորդ երկրորդ թուոյս մերոյ, զոլով վաթսուն ամաց. կացեալ յաթոռ հայրապետութեան ամս չորս եւ ամիսս ըստ ամացն:

Իսկ զկնի երանելւոյն փոխանորդեաց աշակրտ նորին Տէր Փիլիպպոս պիտապետն, զորմէ նախաճառիցաք: Եւ նա լը ⋮ ցոյց զթերին, քանզի զատանիս սբ աթոռոյս պայծառապէս նորոգեաց մինչեւ ի գօտին, եւ զբերդունսն եռակիր յզդրունսն երից կողմանց եւ զաստիճանսն շուրջանակի եւ զարեւելեան ձեռակերտսն եւ զայլ ամ շինուածս ըստ պիտոյից սորա: Յորոյ աւուրս ընդ շինութիւն մեծի աթոռոյս՝ նորոգեցան պայծառապէս եւ եկեղեցիք սրբոյն Հռիփսիմէի եւ սրբոյն Գայիանեայ հանդերձ յայտնութեբբ պատուական նշխարաց իւրեանց: Ընդ որոյ հովանեաւ եւ մեք («ը»— շնորհեսցէ մեզ որ ած խորագոյն խաղաղութիւբ եւ յաւէտ իմն չարամնա/ցեական ամօք կալ մնալ բարի հովիւ ի պատճառս սը ⋮ փոխուե վարատեալ ազանց մերս:

Եւ արդ զրեցաւ իմաստասիրական գիծս յամի հազարերորդի ինանեբորդի հինգերորդի թուականութեան արամադեանս տոհմի. առ հովանեաւ հոյակապ մեծի աթոռոյս Սահակի յաշխարհիս Սիւնեաց, ձեռամբ Մկրտչի միանձնական եւ սրբակրօն քահանայի, երկրաւ ևիացի, որ անուանի Սարմատիա: Բայց պիտոյ այսորիկ գրոց շնորհեաց տէր իմ խնամօղ ըստ ամ պիտոյից ի մանկական տիոց մինչեւ ցայս վայր, սրբազն, բարեպատեան Յակոբ, որ է փոխանորդ ան Փիլիպպոսի երջանիկ հայրապետի. եւ ի բոլոր անձնէ եւ արիական սրտիւ զօնեւորել ընդօղ ի վերայ ամ գործառնութեանց նորին. իսկ եւ զառաքար սրբոյն Սահակիանոսի նախավկային, որ ի ձորն Շամբի անու"նեալ շքեղապ"րդ յօրինուածով կառուցս, զորոյ կեանս պարտապեսցէ տէր եւ պարգեւեսցէ ընդ երկայն աւուրս լինել ի գովեստ փառաց անուան իւրոյ, զոր յիշել ազաչեմ յաղօթս երկնաւէրս:

Այլ եւ զրոցի զսկզբնագիր բանից զլուծ կարմրագեղով տեառն Սահակիանոսի հոգիընկիլ քահանայի եւ իմաստից պարապողի, համազաւառաւ զրոցս գծողի: Եւ ոսկեներկար ծաղկագիրիւք որակաւք պաճուճողի՝ Սիմէոնի վարդապետի ի քս հանդուցելոյ մասն բարեաց ձերոյք մաղթանօք շնորհեսցի: Իսկ եւ աւանդողի զաղափարի սորին այսորիկ գրոյս՝ Մովսէսի քաջ
0-2 բարեմտոյ մականացութեանց յարա/հեաւորի, յորոյ աշխատասիրութենէ առաւգաբանեցաւ ըստ քերթողական արհեստի եւ ճշդիւր իմացուածով օրինակ գրոյս ուստի եւ ածանցեցաւ. ընդ որոյ հատուցումն ըստ վաստակոյ նոր տացի յամէնառատ պիտութենէ անտի այ: Նաեւ հարազատական գր: Թող սիրեցեալ եղբօրս մերոյ տէր Պօղոսի, որ աշխատակից եղեալ ի սրբագրութիւն տառիցս, փոխարինութիւն յանպատում բարեաց եղիցի հանդերձ համօրէն եղբայրական պարտուք եւ գասուք կրօնակցօք գումարելոց ի տիւնզրական աթոռս սբ էջմիածնի: Այլ եւ քանզի երանելին Սիմէօն վարդապետ ոսկեալ օծնել զծաղկունս որ ի սմա փոխեցաւ ի քս, վասն որոյ եւ անկատար մնաց, բայց աւարտեցաւ ի Շօշ քաղաքի ի ձեռն Հայրապետի ուրուսմն օգնականութիւք եւ ծախիւք Միքայէլ վարդապետի սիրելեալոյ մերոյ, որում տէր վարձատրեսցէ: Իսկ բոլորապս կատարումն էառ ամիս յամի հազարերորդի հարիւրորդի երկրորդի ի գերագահ մայրս լուսոյ սբ էջմիածինս, սեպտեմբեր սկզբ: բանիւ: Պաղատիմ առ լուսեղրամ մանկունսդ վերին Սիօնի առ հարսդ եւ եղբարսդ հոգեւոր, յիշել եւ զըստ մարմնոյ ծնօղսն մեր, առ քս յոյժ ամենից գՀայրն իմ գՇաբան եւ զմայրն իմ գՄարիամ եւ զեղբարսն իմ զը: տէր Դասպարն, զբարեաքն, զՄարտարն, զՄինասն, զԱնդրէասն, զՍմբատն, զՀահումն, եւ զքորան իմ զեօթանե-

Ծնունդ: Ծաղկող՝ Իգնատիոս: Ավետարան, 1236 թ.: Նոր Ջուղա. Ամենափրկիչ վանքի մատենադարան, ձեռ. № 36:

սին, որք են ի կենաս յայս եւ որք ի հանդերձեալն առ ամ. զոսոա եւ զսե-
148ա. բունդս սոցա առհասարակ: // Քանզի ի վաստակոց իւրեանց ստացան
զդիրս զայս ի գրօնանս անձին իմոյ, որոց ներեսցէ տէր ողորմութիւր իւրով
աղօթիւք ձեռով: Զի համօրէն աշխատասիրք բոստ մարմնոյ եւ բոստ հոգւոյ
հանդերձ վերագրեցելով յայսմիկ տառի յիշօղք եւ յիշեցելովք եւ միահա-
ղոյն քի երկրպագօղք դասեսցուք ընդ աջեայսն եւ ընդ օդեայսն յարքա-
յութիւնն երկնից վայելել դասպատ բարիսն մշտնջենաւոր յաւիտենից յ՛
նս ամէն:

Ընդ որս եւ զանապատացեալս ի բուսոց բանականաց (եւ զօ?) սա-
ցեալ ծառս ի մէջ պտղաբերաց իրրեւ փուշ ի մէջ շուշանաց՝ զՅովհաննէս
լոկ անուամբ պաշտօնեալ բանի յիշեսջիք ի տէր զթութիւբ եւ սիրով, որ
յաւէտ իմն փափագմամբ ստացայ զդիրս զայս իմաստասիրական, որ է
բանական գիտութիւն. յորում սակաւուք ծան(օթ եՀ?)դեալ. զլիագոյնն ձեզ
թողեալ, որով պատճառաւ եւ յիշեցայց:

Արդ, բոստ փոփոխման ամանակաց եւ հոլովմանց կենցաղոյս, որում
եւ լիցի ժառանգել զայս իմաստասիրական կտակ, եւ վայելել զսա, հայ-
ցեմ հեծեծագոչ պաղատանաւք յիշել զ ...եալս զՅովհաննէս սորին ստա-
ցող առ քս յոյն ամենից համօրէն գրեցելովք ի սմա եւ զսակաւ յիշա-
տակարանս գրոշմեալս յայսմ գծի. մի երբէք ի բաց հանել ի սմանէ կամ
եղծանել: Զի եւ ձեզ շնորհեսցի բոստ այսմիկ յապառնի եկելոց եւ փոխա-
րինութիւբ առ հասարակ պարգեւեսցէ մեզ եւ ձեզ յամէնառատ գր: Թուիե-
ցն այ, որ ահեալ անգրաւ յաւիտենիէ յառն ամէն:

11

Ձեռ. էջմ. № 1228/1204

148բ Սբ հայրք ու եղբարք ի միաբան
Դուք լսեցէք սակաւիկ բան.
Ես Սիմէոնս յոյժ անպիտան
Եպս ծուլ ու անկենդան,
Վս այս ուխտիս գերագոյական
Բան գրուատեմ աղմարանման.
Սբ Հայոց քառ մեծ մենաստան,
Հայոց մեծաց աղգիս լման
Սուն լոյս կանկնեալ գուտ կարկեհան
Ով որ յուսով առ քեզ կուգան,
Յոյժ հիանան — զարմանագան.

Փոքրիկ բլուրս աւազայնման։
Աքոռս կազմեալ մեծ Հարսնարան
Քանց զսրբոյհի մայրն ահուեն
Որ բնակեցաւ ած բան,
Սբն Սահակ Մեսրոպ թարգման
Որ սբ հոգովն զարացան.
Սորա ընկիսբ շինուեն
ի նոցանէ հաստատեցան.
Կարդինկէս հանդիսացան
Հաստատառոյց վիմարդեան
Լոյսարորբոք մայր հանրական
Գուբ եդ քաղցր հիացական.
Եկեղեցիս միոյս այլ կան
Ածայծին անուանեցան
Յոյժ գեղեցիկ ծաղկաց լման
Բարձրայգումեն ու ինն խորան,
Բարձր տեղի կառայքմբման (s!),
Եկեղեցիք պայծառ ծագման
Սբ Յարութե կոչի անուան
Յուվէփ ընտրեալ սբ պարական
Նորին նշխարք ի յանդ եդան
Եւ այլ խորանք գառին ղենման,
Շուրջ զնովաւ հաստատեցան.
Նշանք բազում աերունական
Յոյժ գեղեցիկ (s!) ծաղկաց նման
Կան հաստատուն անդ միաբան։
Զանկակատուն որ ի յորջման,
Բարձրագումեն երկնից նման,
Պայծառ կարմիր յոյսո նման.
Նշաշխալ գովաց ի Հայաստան.
Ով տեսանէ սայ ի լման,
Փառք ահուի արարչին ասեն։
Տունս այ գասիրայեման
Սբ ժամատունս ահեղ զարման.
Խարխէ յարկ հաստատեցան,
Հաստակառոյց ոյժ (s!) վիմարդեան,
Կարծր վիմանց համայնման,

Ծանրապումէդ հիացական։
Ի սբ ուխտիս քնդանրական
Ս. սեղան ի սալ եղան.
Որ Քս է պնծարարան։
Սբ ուխտս աքոռ իշխանուհի
Ունի շնօրհն հաւքնարբեան.
Սբ ուխտս գետ եղեմական
Ոռոգանէ զաշխարհս ամեն.
Սբ ուխ(տ)ս աղբիւր անմահունն,
Զովացուցիչ ոդոց մարդկան.
Մեծ թագաւոր կայ աննման
Տիպ տերունդն եւ տիրական,
Փրկիչ քաւիչ եւ ազնական,
Տեսլեամբ ահեղ եւ զարհական,
Որ երկնային զարք սա
Ահէ սորայ սարսնալ դողան։
Միայհամուռ սբք որ աստ կան,
Զեզ գոհութի հզաւր (հազար?) բերան.
Ես դանդաղաց միշտ երեսամ,
Տարեկուսաց ի վայր մնամ
. . . . . (12)

12 Վերջին տողը կազմելու ժամանակ կարված։ Ընդգծումները մեր կողմից, շենքերի անունները ընթերցողի ուշադրության հանձնարարելու համար։

(Սեփականություն Ռաֆայել Սթոռայի, այժմ Զիկագոյի համալսարանի մատենադարանում)

Մագաղաթ, անցման երկաթագիր, մեծութիւնը 16×27×7 սմ։ Մի-մի թերթ չգրած մագաղաթ սկզբից և վերջից։ Առաջին յոթ թերթը տարբեր մագաղաթ, յոթ մանրանկարներով, մի-մի երեսի վերա նկարված։

1ր **Ավետումն** *(պատկ. 1)* *սրածայր կամարի տակ, որի կեսրոնից լապտեր է կախված, ասել է ներքին տնասրան։ Հրեշտակը կարմիր ծիրանի է ձգած ուսերին, իսկ տակից հագել է լայնաթեն, կանաչ ղգեստ, ձախ ձեռքին խաչագլուխ գավազան, բռնած ուսին. աջով խաչակնքում է, ողջույնի նշան։ Մարիամը նստած է, լուսե պատիկը կարմիր, գլխի լաչակը գորշ, ծալքերը կարմրագույն, սեղանի վրա չրջանաձև։ Երկուսի մեջ է կախված լապտերը։ Կամարբրավուն, սեղանի վրա չրջանաձև։ Երկուսի մեջ է կախված լապտերը։ Կամարի հետևից աջ և ձախ կողմից՝ մի-մի շենք, ձախի շենքը հայկական զրմբեթով տաճար է, վերարի հիմքից վարագույրներ կախված, իսկ աջից երկհարկանի սյունազարդ սրահ։*

Պատկերի մեծ. 23×20 սմ, մի մասով 13 սմ, ուրեմն անկանոն։

2ա **Ծնունդը** *(պատկ. 1)*; *(պատկ. 25)* *երեք տնասրանով պատկեր. առաջինը վերևից ներքև, դարձյալ սրածայր կամարի տակ, ծնունդն է, մայրը, երեխան և երկու կենդանիները։ Երկրորդը մոգերի երկրպագությունը, երկու հրեշտակի ուղեկցությամբ, մեկը առաջից, մեկը հետից, տարօրինակ է, որ նրանք հանդիպում են մանկան լոգանքի ժամանակ Սալոմեի ձեռքով ըստ ամենայնի ավետարանների։ Ուշադրության արժանի են նրանց գլխարկները, կոշիկները, հագուստն առհասարակ, որ Զաքարյանց շրջանի ղգեստն էր, որի մասին խոսք կլինի հետո։ Հովսեփ ալեհեր նստած, երրորդ տնասրանը հովիվներն են իրենց ոչխարներով և այծերով, նաև շուներ։ Հովիվների գլուխը փաթթոցով։ Հովիվների հետ խոսող անձը նույնպես գլխի փաթթոցով, արևելյան ղգեստով և կանացի դեմքով։ Սրածայր կամարից վերև՝ դրսից, վեց հրեշտակներ են փառաբանող։*

Նկարի մեծ. 20×21×8 սմ, մի մասով $12^1/_2$ անկանոն։

3բ **Մկրտություն** *(պատկ. 2)* *Ամպերով և կիսաշրջանով մատնանշված աստղազարդ երկնքից՝ Հոր Աչքն է երևում, իբրև նշան Նորա ներկայության. աղավնակերպ Հոգին իջնում է Հիսուսի գլխին, որ մինչև ուսերը ընկղմած*

Հորդանանի մեջ, գլուխը խաչազարդ լուսո պսակով. աջ ափին կանգնած է Հովհաննեսը, աջ ձեռքի խաչանիշ դեպի Հիսուս մեկնած, ձախը աղոթողի ձևով, գոտեկապ պարեգոտը մինչև ծնկները, հետևից ժողովրդի բազմություն։ Երկու հրեշտակ բռնած են Հիսուսի զգեստները։ Հիսուսի ոտքերի տակ որևէ բան կա, թե ոչ, չի նկատվում։

4ա Պայծառակերպությունն է (պատկ. 2) Հիսուս լուսավոր ձվաձև, մանդորլայի վերա կարմիր աստղերով շրջանակի մեջ, լուսո պսակը խաչաձև, կարմիր հատակի վերա, վերնազգեստը սպիտակ, մինչև ոտքները հասնող, ձեղքված նույնչափ երկար պարեգոտի վերայով. ձախով ավետարան բռնած, աջով խաչակնքում է։ Աջ կողմից Եղիան է բարեխոսի դիրքով, ձեռքերը մեկնած, Մովսեսը մյուս կողմից, մի ձեռքը մեկնած, մյուսով դիրք բռնած։ Ներքևում՝ Հիսուսի ոտքերի տակ, ձախից «Պետրոս», ձեռքը գլուխը տարած, միջինը պատկած՝ «Հովհաննես», երրորդը՝ «Սբ Յակոբ»։ Հիսուսի ոտքերի տակ գրված է «պայծառակերպութիւն»։ Պատկերի ամբողջության տակը նկարչի անունը նախ Հունարեն՝ Աբաս ցոգրափ, ապա նույնը վրացերեն։

5ա Մուտքը Երուսաղեմ (պատկ. 3), (պատկ. 26)։ Տաճարը հայկական գմբեթով և բոլորակ թմբուկով, աստմնաձև պարսպից ներս. աստմնաձևերի միջից նայում են հինգ գմբեթը, գլուխներին չալմայով գլխարկներ։ Առաջին պարսպի հետևից կա երկրորդը ավելի բարձր և զարձյալ աստմնաձև, կրկնահարկ աշտարակով։ Այս պարսպի վերայից երկու փողհարներ ուշադրության արժանի գլխարկներով, նման Հաղբատի ավետարանին, որոնց մասին հետո խոսք կլինի. մեկը սրածայր, մյուսը բոլորաձև (սֆերիկ), կանաչ և կարմիր կաորներով։ Ջաքեոսի ծառը այստեղ ևս ձիթենի է, ինչպես Հաղբատի ավետարանի մեջ։ Ժողովրդի երկու ներկայացուցիչներ ընդառաջ են եկել ձիթենու ճյուղերը ձեռքերին։ Պետրոս բռնել է մի ձեռքով իշու սանձը, մյուսով ճանապարհ է ցույց տալիս, Հիսուսի կողքին և հետևից գնում են Հակոբոսը և Հովհաննեսը։ Երկու պատանի հանդերձ են փռում իշի ոտների առաջ։ Մեծ. $20^1/_2 \times 13$ սմ։

6բ Խաչելություն. Խաչեցյալի իրանը երկար։ Սողոմոնը սկիհը ձեռին, խաչեցյալի աջ կողմից, ցայտած արյունի համար. հետևից մի հրեշտակ ձեռնամած. Երուսաղեմի փոխարեն գմբեթով եկեղեցիներ։ Մյուս կողմից մի հրեշտակ, և հնոջ դեմքով մի ֆիգուր։ Ավելի ցած աջ կողմից երեք կին, երկու առաքյալ ձախից։ Վերևի անկյուններում խավարած լուսին և արեգակ և մի-մի հրեշտակ ցած սավառնող։ Պատկերի չորս կողմի շրջանակի վերա գրություն, որ անկարելի է կարդալ, այնքան փշացած է։

7բ Համբարձումն. Հիսուսը նստած չորեքկերպյան աթոռի վերա, որ բռնել են չորս սերովբեք, վերևի երկուսը փողհար։ Ներքևում առաքյալներն են, նրանց մեջտեղը Աստվածածին։

8բ, 9ա, 9բ, 10բ, 11ա, 11բ, 12ա, 12բ, 13ա, 13բ, 14ա, 14բ, 15ա թո-բաններն են, չափավոր որակի արվեստով, գույներն ու գրերն էլ տարբեր ձեռ-քերից և ձեռ քնագրի զարդերի և Աբաբի նկարներից։

8բ, արևելյան բոլորագրով (անցման երկաթագիր) գրված է.

«Տեր ած ողորմեայ մեղաւորիս»։

13ա. Փոքր երկաթագրով «Յիշեա տէր ած զիգնատիոս և ցյովսեփ» (պատկ. 4), (պատկ. 27)։

15ա. Խորանի վերևի գերանի վերա մուխ կանաչ հատակի վերա «Տէր ած ողորմեայ բազմամեղիս ամէն»։

16բ. **Մատթեոս** *ավետարանիչ (պատկ. 5), (պատկ. 28) արվեստը նույն է, ինչ որ Տերունականներինը, այսինքն Աբաս նկարչի, որ ինչպես հետո կտես-նենք, երեց է։ Ավետարանիչը նստած գրում է, զգեստը սովորական է, լայնա-ձեռ տունիկայի վերայից ձգել է տոգան, աջ ձեռն ազատ է, փաթաթված է ձախ ձեռի վերայից մինչև ծնկները։ Գլխի մազերը երկար և դևպի ետևի կողմն իջած, մորուքը երկար և բեհեզ սրածայր։ Լուսապսակը բոլորակ։ Աթոռների տակ փռո-վածք։ Աթոռը կոշտ, փայտե, և կողքերից երկու պահարան (ժողովրդական արվեստի հետևողությամբ)։ Գիրքը գրված է ծնկների վերա, տողատված, եղեգնյա գրչով գրել է «Գիրք ծը(նդն)(դե)(ան) — մյուս երեսին,—յ»։ Ավե-տարանչի հետևից քառանկյունի պատվանդանի և սյունանման զույգ ձողի վե-րա հաստատված է գրակալ-սեղանը, վերան մի բաժակ գրված։*

Ավելի հետաքրքրական է վերևի տեսարանը. մեջտեղում վեցթևյան սե-րովբե, իսկ աջ և ձախ կողմից ավետարանչի աթոռի նման աթոռների վերա նստած են մի-մի պատանի, ԺԲ դարի վերջերի և ԺԳ-ի սկզբների մեղ հայտ-նի իշխանական զգեստով, նման Հաղբատի ավետարանին։ Գլխարկները չորս կտորներից, մեջտեղը կարմիր և կանաչ կտորներից։ Հագած են բյուզանդական երկար տունիկա, ուսերը նաև կուրծքը, ասեղնագործված և զարդարուն, երկ-գույն կոշիկները մինչև ծնկները՝ զույգ փունջերը կախ ճիտքերից։ Ձախ կողմից պատանին աջով նիզակ ունի բռնած ուսին, իսկ մյուսը թուր, երկուսն էլ աջ ձեռքերը մեկնել են դեպի Սերովբեն։ Պատանիների կողքից գրված է «մարգ ըստ Մաթէոսի», Սերովբեից վեր պատկերի ճակատին մի քանի բառ գրված, որ փշացած լինելու պատճառով չի կարդացվում (պատկ. 6), (պատկ. 29)։

Մատթեոսի սկիզբը չկա, սկս «Նոցա եւ մտեալ ի նաւ. անց յայնկոյս». թերթ 1.!

84բ **Մարկոս** *Ավետարանիչը (պատկ. 7), (պատկ. 30) նստած է նման ձևի աթոռի վերա և մյուս պարագաներն էլ նման Մատթեոսին, միայն գիրքը բաց, ծնկների վերա, բայց ոչինչ չէ գրած. ձախով գիրքն է բռնած, աջը ծնոտի վե-րա, մտածում է գրելիքի մասին, եղեգնյա գրիչը բռնած։ Պատկերի հատակը*

կարմիր է, ավետարանչի մազերը մուգ կարմիր, լուսապսակը դեղնավուն։ Հետևի կողմից գրակալն է, տարբեր ձևակերպությամբ, վերան դանակ և բաժակ դրած։ Վերևը նստած է նման հագուստով մի պատանի, ինչպես Մատթեոսի վերևի զույգ պատանիները, այստեղ միայն նստած դիրքով. աջ ձեռքով ուսին է դրել նիզակ, իսկ ձախով մի անոթ, մեջը խնձոր դարսած, մատուցանում է հետևի ոտների վերա պպզած և պոչը վեր բարձրացրած առյուծին։

Սկզբնազարդը տարբեր ոճով, ունի խնդրվածքի (դեղին) խմբանակը. (պատկ. 8) Քրիստոս նստած, աջից Մարիամ և ձախից Հովհաննես բարեխոս։ Ս-ն բուսական զարդով և մեծ, ունի և լուսանցքի զարդ՝ խաչով վերջացած։ Այս սկզբնազարդը, ինչպես և ավետարանի առաջին բառը «Սկիզբն» կապված է բնագրի հետ, որովհետև նույն թերթի հետևյալ երեսի վերա շարունակությունն է։

139բ Ղուկասն է (պատկ. 9), (պատկ. 31) Զգեստավորությունը նույնն է, գույների տարբերությամբ միայն, նույն են և մյուս պարագաները, միայն ոտքերի տակ մուքաթա (երկար բարձ) է դրված։ Ուշադրության արժանի է նաև, որ ավետարանչի նշանակը (simbol) զույգ եղներ են, որ սովորական չէ։ Պատկերի տակ գրված է նկարչի անունը երեք լեզվով հայ, հույն և վրաց. «Յիշեա Զաբաա նկարիչ տուալ երէց» (պատկ. 10, 11)։ Այստեղ ևս սկզբնազարդը, որ երկրաչափական քառանկյունի է, Ք-ի և լուսանցքի զարդի հետ տարբեր արվեստ է և բնագրի հետ կապված, որ ավելի հնության նշաններ ունի, քան ավետարանի ստացման թվականը։ Այս մասին հետո։

Ուշադրության արժանի է լուսանցքի զարդը Ղուկ. ժ, 2, հնձվորի պատկերը տեղական զգեստավորությամբ, մեծացրած դիրքով։ (պատկ. 12), (պատկ. 32)։

237բ. Հովհաննեսն է (պատկ. 13), (պատկ. 33) նստած, աջ ձեռքով գրիչն ու ավետարանը բռնած, գլուխը հետ է դարձրել և լսում է երկնքից սավառնող հրեշտակին։ Մյուս պարագաները նորություն չեն բերում, միայն հետևից գրակալի վերա դրված է ջրաման և բաժակ։ Վերևում զույգ, թևատարած արծիվներ են, ավետարանչի նշանակը (simbol), որ նույնպես անսովոր է զույգ ձևով։ Այստեղ ևս լուսանցքի զարդը և սկզբնազարդը տարբեր է Աբասի և Հռիփսիմեի արվեստից և կապված է բնագրի հետ. գույներն ավելի մաքուր։ Ոսկինք տիրոջ արվեստից և կապված է բնագրի հետ. գույներն ավելի մաքուր։ Ոսկինք և հնագրական այնպիսի նշաններ, որոնք ապացույց կարող են լինել, թե բնագրի ավելի հին պիտի լինի, քան վերև հիշված անձանց գործերը։ Այստեղ հատվածների սկզբնագրերը փոքր են և ոչ մանրանկարչական, ինչպես հատուկ է ԺԳ դարի երկաթագիր ավետարաններին, լուսանցքի կողմից էլ երբեմն փոքրիկ զարդ է կպցրած հատվածի սկզբնագրին, որ երևան է գալիս համեմատաբար ավելի վաղ ավետարանների մեջ։ Լուսանցքի զարդերից ուշադրության արժանի են երկուսը 179ա և 213ա. առաջինը հնձվորն է, համաձայն Ղուկ. ժ, 2-ի (պատկ. 11) հնձվորը չուխա ունի հագած, մինչև ծնկները հասնող, երկար բաճ-

կոնի վերայից, անդրավարտիքի ծայրերը տրեխի մեջ անցրած, ասել է ազգագրական արժեք ունեցող մի նկար։ Երկրորդը Հիսուս Նասած իշու վերա, դարձյալ մի թեթև նշան, թե սորա նկարիչը տարբեր է Աբասից, որ Երուսաղեմ մուտքի համար մեծ մանրանկար ունի և այստեղ կրկնության պակաս չէր ունենալ։

Հիշատակարաններից կարևորագույնը վերջինն է 311ա—313բ, ձեռագրի ստացող Գրիգոր և Վարդան կրոնավոր եղբայրների։ Հիշատակարանի մագաղաթը, գիրը տարբեր է բնագրից, մելանն էլ գույնը ձգած. տողատված է բռնագրի համաձայն. փակագծի մեջ գրածները մենք ենք լրացնում. անկյունավոր փակագծինը ենթագրական։

«Բղխումն շահաւետ շնորհի շարագրի է շարժեալ ի հայրապարժ ծագմանն... (պատմական ոչինչ ունի այս մասում).

Եւ արդ անսպառ կտակս և զրանձ անկողոպտելի, զանճառ երկինս որ բարձեալ ունի զարն բոլորից, մեք Գրիգոր և Վարդան հարազատք տրուպ և նուաստ քահանայք, ըստ ձև տեսակի կրօնաւորք գոլով, ստացաք զընդիրս առաւել քան զամենայն ինչս պատուականս ձեռաց մարդկան ձգանելոց, զոր աւետարանս, բազում խորհուրդք ըստ կարեաց մերում, յորս եմք տեղեակալ ի գլուխ (խ) սահմանաց նաչենոյ, ի սբ ուխ...(տէն) Դանճասար մենաստանէ որ... /է հանդէպ/ դղեկիս Սխոտայն (Սխատան) Հ (աւբա) խա/զագ/ առաջնորդութ... (համբ սբ ուխ) տիս տն Յո... (վհանէսի անյա) զի վար... (զասպետի և) ծծարել.../ զպատկ եկեղեցոյ քի մաղթեմք ի յաւկտեւոց իսմանէ յիշեսջիք զվերագրեալ քս ի տր զանուանս գհարազատաքս ուշիմս և կարիտոր մնամք ազաւթից ձերոց և զծնողսն մեր զԳիրգ փաւաշ[1] և զՇահանդուխտ և զայլ եղբարսս, և զբորս և զազգականս մեր, որպէս զլուսիա և զդնդար (?) ամոլք ընգալաք զարաւրս մշակին երկնաւորի ասղնականութեամբն քի առ ի հերկիալ զակաւս սրտից ածայնոցդ և սերմանել զընդիր ցորեանս, որ յագելոցդ էք ի քի շահական (si) պտղոյս։ Յիշեսջիք զմեզ և զամենայն յանձն արարեալս... ի ձեղ նաև զսրբասնեալ եղբարքս մեր ...(միաբան)ակիցքս համաւրէն զծերսս և ... զորդիացեալսս սբ ուխ ... (տիս) յիշեալ լիցի ի տր յս // անարզ նկար... (արդյո՞ք նկարչի անունը պիտի լիներ)

... տես

... մահն ե

... տաղեց

թվ ՈՉՉ (1237)

Նուն ստացողները անթվական հիշատակարաններ ունին Մատթեոսի վերջում 83բ, Մարկոսի վերջում 139ա, ոչ բնագրի թերթի վերա, այլ Ղուկասի պատկերի հետևը. նաև Ղուկասի վերջում 236բ բնագրի թերթի վերա։

---

[1] Ձյս բառը կրկնված է Անիի Ամենափրկիչ եկեղեցու և Տիկորի արձանագրություններ մեջ «Մարգիս փարշևան», որ նկարիչ է նշանակում։

Հին, արեւելյան բոլոր ազգ. Քո աջ ոտքդ մայ Դրիդորդ և Վարդանայ... (փառա)շին որդեացն, առաջորդայ սբ աւետարանիս ամէն։

Նայն գրով. Քո աջ ոտքդ մայ երկուց եղբարց պատուական քահանայից Դրիդորոյ և Վարդանայ, առաջորդի սբ աւետարանիս ամէն։

Մեծ հիշատակարանի մեջ հիշված Դանձասարի վանքը գտնվում է Արցախի Խաչեն գավառում, Խաչենագետի ձախ կողմը, բարձրահայաց լեռան լանջին։ Նորա դիմացն է, գետի մյուս ափին, այժմ էլ Սղսաղան ըստ ժողովրդական կամ Հավրեխաղաց ըստ գրական անվան գագաթը, որ միևնույն ժամանակ Խաչենո իշխանների բերդն էր։ Դրա տակն էր Խաչենի իշխանների նստոցը և ապարանքը, որոնց ավերակների հետքերը մինչև այժմ էլ երևում են։ Հավրեխաղացին կից արևելքից Հավապտուկն է, մի բլուր բազմաթիվ կենցաղական քանդակաղարդ գերեզմանաքարերով. Հավապտուկն էլ Խաղբակյան իշխանական տոհմի նախնյայ հանգստարանն էր։ Եթե ձեռքի տակ ունենայինք տպված կամ մեր հավաքած արձանագրությունները այդ շրջանում, կարող կլինեինք տեղեկություն տալ Դանձասարի Հովհաննես առաջնորդի մասին։ Հիշատակարանի թվականը Հասան—Ջալալ Դուլեի, տեղվույն շինարար և մեծ իշխանի ժամանակն էր, Դանձասարի՝ այժմ էլ դեռ հաստատուն շենքի վերջավորողը, ըստ արձանագրության և ժամանակակից պատմիչ Կիրակոս Դանձակեցու տված տեղեկության, կարծում ենք 1240 թվին վերջացած։

Կան և հետագա ժամանակի հիշատակարաններ։

Այս նկարագրություններից և ցուցումներից պարզ է, որ ձեռագիրը մի ամբողջության չէ. այստեղ տեսնում ենք առնվազը երեք ձեռքերի և ժամանակների աշխատանք։ Բնագիրը ամենից հինն է, որի սկզբնավարդերն ու լուսանցքի զարդերը տարբեր արվեստ և ոճ ունին, քան Տերոնական պատկերներինն է, որի մանրանկարիչն է, ինչպես տեսանք, «Աբաս նկարիչ տրուպ երէցն»։ Բայց այս երկուսից տարբեր է նաև խորանների արվեստը,, որի ծագումը կապված է մեզ յուր շատ գործերով հայտնի Իգնատիոս նկարչի և նորա աշակերտ Հովսեփի անվան հետ։ Իգնատիոսի մասին մենք ունինք հատուկ ուսումնասիրություն[2]. հայտնի են նորա մի քանի գեղագրական և գեղարվեստական արժեք ունեցող գործերը տպա վերջերս նորա մասին լրացուցիչ տեղեկություններ հաղորդեց մեր երիտասարդ բանասեր բարեկամը, Պ. Հարություն Քյուրյան[3]։ Բայց նա ունի և ուրիշ գործեր էլ բանասիրության դեռևս անհայտ, որոնց հատուկ հոդված պիտի նվիրենք։

Երեք հաստատուն թվական ունինք Իգնատիոսի կյանքի հետ կապված 1214, 1232 և 1236. առաջինը Հավուց Թառի ավետարանի թվականն է, երկրորդը

---

2 Նյութեր և ուսումնասիրություններ. պրակ Ա, Հաղբատի դպրոցի մի գլուխգործոց, Երուսաղեմ, 1935։

3 Անահիտ, 1939, թիվ 3։

Բագնայրի, երրորդը Խծկոնից, երեք ձեռագրերն էլ ընդարձակ հիշատակարան-ներով և պատմական-ժամանակագրական տեղեկություններով։ Բարեբախտաբար վերջին ավետարանի մեջ հիշատակված է նաև Իգնատիոսի աշակերտը Հովսեփ։ Իգնատիոսը Հոռոմոսի վանքի գրիչ և մանրանկարիչ էր. գործել է բացի Հոռոմոսից, որ Անիի մոտ էր, նաև Հավուց Թառի և Խծկոնից կամ Բիշ-քիլիսայի վանքերում։ Խծկոնքի ավետարանի, այժմ սեփականություն Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի, թվականը 1236, հիշված են վարպետը և աշակերտը միասին, մեզ համար կռվան կարող է լինել որոշելու մեր այս ձեռագրի խորանների ժամանակը։ Իհարկե, խորանների արվեստը պակաս գեղարվեստական են, քան Իգնատիոսի գործերն են, որ պետք է հասկացվի, որպես Հովսեփ աշակերտի գործ։

Ավետարանի ծագման ժամանակը որոշելու մի երկրորդ կռվան ունինք Վարդան և Դրիգոր վանական եղբայրների ստացման թվականը, որ ինչպես տեսանք, ՈՀՉ—1237 թվականն է։ Հավանական է ասել, որ Դրիգոր և Վարդան ստացել են միայն և ոչ նոր գրել տվել, հակառակ դեպքում որևէ խոսք կլիներ գրչի և նկարչի մասին։ Սորա վերա ավելանում է այն հանգամանքը, որ ինչպես վերև հիշեցինք, բնագրի արվեստը բոլորովին տարբեր է, ինչպես և գրչությունը և մեկտեղ ձեռագրի և հիշատակարանի, Իգնատիոս նկարչի մեզ հայտնի գործերից։

Մեզ մնում է որոշել Աբաս նկարչի ժամանակը։ Նկարագրության մեջ մատնանշել ենք արդեն, թե Տերունականների մագաղաթը տարբեր է բնագրի մագաղաթից. տարբեր էին և նրանց արվեստները. ուրեմն, բնագրի ծագման հետ կապ չունին նրանք։ Բայց նույնը ասել կարող չենք ստացողների և Աբասի ժամանակի նկատմամբ։ Ստացողների փոքրիկ հիշատակարաններից մեկը գրված է ոչ բնագրի թերթի վերա, այլ Ղուկասի պատկերի (137բ) նախընթաց էջի (139ա) վերա. այստեղից այն պարզ եզրակացությունը պիտի հանենք, թե կամ այս հիշատակարանը և Աբասը ժամանակակից են իրար, և կամ, թե Աբասն ավելի հին է, երբ ձեռք են բերել մանրանկարները, դրացնից մեկի հետևը գրվել է այս հիշատակարանը։ Առաջին դեպքում Աբասի ժամանակը կնույնանա ստացողների ժամանակի հետ, որ 1237 թվականն էր. երկրորդ դեպքում, պետք է ընդունել ավելի հին, քան այս թվականը։ Մենք հակված ենք երկրորդն ընդունելու, թեև ժամանակով ոչ շատ հեռու միմյանցից։

Այսպիսի եզրակացության հիմք է ծառայում Աբասի ազգագրական նկարների մերձավորությունը Հաղբատի նշանավոր ավետարանի հետ, որ գրված է 1211 թվին, «ի սբ ուխտս Հաղբատայ» «ձեռամբ Յակովբայ»։ Նկարիչն է Մարգարե։ Մանրամասնություններով հետաքրքրվողները կարող են դիմել այդ ձեռագրին նվիրված մեր ուսումնասիրությանը[4]։ Մեզ համար կարևորն այն է այժմ,

[4] Նյութեր և ուսումնասիրություններ. պրակ Ա, Հաղբատի դպրոցի մի գլուխգործոց, Երևան, 1935։

որ պ. Սիոռայի ավետարանի մի քանի ազգագրական պատկերները տարապէ նկատմամբ մեծ նմանութիւն ունին Հաղբատի ավետարանի հետ, ինչպես 8բ, 9ա և 15բ Շերնիխի և անանուն սպասավորի և աշուղի նկարները, որոնց հետ համեմատելի են այս ավետարանի Մատթեոս և Մարկոս ավետարանիչների վերևի մասի, աթոռների վերա նստած ֆիգուրաների տարապի հետ։ Սրանք Զաքարյանց շրջանի և Վրաստանին սահմանամերձ Տաշիրք գավառի, ուր և Հաղբատն էր, տարազն էր։ Զաքարյանց երկու եղբայրների, Զաքարե մեծի և Իվանեի պատկերաքանդակների տարազն էլ նույնն է, Հառիճո վանքի արևելյան պատին. քիչ տարբեր են միայն գլխարկները։ Նույն մերձավորութիւնն ենք նկատում նաև Մուսո երուսաղեմ մանրանկարների մէջ ընդհանուր կերպով. այդ կրկնահարկ տաճարի, աստմնաձև պարիսպների և ձիթենու ճակերպութեան գաղափարն է։ Տաճարը յուր հայկական գրքերով համեմատելի է նաև Հաղբատի ավետարանի Հովհաննու տաճարի հետ։

Ուշադրութեան արժանի է նաև, որ նկարիչը յուր անունը գրում է ոչ միայն հայերեն, այլև վրացերեն և հունարեն (հունարեն բառերի գործածութեան տեսնում ենք Հաղբատի և ուրիշ ձեռագրերի մեջ)։ Այս բոլոր հանգամանքները կշռելով, Աբաս երեցի պատկերներն էլ նույն շրջանի և ժամանակի գործ ենք համարում, այսինքն Հաղբատի դպրոցի և մոտավորապես ԺԳ. դարի առաջին տասնամյակների։

Տարաբախտաբար ձեռագիրը վատ է պահված, հատկապես մանրանկարները, որոնց ներկերը շատ տեղ թափված են։ Խաչելութեան շուրջը գրված հիշատակարանն էլ անընթեռնելի է դարձած, որից, դուցե, կարելի կլիներ մի լույս ստանալ։

Բանասիրական տեսակետով հետաքրքրական են նաև հետին հիշատակարաններից մի երկուսը, որ նշանակութիւն ունին նաև ավետարանի հետագա պատմության համար, բայց մեզ պահպանում են արձանագրական հարիկավոր գրքերն ու աղբյուրները, լուսաբանելու նրանց մեջ հիշված պատմական անունները, որոնց մասին, դուցե, կհաջողվի մի այլ ժամանակ վերադառնալ։

Ա

Սիոնի մեջ հետզհետե[1] *և ապա առանձին պրակի մեջ*[2] *հրատարակվեցավ մեր «Իգնատիոս մանրանկարիչ և Շոթոռականց տոհմը» վերնագրով ուսումնասիրությունը։ Այդ աշխատության մեջ երկար կանգ էինք առել, համապատասխան, Իգնատիոսի մի գործի մասին, որ նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի թիվ 36 ձեռագիր նկարազարդ Ավետարանն է։ Տարաբախտաբար հոդվածի տպագրության ժամանակ ձեռքի տակ չունեինք լուսանկարչական պատկերներ այդ ձեռագրից, բնորոշելու նորա արվեստի որակը, որքան և դժվար է առանց բնագիրը տեսնելու, միայն լուսանկարչական վերարտադրություններով, ճշտիվ բնորոշել որևէ երկի գեղարվեստական արժեքը։*

Ուրախ ենք, որ երիտասարդ բանասեր պ. Հ. Քյուրտյանը ձեռագիրն ամբողջ տեսել և լուսանկարել է տերունական պատկերները և հատուկ հոդված ունի գրած ձեռագրի մասին Ա. Ղազանչյանի «Անահիտ»-ի մեջ[3] *տալով և լուսանկարչական պատկերներ և հիշատակարանների պատճենները։ Այնտեղ նա ուղղում է մոցնում մեր հոդվածի մեջ նաև ստացողներից մեկի անվան նկատմամբ, որ տպագրական սխալ է, առանց ի նկատի ունենալու, որ նույն հոդվածի մեջ այլ տեղ տողատիկին է տպած և վրիպակների ուղղում կա հոդվածի վերջում արտատպության մեջ։ Ստացողներն են, ուրեմն, Բանավոր և յուր ամուսինը Տղատիկին, որ մի քանի տեղ Աղատիկին է տպագրված մեր բացակայության հետևանքով։ Բայց ավելի կարևորն է, որ նա հակառակ մեր կարծիքին, թե «Իգնատիոսի արվեստը զուտ արևելյան բնույթ ունի, ազատ բյուզանդական ազդեցությունից, և ավելի մոտ սասանյան և միջագետյան—արաբական ավանդներին», ավելացնում է, որ նթե ձեռքի տակ ունենայինք Ն. Ջուղայի թ. 36 Ավետարանը, կտեսնեինք, որ Իգնատիոսը «բյուզանդական ազդեցութենեն ազատ չէր բոլորովին»*[4]*։ Ճշմարիտ է, որ Իգնատիոսի պատկերագրության միայն մեկ օրի-*

---

1 *Սիոն, 1933, հունիս-հուլ. ամիսներու։*

2 *«Նյութեր և ուսումնասիրություններ», պրակ Ա, Երուսաղեմ, 1935։ [Տե՛ս նաև՝ սույն հրատարակության 4 հատորը—կազմող]։*

3 *Անահիտ, 1939, թ. 3, եր. 32։*

4 *Անդ. եր. 34։*

նակ ենք ունեցել այն ժամանակ ձեռքի տակ, այն էլ հանգուցյալ նկարիչ Վարդգես Սուրենյանի ձեռքով ընդօրինակված Մարկոս Ավետարանիչ, ստացող Բրունավորի և յուր կնոջ ազգագրական-պատմական արժեքավոր պատկերի հետ, բայց այդ եղրակացության հասել էինք Իգնատիոսի Բագնայրի ավետարանի սկզբնազարդերն ու լուսանցքի զարդերն ի նկատի ունենալով, որոնք իրենց քնույթով համապատասխան են մեր կարծիքին: Լուսանկարներ ստանալուց հետո էլ, սակայն, մենք չենք փոխել մեր կարծիքը: Նոքա ավելի նմանություն են բերում սյուրիական պատկերագրության, քան բյուզանդականին: Այսպես են առհասարակ մեր ԺԴ դարի[5] հայտնի ավետարանները, ինչպես Հաղբատի, Թարգմանչաց[6] և մյուս իշխանական ձեռագրերը: Վերարտադրում ենք այստեղ չորս տնօրինական պատկերներ, զաղափար տալու Իգնատիոսի նույն նյութի վերաբերյալ արվեստի մասին. պատկեր 1 Ավետումն է, որ պ. Քյուրտյանը չէ տվել, պատկ. 2 (պատկ. 34)՝ Դաղարի Տարուիցյան, պատկ. 3 Մուտն յԵրուսաղեմ և պատկ. 4 Խաչելություն: Տարաբախտաբար հնարավորություն չունինք համեմատելու վերև հիշած ԺԴ դարի Արևելյան Հայաստանի ձեռագիրների մանրանկարչության հետ:

Բ

Առարկություն ունինք պ. Քյուրտյանի այն կապակցի դեմ նաև, թե Բրունավորն ու Տղատիկինը ավելի ուշ ժամանակի ստացողներ են, քան ավետարանի ծագման ժամանակն է, և թե Մարկոսի մանրանկարի տակ, այր և կին խմբանկարը Բռնավորի և Տղատիկնոջ պատկերը լինելու ապացույցը կամ հիշատակությունը չունինք, ուրեմն, և կապակցելի կարող է լինել, թե նրանցն է:

Բայց մի կարևոր հանգամանք չպիտի վրիպե մեր ուշադրությունից: Այս խմբանկարը ժամանակակից է գրչության և մի ամբողջություն է կազմում յուր շրջանակով և Ավետարանչի գլխին գրած «սբ աւետարանիչն Մարկոս» վերտառությամբ, ինչպես և մանգրված են Իգնատիոսի ձեռքով մյուս ավետարանիչների անուններն ևս իրենց նկարի գլխին: Նկարչության ոճը, նման մյուս պատկերներին, ճարտարապետական շենքը ավետարանչի հետևի կողմից նման Ղուկասի համապատասխան շենքին. նմանությունը ակներև է նաև շրջանակի զարդերի մեջ մյուս պատկերների համեմատությամբ:

Կապակցից դուրս է նաև Բռնավորի և Իգնատիոսի մոտ ժամանակագրությունը: Բագնայրի մեծ ավետարանը գրված է 1232 թվին, իսկ Բռնավորը յուրըն ստացել է 1236 թվին: Ապա թաթարների անօրենությունն ու անգթություն-

---

5 Սիոն, 1933, հունիս-հուլ. Արտատպված առանձին գրքով. «Նկարներ և ուսումնասիրություններ», Ա պրակի մեջ:

6 Մի քանի պատկերներ տպած էինք Անահիտի մեջ:

նը հիշված է մեր կողմից Իգնատիոսի գործ ընդունված և Մհծշնի Կարմիր ավետարանին կցված խորանների հիշատակարանի մեջ[7] ինչպես և Բռնավորի հիշատակարանի մեջ. երկուսն էլ թաթարներից ստացած սարսափի նոր տպավորության տակ գրված, որ 1236—1242 թվականն էր։

Բռնավորի հիշատակարանի գրչության տարբերությունն էլ բուն ձեռագրի տարբերությունից պատճառ չէ հեղինակին բոլորովին տարբեր անձն համարելու. Իգնատիոսի գրչությունը Բագնայրի ավետարանի մեջ տարբեր է նույն ավետարանի հիշատակարանի գրչությունից, որոնք նույն գրչի ձեռքն են. պ. Քելեկյանի կամ Վ. Սիմոնյանի ավետարանների գրչությունը տարբեր են այս երկուսից, առավել ևս մանր երկաթագրով գրած նորա հիշատակարանները. այսպես տեսնում ենք միևնույն գրիչը իրարից տարբեր գրչությամբ գրություններ ունի։ Նույնը կարող ենք ասել և ուրիշ շատ գրիչների նկատմամբ։ Սորանով, իհարկե, անպատճառ չենք կամենում հաստատել, որ Բռնավորի հիշատակարանի գրչությունն էլ Իգնատիոսինն է, մանավանդ, որ չունինք ձեռքի տակ նորա իսկագիրը կամ լուսանկարը. կարող է նորա աշակերտներից մեկինը լինել կամ մի այլ մարդու, բայց քանի Մարիոսի պատկերի տակ ստացողների պատկերը Իգնատիոսի գործն է և գրչության ժամանակակից, իրավամբ պետք է նրանց առաջին ստացողները համարենք, նույնպես Բռնավորի և յուր կնոջ հետ։ Եթե Բռնավորը յուր կնոջ հետ երկրորդ ստացող լիներ և այն էլ թաթարների կողոպուտից կամ գերության հետ գնած, սպասելի էր, որ հիշատակարանի մեջ մատնանշված լիներ այդ հանգամանքը։ Ավելացնենք, որ Խծկոնից վանքը Անիից կամ Հոռոմոսի վանքից, որ Իգնատիոսի մշտական բնակության վայրն էր, շատ հեռու չէ։ Այլ է երկրորդ ստացողների՝ Կարապետի և Էսուկանի կեղծիքը, որոնք իրենց անունը գրել են Բռնավոր և Տղատիկնոջ պատկերի գլխին, որպես թե իրենցը լինի։

9.

Ամերիկայում մեր ձեռքն են անցել նույն Իգնատիոսի ուրիշ երեք գործերը։ Դոցանից առաջինը պարոն Տիգրան Քելեկյանի նվերն է մեր ձեռքով Մայր Աթոռի մատենադարանին, երկաթագիր, մագաղաթի վերա գրված մի ավետարան, որ ժամանակին ուղարկված է Երևան։ Ձեռագրի մասին մի քանի տողով միայն տեղեկություն ենք հաղորդել «Կոչնակ»-ի մեջ. 1936, էջ 492։ Ավետարանի նկարագրությունը ձեռքի տակ չունինք, ուստի և նույնպիսյամբ մեջ ենք բերում այդ տողերը։

«Այս ավետարանը Իգնատիոս նկարչի գործն է ըստ փոքրիկ հիշատակարանի։ Սրվեսաը միանգամայն նման է, նաև նույն մոտիվների կրկնությամբ,

[7] Տե՛ս մեր «Նյութեր և ուսումնասիրություններ», Ա պրակ, եր. 35։

Նույնանուն նկարչի (այլ գործերին)[8] որ ապրում էր ԺԴ դարի առաջին կիսում. Թվականով ձեռագիր ունինք նորա ձեռքով պատրաստված 1214 թվականից և 1236 թվականից։ Ինձ հայտնի են նորա երեք նշանավոր գործերը, որոնցից մեկը գտնվում է Վենետիկի Մխիթարյանց մատենադարանում, երկրորդը գտնվում է Ս. Էջմիածնի պետական մատենադարանում և երրորդը՝ ավելի շատ մանրանկարներով, Պարսկաստանում՝ Նոր Ջուղայի Հայոց Ամենափրկիչ վանքի մատենադարանում»[9]։

Երկրորդն է՝ նախկին սեփականություն Ռափայել Սիրոյի, որ այժմ գտնվում է Չիկագոյի Համալսարանի մատենադարանում, որի ուսումնասիրությունը տպագրեցինք «Հայաստանեայց եկեղեցի»-ի մեջ (մայիս, 1940) և այժմ արտատպվում է առանձին սույն պրակի մեջ։

Երրորդը գտնվում է Կալիֆորնիայում մասնավոր սեփականություն պ. վ. Սիմոնյանի։

Ձեռագիրը ավետարան է, մագաղաթ, տարաբախտաբար վատ պահված, տեղ-տեղ թրջվելուց սևացած կամ փտած և պակաս տեղերը թղթով նորոգած. արևելյան հին բոլորգրով, որ ուրիշները անցման երկաթագիր են անվանել։ Մեր ձեռագրերի մեջ արևելյան բոլորագիրը, նույնչափ հին է, որչափ և խոշոր կամ միջին երկաթագիրը. արևելյան բոլորագիր ենք անվանում, որովհետև ունի Կիլիկյան բոլորագրի բնորոշ գրերը, ինչպես եռամատ ա-ը, յ-ն, ց-ն ևն.։ Ապա ուրեմն նա աճցման գիր չէ, այլ հայ գրի մի տեսակը։ Արևելքում գրված շատ ձեռագրեր, հատկապես ճառընտիրներ այդ գրով են գրված։ ԺԴ և հետագա դարերում միայն սկսում է իշխող դառնալ Կիլիկյան բոլորագիրը, որ մեր ներկա տպագրության տառերն են։ Գրիչը Իգնատիոսն է, հիշատակարանների համաձայն. Ղուկասի և Հովհաննու սկզբնազարդերի կամարների տակ եղած փոքր երկաթագրով հիշատակարանները ճիշտ նույն գիրն են, ինչ որ նույն գրչի էջմ.—ի թիվ 879/928 ն. ց. ձեռագրի հատակոտորը։ Բայց Իգնատիոսն է անկասկած, նաև նկարիչը, ի նկատի ունենալով զարդագրության և նկարների առանձնահատկությունները։ Լուսանցքի զարդերից շատերը հիշեցնում են Բագնայրի ավետարանը, միայն ավելի փոքր դիրքով։ Նույնը կարող ենք ասել և ավետարանների սկզբնազարդերի մասին։ Տերունական պատկերներ չունինք այս ձեռագրի մեջ, իսկ ավետարանիչներից կտրված են Մատթեոս և Մարկոս։ Մնացած են միայն Ղուկաս և Հովհաննես իրենց սկզբնազարդերով. պատկ. 5 և 6։ Պատկերագրությունը հիշեցնում է մի անգամայն Նոր Ջուղայի ավետարանը. դեմքերը նույնը և թեթև կարմրացրած այտերով։ Նույնը է և համեմատաբար լավ պահված Պրոխորոն պատանին։ Պատկերի ամբողջությունը, այսինքն ավետարանիչը, Պրոխորոնի նստվածքը, աղավնակերպ հոգու սավառնումը, և Աստուծո

8 Փակագծի մեջ եղածը այժմ ենք ավելացնում, պարզության համար։

9 Այս ձեռագրերի մասին տե՛ս մեր «Նյութեր և ուսումնասիրություններ», պրակ Ա։

աջից եկած ճառագայթները իրենց դասավորությամբ և ձևակերպությամբ քո-լորային նման նոր Ջուղայի ավետարանին, համեմատելի պ. Քյուրյանի հրա-տարակության հետ, որ չենք երկրորդում:

Ստացողն է Խաչատուր ոմն, որի մասին տեղեկություն ենք ստանում հի-շատակարանից, ինչպես և Իգնատիոսի մասին: Կան և ուշ ժամանակի հիշա-տակարաններ:

Դրվության ժամանակի հիշատակարաններն են և բնագրի պրով.

ա) Մարկոսի վերջում.

—Ով անարատ գտնինք անարատ հարսին և մանկունք նոր սիոնի յոր-ժամ զմայլիք կենսատու աւետարանաւս զսակաւ աշխատողս յիշեցէք առա-ջի սուրբ և անբիծ խորհրդոյն և ասէցէք ինձ տր ած ողորմեսցի Խաչատրոյ և իւր ննջելոցն. ամէն:

բ) Ղուկասի սկզբնաղարդի կամարի տակ, փորր, գեղեցիկ երկաթագրով:

—Զիգնատիոս մեղաւոր ոսկենկար սբ աւետարանիս յիշեա ի սբ յաղաւթս քո ով տր իմ.

գ) Ղուկասի վերջում.

— Ով մայր լուսոյ և բերկրանաց ածածին միշտ կոյս, ընկալ զաւետարա-նումիին որդոյ քո միածնի...[10] ի Խաչատրոյ որպէս միածին որդին քո զայրուն խերհիշն (տ!), և ողորմութիւն արա մնալ ի վերջին աւուրն (պատկ. 7)» (պատկ. 35):

դ) Հովհաննու սկզբնաղարդի եռակամարի տակ.

— Ջատացող սբ աւետարանիս...[11] և զիգնատիոս մեղաւոր նկարիչ յիշես-ջիք ի տր աղաչեմ.

ե) Երկրորդ ստացողի հիշատակարան, Մարկոսի վերջում, բոլորգրով, թանաքը խոնացած.

— Ով դասք լուսերամից և երկնաշան... (1½ տող չի կարդացվում) շա-փիղայի ընդլուզեալ... (1½ բառ) գարտիւ: Յանգինս գտեալ զածաքաշիս սբ աւետաբերս ճշմարիտ յի քի այ մերոյ: Քանզի ես միայնակեացս կիրակոս յոր-ջորջեալ և մեղաւք տառապեալ ի ծունկս անկեալ առաջի ձեր գարշապարացդ և աղաչեմք զդասքդ սրբազանից, զի յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զկիրակոս սուտանոն և զեղբարքս իմ ըստ հոգւոյ զՅո (վան)էս և զԲումայ և զծնաւղքն իմ և զա(մենայն) մերձաւորսն. և որ յիշէքդ յիշեալ լիջիք ի քէ այ մերոյ՝ որ է ահնեալ յաւիտեանս ամէն: Եւ որք կարդայք կամ աւրինակեք կըր-կին օհնութիեցն... բեցէք, և աղաւթիւք ձերովք օգնական եղէք: Եւ զկիրակոս անարժան միայնակեացս իմ հալալ արդեանց զըրեցի (գնեցի?) զսբ աւետա-րանս և տուի ի Մարտիրոս քահ. յիշատակ ինձ և ծնաւղաց իմոց. ի թվ. Պ.Խ.Ք.

---

10 Հիշատակարանի բովանդակությունից երևում է, որ ավետարանի ստացողները երկու հոգի պիտի լինեին, բայց հետո ջնջված է առաջին անունը:

11 Երկու կարճ տողը ջնջված, կարդացվում է վերջին բառը ասպասաւորս:

Հովնաթան Հովնաթանյան (?—1801/02), Ավետումնկար Մարիամ Էջմիածին, Մայր տաճար:

զ) Նոյն երեսի լուսանցքներում նոր շեղագրով.

— Քան զայս հնագիր և ի վերայ մագաղաթի երկաթեայ գրով գրեալ աւետարան իմ չէր տեսեալ, այլ աւաղ զի յիշատակարանն և թուականն անկեալ էր ի վերջ կուսէ. Հովիւ Սիմէոն Սմբր վրդպա Մամիկոնէն տարօնեցի. յամի 1871 օգոստոս 15 ի Մուշ. ի 1871 ամի օգստ 15 ամսոյ՝ 472 ամ է զկնի զի գրեալ է յիշատակարանս[12].

է) Մի ուրիշ տեղ լուսանցքում.

Աւետարանի սպասաւոր Մամբրէ վրդպա ի տանէ Մամիկոնէից որ ի Տարօն. Հովիւ Սալնոյճորոյ Բաղէշ քաղաքի: 1871:

---

12 Ի նկատի ունի երիցորդ տասնորդի հիշատակարանը:

Ա.

Առանց ժամանակի մենք պատմություն հասկանալ չենք կարող. այդ ճշմարտությունն է, ինչպես պատմության մյուս երևույթների, նույնպես և արվեստի կոթողների նկատմամբ։ Թվականով հին եկեղեցիներ քիչ ունինք համեմատաբար, այն էլ ոչ վաղ, քան յոթերորդ դարը։ Դրանց վերա պետք է ավելացնել և այնպիսիները, որոնք թվականներ կամ արձանագրական աղբյուրներ չունին, բայց պատմական-գրական տեղեկություններով գիտենք նրանց ժամանակը։ Դոցանից հնագույնը Ալաման է, 2 դարի վերջերից[1], Մովսես Եղվարդեցու հակաթոռ՝ Հովհան կաթողիկոսի կողմից շինված. Հոփսիմեան՝ ժամանակակից աղբյուրների և արձանագրությունների հիման վերա, 618 թվից. նույն դարի երեսնական թվականներին շինված են Դայանեն, Բագարանը, Մաստարան, Ալամանը, Մրենը, Բագրևանդի Ս. Հովհաննեսը, կամ Բագավանը, Թալինի փոքր եկեղեցին. վեց հարյուր քառասնական թվերին Զվարթնոցը, վեց հարյուր վաթսունական թվերին Արուճի Ս. Գրիգորը և Եղվարդի Ս. Թեոդորոսը։

Այս տվյալներն, իհարկե, շատ կարևոր նշանակություն ունին մեզ համար. կարևի է ասել է դարի հայ ճարտարապետության, զարդաքանդակի, նաև պատկերաքանդակի մասին այս կոթողները իրենց բաղմազանությամբ, ձևի և հարդարանքի կողմից, տալիս են որոշ և պայծառ գաղափար։ Ծանոթանալով այս շինքերին, կարող ենք որոշել նաև այնպիսի շինքերի մոտավոր ժամանակը, որոնք թվական չունին, ավելի ճիշտ, մենք կարող ենք նրանց postguem-ը *կամ* antiguem *ամենաուշ կամ ամենավաղ ժամանակները որոշել. որովհետև այդ շինքերը ներկայացնում են մի ծաղկյալ վիճակ, կարող եմ ասել ոսկեդարը, շատ կարճ ժամանակի համար, այն է է դարի առաջին կեսը։ Բայց այսքանը բավական չէ հայ ճարտարապետության պատմությունը հասկանալու համար. մեզ համար մութ է նրանց ծագման, զարգացման ընթացքը մինչև է դա-*

[1] *Այս աշխատությունը գրված է շատ տարիներ առաջ. այժմ, երբ աչքի ենք անցնում վերնակատարիս, մամուլին հանձնելու համար, «Լրաբեր» թերթի մեջ տեսանք, հուլիս 26, 1941, Խորհ. Հայաստանից առնված լուրը, տաճարի հիմնադիր Հոհան հակաթոռ կաթողիկոսի հունարեն արձանագրության մի մասի դյուտի վերաբերությամբ, հավանորեն ավերակված տարբը կատարված պեղման ժամանակ։*

րը։ Այդ շինքերը իրենց ամբողջությամբ սոսկի նման չեն բուսել երկնքից իջած գարնան մի հորդ անձրևով, նոքա իրենց հոլովական զեղարվեստական կատարելությունները զարգացման երկար պատմության պիտի ունեցած լինին մինչև իրենց շինության բուն ժամանակը։ Մենք գիտենք հայ Ճարտարապետության ծագիլյալ վիճակը միայն, բայց ոչ նրա սկզբնավորության և տեղության ժամանակը մինչև է դարս։ Լռում ենք դիտմամբ բազիլիկ եկեղեցիների մասին, որովհետև նրանցից ոչ մեկը իսկական չունի։

Բայց կա՞ն ավելի հնագույն եկեղեցիներ իրական մնացորդներով։ Եկեղեցական ավանդությամբ այդպիսի մի կոթող էջմիածնի վանքն է, որի ծագումը հասնում է մինչև Դ դարի սկիզբը, երբ քրիստոնեությունը պետական կրոն հռչակվեցավ Հայաստանում։ Բայց ամեն մի համբակ ասել կարող է, որ ներկա շինքը այնքան փոփոխության է ենթարկված, որ նորանով զարմանալ չի կարելի կազմել սկզբնական վիճակի կամ ձևակերպության մասին, այլ պետք է մասնագետի մանրակրկիտ և խորաթափանց ուսումնասիրություն, ինչպես այդ փորձել է Թորամանյանը, մոտավոր են ենթադրական ձևը վերականգնելու համար։ Ուստի և ամենայն մի նորություն, ջնջված, իհարկե, պատմական տվյալներով, որ մեր ճանոթությունը հայ Ճարտարապետության ավելի հնագույն դարերի է տանում, շատ դնահատելի պիտի համարվի հայ արվեստի նախնական պատմության հասկացողության համար։ Մեղ թվում է, թե այդպիսի մի ավերակ ունինք Պողավանդում, ներկայումս Պողոսի կոչված, որ գտնվում է Քանաքեռի և էլառ կայարանի մեջ, խճուղուց դեպի հյուսիս, ձորի մեջ։

8

Այս եկեղեցու մասին առհասարակ մեր նոր բանասիրության մեջ ոչինչ չկա. միակ տեղեկությունը մեղ տալիս է Շահխաթունյանը. «յայս գիւղ Պողոսի գտանի աւերակ մեծի եկեղեցւոյ ի կոփածոյ քարանցը»[2]։ Ապա ժէ դարի առաջին կեսի համար Ձաքարիա սարկավագը պատմում է, որ պարսիկներն ու օսմանցիք ընդհարվել են մի ավերակ գյուղի մոտ «որ կոչի Պողոնաս»[3]։ Վերջապես ամենահին տեղեկությունն ունինք Վանդի կողմից[4], երբ հիշում է յաթրների մեկ ընդհարումը հայոց հետ, «ի գիւղն Պողոնաս և ի Քալին և ի Կողբ», 730-ական թվականներին։

Տարաբախտաբար ձեռքի տակ չունինք հատակագիծը, որ պատրաստել էր Ճարտարապետ Եղիազարյանցը մեր ներկայությամբ, ընթերցողներին մնում է

---

[2] Ստորագրութիւն Ա.Ն. 1842, եր. 162։ Առաջին անգամ լսել ենք այդ ավերակի մասին Յակարիչ Ջիվանճյանից։

[3] Պատմագրութիւն, 1870, Բ, եր. 17։

[4] Վանդ պատմագիր, հրատ. Եղյանի Ս. Պետերբուրգ, 1887, եր. 144։

մոտավոր գաղափար կազմել լուսանկարով (պատկ. 1)։ Հատակագիծն ինքնըստինքյան նորա հնության մասին շատ բան տալ չի կարող, երկարաձիգ շենք է այն, որմնայեզների վերա հաստատված գմբեթով։ Այս ձևի հնագույն հայտնի եկեղեցին Արուճի Ս. Գրիգորն է՝ Մամիկոնյան Գրիգոր իշխանաց իշխանի կողմից կառուցված 668 թ. և ապա երադգավորսը 9 դարի վերջերում Սմբատ Ա-ի կողմից։ Ունինք և Արագածի արևելյան կողմը Ապարանի Տառաչիշեն, այժմ Մոլլաղասըմ կոչված, գյուղում նման մի եկեղեցի, Ինձունյաց մի շենք, որի մասին խոսք կլինի հետո։

Ընթերցողը առաջարկված լուսանկարից տեսնել կարող է, որ կործանված է ոչ միայն գմբեթը, այլև արևմտյան և արևելյան պատերը. կանգուն է միայն հյուսիսայինը (պատկ.2), (պատկ. 38), արևելյան և արևմտյան պատերի անկյունները, և հարավային պատը կիսով չափ, այն էլ գրսից ուսումնասիրելի միայն վերին կես մասով. ներքևի մասը հարավային կողմից ծածկված է նոր եկեղեցու շենքով։ Բայց այս չափն էլ բավական է եկեղեցու ձևի և հատակագծի մասին լիովին գաղափար կազմելու, մանավանդ թեթև պեղումներով պարզվեցավ ափսիդի և հարակից սենյակների ձևն ու հիմնապատերը։ Ափսիդը բոլորակ է ներսից. բոլորակ են նաև կողքի սենյակները արևելյան կողմից, որ գրսից անկյունավոր են և միայն ափսիդի մոտ բոլորականում են և խորշ կազմում. Պաղավանքը ափսիդի արտաքին մասով զանազանվում է յուր նմաններից, օրինակ Արուճից (պատկ. 31), (պատկ. 39), որի նման է նաև Հռիփսիմեն (պատկ. 4), (պատկ. 40) այս կետում։ Սենյակները կամարակապ էին և սրանց վերա կար կրկին սենյակ երկարութիւնամբ արևմուտքից արևելք ձգված. բայց ոչ շատ բարձր. տեղացիներից շատերը տեսել են այդ սենյակները չքանդված վիճակում. այս երևույթը արժանի է ուշադրության հայ ճարտարապետության ուսումնասիրության համար։ Միջանկյալ հայտնենք, որ այդպիսի կրկնահարկ սենյակներ կան Հռիփսիմեի տիպի ավելի հին տաճարի հարավային կողմից՝ Ադիյաման գյուղում, Արագածի արևմտյան լանջերին, Կամսարականների շենք։ Հռիփսիմեն չունի երկրորդ հարկի սենյակները։

Արևմտյան պատը ուղղանկյուն էր. մնացած է հյուսիսային կողմի մի մասը, նաև լուսամուտը կիսով չափ. նման մի լուսամուտ էլ ձախից հարավային կողմից պիտի լիներ, և ապա բարձր պատի ճակատին երրորդը, ինչպես հյուսիսային պատից մակաբերել կարող ենք։ Ներքևում արևմտյան դուռն էր։ Այս մասում էլ համեմատելի Արուճի արևմտյան պատի հետ, միայն վերջինս ճակատին իրար կից զույգ լուսամուտներ ունի։

Համեմատաբար ամենից լավ է պահված հյուսիսային պատը (պատկ. 2), որ և լիովին գաղափար է տալիս եկեղեցու կազմության մասին գրսից և ներսից։ Պահված է հյուսիսային դուռը յուր վիթխարի ճակատաքարով և դուրս ընկած կամարով. դռան երկու կողքերից մի-մի լուսամուտ, ապա դեպի արևմուտք ձգված թևի վերա զույգ լուսամուտներ, պակներն իրար միացած. արևելյան

Քեի վերա սրանց ուղղությամբ միայն մի լուսամուտ է, իսկ երկրորդն էլ քիչ ցած, որ սենյակի համար էր։ Այս անհամաչափությունը ճշտությամբ կրկնված է և Արուճի վերա, մի տարբերությամբ, որ այնտեղ մի-մի լուսամուտ ավելի է երկու կողմից, շենքի ավելի մեծ լինելու պատճառով։ Հյուսիսային պատի Շակատին, դռան դլխին, դարձյալ մի լուսամուտ, մինչդեռ նույն տեղում Արուճը, բնականաբար, երկուսն ունի։

Ձիշտ նույն կազմությունն ուներ արտաքուստ և հարավային պատը. ներսից նկատելի է հյուսիսային դռան դիմուրկ և հարավային դուռը. իսկ դրսից դեպի արևելք ձգված քեի վերա երկու լուսամուտ, երրորդը՝ ավելի ցածընկած լուսամուտը՝ պիտի լիներ, որ քանդված է ամբողջ պատի հետ։ Այստեղ էս, պատի ճակատին, կա մի լուսամուտ, իսկ դեպի արևմուտք ձգված քեի քանդված լինելու պատճառով, նկատվում է միայն մի լուսամուտի կես մասը։

Հյուսիսային պատի և տանիքի մնացորդները (պատկ. 2) քեի դրսից, քեի ներսից, դարձյալ մեզ լիովին գաղափար են տալիս ամբողջի կազմության մասին. նա նման է եռանավ բազիլիկ շենքի կառուցի, ճակատ կազմող պատի երկու կողմից դեպի արևելք և արևմուտք ձգված է կողքի նեղ նավի (բազիլիկայի համեմատությամբ) քեք կառուցը, ապա բարձրանում է միջին կամարի հիմք կազմող ավելի բարձր պատը, որ միացած էր հանդիպակաց հարավային պատին բարձր կամարով, ինչպես եռանավ բազիլիկ շենքի միջին, բարձր նավի պատերն ու կամարը։ Այդ պատի վերա, արևմտյան մեկին նկատվում են չորս փոքրը քառանկյունի բացվածքներ առանց զարդի կամ պսակների, ինչպես սովորական լուսամուտներն ունին, որ շատ կարևոր նշանակություն ունին այստեղ երևան եկած արվեստի հուշանքները հասկանալու համար։

Կառուցը ծածկված էր կղմինդրով, որից բազմաթիվ կտորներ գտանք, ինչպես մեր բազիլիկ բոլոր շենքերը, Քասախը, Տիկորը, Երերույքը, Օձունը, բացի Աշտարակի Կարմրավոր Աստվածածնից, որ դրսից խաչաձև մատուռ է, ոչ ուշքան է դարը։

Բայց Պաղավանքը եռանավ բազիլիկա չէ, նախ կառուցը դրսից խաչաձև էր, այդ դիրքն ստացած գմբեթի պատճառով, որ բուն բազիլիկաները չունին. ապա կողքի նավերի փոխարեն, դուրս ընկած որմակիցների կիսախոյակների վերա հաստատված երեք աղեղներ (պատկ. 1), որոնք ընդարձակում են ներսի տարածությունը ըստ լայնության և ըստ երկարության։ Միջին աղեղները անկյուններից կապված էին իրար հետ կամարագոտիներով, որոնց վերա հանգչում էր գմբեթը։ Պահված են միայն հյուսիսային ու արևելյան կամարագոտին, երկու աղեղներով և աղեղնամիջերով և գմբեթի հիմքի փոքրիկ մնացորդով (պատկ. 6)։

Ոչ մի կասկած չկա, որ Պաղավանքը երկարածիգ մի շենք էր, գմբեթավոր, առանց անջատ մույթերի, շատ երևույթներով կապված Միջագետքի բազիլիկ շենքերի հետ։ Հենց առաջին հերթին ընթերցողի ուշադրությունից չպիտի վրիպել

ազեղների հիմք կազմող կիսախոյակները իրենց զարմանալի, որ հոնիական խոյակների հետքերն են (պատկ. 6), հելլենիստական ազդեցության ապացույցներից մեկը Միջագետքի վերաբով. մեր ճարտարապետության մեջ վերջին երեսլիները Զվարթնոցում և Բանայում: Այդ ազդեցությունը աչքի է ընկնում եկեղեցու պատկերաքանդակներով և զարդաքանդակներով: Վերջիններս հարավային պատի արտաքին տեսանելի մասը. մնացածը ծածկված նոր եկեղեցու հյուսիսային պատով, վերևի նկարագրությունից երևացավ, որ գմբեթ դնելի արևելք եղած թևի վերա մնացել են երկու լուսամուտ. առաջինը, որ դուռն ավելի մոտ էր, պակ ունի պատկերաքանդակներով զարդարված, վերին աստիճանի հետաքրքրական. պակի կեսորնում, ուղիղ լուսամուտի ճակատին երկու թևավոր և սավառնող հրեշտակներ բռնել են Հիսուսի, սկավառակի վերա քանդակված մեդալիոնը, ավետարանը ձախ թևով կրծքին սեղմած, ապա երկու կողմից երեք նման մեդալիոններ շարված դեպի պակի ցած իջնող թևերը, որ առաքյալների դասն է, բոլորն էլ լուսապսակով, ինչպես և Քրիստոսն ու սավառնող հրեշտակները:

Քրիստոսի և առաքյալների ներքնազգեստի վերայից ձգված է վերնազգեստ, ուշադրության արժանի ծալքավորումներով, ոչ հունահռոմեական, այլ արևելյան ձևով: Քրիստոսը և առաքյալները մորուք ունին և գլխի մազերը ճակատի վերա հավասարապես կտրված և վերից վար սանրված, կարծես հատ-հատ: Պատկերներն էլ մաշերևույթից շատ քիչ դուրս ընկած, այնքան հարթաքանդակ: Հիսուսի դեմքի վերին մասը նղծված է մասամբ, բայց երևում են մորուքը և ուսերի վերա թափված մազերը:

Պակի հորիզոնական թևերի վերա, նայողի ձախ կողմից, քանդակված է մի ձիավոր, վազող ձիու վերա, ադեղը քաշել է առյուծի կամ վագրի վերա, պարզ չէ: Ձիավորը հագել է մինչև ծնկները հասնող գոտեվորած բաճկոն, կիսաշեմ, գլխարկի ձևն անորոշ, հետևի կողմից ջարդված լինելու պատճառով. ջարդված են մասամբ և քիթն ու բերանը: Մասամբ տեղի փոքրությունից և մասամբ գուցե և որսը վերաշորված ցույց տալու նպատակով, առյուծը հանված է անբնական: Ընդհակառակը վատ չէ վազող ձին գեղարվեստական բնականությամբ, պոչի հանգույցը սասանյան արվեստի մեջ ընդունված ձևով. երևում է ձիու թամբը, սանձը և պոչակալը զարդաբանքներով: Այս պատկերաքանդակի գլխին գրված է ՄԱՆՈՒԵՂ ԱՄԱՏՈՒՆԵԱՅ ՏԷՐ, երեք բառից բաղկացած մի թանկարժեք արձանագրություն, որ ոչ միայն տաճարի հիմնադիրն է մատնանշում, այլև հայ հնագրության ամենահին մնացորդներից մեկն է, Զ դարի առաջին կեսից, ինչպես կտեսնենք, երբ շենքի ծագման ժամանակը կպարզենք[5]:

Պակի մյուս թևին, նայողի աջ կողմից, վերջին մեդալիոն պակի տակ,

---

[5] Ամբողջը միջին, ուղղանկյուն երկաթագրով. ուշադրության արժանի է, որ Ց բոլորագրի ձևով է. տ-ն փոքր-ինչ փշացած է:

նկատվում է մի սիրամարգ, պոչը վեր բարձրացրած, բայց առանց փռելու, իսկ բան ինի վերա ձախ ոտով ծունկ է չոքել մորուքով և գլխի գանգուր մազերով մի մարդ, նիզակին ուղղած հարձակվող առյուծի վերա։

Այս լուսամուտից դեպի ձախ արևմուտք, տեսնում ենք մի արմավենի, տակը առյուծ կանգնած, գունը փոքր-ինչ կոտրած, պոչը կախ երկու ոտների մեջ։ Սրանից դեպի արևմուտք քանդակի մի մնացորդ որթատունկ, տերևով և ավելի բարձր, հարավային պատի ճակատի լուսամուտի մնացորդն է, խազդեր և տերևի փոխանփոխ շարքով, որից դեպի արևելք հետևյալ արձանագրությունը կա. «Ես Յովա ևս ծառայ այ և սուրբ խաչին», դարձյալ միջին երկաթագրով, բայց ոչ նախընթացի ժամանակակից։ Պահակերաքանդակներով զարդարուն լուսամուտից դեպի արևելք կա դարձյալ մի լուսամուտ, պահք ելնդավոր կիսագնդակներից բաղկացած։ Արմավենին, որթատունկը, ողկույզի և տերևի փոխանփոխ շարքով, գնգաձևերից կազմված զարդը բոլորակների մեջ, բոլորը հատուկ են մեր հնագույն բազիլիկաներին, ինչպես Քասախն (պատկեր 7, 8) կամ Ափնայի բազիլիկաները (պատկեր 20) իրենց դռների ճակատաքարերի քանդակներով, ե—Զ դարի գործեր։ Քասախի ամբողջ շենքի պատմաձև կամարները, անազարտ մնացած է հարավային նավը, հարավային և մանավանդ արևմտյան դռան ճակատաքարերի քանդակը, խաչի պարանին և բնվերին գնդակները, խաչի երկու կողմից հղկերանները և մանավանդ արմավենի ծառերը, հայտարարն են նորա միջադեմական ազերսի և ոչ ուշ քան Ե դարը։ Քասախի և նման խոյակների գոյությունը, որպես միջադեմական հոսանքի ազդեցության, հաստատում է Սթրժիգովսկին, համարելով Դ—Ե դարերի գործ[6]։

Հյուսիսային պատը շատ ավելի առատ նյութ է պահել զարդաքանդակների կողմից. լուսամուտների պատկազարդերը մասամբ նույնանում են է դարի մեզ հայտնի եկեղեցիների լուսամուտներին, ինչպես Արուճի և Հռիփսիմեի վերա, բայց և բոլորովին տարբեր. դռան կողերի և կամարի գուրս ընկած մասի մակերևույթը ծածկված են իրար հետևող ականթի այնպիսի շարքերով, որ սովորական չէ նույն ձևով է դարի տաճարների քանդակագործության մեջ, այլ երևում են միայն հնագույն գերեզմանական կոթողների վերա, որից մի օրինակ տալիս ենք անմիջապես (պատկ. 9)։ Ապա դեպի՝ աջ դույզ լուսամուտների իրար միացած պատկերի պատաձև զարդաքանդակների մեջ իրար հետևող թռչունների շարքը հիշեցնում են ասորական Բարուլայի ավետարանի կամ մեր հին, ժ դարի ավետարանների կամարները, իրենց վերայի թռչուններով (պատկ. 10), համմատելի նաև Աղցի Դ դարի դամբարանի դռան կենդանական քանդակների հետ, որոնց մասին խոսք կլինի հետո։ Մծբինում Մար Հակոբ (Mar Jacoub) եկեղեցին, շինված 338 կամ 359 թվին, ունի ձևի կողմից դույզ լուսամուտներ

[6] Koptische Kunst, եր. 65, պատկ. 85, 7334։

իրար կցված, ինչպես Պաղավանքում, բայց պսակների քանդակները տարբեր[1]: Անսովոր է նաև լուսամուտներից բարձր գարնգի զարդաքանդակը անոթների շարքից կազմված: Ապա արևմտյան պատին հյուսիսային կողմի բարձր լուսամուտի պսակը շուշանածաղիկներից կազմված, որ ինչպես կանոնները սահանյան—հելլենիստական, միջագետական շրջանին է հատուկ: Շուշանածաղիկների այս քանդակը վերջիններից մեկը պիտի համարել հայ ճարտարապետական քանդակագործության մեջ: Է դարի եկեղեցիների վերա չենք նկատում այդ մոտիվը, բացառությամբ Զվարթնոցի, այն էլ բավական այլափոխված, որ նույնպես միջագետական շատ տարրեր ունի:

Գ

Այժմ փորձենք պարզել Պաղավանքի ծագման ժամանակը. հենց առաջին հայացքից կարելի է ասել, որ է դարի կեսերից ուշ չէ, եթե համեմատելու լինինք նույն դարի թվականով մեզ հայտնի եկեղեցիների հետ: Արտաքին կառուցվածքը, լուսամուտների զարդաքանդակները, ամբողջ շենքի շուրջը որպես պատվանդան երեք աստիճանները, հատուկ միայն մեր հին եկեղեցիներին, համոզում են մեզ առանց այլևայլության այս տպավորության ճշմարտության մեջ: Բայց հենց մեր առաջ դրված օրինակն էլ ցույց է տալիս միևնույն ժամանակ, թե որքան զգույշ պիտի լինինք այսպիսի խնդիրներում. պատճառն այն է, որ թվականով հայտնի եկեղեցիների շրջանը ավելի չէ, քան կես դար, բայց նման անթվական շենքերի թիվն ավելի մեծ է, որ կարող են ավելի հին լինել և են, քան թվականով եկեղեցիները:

Բարեբախտաբար Պաղավանքի և մի շարք վանքերի համար մենք ունինք մատենագրական վավերական և ճիշտ տեղեկություններ է դարի սկզբից, որոնց վերա հարկավոր ուշադրություն չենք դարձրել մինչև այժմ: Գիրք Թղթոցի մեջ պահված ձեռնարկներն են դրանք կամ եկեղեցական ժողովների արձանագրությունները: Հայտնի է, թե Ջ դարի վերջերում ինչպիսի երկպառակություններ էին ծագել հայոց եկեղեցում, Մորիկ կայսեր վարած քաղաքականությամբ, և ներսում ծագած երկպառակությունների ու դավանաբանական վեճերի պատճառով: Հայրապետական աթոռից բաժանվել էին ոչ միայն վրացիք, այլև նրան ձգտումներ էին ցույց տալիս աղվանները, սյունեցիք և Բյուզանդական կայսրության մաս կազմող Հայաստանի եպիսկոպոսներից ոմանք: Սրա հետևակ ժամանակի կաթուղիկոսական տեղապահ Վրթանես քերթողը և Սըմբատ Բագրատունին աշխատում են խմբել եպիսկոպոսություններն ու վանահայրությունները հայրապետական աթոռի շուրջը և միությունն ամրացնել: Այդպիսի մի միության ձեռնարկ Ապրվեզ Խոսրովի ժէ տարուց, որ համապա-

[1] Strzygowski. L'ancien Art Chrétien de Syrie. Գաղ. 87. Sarre und Herzfeld. Archeologishe Reise in Euphrat und Tigris—Gebiet. Band II, 342–343.

տասխան է 606 թ., հասել է մեր ձեռքը։ Մի շարք եպիսկոպոսների և վանքերի հայրերի հետ ձեռնարկին կամ միութեան թղթին ստորագրել է և «Խրաչել Պաղավանից»։ Այս վավերականը մեր ձեռքն է հասել Դիրք թղթոցի և Ուխտանեսի պատմութեան մեջ, վերջինս ժ դարի պատմիչ է։ Պաղավանքը գոյութիւն ուներ, ուրեմն, արդեն է դարի սկզբում և մենք էր այն վանքերից, որոնց հայրերի ստորագրութիւնը նշանակութիւն ուներ Հայրապետական աթոռի միութեան պահպանութեան համար։ Այսպիսով նորա ծագման ամենաուշ ժամանակի հաստատուն սահմանն ունինք, որ 606 թվականն է։

Բայց այս վավերականը շատ ավելի ուշագրավ է հայ ճարտարապետութեան պատմութեան համար, քան թվում է մեզ առաջին անգամից. ձեռնարկին ստորագրողներն են «Աբրահամ սրբոյ կաթուղիկէի վանից երէց», այսինքն էջմիածնի, «Սամուէլ սրբոյ Հռիփսիմէի, Բաբիլաս (Բարեղաս) սրբոյ Յոհաննու վանաց, Խոսրով Աւշականու, Յաւիտեան Աղիվարդայ, Դաւիթ Երևանայ, Իսմայէլ Գառնոյ, Յունանէս Աւանի, Իսրայէլ Պաղավանից, Ջոջիկ Արամունից (Թղ. Երևանից), Յոհաննիկ Արտաւազդայ ապարանից, Աբաս և Որդեակ և Աբրահամ Փարպիոյ, Միքայէլ Աղցից, Գորգիս, Ուխտանէս, Գրիգորիս Արճոյ, Կոզմաս Ուրդայ, Մայէն միւս Արճոյ, Յոհաննիկ Արծափաց, Սիմոն Դատ աւանից, Ուխտանէս Դարունից, Սամոտ Բագարանի և այլ վանից երիցամբ հանդերձ»[8]։

Այս ցանկը մեր առաջ դնում է մի զարմանալի իրողութիւն, որ հայ ճարտարապետական արվեստի մասնագետների ուշադրութեան կմատուցանեինք. նախ այստեղ հիշված եկեղեցիների մեծ մասը բազիլիկ եկեղեցիներ են, որոնց մնացորդներն ունինք մենք։ Հոհաննա վանքի ներկա շինութիւնը ԺԴ դարի ստեղծագործութիւն է, բայց նորա հյուսիսային կողմը կա մի նավանի եկեղեցի, որի մի քանի նշաններից պարզ է, թե նա է դարից առաջ հիմնված մի շէնք է, մեծ նորոգութեան ենթարկված, բայց և հնագույն մնացորդներով, որպիսին մուտքի կողապատերն են (պատկ. 11)[9] և ներսից պայտաձև կամարի մի մնացորդ, որ մեր հին և բազիլիկ եկեղեցիներին են հատուկ։ Հոհաննա վանքը հիշվում է 603—606 թթ. վավերական և ժամանակակից թղթերի մեջ[10]։ Ապա ուրեմն խորին հնութեան հիմք ունի այն ավանդութիւնը, թե նա շինված է Լուսավորչի ձեռքով, ուրեմն Դ դարի սկզբում։ Օշականի եկեղեցին նույնպես բազիլիկա էր, հատակագծի մնացորդներից դատելով, այլև նկարիչ Կուսիկյանի ձեռքով պատրաստված նկարից, որ այժմ գտնվում է էջմիածնի մատենադարանում. այդ եկեղեցին հիշվում է Ե դարի առաջին կիսում, Ս. Մեսրոպի թաղման առթիվ[11]։

---

[8] Գիրք թղթոց, եր. 151։

[9] Համեմատելի երևույթի հարավ արևելյան դռան կողասյուներին. Strz. 413, ավելի հիշտ Իրինդի, 133 եր.։

[10] Գիրք թղթոց, եր. 111։

[11] Կարիճ, եր. 45, Վենեփկ։

Աղիվարդի, նաև Եղվարդ կոչված, երկու բազիլիկ եկեղեցիները մեզ հայտնի դարձան Խաչիկ վարդապետի պեղումներով, մեկը երեք նավանի, ոչ ուշ քան 9 դարի կեսերը, իսկ մյուսը մեկ նավանի, ավելի հին։ Հին գերեզմանատանը, բլրի վրա, կա երբորդ մի նավանի մատուռ, կիսախոյակների քանդակներով նման Քասախին կամ Տիկորին։ Դառնիի եկեղեցին նույնպես բազիլիկա է, մնացած է հյուսիսային պատը յուր որմայնեցներով և այլ մնացորդներ։ Փարպիից հիշատակված են երեք հայրեր, երկու բազիլիկաների ավերակները գոյություն ունին մինչև այսօր, մեկը Տիկորի և Քասախի նման խոյակներով, իսկ մյուսը մի նավանի, 9-ի դարում բերդի վերածված և հաստ պատերով ամրացված դրսից, ուստի և ավելի լավ պահված լուսամուտների շատ արխայիկ կամարներով, հավասարակող խաչերով և այլն։

Աղցի եկեղեցու հետքերը ցույց են տալիս, որ նա մեկն է մեր հնագույն բազիլիկ եկեղեցիներից. նրա մոտի ստորերկրյա շենքը 7—8 դարի գործ, դամառդեմ երկու գերեզմաններ պատի մեջ փորված, կատակոմբների նման, կողքերի սալաքարերը քանդակներով ծածկված, հարավայինը երկու բաժանմունքով. մեկը հավասարակող խաչ պսակի (պատկ. 2), (պատկ. 41), հորիզոնական թևերին դիմադեմ մի-մի աղավնի, բոլորակի մակերևույթը ծածկված որթատունկի ողկույզով, ծիլով և տերևով[12]։ Մյուսը մարդկային մի մերկ ֆիգուր, որ նեռահար է արել դիմացի վարազին։

Հյուսիսային դամբարանի սալաքարի քանդակը բուսական է և բոլորովին եզակի հայ հին քանդակագործության մեջ։ Տարաբախտաբար մեր ջանքերը պայծառ լուսանկարելու, առանց լուսավորության միջոցների, անհաջող անցան. իսկ բոլորակի մեջ խաչը լուսանկարված է Աշխարբեկի էստամբուժից։ Դամբարանի մատրան դռան կողաքարերի և կամարի վերայի քանդակները կենդանիների շարքով և ճակատի փոքրիկ հավասարակող խաչով, նույնպես նորա հնության ապացույցներից մեկն է[13]։ Համարում ենք 9 դարի գործ։ Ըստ Խորենացու Աղցը ամառանոց էր և հայ թագավորների գերեզմանատուն։ Եկեղեցին էլ հավանորեն նույն ժամանակից։ Այստեղ ևս ունինք գերեզմանական քառանկյունի կոթողների մնացորդ պատկերաքանդակներով, որ հատուկ էր, ինչպես կտեսնենք, բազիլիկաների շրջանին։

Արուճում ևս եղել է մի բազիլիկ շենք, ավելի հին, քան Գրիգոր Մամիկոնյանի շինած երկարաձիգ մեծ տաճարը 668 թ., որի մի խոյակը Քասախի կամ Տիկորի ձևով և քանդակով, բերել ենք էջմիածնի թանգարանը[14]։ Եթե մեր կողմից ավելացնենք Արարատյան երկրի կետրոնական շրջաններում եղած բազիլիկաների մեզ հայտնի շենքերը, կստանանք մի սուղար բազմություն։ Հավանո-

[12] Տե՛ս մեր «Հավուց Թառի Ամենափրկիչը», Երուսաղեմ, 1937, եր. 47։

[13] Մեր հոդվածը Տարոնի Ս. Դպրոցի կամ Առաքելոց վանքին դուռը։ Զվարթնոց (Բյուլետանի) Տարեգիրք, 1937, եր. 148։

[14] Strzygowski, Die Baukunst. պատկ. 439, 440, 441։

բեն մի բազիլիկ շենք է եղել հին Վաղարշապատում, բացի հինգ հայտնի տաճարներից և Զվարթնոցին կից հին բազիլիկայի մնացորդից, որ երևան եկավ հաչիկ վարդապետի պեղումներից հետո, որովհետև Դայանեի վանքից քիչ դեպի արևմուտք գտնված են բազիլիկ շենքի քանդակներով մնացորդներ և գերեզմանական մի կոթող, որ բերված էին էջմիածնի թանգարանը, եթե դրանք Եղր կաթուղիկոսի շինած ներկա տաճարից առաջ եղած մատուռի շրջանից չեն: Ապա բազիլիկ շենքերի մնացորդներ կան իրար կից գտնված Աշտարակում, Ղզղըլ-Քամիրում (այժմ՝ Պինվնետ կոչված), (այժմ՝ Ոսկեվազ, Աշտարակի շրջան—կազմող), Ագարակում, Բյուրականում, Արագածի արևելյան փեշերին Ապարանի շրջանում Ափնա, Աստվածընկալ, Քասախ (Բաշ Ապարան), (այժմ՝ Ապարան, Ապարանի շրջան—կազմող), որոնք դիմաց Քասախի մյուս, ձախ ափին, Ծառայիշենն, այժմ՝ Մուլա Դասբմ, գուցե նաև, Սամադարվիշ, որի եկեղեցին, թեև նորոգած յուր վերին մասերով, բայց ունի նույն շրջանին հատուկ քարեր և քանդակներ պատերի մեջ (պատկ. 13), ուշադրության արժանի բոլորակի կիսասյուներով: Արագածի հարավային լանջերին Ավանում, որի մի խոյակն ունինք այստեղ ձեռքի տակ (պատկ. 14), ինչպես և նույնանուն Ավանում, Քանաքեռից քիչ դեպի հարավ և Երևանից դեպի արևելք: Խոյակի արձանագրությունն է.

Քս ած աւրհնեա
ալ ես յաւիտեա
նս յիշէ քս ստէ
փանոս ի քո թագ
աւորութեան

Յուր պարզությամբ և բառերով հիշեցնում է Կոմիտաս կաթուղիկոսի արձանագրությունը Հռիփսիմեի արևելյան ափսիդի պատին: Սա էլ մեկն է հայ գրի հին մնացորդներից:

Նման եկեղեցիներ կային և Հայաստանի այլ գավառներում. Սյունյաց երկրումն էր Սիծեռնավանքը, ամենամեծ բազիլիկան մեր երկրում, վեց պիլոնների և համապատասխան որմնասյեների վերա հաստատված կամարներով[15], մինչդեռ Տիկորը, Քասախը, Եղվարդը երեք-երեք պիլոններ ունին միայն: Տարաբախտաբար այդ շենքը չենք տեսել անձամբ, իսկ տեղեկագրող Ե. Լալայանցն էլ մանրամասնություններ չէ տալիս: Լոռիի շրջանում ևս ունինք նույն ոճի հնագույն մնացորդներ, ինչպես Բլրդաձորի և Խոժոռնիի ավերակները, բայց մանավանդ Ծոփք և Ածոփ կոչված հին վայրի միանավ, հետաքրքրական բազի-

15 Գուցե և հինգ-հինգ: Հավանորեն նույն ոճի, ձևի և մեծության եկեղեցի էր և Գվինի Ս. Գրիգորը, որ բացվեցավ հաչիկ վարդապետի պեղումներով, վերաշինված հեի տեղ, Սմբատ Բագրատունու և Աբբահամ Կաթուղիկոսի ժամանակ. Սեբեոս, ԺՀ գլ.: Հատակագծի մնացորդը Strzygowski, Die Armenische Baukunst. եր. 164. պատկ. 192:

լիկան (պատկ. 15), (պատկ. 42), վերջապես Կոռիի շրջանին կից Դուզախի Կողմավանի ավերակ եկեղեցին, որ թեև պեղումներ չեն կատարված եկեղեցու հատակագիծը և մանրամասնությունները պարզելու, բայց պատահական կերպով երևան հանված քանդակները կասկածի տեղիք չեն թողնում, որ միջագետքական-հելլենիստական ազդեցության ակնհայտնի մի երևույթ ունինք այստեղ, որ կտեսնենք հետո։

Այսպիսի բազիլիկ շենքերի մեծ բազմություն Զ. հավանորեն նաև ավելի հին դարերում, ցույց են տալիս այս ոճի նախնական և ուժեղ հոսանքը Հայաստանում, որ ըստ Բորամանյանի հնագույնն էր, և մինչև հինհանոսության շրջանները հասնող, իսկ ըստ Ստրժիգովսկու եկեղեցու պաշտոնական ձևը Դ—Զ դարերում։ Իրողության համաձայնելով բազիլիկ եկեղեցիների մեծ հոսանքը մինչև Զ դարի վերջերը, սակայն չենք կարող ասել, թե նրանք եղել են միակ տիրապետող ոճը Հայաստանում։ Տարաբախտաբար, Գիրք թղթոցի ցանկի բոլոր եկեղեցիներին ծանոթ չենք[16], բայց այդ ցանկի մեջ կան եկեղեցիներ, գեղարվեստական բարձր կատարելությամբ, որ բազիլիկ ոճին չեն պատկանում։ Նախ հիշենք, որ Էջմիածինը ե դարի վերջերին գմբեթավոր էր ամենայն հավանականությամբ, թեև գմբեթը փայտաշեն. ապա այս ցանկի մեջ հիշատակված Ավանը Քանաքեռի մոտ, Արամունքը Կոտայքի, Հռիփսիմեի տիպի եկեղեցիներ են, այն էլ իրարից տարբեր ձևերով։ Հռիփսիմեն ինքը շատ հետու չէ այս շրջանից՝ 618 թվին շինված. բացի դրանից, կան նույն տիպի եկեղեցիներ, որ Հռիփսիմեից ավելի հին ենք համարում, ինչպես Ադիլյամանի տաճարն է Արագածի արևմտյան լանջին, կարծում ենք Կամսարականների գործ. ապա Մշկևրի Ս. Խաչը, որ Զուբինաշվիլու նոր ուսումնասիրությամբ Զ դարի գործ է։ Սրանց վերա ավելանում են Օշականի ճանապարհին թարգմանչաց վանքի ավերակները, Զանգեզուրի Դարաքիլիսեն Գորիսի մոտ, Կուրթանը՝ Լոռիում Ջորագյուղի մոտ։

Ահա բազիլիկաներից տարբեր ոճի տաճարների մի սակավ խումբ, որոնք գեղարվեստական բարձր կատարելության են հասած, և ուրեմն, դարերի նախապատմություն ունին, մանավանդ, որ մենք ցույց պիտի տանք, թե գմբեթարդ շենքը ե դարում շատ ընտանի էր Հայաստանում։ Ավելացնենք, որ Արծափը Հռիփսիմեի տիպի կամ ութ անկյունանի (oktogon) մի շենք է, հանդուցյալ Գյուտ եպիսկոպոսի բերանացի մեզ հաղորդած տեղեկություններից դատելով, իսկ Ուրդա եկեղեցին (այժմ Իլանչալան կոչված), նեն ձորի գմբեթավոր հին մատուռը չէ, գյուղից բարձր ավերակների տեղում պիտի լիներ։ Դատվանի, հին Բագարանի և Արտավազդա ապարանից շենքերի մասին տեղեկություն չունինք։ Ուրեմն Թղթոց գրքի վավերականի ցանկով ունինք առնվազն երկու տարբեր ոճի եկեղեցիներ բարձր կատարելությամբ։

[16] Գիրք Թղթոց, եր. 151։

Պաղավանքի գոյությունը մատենագրական վկայությամբ 606 թ. հաստատելով, մենք գտանք միայն նորա ծագման ամենաուշ ժամանակը. իրավունք ունինք ենթադրելու, որ ավելի վաղ պիտի շինված լինի, քանի որ հիշված է այդ թվականից ավելի վաղ վանքերի հետ։ Բարեբախտաբար շենքը ինքը տալիս է մեզ յուր ժամանակը որոշելու հավանական բանալին։ Եկեղեցու նկարագրությունից տեսանք, որ մի ձիավոր պատկերաքանդակ կար առյուծի հետ կռվող, վերևն էլ գրված «ՄԱՆՈՒԵՂ ԱՄԱՏՈՒՆԵԱՅ ՏԷՐ»։ Հայ եկեղեցիների ուսումնասիրությունը ցույց է տալիս, թե հազվագյուտ երևույթ չէր հիմնադիրների պատկերները քանդակել իրենց շինած եկեղեցիների պատերի վրա։ Արագածի արևմտյան փեշերին, Մահմուդճուղ (այժմ՝ Պեռաշեն, Արթիկի շրջան—կազմող) կոչված գյուղում, Հառիճո վանքից և Արթիկ ավանից քիչ աշնմուտք, ունինք մի հնագույն, փոքրիկ եկեղեցի, մեր կարծիքով ոչ ուշ, քան 2 դարի վերջերը կամ է-ի սկիզբը, որի արևմտյան դռան գլխին ներսից, Աստվածածնի քանդակի հետ և մի աղոթողի քանդակ (պատկ. 16), տարաբախտաբար, եղծված վիճակում մեզ հասած, որ եկեղեցու շինողը պիտի լիներ։ Աստվածածնի քանդակի մասին պիտի խոսենք հետո։ Մրենում ունինք կամսարական իշխանների հետաքրքրական քանդակները (պատկ. 17) (Ալիշան, Այրարատ, 155). 638 թվականից. Հարևան Վրաստանում Մցխեթի Ս. Խաչի վերա, խոժոռնի ավանում ունինք մի իշխանի և եպիսկոպոսի քանդակ, Աղթամարում Գագիկ Վասպուրականցու քանդակը ժ դարում (պատկ. 18) (պատկ. 43) Անիում Գագիկ Ա. Բագրատունու, Հաղրատում Սմբատ և Գուրգին Բագրատունիների և այլն։ Մեր տաճարի վերա քանդակված Մանուել Ամատունյար Տերը ոչ այլ ոք է, բայց եկեղեցու հիմնադիրը։ Պետք է աշխատենք գտնել նորա ժամանակը, որով գտած կլինինք նաև եկեղեցու շինության ժամանակը։

Ամատունյաց տոհմը հայ նախարարական տների մեջ առաջիններից մեկն էր, գոնե, Դ և ե դարերում։ Տրդատ մեծ քրիստոնյայի օրով հազարապետության պաշտոնին հասած. հիշվում են Օտա և Վահան Ամատունիները[17], Դ դարի կեսերին ներսես մեծի ժամանակ Կարեն և Պարգև և սորա որդին Մանուել Ամատունի, Արշակ Գ-ի ժամանակները[18]։ Հինգերորդ դարում Հայոց հազարապետն էր Վահան Ամատունի, Ս. Մեսրոպի հուղարկավորը և նորա անվան տաճար կանգնեցնողը, մասնակից Վարդանանց պատերազմին, Նախարարների գերության և դարձին։ Սորա հազարապետության օրով գումարվեցավ 447 թ. Շահապիվանի ժողովը[19]։ Վահանանց ապստամբության ժամանակ հիշվում է «Վարազդատ Շապուհ ի տոհմէն Ամատունեաց», որ բաժանվում է ուխտյանեն-

[17] Ագաթանգեղոս, *եր., 163, 164։*

[18] Փավստոս Բուզանդ, *եր. 28, 31, 49, 81։*

[19] Ասողիկ, *Կանոնգիրք Հայոց, եր. 59։*

րի խմբից և նրանց միաբանությունը մատնում Աւրվշնասպ մարզպանին[20]։ Հինգերորդ դարի վերջում և 6-ի սկզբում Ամատունյաց նահապետն էր Մանդեն, որ մասնակից էր Բաբգեն կաթուղիկոսի ժողովին՝ 505 թվին[21]։ Այնուհետև Ամատունի իշխանի հիշատակություն չունինք մինչև 6 դարի վերջերը, երբ հանդես է գալիս Կոտիտ Ամատունյաց տեր։ Մի խումբ նախարարներ և նրանց մեջ Կոտիտոս, կամենում են ապստամբվել պարսիկներից, բայց երկպառակությամբ է վերջանում խնդիրը, և Մամակ Մամիկոնյանի և Ստեփանոս Սյունիի հետ Կոտիտոսն էլ հնազանդվում է պարսից։ Խոսրով Ապրվեզը հատուկ հրովարտակով նրանց Դուռն է կանչում և դավաճանությամբ հետզհետե սպանել տալիս. Կոտիտոին սպանում են Ճանապարհին, երբ նա դեսպան էր ուղարկված «ի Մըրծուին»։ Նորա մահվան ճիշտ թվականը նշանակել չենք կարող, բայց Սեբեոսի պատմության ընթացքից դատելով, պետք է նշանակել մոտավորապես 600 թվին, երբ արդեն Սմբատ Բագրատունին է սկսում դեր խաղալ իբրև Վրկանա մարզպան և Պարսից սպարապետ։ Կոտիտոի հանդես գալը, ուրեմն, պետք է նշանակել 590—600 թթ.։ Պատկերաքանդակի Մանուել Ամատունյաց տերը պետք է ապրեր 510—590 թվերի մեջ։

Դիրք Ղեվոնդի մի այլ վավերական 552/3 թվականից՝ տալիս է շատ հավանական հիմունքներ, որոշելու նորա ժամանակը։ Ներսես Բ-ի միաբանական թղթերի ստորագրում են մի շարք իշխաններ, ոմանք իրենց տոհմական, և ոմանք, տարաբախտաբար, միայն հայրանունով։ Դոցանից մեկն է «Սահակ ի Մամուեղեան», որին պիտի համարել տաճարի հիմնադրի որդին։ Ուրիշ հանգամանքներ ավելի ևս ճշմարտանման են դարձնում մեր կարծիքը։ Պողպատանքի հյուսիսային դռան վերա եղծված արձանագրության մնացորդներից կարդացվում է «Սահակ» անունը, գրչության ձևից գատելով հին. «Սահկ» անունը կրկնված է նաև հյուսիսային պատի արևմտյան լուսամուտի պսակի քեի վերա. այս տեղը աննշան լինելով, դժվար է ենթադրել, թե շինող իշխանի անունը կամ նորա որդու անունը լինի, հավանորեն այդ Ճարտարապետի անունն էր, ուստի և ոչ պակաս արժեքավոր մեզ համար։ Բայց դռան ճակատաքարի արձանագրության մեջ հիշված Սահակը չէր կարող աննշան մեկը լինել. չէր կարող նաև եպիսկոպոսի անունը լինել, որովհետև ժամանակի եպիսկոպոսը հայտնի էր կոչվում։ Մենք շատ և շատ հավանական ենք համարում, որ Նա խոսրով էր կոչվում։ Մենք շատ և շատ հավանական ենք համարում, որ Նա հենց Ներսես Բ-ի ժողովին մասնակից «Սահակ ի Մամուեղեան»-ն է, այսինքն տաճարի շինողի որդին։ Ի նկատի պետք է ունենալ և այն հանգամանքը, որ երկու որսորդներից մեկը աղեղնավոր է և ձիով, մյուսը հետևակ և նիզակավոր, երկու տարբեր անձնավորություններ, Հայր և որդի։ Այս հավանական ենթադրությունների և տվյալների վերա եկեղեցու շինության ժամանակը նշանակում

20 Ղազար Փարպեցի, եր. 120, էջմ.. հրատ.։

21 Դիրք Ղեվոնդ, եր. 42։

ենք Զ դարի երկրորդ քառորդին։ Մանուել Ամատունյացը համարելով Մանգենի որդին, իսկ Կոտիտոին «Սահակ ի Մանուելանի» որդին։ Մեր նշանակած ժամանակն էլ միանգամայն հարմար է գալիս այդ շրջանին. մի այսպիսի հոլակապ շենք կանգնելու համար, ավելի խաղաղ ժամանակ էր հարկավոր. մեր մատնանշած ժամանակը հենց այդ խաղաղության տարիներն էին, Հուստինոսի և Խոսրով Անուշիրվանի մեջ կռված դաշինքով։

ե

Պաղավանքի ծագման ժամանակի խնդիրը, մոտավորապես որոշելուց հետո, տեսնենք ի՞նչ արժեք է ներկայացնում այն՝ հայ արվեստի և ճարտարապետության պատմության նկատմամբ։ Երկու խմբի կարող ենք բաժանել մեր դիտողությունները, մեկը կապված շենքի մարմնի, հատակագծի և զարդարանքի հետ, մյուսը գմբեթի ծագման։

Ինչպես շենքի ամբողջության, այնպես էլ զարդաքանդակների մեջ տեսնում ենք երկու հոսանք իրար կողքի. մի կողմից երկարաձիգ մի շենք, ներսից բոլորակ կողակով (եր. 8), ներքին տարածականությամբ և կտուրով մոտ հանում բազիլիկներին, մյուս կողմից գմբեթարդ և արևելյան պատի արտաքին մասով և համարախորշերով, նման տեղական այլ տեսակ շենքերին, ինչպես Հռիփսիմեի և Արուճը (պատկ. 3, 4)։ Զարդաքանդակների մեջ ևս տեսնում ենք նույն երկվությունը. մի կողմից հմտեմատների կամ նույն մեր բազիլիկ շենքերի քանդակներին, որոնց ծագումը Միջագետքի և Ասորիքի մեջ ենք տեսնում, ինչպես արմավենի ծառով և առյուծով դաշտանկարը, հարթաքանդակ պատկերագրությունը հարավային պատի լուսամուտի գլխին, արևմտյան լուսամուտի շուշանածաղիկը հյուսիսային դռան ականթը վայնատերև, նույն պատի արևմտյան զույգ լուսամուտների պսակների թռչունների շարքը պայտաձևերի մեջ՝ ճակատին հավասարակող խաչով, որ Բաբուպայի և մեր հին ավետարանների կամարներն են հիշեցնում, ուրեմն և հերկու արվեստների աղերսը։ Սրան վերա պիտի ավելացնենք հարավային լուսամուտի վերա սավառնող հրեշտակները, որոնք Հիսուսի՝ մեզալիոնի մեջ անդրին են բռնել, մեծ նմանություն են բերում Խոսրով Բ-ի Տաք Բոստանի այրի կամարների գլխին սավառնող ոգիների հետ։ Այսպիսի սավառնող հրեշտակներ կտեսնենք և Օձունի վերա։ Նույնը տեսնում ենք Մցխեթի Ս. Խաչ եկեղեցու դռան կամարակալ քարի վերա. այստեղ միայն հրեշտակները բոլորակ շրջանակի մեջ հավասարակող խաչն ունին բռնած, իսկ Պաղավանքում Քրիստոսի մեդալիոնը, ըստ էության միևնույնը. խաչը Քրիստոսի անձի նշանակ քրիստոնեական արվեստի մեջ Բ—Զ դարերում սովորական հասկացողություն է[22]։

---

22 Տե՛ս մեր «Հավուց թառի Ամենափրկիչը», եր. 39 և 49։ Համեմատել A. Grabar, L'art Byzantin. 1938, որ 400 թվականի դործ է համարվում։

Եթե հայը ընդունել է երկարաձիգ բազիլիկաների շենքը միջադեպից և ասորիքից, իսկ բառակուսու գմբեթավորը Իրանից, նա միայն մեքենական և ընդօրինակող չէ, այլ զարգացել է դրանից ընդունած տարրերը և ստեղծագործել հատկապես, երկարաձիգ գմբեթավորը, որ նախակարապետ է հանդիսացել Թ դարում բյուզանդական գմբեթավոր բազիլիկաներին, հայ ծագումով կայսրերի ժամանակ։ Տեսականապես Մորժիգովսկին ընդունում է, որ Արուճի նախատիպը պետք է ծագած լիներ Զ դարում, նորան հայտնի չէին այդ տիպի ավելի հին շենքեր քան Արուճը է դարում և Երազգավորսը՝ իններորդ, բայց ահա Պողավանքը մոտավորապես մեկուկես դար առաջ տալիս է այդ միության կատարված փաստը և այն էլ այնպիսի կատարելությամբ, որ յուր զարգացման նախընթաց շրջանը պիտի ունենար։ Նշանակալից տարբերություն կա, սակայն, երկուսի մեջ. մինչդեռ Արուճի մեջ տեղական հայկական արվեստը հաղթահարել է բազիլիկային, պահպանելով միայն երկարությունը, Պողավանքի մեջ դեռևս զորեղ է միջադետական ավանդությունը յուր հարդարանքներով։

Պողավանքի ոճով և ձևով մի ուրիշ, նուշնաշափ, գուցե և ավելի հին եկեղեցի գոնվում էր Ապարանի Ծառայիշեն, այժմ Մոլլա Ղասըմ, Գնթունյաց շենք։ Գնթունիք, ինչպես և Ամատունիք, պատկանում էին հին նախարարական տներին. Գնթունյաց կալվածներն ընկնում էին Արագածի արևելյան լանջերին, ներկա Ապարանի շրջանում, սահմանակից Ամատունիներին, որոնց կետրոնները Օշականը և Պողավանքն էր, ինչպես տեսանք։ Գնթունյաց կետրոնը պիտի լիներ Քասախը (այժմ Բաշ Ապարան կոչված), յուր երկու մեծ և փոքր բազիլիկ ամենահին եկեղեցիներով. այստեղ գտանք Տրդատի հունարեն արձանագրությունը Գնթունյաց հիշատակությամբ, որ փոխադրվեցավ էջմիածնի թանգարանը. նրանց սահմանների մեջն էր հին Եղիպատրուշը և ներկա Տամջլուն, որի տներից մի քանիսը շինված են ամենահին պալատի կամ բերդի շենքի վերա, նաև ժ և հետագա դարերի հուշարձանների կարևոր մնացորդներով։ Սրանից քիչ հարավ, մոտավորապես երեք մղոն հեռավորությամբ, գըտնվում է հին Ծառայիշենը (այժմ Մոլլա Ղասըմ կոչված), ուր բազիլիկ մի եկեղեցի կար, խոյակները Քասախի կամ Տիկորի նման և հին գերեզմանական մի կոթողի մնացորդ (պատկ. 19), բայց և Պողավանքի տիպի մի եկեղեցի, որ ժամանակակից էր, գուցե, մի քիչ էլ հին նորանից։ Սա ավելի փոքր է, քան Պողավանքը, բայց հյուսիսային պատից դատելով, ճիշտ նույն կազմությունն ուներ ներսից, ինչպես Պողավանքը. մյուս մասերը այս հետաքրքրական շեն-

---

Chrétien de Syrie. Paris, *1936*, եր. 32։ Վրացի գիտնական Ջաւրիճաշվիլու պեղումները Արուճը ավելի ուշ ժամանակի համարելու նկատմամբ, ոչ միայն դամոզեցուցիչ չեն, այլև անընդունելի միանգամայն՝ հայ արվեստին ծանոթ անձի համար։ Այս խնդրին պիտի դառնանք այլ առթիվ, այժմ ձեռքի տակ չունենալով մեր չափագրություններն ու նկատողությունները Արուճի նկատմամբ։

քի, տարաբախտաբար, քանդել են նորոգության ժամանակ։ Աջ դասի որմայեցի երևսին խաղող և գեղեցիկ երկաթագիր տառերով գրված է «ԳՐԻԳՈՐ ԳՆԹՈՒՆԵԱՑ ՏԷՐ»։ Նույնանուն Գնթունի իշխան հիշվում է ժ դարում, Հասանի եղբայրը, որ Աշոտ Երկաթի հակառակորդն էր[26], բայց այս Գրիգորը եկեղեցու շինողը պիտի լինի։ Եկեղեցին հյուսիսային պատի արտաքին որմայեցների պահպանությամբ, նման Երերույքի և Դաունիի հյուսիսային պատերի որմայեցներին, ապացույցն է տալիս, որ նա Զ—է դարի գործ է և ոչ ժ դարի։ Սերոնիների ասելով գմբեթավոր էր։

Հիշատակելի են նաև Աստվածընկալի և հատկապես Ափնա գյուղի երկու փոքրիկ բազիլիկանները, որոնց հարավային դռների ճակատաքարերը նույն քանդակներն ունին, ինչ որ և Քասախը, նույն նաև խոյակով, որ նմանություն է բերում Խոսրով Ապրվեզի Taq Bostan-ի շենքի խոյակին[27], բնականաբար, առանց Անահիտ դիցուհու պատկերաքանդակին, դիցուհու փոխարեն խաչաքանդակ։ Այստեղ կա և մի գերեզմանական կոթող վատ պահված վիճակում, բայց բազիլիկ եկեղեցիների հետ կապված կոթողների նման, որոնց մասին խոսք կլինի այս աշխատության երկրորդ մասում։ Մի եկեղեցի ևս կար Ղարաքիլիսե գյուղում, դեպի Լենինական տանող խճուղու վերա, որ քանդված և տեղը նոր եկեղեցի է շինված. այստեղ էր Հասան Գնթունու արաբական շրջանի ժ—ԺԱ դարերին հատուկ օրորոցաձև գերեզմանաքարը, որ էջմիածնի թանգարան տեղափոխեցինք, նախապես ձգված լինելով գյուղացի մի ննջեցյալի վերա։ Ասել չենք կարող, թե եկեղեցին ո՞ր դարի և ի՞նչ տիպի գործ էր։

Զ

Բայց Պողավանքով պարզվում է և մի այլ խնդիր, թե զարգացման նույն գործոդությունն է կատարվել նաև անջատ մույթերի վերա հաստատված գմբեթավոր երկարածիգի նկատմամբ։ Բորամանյանը Տիկորին նվիրած յուր աշխատության մեջ այն միտքն է արծարծում, թե այդ կարգին պատկանող մեր մի քանի շենքերը իրենց նախնական պարզ ձևերով հեթանոսական մեհյաններ են եղել, ինչպես Տիկորը, Երերույքը, Մրենը, Քասախը, Օձոնը, և ապա վերածվել քրիստոնեական եկեղեցիների, այդ փոփոխության հետ կապելով և նրանց գմբեթավորումը։ Չենք վիճում առաջին մասի կարելիության դեմ, այսինքն, թե բազիլիկ, կավելացնենք նաև, որ քառանկյունու վերա գմբեթավոր շենքեր կամ տաճարներ կարող էին լինել Հայաստանում քրիստոնեության հաստատությունից էլ առաջ, որովհետև նրանց հնագույն երևույթներն իսկ հարյուրավոր տարիների անցյալ է ենթադրում, սակայն նրանց գմբեթավորումը քրիստոնեա-

---

[26] Հովհ. Կաթուղիկոս, *եր., 179—180։*

[27] Sarre. Die Kunst des alten Persiens. 1922. *կամ* F. Sarre und Herzfeld. Iranische Felsreliefs, p. 211, *պատկ. 110։*

կան կրոնի անմիջական պահանջներից չէր բխում. Ասորիքում փառավոր եկեղեցիներ կային առանց գմբեթի և այդ պատճառը չէր պաշտման տեսակետով, այլ ինչպես Պաղավանքի վերա տեսանք, երկու գեղարվեստական հոսանքների փոխադարձ ազդեցության և միության հետևանք, որ վերջնում է եռանավ բազիլիկանների գմբեթավորմամբ և տեղական-իրանական հոսանքի հաղթահարությամբ։ Այդ գործողությունը կատարվում է երկու գծով. եռանավ բազիլիկայից Օձուն, Դայանե, Բագրեւանդի Ս. Հովհաննես, Մրեն, իսկ միանավ բազիլիկայից Սառայիշեն, Պաղավանք, Արուճ, Երազգավորս։ Վերջինը իբրև Բագրատունյաց վերածնության շրջանի գործ։

Օձունի տաճարը յուր անջատ մուլքերի վերա հաստատված գմբեթով և հատակագծով միանգամայն նման է մեր Դայաներին և Մրենին, բայց մի մեծ տարբերությամբ, որ Դայաներում բացի մուլքերից և երկարաձիգ ուղղություններից, գրեթե, ոչինչ չէ մնացել բազիլիկ եկեղեցիներից. յուր օրնամենտացիայով սասանյան արվեստն է հիշեցնում, ընդհանուր առմամբ նույնը կարող ենք ասել Մրենի նկատմամբ[28]. ուրեմն, այստեղ ևս տեղական իրանական արվեստը հաղթող է հանդիսացել, ինչպես Արուճի նկատմամբ տեսանք Պաղավանքի համեմատությամբ։ Դրսա հակառակ Օձունում պահված է բազիլիկ եկեղեցու ազիրսը շատ մեծ չափով, նյութի ընտրության, սրահների պահպանության, պատկերագրության և օրնամենտացիայի մեջ, որ տարաբախտաբար ջարդված և փշացած ձևով հասել է մեզ։

Օձունում երեք շենքեր կան, որ փոխադարձաբար իրար լրացնում են նրանց հնությունը ճշտելու համար։ Դրանցից առաջինը բերդի եկեղեցին է, թեև նորոգության ենթարկված, բայց և այնպիսի արխաիկ ձևերով, որ խորին հնություն են մատնանշում։ Այդ նշանները են նորա իսկական պայտաձև կամարները և քիչ չափով պահված պատկերաքանդակները լուսամուտների շրջանակների մեջ։ Այս եկեղեցին մենք համարում ենք ավելի հին, քան մեծ տաճարը և «զանգակատուն» կոչված հուշարձանը, որ գերեզմանական կոթող է փառավոր, և ներկա գյուղացիների կողմից այդպես կոչված, զանգերն այնտեղից կախած լինելու պատճառով. նոքա իրենց քարով, կառուցվածքով և պատկերագրությամբ ժամանակով հեռու չեն միմյանցից։ Պայտաձև կամարներ և ադեղներ մենք տեսնում ենք և ուրիշ տեղերում, ինչպես Աշտարակի բազիլիկան է, Արագածի Ավանը կամ Թեղենյաց ձորում Քիրաշլուի մի նավանի բազիլիկայի ափսիդն է և նույնը Բայբուրդում, որ գտնվում է Դաման[illegible] ոչ հեռու, Ազատ գետի ձախ վտակի վերա, բայց ոչ մի տեղ այնպես շեշտված, ինչպես Քաւսախն է, որի հարավային նավը անպղպատ է, ինչպես և հյուսիսային պատին կից արևելյան սենյակը։ Այսպես է նաև Լոռիի հյուսիսային սահմաններում Սադախլու գետի միջին հովտում Բրդաձոր և Խոժոռնի գյուղերից դեպի

[28] Strz. Die Baukunst, պատկ. 182, 507։

հյուսիս արևելք գտնված Մոփքը կամ Ածոփը մի նավանի բազիլիկան (պատկ. 15) և արևմտյան կողմի narթեխս—գավիթը, բոլորն էլ պատառաձև կամարներով, որոնց նման է այս կողմից Օձունի բերդի եկեղեցին։ Մոփքի ամենահին բազիլիկաներից մեկը լինելու ապացույցն է ոչ միայն խաղողի որթը հարավային պատին, որ կարող է յուր իսկական տեղում չլինել, այլ շենքի այլ մասից այդտեղ ամրացրած (պատկ. 22), այլ հատկապես նորա կիսախոյակների հազվագյուտ բուսական և կենդանական քանդակները, արմավենու երկու կողմից մի-մի եղնիկ և նրանց հետևից մի-մի առյուծ. արմավենի երկու կողմից (պատկ. 23), (պատկ. 44) եղջերուները համեմատելի են։ Քասախի արևմտյան դռան քանդակի (պատկ. 7) հետ, գարնեղի ալիքաձև արմավենիկի ղարդը Քասախի, Տիկորի և բազիլիկաների մատնանշած խոյակներին (օր. պատկ. 63)։ Մյուս արևմտյան կիսախոյակը (պատկ. 24) կևորոնում հավասարակող խաչի տակ մի փոքր ծառ. հորիզոնական թևերի վերա մի-մի թռչուն, աղավնի, տակը մի փոքր և կողքերից համեմատաբար ավելի մեծ ծառ, որ ձիթենու նմանություն է բերում։ Վերևի գարնեղի քանդակը՝ ալիքաձև արմավենիկը հելլենիստական մոտիվ է, որ հանդիպում ենք նույն հոսանքին պատկանող շենքերի վերա։ Կենդանական մի խոյակ էլ ունինք Քասախում փորր եկեղեցու մաս, մեծից տարբեր, գյուղի արևմտյան կողմը, որ փոխադրել ենք էջմիածնի թանգարանը, մի երեսին մարդակին մի ֆիգուր շան գլխով։

Բերդի եկեղեցին համեմատաբար ավելի հին համարելով Օձունի երեք շենքերի մեջ, պատկերագրության կողմից սորա և Հուշարձանի մեջ արվեստի որոշ նմանություն է նկատվում, իսկ Հուշարձանի (պատկ. 25—25ա), (պատկ. 47) և տաճարի (պատկ. 26—27), (պատկ. 48—49) ծագման նկատմամբ կասկած լինել չէ կարող իրենց նյութի և կառուցվածքի նկատմամբ։ Իրենց կարմրորակ քարերով և արվեստով նրանք պատկանում են Տիկորի և Երերույքի շրջանին, որոնք 8—9 դարերի գործեր են, գեղարվեստական նույն հոսանքի արդյունք, նյութի նմանության հետ նաև իրենց շատ ձևերով և քանդակներով։ Նմանության առանձին ձևերից մեկն էր հարավ-արևմտյան և հյուսիսային սրահները, որոնց հետքերը միայն ունինք Քասախի, Երերույքի, Տառայիշենի (Մոլլա Ղասըմ) և Գառնիի տաճարների վերա, իսկ Օձունում ավելի լրիվ մնացորդներով (պատկ. 26, 27), (պատկ. 48, 49)։ Առաջին պատկերը արևմտյան տեսարանն է, իսկ երկրորդը հարավային ամբողջական տեսարան (տե՛ս Strzygowski-ի գործի մեջ ևս)[29]։ Սրահի կամարները երկարաձիգ պատերի ուղղությամբ կապված էին իրար հետ հինգ քառանկյունի, հարթերես մույթերի վերա հաստատված աղեղներով, որ վերջանում էր արևելյան կողմը ավանդատնով, որ հարավային կողմից մնացած է ամբողջությամբ. նույն էր և հյուսիսային կողմից, այժմ միայն երեք մույթերը մնացած, մնացել է և արևելյան ծայրում

[29] Die Baukunst. der Armenier, եր. 175.

բոլորակ ափսիդը. հարավային և հյուսիսային պատերը երկու որմայեցների վերա հաստատված կամարներով միացած էին տաճարի հետ. նույնը պիտի լիներ և արևմտյան պատը հարավից և հյուսիսից ուղիղ անկյուններով և մեջտեղից պայտաձև մեծ բացվածքով ուղիղ տաճարի դռան դեմուդեմ: Սրահի, տաճարի և զանգակատան գարնեղների վերա նկատվում է նույն խորաքանդակ պայտաձևերի շարքը իբրև զարդ, որ միայն ամենահին գմբեթավոր մատուռների կամ շինների վերա ենք նկատում, ինչպես Կարսի Ագթակն է կամ Ապարանի Ղարանլուխը անտառի մեջ, բայց նաև էջմիածնի հյուսիսային պատի վերին գարնեղը: Դրանց ավելի մակերես ձևերը գործադրված ենք տեսնում է դարի եկեղեցիների լուսամուտների պսակների մեջ, ինչպես օրինակ Հռիփսիմեում, (պատկ. 4):

Սրահների մատենագրական արժանահավատ տեղեկություններ ունինք ե դարի վերջերից՝ Ղազար Փարպեցու պատմության մեջ. Վահան Մամիկոնյանի մարզպանության առթիվ, ժողովուրդը լցվում է եկեղեցին, բայց տեղ չլինելու պատճառով նաև սրահներն ու փողոցները, հրապարակները. «Եւ ոչ բաւեալ ընդունել զամենեսեան տանն Աստուծոյ լնուին արտաքոյ սրահք եկեղեցւոյն և փողոցք և ամենայն տեղիք հրապարակացն շուրջանակի»[30]:

Ը

Գալով պատկերագրության, մեր հնագույն եկեղեցիներից ոչ մեկի վերա չէ մնացել այն չափով պատկերաքանդակ, ինչպես մնացել է Օձունի տաճարի վերա, ի նկատի ունենալով նաև գերեզմանական հուշարձանը, որի երկու սյուների երեսներն ու կողերը զարդարված են պատկերներով և զարդերով, իսկ յուր ճարտարապետական առանձնահատկություններով անբաժան տաճարից, նյութով, կառուցվածքով և քանդակներով: Այդ պատկերաքանդակներն ու զարդաքանդակները մի կողմից կրկնված ենք տեսնում մեր ամենահին տաճարների վերա, որպիսին Քասախն է, Տիկորը, Պողավանքը, Կարսի Ագգարակը և այլն, ինչ որ մատնանշեցինք ե գլխին մեջ, երես 25, մյուս կողմից հին գեղեմանական կոթողների վերա, որ հայ պատկերագրության ամենահին երևույթներն են և քրիստոնեական արևելյան արվեստի հետ կապված[31]:

Օձունի տաճարի վերա ևս հարավային ճակատի վերին լուսամուտի երկու կողմից տեսնում ենք նույն սավառնող, նման զգեստավորությամբ և հոլանի կերպերով հրեշտակները, ինչպես Պողավանքի հարավային պատին, միայն այստեղ իբար հակառակ ուղղությամբ թռչելով և քանդակներն համեմատաբար ավելի խոր. ձախ կողմինը բոլորովին փշացած է, իսկ աջինը կիսով չափ, բայց

30 Ղազար Փարպեցի, նր. 178, էջմ-ի հրտ.:

31 Գեղեզմանական կոթողների բաժնում պատկերաքանդակների մասին պիտի խոսենք ավելի մանրամասն:

ընդհանուրը նկատելի։ Լուսամուտի գլխին, առանձին քարի վերա եղել է մի կանգնած ֆիգուր, փշացած, արդյո՞ք Ամենակալ։ Պետք է նկատել, որ այստեղ քանդակման արվեստն ավելի բարձր է, քան այդ տեսնում ենք Պտղավանքի վերա, ինչպես և Օձունի կոթողի շուշանածաղիկներն ավելի նուրբ, քան Պտղավանքի արևմտյան լուսամուտի շուշանածաղիկն է։

Պատկերաքանդակներ կային նաև Հյուսիսային, արևելյան և արևմտյան պատերի ճակատին. կիսով չափ պահված է արևելյան լուսամուտի գլխինը. բուն պսակը կազմված է գնդակների շարքից, եզերված դուրս ընկած բարակ գծերի (wulst) մեջ. պսակի հորիզոնական թևերի վերա երևում են մի-մի բևեռվոր հրեշտակի անդրիներ, որոնք բռնել են մի ձեռքով օձի պարանոցից, նրա աչքի խարխանք չէ, իսկ մյուսով մարմնից. օձերի (?) մարմինը շարունակվում է պսակի թևերի ուղղությամբ՝ աջ և ձախ և վեր բարձրանալով, պսակի գլխին իրար փաթաթվելով հանգույց կազմում, ապա նորից աջ և ձախ ուղղությամբ շարունակվելուց հետո, վեր բարձրանում և վերջանում արմավենիկի լայն տերևով, կոթի մոտ օղակավորված։

Այս արմավենիկի տերևների և նրանց ցողունների մեջ, լուսամուտի ճակատին Հիսուսի անդրին է, բաց ավետարանը ներքևի կողմից ձախ ձեռքով բռնած Հովհաննու ավետարանի սկզբնավորությամբ, միջին երկաթագրով «ԻՄԿ ՉՐԱՆ է ԼՐԻ ԱՆՆ ԵՒ — մյուս երեսում — ԲԱՆ ԼՐ Ա.Ո ԱՏ ԵՒ Ա.Տ ԼՐ ԲԱՆ»[32]։ Հիսուսի կրծքի պարանոցի տակ, երևում է շապկի մասը բառանկյունի ձևով, եզերված երկգիծ զարդով, հագել է ներքնազգեստի վերայից, ձախ ուսից ձգելով, ծալքերով զարդարուն ծիրանի, որ թեթև կերպով երևում է և աջ ուսից. ներքնազգեստի թևերը, նույնպես ծալքավոր, բազկի մոտ բոլորաձև զարդով բազրանդի նման։ Աջ ձեռքը կոտրված է, ինչպես և գլուխը, բայց նկատվում են ուսերի վրայից կախ ընկած երկու ծամերը։

Հյուսիսային ճակատի լուսամուտի պսակը որթատունկ է. երևում է միայն մի մեծ տերև, մնացածը ջարդված է։ Պսակի գլխին եղել է մի մարդկային ֆիգուր, արդյո՞ք Աստվածածինն աթոռի վերա նստած։

Արևմտյան ճակատի զարդաքանդակից ոչինչ մնացած չէ և առհասարակ այդ մասը ամենից շատ նորոգության է ենթարկված, գուցե, այստեղ էր, այժմ ներսը, ավազանի համարի խորության մեջ հաստատած, Աստվածածնի կարևոր

---

32 Տարաբախտաբար ձեռքի տակ չունինք մեր լուսանկարը. ուստի և մատնացույց պիտի անենք Strzygowski-ի Die Baukunst պատկ. 205։ Օձերի պատկերն այստեղ, ինչպես ընթերցողը տեսնում է, կասկածելի և օտարոտի ենք համարում։ Բայց օտարոտի մի ուրիշ երևույթի մասին պատմել է մեզ հանգուցյալ Խաչիկ վարդապետը խաչաքանդակի հետ կապված (տե՛ս մեր «Հավուց թառի Ամենափրկիչը», եր. 47. ծանոթ.)։

Եթե ճիշտ է մեր եզրակացությունը, թե Օձունը շինված է ե դարի վերջերին կամ Զ-ի սկիզբը, ապա այստեղ ունինք հայ գրի ամենահին մնացորդը։

քանդակը, Հիսուս մանուկը գրկին (պատկ. 28), (պատկ. 50)։ Դոնն այդպես էին ասում ծերունիները. համենայն դեպս, եկեղեցու որևէ մասի հետ կապված, որ գաղափար է տալիս մեզ յուր սերիական աղբերի մասին, 92×60 սմ մեծությամբ. տարաբախտաբար բնական լույսով հնարավոր չէր Մարիամի գլխի վերին մասն էլ նկարել պարզ, ինչպես մյուս մասերը։ Աստվածածնի այս և գերեզմանական հին կոթողների վերա մնացած քանդակները, հնագույն երևույթներն են նույն նյութի մնացորդների, արևելքում, որոնց մասին առիթ կունենանք խոսելու հետո։

Քանդակներ սպասելի էին նաև տաճարի երեք դռների մեծ ճակատաքարերի վերա. բայց նրանք սրբված են և մասամբ արձանագրություններով ծածկած։ Հարավային դռան վերա՝ ճակատին մնացել է մի պարզ խաչ, թևերի ծայրերին գնդակներով, որ հնության ապացույցն է, խարսխից վեր բարձրացող արմավենիկի թևերով։ Այդտեղ եղած արձանագրությունից մնացել է միայն «ԹՈՄԱՍ» բառը, խոշոր, բայց մակերես քանդակով, ինչպես հետո հիշվելիք արձանագրության մնացորդները։ Դռան կողքերին արձանագրական մնացորդները ժԹ դարի գործեր են։ Սրբված է նաև արևմտյան ճակատաքարը և ՈՂ=1241 թվի մի արձանագրություն գրվել։ Իսկ վերևում հագցրած մի կտոր քարը շատ ավելի խմբաքանդակով, եկեղեցու մաս չէ, այլ ավելի հին նորոգության ժամանակ հագցրած այդտեղ. այս և ձախ դասի մույթի մեջ հագցրած սասանյան-հելլենական զարդերը հիշեցնում են Խժոռնիի քանդակները (տե՛ս պատկ. 51), գուցե և բերված բերդի եկեղեցուց, որ ցորացնում են Օձունի երեք շենքերի ժամանակագրության մասին հայտնած մեր կարծիքը։

Դռան բացվածքի շրջանակը զարդարված է ողկույզի և տերևի փոխ առ փոխ շարքով, որ շատ լավ է պահված, ողկույզները իրար կպած երեք մեծ հյուղերով, իսկ տերևները երեք, չորս և հինգ մասերով, որ սովորական չէ։

Արևելյան պատին կա և մեծատառ արձանագրության մի մնացորդ, որ իբրև գոտի ձգվում էր հարավային և արևելյան պատին, նման երևույթ Եղվարդի մեծ բազիլիկայի հարավային և Նախճավանի բազիլիկ եկեղեցու հյուսիսային պատերին։

Այս բոլոր դիտողությունների վերա հիմնված, կարծում ենք Օձունի տաճարի և Հուշարձանի ժամանակը պետք է նշանակել ե դարի վերջերը կամ Զ-ի սկիզբը։

Ը

Նախընթաց գլխի մեջ տեսանք, թե Օձունը յուր շատ նշաններով երևում է որպես միջին օղակ մի կողմից բազիլիկաների և հատկապես եռանավ բազիլիկաների, մյուս կողմից Դայանեի ու Մրենի տիպի եկեղեցիների մեջ։ Առաջիններին նմանում է յուր նյութով, քանդակներով և որմայեցների վրա հաստատված սրահներով և երկարաձիգ ուղղությամբ, երկրորդներին երկարաձգու-

բյան հետ պիլոնների վրա հաստատված կամարներով և ներսի հատակագծով: Բայց որոշ չափով ավելոս է ցույց տալիս և Պողավանքի, որի ժամանակը որոշելիք արդեն: Մնում է մի կարևոր խնդիր ևս պարզել, նորա տեղը մեր ճարտարապետության պատմության մեջ որոշելու համար, նորա գմբեթավորման խնդիրը:

Առաջին անգամ այս կարևոր հարցի վրա ուշադրություն է դարձրել Թորամանյանը յուր Տիկորին նվիրված աշխատության մեջ, հնագույն գմբեթը համարելով Տիկորինը, բայց ոչ ժամանակակից բուն շենքին, այլ հետո ավելացրած: Ըստ Թորամանյանի եր. 60. ե դարում հայերը, թեև ունեին գմբեթ շինելու ճաշակը, «սակայն գմբեթ շինելուն կերպը չգիտնալով, կշինեն եղեր փայտե գմբեթներ»: Տիկորի տաճարը մեր եկեղեցական ամենահին շենքերից մեկն է, բազիլիկների առանձնահատուկ երևույթներով և ասորական արձանագրությամբ, և դարում շինված Սահակ Կամսարականի կողմից: Կամսարականներն առհասարակ շատ նշանավոր են հանդիսացած այս տաճարից զատ, Բալինի և ուրիշ վայրերի նշանավոր եկեղեցիներով և արվեստի այլ մնացորդներով:

Թորամանյանից հետո ավելի ընդարձակ խոսում է գմբեթի մասին հայ հարտարապետությանը նվիրված յուր մեծ աշխատության մեջ Սարգիսովսկին, հանելով բոլորովին տարբեր եզրակացության. գմբեթի ծագումն ու փոխադրությունը Հայաստան նա կապում է պարթևների հետ և առաջին անգամ գործածված քառակուսի շենքերի վերա: Նույն միտքը նա արծարծել է նաև յուր մի այլ աշխատության մեջ, հայկական գմբեթը առնված համարելով Արևելյան Իրանից[33]: Վիճել կարելի է նորա հառաջ բերած մանրամասնությունների և պնդումներից ոմանց դեմ՝ գմբեթի միջին Ասիայից Արևելյան Պարսկաստանի վրայով Միջագետք և Հայաստան անցնելու տեսության նկատմամբ, այդ փոխանցման կամուրջի իրական փաստերի անծանոթ լինելու կամ չգոյության պատճառով. Արշակունյաց ժամանակից, բայց ըստ էության համոզված ենք, որ գմբեթը Պարսկաստանից է անցել և արդեն գործադրվում էր Դ—ե դարերում Հայաստանում: Հույս ունինք, թե մեր բերած փաստերն ու լուսաբանությունները ավելի ևս կնպաստեն այդ տեսության հաստատության:

Թորամանյանի եղրակացությանը մեծ չափով հիմք է ծառայել Տիկորի գմբեթի արխաիկ ձևերի հետ, նաև ժ դարի մատենագիր Հովհաննես Կաթուղիկոսի խոսքերը. «Յետ որոյ (այսինքն Հռիփսիմեի շինության՝ Կոմիտաս կաթողիկոսի ձեռքով, ուրեմն 618 թվականից հետո, երբ շինվեցավ այս գողտրիկ տաճարը) ապա քակեալ սորա ղփայտայարկ գմբեթ սրբոյ Կաթուղիկէին, որ ի Վաղարշապատ քաղաքի, շինէ զնա գեղեցկայարմար և չքնաղատես կոփածոյ քարամբք»[34]: Կաթուղիկեի կամ էջմիածնի փայտահարկ գմբեթի շինությու-

[33] Altai-Jran, եր. 197:

[34] Հովհաննես Կաթուղիկոս, եր. 75, Թիֆլիսի հրատ.

նր կապվում է Վահան Մամիկոնյանի շինարարության հետ 6 դարում. Սեբեոսը պատմում է Վահանի մասին «եւ շինեաց եկեղեցիս մեծամեծս, զոր աւերեալ էր Պարսից ի Վաղարշապատ քաղաքի եւ ի Դուին (Երեւան) և Մղրայս և ի բազում տեղիս աշխարհիս Հայոց»[35]: Փարպեցու ցուցմունքից էլ գիտենք, որ Կաթուղիկեն, ինչպես կոչվում էր հնում էջմիածինը, փայտակերտ մաս է ունեցել և այրվել է, բայց ի՞նչ մաս էր այդ և նորից փայտակերտ նորոգությո՞ւն էղե՞վ, չգիտենք: Մեր միակ աղբյուրը էջմիածնի գմբեթի փայտահարկ լինելու մասին մինչև Կոմիտաս, Հովհաննես կաթուղիկոսն է:

Հին եկեղեցիների ուսումնասիրությունը ցույց է տալիս, թե կտուրները քարով ծածկելու սովորությունը մինչև է դարը տարածված չէր. բազիլիկ և գմբեթավոր շատ շենքեր, գիտենք, ծածկված էին կղմինդրով, պեղումներով հանված մնացորդներից դատելով: Առաջիններից կարելի է հիշել Քասախը, ոչ ուշ, քան 6 դարը, երկրորդը Զ դար. գմբեթավորներից Պողավանքը Զ դարի առաջին կիսում, Օձունը 6 դարի վերջում. Աշտարակի Կարմրավոր Աստվածածինը, է դարի առաջին քառորդից ոչ ուշ, գմբեթավոր և դրսից խաչաձև[36], որ մինչև այժմ էլ պահել է այդ ձևը: Ունինք և մատենագրական մի բանկպնի տեղեկություն Կաղանկատվացու մեջ, որից պետք է եզրակացնել, թե գմբեթները շինվում էին նաև աղյուսից «եւ ոչ կարէր քակել (Վարազ Փերոժ իշխան Առանշահիկ) զպղինսաշար պոյր գագաթ գմբեթին, սակս զի բնակեալ էր անդ խաչն տէրունական և նշխարք վկայիցն»[37]:

Բայց ընդունենք կատարելապես պատմական Հովհաննես կաթուղիկոսի տեղեկությունը. մի օրինակից հանած եղրակացությունից չէ՞ մնըդիկ ուսումնասիրության պահանջների դեմ: էջմիածնի գմբեթի փայտահարկ շինությունը անգիտության հետևա՞նք էր, չէր կարող և ուրիշ պատճառ լինել. 1915 թվի երկրաշարժից իսպառ խախտվեցավ նույն տաճարի Հարավային փոքր գմբեթը, եղիազար կաթուղիկոսի շինած. ճարտարապետ Թամանյանցը կամենում էր փոխարինել այն փայտաշեն գմբեթով, վախենալով, թե հնուց ճեղքված պատը կարող է չդիմանալ քարաշենի ծանրության. նթե իրագործեր նա յուր միտքը, ապագայում իրավունք կլինե՞ր մտածելու, թե գմբեթ շինել չգիտեին հայերը:

Թորամանյանցն անշուշտ, այդ ժողովը չէր գրվել, նթե այդ ժամանակ տեսած լիներ գմբեթավոր Ավանը Քանաքեռի մոտ, Զ դարի վերջերում կամ է-ի սկզբում, Մովսես Եղվարդեցու հակաթոռ Հոհան Կարնեցու կողմից, և մանավանդ Պողավանքը ավելի հին: Գուցե և այդպիսի հոգեբանության հետևանք էր.

35 Սեբեոս, եր. 46, Պոլսի հրտ.:

36 Պատկերը տե՛ս Die Baukunst, եր. 11:

37 Կաղանկատուացի, եր. 192, Շահխազարյանցի հրտ.:

որ Տիկորի գմբեթը համարում է հետո ավելացրած բուն շենքի վրա, համաբերելով միևնույն ժամանակ ամենահին մնացորդը հայ գմբեթի: Տարաբախտաբար Պողավանքի գմբեթից շատ քիչ մաս է մնացած, բայց այդքանն էլ այնպիսի դրական փաստ է, որ խնդրի լուսաբանության համար ավելի արժեք ունի, քան մի մեծ հատոր տեսական վերլուծություն: Ո՞նչ ձև ուներ Պողավանքի գմբեթը, դժվար է մնացորդից կռահել, համենայն դեպս հիմքը, որ մնացել է դրսից, քառանկյունի էր: Եթե հաստատվեր պեղումներով, որ նա քառանկյունի էր յուր թմբուկով ևս, ոչ միայն երկրորդ օրինակը կունենայինք Տիկորի գմբեթի, այլև մի կարևոր փաստ ևս, թե Ռավեննայի Գալլա Պլացիդիայի (Galla Placidia) դամբարանի գմբեթը ծագումով արևելյան է, ինչպես կամենում է ընդունել Ստրժիգովսկին[38]: Բայց հավանական չէ այդ Պողավանքի նկատմամբ, այլ պետք է կարծել, որ թմբուկը ութ անկյունի է եղել, որ է դարում ընդհանրացած է մեր մեջ, ինչպես Ներսես Կամսարականի Թալինի փոքր եկեղեցին, Ալամանը[39] Հերակլ կայսեր 27-րդ տարին, այսինքն, 637 թվին: Գմբեթի փաստական գոյության մասին այս ժամանակից էլ ավելի վաղ ապացույցներ ունինք մոնումենտալ արվեստի մնացորդներով և լիզվաբանական տվյալներով: Այդպիսի մի մնացորդ է մեր աչքում Օձունի տաճարը ինքնըստինքյան և ապա նորա մոտ եղած հուշարձանի մի քանդակագործական պատկերը:

Կարող է առարկություն լինել տաճարի և գմբեթի ժամանակակցության մասին. հիրավի նորոգված է գմբեթի վեղարն ու թմբուկը, բայց յուր հիմքերով տաճարի մարմնի հետ այնպիսի ամբողջություն է կազմում, նյութի, կառուցվածքի կողմից, դրսից, թե ներսից, որ բաժանել չենք կարող: Այդ տիպի եկեղեցիները հառաջ են եկել որպես գեղարվեստական հոսանքների միացման հետևանք, և ոչ որպես հեթանոսական հին շենքի վերա նոր գմբեթ ավելացնելով, ինչպես Թորամանյանն է կամենում բացատրել: Մրենը, որ Թորամանյանը այդպիսի երևույթներից մեկն է համարում, է դարի առաջին կիսի 639 թվականի շենք է ըստ արձանագրության, որի իսկատիպը հրատարակել ենք մեր Գրքույթյան արվեստի քարտեզի մեջ[40]: Մեր իսկական բազիլիկանները գմբեթ չեն ունեցել, ինչպես Երերույքը, Քասախը, Արագածի Ավանը, Ծոփքը:

Հիշել ենք, որ Օձունի Դերեզմանական կոթողի սյուների արևելյան և արևմտյան երեսները ծածկված են պատկերներով և զարդաքանդակներով: Հարավային սյան արևելյան երեսին ի միջի այլոց կա մի բարձր շենքի պատկեր, խաչազարդ գմբեթով վերջացած: Լենինգրադի նյութական մշակույթի պատմության ակադեմիայում, երբ զեկուցանում էինք այս աշխատության մասին, ցուցադրեցինք նաև այդ քանդակի լուսանկարն ու էստամպաժը, ակադեմիա-

---

38 Die Baukunst, *371*:

39 Պատկերները տե՛ս Die Baukunst, *184, 187, 190*:

40 Տե՛ս Strz., Die Baukunst, *եր. 43*:

Կանոնների հատուկ ուշադրությունը խնդրելով, թե ուրի՞ղ է մեր դիտողությունը գմբեթի լինելու նկատմամբ, թե ֆրոնտոն կարող է լինել։ Ընդունվեցավ, որ ճիշտ է մեր դիտողությունը։

Բայց գմբեթների հնագույր գործածության ամենապերճախոս փաստը հայ լեզվի վկայություններն են։ Հինգերորդ դարի մեր թարգմանական և ինքնուրույն գրականության մեջ գմբեթ բառը գործադրված է այնքան հաճախ և այնպիսի հոլովումներով և բարդություններով, որ ցույց է տալիս, թե այդ գաղափարն ու բառը ամենասովորական հասկացողություններ են ժամանակի գրողների և թարգմանիչների համար։

Բարսեղ Կեսարացու Վեցօրյա արարչության ճառերի թարգմանության մեջ, որ հինգերորդ դարի գործ է ընդունված առանց տարակույսի, գտնում ենք շատ հետաքրքրական փաստեր բառի և նորա գաղափարի մասին։ «Զպղպջական, որ փչին բոլորին օդով ըստ օրինակի գմբեթացն»[41]—

Ὡν τὴν ἰσχὺν καὶ τὸ μέγεθος οὐδὲν ἡγούμεθα διαφέρειν τῆς κοίλης νοτίδος τῆς ὑπερισταμένης ἐν τοῖς χρυσοῖς[41].

Զիա՞րդ ջուրն կացցէ ի վերայ գմբեթայարդ գլխոյն երկնից[42].—

Πῶς ἂν ἐδυνήθη ἐπὶ τῆς κυρτῆς περιφερείας τοῦ στερεώματος ἱδρυθῆναι....[42]

Տեսանեմք ի բաղանիսս,... զի ի ներքս փորուածն գմբեթայարդ է[43].

Ὁ Πού γε ὁρῶμεν τῶν τε λουτρῶν τοὺς λωίονας ὀροφοῦς....ἃ κατὰ τὸν ἔνδον ὦγκος εἰς ἡμικύκλιον τμῆμα περιγιγνένα...[43]

Այստեղ տեսնում ենք, որ թարգմանիչը κοῖλος, τὸ κοῖλον, ἡ κοιλία, որ նշանակում է դատարկ, բոլորաձև տարածություն, խորություն— Hülung, Vertiefung «գմբեթ» բառով է արտահայտել։ Սորա արտաքին ձևակերպությունն է κυρτῆς «կորնթարդ» կամար, ադիղի դրսի կողմից, թարգմանիչը արտահայտել է «գմբեթայարդ» բառով, փոխանակ «ի վերայ կորնթարդ գլխոյն երկնից» թարգմանելու։ Երրորդ վկայության մեջ ևս ἡμικύκλιον, որ նշանակում է կիսաբոլորակ, «գմբեթայարդ» է թարգմանել գործչել։ Մեզ համար շատ կարևոր է, որ հայ թարգմանիչը ջրի պղպջակը, բաղնիքի բոլորաձև կամարը կամ երկնքի կորնթարդ բոլորաձևությունը նմանեցնում է գմբեթի, որովհետև գմբեթի ներսի մասի գագաթը, իրոք երկնաձև է, այսինքն բոլորակ, ուստի և հնագույն ժամանակներից հաճախ նկարազարդված աստղերով, Տիրոջ աթոռի երկնային զորությանց և սուրբերի հետ։

Խնդիրը ավելի է պարզվում, եթե գմբեթ կամ գմբեթյա բառի գործածությունը տեսնենք Ս. Գրքի հայերեն թարգմանության մեջ։ Անգեայ Ա 4 «Եթէ ձեզ

41 Migne, Partol, Greca. XXIX. Ὁμιλία Γ. p. 60, 96.
42 Ὁμιλία Γ. p. 57, 89.
43 Ὁμιλία Γ. p. 98.

միայն իցէ բնակել ի տունս գմբեթեալս, եւ տունդ իմ անուր կայց»: Դորա փոխարէն Եօթանասնից հունարէն թարգմանութիւնը ունի.

Εἰ κατοικεῖν μέν τινὰ ἐστιν ἐν οἴκοις ὑμῶν κατοικοῦντας, ὁ δὲ οἶκος ὑμῶν ἐξηρήμωται.

Տայլերնէի «Ի տունս գմբեթեալս»-ի փոխարէն հունէն ունի ἐν οἴκοις κατοικοῦντας, որ նշանակում է «փայտածածկ ձեղունով տների մէջ». Երբայերէնն բնագրի մէջ ևս նոյն իմաստն ունի. ha'ēt lakem 'attem lašebet bəbattēkem səpūnīm wəhabajit haəəe ḥarēb. «Բըլաատէկմ սիփունիմ». «Սիֆոնս» հատկապես նշանակում է տաճարի ներքին ծածկութիւը, ձեղունը ըստ Kautsch-ի բառարանի: Հայը այստեղ թարգմանել է ոչ բառացի. Նորա հասկացողութեամբ փառաւոր տները գմբեթեայ են. գմբեթեայ կամ գմբեթեաւոր պիտի լիներ և տաճարը, մինչդեռ դորա հակառակ ալէրակ է: Նոյնիսկ բառը Գ թագաւորութեան Զ, 15, 16, ըստ Ծէնի թարգմանված է բառացի և ճիշտ. «եւ պատեաց շուրջանակի»: Բայց այստեղ ևս բոլորանաւութեան գաղափարը դարս չէ այս արտահայտութենից:

Լուսաւորչի տեսիլքի մէջ մեր առաջ նկարվում է մի ճարտարապետական շինք չորս սյուների վերա հաստատված գմբեթով. «եւ ի չորեցունց սեանցն ի վերայ խաչին կամարք զարմանատեսք ի միմեանս կապեցան եւ ի վերայ այնորիկ տեսի գմբեթաձև խորանարդ ամպեղէն շինուած աստուածակերտ զարմանալի»[44]: Ուշադրութեան պետք է դարձնել հատուկ «գմբեթաձև խորանարդ» արտահայտութեան վերա, որ գմբեթի հին ձևն է մատնանշում, հենց մոտավորապես մեր Տիկորի: Այս տեսիլքը, հնագույնը մեզանում յուր տեսակի գրականութեան մէջ, կարծում ենք, ոչ ուշ, քան է դար, երբ գրվում էին խաչի և եկեղեցու հետ կապված շարականները, որոնց մէջ նաև «Էջմիածինն ի Հօրէ»-ն (որի հեղինակը համարվում է Սահակ Զորափորեցին), շատ լավ ծանոթ է տեսիլքի բովանդակութեան: Բայց նա ավելի հին է, համենայն դեպս ի նկատի ունի էջմիածնի տաճարի շինքը, որ անհրաժեշտ չէ Կոմիտասի նորոգութեան հետ կապել:

Ավելացնենք, որ գմբեթ բառը, թեև ընդհանրացած մեր 6 դարի դասական լեզվի մէջ, ծագմամբ, հայերեն չէ. Hubschmann յուր Հայերեն քերականութեան մէջ[45] «գմբեթ» բառը նուլնացնում է նոր պարսկերենի gunbad բառի հետ, մինչդեռ Nöldecke-ն աստրական «գուբտայ» բառից է ընդունում նորա ծագումը: Իսկ Horn[46] բացատրում է պահլավերեն gmbat բառով, որ շատ մոտ է հընչում հայերեն տառադարձութեան, ուստի և հավանական, որ Պարսկաստանից անցած լինի հայերին, մանավանդ, որ գմբեթաձևը են եղել այնտեղ Սերվիտանի և Տիզրոնի պալատները Դ և Զ դարերում: Պահլավերեն gmbat բա-

---

44 Ագաթանգեղոս, Հայական հրտ., եր. 374:

45 Armenishe Grammatik. Strasburg, 1895, եր. 127:

46 Neupersische Philologie-Grundrisse der iranichen Philologie-ի շարքում, եր. 6:

որ առնված է Vendidad-ից, որ թեև Զենդավեստայի հին մասերից չէ, բայց համենայն դեպս ոչ ուշ, քան Դ դարը։

Այսպիսով ապացուցված ենք համարում գմբեթավոր եկեղեցիների գոյությունը ե դարի կեսերից էլ վաղ, այսինքն Դ դարում, մի եղրակացություն, որ այլ ապրյալներով հիմնավորել է Strzigowski-ն հայ արվեստին նվիրած յուր մեծ աշխատության և Ursprung der christlichen Kunst-ի մեջ։

թ

Հայոց լեզվի պատմության մեջ մի զարմանալի երևույթ ենք տեսնում. մինչև ե դարը չունինք գիր, գրականություն, բայց հանկարծ ստեղծվում է ինքնուրույն և թարգմանական մի ամբողջ գրականություն. այն էլ մի լեզվով, որ Ոսկեդարն է համարվում հայ լեզվի։ Նման մի երևույթ նկատում ենք և հայ արվեստի պատմության մեջ. ինքնըստինքյան այդպիսի երևույթներն անհասկանալի են. պատմական երևույթներն իրար հետ շղթայված և բարմաթիվ օղակներով միացած ամբողջությունից կտրված՝ հասկանալի չեն։ Այսպես էլ մեր լեզվի կամ արվեստի պատմության մեջ վերև ակնարկված երևույթը հասկանալի է դառնում միայն քրիստոնեության ծագման խնդիրների պարզաբանությամբ թե Հայաստանում և թե կից երկիրներում, որոնց հետ կենդանի հարաբերության մեջ է եղել քաղաքական, տնտեսական, կրոնական, մշակութային տեսակետներով։

Տարաբախտաբար Դ դարից ավելի վաղ Հայաստանի նկատմամբ գրավոր անմիջական հիշատակարաններ չունինք, ինչպես առհասարակ, այնպես էլ ճարտարապետական շենքերի, այս դեպքում եկեղեցիների գոյության և նրանց հատկանիշների մասին։ Մի քանի հունարեն և լատիներեն արձանագրություններ հայ Արշակունիների կամ հռոմեական լեգեոնների կողմից թողնված, մեզ ոչինչ չեն տալիս ճարտարապետության նկատմամբ, իսկ Գառնիի «Տրդատայ թախտը» հունա-հռոմեական բնույթ ունի։ Սակայն բազմաթիվ եկեղեցիների գոյությունը լուսավորչի ժամանակից, Ագաթանգեղոսի և մանավանդ Փավստոս Բուզանդի տված տեղեկություններով, անուրանալի է։ Այս իրողությունը անժխտելի կերպով հաստատում է Ղազար Փարպեցին միջանկյալ կերպով, յուր առ Վահան Մամիկոնյան գրած թղթի մեջ հայտնելով, թե յուր ժամանակ՝ ե դարի վերջերին, «յերկերիւր ամէ շինեալ» վանորայք կային, այսինքն լուսավորչի ժամանակից[47]։

Բայց բոլորովին անկարելի չէ, որ եկեղեցիներ կամ աղոթատեղիներ լինեին նույնիսկ առաջ, թեև հազվագյուտ, քանի որ իրողություն է, որ Հայաստանում քրիստոնեության կար լուսավորչից առաջ։ Թողնենք առաքելական քարո-

47 Ղազար Փարպեցի, եր. 196, էջմ. հրտ.։

դուքյան ավանդությունը Հայաստանում. երկրորդ դարի վերջերում արդեն, Մարկոս Ավրելիանոսի ժամանակ, քրիստոնյաներ կային Մելիտինեում Legie fulminata զնդի մեջ, որի մի մասը տեղացիներ էին: Քառասուն մանկանց նահատակությունը Սեբաստիայում, ուր հայ տարրը հաստատված էր վաղ ժամանակներից, ապացույց էր քրիստոնեության զոյության այդ շրջանում: Երրորդ դարի կեսերից արդեն կազմակերպված եպիսկոպոսություն կար Հայոց մեջ. դոցանից մեկի՝ Մեհրուժանի հետ նամակագրություն ուներ Դիոնիսիոս Ալեքսանդրացին 251 թվին[48]: Մաքսիմինոս Դայան պատերազմում է հայերի հետ, որպես քրիստոնյա մի ժողովրդի հետ 311 թ.[49]: Արտազի եպիսկոպոսության զոյությունը լուսավորչից առաջ, բոլորովին անհիմն և պատմական հնարավորություններից զուրկ չէ[50]: Դրիգոր Լուսավորչի գործունեությունը սկսվում է 287 թվից և միայն Դ դարի սկզբում քրիստոնեությունը պետական կրոն հռատարակվում Տրդատ մեծի ձեռքով:

Բայց Հայաստանից էլ ավելի վաղ քրիստոնեությունը պետական կրոն էր դարձած կարճ ժամանակի համար հարևան Ոսրոյենի ասորական փոքրիկ պետության մեջ, Աբգար Ը-ի ժամանակ (179—216), Եդեսիա մայրաքաղաքով: Քրիստոնեության տարածմանը շատ նպաստավոր պիտի լիներ նաև Պալմիրայի պետության շրջանը Դ դարի երկրորդ կիսում Զենոբիա թագուհու ժամանակ: Ասորական քրիստոնեության մի երրորդ մեծ կետրոն էր Մծբինը 325 թվից առաջ. բավական է հիշել, թե Եփրեմ ասորին ծնվել է այդ քաղաքում քրիստոնյա ծնողներից Դ դարի սկզբում. նշանակում է Դ դարում արդեն այնտեղ քրիստոնեություն կար: Ի նկատի պետք է ունենալ նաև Հակոբ Մծբնա հայրապետի աղգակցական կապը մեր Լուսավորչի հետ ավանդաբար, որ հայտնի մատենագիր էր և որի գործերը թարգմանված են հայերեն, ինչպես և Եփրեմինը:

Քրիստոնեությունը տարածված էր նաև Միջագետքում և Պարսկաստանում մինչև Պարթևական երկրները, ուր բազմաթիվ համայնքներ կային ասորական քարոզությամբ. ըստ Նեոլդեկեի Դ դարի կեսերում արդեն շատ տարածված էր քրիստոնեությունը Տիգրիսի երկրներում, կազմակերպված եպիսկոպոսությամբ և հոգևորականությամբ. 310 թ. Սելևկիայի և Տիզբոնի եպիսկոպոսն էր Սիմեոն Բար Զաբտան, իսկ նորանից առաջ Բաբա Ակկայի, որ փորձել էր յուր գավազանի տակ միացնել Պարսկաստանի բոլոր եպիսկոպոսությունները, բայց անհաջող[51]: Պարսկաստանում հալածանք է սկսում միայն Շապուհ Բ-ի ժամանակ, իսկ մինչ այդ անարգելք զարգանում էր այնտեղ քրիստոնեությունը: Ե դարում

---

48 Եվսեբիոս Կեսարացի, *եկեղեց. պատմություն, եր. 8, 9:*

49 Müller, Kirchengeschichte, *1892, եր. 56.* Harnack, Die Mission, *1902, եր. 441 և շար., 471:*

50 *Արարատ, 1868, 102:*

51 Neoldeke, Die Aufsätze. J. Labourt. Le Christianism dans l'empire Perse. Paris. 1904.

Տիրբոնում ասորական պատրիարքներ էին Յահբալահա (415—420) և Դատիշա (421—456)։

Ապա հիշատակելի է Հայաստանի հարևան երկրներից Կապադովկիան յուր Կեսարիա մայրաքաղաքով, ուր քրիստոնեությունը մուտք է գործում դեռևս առաջին դարում. Բ դարի վերջում այնտեղ կատարված հալածանքների մասին տեղյակ է Կարքեդոնի Նշանավոր երեց Տերտուղիանոսը։ Դ դարի առաջին կիսում այնտեղ գործել են Ալեքսանդր և Ֆիրմիլիանոս եպիսկոպոսները (233-ին նպս.), առաջինը յուր կյանքի վերջին օրերում Երուսաղեմի քրիստոնեական մատենադարանի հիմնադիրը դարձավ, և երկրորդը Թղթակցության մեջ էր յուր ժամանակի բոլոր նշանավոր եպիսկոպոսների հետ, ի միջի այլոց, և Կարքեդոնի Կիպրիանոսի։ Սրանց ժամանակ է ստեղծվում Կեսարիայի աստվածաբանության դպրոցը, որի հզոր ներկայացուցիչներն են, ապա Դ դարում՝ իրար հետևից՝ Բարսեղ Կեսարացին, Գրիգոր Աստվածաբանն ու Գրիգոր Նյուսացին, որոնց երկերը թարգմանվեցան և դարում հայերեն։

Հիշատակելի է Հայաստանի սահմանակից Պոնդոսում Գրիգոր Սքանչելագործի առաքելությունը (240 թ. նպս.), որի գործունեությունը օրինակ հանդիսացավ մեր Գրիգոր Լուսավորչի համար։

Ի վերջո պետք է ուշադրության առնել մի հանգամանք ևս, մեր Դ դարում սկսված և ե դարում ուժգնացած հոգևոր-քաղաքակրթական և դրա հետ ճարտարապետական մեծ շարժումը հասկանալու համար։ Դ դարի վերջերից երևան եկած և Դ դարում զորացած հոսանքը հայ ուսանողության դեպի ասորական և հունական բարձր դպրոցները մի նշան էր, թե հայ ժողովուրդը քաղաքակրթության ասպարեզում բոլորովին համբակ չէր։ Բավական է հիշել Պրոյերեսիոսի անվան հետ կապված տեղեկությունները իբրև ուսանող Անտիոքում, աշակերտելով Ուլպիանոսի և ապա իբրև առաջնակարգ հռետոր և փիլիսոփա, գիտնական դասախոս Աթենքում և Հռոմում. այստեղ քաղաքի հասցեին արտասանած յուր ներբողով այնպիսի հռչակ ստացավ, որ նորա արձանը կանգնեցին Regi-narerum Roma regi cloguentiae արձանագրությամբ[52]։ Նորա աշակերտներն էին Բարսեղ Կեսարացին և Գրիգոր Աստվածաբանը, աշակերտակից ունենալով բազմաթիվ հայ երիտասարդներ, որոնք և հիշվում են նրանց կողմից։ Հայ ուսանողների մասին հիշատակություն ունի և Լիբիանոս հույն հռետորը յուր աշակերտների թվում[53]։ Հայտնի է, որ Գրիգոր Լուսավորիչ և որդիքը, Ներսես մեծը և Սահակ Պարթևը հունական կրթություն էին ստացել Կապադովկիայում։ Փարպեցին հիշում է. հայ երիտասարդներ գրերի գյուտից առաջ՝ ստիպված էին «քաղում թողակօք և հեռագնաց ճանապարհօք և բազմաժամանակեայ դժվարամբ» ձեռք բերել ասորերենի գիտությունը եկեղեցական պաշտաման համար։ Ամբողջ չորրորդ դարը՝ Լուսավորչից մինչև սուրբերի գյուտը, բազմաթիվ ուսա-

52 Eunapi Vitae Sophistarum. Boissonade, P. 485 և շար.։

53 Funebris dratio in laudem Basilii Magni.

նողներ պետք է դնացած լինեին արտասահման ասորի և հույն լեզուներին տիրապետելու համար։ Մ. Մահակի և Մեսրոպի աշակերտներ ուղարկելը հույն-ասորական դպրոցներ, սկզբնավորության չէր, այլ մի դար և ավելի արդեն ավանդություն դարձած երևույթ։

Այս համառոտ տեսության նպատակն էր պարզել, թե եկեղեցական ճարտարապետության ծագումը Հայաստանում Գ դարի վերջերին կամ Դ դարի սկզբում, միանգամայն հավանական է և իրական։ Եղեսիայի և Հայաստանի քրիստոնյա պետությունների մեջ զարմանալի չէ նոր կրոնի ազդեցությամբ և պահանջների համեմատ քրիստոնեական դրականության և արվեստի ծագումը։ Աբգար Ը-ի ժամանակակիցն էր և բարեկամը նշանավոր մատենագիր և բանաստեղծ Բարդեծանը, որ Հիպոլիտի կողմից «հայ» է կոչվում։ Նորա հոգևոր երգերը կամ սաղմոսները շատ տարածված էին և երգում էին քրիստոնյաները մինչև Եփրեմի ժամանակները։ Մի ուրիշ նշանավոր մատենագիր Տատիանն էր, Բ դարի վերջերում, որի Դիաթեսարոն-ը Ե դարում թարգմանված է հայերեն[54]։ Մատենագրության հետ երևան է գալիս և ճարտարապետությունը. Եղեսիայի առաջին եկեղեցին շինված է 201 թ., մի ավելի մեծ եկեղեցի 313 թ., այսինքն քրիստոնեությունը հռոմեական պետության մեջ պետական կրոն դառնալուց առաջ։ Չորրորդ դարում և մանավանդ Ե-ում շինված եկեղեցիներ կան Ասորիքում՝ հաստատուն թվականով. ինչպես 338 թ. ըստ Sarre-ի և Herzfeld-ի շինված Մար Հակոբի եկեղեցին Մծբինում[55]։

Հարավ-արևելյան Հայաստանի քրիստոնեությունն էլ սկզբնական շրջաններում ենթարկված է սիրիական քարոզչության. այդ են ցույց տալիս մեր նախնական ավանդությունները նոր կրոնի ծագման և հաստատության հետ կապված։ Լուսավորչի քարոզությամբ քրիստոնեական կրոնը պետական դառնալուց հետո ևս, եթե Լուսավորչի և նորա տան հայացքը դեպի արևմուտք է ուղղված, չեն պակասում ապացույցներ, թե ասորական քարոզիչների մեծ տարր կար Հայաստանում, որ յուր հավակնություններն ուներ Հայաստանի հայրապետության վերա։ Չորրորդ և հինգերորդ դարերում ոչ միայն հայ ուսանողները դիմում են նաև ասորական կեսրոններ, այլև տաուերի գյուտի առաջին փորձերը կապված են ասորական կեսրոնների հետ և նույնիսկ տաուերի գյուտից հետո՝ թարգմանության առաջին փորձը կապված է ասորերենի հետ։

Հոգևոր այս աղերսներով էլ պետք է հասկանալ նաև հայ քրիստոնեական ճարտարապետության ծագումն ու նմանությունները ասորական-միջագետական հելլենականության ենթարկված արվեստի հետ։ Այս աղերսը ավելի պայծառ կերպով երևում է Դ—Զ դարերի հայ գերեզմանական կոթողներով, որոնց ուսումնասիրության անցնում ենք հետևյալ մասում։

---

54 Harnack, Christliche Litteratur, Dpzg. եր. 184 և 485։

55 Archäologische Reise in Euphrat und Tugris Gebiet. Baud II. 342—343.

Հովնաթան Հովնաթանյան (?—1801/02), խորհրդավոր ընթրիք= Էջմիածին, Մայր տաճար։

ԳԵՐԵԶՄԱՆԱԿԱՆ ՀԻՆ ԿՈԹՈՂՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ ՀԱՅ ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Ա

Ազգերի քաղաքակրթության և արվեստի ծագումն ու ձևակերպությունը իրենց զարգացման ընթացքում սերտ կապված են իրենց կրոնի և հավատալիքների հետ։ Քրիստոնեական արվեստի նշանավոր պատմաբան Kraus մի խոսք ունի, թե ազգերի արվեստը գերեզմաններից է սկսվում. այս ճշմարիտ է ոչ միայն նախնական ազգերի համար, որոնց շինարարությունները ու ստեղծագործական երևույթները իրոք գերեզմանների հետ են կապված, այլև հետագա դարերի նոր հասանքների ընդունելության ժամանակ, համապատասխան նոր արվեստի և մշակույթի ստեղծագործության աղբյուր է դառնում, հետզհետե հնից դեպի նորը փոխակերպվելով։ Եթե նգիպտոսի արվեստն ու մշակույթը պատմության մեջ իրենց բազմատեսակ երևույթներով հոգու անմահության հետ կապված հասկացողության մարմնացումն է, եթե հունական արվեստն ու գրականությունը իրենց բոլոր ճյուղերով կապված են և հասկանալի հույն ժողովրդի կրոնական ըմբռնումներով միայն, քրիստոնեական կոչված արվեստն էլ նոր վարդապետության հաստատության հետ, երևան է բերում նոր ստեղծագործություն ազգերի մեջ, հնից հետզհետե դեպի նորը գնալը և տարբեր զարգացումն ընթանալով։ Կատակոմբների արվեստը միջին օդակն է հեթանոսականի և քրիստոնեականի ծագման և զարգացման արևմուտքում։ Նման երևույթ նկատում ենք և հայոց մեջ։

Հայ արվեստի նախնական շրջանների հասկացողության համար մեծ նպատա են բերում մեր երկրի այլևայլ կողմերում ցրված գերեզմանական կոթողների մնացորդները, որոնք դեռևս հարկավոր ուսումնասիրության չեն արժանացել։ Տարաբախտաբար նոցանից շատ քչերը ամբողջությամբ հասել են մեզ, մեծագույն մասով եղծված, մասամբ կամ բոլորովին փշացած, կըտոր-կտոր եղած, բայց այնպիսի քանակությամբ, որ բավական են գաղափար կազմելու նրանց մասին։ Դեռևս մենք լիովին նրանց գոյության և տրածման մասին ծանոթության չունինք, բայց ինչ որ վերջին տասնյակ տրիներում պրոֆեսոր Մառին, Թորամանյանին և մեզ հաջողվել է ծանոթանալ և ի մի հավաքել, մի հույլ է, արժանի ընդարձակ և բազմակողմանի ուսումնասիրության։

Այստեղ ևս նույն գիտական ուսումնասիրության մեթոդին ենք հետևում, ինչ որ մասամբ փորձեցինք նախընթաց ուսումնասիրության մեջ, որ ճարտարապետական որոշ երևույթների լուսաբանության էր նվիրված։ Պարզ ուսումնասիրությունն իսկ ցույց է տալիս, որ նրանք չեն պատկանում հայ ճարտարապետության ծաղկման, ոսկեդարի շրջանին, որ է զարն է, ինչպես տեսանք։ Այն պատկերազարդությունը և զարդաքանդակները, որ մենք տեսնում ենք այդ կոթողների վերա, տարբեր ոճ, ձևակերպություն և մոտիվներ ունին, քան մեր է դարի թվականով կամ ժամանակով հայտնի շինդրերը։ Նրանք չեն երևում նաև Բագրատունյաց կամ ԺԳ դարի վերածնության շրջաններում։ Ապա, ուրեմն, պատկանում են ավելի հնագույն դարերին, մի տարբեր գեղարվեստական հոսանքի, որ արդեն մեռնել է սկսում յոթնևերորդ դարում։

Եվ հիրավի, նրանք ծագումով և տեղով ամենամեծ աղերսն են ցուցաբերում մեր բազիլիկ եկեղեցիների ծագման, տեղի և ոճի նկատմամբ։ Այս մի երևույթ է, որ ինքնին մատնանշում է նրանց հասկացողության ուղին և տեղը մեր արվեստի պատմության մեջ։ Մեզ հայտնի չէ, գրեթե, որևէ նման գերեզմանական կոթող, որ կապված չլինի տեղով բազիլիկ շինքի հետ։ Այստեղ ևս նկատում ենք դուռ հելլենիստականից միջագետական-ասորական և տեղական սասանյան արվեստների փոխազդեցությունը, ինչպես ճարտարապետության մեջ տեսանք։

Կարևոր թվով այդպիսի կոթողներ մնացել են Կամսարականների մեծ ավան և Նստոց Թաղինում, բայց ծագմամբ և տեղով ոչ մայր եկեղեցու կամ ներսես Կամսարականի շինած, այլ մի այլ ավերակ եկեղեցու հետ կապված, որ գյուղացիները բերել և օգտագործել են իրենց ննջեցյալների համար իբրև գերեզմանաքարեր։

Կարնի նահանգի Ագարակ գյուղից ևս հանգուցյալ Մառի կողմից մի քանի այդպիսի հուշարձաններ բերված էին Անիի թանգարանում պահելու (պատկ. 29), (պատկ. 51), այստեղ է դարի համարված կանգուն մատուռի մոտ, մնացած են բազիլիկ ավելի ճիշ շեմքի ավերակները։

Արագածոտն գավառի Կարբի գյուղում, որ բրիստոնեության ամենահին կետրոններից մեկն է եղել, դեռևս մնացած են բազիլիկ եկեղեցու ավերակները, պսակի մեջ հավասարակող խաչով, գերեզմանական նույնպիսի կոթողներ կան մնացած։ Գլխի հավասարակող խաչը մաս չէ կոթողի, այլ բեկոր է։

Կարբի և Փարպի գյուղերի մեջ, որ իրարից հեռու չեն, ավերակ մի գյուղատեղ կա, բազիլիկ եկեղեցու մնացորդներով, կողքին նաև գերեզմանական կոթողով։

Փարպիից քիչ դեպի արևմուտք, Արագածոտն գավառի պատմական հին Աղցում, պահված է ոչ միայն սաորերկրյա գերեզմանական մի համարակապ

շենք, կատակոմբաների նման գերեզմանները պատի մեջ և քանդակներով, որ հիշեցինք նախընթաց մասի մեջ, եր. 15, այլև բազիլիկ եկեղեցու մնացորդ գերեզմանական կոթողի հետ. ըստ Խորենացու Աղցը Արշակունիների արքայական գերեզմանատունն էր Դ դարում։

Աղցից քիչ դեպի արևմուտք, հին Վժան և ներկա Ուշան գյուղում, որ արքայական ամառանոց էր Դ դարում, մնացած են գերեզմանական կոթողների շատ մնացորդներ, եկեղեցին բոլորովին քանդված, բայց նույն սահմաններում խարաբա վանք կոչված վայրում բազիլիկ եկեղեցու մնացորդները կան, որտեղից Սենեքերիմ Տեր Հակոբյանը էջմիածնի թանգարանն էր փոխադրել մի շատ լավ պահված կոթող, այժմ Երևանի թանգարան տարված։

Ուշանից ոչ հեռու դեպի լեռնակողմը, Հաչի Բայրամ կոչված վայրում, կար մի կոթող, Աստվածածնի քանդակով, որի գլխին վերից դեպի ցած սավառնող հրեշտակը (պատկ. 31) պսակ է դնում Աստվածածնի գլխին, հավանորեն այդտեղ միայն շատ փոքր մասուռ է եղել, կոթողը փոխադրված է էջմիածնի նախկին թանգարանը։ Նման գերեզմանական հուշարձանի, առանց եկեղեցու, հանդիպել ենք և ուրիշ տեղերում, ինչպես մեկը Բյուրականի և Համբերդի մեջ եղած ճանապարհի վերա և մյուսը Ապարանում, պետական պողոտայից դեպի Ջամբրլու տանող ճանապարհին, որ Ալիշանը հետաքրքրական հիշատակ է ընդունել յուր տեղեկատուին հետևելով[1]։ Նման մեկուսի երևույթ հիշատակ է և Դարաջալարի հուշարձանը (պատկ. 31ա-32), որի անմիջական էր գուցե և Ղարաջալարի հուշարձանը (պատկ. 31ա-32), որի անմիջական էր շրջակայքում բազիլիկ եկեղեցու հետքեր չգտանք, թեպետ կային ուրիշ հին ավերակներ, կարելի է և հուշարձանը բերված լինի Արագածի Ավանից, որ միայն մոտավորապես երեք մղոն դեպի արևելք է գտնվում և բազիլիկ եկեղեցի ունի մի նավանի։

Ավանը և Ղարաջալարը գտնվում են պատմական Կոշ կամ Կուշ ավանից դեպի հյուսիս՝ լեռնակողմը, Արագածի վերա։

Նույն լեռան հարավային լանջերին է Թալին մեծ ավանը, որ ամենաշատ թվով կոթողներ ունի պահած, և որոնց մասին հիշեցինք արդեն։ Ներքին Թալինում ևս կա մի կոթող, ոչ բոլորովին պարզ, մի ֆիգուր խաչ բռնած ձեռքին (պատկ. 33)։ Ապա Թալինից դեպի հյուսիս-արևելք մի քանի մղոն միայն հեռու Ադիյամանն է, յուր Հռիփսիմեի տիպի, բայց ըստ մեզ ավելի հին, քան 618 թվականը, եկեղեցիով. այս վայրը արժանի է հատուկ ուսումնասիրության, այստեղ կան քարերի վերա նախնական գրություններ, կենդանական և գծական նշաններով, որոնց նմանները կան Արագածի և ուրիշ վայրերում, ինչպես և Մեծամորի կամ ներկա անունով Սև ջրի ակունքների ժայռերի վերա, ոչ հեռու Զեյվե գյուղից։ Ադիյաման գյուղից դեպի հարավ, ձորի մեջ գտնվում են ավերակների մնացորդներ, ուր եղել է բազիլիկ մի եկեղեցի

---

1 Այրարատ, 254։

և կողքին գերեզմանական մի հետաքրքրական կոթող. նկարի մեջ երևում է Քասախի կամ Տիկորի տիպի մի խոյակ։

Թալինից և Ագիյամանից ոչ հեռու, Մասսարա հին ավանում գտնվում են երկու կոթողներ, թեև բազիլիկ եկեղեցու հետքեր մեզ հայտնի չեն այնտեղ, բայց մինչև այժմ կանգուն մնացած է դարի տաճարից առաջ, անպայման պետք է մի բազիլիկ եկեղեցի եղած լինի այնտեղ, որի հետ են կապված և կոթողները

Ավելի դեպի հյուսիս, Արագածի արևմտահյուսիսային անկյունում, Հառիճում և Դարախաշում գտնվում են մի-մի նման հուշարձան, բայց բազիլիկ եկեղեցիների մնացորդները մեզ հայտնի չեն։

Այժմ դառնալով դեպի Արագածի հարավ-արևելյան շրջանները, Աշտարակում ունինք բազիլիկ եկեղեցի և գետի մյուս ափին գերեզմանական մի արձան։ Արագի լեռան սառորոտում նվաղող գյուղի մեջ ունինք երեք մեծ ու փոքր բազիլիկ եկեղեցիներ և գերեզմանական նույն տեսակ երկու կոթողների մնացորդներ, մեկը Աստվածածնի քանդակով, որի անունով և կոչվում է արձանը իբրև ուխտատեղի։ Կարբիի մասին հիշեցինք արդեն։ Այնուհետև Ապարանի շրջանում, Ափնա գյուղում երկու փոքրիկ բազիլիկ եկեղեցիներ կան հարավային դռների ճակատագարերի քանդակները նման Քասախին նաև նըման մի խոյակի մնացորդով և գերեզմանական կոթողով, բայց եղծված վիճակում։ Քասախում ևս, ուր համանուն գետի ակունքներն են, երկու հին, մեկը մեծ, մեկը փոքր, բազիլիկներ կան, թեև նման կոթողներ չեն գտնված, բայց փոքր բազիլիկայի մի խոյակը կենդանական քանդակ ուներ, որ փոխադրել ենք էջմիածնի թանգարանը։ Վերջապես Քասախի ձախ ափին, Ծառայիշենի գյուղում փոքրիկ բազիլիկայի մոտ՝ գերեզմանոցում ունինք դարձյալ մի կոթող։

Արարատյան երկրից դուրս գալուց առաջ, հիշենք մի հուշարձան ևս, ուր փոքրիկ բազիլիկայի մոտ նույն ոճի մի կոթող կա, Կոտայքում Քանաքեռի մոտ, Ավանն է, նշանավոր նաև Հռիփսիմեի տիպի յուր տաճարով, բայց նորանից մի քանի տարով մոտավորապես առաջ շինված։

Այնուհետև Արարատյան երկրից դուրս դեպի հյուսիս, Լեռնիակաձից ոչ հեռու Դարբանդ գյուղում կան հին կոթողներ, որոնցից մեկը փոխադրված է Երևանի թանգարանը, այդտեղ ևս բազիլիկ շենքի մնացորդ կա՞, թե ոչ, ասել չենք կարող, լուսանկարը ստացել ենք Թորամանյանից, ինքներս այնտեղ չենք եղել։ Այս պատկերները ազգագրական տեսակետով հետաքրքրական են, դուցե և հնթանոսական շրջանից (պատկ. 35-36)։ Կան և ուրիշները փշացած։ Ապա Զորագետի ափերով դեպի հյուսիս անցնելով Օձունի նշանավոր կոթողն է և այնտեղից էլ մի քանի մղոն դեպի հյուսիս, Լալվարի հետևը, Բրդաձորի փոքրիկ բազիլիկայի մնացորդն է, կողքին փառավոր, Սասանյան շրջանի շատ արժեքավոր և մինչև այժմ կանգուն կոթողով, որին մոտ է նաև խոժոռ-

նին յուր բազիլիկայով և կոթողի մնացորդով։ Լոռիի Իգահատ գյուղում նույնպես կա մի նավանի բազիլիկայի մնացորդ, այժմ բոլորովին ավերակ և նախապես էլ փոփոխության ենթարկված, որի ափսիդի աջ պատի մեջ մըտցրած է գերեզմանական մի կոթող, մի երևոյթ տեսանելի, ուր Աստվածածինն է Հիսուս գրկին և աջ ձեռքը վեր բարձրացած, ափը դեպի նայողը, ինչպես տեսնում ենք կոպտական արվեստի մեջ։ Վերջապես Ջորագետի աջ կողմը. երկաթուղու Ախտալա կայարանից դեպի հարավ. կողք ավանի հին ավերակն է, ուր թեև դեռ պեղումներ չեն կատարված և ճշտված հողի տակ թաղված եկեղեցու հատակագիծն ու ճարտարապետական ոճը, բայց պատահական կերպով երևան եկած քանդակները հելլենական ազդեցությունն են մատնանշում, այսպես ևս կա մի կոթող, տարաբախտաբար եղծված վիճակում մեզ հասած։ Մյուսների մասին պիտի խոսինք հետո։

Ահա այսչափ մեզ հայտնի գերեզմանական կոթողների փաստագրությունը իրենց մոտ եղած բազիլիկ շինքերի մնացորդներով։ Բայց մենք հավատացած ենք, որ նրանց թիվը ավելի է Հայաստանում, և ուր բազիլիկ շինքեր կան կամ մնացորդներ, այնտեղ էլ կարելի է՝ նման կոթողների մնացորդներ գտնել, եթե ամենակուլ ժամանակը կամ մարդկային բարբարոսությունը խայտառ չ՝ անհետացրել նրանց։ Այդ գերեզմանական կոթողների պատկերաքանդակներն ու զարդաքանդակները հայ արվեստի մի նոր աշխարհ են բաց անում մեր առաջ, ցույց տալով, թե գեղարվեստական ի՞նչ հոսանքներ են եղել Դ—Ջ դարերում, քրիստոնեության պետական կրոն դառնալու ժամանակ և հետո Հայաստանում։ Բայց անցինենք նրանց ծանոթության և ուսումնասիրության, որ կատարում ենք ոչ ըստ ժամանակագրության, որովհետև այդ անկարելի է, այլ ըստ տեղերի, ամեն անգամ մատնանշելով հուշարձանի առանձնահատուկ կողմ, ընդհանուր եղրակացությունը թողնելով վերջում։

Սկսենք Օձունից, ոչ այն պատճառով որ այդ կոթողը ամենահինն ենք համարում, այլ որ տաճարի առանձնահատկությունները օգնում են նաև հուշարձանի ժամանակի որոշման։ Նախընթաց մասի Ջ—Ը գլուխների մեջ կատարած քննություններով ցրված ենք համարում այն բավական տարածված առասպելը, թե Օձունի տաճարը շինված է Հռհան Օձնեցու կողմից ութերորդ դարի առաջին կիսում, իսկ կողքի հուշարձանը Սմբատ և Բագրատունու գերեզմանն է, ուրմին Ժ դարի սկզբից։ Հուշարձանը, հիրավի, գերեզմանական կոթող (պատկ. 25)[2] է, բայց ոչ Ժ, այլ Ե դարի վերջերի, առ առավելն Զ դարի սկզբի, մենք այն բազմաթիվ հուշարձաններից, որոնց ցրված են Հայաստանի այլևայլ կողմերում, նման կամ տարբեր ձևակերպություններով, բայց մոտիվների և արվեստի մեծ առնչությամբ, որոնց տեղագրությունը կատարեցինք նախընթաց գլխի մեջ։

---

[2] Տե՛ս և Strzygowski, Die Baukunst պատկ. 665, 666 և 667.

Մենք արդեն քանիցս ակնարկել ենք նախընթաց մասի մեջ տաճարի և Հուշարձանի սերտ աղերսը իրենց կարմրորակ քարերով, շինվածքով, ճակատի գարնեղի խորաքանդակ պայտաձևի զարդով, խաչաքանդակներով և երկուսի ճոխ պատկերագրությամբ։ Ինչպես տաճարը բազիլիկ եկեղեցու և գմբեթավորի միությունն է անջատ չորս մույթերի վրա, այնպես էլ այս Հուշարձանը միություն է տեղական-իրանական և բազիլիկ արվեստի հայրենիքի հետ կապված շինարարության։ Հնագույն բազիլիկաներին հատուկ պայտաձև կամարներով իրար հետ կապված հարթերես երեք մույթերը կանգնած են վեց աստիճանների վերա արևմտյան կողմից, որ կուտրոսի գերեզմանի աստիճանների նմանությունն է բերում։ Աստիճանների վերա փորագրված երեք մեծ և երեք փոքր հավասարակող խաչերը բոլորակ պսակների մեջ, կրկնված ենք տեսնում Հայաստանի ամենահին բազիլիկ եկեղեցիների և, ինչպես կտեսնենք, հելլենիստական ազդեցություն կրող շենքերի կամ կոթողների վերա։

- Իսկ պատկերագրությունը մի նոր աշխարհ է բաց անում մեր առաջ հայ արվեստի նախնականության, ճոխության և հասկացողության համար։ Սա մի unicum է Հայաստանի համար և ոչ պակաս թանկագին, ընդհանուր քրիստոնեական արվեստի հին պատկերագրության ծագման համար։ Բայց unicum չէ եղել առաջ, որովհետև նման կոթողների երկու կոտրված գլուխներ, այսինքն բուն օբելիսկների վերին մասը, գտնված են նույն Օձունում, որ այժմ պահ են դրված տաճարում։ Նման կոթողական մի շենք, բայց ծԳ դարի գործ, գտնվում է Հեռավոր Սյունիքի Ադուտի գյուղում (պատկ. 37), (պատկ. 52), որ հավանորեն ընդօրինակված է Տիծեռնակավանքի կամ նման բազիլիկ շենքի մեծակա հուշարձանից, որ այժմ անհետացած է, և ոչ անմիջապես Օձունից։

Հուշարձանի կամարների տակ եղած երկու սյուների արևելյան և արևմտյան երեսները[3] ծածկված են պատկերներով, քառանկյունների մեջ առնված, իսկ հարավային և հյուսիսային երեսները անկյունաշարաների հետ օրնամենտներով, ափսոս միայն, որ կիսով չափ արդեն քերված է գյուղացիների կողմից, իբրև դեղ գործածելով որոշ հիվանդության, և հավիտյան կորած գիտության համար։ Այժմ Հայաստանի կառավարությունը ամենախիստ հսկողություն ունի ոչ գիտական նման երևույթի դեմ։

Տարաբախտաբար ձեռքի տակ չունինք ոչ մեր նկարագրության տետրակը, և ոչ էստամբաժով կամ լուսանկարչությամբ հանած պատկերները, ուստի և չենք կարող տալ նորա կարգավորյալ նկարագրությունը ու լուսա-

---

[3] Տե՛ս ավելի մանրամասնություններով Strzygowski, Die Baukunst, պտ. 665, 666 և 667։

Նկարները, այլ օգտվում ենք դասախոսությունների համար քաղվածորեն կատարած նկատողություններից։ Մենք արդեն է գլխի մեջ հիշել ենք այդ օբելիսկներից մեկի արևելյան երեսի քանդակներից ճարտարապետական շենքի պատկերը և բացատրել նորա արժեքը, իբրև փաստական ապացույց հայ գմբեթի 6—9 դարերում գոյության։ Ապա կարևորագույն և ուշագրության արժանի երևույթներից մեկն է խոզագլուխ մարդու մի պատկեր, որ միակը չէ, այլև մի քանի ուրիշ օրինակներ ունենք Թալինի գերեզմանական կոթողների վերա և ուրիշ տեղերում որոնցից մի քանիսի պատկերը տալիս ենք այստեղ՝ անմիջական գաղափար կազմելու այս հետաքրքրական երևույթի մասին (պատկ. 38, 39, 48, 41, նաև 95), (պատկ. 53, 54, 55)։ Տեղական գեսար, մինչև ծնկները հասնող գոտեկապ չուխան և նեղ վարտիքը ապացույց են նորա ծագման տեղին։ Բայց կենդանական գլխով մարդկային քանդակներ տեսնում ենք և բազիլիկ շենքերի խոյակների վերա, որի մի օրինակը Քասախից բերել ենք էջմիածնի թանգարանը. այստեղ խոզի փոխարեն մի այլ կենդանու, գուցե, շան գլուխ։ Անշուշտ, այս երևույթի ծագումը Հայաստանում ավելի հին է, բայց հայկական քրիստոնեությունը այդ ավանդը գործածության է նախնական մատենագրության մեջ, որպիսին Տրդատի և շրջապատի խոզակերպ դառնալու ավանդությունն է Ագաթանգեղոսի մեջ, նույնը նյութ դարձնելով և արվեստի մեջ։ Թալինի գերեզմանական կոթողների մեջ երեք անգամ կրկնված այդ մոտիվը, չորրորդը գործյալ խոզագլուխ՝ կին (պատկ. 41), (պատկ. 55) է և ոչ այլ մարդ։ Հինգերորդը վժան գլուխից էջմիածնի թանգարանը բերված կոթողի վերա։ Նման երևույթ տեսնում ենք սասանյան արվեստի մեջ ևս, թեպետ հազվագյուտ. թագավորական պատկերի հետևը, որ Վռամ Բ—ն է համարվում (227-294) կանգնած է մի մարդկային ֆիգուր՝ ձիու գլխով[4]։ Ապա հատուկ անունները մեր հին մատենագրության մեջ, ինչպես Վարազ-Տրդատ, Վարազ-Շապուհ, Վարազ-Վաղան, Վարազդատ կապված են, անշուշտ, հեթանոսական նման սովորության հետ։ Կապող են, գուցե մասամբ այս հակակցողության վերա աղված լինել և ավելապրանական պատմությունները դևերի և խոզերի մեջ նրան կապակցությամբ և նկեղեցական հայրերի մեկնաբանությամբ։ Ոսկեբերան Մատթ. Ը, 31 մեկնության մեջ ասում է. «Պարտ է գիտել սույն ըմ մարդ խոզացեալ դիւրաբմբռնեն ընդ դիւաց իշխանութեամբ»[5]. «Մարդ խոզացեալք», իհարկի, բարոյական հակացողությամբ, բայց անկարելի չէ, որ բարոյականը նյութական կամ մարմնական հակացողության փոխարկվի, եթե այդպիսի փոխարկության համար հավատալիք կա։ Հայկական հեթանոսական ատաված ները կամ

[4] Spiegel. Eranishe Alterthumskunde

[5] Ոսկեբ., Մեկնութիւն Մատթէոսի, էջ 443 Migne, p. g. Col. 335։ Յոգ. Ագռնցի, Սիոն, 1938, նոյեմբեր. 446։

կուռքերը դևերի են փոխարկված, Տրդատն էլ խոզացյալ մարդ է, որպես զործիք դևերի կամ կուռքերի, քրիստոնեությունը հալածելով։

Բայց Օձունի կոթողի վերա կան նաև արական և իգական սեռի ֆիգուրներ, հավանորեն, այր և կին ննջեցյալները, որ իրենց հագուստով մեծ նմանություն են բերում սասանյան 6 դարի զրամների պգեստավորության, որ շատ օրինակներով տեսել ենք Լենինգրադի էրմիտաժի ժողովածուի մեջ, միայն այստեղ ձողաբարձ խաչ բռնած մի ձեռքում, ինչպես նաև կոպտական արվեստի հնագույն գերեզմանական քանդակների մեջ ենք տեսնում, որից այստեղ մի օրինակ ենք տալիս պարզ կացուցանելու համար (պատկ. 42), (պատկ. 56)[6]։ Օբելիսկներից մեկի վերին ճակատին առաքյալների քանդակներ կան, հագուստներն ու ձևակերպությունները նման լուսավորչի քանդակին, նման նաև Սանասարյան վաղժարանի 6 դարի ավետարանի մեջ պահված կրկնագիր հատվածի սիրիական վերսիայով ավետման հրեշտակի հագուստին. ասել է, թե աշխարհիկ զգեստները տեղական են, սփոռքը ասորական կամ արևելյան քրիստոնեական, որ ուշադրության արժանի երևույթ է հուշարձանի բնույթն ու ծագման հանգամանքները որոշելու համար։

Ապա մկրտության տեսարանը, որ մեկն է արևելքում հնագույն երևույթներից նույն նյութի, Ս. Հոգու աղավնակերպ իջման հանգամանքով, որ քրիստոնեական արվեստի մեջ երևան է գալիս Դ—Ե դարերի սարկոֆագների և դիպտիխների քանդակների մեջ։ Նույնը ունինք էջմիածնի հայտնի ավետարանի փղոսկրյա կազմի քանդակների մեջ, այն տարբերությամբ միայն, որ այնտեղ հռոմեական-ռավեննական դրոշմ է կրում որոշ չափով, իսկ այստեղ ոչ։ Մկրտության ավելի պարզ տեսարաններ, բայց հնության խորին կնիքով, ունինք գերեզմանական ուրիշ կոթողների վերա, ինչպես Թալինում, որ Ս. Հոգին կացին բռնած պսակ է դնում Հիսուսի գլխին (պատկ. 43), (պատկ. 57), որպիսի երևույթի համար և գրավոր վկայություն ունինք 3 դարի վերջերի կամ 4-ի սկզբի հայ մատենագրության մեջ։ Վրդանես քերթողը Աղվանից գրած Ճղթի մեջ բողոքում է այդպիսի հասկացողության դեմ, Նեստորական համբելով այն և ոչ համապատասխան քրիստոսի աստվածության[7]։ Նման գերեզմանական երևույթը տեսնում ենք սասանյան արվեստի մեջ, genuis -ը, ոտքին պսակ է դնում արքայի գլխին, ինչպես Tag (Tʻogi) Bostan-ի քանդակներն ոտքին պսակ է դնում արքայի գլխին. մենք արդեն են, ուր Անահիտ աստվածուհին պսակ է դնում արքայի գլխին. մենք արդեն մասնավորել ենք խոյակների ձևի նմանությունը մեր բազիլիկ եկեղեցիների խոյակների հետ, Անահիտի քանդակը մեզանում խաչով փոխարինված, որ Քրիստոս կամ քրիստոնեություն է նշանակում։ Նման իմաստով, այրի կա-

6 Կահիրեի Կոպտական քանդարան, № 239։

7 Արարատ, 1896, 481։ Տե՛ս նաև մեր «Հավուց Թառի Ամենափրկիչը», Երևան, 1937, էր. 42։

մարի վերա, աստվածուհին կամ ոգին աջով պսակ բռնած, ձախով մարգարիտներով լի անոթ[8]։ Ահա մի հանգամանք ևս, որ միջագետական-ասորական ծագման ազերան է մատնանշում։ Նման երևույթ ունինք և կոպտական արվեստի մեջ. արծիվը կոցին պսակ բռնած։ Օձունի գերեզմանական կոթողները առանց աստիճանների և պիլոնների վերա կանգնած կամարների, ինչպես և Բրդաձորինը, որ կտեսնենք քիչ հետո, մեծ նմանություններ են բերում Ակկայի խաչի, Ruthwell-ի (պատկ. 44ա և 44բ) և Kewcastle-ի արձաններին, ըստ ձևի և մասամբ ըստ բովանդակության։ Անհավանական չէ ըստ Ստրժիգովսկիի անցումը այնտեղ Հայաստանի կամ Սյուրիայի վերայով, որ Ը դարի գործ է համարվում[9]։

Օձունի հուշարձանի զարդաքանդակներից, երկրաչափականի հետ, ուշագրավ է շուշանածաղիկը, համախ կրկնված, որ տեսանք նաև Պողավանքի լուսամուտներից մեկի պսակի մեջ, և պիտի տեսնենք այլուր։

Այս բոլորից հետո, առանց տատանվելու եզրակացնել կարող են, թե հուշարձանը և տաճարը մոտավորապես նույն ժամանակի և գեղարվեստական հոսանքի գործեր են, երբ բազիլիկ և տեղական-իրանական ոճերն սկզբում են միանալ, բայց այն շրջանի, երբ գերակշռող է դեռևս բազիլիկ ոճը, մյության գործողության մեջ, ուրեմն և ավելի նախնական, քան Պողավանքը Ջ դարի առաջին կիսի, առավել ևս հին, քան Գայիանեն 630-ական, Մրենը 640-ական և Արուճը 660-ական թվականներին։

Գ

Օձունի հուշարձանի արվեստին շատ մոտ է թե՛ քանդակման և թե՛ տևսարանների քառակուսիների մեջ գետեղման տեսակետով Բդաձորի գերեզմանական կոթողը։ Բրդաձորի անվան ավելի հնագույն հիշատակութիւն մեզ հայտնի չէ, քան 1273 թիվը, երբ Հաղբատի նշանավոր եպիսկոպոսներից մեկը՝ Հովհաննես Դոսիչան, յուր Ամենափրկիչ անունով փառաղարդ խաչարձանի արձանագրության մեջ հայտնում է, թե «հետ կազմել զմեծածախ պահարանն Բրդաձորոյ սբ Նշանին»[10]։ Բրդաձորի եկեղեցին, ուրեմն կանգուն էր ԺԳ դարում, բայց նա հին էր և շատ դարեր առաջ գոյություն է ունեցել քաղիլիկ փոքր եկեղեցու շինքի ավերակից և մնացորդներից դատելով։ Բարեբախտաբար լավագույն վիճակի մեջ է և դեռևս կանգուն նորա մոտ գերեզմանական մի կոթող, կապված քաղիլիկ եկեղեցիներին կից գերեզմանական արձանների արվեստին, ոչ միայն Օձունին, որ հիշեցինք, այլև բազմաթիվ ուրիշների, որ պիտի հիշենք. ափսո՜ս, որ գլուխը կամ պսակը կոտրված է քիչ։ Հուշարձանը քառանկյունի է. ցուցադրած առաջին երեսը հասկանձև

[8] Sarre. Die Kunst des Alten Persiens եր. 44—45, պատկ. 12 և 91։

[9] Origin of christian Church Art. Oxford. 1923, p. 239.

[10] Տե՛ս մեր «Հավուց Թառի Ամենափրկիչը», 1937, երևս., եր. 61։

զարդ է (պատկ. 45), սասանյան արվեստին ևս հատուկ մի մոտիվ, ինչպես տեսնել կարող ենք արծաթի անոթների վերա[11]: Պատվանդանի վերին զարնեղի զարդը ուղղահայաց գծերի և խորափիտների շարքով կրկնված են կողբի մնացորդ քանդակների մեջ, որ հետո կտեսնենք, ոչ ավելի ուշ քան 2 դարը: Ավելի ներքև ոլորուն զարդը, որպես հավիտենականության նշանակ: Երկրորդ երեսի (պատկ. 46) վերա ոլորապատույտ, փոխաուփոխ, ողկույզի, տերեվի և ընձյուղի շարք է, իսկ պատվանդանի վերա երկրաչափական մի զարդ, հատուկ այս շրջանի մեր և սասանյան արվեստին (տե՛ս և պատկ. 51), (Խոժոռնիում): Երրորդ երեսը (պատկ. 47) արմավենիկի ոլորապատույտ մի զարդ է, որ ե դարի Տիկորի տաճարի արևմտյան դռան ճակատին ունինք և նույն շրջանին պատկանող հիշատակարանների մնացորդների վերա, ինչպես Խոժոռնին (պատկ. 50—51): Նույն զարդարանքն (պատկ. 47) ունինք Deir el Benat-ի դռան ճակատաքարի վերա, որ ե դարի գործ է համարվում[12]: Իսկ № 51-ի նմանն ունինք Եգիպտոսում, բայց ավելի Ասորիքում, ըստ Strzygowski-ի V/VI դարի գործ[13]:

Ամենից հետաքրքրականը չորրորդ երեսն է (պատկ. 48), ինչպես Օձունի հուշարձանի վերա տեսանք, քառանկյունիների մեջ գծագրական, կենդանական և մարդկային քանդակներով և բաղխիկ ոճին հատուկ ձևի խաչաքանդակներով: Ներքևից դեպի վեր առաջին երկու քառանկյունիները իսպառ փշացած են, երրորդի մեջ հավասարակող խաչ է, թևերի ծայրերին ներսի կողմից մի-մի գնդակ, որ երևան են գալիս ե—2 դարերի խաչերի վերա, որ առիթ կունենանք բացատրելու: Անկյուններից մի-մի կոթավոր ականթ, որ համաձա պիտի տեսնենք գերեզմանական ուրիշ կոթողների վերա: Հինգերորդը քառանկյունու մեջ երկրաչափական եռագիծ մի հյուսվածք է, կրկնված և տասներորդ քառակուսու մեջ, որոնց ձևը կտեսնենք Թալինին նվիրված գլխի մեջ (պատկ. 78 և 81), (պատկ. 72): Վեցերորդը մի կենդանի է, ձիու նմանություն բերող, մեջքի կողմից երեք բույսեր (ծա՞ռ, ծաղի՞կ). համեմատած նման երևույթ ուրիշ կենդանիների հետ հատուկ է սասանյան կամ նրա ազդեցության ենթակա մնացորդների վերա[14]: Յոթներորդը երկու ֆիգուր, այր և կին, բռնած խաչագլուխ ձողից, որպիսին և Օձունի վերա տեսանք, հավանորեն հանգուցյալ ամուսինները: Տասնմեկերորդը՝ Մնո՞ւնդը, շատ աղոտ, քարայրը ներկայացրած է չորս պատառձև կամարների շարքով: Կարին մի ֆիգուր՝ փշացած: Տասներսերորդը այլ ձևի խաչ, փշացած: Մնա-

---

[11] Smirnow, Wostochnoe Serebro Taf. LXX St. Peters. Orbeli et Trewer. Sasanidsky Metall. Moskwa—Leningrad. 1935, 51.

[12] Deir el Benat-ը գտնվում է Հալեպի և Անտիոքի մեջ:

[13] Die Koptische Kunst, 189: 8792. Եգիպտոսի համար Crum, Die Grabstelle, 8633, pl. X.

[14] Տե՛ս Pope, 201, 208, 232 պատկերները:

ցածը կոտրված է. դժվար է ասել, թե որքան բարձր էր, հավանորեն, ոչ շատ։ Այս երեսին ևս, պատվանդանի վերա հավասարակող և կոթավոր մի խաչ կա, երկգիծ բոլորակ շրջանակի մեջ առնված։

Բայց եկեղեցու և տեղի հնության հայտարար է և մի ուրիշ մնացորդ, հավանական ենք համարում գերեզմանական մի այլ ձևի կոթողի մնացորդ, անջատ սյունի մի բեկոր խոյակով վերջացած, բայց խոյակի վերան էլ եղել է մի բան, վերին մասի փորվածքից դատելով, դժվար կահելի, թե ի՞նչ էր այն, խաչ արդյո՞ք։ Կոթողների ձևի և նրանց վերջավորության մասին, կը-խոսինք հետո, այստեղ մեզ հետաքրքրում են առայժմ նրանց քանդակները, որ երևում են նաև ասորական՝ 6—8 դարի քանդակագործության մեջ, այսին-քըն վեցթևյան խաչեր բոլորակ շրջանակի մեջ[15], նաև արմավենիկի ոլորապը-տույտը և շուշանածաղիկը, ինչպես Տիկորի եկեղեցու և Օձունի կոթողի վերա։

Դ

Բրդաձորից ոչ հեռու, նույն հովտի մեջ, փոքր-ինչ դեպի հյուսիս, Խո-ժորնի ավանն է, որ ըստ Վարդանի Զաքարյանց նախահայրենիքն էր. նրանք այդտեղ հաստատված պիտի լինին ԺԱ դարում. մենք ունինք այդտեղ նրան-ցից ԺԳ դարի արձանագրական հիշատակներ, ինչպես Զաքարիա մեծի որդի Շահնշահինը անստոում, որ բանասիրությանը դեռևս անհայտ է։ Բայց Զա-քարյանների տիրապետությունից էլ շատ առաջ՝ այդտեղ եղել է ստեղծագոր-ծական և մշակութային կյանք։ Փոքրիկ մի նավանի բակլիկ եկեղեցի գըտ-նվում է Խոժորնի գյուղում՝ բլրի վերա, որ հիշեցինք առաջ, ուր վրացի իշ-խան Մելիքզվների բնակարանն էր, հետո գտնված մեծահարուստ Արամյանի կողմից, իսկ այժմ պետականացած։ Այդ եկեղեցու մոտ է այն գերեզմանա-կան կոթողը, որ հիշեցինք առաջ։

Բայց եղել է մի շատ ավելի փառահեղ տաճար, ավերակների աղնիվ մնացորդներից դատելով, որի տեղը շինված է ԺԱ դարում այստեղ ցուցադըր-ված շենքը (պատկ. 49), (պատկ. 58). սորա պատերի մեջ գործադրված են շատ քանդակներ, հենց մնացած, ներսն էլ այժմ հավաքված են քանդակների բեկոր-ներ, որոնցից մեկը խոտրաճեղակ, պսակի մեջ առնված մի գեղեցիկ հավա-սարակող խաչ է, որոնց նման խորաքանդակներով, այլևս է դարից սկսած գործածական չեն հայ քանդակագործության մեջ։ Եկեղեցու արձանագրու-թյունները ու առանձնահատուկ ուսումնասիրությունը Զաքարյանց շրջանի հիշատակներով, թողնում ենք այլ առթիվ, բայց ներկայիս տալիս ենք հին եկեղեցու քանդակներից մի քանի բեկորներ, որոնք կասկածի տեղիք չեն թողնում, թե նա մեկն է եղել Օձունի շրջանի և նորա գերեզմանական հու-շարձանի շինության ժամանակից։ Ահա ձեզ ալիքաձև արմավենիկի քանդակը

---

15 Strzygowski, L'ancien Art Chrétien, Paris, 1936, p. 87—88.

(պատկ. 50), որ տեսանք Բրդաձորի կոթողի և նույնն ունինք ե դարի Տիկորի արևմտյան դռան ճակատաքարի վերա: Երկրորդ քանդակը (պատկ. 51) տեսանք նույնպես Բրդաձորի հուշարձանի պատվանդանի վերա. նման մոտիվը Strz. ծագումով ասորական է համարում, ե—Զ դարերի գործ[16]: Չորրորդը (պատկ. 52) խաչի քանդակը, ճակատի սասանյան հասկաձև զարդի հետ, ամենասերտ առնչություն ունին քանդակման եղանակի և մոտիվների կողմից Բրդաձորի, Օձունի և Կողբի հետ. վերջինի մասին կխոսինք հետևյալ պրակում: Կետրոնական խաչի պալմիկները տեսնում ենք սասանյան ամենահին զրամների վերա[17]: Ահա մի այլ բնկոր գեղեցմանական կոթող, եռաստիճան և ծակոտկեն պատվանդանի վերա ձողաբարձ խաչը հավասարակող, բոլորակ պսակի մեջ առնված, պսակի բոլորակի զարդի եռանկյունաձևերի շարքը, ինչպես և ամբողջ շրջանակը, տեսնենք պիտի և Կողբի քանդակների մեջ, որ հետագայում այլևս չի կրկնվում հայ քանդակագործության մեջ (պատկ. 53): Արևելյան լուսամուտի գլխին դրված քանդակը, մի իշխանի և եպիսկոպոսի, ձեռքներին եկեղեցու մոդելը բռնած, կասկածելի ենք համարում, որպես հին եկեղեցու մաս, և հավանական ներկա շենքի հետ կապված (պատկ. 54):

Պետք է հիշենք նաև մի մոտիվ ևս, ձախ ավանդատան պատի մեջ զետեղած, Ամենակալը աթոռի վերա նստած, որ տարաբախտաբար լուսանկարել չկարողացանք, տեղի նեղության և անհարմարության պատճառով, որ յուր նմանների մեջ հետագույնը պիտի լինի, եթե Օձունի արևելյան լուսամուտի գլխի Հիսուսի քանդակը Ամենակալ չէ:

ե

Նախընթաց պրակի մեջ հիշեցինք Կողբի ավերակների մասին: Նախ ճըշտենք տեղը. այս վայրը չպետք է շփոթել Արշարունյաց գավառի ադահանքերին կից նույնանուն հին ավանի՝ Եղնիկ Կողբացու հայրենիքի հետ. սա գտնվում է Զորագետի աջ կողմը, Ղազախ և Լոռի գավառների սահմանագծին մոտ, մոտավորապես Ախտալայի շրջանում, հնում Կողբափոր կոչված: Այդ երկրամասը հարուստ է հին եկեղեցիների մնացորդներով, բայց գյուղի հյուսիս-արևելյան կողմը, գյուղացիներից մեկը իրեն պատկան հողի վերա կամենալով կալ շինել, փորելիս երեսն է գալիս քանդակների մի բազմություն եկեղեցու պատերի հետ: Հայատառների կառավարությունն իսկույն արգելում է շարունակել, իբր հնության վայր, ապագային թողնելով պեղումները իատարել մասնագետների ձեռքով: Ուրեմն, եկեղեցու ձևի մասին խոսել չենք

[16] Die Koptische Kunst. պատկ. 189: 8792: Համեմատել և Crum, Die Grabstelle 8633, pl. X.

[17] Friedrich Sarre, Die Kunst des alten Persiens. 1923. Taf. 142, № 4 դրաժը:

կարող, թեև նշխարներից դատելով հնագույն շենքերից մեկը պիտի լինի, արտաքո կարգի հետաքրքրական, երևան հանված փշրանքների համեմատ։

Նախ հիշենք, որ այստեղ ևս կա գերեզմանական կոթողի մի մնացորդ. ձևով նման կետրոնական Հայաստանի, հատկապես Արագածի շուրջը երևան եկած կոթողներին, որոնց մասին երկար պիտի խոսենք հետևյալ պրակների մեջ։ Այս նշխարների փոքրիկ մնացորդներն իսկ բավական են մատնանշելու, թե այստեղ եղել է մի շենք սասանյան-միջագետական և բյուզանդական նախնական շրջանի հետ կապված, ինչպես և Օձունի, Բրդաձորի և Խոժոռնիի մնացորդների, բայց նաև կետրոնական Հայաստանի գերեզմանական կոթողների, իրենց շատ մոտիվներով (պատկ. 55), (պատկ. 59)։

Նախ քննենք (պատկ. 56), (պատկ. 60) աջից ձախ ա, բ, գ, բեկորները, որոնց թվում են գերեզմանական կոթողներ. դոցանից ա-ի ներքևի մասից վեր՝ ոլորապտույտ որթ է, ողկույզի և տերևի շարքով, որթի վերա կանգնած է մի մարդ, ձախ ձեռքով ձողաբարձ խաչ բռնած, որ հաստատված է վարդյակի մեջ։ Վերևի տարածությունը կտրատված է շղթայի գծերով քառանկյունիների, իսկ ճակատին՝ սասանյան հասկաձև զարդ, որ Բրդաձորի և Խոժոռնիի քանդակների մեջ ևս տեսանք։ Մոտավոր նմանությամբ մի քանդակ ունինք Լմբատավանքի վերա՝ արևելյան Շիրակում, որ ամենաուշը է դարի սկզբների շենք է. այդ քանդակը ըստ Ստրժիգովսկու մի հին շենքի մնացորդ է[18], որ գործադրված է այստեղ իբր դռան վերին կողք, ասել է, թե ավելի հին է, քան է դարը. կողմնակի մի ապացույց հնության։ Ուշադրության արժանի է մարդու դեմքատը, որ քղանցքները զարդարուն չուխա է, իսկ տակից երկար բաճկոն, նեղ անդրավարտիք և կոշիկներ հագած։ Խաղողի կախ ողկույզները ոլորապտույտ որթի վերա, նմանությունն Գառնիի Տրդատա թախտի հարթաքանդակման զարդի հետ, ինչպես իրավամբ նկատել է Ստրժիգովսկին[19]։

Երկրորդ բեկորը նույնպես գերեզմանական կոթողի մաս է, իսկ քանդակը Աբրահամի զոհաբերությունը, որ մենք պիտի տեսնենք Թալինի և Ագիլյամանի հուշարձանների վերա ևս, միայն այնտեղ քիչ տարբեր դասավորությամբ և ավելի պարզ բովանդակությամբ։ Պատկերի միջին ֆիգուրը, որ Աբրահամն է, մի ձեռքով բռնել է Իսահակի գլխից, մյուսով սուրը դեպի պարանոցը մեկնել։ Իսահակը ծալապատիկ (կապված է՞) դրված է անկյունի սեղանի վերա, որ բնով հաստատված է պատվանդանի մեջ։ Աբրահամի հետևից կախված է խոյը, վերևի անկյունից Տիրոջ աջը օրհնում է, երկինք ձևացնող կամարի տակից։ Դորանից բարձր մի սերամարգ կոցա-հարում է մի ինչ-որ բան, որ փչացած է, հավանորեն խաղողի ողկույզ։ Այս բոլորն առնված է քառանկյունի շրջանակի մեջ, Օձունի և Բրդաձորի նը-

[18] Die Baukunst. 406.
[19] Die Baukunst. 406.

ման։ Աջը որպես Աստծո ներկայության նշան տեսնում ենք նաև Ռավեննայի Ս. Վիտալիոսի մոզայիկների մեջ, որպիսին Աբելի և Մելքիսեդեկի զոհաբերությունն է։

Երրորդը պահել է միայն մի խաչաքանդակ երկաստիճան պատվանդանի վերա հաստատված, որ պետք է դիտել ի հակառակն։ Պատվանդանի մոտ, կողքի երկու կողմից, շրջանակին կպած են երկու ողկույզներ, երկու հատ էլ վերին թևի անկյուններից կախված, որոնք կտրատված են շեղակի գծերով, ինչպես և բեկորի վերա տեսանք։ Ներքևի թևի անկյուններից բարձրացել են մի-մի արմավենիկ, նման խոժոռների խաչի և սասանյան 6 դարի դրամների արմավենիկներին (տե՛ս Դ գլ.), (պատկ. 52)։ Պատվանդանի տակ նկատվում է զարդի մի փոքրիկ մաս, որ տեսանք Բրդաձորի և խոժոռների մեջ ևս, նաև խաղողի ողկույզի կտրատումը շեղակի գծերով։ Համեմատելի է կոպտական նման երևույթի հետ, որ ըստ Strz.-ի ասորական աղբյուրներ ունի և 6—9 դարերի գործ է[20]։

Չևի մասին քիչ հետո։

Արվեստի աղնվության և նուրբ քանդակի մասին, մանավանդ հելլենիստական ազդեցության, պարզ ապացույցներ ունինք դ և ե բեկորներով. (պատկ. 57). առաջինը աջից ձախ անշուշտ, մի կոթողի պատվանդան է, բուսը տարբեր ձևակերպությամբ, քան սովորական է, այսինքն ոչ քառանկյունի, այլ բոլորաձև, որ հելլենականության աղբյուր է մատնանշում, ինչպես և քանդակակերպն առհասարակ։ Պատվանդանի կետրոնում նստած է Աստվածամայրը՝ Հիսուսը գրկին, երկուսի դեմքերն էլ փշացած։ Հիսուսը ձախով ավետարան է բռնած, իսկ աջով խաչակնքում է։ Մարիամը երկու ձեռքով գրկել է որդուն, բայց ձեռքերը ոչ իրար կպած, այլ աջը փորի վերա դրած, իսկ ձախը՝ ոտքի, որ չի երևում, ծածկված է մոր վերնազգեստի տակ։ Մարիամը նստած է աթոռի վերա, ոտքերի տակ, անշուշտ, պատվանդան կար, բայց կոտրված է։ Որքան և պատկերաքանդակը փոքր է, բայց որոշ են հագուստների ձևերն ու ծալքերի մանրամասնությունները, որ հատուկ են միջագետական-ասորական արվեստին։ Աթոռի երկու կողքերից վեր են բարձրացած երկու գեղեցիկ արմավենիկներ, որի լավագույն և պարզ օրինակը կրկնված է մի խոյակի վերա (պատկ. 59), (պատկ. 61)։ Մարիամի գլխի աջ կողմից նկատվում է մի բոլորակ անիվ, որ հավիտենականության նշանակն է, իսկ խոյակի գարնեղի զարդը մեզ հաճախ հանդիպած և հանդիպելիք հասկաձև զարդ է, ինչպես հիշել ենք, սասանյան արվեստին ևս հատուկ։ Նույն պատկերի մեջ նշած ե բեկորը նույնպես պատվանդանի կտոր պետք է լինի, վերևի փոսն ի նկատի ունենալով, երեսի քանդակները բուսական և

[20] Strz., Die Koptishe պատկ. 189, ^792։

ճակատը երեք հավասարակող խաչեր, զույգ գծերի շրջանակի մեջ առնված, նման Օձունի, Բրդաձորի, Խոժոռնիի և Հայաստանի բազիլիկ եկեղեցիների վերայի քանդակներին, որ հաճախ պիտի և տեսնենք հետո ևս։ Իսկ զ քանդակը պարզ գերեզմանական կոթողի վերին մասն է, խաչարձան, կոթը հաստատված շրջանակի մեջ. վարդյակի վերա շրջանակի զարդը հասկաձև, իսկ վերևի մասը վերջացած հավասարակող խաչով՝ պսակի մեջ առնված, վերևից և հորիզոնական թևերից մի-մի ողկույզ կախված՝ երեսները շեղակի գծերով կարատված, ինչպես առաջ էլ տեսանք։ Խաչարձանի այս ձևը, որ հետո նման հուշարձանների համար ընդհանուր է դառնում, Հայաստանի մեջ շատ տարածված և բարձր զարգացման ու պեսպիսության հասած մի երևույթ է հետագա դարերում, որպես հետևանք հայ եկեղեցու դավանաբանական որոշ ուղղության, և հակառակ պատկերապաշտության՝ խաչի պաշտամանն ուված արտաքո կարգի նշանակության[21]։

Բայց արտաքո կարգի հետաքրքրական են և բնորոշ արվեստի տեսակետով է (պատկ. 58, 59), (պատկ. 61) ը, թ, ժ, բեկորները իրենց ձևերով և քանդակներով, որոնք միջագետական-սասանյան արվեստի հնագույն մնացորդներ են մեզանում, հելլենական շնչով և չեն կրկնվում հայ ճարտարապետության մեջ և հետագա շրջանների գերեզմանական կոթողների վերա։ Առաջինը, որ ակնհայտնի կերպով խոյակ է, շենքի մաս, (պատկ. 58), երկու երեսի պատկերն ունինք միայն, մեկը պալմիետների մեջ շուշանածաղիկ, մյուսը նույն ականթների կամ պալմիետների մեջ հավասարակող խաչ, պորտում rամաշկա ծաղիկը, սասանյան և մեր այս շրջանի արվեստի մեջ հաճախ կրկնված, ինչպես և վերևի գարնելի հասկաձև զարդը, համեմատելի Կայիրևի թանգարանի 100, 7347 խոյակի հետ, շուշանածաղիկի և ականթի ձևի և քանդակման կողմից։ Շուշանածաղիկը և կոթավոր խաչը քիչ տարբեր ձևակերպությամբ նաև աջից ը խոյակի (պատկ. 58) վերա։ Շուշանածաղիկը յուր տերևներով նաև Ղարաջալարի կոթողի վերա, Արագածի հարավային փեշերին (պատկ. 60)։ Իններորդ տեսանելի երեսները ավետման խմբաքանդակն է, տարաբախտաբար շատ եղծված վիճակում։ Տասներորդ բեկորը կոթողի պատվանդան է, հավանորեն, որի բունը կլոր էր, վերևի փոքրիկ մնացորդից դատելով։ Իսկ ձևը երկու քառանկյունիներ իրար վերա և նրանց զարդերը, պորտավոր վարդյակը, հակադիր եռանկյունիների շրջանակը ալիքաձև զարդերը և ուղղահայաց գծազարդերը, նույն հոսանքն են մատնանշում։ Այս խոյակները իրենց ձևով հիշեցնում են Բրդաձորինը, բյուզանդական խոյակների նախատիպարները (պատկ. 61, 62, 63), (պատկ. 62, 63)։ Խոյակների այս պեսպիսությունը, հնությունը և որոշ նմանությունները բյուզանդականի հետ՝

---

21 Տե՛ս մեր «Հավուց թառի Ամենափրկիչը», Երուս., 1937, 41, 51 և շար.։

հայ և բյուզանդական արվեստների փոխադարձ հարաբերության շոշափելի ապացույցներ է տալիս, զորացնելու Սարժիդովսկու կարծիքը, թե նրանք ծագումով, գուցե, ասորա-եգիպտական լինին, կավելացնենք, գուցե և հայկական, քանի որ Ասորիքի, Եգիպտոսի, ինչպես և Հայաստանի մեջ նույն գեղարվեստական հոսանքն է նկատելի[22]: Մեր այս խոյակները համեմատելի են Bavit-ի խոյակների հետ, որ Crum-ը բյուզանդական է համարում, իսկ Strzygowski-ն ծագումով ավելի հին Դ—Ե դարերի, համեմատելի հատկապես № 7344-ը, իսկ 7345-ը համեմատելի Զվարթնոցի հետ:

Պատկ. 64 զարդաքանդակը սասանյան արվեստին ևս հատուկ, հասկանձև է, որին նմանները տեսանք Գ գլխի մեջ նկ. 69 և հենց այստեղ քիչ առաջ: Այս զարդը նկատվում է և հարևան ազգերի արվեստի մեջ բավական ընդարձակ չափով Ե—Զ դարերում, օրինակ Կերնիբայի արծաթի տախտակների վերա, որ այժմ Նյու Յորքի Մետրոպոլիտեն թանգարանի սեփականության է, Մորգանի ժողովածու. Շարլ Դիլը համարում է այն Ե դարի վերջերի կամ Զ—ի սկզբի գործ[23], իսկ Սարժիդովսկին՝ Զ—է դարի[24]: Մեր շենքի ժամանակը որոշելու կովան կարող ենք ընդունել նաև ճակատի վիրակոն խուցուրի գրությունը, որից միայն հանել կարելի չեղավ:

Կողքին գտնվում է մի ուրիշ քարի կտոր, հայերեն արձանագրությամբ, շեղագիր կոչված գրերով, որ յուր ծագմամբ նույնչափ հին պիտի լինի, որչափ Մեսրոպյան կոչված երկաթագիրը, ուրեմն շեղագիր լինելու հանգամանքը արդելք չէ հին ընդունելու այն: Տարաբախտաբար, արձանագրության շատ եղծված լինելու և ժամանակի անհարմարության պատճառով, չկարողացանք տեղում վերծանել, ինչպես և լուսանկարից հետագայում: Բայց առանց հայերենի էլ վրացերենի գոյությունը չի հարկադրում բացատել շենքի հայկական ծագումը: Գիրք Թղթոցի մեջ պահված ժամանակակից գրավոր վկայություններ հաստատում են Գուգարաց գավառի մեջ Զ դարում հայերենն ու վրացերենը հավասարապես որպես եկեղեցական լեզու գործադրությունը, որ անկարելի կլիներ այլևս է դարի առաջին տասնամյակից հետո, երբ բաժանվեցան երկու ազգերը եկեղեցականապես: Վրացերենը երևան է գալիս մեկ էլ Զաքարյանների շրջանում, երբ քաղաքական սերտ գործակցություն էր ստեղծված երկու ազգերի մեջ: Նախընթաց բոլոր համեմատությունները ու ցուցումները ի նկատի առնելով, Կողբի եկեղեցու ծագումը պետք է նշանակել ոչ ուշ, քան Զ դարի վերջերը, եթե ոչ ավելի վաղ:

Մեր ցուցադրած բեկորների բազմազան երևույթներն ու մոտիվները՝

---

[22] Strzygowski. Die Koptische Kunst. եր. 69:

[23] L'ecole artistique d'Anticche et les tresors d'argenterie Syrienne, pl. 1 և 2

[24] Strzygowski, L'ancient art de Syrie. Medaillons de Shypre. p. 24: Altai Iran. 44—45, Taf. VII.

շուշանածաղիկներն ու ramաշկաձեր, քառաթև և վեցթևյան խաչերը բոլոր-րակների մեջ առնված, այսների խարիսխներն ու նրանց բոլորակությունը, բոլորը հարատացնում են մեր բերած փաստերը, թե այս եկեղեցին մի շինք է նախքան է դարը Հայաստանում գոյություն ունեցող գեղարվեստական հուսանքի, որ մեռնել է սկսում կամ մեռնել է արդեն է դարում ազգային ճարտարապետության կատարելապես ծաղկման շրջանում։ Հետագայի (պատկ. 65) խաչերը մասամբ եկեղեցու ծագման և ոճանք ավելի ուշ ժամանակին են պատկանում, բացի ամենից ձախ բեկորը, որ նախնական շրջանի մնացորդ է։

2

Այս հատվածի Ա գլխի մեջ, ուր գերեզմանական կոթողների տեղագրությունը կատարեցինք, հիշեցինք Թալինի անունը, ուր բազմաթիվ մնացորդներ կան. այդ վայրը կամսարական իշխանների նստոցն էր, նոր քառով՝ մայրաքաղաքը։ Նրանք, ըստ ավանդության Հայաստանում հաստատվեցան Դ դարի սկզբում՝ Տրդատ քրիստոնյայի ժամանակ, որպես սեփականատեր Արշարունյաց և Շիրակա գավառների. նոքա կարևոր դեր են կատարել Հայոց պատմության մեջ Մամիկոնյանների հետ եկեղեցու և հայրենիքի պաշտպանության գործում և անհետանում են կամ երկրորդական դառնում Ը դարում, ծախելով իրենց կալվածները Բագրատունիներին։ Բայց նրանց ծառայությունը ավելի փոքր չէ հայ ճարտարապետության և գրչության արվեստի պատմության մեջ, որովհետև նրանցն է կամ նրանց իշխանության մեջ այն պիսի հուշարձաններ, որպիսին Տիկորն է ե դարի վերջերից կամ Թալինի գույգ եկեղեցիները, հոյակապ Մրենը է դարում։ Թալինի եկեղեցիներից փոքրը է դարի առաջին կիսի գործ է, որի արձանագրությունը, թեև թվական չունի, բայց «Ներսէհ ապոհիպատ պատրիկ Շիրակայ և Արշարունեաց Տէր» մեզ հայտնի է Ալամանի և Մրենի արձանագրություններից, առաջինը Հերակլ կայսեր 27, իսկ երկրորդը 20-րդ տարին շինված, այսինքն 637 և 639 թվականներին[25]։ Երկրորդ մեծ և ավելի փառավոր տաճարը շինության թվական չունի, բայց նա ավելի ուշ չէ, քան Ը դարի սկիզբները, երբ դադարել էր գերեզմանական կոթողների սովոր մնացորդներն, որ ունինք այստեղ, ամեն տեղ կապված տեսանք բազիլիկ եկեղեցիների գոյության հետ, դրան ապացույց պիտի համարել։ Նրանք դանվում են այժմ մեծ եկեղեցու մոտ, բայց

25 Տե՛ս մեր «Դրչության արվեստը», Գ, § 6։
26 Անդ. § 11։ Բեռիդը տե՛ս և Ալիշան, Այրարատ, 138։

բերված են գյուղացիների կողմից և իբրև շիրմաքար գործադրված իրենց ննջեցյալների վերա մերձակա մի վայրից, որի հետքերը, տարաբախտաբար գտնել չկարողացանք, սրբված լինելով կամ այգիների տակ ծածկված։

Այդ կոթողներից մեկն է պատկ. 38 խոշոգլուխ մարդկային ֆիգուրով, որ համեմատեցինք Օձունի նույնանման երևույթի հետ. և նույնը տեսանք նույն տեղի ուրիշ կոթողների վերա (պատկ. 53, 54, 55), վերջինը կին։ Սրանցից առաջին երկուսի վերին ֆիգուրը սրբի պատկեր է, որ նույն երևույթի գրական բովանդակությունն ի նկատի ունենալով, պետք է նույնացնենք Գրիգոր Լուսավորչի հետ. խոշոգլուխը՝ այսինքն Տրդատ, համբուրում է Ս. Լուսավորչի ոտքը, ձախ ձեռքը վեր բարձրացրած, որպես նշան պաշտաման կամ երկրպագության, Adorasion, ինչպես կտեսնենք ավետման կամ Աստվածածնի պատկերագրությունների մեջ ևս. ուրեմն սովորական այս ժամանակի քանդակված պատկերագրության մեջ։

Վերևի պատկերը ձախ ձեռքին ավետարան ունի բռնած, իսկ աջը ցած է ձգել. ունի լուսո պսակ բոլորակ, հագուստն էլ նման Օձունի առաքելոց հագուստին, մինչև ծնկները հասնող պարեգոտ, իսկ ձախ ուսի վերայից վերնազգեստը ձգած, ծածկում է կուրծքը, մյուս փեշը իջնում է ծնկներից էլ ցած, բայց ոչ պարեգոտի երկարության։ Հատկանշական է պարեգոտի և թիկնոցի խիտ առ խիտ ծալքերը, որ սիրիական ազդեցություն կրող քանդակներին է հատուկ։ Սրբի ձեռքին կազմած գիրքը, փոխանակ գալարուն մագաղաթի, չկետք է մեզ վարանե քանդակի ծագումը չորրորդ և հինգերորդ դարը տանել, որովհետև կազմի ծագումը շատ ավելի հին է. չորրորդ դարից ունինք քրիստոնեական քանդակներ[27] և հինգերորդ դարից արդեն ս. գիրք կազմով, Lodex sinaitieus-ը։ Դեմքը չարդված է, բայց կարելի է գաղափար կազմել մյուս օրինակներից, որ կիսով չափ անեղծ են, և երևում են գլխի մազերն ու թավ մորուքը, աչքերն ու քիթը։ Կոթողի մնացորդի մեծությունն է 150 սմ, բուն քանդակը և պատվանդանը 16 սմ, լայնքը 45 սմ։

Հակառակ կողմը քանդակի լայնքը 46 սմ, երկարությունը 120։ Թվում է կնոջ պատկեր, դեմքը փշացած (պատկ. 66), (պատկ. 64), հագուստի ներքնազգեստը մինչև ոտները, իսկ վերնազգեստը քիչ կարճ. երկար բաճկոնից ձգել է աջ ուսի վրայից և ճարմանդել պարանոցի տակ. ձեռքերը դուրս հանել է աջ ուսի վրայից և ճարմանդել պարանոցի տակ. ձեռքերը դուրս հանելով վերնազգեստի տակից և բարձրացնելով աղոթողի դիրքով, որով ներքնազգեստը բաց է ձախ կողքից, ընդհանուր նմանությամբ վաղ բյուզանդական պաշտոնական զգեստավորության։ Ոտքերին թվում է անկրունկ կոշիկ։ Ֆիգուրի ոտքերի տակ կոթսվոր ականթի երեք սրածայր տերևները վեր բարձրացած, իսկ երկուսը դեպի ցած խոնարհած, որ նմանությամբ ունինք և

[27] Burckhardt, Die Zeit Constantins des Grossen. պատկ. 90, 91։

ուրիշ կոթողների վերա։ Երրորդը, երեսը՝ պատվանդանի վերա կոթով հաստատված խաչ (պատկ. 67), ուղղահայաց մասը շատ երկար, իսկ հորիզոնականը կարճ և կոտրված։ ... բայց լրացուցիչ գաղափար են տալիս (պատկ. 68, 69)։ Ձախ կողմից երևում են սրածայր երեք եռանկյունաձև երկրաչափական ձևեր, կամ սլաքներ իրար հետևից, նրանց մեջ երկրորդը նույն ձևի, իրար վերա, որ սիմվոլիկ նշանակություն պիտի ունենա (պատկ. 70ա). Նման սորան այդ կողմից (պատկ. 70բ) վերին մասը կոտրված։

Հիշենք և խողակերպ կնոջ մի պատկեր (պատկ. 41), (պատկ. 55). այս տեղից խողի դունչը ավելի նուրբ է և սուր, գլխին էլ լայնակ ձևված և բոլորակ լուսո պսակով։ Աջ ձեռքով բռնել է ձողաբարձ խաչ կամ խաչագլուխ դավազան, ինչպես տեսանք Օձունում, Կողբում (պատկ. 56), Լմբատավանքում և պիտի տեսնենք սորանից զատ՝ Թալինի ուրիշ արձանների վերա։ Հակառակ արու խողակերպին, սա ունի բոլորակ լուսո պսակ. հագել է երկար կանացի շրջազգեստ և ուսերի վերայից ձգել շարսավ, որի երկու քղանցքները առաջի մասից ցած են իջնում. աջ ձեռքը դրել է կրծքին[28]։ Կոթողի վերևի երեսը չորս տերևներից կազմված ականթ է պարսկական, երկուսը վեր բարձրացրած, իսկ երկու փոքր տերև դեպի ցած կախված, հաճախ կրկնված Թալինի կոթողների վերա և ալյուր։

Սորա հակառակ կողմը դարձյալ երկու տեսարանով քանդակ է, վերևի պսակի վերա շուշանածաղիկ, կողքերից երկու տերևով, իսկ ներքևը բոլորակ սիմբուսով մի սուրբ, ականջների մոտ կտրված մազերով, երեսը փշացած, ձեռքերը հավատամք բռնած (՞), քրձազգեստ Հովհաննես Մկրտիչ (պատկ. 71), (պատկ. 66)։ Կողքին ձողաբարձ խաչ։

Երրորդ երեսը նույնպես երկու տեսարանով, վերևում ամբողջ հասակով կանգնած է թևավոր հրեշտակ, աջով խաչակնքում է (՞), ձախը կրծքին, դեմքը փշացած, միայն ձախ կողմից երևում է գանգուրների և լուսո պսակի մի մասը։ Հագել է երկար բաճկոն, մեջքը լաթե գոտիով կապած, որի կապի ծայրերը իջած են դեպի ցած։ Երևում է փոխանի ներքևի բերանը։ Կոշիկների կրունկները իրար մոտ և ոտքերի ծայրերը հակառակ ուղղությամբ, որ հնության նշաններից մեկն է։ Վերան ձգել է փիլոնաձև վերնազգեստ, ուսերի և կրծքի վերա ծալքերով (պատկ. 72)։

Սորա տակը Աստվածածինն է, նստած աթոռի վերա, Հիսուսը գրկին։ Աստվածածինը բոլորակ լուսո պսակ ունի գլխին, դեմքը փշացած, բայց աջ և ձախ կողմից երկու խոպոպիկներ իջած կրծքին։ Հագել է մինչև ոտքերը հասնող հորիզոնական ծալքերով ներքնազգեստ և վերան ձգել նույն ծալքավորում-

---

28 Strzygowski-ն յուր Armenishe Baukunst-ի մեջ, եր. 719 տպել է այս պատկերը՝ նույնացնելով այն Տրդատի հետ, որ սխալ է։ Քանդակը կնոջ պատկեր է անկասկած, ոչ միայն ավելի նուրբ դեմքով, այլև կանացի զգեստով։

ներով քղամիդ։ Ձախ ծնկան, բայց կարելի է ասել գոգին, քիչ հենված ստր ձախ թևի վերա, նստել է ոչ մանուկ, այլ պատանի Հիսուսը, որին մայրը ձախով բռնել է և աջով թեթև հպել ծնկներին, Հիսուսը հագել է մինչև ոտները հասնող երկար պճղնավոր արևելյան բաճկոն. երևում են ոտները, երկուսն էլ դեպի աջ ուղղված։ Ձախով ավետարան է բռնած, իսկ աջով օրհնում է. երեսը դարձրել է դեպի ձախ։ Մարիամը ոտքերի տակ ունի պատվանդան, ինչպես նույն տիպի Ուշանի Աստվածածինն ունի, բայց այստեղ կոտրված է։ Կոթողի բարձրությունն է 120 սմ, լայնքը՝ 37։

Չորրորդ երեսը, վերևի ճակատը ականթ, իսկ ներքևը նիմբուսավոր մի մարդ, աջով ձողաբարձ խաչ բռնած, ձախ կրծքին (պատկ. 72), հավանորեն ննջեցյալը։ Նկարը գաղափար է տալիս և կոթողի ձևի մասին։

Մի այլ կոթող երկու տեսարանով։ Վերևում դարձյալ մի թևավոր հրեշտակ, բայց տարբեր ձևակերպությամբ, քան նախընթացը. ունի մեծ, բոլորակ լուսապսակ, մազերը կտրված ականջների մոտ. հագած է երկար մինչև ոտքերը հասնող շրջազգեստ. ուսերի վերայից ձգված թիկնոցը, որի երկու քղանցքները ուսերի վրայից ցած են իջնում առաջակողմից, կրունկները իրար մոտ և ոտքերն հակառակ ուղղությամբ (պատկ. 73), (պատկ. 67)։ Աջ ձեռքը վեր է բարձրացրել, ափը դեպի նայողը բացած, իսկ ձախին գունդ ունի բռնած։ Ուշադրության արժանի է հրեշտակի ողջույնի այդ ձևը, որ երևում է Աստվածածնի քանդակների վերա. լոռիի Այգեհատ գյուղի ավերակ եկեղեցու ափսիդի հյուսիսային պատի մեջ հագցրած է մի գերեզմանական կոթող, որ Աստվածածնի պատկերն է, Հիսուսը ձախ թևին, իսկ աջը վեր բարձրացրած, ինչպես հրեշտակի թևն է այստեղ։ Նույնը կտեսնենք մի գերեզմանական կոթողի պատվանդանի վերա հետո (պատկ. 85)։ Բայց հետաքրքրական է, որ նույն երևույթը տեսնում ենք և կոպտական գերեզմանական արձանների վերա[29]։

Ներքևի ֆիգուրը մի մարդ է, կողքին ձողաբարձ խաչ, ձեռքերը հավատամք բռնած։ Ունի բոլորակ լուսապսակ. մազերը խիտ և կտրված այնպես, ինչպես, նախընթացները։ Հովհաննես Մկրտիչն է, մյուս կողմը մկրտվող Հիսուս, որի գլխին պսակ է դնում դեպի ցած սավառնող հրեշտակը (պատկ. 43), որի կարևոր նշանակությունը ժամանակի և հոսանքի որոշման համար տեսանք վերև (եր. 64)։ Արձանը վերևի մասում ուներ մի այլ վերջավորություն, հավանորեն խաչ տնկած, որովհետև նկատվում է փորվածքը, որի մեջ հաստատված պիտի լիներ այն։

Ի

Պատկեր 68 մի արձանի մնացորդ է, միայն ներքևի տեսարաններով մեզ հասած, որի առաջին երեսը ականթ է մեծ, որ ցուցադրեցինք առաջին մասի մեջ, պատկ. 9։

29 Կահիրեի թանգարան, տե՛ս պատկ. 42։

Սորա հակադիր կողմը մարդու քանդակ է, դեմքը փշացած, բայց նկատելի այտերի ներքևի մասը և ծնոտը: Վերան ձգել է փիլոնագնեստ, պարանոցի տակ ճարմանդով կապված և զարդարուն, ունի շապկաձև ներքնազգեստ մինչև ոտները հասնող, որի վերայից հագել է բոլորակ վերջավորությամբ փորուրարի նման մի բան: Երկու ձեռքով կրծքի վերա բռնել է մի գիրք: Ոտքերը բոբիկ և նրանց տակ կոթավոր զույգ ականջներ, որոնց դրսի թևերը անցնում էին արձանի աջ և ձախ կողմերը, ինչպես երևում է հետևյալ պատկերի մեջ (պատկ. 75), որ կանգնած է զարձյալ ականջի վերա, մի ձեռքը վեր բարձրացրած, մյուսը կրծքի վերա: Մինչև ծնկները հասնող և իրանի վերա սեղմված տունիկա, մեջքի վրայից ձգված՝ թիկնոցը ճարմանդված պարանոցի տակ, անդրավարտիքը խրված կոշիկների մեջ, թվում է զինվորական: Իսկ սորա հագադիր կողմն էլ ուրիշ նորություն է բերում. զարձյալ կոթավոր ականջի վերա կանգնած է մի ֆիգուր, թվում է կոշիկներ հագած և անդրավարտիքի ծայրերը ձիաքների մեջ անցուցած: Ներքնազգեստի առաջին մասի քղանցքներն են միայն նկատելի վերից վար, վրան ձգել է մի թիկնոց, որ մինչև ոտներն է հասնում: Ձախ ձեռքով մի բան է բռնել, թե դրել է կրծքի վերա, պարզ չէ: Հետաքրքրական է հայկական վեզարի նման գլխանոցը (պատկ. 76), (պատկ. 69): Դժվար է մեզ ճշտությամբ որոշել քանդակի իմաստը, բայց գլխանոցը մեծ նըմանություն ունի Սար գինվորական գլխանոցի հետ Պերսեպոլսի քանդակների մեջ[30]:

Ը

Թալինի մեր նկարագրած կոթողներից ոչ մեկը պատվանդան չուներ, բայց այդ չի նշանակում, թե նրանք առանց պատվանդանի էին: Բարեբախտաբար, հենց Թալինում ունինք երկուսը նոցանից, թեև անջատված բուն կոթողներից, բոլորն էլ ծածկված արժեքավոր քանդակներով: Դրանք քառանկյունի մեծ քարեր են, մեջ փորված և հարմարեցված անկելու բուն կոթողը, ինչպես հետագա դարերի խաչքարերն էլ ունեն, թեպետ տարբեր ձևերով:

Պատկեր 77—78-ը դաղափար են տալիս պատվանդանի ձևի և քանդակների դասավորության մասին, իսկ պատկ. 79—81-ը տալիս են նրանց մանրամասնությունները: Եթե առաջին երեսն ընդունենք Աստվածածնի քանդակը, ձախից աջ ընթանալով, երկրորդը կլինի խաչը, երրորդը երկրաչափական հյուսվածքը և չորրորդը երկրաչափական մի այլ ձև քառանկյունների հետզհետե փոքրացումով, մինչև վեցերորդը, որ կեսորնականն է, գրքի կազմի նմանությամբ (պատկ. 81—82), (պատկ. 72—73): Եվ կարծում ենք չենք սխալվի, եթե ավե-

---

30 Sarre, Die Kunst des alten Persiens. p 29. Պատկերի տակ նշանակված է Krieger in Sackischer Tracht. Տե՛ս և Herzfeld. Tafel XVI. Saskisches Volk. Persepolis. Berlin Museum.

տարանի կազմի պատկեր ընդունենք այդ երկու քանդակները։ Նյութական խաչի հետ ավետարանն էլ պաշտաման կամ հարգանքի առարկա էր. ավետարանը իբրև գիրք համարվում էր որպես Քրիստոսի կենդանի խոսքի և անձի ներկայության։ Բրդաձորի կոթողի վերա ևս տեսանք գծագրական նույն ձևով քանդակ խաչերի հետ։ Մանուկ կամ հասակավոր Հիսուսի ձեռքին միշտ ավետարան կա քանդակված։ Ավետարանի վերա էին երբվում կամ ուխտ կատարում մեր ե դարի հայերը։ Նա նյութ էր նաև նկարչության Զ դարի կամ է-ի սկզբի մատենագրական վկայությամբ՝ Վրթանես քերթողի «Յաղագս պատկերամարտից» գրության մեջ. «Քանզի և զտիպս Աւետարանին տեսանեմք նկարեալս, ոչ միայն յոսկւոյ և (յ)արծաթոյ՝ այլ և յոսկերաց փղոց և կարմիր մորթով կազմեալ, և մեք յորժամ երկիրպագանեմք սրբոյ Աւետարանին կամ համրուրեմք ոչ նթէ փղին ոսկերաց մատուցանեմք վերկրպագութիւն կամ զաքայլին, որ ի յերկրէ բարբարոսաց եկեալ է ի վաճառս, այլ բանի Փրկչին որ ի մագաղաթին գրեալ է»[31]։ Գծագրական զարդարանքն, անշուշտ, որևէ սիմվոլիկ նշանակություն ունի, արվեստի հետ կապված։

Պատկերագրական տեսակետով ամենից հետաքրքրականը Աստվածածնի քանդակն է, նստած աթոռի վերա, գլխին լուսո պսակ և լաշակ, որի քղանցքները ուսերի վերայից ցած են իջնում դեպի մեջքը. դեմքը փշացած է։ Ուսերին ձգել է թիկնոց, քղանցքները մեջքի վրայից և առաջամասից ցած իջած։ Ներքնազգեստը երկար, հասնում է մինչև ոտները հորիզոնական ուղղությամբ ծալքավորված։ Թիկնոցի տակից դուրս են ընկած ձեռքերը, ձախով գրկել է որդուն, իսկ աջը դրել նորա ծնկների վերա։ Աստվածածնի ոտքերին փափուկ կոշիկ է, ոտքերը դրել է քառանկյունի պատվանդանի վերա։ Նայողի աջ կողմից լավ երևում են աթոռի զարդերը, երկար մութաքա, զարդարուն կտորի վերա, որից ղուլգ ծոպեր ցած կախված։

Հիսուսը պատանի է և ոչ մանուկ, նստել է մոր ձախ ծնկանը, ունի լուսո պսակ, դեմքը փշացած, աջը վեր բարձրացրած՝ խաչակնքում է, ձախով ավետարան պիտի բռնած լիներ, քիչ երևում է։ Հագել է մինչև ոտները հասնող բաճկոն։ Երկու կողմից կանգնած են մի-մի հրեշտակ երկար թևերով, մեկը կախ մինչև գետին, մյուսը վեր բարձրացրած և միմյանց խաչաձևելով, կամար և հովանի են կազմած մոր և որդու վերա, որպես պաշտաման կամ սպասարկության նշան։ Նրանք երկու ձեռքերով, վերից և վարից բռնել են Աստվածածնի աթոռը։ Շատ հետաքրքրական են զգեստները. հագել են մինչև ոտները հասնող շապկաձև ներքնազգեստ, վրայից կարճ, անթև բաճկոնակ, որ ասորա-հայկական հագուստ է մինչև այժմ էլ, ասել է, Աստվածածնի պատկերագրության այս տիպը ծագել է միջագետական-ասորա-հայկական շրջանում։ Այս

[31] Սիոն, 1927, 61։

մասին հետո ևս, Աստվածածնի տիպերի մասին խոսելիս։ Պատկերի մեծությունն է 88×60 սմ։ Այս քանդակը նմանություն է բերում Թեբայի Աստվածածնին կահիրեի թանգարանում, նստած և երկու հրեշտակները կողքերից[32]։ Մերը միայն հրեշտակները բռնել են Աստվածածնի պատկերը, ինչպես Պողոսվանքում Քրիստոսի մեդալիոնը, ուրեմն քանդակն առնված է պատկերից։

Աստվածածնի քանդակից դեպի աջ մի գեղեցիկ խաչ է թևերի անկյուններում ներսից և նրանց արտաքին ծայրում մի-մի գնդակ. ուղղահայաց թևի վերին մասը կոտրված։ Խաչը ներքևի թևից կամ խարսխից աջ և ձախ, դուրս են եկել և դեպի վեր բարձրացել մի-մի գեղեցիկ արմավենիկի տերևներ։ Ամբողջ գծագրական և քանդակման կողմից աղնիվ և գեղեցիկ։ Խաչի բարձրությունը կոտրված մասով 65 սմ (պիտի լիներ 69), անաղարտ մասը 52 սմ։

Երրորդ երեսը հիշեցինք, որ չորս զուգահեռ գծերով հյուսվածք է, որի ճիշտ նմանը տեսանք և Բրդաձորի կոթողի վերա և հատուկ է նաև սասանյան արվեստին (պատկ. 81), (պատկ. 72)։ Երկրաչափական այս քանդակները սիմվոլիկ նշանակություն ունին անշուշտ։

Պատվանդաններ են և պատկ. 83, 84 (պատկ. 74)։ Առաջինը շուշանածաղիկ է, երկու տերևներով, որ տեսանք նաև Կողբի մի խոյակի վերա (պատկ. 58, 59), (պատկ. 61), ինչպես և Ղարաջալարի (պատկ. 60) և մանավանդ Օձունի կոթողների վերա և Պողավանքի արևմտյան լուսամուտին։ Նույն Պողավանդանի մյուս կողմն է քառանկյունի շրջանակի մեջ հավասարակող մի խաչ, թևերի և պորտի վերա մի-մի գնդակով, որ հնագույն ձևակերպություններից մեկն է, մինչև Դ դար հասնող հնություններ։ Մի երրորդ պատվանդանի (պատկ. 85), (պատկ. 75) երկու ֆիգուրները, հավանորեն, այր և կին, ննջեցյալներ են, որոնք մի ձեռքը իրար վերա են դրել, մեկը աջ, մյուսը ձախ, իսկ մյուսները վեր բարձրացրել, որպես նշան պաշտամանն։ Ուշադրության արժանի են վաղ բյուզանդական հագուստները, որոնց նմանը տեսանք և (պատկ. 66), (պատկ. 64) կոթողի վերա։ Նույն պատվանդանի մյուս երեսի երեք ֆիգուրները թվում է մեզ հրեշտակը, որ ձեռքը բարձրացրած հաստնում է յուրաքանչյուր կանանց (պատկ. 86), (պատկ. 76) Քրիստոսի հարության։

Յիշատակենք հիշել, որ Թալինում կան ուրիշ մանր բեկորներ ևս կոթողների կամ խաչերի, ժամանակակից մյուսներին. պատկ. 87-րդի նմանները տեսանք արդեն 88,89 հելլենիստական ակնհայտնի դրոշմով և 90 հավասարակող խաչեր։

---

[32] Strzygowski, Hellenistishe und Koptishe Kunst. Bulletin de la société Archeologique d'Alèxandrie, No, 5, 1902, Wiene p. 93. Նաև՝ Koptishe Kunst. Տե՛ս և Die Baukunst. պատկ. 678—680. եր. 716—717.

Թալինում չեն մնացած պատվանդանի վերա հաստատուն կոթողներ, բայց այդպիսիները չեն պակասում այլ վայրերում. մենք կարող ենք երկու այդպիսին բոլորովին իրարից հեռու վայրերից հիշել, ինչպես Հառիճի (պատկ. 91. 92, 93) (պատկ. 77, 78, 79) և Մառայիշենի (պատկ. 19) կոթողները: Հառիճի հնագույն պատմությունը մեզ հայտնի չէ, ներկա տաճարը Զաքարե և Իվանե սպասալարների ժամանակի գործ է, այսինքն ԺԳ դարի առաջին քառորդի. այդ ժամանակից էլ ունինք արձանագրություններ և ձեռագրական արժեքավոր մնացորդներ[33], բայց շուրջը եղած մնացորդներից դատելով, նա մեկն է մեր հնագույն սրբավայրերից: Այդպիսիներից է հետևյալ արձանը յուր հետաքրքրական քանդակներով և ներքևի մասի՝ պատվանդանի պահպանությամբ: Արձանի վերևի մասը պակասավոր է, որովհետև նկատելի է փորվածքը, ուր հաստատված էր կորած մասը: Արձանի առաջին երեսը ամենից անաղարտ մնացած մասն է. պատվանդանի վերա Դանիելն է երկու առյուծների մեջ (պատկ. 94), որոնք լիզում են մարգարեի հագուստը. առյուծների կես մասը անցնում է պատվանդանի մյուս կողմերը. ճիշտ նույն ձևով մի խոյակ, գուցե և կոթողի պատվանդան, ավելի մեծ և լավ պահված, ունինք երևանից ոչ հեռու, էչմյազին պատմական գյուղում, ուր, ի միջի այլոց, և սեպագիր մի արձանագրություն կա ժայռի վերա: Դանիելն այստեղ հագել է սասանյան շրջանի հագուստ. բաճկոնի քղանցքները, ինչպես և թևերը բաղուկների մոտ զարդարուն. կապել է լայն գոտի, ուսերին ձգել է թիկնոց, թևերը վեր բարձրացրած աղոթողի դիրքով: Ունի բեղեր և մորուք. գլխարկը ճակատի մասում զարդարուն, ասել է, իշխանական. գլխարկի մասերը ականջների կողմից մազերի վրայով վար կախված: Բուն կոթողի երեսին Փրկիչն է կանգնած, բոլորակ լուսե պսակով, մազերը երկար և երկու կողմից ականջների վրայով կավիկներով ուսերի վերա իջած: Հագել է երկար, ուղղահայաց ծալքերով, մինչև ոտները հասնող կապա և վերան ձգել նույնպիսի ծալքավոր քղամիդ, որի վերին քղանցքները իջնում են կրծքի վերա. քղամիդի փեշերը հորիզոնական ուղղությամբ պատել է փորի և ծնկների առաջամասը. ձախ ձեռքին բռնել է ավետարան, իսկ աջով օրհնում է: Ահա ձեզ Հիսուսի պատկերագրության արևելյան ձևակերպության ամենահին օրինակներից մեկը, ասորա-միջագետական դրոշմով:

Հիսուսի ոտքերի տակ կա մի ուրիշ քանդակ, տարաբախտաբար, շատ եղծված վիճակում, թվում է, ծալապատիկ նստած, երկու ձեռքերը վեր բարձրացրած, բռնել է Հիսուսի ոտքերի տակի գերանը, ո՞վ է նա, դժվար է մեզ կռահել:

---

33 Ալիշան, Շիրակ 15 և շար.: Աբասա որդի Գրիգոր վարդապետի առաջնորդության ժամանակ ՈՒԿ=1219 թվին գրված է էջմ.-ի № 1382 ձեռագիրը: Տե՛ս մեր «Նկարագրանք», Ա հատոր, եր. 165:

Երկրորդ երևսի պատվանդանի մասը փչացած, իսկ կոթողի երևսին երկու ֆիգուր իրար վերա կանգնած (պատկ. 92), (պատկ. 78). Ներքևինը փոքր, մոտավորապես նույն դիրքով և զգեստավորությամբ, ինչպես Դանիելն էր։ Վերևի ֆիգուրի զգեստը նույնն է, միայն տարբեր ձևով հագնված, որով և մանրամասնությունն ենք ստանում, ներքնազգեստը, անդրավարտիքը և գոտին նման Դանիելին կամ ներքևի մարդուն, բայց վերնազգեստը թևավոր է, աջ կողմից վերնազգեստը հետ է ձգել ուսի վերա, որով բացվել է ամբողջ աջ կողմը վերից վար, աջով խաչակնքում է։ Իսկ ձախ կողմից վերնազգեստը կախված է ցած, ծածկելով ամբողջ կողմը. վերնազգեստի թևը, որ չէ հագած, կախված է ցած։ Պարանոցի տակ վերնազգեստը ճարմանդված է։ Դեմքը փչացած է, երևում է միայն բոլորակ գլխարկի մի մասը, վերից վար գծերով մասերի բաժանված, վեց կողանի։ Ու՞ր են նրանք, ասել չենք կարող հաստատապես, հավանորեն երեք մանկունքներից մեկը և Դանիելը հնոցի մեջ։ Ոչ պակաս հետաքրքրական է երրորդ երևսի քանդակը, տարաբախտաբար, աղոտ. աթոռի վերա նստած է Աստվածածինը Հիսուսը գրկին։ Չորրորդ երևսը պատվանդանի վերա խաչի քանդակ է, պորտուն և թևերի վերա մի-մի գնդակ, որ հաճախ տեսանք։

Պատվանդանի ձևի կողմից լավ է մնացած և Մատայիշևնի կոթողը (պատկ. 19), որ գտնվում է Քասախ գետի ձախ ափին՝ Եղիպատրուշ (Տամջլու) [այժմ՝ Մռավյան, Ապարանի շրջան—կազմող] գյուղից ոչ հեռու։ Պատվանդանի մի երեսին քանդակված են հավատարիմը պսակի մեջ առնված և կոթողը զույգ խաչեր։ Իսկ բուն կոթողի երկու երեսին ոլորապտույտ որթի վերա ողկույզի և տերևի փոխանփոխ շարք։ Կոթողը կեսից վեր կոտրված է։ Մենք նկարագրել ենք այս վայրի հնագիտական արժեքը յուր երկու ակնդեցիներով, որոնց մոտ է և այս կոթողը (եր. 30)։

Ամբողջապես անաղարտ, միայն առանց պատվանդանի մեր ձեռքն է հասել գերեզմանական մի հուշարձան, որ այժմ գտնվում է էջմիածնի թանգարանում և բերված է Սեվենքերիմ Տեր Հակոբյանի ձեռքով Արագածի հարավային ստորոտի Ուջան գյուղից ոչ հեռու, Խարաբավանք կոչված վայրից։ Ուջանը, կամ պատմական անունով Վժանը, մեկն է այդ շրջանի հայտնի վայրերից, Աղցի, Կուաշի, Ավանի և Արուճի հետ բազմաթիվ հին հիշատակներով և բազմիկ ակնդեցիների մնացորդներով։ Տարաբախտաբար այս հուշարձանի լավագույն նեգատիվներից պրատապուիյուն չունինք, ստիպված ենք բավականանալ ձեռքի տակ եղած անհաջող լուսանկարներից։

Առաջին երևսը Աստվածածնի քանդակն ընդունելով (պատկ. 94), հետզհետե կանցնինք մյուս երեսների նկարագրության և գնահատության։ Նա նըստած է աթոռի վերա, ոտքերի տակ քառանկյունի պատվանդան կամ աթոռակ չորս ոտներով։ Գլխից վերևը ճառագայթաձև մի հովանոց (Muschel—baldach-

in), կրկնվում է հաճախ կոպտական արվեստի մեջ[34]: Ապա գլխին լայնակ և շուրջը լուսո պսակ: Օձիքը զարդարուն, ուսերին թիկնոց, որ իջնում է մինչև ոտքները, հորիզոնական ծալքերով, ինչպես տեսանք Աստվածածնի ուրիշ քանդակների վերա: Դորա տակից երևում են ավելի երկար շրջազգեստի կամ շապկի քղանցքները, շապկի ծալքերը վերից վար, ուղղահայաց: Ոտքերին թվում է անկրունկ, փափուկ կոշիկ: Հիսուս պատանին (ompok) նստած մոր ծնկանը, հագած ունի երկար, մինչև ոտները հասնող արևելյան բաճկոն, ձախ ձեռքին ավետարան բռնած, աջով խաչակնքում է: Մարիամը երկու ձեռները կապած, գրկելով որդուն, որ ուշադրության արժանի փոփոխակ է նորա պատկերագրության մեջ: Պատվանդանի տակ եռատերև ականթ կոթավոր: Արձանի մեծությունն է 177×40 սմ: Խոյակաձև վերջավորված պսակի երեսը Աստվածածնի քանդակից բարձր եռատերև ականթի մեջ մի սրբի անդրի:

Աստվածածնից դեպի ձախ, նայողի համար, խոզագլուխ մի (պատկ. 95) մարդաքանդակ է Թալինի (պատկ. 38, 39, 40), (պատկ. 53, 54) և Օձունի նման, բայց ոչ չուխայաձև հագուստով, այլ երկար բաճկոնի վրայից փիլոնաձև քղամիդ, կրծքին ճարմանդված. խոյակի վերա ականթ:

Հակառակ կողմը իշխանական մի քանդակ է, գլխաբաց, մազերը կախ մինչև ականջները, ներքնազգեստը մինչև ոտները, վրայից յափնջի նման վերնազգեստը մի քիչ կարճ. բացվածքից՝ աջ ձեռը հանել է և վեր բարձրացրել, ափը դեպի նայողը, որ ողջույնի և հավատամքի նշան էր: Ոտքերի մոտ անդրավարտիքը կոշիկների ճիտքերի մեջ անցրած, կրունկներն իրար մոտ և ծայրերը հակառակ ուղղությամբ: Ներքևում դարձյալ եռատերև ականթ կոթով: Խոյակի վերա ականթ և հրեշտակի անդրի: Այս քանդակը իշխանական կոչեցինք, հագուստի կողմից նման տեսնելով Թալինի քանդակներին:

Չորրորդ երեսը. ներքևում դարձյալ նույն կոթավոր ականթը, վերան կանգնած մի ֆիգուր, ներքնազգեստը մինչև ոտները, վերնազգեստը փիլոնաձև, ավելի կարճ, ծնկերից քիչ ցած հասած: Ներքնազգեստի վրայից հագուստը հորիզոնական ծալքերով, մինչդեռ ներքնազգեստինը ուղղահայաց, ինչպես տեսանք Օձունի, Թալինի քանդակների վրա, որ եկեղեցականների կամ առաքյալների պատկերներ էին: Գլխի շուրջը լուսո պսակ ունի և մազերը սանրված են վերից վար՝ թել-թել, ինչպես Պողավանքում: Աջ կողմից պատվանդանի մեջ հատատված է մի սյուն կամ ձող, վերևում քառանկյունի վերջավորությամբ, ճակատին խաչի վերևի թևը, արդյո՞ք Labarum, որ նշանակություն կունենար և ծագման ժամանակի նկատմամբ: Պսակի վերա այստեղ ևս նույն ականթը, իսկ ավելի բարձր, ելնդավոր ձվաձևների գարնեղ, կոտրած, հելլենական մի մոտիվ:

---

[34] Strzygowcki, Die Koptische Kunst. p. 37. Պատկ. 44, 7293: Համարում է 6—7 դարի գործ:

Թալինից դեպի հյուսիս, ավելի բարձր, Արագածի գագաթի ուղղությամբ, Ադիաման գյուղն է [այժմ՝ ներքին Գետաշեն, Մարտունու շրջան—կազմող], տարաբախտաբար հնագույն անունն անհայտ, բայց մեկը այս շրջանի ամենահին գյուղերից, հավանորեն, Կամսարականների սեփականություն, հետու չլինելով Թալինից։ Այս հատվածի Ա գլխի մեջ եր. 51 գերեզմանական կոթողների տեղագրության մեջ տվել ենք հարկավոր տեղի հնության և արժեքի մասին, հայտնելով թե այնտեղ բացի Հռիփսիմեի տիպի հին տաճարից, որ գյուղի եկեղեցին է այժմ, գյուղից դուրս ձորի մեջ կա և մի հին բազիլիկ եկեղեցու մնացորդ, խոյակի ձևն ու քանդակները միանգամայն նման Տիկորի կամ Քասախի ե դարի եկեղեցիներին, բայց և մի լուսամուտի մնացորդ, որ յուր կողքերի. և պակի զարդերով, մեր ճարտարապետության ամենահին շրջանն է տանում, մատնանշելով և գեղարվեստական հոսանքի մոտավոր Հայրենիքը։ Նման մի քանդակ կա Ամմանում, որի նկարները տալիս է Strzygowski-ն Հայաստանին նվիրած յուր մեծ գործի մեջ, օգտագործելով այն որպես ապացույց իրանական հոսանքի ազդեցության և կուլը կամարների ծագման տեղի[35]։ Տարաբախտաբար Ստրժիգովսկու գործի հրատարակությունից հետո մենք չենք եղել կրկին այստեղ, ուստի և ավելի մանրամասնություններ չենք կարող տալ, որ կարևորագույն արժեք կունենար, գուցե, արվեստի պատմության համար՝ ավելի հաստատուն եզրակացության գալու։ Համենայն դեպս մեր խնդրի համար յուր մեծ արժեքն ունի, որ այս հին եկեղեցուն կից ունինք և մի գերեզմանական կոթող հետաքրքրական քանդակներով։ Կոթողի առաջին երեսը Աբրահամի զոհաբերությունն է (պատկ. 97)։ Եռաստիճան պատվանդանի վերա տնկված է բունը և նորա վերա հաստատված քառանկյունի սեղանը, վերան նստեցրած ծալապատիկ ձևով Իսահակը։ Աբրահամը բարձրացրել է ձախ ձեռքը, բունել զոհի գլխից կամ մազերից, իսկ աջը մեկնել, երևի, սուրը ձեռքին, որ չի երևում, վիզը կտրելու համար։ Իսահակի գլխից վեր երևում է մի բան, որ Սաբեկա ծառից կախված խոյը պիտի լինի։

Աբրահամը հագել է մինչև ոտքները հասնող բաճկոն և ուսերին ձգել երկար, բյուզանդական կոչված տոգա, որի վերին քղանցքները կախված են ուսերից դեպի կուրծքը, որի նմանը տեսանք և ուրիշ քանդակների վերա։ Նորա գլխին ևս մի բան պիտի լիներ, որ եղծված է, հավանորեն հրեշտակը, կամ Տիգլխին ևս մի բան պիտի լիներ, որ եղծված է, հավանորեն հրեշտակը, կամ Տիրոջ աջը, որ ցույց է տալիս ծառից կախված խոյը։ Խմբանկարի տակ սովորական ականջին է եռատերև, կողերի տերևների կեսը մյուս երեսներին անցած։ Աբրահամի զոհաբերության մի շատ եղծված օրինակի մնացորդ ունինք և Թալինում, իսկ երկրորդ օրինակ, համեմատաբար տեսանելի և տարբեր դասավորությամբ տեսանք Կողբում (պատկ. 56, մեջտեղի քանդակը)։

[35] Die Baukunst der Armenier und Europa, 1918. Wien, S. 448 և շար. Altai-Irans

Երկրորդ երեսը ներքևից նույն եռաթև ականթն է, իսկ նորա վերա մի ուրշ բարակ ցողունի վերա բոլորակ ծաղիկ (ի՞նչ ծաղիկ), երկու կողմից մի-մի տերև, որի նմանությունը տեսանք Բրդաձորի խոյակներից մեկի վերա։ Ծաղկից վեր կանգնած է մի մարդ, մեջքից վեր կտրված (պատկ. 98), (պատկ. 80), նեղ անդրավարտիքով սասանյան շրջանի և կոշիկներով. վերնազգեստը չուխայաձև, թևը կախված, հավանորեն ննջեցյալը։

Երրորդ երեսը ներքևում նույն ականթն է, ինչ որ նախընթաց երեսներում, բայց պատկերաքանդակը եղակի է և նմանը չէ պատահած ոչ մի տեղ. բանկոնը սեղմ և մինչև ծնկները հասած, իրանը գոտիով սեղմած և գոտիի կապը առաջից կախ. ոտքերը ծածկված ականթի հետևը, որ հիշեցնական ձևակերպություն է (պատկ. 99), (պատկ. 81)։ Գլխարկի ձևն անորոշ, փչացած լինելու պատճառով։ Երկու ձեռքով գլխից վերև սկուտեղ ունի բռնած, մեջը երկու բոլորակ հա՞ց երևնները ուի թևանի խաչով զարդարած, որ նվեր է մատուցանում, արդյո՞ք վերևի անձնավորությանը, որի ոտներն են միայն երևում տարօրինակ կոշիկով (սանդա՞լ)։ Մեզ համար միանգամայն մութ է քանդակի նշանակությունը։

Չորրորդ երեսին ներքևում նույն ականթն է և նորա գլխին կոթավոր մի սլաք, սուր ծայրը դեպի վեր (պատկ. 100), (պատկ. 82), հավանորեն նույն սրածայր եռանկյունիների կամ սլաքների նշանակությամբ, ինչ որ տեսանք Թալինում (պատկ. 70—71), (պատկ. 66)։

ԺԲ

Մի կարևոր կոթող էլ ունինք Մաստարայում, Արագածի արևմտյան փեշերին, Թալինից և Ադիյամանից [այժմ՝ Ներքին Հետաշեն, Մարտունու շրջան—կազմող] քիչ դեպի արևմուտք։ Տեղի մասին չունինք ավելի հին տեղեկություն, քան է դարի կեսերը, երբ շինված է այժմ էլ դեռևս կանգուն եկեղեցին, Թեոդորոս Գնունյանց (Գնթունյա՞ց) եպիսկոպոսի օրով, որը և մասնակից եղավ Ներսես Գ-ի գումարած ժողովին 645 թվականին։ Շինության այս արձանագրությյան նույնատիպը հրատարակել ենք մեր Գրչության արվեստի քարտեզի մեջ։ Բայց նախքան է դարը այստեղ պետք է մի ավելի հին եկեղեցի եղած լինի, որի ապացույցն է այն գերեզմանական կոթողը, որի հետությունը մինչև ե դար կարող է հասնել, եթե ոչ ավելի վաղ։ Այստեղ մի երեսին (պատկ. 101) տեսնում ենք բազիլիկ եկեղեցիներին հատուկ պիլաստների վերա պատաձև կամար, և նորա տակը լուսո պատկով մի ֆիգուր, տարաբախտաբար շատ եղծված վիճակում, ձախով ավետարան բռնած և աջով օրհնության նշան, որ Հիսուսն է։ Կամարի պլինին քառանկյունի շրջանակի մեջ մի առյո՞ւծ խաղաղ վիճակում, կոդքին մի մարդ կանգնած ձեռքը վերան, նշանակությունը պարզ չէ մեզ համար, շատ նման կահիրեի կոպտական թանգարանի № 1693 մնացորդին։ Պի-

վասպուրների վերա երևում են և հունարեն գրաֆիտեներ, բայց նրանք կապ չունեին կոթողի ծագման հետ։ Կոթողներից ոչ մեկը գրություն չունի։

Երկրորդ երեսը տալիս է մեզ ակնհայտնի տեսք բազիլիկ ոճի հետ, որ, ինչպես քանիցս շեշտել ենք 2 դարի վերջերից տեղի է տալիս տեղային ոճին։ Այստեղ տեսնում ենք զույգ բոլորակ կիսասյուների մեջ ձողաքարեր մի խաչ, պորտում և թևերի ծայրերին ներսից մի-մի գնդակ։ Ապա ավելի բարձր Հիսուսի անդրին (պատկ. 102)։ Այս հավասարակող և գնդակներով խաչի ճիշտ նմանը տեսել ենք Պետերբուրգի էրմիտաժում, իբր վաղ բյուզանդական արվեստի մի մնացորդ՝ ժամանակը 400 թվականով նշանակված։ Այս մասին մենք գրել ենք այլ առիթով մեր «Հավուց թառի Ամենափրկիչը» աշխատության մեջ[36]։ Բակ բոլորակ կիսասյուներն էլ մատնանշում են բազիլիկ ոճի հոսանքը, ինչպես Տիկորի դռան կիսասյուներն են (տե՛ս Սարգ., պատկ. 368)։

Բայց հետաքրքրական ուրիշ ապացույցներ է տալիս կոթողի հնության մասին երրորդ երեսը (պատկ. 103), նույն պիլաստրների մեջ ձողաքարեր, հավասարակող և գնդակներով խաչը, ավելի բարձր քառանկյունի շրջանակի մեջ՝ բույսի կամ ծաղկի երկու կողմից իրար դիմաց երկու թռչուն, մի մոտիվ, որ երևան է գալիս փոքրիկ փոփոխակներով Դ—Զ դարերի դիպտիքների և սարկոֆագների վերա[37], բայց նաև Հայաստանի նույն շրջանի քրիստոնեական արվեստի մեջ իբրև կենդանության ծառի կամ աղբյուրի մի ձևակերպություն, որին տենչում են ծարավ հոգիները։ Այսպես մենք ունինք էջմիածնի տաճարի հյուսիսային պատին (պատկ. 104), որ Դ դարի մնացորդ է։ Աղցի սուրբերկրյա գերեզմանատանը նույն դարի (տե՛ս 12), Քասախի հինգերորդ (պատկ. 8) և Ախթա գյուղի եկեղեցիների ճակատաքարերի զարդաքանդակների մեջ (պատկ. 21), ոչ ուշ, քան Զ դարը։ Նույն երևույթը կա և կոպտական ե դարի գործվածքների մեջ Քրիստոսի անվան փակագրի (Monogram christ) երկու կողմից (պատկ. 105), (պատկ. 83)։

Ճիշտ մեր կոթողի առաջին երեսի նմանությամբ երևույթ կա և կոպտական արվեստի մեջ. Սարժիգովկին յուր նույն արվեստին նվիրած գործի մեջ տալիս է Bavit-ի վանքի փայտե քանդակի մի պատկերը, հար և նման մեր կոթողին. այստեղ ևս սյուների վերա կանգնած կամարի տակ Քրիստոսն աջով օրհնում և ձախով ավետարան ունի բռնած, իսկ մերինի քառանկյունու պատկերաքանդակի փոխարեն՝ այսինքն մարդու և առյուծի՝ հավասարակող խաչ՝ պսակի մեջ, յուր խոսքերով. Das Kreuz in Lorbeerkranz ist typisch auf Grabsteine[38], որ տեսանք մեր կոթողի մյուս երեսի վերա և բազմիցս այլ տեղերում

---

36 *Մեր «Հավուց թառի Ամենափրկիչը», եր. 38։*

37 Kraus, Geschichte der christlichen Kunst. I, 99, 253. Kaufmann, Christ. Archäol. 294, 311—313. 506.

38 Die Koptische Kunst. եր. 120. Taf. VII № 8775։ *Համեմատել № 7285-ի հետ, որ ե դարի գործ է համարում։*

(տե՛ս Ծառայիչին), բոլորակի մեջ և կոթավոր—Արուճի կամ Թալիշի խոյակի վերա[39], նմանը ունինք և Եգիպտոսում[40], Թալինի մի պատվանդանի վերա՝ քառանկյունի շրջանակի մեջ, եռափէթ բոլորակի մեջ պատկ. 14, Ավանում, Արագածի ևն.[41]:

Ի՛ վերջո պիտի հիշենք երկու վայրերի մնացորդներն ևս, որոնք ձևով քիչ տարբեր են, բայց կարծում ենք՝ կապված գերեզմանական կոթողների հետ և ոչ շենքի սյուներ: Դոցանից մեկը գտնվում է Օշականում, ուր Վահան Ամատունին 6 դարի քառանավական թվականներին Ս. Մեսրոպի գերեզմանի վերա շինեց մի եկեղեցի, որի հատակագծից և Կուախկյանի նկարից գաղափար, բավիլիկա էր: Այդ թանկագին մնացորդը խարխլված լինելով, իսպառ քանդվեցավ Գևորգ Դ կաթողիկոսի կողմից և նոր, ճարտարապետական տեսակետով անարժեք եկեղեցի շինվեցավ: Այդտեղ գտնվում է մի կոթող, ուի անկյունանի բնի վերա՝ խոյակով վերջացած, Զվարթնոցի խոյակները հիշեցնող ոճով, որ կարծում ենք գերեզմանական կոթող էր:

Նման կոթողների մնացորդներ ենք համարում և հանգուցյալ Խաչիկ վարդապետի պեղումներով Դվինում երևան եկած պատվանդանները, գարձյալ Զվարթնոցի խոյակները հիշեցնող: Արդյո՞ք բսա Հովհաննես կաթողիկոսի տված տեղեկության Ներսես Դ-ի (641—661) շինած եկեղեցու մնացո՞րդ, թե ավելի հին: Այս պատվանդաններից մեկի վերա քանդակված է մի խաչ, գարձյալ թևերի վերա մի-մի գնդակ, իսկ հորիզոնական թևերի վերա դեմ առ դեմ՝ մի-մի թռչուն, ինչպես քիչ վերև մատնանշվեցավ[42]: Իսկ խոյակաձև մնացորդների վերա նկատվում են Կողբի և Բրդաձորի բնակորների և խոյակների նման զարդեր, ինչպես բարձր ցողունի վերա ծաղիկ և հասկաձև քանդակ, ասել է միևնույն գեղարվեստական հոսանքի ապացույց:

ԺԳ.

Նախընթաց գլուխների մեջ առիթ ունեցանք ուրիշ սրբերի պատկերագրությունից ավելի Աստվածածնի պատկերագրության հանդիպելու:

Քրիստոնեական արվեստի մեջ Մարիամի պատկերագրությունը երևան է գալիս Բ և Գ դարերում Հռոմի կատակոմբաների որմնանկարչության մեջ[43]; Եփեսոսի 431 թվի ժողովից հետո, բնականաբար, երբ Մարիամի համար-

---

39 Strz., Die Baukunst. եր. 411: Պատկ. 439, 440, 441:

40 Die Koptishe Kunst եր. 63. Դ—ե դարի գործ:

41 Անդ, եր. 100 և պատկ. 153: 8751, Քրիստոսի 600 թվականի գործ:

42 Պատկերները տե՛ս Strz., Die Baukunst. եր. 320—321, պատկ. 361 և 363, Պատկ. 361 պետք է համեմատել մեր պատկ. 51, 53 և 59-ի հետ, մեծությունների էլ մոտավորապես նույն չափով:

43 Burckhardt, Die Zeit Constantins des Grossen. Պատկեր 55, 56:

թեոտոկոս — աստվածածին արտահայտությունը հաստատվեցավ պաշտոնապես, իբրև մաս վարդապետության (Dogma) առավել զարկ պիտի ստանար նորա պատկերագրությունը արվեստի մեջ։

Ռուս հրկու նշանավոր գիտնականներ Կոնդակովը և Լիխաչևն ընդարձակ մենագրություններ ունին Աստվածածնի պատկերագրության ծագման ու զարգացման պատմության նվիրված[44], նորա ցուցումներ են տալիս, հատկապես Կոնդակովը, որ բյուզանդական նվիրական Օդիգիտրիայի տիպի Աստվածածինների նախնական ծագումը պետք է որոնել արևելքի՝ այսինքն ասորա-կոպտական արվեստի մեջ, որ հետո Բյուզանդիայում բարձր զարգացման հասավ և ապա անցավ արևմուտք, իտալական Նախավերածնության (Yorrenaissauce) և Վերածնության մադոննաների նախակարապետ և զարգացման զարկ տալու։

Ինչ որ. ռուս գիտնականները միայն կռահելով են հայտնում, Հայաստանի գերեզմանական կոթողների պատկերագրությունը հաստատում է որպես իրողություն, հնագույն դարերի մնացորդներով։ Մենք փաստեր և ցուցումներ ունինք տված օդիգիտրիայի պատկերագրության գոյության, անկախ բյուզանդական ազդեցությունից[45]։ Այդ տիպի մի քանդակ, նաև նման Վերածնության շրջանին, գտնվում է Խաղբակյանց կամ Պռոշյանց Սպիտակավոր Աստվածածնի դռան ճակատաքարի վրա. շինքը վերջավորված է Զշ 1321 թվին Ամիր-Հասան Բ-ի օրով, բայց սկսված, հավանորեն, նորա հոր՝ Էշլիի վերջին տարիները (+1318)։ Սպասել, որ այդ ժամանակ Իտալիայից Աստվածածնի մի պատկեր փոխադրվեր Արևելյան Հայաստան և շինողներն օգտագործեին իրենց քանդակի համար, կարելի չէ. միաբանները իրենց գործունեությունը այնտեղ սկսել են ավելի քան տասը տարի հետո, երբ Բարդուղիմեոս Բոլոնիացին հաստատվում է Մարաղայում[46]։ Հնարավոր չէ նաև բյուզանդական որևէ նոր պատկերի հետևողությամբ քանդակել այդ ժամանակ Պռոշյանց շինած մի վանքի վերա, երբ նրանք Օրբելյանների հետ իրենց վարդապետներով բուռն պայքար են մղում Գրիգոր Անավարղեցու և նորա հաջորդների դեմ, որ հակված էին բյուզանդական ավանդություններ մտցնել հայ եկեղեցու մեջ։ Քիչ հետո՝ հակաբյուզանդականությանը հետևում է հակաունիթոռականությունը Պռոշյանց Գլաձորի և Օրբելյանց Նորավանքի վարդապետների և եպիսկոպոսների կողմից։ Ավելացնենք, որ մեր քանդակի համեմատությունը բյուզանդական նման տիպերի հետ, պարզում է և տարբերություններ։ Մեր եզրակացությունն է, որ Սպիտակավորի օդիգիտրիայի նմանություն բերող քանդակն առնված է Հայաստանում գոյություն ունեցող Աստվածածիններից, հավանորեն մի

---

44 Kondakow, Ikonographia Bogomateri 1914 և 1915. Sp.: Lickhastchew, Isobrajenia Bogomateri. Sp. 1911.

45 Մեր «Խաչքակյանք կամ Պռոշյանք Հայոց պատմության մեջ», հատ. Ա, եր. 214 և շար.։

46 Անդ, Բ հատոր 265 և Գ հատոր 179։

պատկերից, որի ծիրանին սպիտակ գույն ուներ, որի անունով և շինված է վանքը։ Հայաստանում կային Ծիրանավոր, Կարմրավոր անունով պատկերներ, որոնց անվան և եկեղեցիներ կային։

Մեր գերեզմանական կոթողների վերա Աստվածածինների պեսպիսություններ, որոնց մեջ և օդիգիտրիայի նստած և կանգնած տիպերը, հաստատում են այս իրողությունը։ Նախ թվենք մեզ ծանոթ այդպիսի քանդակները մինչև Զ դարի վերջերը կամ է-ի սկիզբը, որ տեսանք իրենց տեղերում։ Երկու այդպիսի քանդակներ տեսանք Օձունում, մեկը տաճարի պատի մեջ դրված (պատկ. 28), (պատկ. 50), մյուսը սրահի (portique) արևմտյան դարբասի գլխին (պատկ. 26), (պատկ. 46)։ Երրորդը՝ Կողբի ավերակների մեջ (պատկ. 57), չորրորդը՝ Մահմուդեմուդում, արևելյան Շիրակում, Արթիկից և Լմբատավանքից ոչ հեռու (պատկ. 16), հինգերորդը և վեցերորդը՝ Թալինում (պատկ. 73, 79) (պատկ. 67, 70), յոթներորդը՝ Հաչի Բայրամում՝ Արագածի հարավային լանջին (պատկ. 30), ութերորդը՝ ոչ հեռու այտեղից և Ուջան-Վժանից, Խարաբավանքում (պատկ. 94), իններորդը՝ Եղվարդում (պատկ. 34) գործալ կանգնած դիրքով, ինչպես Մահմուդեմուդինը [այժմ՝ Պեմզաշեն, Արթիկի շրջան—կազմող]։ Տասներորդը՝ Հառիճում (պատկ. 93), (պատկ. 79), տասնմեկերորդը՝ Լոռի Իգահատ կամ Այգհատ այուղում։ Այսքան միայն մեզ հայտնի և պեսպիսություններով։

Դոցանից Օձունի և Կողբի Աստվածածինները օդիգիտրիայի նստած տիպին նման են, իսկ Մահմուդեմուդինը և Եղվարդինը կանգնած։ Օձունի եկեղեցու հնության մասին խոսել ենք. համարում ենք Ե դարի վերջերի, ամենաուշը Զ-ի սկիզբների. Եղվարդի եկեղեցինները, մեծը Զ դարի երկրորդ կեսի, իսկ մի նավանին ավելի հին՝ Ե դարի։ Մահմուդեմուդինը է դարից առաջ, ոչ ուշ քան Զ դարի վերջերը. Նման լինելով եռախորան եկեղեցիներին յուր հատակագծով, ունի առանձնահատուկ կողմեր ևս։ Իրավունք ունի Strzygowski-ին, թե Die Kirche erweckt den Eindruck hohen Alters— եկեղեցին խորին հնության տպավորություն է թողնում[47]։ Եկեղեցիների հնությամբ էլ պիտի որոշվի քանդակների մոտավոր հնությունը։

Մահմուդեմուդի Աստվածածինը կանգնած դիրքով, Հիսուս մանուկը ձախ թևին, խմբանկարի կտորնն է կազմում, տարաբախտաբար եղծված վիճակում և ոչ ամբողջությամբ, բայց մնացորդներից դատելով, կարող ենք ամբողջացնել խմբանկարը։ Ձախ կողմից սավառնող հրեշտակը թաշկինակով մի բան ունի բռնած, որ մատուցանում է որդուն և մորը. նույնը պիտի լիներ և մյուս կողմից, նկատելի է կախված թաշկինակի մի մասը։ Ավելի ցած, գործալ ձախ կողմից նայողի, կանգնած է մի մարդ, աղոթողի դիրքով ձեռքերը մեկնած. թվում է վերնազգեստի կամ չուխայի թևը կախ, և գոտեորած քաճկոնով, եր-

[47] Die Baukunst der Armenier, եր. 501։

կարությունը ծնկներից քիչ ցած հասնող, և սասանյան անդրավարտիքով, ներքևի մասում նեղացած կամ կոշկի մեջ խրված։ Եկեղեցու շինողի քանդակն է այդ։ Մյուս կողմը պիտի լիներ կինը կանգնած, աղոտ կերպով երևում է սակավ-բաղծը լուսանկարի մեջ։

Եղվարդի Աստվածածինը կանգնած է, բայց Հիսուսին գրկել է աջ ձեռքով, իսկ ձախը կախ կամ ոտները բռնած։ Աջ ձեռքով գրկելը նկատվում է կոպտական գործվածքների մեջ (պատկ. 106) բայց նստած դիրքով։ Ապա նկատելի է, որ Տագուտը մինչև ոտները չէ հասնում և շեղակի գծերով քառանկյունիներ է բաժանված, մի երևույթ, որ տեսանք Կողբի քանդակների մեջ, նաև հին ասորեստանյաց զարդագրության մեջ, հավանորեն ասեղնագործության արվեստից առնված։

Նստած Աստվածածնի քանդակներ են, բայց ոչ օդիգիտրիայի տիպի (պատկ. 73 և 79), (պատկ. 67 և 70) Թալինում, Խարաբավանքում. զգեստի ծալքավորումները ասորական, 73-ի մեջ (պատկ. 70) հրեշտակների զգեստ ասորա-հայկական, բայց ամբողջության տպավորությունը նման Թեքոյի Աստվածածնին. նաև Հովանին (Muschelbaldachin) կոպտական։ Իգահատի Աստվածածնի պաշտաման արտահայտությունը, մի ձեռքը դեպի վեր բարձրացրած, ափը դեպի դիտողը, նրևում է և կոպտական արվեստի մեջ։ Հառիճի Կոթողի Աստվածածինը Հիսուսը գոգում նստած, ուրույն տիպ է։

Ահա՛ թե ինչպիսի բազմատեսակ քանդակներ է տալիս հայ արվեստը Աստվածածնի պատկերագրության համար, նմանություններով ասորական և կոպտական հնագույն արվեստի հետ։

ԺԹ

Հելլենիստական ազդեցությունը Միջագետքի և Ասորիքի ճանապարհով, Հայաստանում նոր էջեր գրիստոնեության պատկան կրոն հռչակելու ժամանակ։ Արտաշիսյան հարստության ներկայացուցիչների դրամները Տիգրան Մեծի, նորա որդու՝ Արտավազդի և այլոց, անհերքելի ապացույցներ են տալիս այդ իրողության։ Այդ դրամներից ոմանք կտրված են Անտիոքում։ Արտավազդը նույնիսկ բանաստեղծ էր և թատերագիր հույն լեզվով ըստ Պլուտարքոսի։ Հելլենական արվեստի սիրողներ էին և պարթևները, հետևաբար և հայ Արշակունիները, որ հաճախ հռոմեական գիրիշխանության էին ենթարկված։ Տրդատ Ա-ի, հայ Արշակունիների հարստության հիմնադրի ճանապարհորդությունը դեպի Հռոմ Ներոնի ժամանակ առանց հետևանք չէր։ Դորա ապացույցն էր «Տրդատաց թախտ» կոչված հովանոցը և ըստ Մառի մեհյանի շինությունը հունա-հռոմեական ոճով Դառնիի բարձունքների վերա, որ սովորաբար Տրդատ քրիստոնյային է վերագրվել խորենացու ազդեցությամբ։ Եվ նա միակը չէր. ափնա գյուղի հյուսիսային կողմը, ուր հին գերեզմանատունն է, տեսել ենք երկու քար նույն ոճով և մեծությամբ քանդակված, մեկը երկար և հարթաքան-

գակ, որի նմանները կան վերև հիշված Տրդատա թախտի ավերակների մեջ. մյուսը հավանորեն ֆրոնտոնի մաս, ավելի խոր քանդակներով, որ գյուղացիք կոտրատել են, իրենց շենքերի մեջ գործադրել. տարաբախտաբար մեր երկրորդ այցելության ժամանակ նրանց հետքերը չգտանք, և գյուղացիք չկամեցան հայտնել, վախենալով պատժից։ Դուքե և Եղիպատրուշ (Տամջըլու) [այժմ՝ Մրոավյան, Ապարանի շրջան—կազմող] գյուղի տակ թաղված է նույն շրջանի մի շենքի մնացորդ։

Քրիստոնեության ընդունելությամբ այդ կապը պիտի առավել շեշտվեր, և այդ երևում է բազիլիկ եկեղեցիների կառուցման մեջ, որոնք ոչ թե հռոմեական են, այլ հունա-հռոմեական-ասորական արվեստի մի խառնուրդ, ինչպես Ասորիքում։ Այդպիսի մի բեկոր էլ տեսանք Սամոդարվիշի եկեղեցու պատի մեջ [այժմ՝ Ջքնաղ, Ապարանի շրջան—կազմող], բայց նաև ուրիշ կտորներ հագցրած եկեղեցու պատի մեջ։ Նույնը տեսնում ենք Տիկորի և Երերույքի դըռների կողերի կիսաբոլորակ սյուներով։ Այս ցուցումները բավական պիտի լինին հասկանալու մեր բազիլիկ եկեղեցիների և նրանց կողքին գերեզմանական հին կոթողների վերա միջագետա-ասորա-հելլենական-հռոմեական ազդեցությունը։ Որոշ մոտիվների նմանությունը ասորականի և կոպտականի հոսանքի նույնությունն է մատնանշում, նույնը պիտի ասենք և սասանյան նմանությունը, որ ինքն էլ յուր հերթին ենթարկված էր հելլենական ազդեցության[48]։

Ձևի կողմից մեր կոթողներն իրենց նախընթացները պիտի ունեցած լինին. մեր ներկա կոթողները իրենց պատկերագրությամբ քրիստոնեական էին, թեպետ մի երկուսի համար հայտնեցինք, որ կարող են նրանք հեթանոսական շրջանին պատկանել։ Որտեղի՞ց են նրանք գալիս, դժվար է մեզ առայժմ որոշել բայց հավանական է որոշ նմանություններ մատնանշում են, թե որտե՞ղ պետք է որոնել։ Մենք կարծում ենք, որ նրանք ծագմամբ հետիայն կամ հաթյան պիտի լինին. ձևով նման կոթողներ գտնված են Կեսարիո շուրջը, որոնցից երկուսը մեջ է բերում Ալպոյաձյանը նույն քաղաքի պատմությանը նվիրած յուր աշխատության մեջ[49]։ Ապա Հյուսիսային Արաբիայի Տեմանի (Teima) հուշարձանը, ասորեստանյաց տիրապետության վերջին շրջանից, է դար Ք. Ա.[50] (պատկեր 107)։ Վերևի ֆիգուրը Հագամի քամ ասավածն է ասորեստանյաց հագուստով, իսկ ներքևի մասում կոթողը կանգնող թուրմը։ Քանդակման ձևով և մասերի բաժանումով նման մեր կոթողներին։ Երրորդ մի կոթող գիտենք անդրհորդանանյան, հին նաբաթացիների երկրում, Khirbett et Tannur-ի մեջ, քանդակման ոճը հունահռոմեական, բայց ձևը նման մեր կոթողներին։ Նաբաթացիք Սելևկյան շրջանում անկախ պետություն էին և վաճառա-

---

[48] Strzigowski, Die Baukunst, պատկ. 434, 438, 443։

[49] «Պատմութիւն հայ կնասրհոյ», Ա հատոր, եր. 78—85։

[50] Dr. Hugo Winekler, Das alte Westasien, 1901. Leipzig, Wien, եր 232։

կանական կենդանի հարաբերություն ունեին իրենցից հարավ և հյուսիս գըտնըված երկրների հետ: Նրանց մայրաքաղաքն էր Պետրան, որի ավերակները նրանց ծաղկման և քաղաքակրթության ապացույցներն են տալիս: Նրանց թագավորները Հարետ կամ Արետաս էին կոչվում, որի ներկայացուցիչը Դամասկոսում կամեցավ բռնել Պողոս առաքյալին, բայց պատուհանի վանդակից կախվեցավ և փախավ նորա ձեռքից (Բ Կորնթ. ԺԱ 32—38): Նաբաթացիք սկզբում Սելևկյան մշակույթին էին ենթարկված, ապա Հռոմայեցիների կողմից նվաճվելուց հետո՝ հռոմեական[51]: Այս շրջանի մի գործ է մեր ցուցադրած բեկորը որ առել ենք Nelson Gluek-ի հոդվածից[52]: Մի կողմը կայծակի աստվածն է Հադադ, բայց Զևսի ձևով, մյուս կողմը Տյուխեն: Հադադը Ասորեստանյաց աստվածն էր, կրոնական մի պատկերացում, որ գալիս էր հետիտներից, որպես հետևողություն Տիշուբի, բայց արտաքին ձևակերպությունն ու հանդերձանքը հունա-հռոմեականի փոխարկված: Անդրհորդանանյան մոտիվների նմանություններ Հայաստանում մատնանշել է և Strzigovski-ն բոլորովին անկախ այս հանգամանքից:

Ջրամանալի է ազգերի կրոնական հայացքների և նրանց պատկերացումների փոխանցումը մեկից մյուսին. հետիտյան կրոնական պատկերացումներից շատերը անցել են ասորեստանցիներին. Հադադը, իշտարը, Աշուրը արեգակի թևավոր սկավառակով, որ տեսնում ենք նաև Տեմանի քանդակի ճակատին: Բայց արեգակի թևավոր սկավառակի պատկերացումը հետիտներին անցել է Եգիպտոսից, ասորեստանցիները առել են հետիտներից, իսկ պարսիկներն էլ ասորեստանցիներից: Այս համաչուրացրել են փոքրիկ փոփոխություններով ասորեստանցիներից: Այս համառոտ տեղեկությունն էլ բավական է հասկանալու և գեղարվեստական մոտիվների և ձևերի փոխանցումը մեկից մյուսին:

Բաղդադի թանգարանի սասանյան բաժնում տեսել ենք մեր կոթողներին ձևով նման մի բեկոր, բայց շատ եղծված վիճակում:

Սրանք ցուցումներ են, բայց ոչ դրական ապացույցներ, մեր կոթողների Հաթյան ծագման վարկածի համար: Այդ փոխանցումը կարող է անմիջական լինել կամ միջնորդաբար: Նորանոր գյուտեր Հայաստանում կամ Առաջավոր Ասիայի հարևան երկրներում, գուցե, ավելի լույս և ապացույցներ կբերեն այս երևույթը լիովին և բազմակողմանի կերպով հասկանալու:

ԺԵ

Ժամանակի վերաբերությամբ թվական նշանակել չենք կարող ոչ մեկի համար, այլ միայն դարաշրջաններ: Մենք տեսանք, թե նրանք բոլորն էլ, գրեթե առանց բացառության կապված են բազիլիկ եկեղեցիների երևույթի հետ,

---

51 Անդ, 239—240:

52 The National Geographic Magazine, 1944, February, p. 248.

բոլոր նշաններից դատելով Դ—Զ դարերի գործեր են, առավելն է դարի առաջին քառորդի։ Նման երեւույթներ ասորական-կողպտական արվեստի մեջ նույն դարերն էին մատնանշում։ Տեսանք նաև, թե է դարում Հայաստանի մեջ, աղգային ճարտարապետության ամենածաղկյալ վիճակում, հայ շինքերի վերաբերությունը տեղի է տալիս զարդագրությանը։ Մատնանշեինք նաև միակ բացառությունը Զվարթնոցի զարդագրության, բայց Զվարթնոցը ինքն էլ իբրև շինք բացառիկ տեղ է բռնում հայ ճարտարապետության մեջ. ի նկատի չունինք, իհարկե, հետագա նմանություններըը։

Զ դարից արդեն երկու մոտյություն կա Հայաստանում պատկերագրության մասին, թեր և դեմ։ Վրդանես քերթողը յուր «Յաղագս պատկերամարտից» գրության մեջ տալիս է մեզ շատ բանկագին տեղեկություններ. կարելի է ասել, այդ գրությունը նույնքան արժեքավոր է քրիստոնեական արվեստի Զ դարի մասին, որքան Նեղոս Սինեացու նամակը Օլիմպիադորոս պրեֆեկտին նախընթաց դարի[53]։ Մենք այդ գրությունը և նորա վավերականության խնդիրը, որ կասկածի է ենթարկված Տաշյանի կողմից յուր Յուցակի մեջ, քննության պիտի ենթարկենք այլ առթիվ, երբ հայ մանրանկարչության ծագման մասին խոսենք. առայժմ հիշում ենք միայն, որքան մեզ պետք է մեր կոթողների պատկերագրության շրջանը պարզելու համար։

Պատկերապաշտության կամ պատկերահարգության հակառակորդները ասում են, թե «ոչ է արժան նկարս և պատկերս չեկեղեցիս առնել և բերեն վկայութիւն ի Հին կտակարանաց, զոր վասն կռապաշտութեան հեթանոսացն էր ասացեալ»։ Վրդանեսը ցույց է տալիս, որ Հին կտակարանից բերված վկայությունները հեթանոսության են վերաբերում և ոչ քրիստոնեական պատկերագրության, որ համապատասխան է Հին և Նոր կտակարանների բովանդակության։ «Ի մեհեանս կռոց է գրս. շնաչն Որմիզդ, Արամազդ, և պռոնկութիւնք իւր և կախարդութիւնք։ Իսկ եկեղեցիս Աստուծոյ տեսանեմք նկարեալ զսուրբ կոյսն աստուածածնին՝ ի գիրկս իւր ունելով զՔրիստոս իբրև յայնժամ, զարարիչն իւր և զորդի և զտեղծիչն ամենայնի»։ Ապա հեթանոսական մեհյանների պատերը

Վրդանես քերթողից հետո Հոհան Մայրավանեցին է, է դարի առաջին քառորդի անձնավորություն, որ մաքառում է ծայրահեղ պատկերամարտների դեմ և ապա Հոհան Օձնեցին (718—28) յուր Պավղիկյանց դեմ գրած ճառի մեջ[55], բայց առավելապես պաշտպանելով Փրկչի և Խաչի պաշտամունքն ու պատկերագրությունը։ Արաբական տիրապետությունը միանգամայն աննպաստ էր պատկերագրության կամ պատկերավոր քանդակների դեմ, մանավանդ ժամանակի պատմիչը[56] մեզ հայտնում է. Ը դարի առաջին քառորդին, թե ինչպես նոքա խորտակում էին «զկենդանագրեալ պատկերս ճշմարիտ մարդեղութեան Տեառն մերոյ և Փրկչին և Նորին աշակերտացն» կամ «զնմանութիւն պայծառացեալ խաչին Քրիստոսի», որ հատկապես եկեղեցուց դուրս եղած արձաններին կամ կոթողներին կարող է վերաբերվիլ։ Մատենագրական այս տեղեկություններն էլ զուգադիպական հոսանքի փոփոխության հետ պետք է իբրև լուսաբանություն ծառայեն մեր գերեզմանական կոթողների ժամանակի վերջին շրջանը որոշելու համար։

---

[55] Կաղանկատուացի, հրատ. Շահնազարեանցի, Փարիզ։ Յովհաննու Իմաստասիրի մատենագրութիւնք, 1893։

[56] Ղևոնդ, հրատ. Եղյանի. 1887. 100, 152։

Խիզանը փոքրիկ քաղաք էր Մոկաց երկրում, Ախթամարից ոչ հեռու։ Ժի դարում նորա բնակչությունը ավելի չէր, քան 2.000 հոգի, ինչպես պատմել է մեզ Ախթամարի Դանիել վարդապետը, նրանք էլ ցրվեցան այլևայլ կողմեր վերջին ազատագրական շարժումների հետևանքով, և նրանց տեղը քրդերը բռնեցին նախքան վերջին գաղթը։

Բայց այս փոքրիկ քաղաքը, ավելի ճիշտ գյուղաքաղաքը, ուներ մի քանի եկեղեցի, որոնց անունները հաճախ հիշվում են ձեռագրերի հիշատակարաններում, որովհետև այս եկեղեցիների քահանաներն են բազմաթիվ գրիչներն ու մանրանկարիչները, որոնք հաջորդաբար իրար ուսուցիչ և աշակերտ են դառնում և գեղարվեստական որոշ դպրոց ստեղծում այդ քաղաքի անվան հետ կապված։ Խիզանի դպրոցի պատմությանը կարելի է հետևել ավելի քան 350 տարվա տևողությամբ. այնտեղ գրված և նկարազարդված բազմաթիվ ձեռագրեր գրված են էջմիածնի, Ն. Ջուղայի, Երուսաղեմի և այլ մատենադարաններում, նաև մասնավոր մարդկանց մոտ։ Մեզ հայտնի են էջմիածնի ձեռագրատանը մի քանի ավետարաններ, որոնց համարներն ու ճիշտ ժամանակը հիշել չենք կարող, բայց ոչ ուշ, քան ԺԲ դարը, գրված և նկարազարդված Խիզանում, տեղական բնույթով. այնտեղ կա և մի Աստվածաշունչ, ըստ Կարինեան ցուցակի թիվ 155, գրված է «ի վայելս Յովհաննէս բարեմասիսի ի յանապատս նոր շինայ, որ Մանուկ սուրբ նշան կոչեն... ի գաւառին և քաղաքին Հիզան էոչեցեալ, ի հայրապետութեան Կիւրիկեցւոց Տ. Կարապետի, եւ ի հայրապետութեան Ներսեհան Պետունեցւոց, որ յԱղթամար կղզի, Դաւթի, եղբօրն տեառն Զաքարիայի... ի թուին Հայոց ՊԻԲ (=1380), ՊԼԲ (=1400)»։ Ունի ընդարձակ, պատմական և կենցաղական կարևորությամբ հիշատակարան և բազմաթիվ նկատողություններ հումորով լի, որոնք ժամանակի բարքերի ուսումնասիրության համար նշանակություն ունին։

Խիզանը, բնականաբար, յուր նկարչությամբ աչքի չէ ընկնում շքեղության կողմից կամ իբրև բարձրարվեստ, որ մայրաքաղաքներին կամ նշանավոր վանքերին է հատուկ, բայց ժողովրդական կյանքի հետ կապված մոտիվներով և երևույթներով, արժանի է հատուկ ուշադրության։ Հիշյալ Աստվածաշնչի մեջ, օրինակ, լարախաղացի պատկերը կա և ուրիշ ժողովրդական նյութեր։ Էջմիածնի Ավետարանների տնօրինականների մեջ կանայի հարսանիքը, վերջին

դատաստանի և հատուցման պատկերը զուտ ժողովրդական երևակայության և հասկացողության հետ են կապված։ Հնարավոր է գրել Խիզանի դպրոցի պատմությունը երկար ժամանակի համար ԺԴ—ԺԻ դար, եթե ի նկատի առնվին այդ տեղի հետ կապված ձեռագրերը իրենց հիշատակարաններով, ինչպես և այդ շրջաններում գործած վարդապետների գրվածներն ու գործունեությունը։ Խիզանը նշանավոր է հանդիսացած և նահատակներով, որոնց վկայաբանությունները նույնպես նյութ են տալիս որոշ չափով։

Այս հոդվածի նպատակն է գաղափար տալ Խիզանի դպրոցի մի շատ կարճ ժամանակի մասին՝ ընդամենը մի քառասուն տարվա համար, ԺԶ դարի վերջին տարիներից մինչև ԺԷ դարի երեսնական թվականները, այն էլ ոչ լիովին, այլ որքան հաջողվել է մեզ հենց այստեղ, նյու Յորքում, նյութեր հավաքել մասնավոր անհատների մոտ եղած ձեռագրերից։

Բ

Նյույորքաբնակ պ. Հ. Գևորգյանը ունի մոտ 45 կտոր հայ ձեռագրեր, որոնցից մի քանիսը շատ արժեքավոր։ Պարոնը ամենայն սիրալիրությամբ յուր ձեռագրերը մեր տրամադրության տակ դրավ, ծանոթանալու նրանց բովանդակության և գեղարվեստական արժեքին, որոնց շատ համառոտ ցուցակը կազմեցինք և համարագրեցինք։ Դոցանից մի քանիսը, թիվ 10, 11, 18 և 42, առաջին երկուսը ավետարաններ, երրորդը շարական և չորրորդը Հայսմավուրք, բոլորն էլ նկարազարդ են, խիզանում պատրաստված։ Նույն տեղում էլ՝ շատ մի ավետարան ունի նյույորքաբնակ պ. Հ. Պարույրյանը, և մի ավետարան Պ. Տեփրմանճյանը։ Մի ձեռագիր էլ տեսել ենք պ. Հ. Հազարյանի մոտ, որ բերել էին վաճառելու, և այժմ չգիտենք, որտե՞ղ է. առիթից օգտվելով, արտագրեցինք հիշատակարանը։ Երուսաղեմից էլ մեր հավաքած նյութերի մեջն ունինք թիվ 2566 Աստվածաշնչի համառոտ նկարագրությունն ու հիշատակարանի արտագրությունը։ Հազվադեպ զուգադիպությամբ այս բոլոր ձեռագրերն էլ, բացառությամբ մեկի, ժամանակով իրար մոտ են և նույն ընտանիքի անդամների կամ նրանց աշակերտների ձեռքով պատրաստված, որով և հնարավոր է մի կարճ ժամանակի համար գաղափար կազմել Խիզանի դպրոցի գործերի և գործավորների մասին։

Մեր այս ձեռագրերի մեջ հնագույնը Գևորգյանի թիվ 10 ավետարանն է, որ թեև չի գրված Խիզանում, բայց նույն շրջանի գործ է։ Ձեռագիրը թուղթ է և բոլորագիր, Մարգարե գրչի կողմից գրված։ Գրչի ծնողներն են Հովհաննես և Ոսկի, եղբայրները Հովհաննես սարկավագ և Մխիթար, և սորա որդին է Հովհաննես։ Գրված է. «յարքունական երկիրս Մոկաց ի թվին ՊՁԴ (=1435), ի վանս Գրված է. «յարքունական երկիրս Մոկաց ի թվին ՊՁԴ (=1435), ի վանքս որ կոչի սբ. Գէորգ զաւրավար... յառաջնորդութեան սբ. Ուխտիս Պետրոս աբեղայի եւ այլ մեղչ եղբարցս Առաքելին եւ Մարգարէին եւ Մկրտչին եւ

Գաւթին եւ Յովհաննէսին եւ միւս Յովհաննէսին եկեղեցապանին եւ տնտես Յովհաննէսին եւ այլոցն ամենեցուն»: Ստացողն է Սիմեոն եպիսկոպոս, որ գրել է տվել «յիշատակ հոգւոյ իւրոյ եւ ծնողացն, հարւն Պետրոսի եւ մարւն Շարմէլէքի» և այլ աղգականների: Մի-մի թերթ առաջից և վերջից մագաղաթապահպանակներ ունի Պողոսից. «որպէս եւ պատուէր եառու եկեղեցեացն Գադատացւոց, նոյնպես եւ դուք առնջիք»:

Ունի տեղումական պատկերներ՝ Ծնունդ, Ընծայումն ի տաճարն, Մկրտութիւն, Կանայի հարսանիքը (պատկ. 1) երկու տեսարանով, Մատնութիւն, Պետրոսի ուրացութեան հետ, Պիղատոսի լվացումը, քահանայապետը պատռում է յուր հանդերձը, Համբարձումն և Հոգեգալուստ: Այս վերջին պատկերի տակ նկարված է ծնկաչոք և ստացող Սիմեոն եպիսկոպոսը, վեղարով, կարմիր կապա, կապույտ վերարկու հագած և սև փիլոն մեջքին, և սև, կրունկավոր կոշիկ հագած: Առաջը գրված է. «Սիմէոն եպիսկոպոսէ, աղաչէ զՔոգին սուրբ առաքելովքն, զի տացէ իւրն եւ իւր ննջեցելոցն զարքայութիւն իւր ամէն»: Ունինք գունազարդ լուսանկարը: Խորանները պարզ են, ալեհատանիչներից մնացել է միայն Մատթեոսը՝ յուր սկզբնազարդով (պատկ. 2). ունի և լուսանցքի զարդեր:

Նկարչությունը պրիմիտիվ է, բայց գույները բնական և պայծառ, առանց ոսկու գործածության և տեղական բնույթով: Մկրտության տեսարանում Հոր Աստուծո ներկայությունը ձևացրած է միայն երկնքով՝ աջ անկյունից. Հոգին սավառնում է դեպի Հիսուս, բայց հրեշտակի երևույթը գինու փարչով (բաժակը, որ պիտի ըմպեր Հիսուս) սովորական չէ այս նյութի պատկերագրության մեջ: Պահված է Հիսուսի և Հովհաննէսի դեմքերի արևելյան տիպը. Հովհաննէսի մազերը, վիշապը Հորդանանի մեջ Հիսուսի ոտքերի տակ, ավանդական է: Կանայի հարսանիքի տեսարանի մեջ փեսայի զգեստավորությունը, թուրը, կնքահոր բռնած «ուրցը» և ծառայությունը փեսային, գինի մատուցանելու, կենցաղական-ազգագրական է: Հաջող պիտի համարել Մատթեոս ավետարանչի նստվածքը, հագուստի ծալքավորումը, աթոռը և դեմքի արտահայտությունը: Հաջող է և սկզբնազարդը և մանրանկարչական տառերի ձևակերպությունը:

Գ

Հնութեան կողմից և բուն խիզանի գործ է Գեորգյանի թիվ 18 շարականը, թուղթ, բոլորագիր և նկարազարդ: Գրիչն է Մարգիս քահանա և ստացողը Ստեփանոս եպիսկոպոս, գրված «ի քաղաքն Հիզան», «ի թուականիս հազարամեան, քառասուն քինգ թիւ ընդ նմայն (=1596), աւարտեցաւ սա ի լման, ի սուրբ խաչի տաւնս վերացմանն»: Հիշատակարանի առաջին մասը ոտանավոր է, ապա շարունակում է արձակ.

«Եւ արդ ես մեղաւք մեռեալս եւ ապիրատս, որուպս եւ անիմաստս ունայն եւ դատարկ յամենայն բարութենանց, Սարգիս սուտանուն քահանայ, որ անուամբ եւ ոչ գործով, գրեցի եւ ծաղկեցի զսուրբ մատեանս, որ կոչի շարակնոց, ի քաղաքն Հիզան, ընդ հովանեաւ սուրբ յարութենանն եւ սուրբ աստուածածնին, սուրբ Յովանիսին և սուրբ Ստեփաննոսին, սուրբ Գրիգորին եւ սուրբ Սարգսին եւ որդւոյն նորին Մարտիրոսին, ի վայելումն արքային եւ հոգի ընկալ արքեպիսկոպոսին Ստեփաննոսին, յիշատակ բարի իւրն եւ ծնօղացն՝ հօրն Սմբատին եւ մօր Նօնաֆարին եւ եղբարցն Յովանիսին եւ Դաւարին, եւ հօրեղբօրն Միրանին, որդւոյն Կիրակոսին. ամէն։

Եւ արդ յերես անգեալ աղաչեմ զձեզ յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զմեղսամած գրիչս զՍարգիս սուտանուն քահանայ եւ զծնօղսն իմ զտէր Սարգիս վարպետն եւ զնանումն եւ զեղբարքն իմ զՄարտիրոս վարպետն եւ զծովասափն, եւ զորդիքն իմ զՅովանէսն, զկարապետն եւ զէդիլչէն եւ զեղբօրորդիքն իմ զտէր Գրիգորիսն եւ զԿնդնատիոսն եւ զամենայն մերձաւորսն մեր զկենդանիսն եւ զհանգուցեալսն...»։

Բառացի մեջ բերինք հիշատակարանից այս հատվածը, որովհետև եկեղեցիների անունները կրկնվում են և մյուս ձեռագրերի մեջ, և երկրորդ այստեղ հիշված ընտանիքի անդամներն են, որ իրենց բաժինն են բերում ընտանեկան սեփականության և ավանդ դարձած արհեստի մեջ, որոնց գործերը պիտի տեսնենք իրար հետևից։ Գրիչ Սարգիս քահանան, որ և միևնույն ժամանակ նկարիչն է Շարականի, երկրորդ եղբայրը է. ավագ եղբայրը Մարտիրոս վարպետն է, որպես նկարիչ, գրիչ ըստ Գեորգյանի թիվ 42 Հայսմավուրքի։ Հովասափի մասին բան չգիտենք և կտեսնենք շուտով մեռած։ Սարգսի որդին Հովհաննես, նույնպես քահանա, գրիչ և նկարիչ, Գեորգյանի թիվ 11 ավետարանի։ Եղբորորդին, այսինքն Մարտիրոսի, Գրիգորիս քահանան Պարույրյանի ավետարանի գրիչն ու նկարիչն է։

Շարականի ամբողջական պատկերներն են՝ Հովակիմ և Աննայի, Ծննդյան, Մկրտության, Երուսաղեմ մտնելուն, Համբարձման, Հոգեգալստյան և Հաչվեբացի (պատկ. 3), որ համեմատելի են կիրակոս գրչի նույն պատկերների հետ։ Աստվածածնի մի պատկեր ևս կա ձեռագրի մեջ, բայց ոչ նույն նկարչի գործ, որովհետև պատկերի տակ կապույտի վերա ոսկեգիր գրված է «տեառն Եղիզր կաթողիկոսի սպա...» մնացածը եղծված, որ կարելի է լրացնել «աւտր Իսրաելի» խոսքերով։ Այս շարականը մի ժամանակ եղել է Եղիազար կաթուղիկոսի սեփականություն, որ հատուկ հիշատակարանով և տակը կնիք դրած, նվիրում է յուր սպասավոր սաղմոսավանքցի Իսրայելին։ Կնիքի կետրոնում Հիսուսի անդրին է, իսկ շուրջը բոլորակի գրված է «Շնօրհօքն աստուծոյ Եղիազար կաթողիկոս ամենայն Հայոց»։ Հիշատակարանից երևում է, որ Շարականը եղել է ոսկեհուռ-

Մեր ձեռքի տակ եղած ամենից փառավոր ձեռագիրը Գեորգյանի թիվ 42 Հայսմավուրքն է, ճոխ բովանդակությամբ, նաև հայ նահատակների և հայրերի վկայաբանություններով, յալթեցու խմբագրության հետևողությամբ, բարձր արվեստով և գեղեցիկ գրչությամբ, որի վերա աշխատել են նույն ընտանիքի մի քանի անդամները։ Ձեռագիրը ամփոփված է երկու մեծ հատորի մեջ, առաջինը 582 և երկրորդը 700 երեսներից բաղկացած, բոլորագիր և երկսյուն, թղթի վերա գրված։ Գործի ղեկավարը ավագ եղբայրն է և նկարիչը, Մարտիրոս քահանան, որ գրչության մեջ ևս քիչ բաժին ունի, բայց բուն գրիչը Սարգիս քահանան է, որ եղբոր կողմից «ճարտար քարտուղար» է կոչված, ինչպես և Մարտիրոսի որդին՝ Գրիգորիս քահանան, որ անկախ աշխատանք ևս ունի կատարած, Պարույրյանի 1605 թվի ավետարանի նկարչությամբ։ Գրիգորիսի գիրը յուր հորեղբոր՝ Սարգիս քահանայի համեմատությամբ, ավելի պակաս գեղեցիկ է և քիչ է մանանկցնությունը, ունի յուր փոքրիկ հիշատակարանը 1123 երեսում. «Ես ինձ մեղապարտ Գրիգորիս, գծողի և ծնողաց իմոց տէր Մարտիրոս քաջ քարտուղարին և Աղաբէկուն և կենակցին իմ և ամենայն ազգականաց իմոց կենդանեաց և հանգուցեալ։ կր»։ Մի ուրիշ հիշատակարան ունի եր. 500։ Իսկ Սարգիս քահանան, իբրև գլխավոր գրիչը, հիշատակարաններ է գրել շատ հատ ճախ, կարևորները եր. 323, 342, 482։ Ահա նորա համառոտ հիշատակարաններից մեկը. եր. 716. «Այլ եւ ինձ մեղսամած եւ փցուն գրչի սուտանուն Սարգսի եւ ծնողաց իմոց տէր Սարգիս ընտրեալ եւ ձգնազգեաց վարպետն եւ կուղակիցըն իմոյ Ըռուսինին, որ ի յայսմ ամի ի թուին Ռ. Ծ. Բ. փոխեցաւ առ Քրիստոս տղայ տիօք եւ եթող մեզ բազում սուգ եւ տրտմութիւն եւ տղայոցն իմ Յովանէս սարկաւագին եւ Կարապետին, էդիլշահին եւ Կիրակոսին»։

Գլխավոր հիշատակարանը պատկանում է Մարտիրոս քահանային, ուր մանրամասնություններ կան տոհմի ժամանակակից և նախնի անդամների մասին, որոնք և սերնդե-սերունդ իրենց արհեստը փոխանցում են հետագաներին։ Մարտիրոս և Սարգիս քահանաների և երրորդ կրտսեր եղբոր, Հովասափի, որ Հայսմավուրքի գրության ժամանակ 1604 թվին արդեն մեռած է, ծնողներն են Սարգիս քահանա և Խանում. այս Սարգիս քահանան, որին անվանում ենք եր., յուր երկու զավակների ուսուցիչն է եղել գրչության և մանրանկարչության մեջ։ Այս մասին հիշատակություն տեսանք Շարականի գրիչ Սարգիս Բ.-ի կողմից։ Նույնպես Մարտիրոս քահանան «վարպետ» անվանելով յուր հորը, «որ աշխատեցաւ հետ մեղաւորիս ի գիր եւ յարուեստ ուսուցանել»։ Արվեստագետ քահանայի եղբայրների պապն է եղել Կարապետ քահանան և կինը՝ Քնարը, իսկ Մարտիրոսի հոգևոր մեծ պապը՝ Վարդան քահանան։

Այսպես էլ երկու եղբայրները իրենց հերթին ուսուցիչ են հանդիսացել իրենց որդիներին։ Մարտիրոսի որդին էր Գրիգորիս քահանան, Պարույրյանի 1605 թվի ավետարանի նկարիչը, և Սարգսի որդին Հովհաննես սարկավագ

1604-ին, որ գրել և ծաղկել է արդեն քահանայական աստիճանով 1621 թվին, Գեորգյանի թիվ 11 ավետարանը: Բայց արվեստավոր են ոչ միայն մանչերի, այլև աղջիկների գծով. Գրիգորիս քահանան յուր ծաղկած ավետարանի հիշատակարանի մեջ հիշում է յուր հորքվեր որդիներին. «Եէր Աստուած վարպետին եւ Մեսրոպ սարկաւագին, որ աշխատեցան ի հետ անարժանիս ի ծաղկել սուրբ աւետարանիս»: Տեր Աստուծուն հիշում է և Մարտիրոս քահանան, որի գործերը մեզ ծանոթ չեն. իսկ Մեսրոպ սարկավագը ապագայի Մեսրոպ Խիզանցին է, որի գործերը կտեսնենք հետո:

Բայց Մարտիրոս քահանայի և նորա եղբոր Սարգսի աշակերտն է և Կիրակոս Ամիդեցին, որից երեք ձեռագիր ունինք մեզ հայտնի, 1608 թվի Տէր-Իրմենճեանի ավետարանը, 1619 թվի մի ժողովածու, որ տեսել ենք Հարություն Հազարյանի մոտ, և 1624 թվի Երուսաղեմի թիվ 2566 Աստվածաշունչը, որոնց մասին պիտի խոսենք հատուկ գլխով: Ղազար Բաբերդացի ժամանակակից վարդապետը, էջմիածնի մատենադարանի թ. 179/351 (Կար. 173) շատ նշանավոր Աստվածաշնչի ստացողը և Երուսաղեմի թիվ 2625 ավետարանի գրողը 1612 թվին Հալեպում, յուր հիշատակարանի մեջ գրում է. «աղաչեմ յիշել ի տէր զուսուցիչ վարպետքն իմ զտէր Աստուածատուրն եւ զտէր Մարտիրոս Հիզանցին եւ զտէր Հաչատուրն Լեհացի»: Արդյո՞ք այս Մարտիրոս Հիզանցին նո՞ւյն է մեր Մարտիրոս քահանայի հետ: Բայց որտե՞ղ պիտի աշակերտած լինի նորան. Ղազար Բաբերդացին Խիզանի կողմերը չէ եղել: Առայժմ խնդիրը պարզ չէ մեզ համար:

Արդեն հիշեցինք, որ ձեռագրի նկարիչը Մարտիրոս քահանան է, որին Խոջա Հաչիկը և յուր որդիքը՝ Խոջա Սաֆարն և Խոջա Նազար «հետուն գրել զայսմատուրքս ի զանազան եւ յընտիր աւրինակէ եւ հետուն զարդարել զսա ոսկով, մատուրքս ի զանազան եւ յընտիր աւրինակէ եւ հետուն զարդարել զսա ոսկով, լազուարդով, տնաւրինականք. ազգի ազգի եւ երանգ դեղով եւ գունով, որպէս լազուարդով, տնաւրինականք. ազգի ազգի եւ երանգ դեղով եւ գունով, որպէս զպատչալի գրախտ եւ զամենաբեր այգի»: Եվ հիրավի, մի քանի մեծ պատկերների հետ ձեռագիրը ունի շատ սկզբնազարդեր և պես-պես լուսանցքի զարդեր, որոնց մեջ թռչունների երփներանգ և ոճական ձևակերպությունները (stilisé) աչքի են ընկնում: Մեծագիր պատկերներից մեկը Ընծայումն է տաճարն է և երկրորդը որպես վարագա խաչի լուսաբանություն, Խորհիկ և նորա աշակերտ Հովհաննէսի տեսյան պատկերավորումը՝ յուր գմբեթավոր Ciborium-ի հետ: Առաջին պատկերի մեծությունն է 28,5×18,5 սմ (եր. 57): Մանրանկարը պատկերագրական տեսակետով մի առանձին նորություն չէ տալիս, բացի տիպերի նմանությունից, որ նկատում ենք Սարգիս և Հովհաննես քահանաների նկարչության մեջ: Ուշադրության արժանի է միայն սֆերիկ գմբեթով շենքը, որին հայ եկեղեցու ձև չէ տված, իբրև հրեական տաճար, նմանեցնելով մահմեդական մզկիթների գմբեթներին, արտաքուստ էլ հախճապակյա նկարին աղյուսներով ծածկված, որ օրինակ է դարձել յուր աշակերտ Ավետիքի համար:

Երկրորդ պատկերը Թոդիկի և յուր աշակերտ Հովելի տեսլյան պատկերն է Վարագա խաչի գյուտի մասին, ուշադրության արժանի մատրաձև շենքի տուր գմբեթով և առանց թմբուկի ուռեցման։ Աստղազարդ երկնքից ճառագայթներն ուղղված դեպի ճգնավորների քարայրը և մատուռը. առաստաղից կախված է լապտերը։ Այսպիսի տուր գմբեթով շենքերի մեր ճարտարապետության մեջ հայտնին Աշտարակի Մարիննի եկեղեցին է և մանրանկարչության մեջ Աստապատում գրված և նկարազարդված էջմ. 21/38 22 Գ. 3. 256բ լուսանցքի զարդը, նին չենք սխալվում երկուսն էլ ԺԳ դարի վերջերի և ԺԴ առաջին քառորդի գործեր։

Բայց ավելի գեղեցիկ են մանրանկարչական տառերը, լուսանցքի կենդանական զարդերը և ծաղիկները ոճավորած, ոչ միայն ըստ կերպի, այլև ըստ դույների։ Այդպիսի ժապավենաձև գույներով ծաղիկներ չկան իրականի մեջ, այլ նկարչի երևակայությամբ ձևակերպված։ Շատ գեղեցիկ են նաև մեծ և փոքր սկզբնաղարդերը, մանրանկարչական տառերը, գույների ակնապարար համադրությամբ (այդպիսի օրինակներ են պատկ. 5, 6, 7, 8)։

Մարտիրոս քահանայի հիշատակարանից մանրամասն տեղեկություններ ենք ստանում և ստացողի, և նորա ազգականների մասին, որ Խոջա Խաչիկն է, նշանավոր հանդիսացած Շահ Աբասի արշավանքների ժամանակ Հին Ջուղայում։ Ըստ Առաքել Դավրիժեցու, նա Շահ Աբասին մեծ շուրջ հյուր ընդունեց յուր տանը 1603 թվին և ոսկի սկուտեղը ոսկվով լի մատույց թագաւորին ընծա։ Նորա որդիքն էին Խոջա Նազար և Խոջա Սաֆար, որոնք շատ կարևոր դեր կատարեցին Նոր Ջուղայի գաղութի սկզբնական պատմության ժամանակ. նաև մյուս որդիքը, թոռները և թոռնորդիքը։ Երիտասարդ բանասեր Հ. Քյուրդյանը գովելի ջանասիրությամբ վերջերս մի ուսումնասիրություն հրատարակեց «Հայրենիք» ամսագրի մեջ «Ջուղայեցի Խոջա Նազար և յուր գերդաստանը» վերնագրով։ Մեր Հայսմավուրքի հիշատակարանը Մարտիրոս քահանայի, հաստատելով շատ անուններ Խոջա Խաչիկի ընտանիքից, լրացնում և ճշտում է նաև որոշ սխալներ։ Հ. Քյուրդյանը[1] հետևելով Ալիշանին[2], Խոջա Խաչիկին համարում է «որդի Մանուկ Նազարի», մինչդեռ նա Մելքումի և Շահխաթի որդին էր, և այդ կրկնված է երկու անգամ այս հիշատակարանի մեջ։ Խոջա Խաչիկի մահարձանը գտնվում է Հին Ջուղայի գերեզմանատանը. «Սուրբ Խաչս բարեխաւս առ Քրիստոս մեծ եւ անուանի քաղաքապետ Խաւջայ Խաչիկին եւ կողակից Մարիամին», արձանագրությամբ, թվականը նշանակելով ՌԾԳ (= 1604)։ Հայսմավուրքը գրված է ՌԾԲ—ՌԾԳ թվականներին, Սարգսի և Մարտիրոսի հիշատակարանների համաձայն, որով նորա մահը պետք է ընդունել ՌԾԳ-ի վերջին ամիսները, Հայսմավուրքի գրության վերջավորությունից հե-

---

1 Առանձին զրքույկով, եր. 2—3։

2 Ալիշան, Սիսական, 424։

տո։ Շահ Աբասի արշավանքն էլ Մարտիրոս քահանան նշանակում է ՌՃԹ թվականին, ասելով «Յայսմ ամի եւ արքայն պարսից Շահաբասն ի յԱսպահանայ եւ եկեալ բազում զօրօք ի վերայ քաղաքին Թաւրիզոյ... (մի կամ երկու բառի տեղ փշացած) այնելով ի քրիստոնեայսն եւ բարեկամ քրիստոնէից. խաղաղար եւ աստուածասէր վասն որոյ տիրեաց ամենայնի մինչեւ յերեսս»։

Հիշատակարանը հաղորդում է ժամանակի անցքերի մասին ևս տեղեկություններ, որպիսին Խաչիչի ապստամբությունն է 1595/6 թվականին և նորա կատարած չարիքները, մանավանդ քրիստոնյաների դեմ։ Հոդվածը շատ չընդարձակելու համար ստիպված ենք բավականանալ միայն հիշատակարաններից հանված քաղվածներով։

Ե

Նախընթաց պրակի մեջ հիշեցինք Մարտիրոս քահանայի եղբոր՝ Սարգիս «քաջ բարեուղար»-ի Հովհաննես որդու մասին։ Նա է գրել և նկարազարդել Պ. Գևորգյանի թիվ 11 ավետարանը, թավշապատ կազմով, մագաղաթ, 20×15 սմ մեծությամբ։ Ստացողն է «Խաւջայ Աղնաղարը» կամ Եղնաղարը, Ռ և Հ (= 1621) թվականին։ Գրողն ու ծաղկողն (նկարիչ) է Հովհաննես քահանա, որի հայրն էր «Սարգիս վարպետն, որ բազում աշխատանք ունի ի վերա մեղաւոր որդւոյս, թէ ի գիր եւ ի ծաղիկ ուսուցանել, թէ ի շարական եւ ի ձայնաւորք պաշտեցնել»։ Մոր անունն է Բռուսին, եղբայրները՝ Մինաս, Սարգիս, Վարդ-մարիամը՝ կարապետ, էղիշա, Կիրակոս, որդիները՝ Մինաս, Սարգիս, Վարդ-մարիամը՝ Նուռ, կինը՝ Ոսկեհատ, որ մի տարի առաջ վախճանվել է։ Հիշել է խնդրում «Հօրեղբօրն իմ Մարտիրոս քահանային եւ որդւոց իւրոց Գրիգորիս քահանային եւ տէր Իգնատիոսին» ևն։ Գրության տեղը Խիզան քաղաքն է։

Հիշատակարանի մեջ հիշված են հոջա Աղազարի ընտանիքը և ազգականները, որոնց անունները մեջ ենք բերում, որովհետև խոջաների պատմության նյութերի հավաքումն ու լուսաբանությունը կարևոր նշանակություն ունի մեր ժէ դարի հոգևոր և գեղարվեստական շարժման հասկացողության համար. «զարդարել եւ ոսկւով եւ երանգ երանգ ծաղկով, չիշատակ իւրն եւ իւր ծնողացըն. հաւր փիրումին եւ մաւրն Սանդրխտին, եւ եղբաւրն Անձրևին եւ կենակցըն. հաւրն Խանզադին, եւ քուերցն մահտեսի Ոսկիտատուն եւ Ասլխաթունին, եւ ցին Խանզադին, եւ քուերցն մահտեսի Ոսկիտատուն եւ Ասլխաթունին, եւ հաւրեղբարցն Ղազարին եւ Մարտիրոսին եւ որդւոյն Յովանիսին եւ հաւրքըւերցըն Թանկումին եւ Շուշանին։ Եւ Աղազարի որդւոցն սարկաւագ Աստուածատուն եւ Աւետրսին, եւ դաստրացն Փաթանին եւ Մելիքին եւ Ոքիլին, Խաւջայ տրուն եւ Աւետրսին, եւ դաստրացն Փաթանին եւ Մելիքին եւ Ոքիլին, Խաւջայ տրուն եւ Աւետրսին, եւ դաստրացն մահտեսի Առաքելին, Մկրտչին, Յաւսէփին, Մալխն, Սառուխանին եւ ընկերացն մահտեսի Առաքելին, Մկրտչին, Յաւսէփին, Մալխն, Մարգարին եւ այլ ամենայն մերձաւորացն», երկրորդ անգամ կրկնելով մարգարին եւ այլ ամենայն մերձաւորացն», երկրորդ անգամ կրկնելով մասը նույն անունները «եւ կողակցին Խանփաշին» հիշում է, որով «Խանզադ» սամբ նույն անունները «եւ կողակցին Խանփաշին» հիշում է, որով «Խանզադ» սամբ նույն անունները նույնանում են։ և «Խանփաշայ» անունները նույնանում են։

Տեղն ու թվականը հիշելուց հետո, ավելացնում է «ի հայրապե-

տուիեան Հայկազեան սեռի՝ էջմիածնին տեառն տէր Մկրտչեբին։ Եւ ի մերոյս կաթողիկոսութեանն Աղթամարայ, տեառն տէր Սահակոսին։ Ի թագաւորութեանն այլասեռից տոլթան Աւսման Խոնդքարին։ Եւ ի մերոյս պարոնութեան մեր Հասանին, եւ առաջիկային իւրոյ Ահմատ քէհին»։

Հովհաննես քահանայի մանրանկարչությունը արտաքուստ փայլուն է, ոսկեզօծ, բայց ոչ բարձր արվեստով։ Համեմատությունը ցույց է տալիս, որ նա հետևում է Խիզանի դպրոցականների ավանդությանը։ Հովհաննեսի նկարների մեծագույն մասը իրենց վերնագրերով նման են Մկրտիչ Ավընեցու մի գործին, Տէր-Մանճայանի սեփական, որ գրել է, ավելի վաղ 1608 թվին և աշակերտն էր Հովհաննեսի հոր՝ Սարգիս Բ Հիզանցու։

Թվում ենք այստեղ պատկերագրությունը իրենց վերնագրերով.

1. Տեսիլք Եզեկիելի։

2. Գուշակումն մարգարէից, որ Քրիստոսի Ծննդաբանության ծառն է Աբրահամից մինչև Աստվածածին, Հիսուս գրկին։

3. «Հարսանիքն ի Կանա Գալիլիացւոց», երկու տեսարանով (պատկ. 9), վերևը Հիսուսը ջուրը գինի է դարձնում, ներքևը փեսան և հարսանիքավորների ուրախությունը։ Հետաքրքրական է աղուղի սայը, փեսայի կամ թագավորի զգեստավորությունը, թուրը, ուրծը խաչագուխ գավազանի վերա քավորի ձեռքում, որոնք ժողովրդական են կենցաղի հետ կապված, և մասամբ նմանություն ունին ավելի հին ձեռագրի, Գեորգյանի թիվ 10-ի հետ, 1435 թվին գրված։

4. Ջանդամալոյծն բժշկէ, տակը Պետրոսի խեղդվիլը։

5. Պայծառակերպութիւն։

6. Ղազարու հարութիւն։

7. Ծաղկազարդն է։

8. Ոտնալվան։

9. Ըմբռնումն։

10. Տանիլն առաջի Աննայի և Կայիափայի զՅիսուս, տակը Պետրոսի ուրացութեան տեսարանը։

11. Տանիլն առաջի Հերովդի, տակը խաչաբարձ Հիսուս։

12. Խաչելութիւնն է (պատկ. 10)։ Խաչափայտի գլխին հավալսան առասպելական թռչունի բունը. մայրը կացով պատառում է կուրծքը և յուր արյունով կերակրում ձագերին։ Պատկերը վերնագրված է.

«Ծաւրինակ Քրիստոսի Հաւալսան զկողն պատառեաց եւ զձագերն կենդանացոյց։ Քրիստոս զկողն պատառեաց եւ արեամբն զմեզ գնեաց»։

Ճիշտ նույն ձևակերպությունն ու վերնագիրն ունի և Տէր-Մանճայանի սեփականությունն՝ կերակուռ Ավընեցու ավետարանը։ Այս մոտիվը, այսինքն թռչունի՝ յուր արյունով ձագերին կերակրելը, նյութ է դարձել ոսկերչական կազմերին և որմանկարչությանը։ Էջմիածնի տաճարի ատյանի գլխին, արևելյան

այուններն իրար կապող կամարի արևելյան ճակատին նկարված է նույնը. Քրիստիկոսը կանգնում է ճիշտ այդ նկարի տակ, և երկու կողմից շարվում են միաբանները ըստ ավագության։

13. Թաղումն Տեառն եւ երեւիլ կանանց ի լեառն Գիթենեաց, եւ աւերումն դժոխոց։

14. Համբարձումն։

15. Գալուստն Հոգւոյն սրբոյ։

16. Երկրորդ գալուստը (պատկ. 11)։ Խաչի կեդրոնում Ամենակալն է նըստած, բոլորակի մեջ, իսկ անկյուններից փողահար մի-մի հրեշտակ։ Խաչի պատվանդանի աջ կողմից «ստացողն է», այսինքն Աղաղար Խոջան, իսկ ձախից «գծողն է», այսինքն Հովհաննես քահանան։ Շատ մոտ նմանությամբ նույն պատկերն ունի Կիրակոսը, միայն առանց ստացողի և գծողի պատկերների։ Նկարը վերնագրված է. «Ես զորդի ընդ ամպս երկնից եկեալ» երկուսի մեջն էլ։

17. Վերջին դատաստանը (պատկ. 11), որ վերնագրված է. «Որ զհինաւուրցըն աստուած ետես նըստեալ յաթոռ քերովբէական», ճիշտ նույնն է և Կիրակոսի մոտ։

18. «Արդարքն գան առ Քրիստոս»։ Վերևում ամպերի վերա երևում է Քրիստոսը հրեշտակների փառաբանությամբ, ապա առաջից Մարիամ, Հովհաննես Մկրտիչը և առաքյալները։ Իսկ ներքևը՝ Դարբիևը փողը բերանում, որ դևպէ դատաստան է կանչում. երևում են արդարները լուսո պահով, իսկ առանձին բաժանմունքում մեղավորները՝ մերկ, կապված ոտքերով և ձեռներով, կամ վիշապների բերանում (պատկ. 12)։

19. «Ղազարոս ի գոգն Աբրահամու», որոնց առաջ կանգնած են զույգ հրեշտակները, իսկ ներքևում «մեծատունն է» օձերով փաթաթված, և սատանաները վառում են կրակը նորան այրելու համար, ժողովրդական։

20. Իմաստուն և հիմար կուսանքն։

21. Երկու տեսարան, պայծառ և ոսկի ծաղկագրություն, որ դրախտն է։ Կիրակոսը չունի։

22. Կանգնած Ամենակալը կամարի տակ, «Յս» «Քս», ձախով ավետարան բռնած և աջով խաչակնքում է։ Լուսո պահը և կամարի զարդարանքները ոսկեզօծ և ջահել։ Բայց բուն պատկերը պակաս գեղարվեստական։ Այս տիպի Ամենակալը, ինչպես և հետևյալ Աստվածածինը հատուկ է Խիզանի զարդողին, նկատելը, էջմիածնի ուրիշ ձեռագրերի մեջ ևս տեսել ենք։ Ամենակալի պատկերի տակ գրված է.

«Մեղայ յերկինս եւ առաջի քո. Զքեզ խոստովանիմք տէր եւ ած յս. քս. Դու ողորմեա յաւուրն դատաստանի եւ փրկեա յաւիտենական հրոյն. Մանաւանդ զստացող սորա զԽոջայ Ղընդաղարն եւ զմեղաւոր Յովաննէս Մաղկոցս ամէն»։

23. Մարիամը նկարված է բարեխոսի դիրքով, կողքից գրված է դեղով. «Զքեզ աղաչեմք ով սբ. կոյս Մարիամ Աստուածածին», իսկ տակը. «Առ ծնեա-

լըն ի քէն Փրկիչն յս քս, բարեխաւսեա յաւուրն ահեղ առնին, զի փրկեսցէ զամ. հաւատացեալ երկրպագուս ամենասք. երրորդութիւնն յահագին հրոյն. մանաւանդ զտացողս եւ զծաղկոս սորա: Ամէն»:

Ապա խորաններն են: Իբրև վերջին խորան ծաղկազարդ դրախտն է, ներքևի տեսարանում Ադամը և Եվան նստած են մի ծառի երկու կողմից, որ «ծառ գիտութեան բարւոյ եւ չարի» պիտի լինի:

Խորաններից առաջ ունի «Յայլմէ վարդապետէ ասացեալ վս խորանաց աւետարանին».սկս. «Դրախտ իմանալի սբ. եկեղեցի», որ խորանների նշանակության բացատրությունն է: Այս նյութի շուրջ ամբողջ գրականություն կա զանազան վարդապետների կողմից գրված, որ ուսումնասիրելի են: Բացի ավետարանիչներից և իրենց սկզբնազարդերից, լուսանցքում ևս կան շատ զարդեր, և լուսաբանող պատկերներ (illustrasion) ըստ բովանդակության: Օրինակ՝ Մատթեոսը նստած ի մաքսավորության, կշեռք ունի բռնած: «Այր մի տանուտէր տնկեաց այգի» Մատթ. ժ հատվածը, լուսանցքում նկարված է այգի, հնձան, աշտարակ: Ուղտի վերա նստած մնկը, մոգերի երկրպագությունը, բայց Ղուկասի մեջն է, հովիվը յուր տեղական հագուստով, հովիվ տոսի առաջ ծունկ է չոքել Հիսուսի մարմինը խնդրելու համար:

Հովհաննեսը խիզանի դպրոցի ժէ դարի լավագույն ներկայացուցիչներից մնկն է յուր պատկերների ճոխությամբ և բազմազանությամբ: Համեմատությունը կիրակոսի հետ, հետու

2

Նյույորքաբնակ գորգավաճառ և հնահավաք Պարույրյանն ունի մի քանի հայ ձեռագրեր, որոնցից մնկը ավետարան, գրված Մխիթար գրչի ձեռքով, «ի յերկիրըս Մայնկաց ի գետն որ կոչի Սեպ», ուրմն խիզանից ոչ հեռու: Սատացողն է քաջ եւ արի տէր Յովհաննէս, որ մականուն քաշիշ կոչի», հայրն է Միքայել և մայրը Փաշիչան: Գրողն է Մխիթար գրիչ, որ գրել է «ի դառն եւ նեղ ժամանակի, յորում նեղիմք ի յանօրինաց հարկապահանջութենէ, եւս առաւել ի սղութենէ հացի, որ լիտր ալիւրն իԹ շահի Գ փարայ ծախեցին ու ՂըզլպաշՆ եկաւ ի վերայ Վանայ ու բաղում ոճիր գործեաց ու արիւնհեղութիւն արարին ի միմեանց»: Սովի նկարագրությունը Շահ Աբասի արշավանքներից հետո նկարագրում են Դավրիժեցին և ուրիշ ձեռագրական հիշատակարաններ:

Եթե Մխիթար գրչի ուր ուսած լինելու մասին տեղեկություն չունինք, քաջ ծանոթ ենք ծաղկող Գրիգորիս քահանային, որ մասնակից տեսանք յուր Տէր՝ Մարտիրոս քահանայի՝ նկարազարդած Հայամավուրքի մեջ, և հիշված յուր Հորեղբոր Սարգսի կողմից Շարականի հիշատակարանի մեջ, նաև կիրակոս գրչի կողմից: Բայց տեսանենք հիշատակարանի խոսքերը նորա մասին: «Շնորհիւ տեառն սկսայ եւ ողորմութեամբ Նորին կատարեցի զսուրբ աւետարանս ի յերկիրն Մայնկաց ի գետն որ կոչի Սեպ. եւ ծաղկեցաւ ի մայրաքաղաքն

Խլզան ընդ հովանեաւ սուրբ է (յոթ) խորանացս, սուրբ Յարութեան եւ որ Աստուածածնին, սուրբ Յովանիսին եւ սուրբ Գրիգորին։ Սուրբ Ստեփանոսին, սուրբ Սարգսին եւ սուրբ Մարտիրոսին, ի թըւականիս Հայոց ՌՇԴ (1605) ի հայրապետութեան տեառն տէր Մելքիսէդ կաթողիկոսի էջմիածնայ եւ ի մերոյս Ախթամարայ տէր Գրիգորիս կաթողիկոսի ամենայն Հայոց»։

«Արդ՝ աղաչեմք զամենեսեանդ զմանկունդ սուրբ եկեղեցւոյ, զի որ հանդիպիք սուրբ աւետարանիս տեսութեան, կարդալով կամ օրինակելով, եւ կամ հարեւանցի տեսանելով, նա ասացէք ողորմի տէր ինձ մեղապարտ Գրիգորիսի եւ ծօր քըւեր որդոյն իմոյ տէր Խաչատուր վարպետին եւ Մեսրոպ սարկաւագին, որ աշխատեցան ի հետ անարժանիս, ի ծաղկել սուրբ աւետարանիս եւ մեղաց թողութիւն հայցեցէք մեզ եւ ծնաւղաց մերոց և ամենայն աշխատաւորաց ի սմա. ամէն»։

Մենացածը կրկնութիւն է ստացողի, ծնողների և ազգականների անուններին։

Ավետարանի նկարչության մեջ Գրիգորիսին օգնող անձնավորություններից «Խաչատուր վարպետ»-ը մեզ ծանոթ չէ յուր գործերով։ Նա Գրիգորիսի հորքեռվեր որդին է, բայց որի՞, ասել կարող չենք։ Նա երկու հորաքույր ուներ, որոնց հիշում է Մարտիրոս քահանան յուր հիշատակարանի մեջ՝ Հռիփսիմե և Եփրոսինե։ Տեր Մարտիրոսն էլ հիշում է «զքեռիքն իմ զտէր Խաչատուր եւ զՊարսամն եւ զԱրիմէէլէքն»։ Համենայն դեպս, երբ տեր Խաչատուրը «վարպետ» է կոչվում, նշանակում է հայտնի նկարիչ պիտի եղած լինի։ Իսկ Մեսրոպ սարկավագը Մեսրոպ Խիզանցին է, որի մասին հետո։

Ձեռագրի վերջին ստացողն է ազուլեցի պարոն Թումաս, որ «ի գառնալն յերկրէն Հընդկաց ի Թէոդուպօլիս, հանդիպեալ էր աստանօր սրբոյ աւետարանիս, զոր ուխտիւ ստացաւ զնա ի հալալ ընչից իւրոց առ ի ընծայելոյ ի դուռն սուրբ Թովմայի առաքելոյ վանիցն», որ և Ագուլիս վերադառնալուց հետո՝ նվիրում է նույն վանքին «ի լիշատակ իւր ծնողաց մահտեսի Բաղտուն եւ մօրն Մուրաւքին եւ կողակցին Ասլուն...», 1732 թվին, սեպտեմբերի 7-ին։

Պակասում են խորանները և Մատթեոս ավետարանիչը, Տերունական պատկերներ էլ չունի, բայց մնացած է Մատթեոսի սկզբնազարդը և մյուս ավետարանիչներն իրենց սկզբնազարդերով։ Ունի և լուսանցքի զարդեր։

Մատթեոսի սկզբնազարդի ճակատին երկու վագրեր հարձակվել են մի եղջերուի վերա։ Կիսախոռոնի գլխին վարդյակը և կողերի զարդարանքները բավական գեղեցիկ են, մանավանդ բացվածքի բուսական զարդը։ Հետաքրքրական են և առօրյա կյանքից առնված «Գիրք ծննդեան» մանրանկարչական գեղեցիկ տառերը, միայն վատ պահված։ Գ-ն կազմված է չորս ավետարանիչների նշանակներից, Ի-ն երեսը հետ է դարձրել դեպի Գ-ն և ձեռին պինու փարչ ունի, Ը-ն ծափ է տալիս, Ք-ն պարում է երկու ձեռքերին մի-մի թաշկինակ բռնած, Ծ-ն նույնպես պարում է, ծունկի գալով և բարձրանալով, առաջին Ն-ն

գաւի է զարնում, վերջին Ն-ն նստած՝ փող է փչում։ Մյուս տողերը սովորական երկաթագրեր են, յուրաքանչյուր տողը տարբեր գույնով։ Լուսանցքի զարդը նույնպես գեղեցիկ է։ Կամարակապ և սանդուղավոր աթոռի վերա նստած է Ամենակալը անսովոր զգեստավորությամբ և առաջին կանգնած է մի մարդ ավետարանիչը (?)։ Բուն զարդը, որ նառատերևի և արմավենիների ցողունների հյուսվածք է, վերջանում է խաչով։

Մարկոսը (պատկ. 14) բոլորակ մորուքով և գլխի խուզած մազերով. ուշադրության արժանի է առաջին դրված սեղանը, կամարակապ և սյուներով կողքից, սեղանի տախտակի կողերը զարդարուն, և վերան դրված մկրատ, քերիչ դանակ, և փոքր, ձողաբարձ գրակալ, որի վերա դրված է բաց գիրքը։ Դիմացը, սեղանի կողքից երկհարկանի և գմբեթավոր շենք, վերևի հարկը բոլորաձև և սյունազարդ։ Մեր ճարտարապետության մեջ եհրկարկանի շենքերը իբրև զանգակատուն երևան են գալիս ԺԴ դարում և տարածվում ԺԴ դարում։ Այդպիսի շենքեր են Հաղբատի Համազասպաշեն զանգակատունը, Եղվարդի Ս. Հակոբը 1301 թվի և Բուրթելշահեն Աստվածածինը 1339 թ. Օրբելյանց Նորավանքում և ուրիշները։ Մանրանկարի որոշ մասերի ներկերը թափված են։ Նման սեղան և շենք ունի և Ղուկասը, որ կոկված մորուքով և գլխի խուզած և սանրըված մազերով, նստած է բարձրաթիկունք աթոռի վերա և գրում է։ Երկուսի թևավոր նշանակներն էլ աջ անկյունից դեպի ավետարանիչներն են սլանում։ Սկզբնազարդերն էլ, թե՛ Մարկոսի և թե՛ Ղուկասի ձևավոր և լավ զարդարանքներով, առաջինը երկրաչափական, երկրորդը բուսական։ Ճակատազարդերի երկու կողմից մի-մի եղջյուրավոր քոչեր, իրարից քիչ տարբեր, գեղեցիկ և բնական։ Հովհաննեսը ճաղատ և երկար մորուքով, կանգնած՝ թեքադրում է այրի մեջ նստած Պրոխորոնին, ըստ Պատմոսի ավանդության։ Սկզբնազարդի ճակատին կուվող աքաղաղներ են. սկսվածքի «ի սկզբա» տառերը Ն-ն չորս նշանակներից և գեղեցիկ ձևակերպված, մյուս տառերը թռչնագիր, միայն Զ-ի հորիզոնական գիծը ձուկ է։ Լուսանցքի զարդը մարդագլուխ թռչուններից, մարդագլուխ առյուծներից և բուն առյուծներից բաղկացած։ Այս համառոտ նկարագրությունից էլ երևում է, որ Հովհաննեսի նկարչությունը բոլորովին ավանդականի հետևողություն չէ, այլ որոշ չափով ինքնատեղծ գծեր և տարրեր ունի, և թվում է եվրոպական ազդեցության հետքեր։

Ե

Նախընթաց պրակների մեջ առիթ ունեցանք հիշելու Կիրակոս գրչին, որպես աշակերտ Սարգիս Բ Հէթանցու։ Մեզ հայտնի են նորա երեք աշխատանքները. առաջին՝ 1608 թվին նա գրել և նկարազարդել է մի ավետարան, որ այժմ սեփականություն է Պ. Տեր-Մանճյանի։ Ավետարանի ստացողն է Ներսես արքեպիսկոպոս, որ «ետ գրել յիշատակ բարի հոգւոյ իւրոյ» «եւ զարդարել ետ ոսկւով եւ երանգ երանգ ծաղկով, յիշատակ իւրն և իւր ծնօղացն՝ Հօրն Գրիգորին

եւ մաւրն Մոջանին», եղբայրներին և ազգականներին, որոնց անուններն հիշված են մի առ մի։

Ապա գրիչը յուր մասին ավելացնում է. «Եւ արդ՝ ես յետինս ի կարգաւորաց եւ անարժանս ի մանկունս եկեղեցւոյ, անարուեստս ի գրչութեան, կիրակոս անարժանս։ Հրաման առեալ ի պատուիրանագիր առաքելական բանէն սր առէ, յոր կոչումն կոչեցար ի նմին կացջիր։

Շնորհիւն տեառն սկսայ եւ ողորմութեամբն նորին կատարեցի զաստուածախօսս եւ զաստուածաբնակ տառս, զլուսաղարդ սուրբ աւետարանս ի լաւ եւ յընտիր աւրինակէ։ Ի մեծ թուականիս հայոց, ի Ռ եւ Մէ (=1608) ամին։ Ի քաղաքիս որ կոչի Խիզան։ Ընդ հովանեաւ աստուածաբնակ սուրբ տաճարացս, սուրբ Յարութեանն, եւ սուրբ Աստուածածնին, սուրբ Յովհաննէս Մկրտչին, սուրբ Սուխպաննոսին եւ սուրբ Գրիգորին, սուրբ Սարգսի զօրավարին եւ որդոյ նորա Մարտիրոսին։ Ի հայրապետութեան տեառն Աղեքսանդրայ նորընծայ Ստեփաննոս կաթողիկոսին՝ տէր աստուած պահեսցէ զնա անսասն (sic!) ի պարծանս մեր։ Եւ ի հ... (1/2 տող բաց, հավանորեն էջմիածնի կաթողիկոսի անունը պիտի լիներ)»։

Շարունակությունը կրկնությունն է Ներսես արքեպիսկոպոսի և ազգականների անվան։ Տեղի սղության պատճառով մեջ չենք բերում և հետագա ստացողների հիշատակարաններն ու անունները, որոնք խոջաների պատմության համար կարող են օգտակար լինել։

Ա՛րդ, գրչի հիշատակարանի այն մասը, որ յուր անվան հետ է կապված, հետևողություն է խիզանի դպրոցում սովորական դարձած շարադրության։ Բայց փոխադարձ կախումը ավելի պարզ է պատկերազրության մեջ։ Ինդիրը ավելի ևս կացուցանելու համար բավական է Կիրակոսի քառասնօրյա գալստյան պատկերը (պատկ. 15) համեմատել Մարտիրոսի նույն պատկերի հետ, Հոգեգալուստը Սարգիս քահանայի նույն պատկերի հետ, Խաչվերացի պատկերը դարձյալ Սարգսի շարականի նույն պատկերի հետ։ Մատթեոսի սկզբնազարդը փոքր տարբերություններով Գրիգոր քահանայի 1605 թվի նույն մանրանկարի հետ։ Իսկ Կիրակոսի և Հովհաննես քահանայի տերունականները, գրեթե ամբողջությամբ նույնանում են միմյանց հետ։ Կիրակոսը գրել է 1608 թվին, Հովհաննեսը 1621 թվին. տրամաբանական պարզ եղրակացությամբ պիտի մտածենք, որ Հովհաննեսը ընդօրինակել է Կիրակոսից, բայց այդպես չէ, այլ Կիրակոսն էլ կախում ունին ընտանեկան դպրոցի ավանդություններից և օրինակներից։ Նույնը պիտի ասենք Մարտիրոսի և Կիրակոսի, Գրիգորի և Կիրակոսի համար։ Խաչվերացի պատկերն ունինք Սարգսի շարականի մեջ, նույնը քիչ տարբերությամբ Կիրակոսի և Հովհաննեսի կողմից, առաջինը 1596, երկրորդը 1608, և երրորդը 1621 թվականից, բայց այդ չի նշանակում, թե նորա արտանկարել են միմյանցից և հենց այդ ձեռագրերից, որովհետև գրված ձե-

ռագրերը իրենց մոտ չէր, այլ ստացողների. նամանութիւնը պիտի բացատրել դպրոցում մնացած ավանդութիւններով և օրինակներով։ Առանձնապես մոտ են իրար, ինչպես հիշեցինք, գրեթե նույնանում են Կիրակոսի և Հովհաննեսի տերունականները իրենց շարադրութիւնով և վերնագրերով. ահա մի քանի օրինակներ էլ այդտեղից. խաչելութեան պատկերը երկուսի փոքրիկ տարբերութիւններով, բայց ճիշտ նույն վերնագրով։ Այդպես հինավուրցն Աստվածծր։ Չենք ուզում ավելի երկարել[3]։

Կիրակոսի արվեստը ունի արտաքին փայլ, շքեղութիւն, գործադրված է առատ ոսկի, բայց ոչ շատ բարձր արվեստ. լավ յուր շրջանի և ժամանակի համար, այնպիսի մի անկյունում, ինչպես Խիզանն է։

* * *

Կիրակոսի մի երկրորդ գործը՝ 1619 թվին գրված, տեսել ենք Հարութիւն Հաղարյանի մոտ. այդ մի ժողովածու է Սաղմոսի՝ Գառնեցու հայտնի հիշատակարանով, Շնորհալու Հավատով խոստովանիմքը և Մեղան, Հիսուս որդի և մի քանի այլ քերթվածները, ի վերջո նաև Գառնեցու աղոթքները։ Ստացողն է Զուղայեցի Մարտիրոս Մահտեսի, նաև Սարկավագ կոչված Կիրակոսի կողմից։

«Եւ արդ եղեւ զրաւ եւ կատարումն հրաշալի եւ աստուածծախոս սուրբ տաղիս ի յերկիրս Մայեկաց, ի գիւղս որ կոչի Աւրնդանց, ընդ հովանեաւ սրբոց գլխաւոր առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի եւ սուրբ Գէորգիա զօրավարին։ Բայց գրեցաւ Յիսուս Որդին ի յամիթ քաղաք, ձեռամբ Մելքոն սարկաւագին, ծաղկեցաւ եւ զարդարեցաւ ձեռամբ անարգ եւ անպիտան սուտանուն Կիրակոսի...». խնդրում է հիշել յուր ծնողներին «Մոսէսին եւ Թուխկին եւ ամենայն ազգականաց։ Եւս առաւել վարպետին իմոյ տէր Սարգիս Հիլանցոյն, որ բազում աշխատեցաւ ի վերայ մեզաւորիս»։ Քիչ հետո կտեսնենք, որ Մարտիրոս քահանան էլ նորա ուսուցիչն է եղել։

Ձեռագիրը նկարազարդված է ավելի նուրբ. ասել է, թե զարգացրել է յուր արվեստը 1608 թվականից հետո։ Ուշադրութեան արժանի է Դավթի նվագարանը, որ երկարակոթ սազ է. հետաքրքրական են և լուսանցքի զարդերը, երբեմն տեղական առանձնահատկութեամբ։

* * *

Բայց Կիրակոսի ամենամեծ գործը մեզ հայտնի երուսաղեմի թիվ 2566 Աստվածաշունչն է, թուղթ, 673 թերթից բաղկացած, բոլորագիր և նկարազարդված, բայց ոչ շատ ճոխ և բարձր արվեստով։ Գրված է «ի Հիզան անուն քաղաքիս, ի գուռն, է. տաճարացս։ Ձեռամբ Կիրակոս Իրիցուս», Ավրնդանց գյու-

3 Պատճերները տալ չենք կարող ծախսերի սղության պատճառով։

ղից, «որ է ի գաւառն Մայեկաց, որ ասի Մամռատանք, որ է հանդէպ Ապարանից սուրբ Նշանին յարեւմտից կուսէ, ի դուռն, Ց. որ խորանացս Պօղոսի եւ Պետրոսի եւ սուրբ Գէորգայ զօրավարին»: «Ձիշեցէք եւ աստուած ողորմի ասացէք վարպետին իմոյ տէր Սարգիս Հիշանցոյն եւ իւր ծնօղացն, որ բաղում աշխատանք կրեաց ի վերայ իմ եւ ուսոյց զիս զիր եւ ծաղիկ, եւ իւր որդւոյն տէր Յովանէս վարպետին. եւ Հիշան քաղաքի քահանայիցն տէր Իգնատիոսին եւ տէր Գրիգորիսին, տէր Յովանիսին եւ տէր Մկրտչին, տէր Խաչատուրին, եւ տէր Վարդանին, տէր Սարգսին եւ տէր Աւետիսին եւ տէր Գրիգորին»: Կիրակոսի վարպետ Սարգիս Հիշանցին մեզ ծանոթ Շարականի գրիչն ու նկարիչն է, Հայսմավուրքի գրիչը և Մարտիրոս քահանայի եղբայրը: Հովհաննես քահանայ՝ որդին տէր Սարգսի՝ արդեն 1624 թվին «վարպետ» է դարձել. Իգնատիոս և Գրիգորիս քահանաները Մարտիրոս քահանայի որդիքն են, վերջինը Պարույրյանի ավետարանի նկարիչը: Խաչատուր քահանան Գրիգորիսի կողմից արդեն 1605 թվին «վարպետ» կոչված: Այստեղ չէ հիշված Մեսրոպ սարկավագ կամ դպիր Խիզանցին, որովհետև նա 1618 թվին, գուցե և ավելի առաջ, բացակա էր և աշխատում էր Նոր Ջուղայում որպես գրիչ և նկարիչ:

Գրութեան ժամանակն է «ի թվաբերութեան Հայկազեան տումարի քան եւ մի յորինելիս, այլ եւս յաւելեալ քան եւ երեք թիւ յարաբարբ սմին (1050+23+551=1624)»: Նկարագրված են ժամանակի անցքերը, հատկապես, Պարսից և Օսմանցվոց պայքարը Շահ Աբասի օրով, նաև յուր հայրենի Ավընդաց գյուղի կյանքից մանրամասնություններ: Հիշատակարանը աղբյուր է ժամանակի տեղական պատմության համար:

Ստացողն է կարապետ Վարդապետ Մոկացին, որի լեզվից գրված հիշատակարանը մանրամասնություններ է տալիս, խնդրում է հիշել իրեն հետ և յուր ծնողներին «Մեսրոպին եւ Աղումին», նաև յուր հոգևոր ծնող «զերիցս երանեալ քաջ րաբունապետն, զՍիմէոն կոչեցեալ Պրւետիկեսն, որ ծնաւ զմեզ ըստ բանի, բազմաջան երիցօք կրթեալ ի մամուլս վարժարանիս ի յոյսն կենդանի: Մանաւանդ զուսումնակից նորին զԲարսեղ րաբունապետն, որ ի միում վարժարանի կացեալք, եւ ելեալ քարոզելոք իրրեւ զՊետրոս եւ զՊօղոս ամոլք հոգեւորք անդաստանացս եւ սերմանողք զբան կենաց ի հոգիս բանականաց, ի վիճակեալ նահանգս եւ ի միում ամի վճարեալ հասին ի կէտ կոչմանն, զնացին զճանապարհս ամենայն մարդոյ, փոխեցան առ Քրիստոս»:

Կարապետ վարդապետն ապա յուր ինքնաձեռագիր հիշատակարանով հայտնում է, թե «բազում ծախիւք եւ արդեամբք եւտու գրել եւ ծաղկով զարդարել զաւտուածաշունչ ոսկով եւ լաճվարդով, եւ երանգ երանգ գունով եւ եւտու չիշատակ ի սուրբ Երուսաղէմ ի դուռն սուրբ Յակոբայ, ի յաւաջնորդութեան տեառն տէր Գրիգոր հայրապետին», այսինքն Գրիգոր Շղթայակիր:

Այստեղ հիշված Սիմեոն րաբունապետը և «Պետիկոսը» Ապարանեցին է,

որ Տրդատա թախտի Ողբանքն է գրել, իսկ նորա ուսումնակից Բարսեղ րաբունապետը Բարսեղ Բաղիշեցին կամ Գաւառցին—Բաղէշի գպրոցի զարգացնողը։ Կարապետ Մոկացին ունի և աշակերտներ, «որ կան յօժարութեամբ ի յղութիւնս աստուածային տառից, զմիւքիսեթ եպիսկոպոս եւ սպասաւոր բանից աստուածականաց. եւ զտէր Սիմէոն Ապարանցին զեղբօրդի հոգեւոր հօրն իմոյ՝ եւ զտէր Ստեփանոս նորընծայ կրօնաւորն, եւ զմխսրոպիկ եղբօրորդեակն իմ»։

Այս երկրորդ Սիմեոնը Մոկացին է, որ մի Աստվածաշունչ ունի նվիրած Երուսաղեմին, թիվ 2557, առանց պատկերների և առանց թվականի։ Միակ հիշատակարանը 665ա. «Ես յետնեալս ի վարդապետաց եւ առաջին ի մեղաւորաց սոսկ անուն Սիմէոն Մոկացի» տալիս է յուր Աստվածաշունչը «յէրուսաղեմ ի դուռն Յակոբայ ի յառաջնորդութեան տեառն տէր Գրիգորի հայրապետին», որ Շղթայակիրն է։ Մնողների հետ խնդրում է հիշել. «Նաեւ ուսուցանող վարդապետին իմոյ տէր Կարապետ քաջ բարեմասպետին, որ փոխեալ է առ Քրիստոս»։ Այս տվյալներով մենք կարող ենք մոտավորապես որոշել Սիմեոնի Աստվածաշնչի գրության ժամանակը, որ պետք է լինի 1624-ից հետո և 1645-ից առաջ, երբ մեռավ Գրիգոր Շղթայակիրը։

Արդեն հիշեցինք, որ Աստվածաշունչը պատկերազարդված է ոչ ճոխ և ոչ բարձր արվեստով, ինչպես ուրիշ Աստվածաշնչներ գիտենք։ Բայց Կիրակոսի պատկերագրությունը պարզում է մի խնդիր։ Բարսեղ Ամթեցին ևս ունի մի Աստվածաշունչ շատ ճոխ նկարազարդված, որ նվիրված է անձամբ Երուսաղեմի վանքին, և այժմ 2559 համարն է կրում։ Ամթեցու Աստվածաշունչը սկսված է գրվել ՌՀԱ (= 1622) թվին և վերջացել է ՌՁԱ (= 1632) թվին. ըստ հիշատակարանի ինն տարվա ընթացքում։ Աստվածաշունչը գրված է և ծաղկված ամթեցի երկու քահանաների ձեռքով, Միքայել ավագ քահանայի, որ սկզբից գրել է և ծաղկել ԺԴ տետր, իսկ մնացածը՝ 30 տետրը գրել և ծաղկել է տեր Մինաս վարպետը սուրբ Կիրակոսի։ Վերջինը մի նկատողություն ունի 539ա ներքևի լուսանցքում, որ խնդիրն ավելի է պարզում. «Կամաւք եւ կարողութեամբ ամենազաւր սուրբ հոգւոյն սկիզբ արարի աստուածաշունչ սուրբ տարիս նուաստս Մինաս գրիչս ի յԵսայո եւ սկիզբն արարի թուին ՌՀԱ մարտի Զ եւ աւարտեցաւ թուին ՌՀԹ մարտի ԺԲ». բայց հետո Մնացորդաց գրքից ըսկըսելով, վերջացրել է ՌՀԵ մարտի ութին։ Մնացած ժամանակը նկարչության պիտի տալ։ Խնդիրն այս է, որ Կիրակոսի Աստվածաշնչի մի պատկերը նույն է Ամթեցու 4բ մեծ մանրանկարին՝ Մովսես ընդունում է տասնաբանյա պատգամները. Հետևն որպես սպասավոր բռնել է Մովսեսի մաշիկները։ Նկարված են երեք ծերերի գլուխները և 56 ներկայացուցիչներ, ներքևը ելքատ և Մովսես։ Ձախ անկյունից «Բարսեղ վարդապետն ստացող սուրբ գրոցս» գլխագիր։ Կիրակոսը այս վերջին մասը չունի, բնականաբար։

Արդ, այս նմանությունը, ինչպե՞ս պետք է բացատրել։ Միքայել նկարիչն ու գրիչը յուր բաժինը պիտի վերջացրած լինի ՌՀԱ (=1622) մարտի վեցից

առաջ, իսկ Կիրակոսը յուր Աստվածաշունչը 1624-ին, թեև ընդհատումներով աչքերի հիվանդության և այլ պատճառներով, բայց ոչ երեք տարվա տևողությամբ։ Ուրեմն Ամենայնի Աստվածաշնչի սկզբնավորությունը, ուր և 4բ նկարը ժամանակով ավելի հին պիտի լինին։ Բայց չենք կարծում, թե Կիրակոս՝ Ամենայնից է արտանկարել, այլ մի երրորդ ավելի հին Աստվածաշնչից, որ գոյություն ուներ հիշյալ շրջանում։ Աստվածաշունչների բազմազան, բայց մեծ մասով եվրոպական ազդեցությամբ հառաջ եկած պատկերագրության խնդրում, որ ժէ դարի հայ արվեստի մի կարևոր գլուխն է, այս հանգամանքը ի նկատի պիտի ունենալ։

Կիրակոս Ամենայնցու աշակերտն էր տեր Ավետիս, որին հիշել է խնդրում. «իմ հնազանդեալ աշակերտին տէր Աւետիսին», որից գործ հայտնի չէ մեզ։

Ը

Խիզանցի մեզ ծանոթ վերջին արվեստագետն է Մեսրոպ Խիզանցին, որ քանիցս հիշված տեսանք որպես Գրիգորիս քահանայի աշխատակից 1605 թվին։ Ապա 1618 թվին նա նորոգել է Հավուց թառի նշանավոր Ավետարանը, այժմ Վենետիկի Մխիթարյանների մատենադարանում, գրված 1214 թվին նշանավոր Իգնատիոս նկարչի կողմից[4]։ Նույն թվին նա նորոգել է Նոր Ջուղայում Բրիտանական թանգարանի թիվ 8, 1280 թվին գրված ավետարանը, որ սեփականություն էր Խոջա Նաչիկի որդի Խոջա Նազարի[5]. «Արդ ես Մեսրոպ դպիր Խիզանցի վերստին նորոգեցի եւ ծաղկեցի ոսկով եւ լաջուարդով եւ ազգի ազգի երանգ դեղերով, բազում աշխատեցայ եւ ուարտեցի ի երկիրն Պարսից, ի քաղաքն Սպահան, ի թագաւորութե/ան/ Շահ Ապասին, որ բազում քաջութ/եամ/բ յաղթէ թշնամեաց իւրոց։ Եւ ի մերում հայրապետութե/ան/ տ/էր Մելքէսեթ կաթողիկոսի, ամ/են/ այ/ոց, ի թուականութե/ան/ մերում ՌԿէ (=1618) ուարտեցաւ եւ կազմեցաւ»։

«Եւ արդ ... յիշեցէք զիս զանարժան Մեսրոպ ... եւ զուսուցանող վարպետաց վարպետն իմ նախ տ/էր Սարգիս, որ մականուն Մաղման կոչի եւ զտ/էր Մարտիրոս Խիզանցին»։

Նա գրել է և նկարազարդել նաև Նոր Ջուղայի թիվ 459 ձեռագիր ավետարանը Խոջա Նաչիկի դուստր Խաթուն Աղատի համար, որի հիշատակարանը Խոջա Նաչիկի և զավակների, ինչպես և ստացող Խաթուն Աղատի ամուսնու՝ Խոջա Սլէմանի, զավակների և ազգականների մասին հիշատակություն ունի։ Այս և առհասարակ Հին և Նոր Ջուղայի Խոջաների մասին եղած հիշատակարանները կարևոր են մեր ժէ դարի արվեստի և մշակույթի պատմության լուսա-

---

4 Մեր «Հավուց թառի Ամենափրկիչը», Երուսաղեմ, եր. 35։

5 Քյուրդյան, Ջուղայեցի Խոջա Նազար և յուր ժերդաստանը, եր. 16։

բանութեան համար, որոնց մեջ իրենց բաժինն ունին և մեր այս խիղանցի գրիչները։

* * *

Պ. Հ. Քյուրդյանը բանասիրական նյութերի մասին խոսակցության ժամանակ հայտնեց մեզ, որ Նոր Ջուղայում հայտնի գրիչ Դասպար քահանան ազգակերտն է մեր Հայսմավուրքի վարպետ եղբայրների, Մարտիրոս և Սարգիս քահանաների։ Դասպար քահանայի գործերից էջմիածնում մեզ հայտնի են թիվ 191 Աստվածաշունչը 1648 թվի. թիվ 189, որ նկարազարդել է շատ ճոխ՝ նույնպես նշանավոր Հայրապետ նկարիչը, ապա թիվ 204 (Կար. 162) 1663 թվի։

Պատահական կերպով նյու Յորքում նիկանի հետ կապված ձեռագրերից հավաքած հիշատակարաններով տեսնում ենք, թե կարճ ժամանակի մեջ այդ քաղաքը որպիսի կարևոր հիշատակներ է թողել մեր արվեստի և մշակույթի պատմության մեջ։

Հետամուտ լինենք նոր լույսի, որպեսզի տեսնենք, թե ինչպիսի հարուստ ստեղծագործություն ունինք նույնիսկ խավար համարված դարերում և վայրերում։

Ա

Ձեռագիրը շարական է № 1489, մագաղաթ 27×17 սմ, ընտիր բոլորգրով, մանրանկարներով, 449 թերթից բաղկացած։ Ունի հասարակ, կաշեպատ կազմ. 29×18×7,5 սմ մեծությամբ։ Սկզբից և վերջից մի-մի թերթ որպես պահպանակ։

Փոքրիկ հիշատակարաններից, որ մեջ պիտի բերենք, երևում է, որ սատյողներն են՝ «Քրիստոսասէր եւ բարեպաշտ իշխանաց իշխանն պարոն Հեթում որ եւ ամ. տէր Նըղրին եւ Խնծորովտայ եւ ածասէր որդին իւր պարոն Կոստանդին»։ Գրիչն է Թորոս Կալյցի։ Անհայտ է նկարիչը, գրչության տեղը և ժամանակը, առանց որոնց դժվար կլինի գնահատել ձեռագրի արժեքը մեր արվեստի և մշակույթի պատմության համար։ Այս հոդվածի նպատակն է պարզել այս մութ խնդիրները, առանց զբաղվելու նկարչի գեղարվեստական առանձնահատկություններն և վերլուծության խնդիրներով, որ ինչպես կտեսնենք՝ Սարգիս Պիծակն է։ Ձեզ զբաղվելու նաև բնագրով, թեև առատ նյութ է տալիս պարականոն շարականների նկատմամբ, Գրիգոր Անավարզեցու հորինած։ Հետաքրքրական են Acrostic-ները, ինչպես «Հեթում խնդրեաց», «Յովհաննէս ու նախարքայն Հեթում», որ Հեթում Բ-ն է, կամ «Կոստանդին արքայ Հայոց է Գրի», Կոստանդիանոս արքայն խնդրեաց ի Գրիգորէ», «Կոստանդին արքայն խընդրեաց զբանս», Կոստանդին Ա-ն է և Հեթում Բ-ի եղբայրը։

Բ

Սկզբնական հիշատակարաններն են.

1. 18բ. Ջատացաւղ երգարանիս զքրիստոսասէր եւ բարեպաշտ իշխանաց, իշխանն զպարոն Կոստանդին յիշեսջիք ի տէր.

40ա. Ներբևի լուսանցքում.

Ջատառապեալ գրող սորա պարոն Կոստանդեայ և ծնողաց իւրոց եւ մեղապարտ գրչի Թորոս Կալեցւոյ և ծնողաց ողորմեսցի տէր.

309բ. Աղաչեմ զդասս լուսերամիջդ աստուածամերձ քահանայից և պատուական սարկաւագաց ոչք աւգտիք ի սմանէ յիշելի սուրբ աղաւթս ձեր զքրիստոսասէր եւ բարեպաշտ իշխանաց իշխանն զպարոն Հեթում որ եւ աստուածով տէր Նըղրին եւ Խնծորովտայ եւ զաստուածասէր որդին իւր զպարոն Կոստան-

պին՝ որք յոյժ փափախանաւք եառն գրել զսա. եւ ոյք յիշէքդ յիշեալ լիջիք ի Քրիստոսէ որ է աւրհնեալ յաւիտեանս ամէն (պատկ. 12), (պատկ. 95)։

374բ. Ջատացաւղ սորին զիշխանաց իշխանն զպարոն Կոստանտին եւ զաՀիմաստ գրիչս զԲորոս Կլայցի աղաչեմ յիշել ի տէր։

Հետին ժամանակի ևիշատակարան, կարևոր՝ ձեռագրի պատմության և այլ տեսակետներով.

9ա. Ջսատացող լուսազարդ եւ յոգներամ, ծաղկաւէտ եւ վարդափթիթ տաւնախմբութեամբ առնեսպայծառ եւ բազմհատաւք երգարանիս զարի եւ քաջն հովուապետն զընդրեալ յոգներանեան զամերջանիկ Ըրաբունին... (մեկ և կես տող ջնջված)։

Յիշեցէք ի Քրիստոս և զծնօղսն իւր եւ աստուած զձեզ յիշէ ամէն։

Նախ զանարժանս աղաչեմ յիշել միով տէր ողորմիւ որ յայսմ ամի ի թուիս ՉԼՀ զայս գեղեցիկ գիրքս տարան գերի մինչև ի Թլկուրանսն, ոչ թէ տաճիկ մահմեդական, այլ կարգիւ սկեղեցական, ոչ ի փոքուն կրօսերական, այլ եւ վերից գերաստիճան, ոչ ի մերոցս բնական, այլ հայրենեաւք ի Վրացտան.

Զգիրքս տարաւ առանց հրամանի, թէ ինձ պարտին հաղար դեկան, Զի ես ի թափառական, յաւտար երկիր վտարական եւ ի պատճառս ունկնդրութեան աւտարացայ ի պանդխտութիեանն, սկեալ այսաւր ի տան, լուա զբաւթն գուժական, թէ զմեծ շարակնոցն տարան, որ վանականքս չիմացան. Եւ ես լուայ բան տրտմական, եւ խռովեցայ յոյժ զայրական, ոչ առի կա ինձ հանգստեան եւ ոչ տեղի անդորրութեան, այլ ես հէքս յոգնակործան, մարմնովս տկար նուաղական, յուղի անկեալ թափառական եւ գնացի ի Թլկուրան, ի ժամանակս ամառնական, հայոց մեծաց յարէզ ամսեան, ոչ գոյ գրաստ ինձ հանգստեան եւ ոչ ընկեր ի տանէ բնական. Ես ՅովանէՀ մոլորական, շրջագայի յԱրապստան, Ւրդնի, Համիթ եւ Թլկուրան, մեղաւք լցեալ ոտքս ընթացան, Աստուած աւրհնէ զտէր Զաքարան, փողով եղաւ ինձ ապնական, զի էր ի տեղացս բնական, շարժեցաւ գութն ընտանեկան, վճարեցի զհազար դեկան, եւ առի զիմ ուրախական, գերեալ եդի ի մեր տան... (ջնջված երեք տող)։

Շատ հետին և անվարժ բոլորգրով.

448բ. Վերստին նորոգող, կրկին հաստատող սուրբ տաճարիս յիշեցէք Տարբեր քան նախընթաց, գրչով և մելանով, բոլորգիր, միջակ վարժությամբ.

449բ Զվերջին նորոգել ուող սուրբ տաճիս զբարեպաշտ եւ զաստուածասէր տանուտէրն զԽոջիկն եւ զկողակիցն իւր զՄարիամն եւ զորդին Պաւղոս եւ դուստրն Թարդումաշ, եւ հայրն իւր տէր Պողոս կողակից Շաղփաշն ամէն։

Գ

Նըղիր կամ Նըղրա բերդը գտնվում է «ի ծովեզերս Ովկիանոսի» ճմկեր գավառի մեջ, Ալեքսանդրետից հյուսիս, որ առաջին անգամ հիշատակվում է

Ռուբէն Բ-ի և նորա եղբոր՝ Լևոնի իշխանության ժամանակ, սկզբում, հավանորէն իբրև արքայական սեփականություն Catrum regia Nigrum, ինչպես անվանում է Վիլլեբրանտ Լվրոսացի ճանապարհորդը ԺԳ դարի սկզբին։ Բայց ԺԴ դարի սկզբին, Հեթմյանց շրջանում, նրա առաջին տերն էր Կոստանդինը, համանուն թագավորահոր որդին, որ մեռավ 1308 թվին։ Այս Կոստանդնի որդիքն էին Հեթումը, Վասակը և Պաղտինը, որոնցից առաջինը և վերջինը շատ նշանավոր հանդիսացան իրենց ժամանակ, և հենց այս Հեթումն էր մեր շարականի ստացողը։ Օշին թագավորի ժամանակ, նա ոչ միայն Նըղրա բերդի տերն էր իբրև ավագը եղբարների մեջ, այլև բարձր պաշտոն ուներ արքունիքում իբրև ջամբռլու։ Վենետիկի դուքս Պետրոս Կբատենիկոսը նորան թուղթ ունի գրած 1312 թվին, մայիսի 13-ին Barono Aytono Domino de Negrino Capitanis Curie Domini Regis Armeni Պարոն Հեթմոյ Տեառն Նըղրոյ գլխաւորի դարբասի Տեառն թագաւորին Հայոց, շնորհակալություն հայտնելով նորան դեպի վենետիկցիները ցույց տված հոժարության և ձեռնտվության համար, հանձնարարում է Դրիպոր Դելփինին ևս նույն բարեհաճությունը ցույց տալ։ Օշին թագավորի մահվանից հետո (1320) նա մնկն էր այն երեք իշխաններից, որոնց հանձնել էր մեռնող թագավորը յուր դեռահաս որդու՝ Լևոն Դ-ի խնամակալությունը. մյուսներն էին Կոռիկոսի երկու եղբայրները, Օշին Պայլը և Կոստանդին Գունդստապլը[1]։ Հեթումը հիշատակվում է և 1331 թվին, երբ Լևոն Դ-ի անունով մոնբրիացիներին արտոնագիր էր տրվում. «Մենք Հեթում ջամպռլայն եւ Հեթում Սինիչալս հասակացուցաք զայսօր բանն թագաւորին», և ստորագրում են երկու Հեթումները։

Երկրորդ եղբայրը, Վասակը, մեռավ 1328 թվին, իսկ կրտսերը՝ Պաղտինը, նշանավոր հանդիսացավ Լևոն Դ-ի թագավորության ժամանակ, մինչև մարաջախտի պատվին հասնելով, որ գումդատապլից հետո՝ երկրորդ բարձրագույն աստիճանն էր պետության մեջ։ Քաղաքական ծառայությանց հետ նշանավոր հանդիսացավ և եկեղեցաշինությամբ Տարսոն քաղաքի մեջ։ Մեռավ բանտում, Հալեպում, 1336 թվին[2]։

Հեթում Նըղրցու մահը պիտի նշանակել 1331-ի և 1335-ի մեջ, երբ եղբայրը մարաջախտ էր։ Հեթումի որդիքն էին Կոստանդին և Ճոֆրի. վերջինը վախճանվեցավ 1358 թվին, 34 տարեկան հասակում[3], տարաբախտաբար Ալիշանը չէ հայտնում, բան սովորության, յուր աղբյուրը, բայց եթե հիշողության խաբկանք չէ, կարծեմ Հովհաննես արքայեղբոր Աստվածաշնչից[4]։ Այս Կոստանդինն է յուր հոր Հեթումի հետ շարականի ստացողը։ Նա հետո թագավո-

1 Ալիշան, *Սիսվան*, 411 և շար.
2 Անդ, 412 և 274։
3 Անդ, 413
4 Զեռ. էջմ. թիվը չենք հիշում։

ըեց Կոստանդին Գ անունով, ինչպես իրենից առաջ թագավորել էր Կոստանդին Բ Պաղտին մարաջախտի հորեղբոր որդին, ինչպես կտեսնենք Սարգիս Պիծակի օգտագործվելիք հիշատակարանից ևս։

դ

Գրիչը, ինչպես տեսանք, Թորոս Հռոմկլայեցին էր։ Ալիշանին, ինչպես և մեզ ծանոթ են այս գեղեցկագիր գրչի գործերը։ Նա յուր Սիսվանի մեջ բերել է նույնատիպ մի հատված նորա հիշատակարանից, որով ոչ միայն գաղափար կարող ենք կազմել նորա գեղեցիկ գրչության մասին, այլև ունինք թվականը, ՉՁ = 1331, այդ գործի[5]։ Հիշատակարանի բնագրի ամբողջությունն ունինք, որ Սիրարփի Տեր Ներսեսյանի „Manuscripts Arméniens illustrés" աշխատության մեջ[6]։ Գրերի համեմատությունը հաստատում է նույնանուն գրիչների նույնությունը։ Հիշատակարանի գեղեցիկ շարադրությունը ապացույց է նաև նորա գրելու կարողության։

Այսպիսով ունինք Թորոսի ժամանակի, որ 1331 թվականն է, և գրչության վայրի մասին հաստատուն տեղեկություն, որ Դրազարկն է։

Քիչ առաջ հայտնեցինք թե Թորոս Հռոմկլացու ուրիշ գործերն էլ հայտնի են մեզ. 1934 թվին պատվելի Պետիկյանը մեզ խնդրել էր տեղեկություն տալ Թորոս Հռոմկլացու մասին, եթե ունինք։ Մենք նորան հետևյալն ենք գրել, որի պատճենը մեր տրամադրության տակ դրավ սիրալիրաբար.

«Ինձ հայտնի է Թորոս Հռոմկլացի գրիչը, որ ժամանակակից էր Կոստանդին Գ-ի հոր, Պաղտին մարաջախտին. նա գրել է էջմ. թիվ 208—154 ձեռագիրը։ որ նոր կտակարան է բոլոր մասերով, մի ափի մեջ ամփոփված, ինչպես հիշում է յուր հիշատակարանի մեջ, Վարդան քահանա Դրազարկցու համար։ Թոշում է յուր հիշատակարանի մեջ, Վարդան քահանա Դրազարկցու համար։ Թորոս ապրում էր «ի սուրբ ուխտն Գեղմաղբիւր, յորում բնակեալ էր նախածանաւք եւ յոյժ սիրելի եղբայր իմ քահանայ ոմն Թորոս անուն Հռոմկլացի, հմուտ գրչութեանն», գրում է ստացող Վարդանը յուր հիշատակարանի մեջ։ Վարդանը բարերարված է բարեպաշտ իշխան Պարոն Պաղտինից «որ զա է այժմ մարաջախտ Հայոց, զոր խնամեսցէ Տէր Աստուած զնա եւ զհարազատ եղբարք իւր, որք բարեմտութեամբ եւ հոգաբարձութեամբ հանգստացուցին զի»։ Հիշատակարանի թվականն ընկած է, բայց ներքևի լուսանցքում նոտրագրով ավելցրած է. «գրեցաւ ի թվականիս Հայոց ՉՃԹԿ»։

Նույնանուն մի գրիչ, ՉԿԷ = 1318 թվին Կիպրոսում գրում է էջմ. թիվ 242 ձեռագիրը, դարձյալ Նոր կտակարան, մասերի հիշատակությամբ ինչպես և նախընթացում, բայց նա կիպրացի չէ, այլ պանդուխտ, որ յուր հոգևոր մխիթարության համար գրել է այն. «զսա բաղձմամբ սիրոյ նուաստս Թորոս ձե-

---

5 Անդ 235։ Ձեռագիրն է Վենետիկի Մխիթարյանց, թիվ 18։

6 Paris, 1936, է. 181—182։

տամբ իմով ի կիպրոս կղզի ի գուն ատենահասին սրբոյն Սարգսի, յոյժ տաժանմամբ, ոչ ունելովք պատշաճաւոր տեղի, քանզի ի հեռաբնակ լեալ լիմոյ... աշխարհէ եւ լքնտանեաց եւ ի սիրելեաց, զայս հոգեւոր մխիթարութիւնս գտի սփոփանս վշտացեալ անձինս»:

Նախ մենք կասկածում ենք հետագայում նոտրագրով ավելացրած «Գրեցաւ թվականիս Հայոց ՀՃԾՎ» ճշտությունը. համենայն դեպս ձեռագրի գրության թվականը չէ. 1251 թվականին մեռած էին Պաղտին մարաջախտը և նրա մյուս եղբայրները, ինչպես տեսանք, մինչդեռ կենդանի են նրանք հիշատակարանի գրության ժամանակ. Պաղտինի համար հատկապես ասված է «որ է այժմ մարաջախտ Հայոց», կենդանի են և մյուս եղբայրները, որով և հաստատ ասել կարող ենք թե հիշատակարանը գրված չէ 1328 թվից առաջ, երբ մեռավ Վասակ եղբայրը, ըստ վկայության Պաղտին մարաջախտի, յուր ձեռքով գրած հիշատակարանի համեմատ: Էջմիածնի թ. 208—154 ձեռագիրն էլ գրված է Դրազարկում: Պնդել չենք կարող, թե էջմիածնի թիվ 242 ձեռագրի Թորոսը նույնն է կլայեցու հետ:

Ե

Բայց ո՞վ է շարականի նկարիչը, արդյո՞ք Թորոս Հռոմկլացին: Հաստատ կարող ենք ասել, թե ոչ: Ո՛վ ծանոթ է նույն ժամանակի նշանավոր Սարգիս Պիծակի արվեստին և ոճին, ասել կարող է թե Սարգիս Պիծակը պիտի լինի նկարիչը: Բարեբախտաբար, ուրիշ կռվան ևս ունինք այդ եզրակացության համար: Ալիշանի մեջ բերած նույնատիպ հիշատակարանի ձեռագիրն ունի և ուրիշ հիշատակարաններ, որոնցից երկուսը նկարչի կողմից գրված. այդ հիշատակարաններն են 19ա և 193ա[7]: Առաջինի մեջ անունը չէ հիշված, թեև ուրիշ կողմից կարևոր, իսկ երկրորդի մեջ ասված է. «Զարգիս անարժան քահանայ զծագրեալ սրբոյ աւետարանիս եւ զծն.յ»: Ալիշանը հիմնված Մխիթարյանց մատենադարանի այս և 1325 թվին գրված, բայց ծաղկված նույն Սարգսի կողմից, ձեռագրերի վերա, հայտնում է որ նա Սարգիս Պիծակ կոչվածն է, որդի Գրիգոր քահանայի և Հեղինեի, որ գրել և ծաղկել է նույնպես Ասիղքն Անտիոքա և Դատաստանագիրք Սմբատ Գունդստապլի, 1331 թվին, Լևոն Դ-ի հրամանով: Այս ձեռագրի մեջն է և թագավորի պատկերը, որպես դատավոր[8]: Իսկ մյուս հիշատակարանը 19ա — կարևոր է նորանով, որ տեսնում ենք, Սարգիսը ծանոթ է Հռոմկլայի գպրոցի Թորոս Ռոսլինի գործերին, որոնց ընծայականներից բառացի առել է յուր հիշատակարանը[9]: Այս մի կարևոր ցուցում է Սարգսի արվեստի հասկացողության համար:

---

[7] Սիրարփի Տեր Ներսեսյան, Manuscrits Armeniens illustrés. Paris, 1936, p. 181.

[8] *Հայապատում 538: Ձեռագիր Վենետիկի Մխիթարյանց, թիվ 107:*

[9] *Համեմատել նրուս. թիվ 251, Բարձրբերդի — Անթիլիասում — և այլ ձեռագրերի ընծայականների հետ. տե՛ս մեր Նյութեր և ուսումնասիրություններ, պրակ Բ, եր. 28:*

Սարգսի նկարազարդված թվականով մեզ հայտնի ամենահին ձեռագիրը թիվ 2566 — 11 ավետարանն է, գրիչը Գրիգոր քահանան և նկարիչը՝ Սարգիսը, գրչի որդին։ Հայ թվականի համեմատ պետք է գրված լինի 1301 թվին, «ի թագաւորութեան աշխարհիս Կիլիկիոյ Լեւոնի, որ ի սոյն ամի ածաւ, որդոյ պարոնին Թորոսի, որդոյ արքային Լեւոնի», որ Լևոն Դ-ն է իբրև թագավոր. բայց մենք նշանակել ենք 1307 և մեռնող կաթուղիկոսը համարել ենք Անավարզեցին, որ պարզ սխալ պիտի լինի[10]։

Սարգսի ամենաճոխ նկարված գործն է, երբեմն Ն. Նախիջևանի Լուսավորիչ եկեղեցու սեփականություն, այժմ Երևան, մի ավետարան. հիշատակարանից օգտվել է Ալիշանը և մասամբ մեջ բերել յուր Սիսվանի մեջ (P. 236)։ Այս ավետարանը նվեր է ստացել Սեբաստիո Ստեփաննոս եպիսկոպոսը, յուր 1320 թվի հիշատակարանի համաձայն, Օշին թագավորից, որին այցելության էր գնացել, ձեռագիրը մասամբ նկարազարդված էր, և լրացնել է տալիս Պիծակ մականունով Սարգիս քահանային։ Հիրավի Մատթեոսի առաջին գլուխները միայն նկարազարդված են ևրոպական ազդեցության ենթարկված մի անհայտ նկարչի կողմից, իսկ այնուհետև ամենաճոխ կերպով Պիծակին, որ լուսանկարել և պատրաստել ենք մեր մանրանկարչական աշխատանքի համար։ Ըստ օր. Սիրարփի Տեր Ներսիսյանի տված տեղեկության, Զոպանյանը ևս հաղորդագրություն ունի այդ մասին[11]։ Այդ ավետարանը յուր նկարներով օրինակ է հանդիսացել Նիկողայոս Խրիմցի նկարչի համար, ժէ դարում, որ մենք տեսել ենք 1915 թվին, Գանձակի Գետաշենում, այժմ, կարծեմ Փարիզ բերված։

Նորա մի ուրիշ գործը խորաններով և ավետարանիչների պատկերներով, գտնվում է Կ. Պոլսում, Ազգային մատենադարանում, նույնպես լուսանկարված մեր կողմից։ Ձեռագրի թիվն ու ժամանակը չենք հիշում։

Էջմիածնի մատենադարանում է Սարգիս Պիծակի մի ուրիշ գործը, Հակոբ Բ կաթուղիկոսի Աստվածաշունչը, կաթուղիկոսի պատկերով (1327—1340 և 1356—1360 թթ.)[12]։

Երուսաղեմի թիվ 2549—94 ավետարան «Ծովէլ ելած», արծաթապատ և ոսկեջրած կազմով, ոսկերչական ընտիր գործ, գրչության ժամանակից։ Դրիչն է «Սարգիս նուաստ եւ սուտանուն քահանայ եւ գրողիկ սուրբ աւետարանին եւ գոսկաւոյ»։ Ծնողներն են Գրիգոր քահանա և Հեղինե, քույրը Թեֆանու, որ մեռած է։ Ժամանակն է 1332 թ. — ՉՀԱ... ի հայրապետութեան

---

10 Տե՛ս մեր «Գրչության արվեստը», քարտեզ 121։

11 Manuscrits Armeniens illustriés, p. 141. Tchobanian, La Roseraie, III. 216, 230.

12 Տե՛ս մեր «Գրչության արվեստը», Գ, Քարտեզ հայ հնագիտության, եր. 37։ Ձեռ էջմ., թիվ 359—2627, Գ. 3.։

տեառն Յակովբայ քրւէր որդոյ տեառն Գրիգորի եւ թագաւորութեան Լեւոնի չորրորդի, «որդոյ Աւշնի Հայոց արքայի, յայսմ ամի պսակեցաւ ընդ ֆրանկ թագուհին Լեւոն»[13]։

Նորա մեծ գործերից մեկն է Ագուլիսի Ս. Թովմայի վանքի Հայասամաւորքը, որ տեսել և նկարագրել ենք Խաչիկ վարդապետի մոտ, իսկ այժմ գտնվում է Պիերպոնտ Մորգանի մատենադարանում, Նյու Յորք, թիվ 622։ Այս Հայսմաւորքը ունի սրբերի և սրբուհիների պատկերները, մեդալիոնների մեջ, նաև ըստ կրզքնազարդեր և լուսանցքի զարդեր բազմաթիվ մեծ ու փոքր հիշատակարաններով, ոտանաւոր կամ արձակ։ Ստացողն է Բասիլիոս արքեպիսկոպոս Կոռիկոսի, Դրազարկի և Սսի առաջնորդը, որի մորաքրոջ որդին է գրիչ Սարգիս քահանան։ Գրված է Սսում «ի թվաբերութեանն հայոց ՉՂԷ (=1348), ի հայրապետութեան տեառն Մխիթարա եւ ի թագաւորութեանն հայոց Կոստանդնոյ աւաք մարաջախտուն հայոց Պաղտնի»[14]։

Ի վերջո պիտի հիշենք Սարգսի մի ուրիշ գործը, որ Երուսաղեմի թիվ 1973 ավետարանն է, ներսես գրչի ձեռքով և նկարազարդված Սարգսի կողմից, 1346 թվին։ Այս ձեռագրի մեջ նշանավոր պատկերը խաչելությունն է, որի առաջ ծունկ է չոքել Մարիուն թագուհին, Կոստանդին Բ-ի կինը, Օշին Պայլի՝ Կոռիկոսի տիրոջ դուստրը։ Կոստանդին թագավորի մայրն էլ, Պաղտին մարաջախտի կինը՝ կոչվում էր Մարիուն։ Այս պատկերը հրատարակել ենք մեր «Հավուց քառի Ամենափրկիչը» աշխատության մեջ (էջ 84). իսկ գունազարդ արտանկարությունը եղիշե Թադեոսյանի ձեռքով, պահել ենք ապագայի համար։ Բացի մեզ ծանոթ այս ձեռագրերից՝ Սարգսի անունով հիշված են և ուրիշները՝ Աճառյանի և Լալայանի ցուցակների մեջ. հետաքրքրվողներին մատնանշել կարող ենք օր. Սիրարփի Տեր Ներսեսյանի գործը ուր մի ամբողջ գլուխ նվիրված է Սարգսի գործերին և նրանց վերլուծությանը և համեմատությանը[15]։

Սարգիս Պիծակի գործերի այս թվումը մասամբ նորա համար էր, որ ցույց տրվի մեր շարականի նկարչի անձն ու ժամանակագրությունը, ինչպես և գործակցությունը Դրազարկում, Թորոսի հետ։ Նրանք վայելում են նույն ժամանակի և իշխանավորների հովանավորությունը, որոնց հիշատակությունն ունին հիշատակարանների մեջ։ Ինչպես Թորոս Ռոսլինը Հռոմկլայի մեծ արվեստագետն է և փառը դպրոցի[16], նույնը կարող ենք ասել Սարգիս Պիծակի համար Դրազարկի և Սսի արքայական մեծ դպրոցի նկատմամբ։

---

13 «Գրչ. արվեստը», 131։

14 Ձեռագիր Մորգանի մատենադարանին, թիվ 622, եր. 600։

Manuscrits Arméniens illustrés, 137—166.

16 Տե՛ս մեր «Ծանոթներ և ուսումնասիրություններ», պրակ Բ, Կոստանդին կաթուղիկոս, Նյու Յորք, 1942։

Հոդվածի սկզբում հայտնեցինք, որ նկարչի արվեստի վերլուծությամբ և առանձնահատկություններով չպիտի զբաղվինք, այդ շատ հեռու կտաներ, մանավանդ, որ ձեռքի տակ չունինք մեր հավաքած նյութերն ու լուսանկարները, այդ պահված է այլ աշխատության համար, բայց պիտի վերարտադրենք այստեղ շարականի մի քանի մանրանկարներն ու զարդերը ընդհանուր գաղափար տալու Պիծակի այս գործի նկատմամբ։

Շարականի միակ, ամբողջ ևրևսով, մանրանկարն է Աստվածածնի ծնողների՝ Հովակիմի և Աննայի աղոթքը, ըստ Հայամավուրքի ավանդության, (պատկ. 1), (պատկ. 84), որ մի տեսակ կրկնություն է Մարիամի և Հովսեփի պատկերազարդության։

Երկրորդ պատկերը նույն կանոնի սկզբնաղարդն է, քառանկյունու ճակատին օրհնող մորուքավոր Ամենակալի մեդալիոնով, իսկ ավելի բարձր կենդանության աղբյուրի սիմվոլիկ և պարզ ձևակերպությամբ, ծարավ թռչունները ջուր են խմում ավաղանը ներկայացնող անոթից (պատկ. 2.), (պատկ. 85)։

Շարականի հեղինակն է Անանիա Նարեկացին, որ այս ձեռագրի շատ երգեր ունի, իբրև անվավեր շարականների մի ամբողջ շարք. շարականի Acrostich-ն է, «Կոստանդին արքայ Հայոց է գրի», որ Կոստանդին Ա-ն է, Հնթում Բ-ի եղբայրը։

Երրորդ պատկերն է Ներսես Շնորհալին, Բուն բարեկենդանի կամ Աղուհացից առաջին կիւրակեի շարականի «Բանն որ ընդ հայր չէութեան»-ի հեղինակը, հունական զգեստավորությամբ, ներսի լուսանցքում։ Պետք է հայտնենք, որ Սարգիս Պիծակի շատ գնահատելի առավելություններից մեկն է, որ նա ոչ միայն ժամանակի Լևոն Դ-ի մանրանկարն ունի տված, Հակոբ Բ կաթողիկոսի, ինչպես և յուր, այլև նկարում է տեղական կամ ժամանակի զգեստավորությամբ սուրբերի պատկերներ, զինվորականներ ու թագավորներ, ինչպես Մորգանի մատենադարանի Հայամավուրքի մեջն է։

Հակոբ կաթողիկոսի պատկերի մեջ շուրջառը նույնպես խաչանիշ զարդեղով է, ինչպես այստեղ, բայց և վեղարը գլխին, ճակատին խաչ, ոչ իրարկե էջմիածնի կաթողիկոսների ճակատի ադամանդյա խաչը, որ նվեր էին սառնում մեր կաթողիկոսները ռուսական ցարերից ասեղնագործ կամ լաթից կարած ընդհանուր վանականության նշան, որ միջին դարերում բյուզանդական մանրանկարչության մեջ ևս ընդունված էր, և այստեղից անցած ռուսներին։ Ապա ուշադրության արժանի է այս կողմից Աստվածածնի վերնազգեստի ծաղիկները, որ հաճախ տեսնում ենք Պիծակի նկարների մեջ և այլուր։

«Կանոնն Նաւակատեաց սբ. Խաչին» (պատկ. 4), (պատկ. 87) սկզբնազարդը և լուսանցքի զարդը, ճակատի թռչունները հատուկ են Սարգիս Պիծակի զարդերի ծագումը, այստեղ և նախընթաց պատկերի մեջ, մինչև Սաանայան շրջանն է հասնում, բայց տարբեր ոճով վերարտադրված։ Մարկոս.

(պատկ. 5), (պատկ. 88) և Դուկաս (պատկ. 6), (պատկ. 89) ավետարանիչները լուսանցքներում այնքան բնորոշ արտահայտությամբ, որ Պիծակի ուրիշ գործերին ծանոթը իսկույն մակաբերել կարող է, թե նորա գործն է։

Անտոն անապատականի զգեստավորությունն ու վեղարը հայկական է. հայ անապատականները Անտոնյան միաբանության կամ կարգի հետևողներ են (պատկ. 7), (պատկ. 90)։ Ահա և Գևորգ զորավարի պատկերը, ժամանակի զինվորական զրահավորությամբ, վահանով, նիզակով, կոշիկներով (պատկ. 11), (պատկ. 94)։

Հովնանը ձկան փորում (պատկ. 9), (պատկ. 92) յուր բուսական զարդարանքով, որ անցել է արևելյան Հայաստան, Գլաձորի դպրոցին։ Վերջապես լուսանցքի այս թռչունը (պատկ. 9), (պատկ. 92) ծաղկազարդով, Սարգիս Պիծակի ամենասիրելի մոտիվներից մեկն է, որպես լուսանցքի զարդ։

Պատկեր 94, Գևորգ Զորավարն է, զինվորական զգեստով։

Պատկեր 95, Թորոս Հռոմկլացու ինքնանձնագիր հիշատակարանն է, համեմատելի նույն գրչի Ալիշանի հրատարակած հիշատակարանի գրի հետ։

Պատկեր 93, Պասեքի կանոնի սկզբնազարդն է ճակատին Ամենակալի անդրիով։

I.

Պարզելով խնդիրը ձեռագրի առաջին ստացողների, գրչի և նկարչի մասին, անհրաժեշտ ենք համարում փորձելու, պարզելու նաև երկրորդ ստացողի և 9ա հիշատակարանը գրողի անձնավորությունները։ Հիշատակարանը գրված է ոտանավորով և սմն Հովհաննեսի ձեռքով Ջկէ= 1849 թվին, ուր հիշված է երկրորդ ստացողը, տարաբախտաբար, անունը ջնջված, բայց որը «արի և հուսապետ» է, «ընտրեալ և յոքներանեան ամենաերջանիկ ըրաբունի», որ միայն վաթողիկոսին վայել էր այդպես կոչել։ Ապա հայտնում է հեղինակը, թե «ինչպես մի ուրիշ բարեպաշտիճան եկեղեցական, բայց «ոչ ի մերոցս բնական, այլ հայրենասէր ի վրացեան», շարականը տանում է Բլկուրան, հազար դեկան պարտքի փոխարեն։ Այդ ժամանակ ինքը բացակա էր, «թափառական յատար երկիր վտական եւ ի պատճառս ուսկեղրութեան աւտարացայ ի պանդխտութեան», լսելով շարականի տարվելը, գնում է Բլկուրան և տեղույն տեր Զաքեան», լսելով շարականի տարվելը, գնում է Բլկուրան և տեղույն տեր Զաքարի օգնությամբ վճարում է հազար դեկանը և ձեռագիրը բերում յուր նախկին տեղը։

Շարականի բնական տեղը, որտեղից Բլկուրան էր տարվել, վանք էր, և տարվել էր առանց վանականների գիտության։ Հիշատակարանի հեղինակ Հովհաննեսն էլ կապված է այդ վանքի հետ, և հետ բերելով «եդի ի մեր տան», այսինքն նույն վանքում։ Այդ վանքի հետ է կապված և երկրորդ ստացող Հովվապետը. սա տարբեր անձն է, քան ձեռագիրը Բլկուրանից հետ բերող Հովհաննեսը։ Ինքը յուր համար չէր գրել «արի և քաջ հուսապետ, ընտրեալ եւ յոգնե-

րանեան ամենաերջանիկ ըրաբունի», և երրորդ դեմքով «յիշեցեք ի քո եւ ծնողսըն իւր»: Շարականի սկզբնական գրութեան տեղն էլ Սիսն էր կամ Դրազարկը, արքայական տան հովանավորութեամբ, անբնական չէր Սսում կամ Դրազարկում պահված տեսնել շարականը մոտավորապես մի դար կամ քիչ ավելի, կաթուղիկոսարանում կամ նորան կից վանքի մեջ:

Արդ, հիշատակարանի գրութեան թվականն է ՋԼՀ=1489, որ Թլկուրանցոյ կաթուղիկոսութեան առաջին տարին է Սսի Մաշտոցի մեջ պահված հիշատակագրութեան համաձայն: Նորա նախորդն էր Հովհաննես Անտիոքացին, որ կաթուղիկոսական աթոռն է բարձրանում ՋԼէ = 1488 թվին: Ահա այդ երկու հիշատակագրութիւնները երկու կաթուղիկոսների ձեռքով գրված նույն ձեռագրի մեջ.

Ա. Նըւաստ Յոհաննէս կաթողիկոս նստայ ի յԱթոռ հայրապետութեան ի թվականիս Հայոց ՋԼէ:

Բ. Նըւաստ Յոհաննէս կաթուղիկոսս թլկուրանցալնցի (?) նստայ ի յաթոռ հայրապետութեան ի թվականիս Հայոց ՋԼէ. Յունվար ամսոյ ի ԺԶ (?), ուր չորեքշաբթի:

Տ. Բարկեն կաթուղիկոսը տալով այս հիշատակագրութիւնները, ավելացնում է, թե երկրորդի ամսաթիվը կարդալ «ԻԺԶկ» կամ «Զ»:

Այս բոլորը ի մի բերելով, հավանական ենք համարում մեր եզրակացութիւնը, թե հիշատակարանի հեղինակը Թլկուրանցին է, իսկ այնտեղ նշանակված «հուսապետ»-ը նորա նախորդ Հովհաննես Անտիոքացին: Շարականը Թլկուրան է տարվել Սսից, և հետ բերվել ՋԼՀ = 1498 թվականի հունվարին, երբ դեռ մեռած չէր Անտիոքացին և Հովհաննես Թլկուրանցին կաթուղիկոս չէր ընտրված: Այս եզրակացութեյան հաստատութեյան վերջին խոսքը ասել կարող ենք, երբ հիշատակարանի ձեռքը համեմատելու լինինք Սսի Մաշտոցի կամ Երուսաղեմի Կեռան թագուհու ավետարանի մեջ պահված ինքնաձեռագիր հիշատակարանների գրութիւնների հետ: Գրերի նմանութիւնը կամ տարբերութիւնը վերջնական լուծումը կտա մեր եզրակացութեյան ճշտութեյան կամ սխալի մասին:

Մեր ազգային ամենամեծ հարստությունը, որ ժառանգություն ենք ստացել մեր հայրերից Ձեռագրերի ժողովածուներն են։ Ուրախ ենք, այդ հարստությանն ամենամեծ մասը գտնվում է մեր հայրենիքում։ Մեր տաս տարուց բացակայության, ոչ միայն ճոխացել է մեծ չափերով պետական գրադարանի ժողովածուն, այլ և գիտության պահանջների համեմատ ցուցակների մշակմամբ ըստ բովանդակության, ըստ հեղինակների թվականների և այլն. ամենամեծ գիտություն է ստեղծված. գիտական աշխատավորների համար իրենց ուսումնասիրությունների նյութերը հավաքել ժամանակի մեծ խնայողությամբ։ Կարգավորյալ մատենադարաններն ու գրադարանները, բանգարանները մշակույթի, արվեստի և գիտության զարգացման անհրաժեշտ պայմաններն են։ Եվ այդ պայմաններն ստեղծված են այստեղ ընդարձակ չափերով։

Ուրախության զգացմունք ենք նշում Մատենադարանի աշխատավորների գործունեությունը դիտելով ձեռագիրների հանդեպ, գեղեցիկ և սիրալիր սպասարկությունը հարստության մեջ, որ ոչ պակաս նպաստավոր հանգամանք է աշխատավորի համար։ Երկու շաբաթվա մեր աշխատանքի արդյունքը եղավ կրկնակի, պաշտոնյաների այդպիսի վերաբերմունքի հետևանքով։ Հայտնում ենք մեր շնորհակալությունը Մատենադարանի վարիչ Գ. Աբովի և նորա օգնականների, որոնք ամենայն կերպով նպաստեցին մեր աշխատության ժամանակ։

Իմաղթենք, որ այս հաստատությունը ամենայն կերպով ծառայե հայ մշակույթի, պատմության և հին գրականության, արվեստի մշակության գործին և աղբյուր հանդիսանա նոր վերածննդության և նոր ոսկեդարի, որ հավատում ենք, թե սկսվել է արդեն և մեծ թափերով պիտի զարգանա։

(Գրիշ, նկարիչ և արձանագործ—1297—1332)

Մոմիկը Գլաձորի դպրոցի աշակերտներից էր, բայց նորավանքի կամ Օրբելյանների շրջանում գործող նորավանքը հայ Օրբելյան իշխանների հոգևոր կետրոնն էր, եպիսկոպոսարանը և ժառանգական դամբարանը վայոց Ձորում։ Այդ վանքը, հատկապես, պատմիչ Ստեփանոս Օրբելյանի և նորա երեք հաջորդների՝ Յոհան Օրբելի, Ստեփանոս-Տարսայիճի և Սարգիս Մեծորոպլիտի օրով, կարևոր դեր է կատարել մեր եկեղեցական կյանքի, արվեստի և մշակույթի պատմության մեջ։ Գրվել և նկարագրվել են այստեղ արժեքավոր ձեռագրեր, գործել են հայտնի արվեստագետներ, քանդակագործներ և ճարտարապետներ, կառուցվել ուշադրության արժանի եկեղեցիներ։ Այստեղ ցուցադրված մի քանի պատկերները գաղափար են տալիս Նորավանքում և շրջապատում ծաղկած արվեստի այլևայլ ճյուղերի, ճարտարապետության, քանդակագործության, մանրանկարչության բարձր զարգացման և նրբության մասին։ Ձեռքի տակ ունենք մի սուվար աշխատություն, ուր պետք է փորձվի պարզել Օրբելյանների կատարած խոշոր դերը քաղաքական, բայց մանավանդ արվեստի և մշակույթի պատմության մեջ։

Մոմիկը մեկն էր Ստեփանոս Օրբելյանի և նորա երկու հաջորդների ժամանակ գործող արվեստագետներից։ Նա գրիչ էր, մանրանկարիչ և քանդակագործ։ Տեղի և ժամանակի սղության պատճառով հնարավոր չէ նորա գրչության և մանրանկարչության մասին գրել, այլ միայն կամենում ենք մի քանի խոսքով նորա քանդակագործության մասին ծանոթություն տալ։ Մեր ցուցադրած խաչքարը նորա գործերից մեկն է, որ գաղափար է տալիս նորա տաղանդի և նուրբ արվեստի մասին։ Նախ կարդանք խաչքարի արձանագրությունը, որով պարզվում է մեկենասը, ժամանակը և քանդակագործի անձը։

ԵՍ ԹԱՄԲԱՀՈՒՆՍ ԿԱՆԳՆԵՑԻ ՉՔԱՋՍ Ի ՓՐԿՈՒԹԻՒ ՀՈԳՒՈ ԱՔԱՊԱԿ ՏԱՐՍԱՒՃԻՆ, ԵՒ ՅԱՐԵՒՇԱՏՈՒԹԻՒՆ ՈՐԴՈՑ ԻՄՈՑ ԲՈՒՐԹԷԼԻՆ ԵՒ ԲՈՒՂՏԱՅԻՆ ԹԻՒՆ ՉՔԲ ՄՈՄԻԿ ՎԱՐԴՊԵՏ ՅԻՇԵ

Ալիշանը, որ իր տեղեկություններն ու արձանագրությունները առել է բժիշկ Քաջբերունու ճանապարհորդական նկատողություններից, և առանց արձանագրության առանձնահատկությունների պահպանման, մի սխալ ունի, որ իմաստը փոխում է։ Նախ ընդգծված տառերը կցված են իրար, այսինքն, առաջին

տողի մեջ Թամթախաթունս առաջին բառի վերջին Ա-ն և երկրորդ բառի Ա-ն։ Երկրորդ տողի մեջ Հոգո և ոչ Հոգոյ, Աթաբակ։ Տարսահեին, երրորդ տողի մեջ ոտգոց և ոչ որգոց և ապա ընդգծվածները կցված են։ Բայց ամենից կարևորը «Վարդապետ» բառի սխալ ընթերցումն է, փոխանակ «վարդպետ»-ի։ Խնդիրը այս է, որ այս երկու տարբեր ընթերցումները բոլորովին տարբեր իմաստ ունեն. «վարդապետ»-ը դիտության տիտղոս է, հատկացված եկեղեցական բանասեր անձերին կամ բանի սպասավորներին, իսկ «վարդպետ» մեր արձանագրությունների մեջ նշանակում է ճարտարապետ, վարպետ։ Այսպես, Դեղարդավանքի վիմափորների ճարտարապետը արձանագրել է «Ջվարդպետս գաթնագ յիշե»։ Արագածի Տարավային փեշերի վրա Տիգր կոչված, այժմ Դըղըր արտավանած, հին և պատմական վայրի, Վաչիուտյանների շինած տաճարի և գավթի ճարտարապետն է Աղբայրիկը։ Ահա նորա արձանագրությունը գավթի առաջ, ձախ դասի առաջի սյան խոյակի հյուսիսային ճակատին։

Ի ԹԻՒ ՈՒ։ ԱՂԲԱՅՐԻԿ ՎԱՐԴՊԵՏ ՇԻՆԵՑ ԶԵԿԵՂԵՑԻՍ ԵՒ ԶԳԱՒԹՍ ԵՒ ՄԻԱԲԱՆԵՑԱ ԱՐԵՒԱՄԲՔ ԵՒ ՍՊԱՍԱՒՈՐՔՍ ՀԱՍՏԱՏԵՑԻՆ։ Բ. ԱՒՐ ԺԱՄ ԻՆՁ ՍՐ ՀԱՁԻՆ ՈՐ ՀԱՓԱ. ԴԱՏՅԱՅ (ՀԱՓԱՆՔ, ԴԱՏԻ ՅԱՍՏՈՒԹՅՈՅ)։

Ուրևմն Մոմիկը «վարդպետ» է, այսինքն Տարտարապետ, քարգործ, բայց նա կոչվել է սկզբում «սարկաւագ», ժողովրդական հասկացողությամբ պիր կամ տիրացու, կարդացող ներկա հասկացողությամբ, և ոչ վեց աստիճան ունեցող կրոնավոր։

Այժմ տեսնենք, թե ովքեր են արձանագրության մեջ հիշված անձնավորությունները։ Թամթա Խաթունը էլիկում Օրբելյանի կինն էր, իսկ էլիկումը Ստեփանոս Օրբելյանի ավագ եղբայրը, Տարսայիճ Օրբելյանի որդին ու հաջորդը, որ մեռավ 1300 թվին։ Տարսայիճը Սմբատ «արքայ» կոչված Օրբելյանի կրտսեր եղբայրն էր, որ 1273 թվից հետո՝ հաջորդեց իր անդավակ եղբորը և աթաբեկության պաշտոն ստացավ Մահկանաբերդի (Հաղպատի շրջանի) իշխան Սադուն աթաբեկի մահվանից (1284) հետո։ Աթաբեկը Հայաստանի իշխանների գլուխն էր և ներկայացուցիչը մոնղոլ խանների և վրաց թագավորների առաջ։ Էլիկումի հաջորդն էր և ավագ որդին Բիւրեղ կամ Բուրդել իշխանաց իշխան, կինը վախախ, որ մեծ շինարար էր, որի շինածն է այստեղ ցուցադրած երկնահարկ եկեղեցին։ Իսկ սրանց զավակներն էին՝ մանրանկարչության մեր կինաս Բիշկեն և Իվանեն։ Թամթա Խաթունը մեռավ 1312 թվին, իսկ Բուդան որդին 1318 թվին «յետ քաջ մրցանաց տիգամարտից»։

Անցնենք այժմ Մոմիկի գործի համառոտ գնահատության։ Ուշադրության

---

1 Die Baukunst der Armenier, էջ 708։

և հագուստով: Մեջտեղի անձը ձախով ավետարան ունի բռնած, իսկ աջով խաչակնքում է: Կողքերից կանգնած ֆիգուրներն էլ արևելյան, շքեղ հագուստներով, կանգնած են բարեխոսի դիրքով: Դյուրին է կռահել, որ խմբանկարը ներկայացնում է կենդրոնում Հիսուսը, կողքերից Պետրոս և Պողոս առաքյալները: Պետք է ավելացնենք, որ այս երևույթը միակը չէ, մենք Աստվածածնի և ավետարանիչների մանրնկարներ ունենք չինական-թաթարական դրոշմով (Ձեռ. էջմ. № 111): Բայց զարմանալի են իրենց նրբությամբ զարդանկարները. կարծես քարի վրա քանդակված չեն, այլ նուրբ թելերով ցանցակերպ ասեղնագործություն է: Այդ առնված պիտի լինի, ավելի ճիշտ հեռաձգ նման ձեռագործների կամ ոսկերչական ցանցակերպ հյուսվածքներից: Համենայն դեպս, այստեղ ակնհայտնի ապացույց ունինք քանդակագործի ոչ միայն շնորհքի, այլև բարձր և նուրբ տեխնիկայի: Խաչը, նորա տակի վարդյակը, ինչպես և կողքերի շրջանակը քանդակված է նույն եղանակով: Կողքերի շրջանակի մոտիվները՝ ո.թ ճառագայթներով աստղերի շարքը՝ նորությունն չէ և ոչ հազվագյուտ երևույթ, այլ հատուկ ԺԴ դարի արվեստին, հատկապես սիրված խաչքարերի արվեստի մեջ: Այս ոճով է նաև բիւրեղել իշխանաց իշխանի կանգնել տրված խաչքարը իր վաղամեռ եղբոր՝ Բուղտայի հիշատակին (Եկեղեցու կողքին): Վերևից մի մասը կոտրած, պատկերագանգակներով. մեջտեղը եղել է Ամենակալը, աջից Պետրոս, ձախից Պողոս, ներբևի մակագրություններուն համեմատ: Վարդյակի շուրջը գրված է ես Բիւրեղ կանգնեցի զխաչս /կոտ./ վասն եղբաիր իմ Բուղտային:

Ներբևի անկյուններում ծունկ են չոքած երկու թագակիր աղոթավորներ, Բիւրեղ և կինը՝ Վախախ: Այս նկարագրությունից հետո ավելացրել ենք հետևյալ նկատողությունը մեր նկատողության տետրակի մեջ. «Մոմիկի գործը պիտի լինի»: Բայց ոչ միայն այս, այլև համոզված ենք բաթելաշեն եկեղեցու ճարտարապետը Մոմիկն է, կամ, գոնե, շատ քանդակները Մոմիկինն է, որ կմնա պատճառաբանել մեր մեծ աշխատության մեջ:

Մոմիկի անվան հիշատակությամբ ունենք մի ուրիշ բարձրաքանդակ՝ Յոհան Օրբելիի շինած եկեղեցու արևմտյան դռան ճակատին, որ Աստվածածինն է Հիսուս մանկան հետ.

1. Ես ար Յովան (*քար ընկած*) սիրեցաց արհեպիսկոպոս շինող սու
2. րբ եկեղեցո (*քար ընկած*) աչեմ եւս եւ զբարեպաշտ իշխանաց
   իշխանն չար (*քար ընկած*) որճ իմ գհաջ մեճամարտ
3. իկն զբիւրեղ (*քար ընկած*) դժոխափառ fuասել
4. ր զայգ հար (*քար ընկած*) վախն նորարոխր
5. բոչ զայակալ իւրեանց Բեշրեենիճ եւ Իսաեէիճ
6. Թվ չճ. Մոմիկ վարդապետ (*քար ընկած*) շարժ եղել

Ամբողջ ճակատաքարի վրա Աստվածածին է նստած, ձախով բռնել է ծընկանը նստած Հիսուսին, որ աջով խաչակնքում է, իսկ ձախով սիրտ է բռնած, որ, ևթե աչքի խաբկանք չէ, անսովոր է։ Երկուսն էլ լուսո պսակ ունին, Հիսուսինը խաչաձարդ։ Քանդակի շուրջը զարդեր և ողկույզներ երկերկու, մեկը մի, մյուսը մյուս կողմից։

Ալիշանը թվականը ՉՀԱ է նշանակել։

Յոհան Օրբելը և Մոմիկը գործակից են եղել և գրչության և մանրանկարչության արվեստների մեջ։

Ա.

Փարիզում անցյալ մարտի 3-ին [1947 թ.—կազմող], գործողության ժամանակ հանկարծամահ է եղել հռչակավոր նկարիչ Ս. Խաչատուրյանը, որ Փարիզ էր եկել ցուցադրելու յուր հնդկական որմնանկարների արտանկարությունները, որոնք ցուցադրված էին նախապես Ամերիկայի զանազան քաղաքներում։ Հայ լրագիրների տված տեղեկությամբ՝ հուղարկավորությունը կատարված է մարտի 7-ին պատշաճ կերպով, դամբանականներ են խոսել տ. Արտավազդ Արքեպիսկոպոսը, նկարիչ Շիշմանյանը և ուրիշներ։

Հանգուցյալը ծնած է Մալաթիայում 1886 թվականին, նախնական կրթությունն ստանալով նույն քաղաքում, իսկ միջնակարգը՝ Կարնո Սանասարյան վարժարանի մեջ։ Ապա նույն վարժարանի խնամակալության կողմից ուղարկված է Իտալիա կատարելագործվելու նկարչական արվեստի մեջ, որի սիրն ու հակումները նկատելի էին արդեն դպրոցական ուսման ընթացքում։ Երեք տարի այնտեղ յուր արվեստին հետևելուց հետո մի տարի էլ այցելություններ է կատարել Գերմանիո և Ավստրիայի նշանավոր թանգարանները, ուսումնասիրելով նշանավոր վարպետների գործերը։ Սանասարյանում կարճ ուսուցչությունից հետո կրկին Եվրոպա է անցնում, այս անգամ կանգ առնելով Փարիզում։

Նախընթաց պատերազմի ժամանակ նա անցել էր Կովկաս, և այդ ժամանակ արդեն նորա ջանասիրությունն ու արտադրողական ունակությունները աչքի էին ընկնում, սկզբում յուր երանգավորության մեջ մի քիչ ավելի վառ աչքի ընկնելու չափ, բայց հետզհետե ավելի մեղմ և նուրբ։ Հայ գաղթականության կյանքից բազմաթիվ մեծ ու փոքր պատառներ ունի նա, որ գեղարվեստականից զատ և ազգագրական արժեք ունին գլխատ և գարդարանքի կողմից։ Բավական մեծ թիվ այդպիսի ստեղծագործություններից սեփականություն է այժմ Երևանի պետական թանգարանի [այժմ՝ Հայաստանի պետական պատկերասրահում—կազմող]։

Նորա ջանասիրությունն ու ստեղծագործական ունակությունը անընդ ու ղարկ են ստացել յուր կատարած ճանապարհորդություններով և ցուցահանդեսներով, հռչակելով և նորա անունը։ Դորանով էլ պետք է բացատրել նորա արվեստի բազմազանությունն ու հարստությունը։ Նա ճանապարհորդել է Եվրոպայի քաղաքակրթական մեծ կետրոններից զատ՝ Եգիպտոս, Պարսկաստան ու

Հնդկաստան, որոնք հին և յուրատեսակ քաղաքակրթության վայրեր են։ Այս վերջին երկու երկրների վերաբերությամբ սքանչելի միտքն է հղացել, ուսումնասիրել նրանց արվեստը, հատկապես, որմնանկարչությունը և վերարտադրելով ոչ միայն կորստից ազատել այլև ծանոթացնել քաղաքակրթի աշխարհին։ Այս երկու գործով հանգուցյալ Խաչատուրյանը դեղարվեստական մի մեծ առաքելություն է կատարել, որ պետք է խորապես գնահատվի արվեստի և քաղաքակրթության բարեկամների կողմից, ինչպես և գնահատվել է ոչ միայն այլևայլ ճանգարանների կողմից կազմած ցուցահանդեսներով, այլև պատվավոր տեղ են գտել նրանց ժողովածուների շարքում։

Բ

Բայց պարսկական արվեստի վերարտադրությունը առանձին արժեք ունի և հայ արվեստի և քաղաքակրթության պատմության համար։ Ինդիրն այս է, որ ժէ դարի սկզբից հայերը որոշ դեր են կատարում պարսկական էլանքի մեջ։ Շահ-Աբասի ձեռքով Իսպահանում բռնի կերպով հաստատած գաղթականությամբ։ Այս գաղութը և հատկապես նորա խոջայական դասը իրրև մեկենաս շատ կարևոր մաս ունի առևտրի հետ նաև արվեստի շրջանում, միջնորդ հանդիսանալով եվրոպական և պարսկական արվեստների մեջ, հատկապես եվրոպականի ազդեցության Պարսկաստանում։ Կերպարվեստի մեջ ըստ Դավրիժեցու ժամանակի մեծ ներկայացուցիչն էր Մինաս նկարիչը։ Ավելի հաստատուն գաղափար ունինք եվրոպական ազդեցության մասին։ Խաչատուր Կեսարացու աշակերտներից Ստեփանոսը և «վարպետաց վարպետ» Հայրապետը։ Հառաջ է գալիս և որմնանկարչական արվեստը, որի հրաշալի կոթողներն են Փրկչի և Բեթղեհեմի եկեղեցիները։

Բայց և բազմաթիվ մնացորդներ ունինք աշխարհիկ որմնանկարչության՝ հայ մեծահարուստ խոջաների պալատների մեջ։ Հայ արվեստի և մշակույթի պատմության մեջ այդ պալատների նկարչության ուսումնասիրությունը արվեստի դիտության կատարելիք պարտավորություններից մեկն է, թեպետ վատթարագույն վիճակի մեջ մեզ հասած։ Հանգուցյալ Սարգիս Խաչատուրյանին ենք պարտական այդ պալատների նկարչության մնացորդների փրկությունը և ծանոթությունը։ Մենք առիթ չենք ունեցել տեսնելու այդ արտանկարությունները, բայց ձեռքի տակ ունինք նրանցից մի քանիսի լուսանկարները, որոնց հետևը հանգուցյալի ձեռքով գրված, թե որտեղից են արտանկարված նրանք։ Հիշված են խոջա Պետրոսի և Խոջա Ավետիքի անունները, որոնք և հայտնի են իբրև Բեթղեհեմի և Փրկչի եկեղեցիների որմնանկարչության մեկենասները։ Եկեղեցական որմնանկարչության մասին կատարված են արդեն որոշ աշխատանքներ Հայրապետյանի, Երեմյանի և Քյուրդյանի կողմից, իսկ պալատների աշխարհիկ արվեստի մասին գաղափար ենք կազմում միայն հանգուցյալի արտանկարությունների շնորհիվ։

Ահա Խոջա Ավետիքի տան նկարներից մեկի տակ արձանագրված է հայերեն լեզվով «Աբբուցանել չծարաւեալս», անհերքելի ապացույց հայ ծագման: Այդ մի մեծ խմբանկար է, պալատի դռան առաջ կանգնած և ծունկ չոքած աղքատ կանայք ջուր են առանում երկու ավելի լավ հագնված, գլխներին լաշակով կանանցից, իսկ սրանց հետևից առավել ևս շքեղ հագնված և դեկոլտե կանայք կամ օրիորդներ ձեռքերին խոր աման կամ քասա՝ կերակուր պիտի մատուցանեն ավետարանական խոսքի համեմատ (Մատթ. Իե. 35): Տան կողքից բարձր ծառեր՝ պարտեզի մաս. ավելի հեռու պարսպապատ մի տարածություն, մեջը գմբեթավոր եկեղեցիներ: Հայերեն արձանագրությամբ կան և ուրիշ նկարներ, որ չենք նշանակում և նկարագրում չերկարացնելու համար: Կան և ուրիշ շատ նկարներ՝ պարսկական տիպի ձիավորներ կամ որսորդական տեսարաններ: Իսկ Խոջա Պետրոսի անունով պալատի որմնանկարների մնացորդների մեջ երիտասարդ զույգեր՝ պարսկական կամ եվրոպական տիպի և զգեստավորության:

Միջնակյալ կերպով ասենք, որ կար խոջայական և իշխանական մի այլ տուն, ավելի հարուստ և ավելի ազդեցիկ յուր ազգակիսի և արքայական պալատի հետ ունեցած հարաբերության հանգամանքով, որ յուր հարկի տակ հյուր էր ընդունում շահերին և եվրոպական արքունիքների դեսպաններին: Խոջա Սաֆարը և եղբայրը՝ Խոջա Նազարը և սորա որդին՝ Խոջա Սաֆրազը և ուրիշները հայտնի են իբրև մեկենասներ հայ գրչության և մանրանկարչության: Առասպելական ճոխության էր հասած նրանց նիստ ու կացը, նրանց տան կահն ու կարասիքը, անսպասելի չէր, որ նրանք էլ ունենային իրենց նկարազարդ պալատները: Բայց տեղեկություն չունինք, թե մնացած են և նրանց պալատից մնացորդներ, թե ոչ: Այսպիսի լուսո տակ, հասկանալի է, թե ի՞նչ արժեք ունի հանգուցյալի գործը թե պարսկական և թե ազգային արվեստների տեսակետով:

Վ.

Հիշենք և Նորա հնդկական որմնանկարչության կատարած վերարտադրությունների մասին, որ ցուցադրվեցան Անգլիայի և Ամերիկայի նշանավոր կետրոններում և մեծ գնահատության արժանացան: Այս գործերի ցուցադրությունը կատարված էր և Փարիզում, երբ պատահել է Նորա անակնկալ մահը:

Նորա հնդկական որմնանկարների ցուցահանդեսին ներկա ենք եղել 1942 թվին Ամերիկայում և մի քանի խոսքով էլ մեր գնահատությունն ենք ավելացրել Զ. Գալեմքերյանի հոդվածի տակ, որ հրատարակեցինք մեր խմբագրությամբ լուս տեսնող «Հայաստանեայց եկեղեցի»-ի մեջ: «Նկարիչ Նալչատուրյանը եզակի աշխատավորներից մեկն է արվեստի ոլորտներում, ոչ միայն յուրաստեղծ գործերով, որքան մենք ծանոթ ենք յուր երիտասարդության օրերից սկսած, այլև պարսկական և հնդկական երկու մեծ արվեստների հարազատ վերարտադրությամբ: Ոչ լուսանկարչական մեքենայի տված հարազատությու-

նը, այլ կենդանի արվեստագետի, որ յուր անձի մեջ տաղանդի հետ միացրել է հնաբանի անսահման հետաքրքրությունը, թափանցելով դարերի խորքից եկող հոգևկան ապրումների, ըմբռնումների, հույզերի և շարժումների, և նրանց ներկերով թանձրացնելու խորհրդի մեջ: Անսահման սերը և անդադրում աշխատանքը միայն կարող է կորզել ամեն ինչ կլանող ժամանակի ճանկերից այն մեծ և արժեքավոր ստեղծագործության մնացորդները, որ Պարսկաստանի և Հնդկաստանի կրոնական հավատո և գեղարվեստական ղեզացմամբ ցողված կյանքի հավաստիքներն են: Հեշտ է դիտել բազմաթիվ պատառները, բայց ջժվար պատկերացնել, թե ի՞նչ աշխատանք, ղոհողություն, զրկանք և տևողություն էր պետք նրանց գտնելու, մաքրելու, նկարելու և ծանոթացնելու եվրոպական և ամերիկյան գեղարվեստասեր աշխարհին: Աշխատությանի գործը պետք է արձանագրվի հավետ արվեստի և քաղաքակրթության լուսավոր էջերում:

Այն փառքն ու հռչակը, որ նկարիչ Խաչատուրյանը ձեռք է բերել յուր այդ պիսի աշխատանքով և ցուցադրել Պարսկաստանի, Հնդկաստանի, Եվրոպայի զանազան մայրաքաղաքների մեջ, արժանացել գեղարվեստագետ և մինչև իսկ թագադիր անձանց գնահատության և շարադրության, երաշխիք է և ապացույց, թե հանճին մեր տաղանդավոր նկարչի հայ ժողովուրդը յուր լավագույն զավակներից մեկն ունի, որով պարծենալ կարող է նա հառաջադեմ ազգերի շարքում:

Երուսաղեմի Հայոց մատենադարանի № 1796 ձեռագիր ավետարան է, գրված միջին երկաթագրով, մագաղաթի վրա։ Ստացողներն են Մատթեոս և Վահան եղբայրները, որոնցից Մատթեոսը հոգևորական է։ Տարաբախտաբար, ոչ ժամանակի և ոչ տեղի մասին որևէ բան գիտենք։

Ստացողների մասին հետևյալ կարճ նկատողություններն ունենք.

Ա. Մարկոսի վերջում 142ա. «Զվահան եւ զմատթէոս նուաստ ծառայք Այ. յիշեսցիք ի տր. աղաչեմ»։

Բ. Ղուկասի վերջում 242 բ. «Զմաթէոս նուաստ ծառայ Այ եւ զվահան եղբայր իմ յիշեսջիք ի տր. աղաչեմ»։

Գ. Յովհաննու վերջում, 287 բ. սկսված է վերջին հիշատակարանը, որից ավելի երկար տեղեկություններ ոչ մի տեղ չունենայինք Հովհաննու վերջում, 280 բ. ընծայական մի մանրանկար, որտեղ հոգևորական զգեստավորությամբ մեկը մատուցանում է իր ավետարանը Հիսուսին և մոտը գրված է «Մաթէոս ծառա քէ»։

Եթե այսչափ աղբատ է մեր տեղեկությունը ստացող Մատթեոսի և իր եղբոր մասին, առավել ևս գրչի և նկարչի մասին։ Մեր միակ տեղեկությունը, 5բ. Մատթեոս ավետարանչի պատկերի տակ հետևյալ նկատողությունն է ծաղկագրությամբ, «ԶԹէոդորոսն նկարող սորին», ապա երկրորդ տողով սովորական փոքր երկաթագրով ավելացրած. «յիշեսջիք ի տր»։

Գրչի մասին ոչ մի խոսք կամ ակնարկ ունենք, բայց կասկածից դուրս է, որ գրիչն ու նկարիչը նույն անձն է, այսինքն նույն Թէոդորոսը։ Իբրև հիմունք այսպիսի եղրակացության ծառայում է պատկերների մեջ եղած գրչության և մնագրի նույնությունը։ Շատ հաճախ երևույթ է գրչի և նկարչի նույնությունը ձեռագրական արվեստի մեջ և միայն արվեստագետներից մեկի հիշատակությամբ։

Ամենից դժվար խնդիրը ժամանակի որոշումն է։ Հիշված երեք անձնավորություններից ոչ մեկը պատմական հայտնի անձնավորություն չէ, որով կարելի լիներ ժամանակը ճշտել։ Միայն մի հիշատակարան ունենք նրանց ստացողի,

որից ամենից ուշ ժամանակը կորոշվի, որ 1287—912 թվականն է։ Ըստ այդ հիշատակարանի, որ բնագրից բոլորովին տարբեր բոլորագիր է, կիր Վասիլ անունով մեկը Մելիտինեից գալիս է Նրղնկա և մնում այնտեղ։ Իսկ ապա հիշյալ թվին գալիս է «ի յուխտ ի սբ. Լուսաւորիչս բարեպաշտուն կենակից նորա Մնծտիկին եւ երկեղազարդ որդին նորին Ապուլքարամ այլ տղայաքն, յորում էի ի ծառայութիւն սբ. Լուսաւորչիս նուաստ վրդ Յոհաննէս եւ տուին զգեղեցկազարդ աւետարանս ընծայք ի սբ. Լուսաւորչիս, չիշատակ հոգո պր. Կիր Վասիլին եւ փրկութիւն զաւակաց իւրոց եւ ես վրդ Յոհաննէս եւ այլ միաբանքս տուաք ի տարին ասր մի պատարագ կիր Վասլին ի տանի սբ. քառասնից», որպես անջնջելի հիշատակ «Կիր Վասլին, Մնծտիկնա, Ապուլքարամին, Նուարաթ՝ խաթունին եւ Ամիրոցին»։

Ձեռագիրը, իհարկե, շատ ավելի հին է, քան վերև հիշված թվականը։ Ընծայողները գրել չեն տալիս երընկայում, այլ «տուիին» ասված է, հավանորեն բերել են իրենց հետ Մելիտինեից։ Նկարչությունը, զարդերն ու մանրանկարչական տառերն էլ մատնանշում են որպես կիլիկյան արվեստի վաղագույն շրջանի գործ, բայց Արևելյան Հայաստանի բնորոշիչ գծերով։ Արևելյան և ավելի հնագույն ծագում են ցույց տալիս բոլորակ զարդերի մեջ ավետարանական հատվածների նշանակումը. զարդերի մոտիվներն էլ են արևելյան, որ երևան են գալիս հնագույն ձեռագրերի մեջ, կամ նրանց երկաթագիր ընդօրինակություններ մեջ։ Ապա արևելյան են ծաղկագրական և գծագրական կամ գրչական նկարչությունը, արևելյան մոտիվներով մանրանկարչական տառերը, բայց արդեն ոսկեգծերի հետ, ասել է ոչ շատ վաղագույն շրջանի գործ։

Խրչությունը նույնպես առնվազն ԺԲ դարի դրոշմն է կրում, մանավանդ փոքր երկաթագրով մասերը, ինչպես Եվսեբիի և Կարպիանոսի խորանների գրերը։

Ձեռագրի մեջ համեմատելի երևույթներ ունենք մի կողմից Արևելյան Հայաստանի ԺԲ դարի երկաթագիր և ավելի հին ձեռագրերի հետ, և մյուս կողմից՝ կիլիկյան նախնական շրջանի։ Հայաստանից կիլիկիա ևկող հայերը ունեին արդեն իրենց գեղարվեստական, մանրանկարչական ավանդները, որ երկար ժամանակ լիովին տիրապետող էր. հետզհետ միայն պատմական նոր պայմանների և շրջապատող ազգերի փոխազդեցության տակ պիտի նոր ոճ մշակվեր, բորի և լորվին մոռանալու հինը։ Օրթաքիլիսայի ավետարանը, Ալեքսանդրապոլից ոչ հեռու, գրված 1166 թվին Հոռմկլայում, իր զարդագրությամբ արևելյան է. այս խնդիրը պիտի պարզաբանենք և հիմնավորենք, երբ առիթ ունենանք կիլիկյան մանրանկարչության ծագումն ու զարգացումը բացատրելու, այստեղ հարևանցի հիշում ենք մեր մտքերի պարզաբանության համար։ Սակայն մյուս կողմից կիլիկյան շրջանին հատուկ երևույթներ են արդեն մարմարիոնի հովանոցների (Ciborium) պատկերները և նկարչության ընդհանուր ոճը, որ բյուզանդական թեթև աղերս է ցույց տալիս։ Մարկոս Ավետարանիչի պատկերը Պետրոս առաք-

յալի խմբակցությամբ որպես թելադրող, արևելյան ոճով ձեռագրերին հատուկ չէ։ Այս հանգամանքները ի մի բերած, հակված ենք ձեռագրի ծագումը մինչև ԺԲ դարի կեսերը ընդունելի համարել։

Եթե այս վերջին եզրակացությունը ճիշտ լինի, գայթակղված ենք որոշելու և մեր «Թէոդորոս նկարող»-ի անձնավորությունը, առայժմ, իհարկե, որպես ենթադրություն. գուցե, ապագան նոր փաստեր կբերի ժխտող կամ հաստատող. Թէոդորոս քհանեցի, որդի քարագործ Քրիստափորի, գրիչ և նկարիչ, հայտնի է ԺԱ դարի վերջին տասնամյակներում։ Նա նկարազարդել է Շենուտի անվան նվիրված վանքը Վերին Եգիպտոսում և թողել է քսան Սարժիգովսկու, յուր klein Armenien աշխատության մեջ (երեսը նշանակել կարող չենք, ձեռքի տակ չունենալով այժմ գիրքը) հայտնած տեղեկության, հայերեն և կոպտերեն արձանագրությունները, բերելով և նրանց բովանդակությունը։ Բարեբախտաբար, Թորգոմ եպիսկոպոսը՝ ապագայում ծրուսաղեմի պատրիարքը, անձամբ տեսել և լուսանկարել է մի քանի մասերը, որոնց մեջ և հայերեն արձանագրությունը, կոպտերեն մասի հիշատակություն չունի[1]։ Ահա այդ արձանագրությունը, որ առուգել ենք և նկարով։

ԹԵՈԴՈՐՈՍ /ՆԿԱՐԻՉ ԵՒ ԳՐԻՉ /Ի ԳԱԼԱՏԻՆ/ ՔԵՍՆՈՅ։ ՄԵՐՁ/Ի ԿԱՄՈՒՐՋՆ ՇՆՉԵՒՅ Ի ԳԵ/ՂՋԷ, ՈՐ ԿՈՉԻ, ՄԱՒԹԼԼԷ։ ԵՒ ՀԱ/ՅՐ ԻՄ ՔՐԻՍՏԱՓՈՐ ՔԱՐԳՈՐԾ։ Ա.Ե. ՆՄԱ. ՈՂՈՐՄԵՍՅԻ / ԵՒ ՁԵՁ ԵՒ ՄԵՁ ԵՒ ԱՅՑ /ԱՐԱՍՑԷ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅԻՈՑՍ ՈՐՔ ԵՄՔՍ/ ԻՍԱՌԱՅՈՒԹԵԱՆ /ՅԵԳԻՊՏՈՍ Ի ՀԱՅ ԲԱՊԵՏՈՒԹԵԱՆՆ/ ՏՆ ԳՐԻԳՈՐԻ ՔԻԵՐ ՈՐ ԴԻՈՅՆ ԳՐԻԳՈՐԻՍԻ ՈՐ ՎԱ.ՀՐԱՄ ԿՈՉԻ[2]։

Թողնում ենք արձանագրության մյուս նշխարները և պատկերագրությունը, թեպետ արժանի է ավելի մանրամասն ուսումնասիրության և լուսանկարման, իբրև հայ արվեստի տարածման և եգիպտահայության պատմության կարևորագույն մի մնացորդ։ Արդյոք պատահական է պատկերների կողքին վերից վար՝ կարճ տողերով գրված բացատրությունը, նույն ձևով և ձեռագրի ընծայական մանրանկարի մեջ, որ սովորաբար պատկերի տակ է գրված։ Ար-

---

[1] Եգիպտոսի և Հայոց հին և արդի եկեղեցիները, Գահիրե, 1927։

[2] Արձանագրությունը մեր ընթերցանությամբ պատկերից տողատակ ենք գծիկներով, ինչպես և տողատակ է Թորգոմ եպիսկոպոսը։ Մխայն սխալ է կարդացված կամրջի անունը, բնագրի մեջ Շնչեոյ չէ, այլ Շնջեոյ, գլուխ անունն էլ Մաղթլև չէ, այլ Մախթլէ։ Բացի դրանից, Թորգոմ եպիսկոպոսը չի պահպանել բնագրի կետադրությունը, իսկ մենք նշանակել ենք։ Հնագրական արժեք ունի եւ-ի գրության ձևը, որ այստեղ միացած ձևով է, ինչպես այժմ գործածական է։ Այս երեսվիճը նկատելի է հին ձեռագրերի մեջ։ Կամրջաձորում գրված և Լիմից բերված ձեռագիրը 1155 թվականից, նույն միացած ձևն ունի, գրչությունն էլ հին շեղագիր։ Ձեռագրի համարը ըստ Լիմի 446, իսկ ներկայում 362։ Թեոդորոս Քերանցու գիրն էլ շեղագրին մոտ բոլորագիր է։

ձանագրության ժամանակը որոշել կարող ենք, որովհետև այնտեղ հիշված երկու անձնավորությունները հայտնի են իբրև պատմական անձնավորություններ. Գրիգորիս Վահրամը Գրիգոր Մագիստրոս Պահլավունու որդին է, Վկայասերը, որ կաթողիկոսական աթոռը բարձրացավ 1065-ին և մեռավ 1105 թվին, իսկ մյուս Գրիգորը, նրա քվեր որդին, նրա կողմից եգիպտոսի առաջնորդ ձեռնադրված ըստ Սամուել Անեցու Շվա—1082 թվականին։

Այժմ մի քանի խոսք ձեռագրի մանրանկարչության մասին։ Խորաններից՝ համեմատաբար պարզ նկարչությունը ինքնին ապացույց է, որ ձեռագիրը ծագումով կիլիկյան բարձր զարգացման շրջանի չէ պատկանում, գրչությունն էլ իր փոքր և միջին՝ մարգարտաշար երկաթագրով, մատենանշում է առնվազն ԺԲ դարի կեսերը։ Ունենք միայն եվսեբիի և Կարպիանոսի խորանները Չբ.—Յա. և համարաբերաի միայն երկուսը 4բ., 5ա.։

Ավետարանիչները իրենց սկզբնագործդրով լրիվ են։ Մատթեոսը նստած է (6ա) բարձրաթիկունք աթոռի վրա, որի վերին, ինչպես և թևերի անկյունները, գնդաձև զարդով վերջացած։ Այդպես էլ որմնանկարի Ամենակալի աթոռները։ Իսկ իրար միացնող ձողերի կամ տախտակների երեսը՝ քանդակված նուրբ արմավենիների շարքով, ոլորապտույտ գծի վրա երկու կողմից։ Ավետարանիչը նստած, մի ձեռքով բռնել է թերթը, մյուսով գրիչը, առաջից կախված է օրինակը բաց փաթույթով (Rolle)։ Ճարտարապետական շենքերից մեկը սոխաձև կամ գնդաձև գմբեթ ունի, մի երևույթ, որ արևմտյան է, կիլիկյան շրջանի հետ կապված, թեև հազվագյուտ, այսպես օրինակ, կեռան թագուհու գրել տված մի ձեռագրի մեջ, որ գտնվում էր Գանձակի ս. Լուսավորիչ եկեղեցում։ Ավետարանիչի պատկերը վատ վիճակում մեզ հասած, գեմքի և այլ մասերից ներկերը թափված։ Վերևից կախված է պտուկաձև մի կանթեղ։ Պատկերի տակ, գծագարդերի մեջ ծաղկագրերով «Ջ Թէղդրոս ճկարող սորին». իսկ սրա տակը փոքր երկաթագրով «Յիշեցէք ի ur»։

Սկզբնագարդի կիսախորանը ընորոշ ոչինչ ունի, բացի աջ կողքի գրչագարդերից, որ արևելյան է և ոչ հատուկ կիլիկյան արվեստին։ Նման զարդանկարչություն կա նաև Մարկոսի կիսախորանի ճակատին։ Նույնը տեսնում ենք և մյուս ավետարանիչների սկզբնատառերի զարդագրության մեջ, որոնց հետ և նրանց նշանակները։ Մանրանկարչական այս չորս տառերի մոտիվներն էլ՝ արևելյան ծագումով։

Մարկոսի խմբանկարը, այսինքն ավետարանիչը որպես Պետրոսի թելադրությունները գրող, հատուկ չէ Արևելյան Հայաստանին, այլ կրկնվում է կիլիկյան ձեռագրերի մեջ։ Արևելքին հատուկ չէ նաև մարմարիոնի սյուներով և գնդաձև գմբեթով հովանոցը (ciborium), որ կրկնվում է և Ղուկասի պատկերի հետ, քիչ տարբեր ձևակերպությամբ, բայց նույն ոճով։ Պատկերագրությունը ընդհանրապես վատ չէ, բայց ոչ առաջնակարգ։ Տերունական պատկերներից ունենք Հարությունը՝ երկու տեսարանով 8 բ, հրեշտակի ավետումը յուղաբեր

ձանանց և երևումը պարտիզի մեջ։ Այս պատկերը բյուզանդական դրոշմ ունի որոշ չափով։

Բայց ամենից ուշագրավը Ջոնի խմբանկարն է։ Մատյան Մատթեոսը գլուխը թեքած մատուցանում է իր ավետարանը Հիսուսին, իսկ սա աջով օրհնում է նվիրատուին։ Մատթեոսի կեցվածքը, գլխի թեքումը, դեմքի արտահայտությունը, բարեձև մորուքը, ավետարանի շնորհալի մատուցումը, հագուստը իր ծալքավորումներով, բոլորը իրար լրացնող ներդաշնակություն և համաչափություն են նրա կերպարավորության (Figur), որ արվեստագետի ունակության ապացույցն է որպես ինքնուրույն ստեղծագործություն և ոչ սովորական ավանդականի ընդօրինակություն (Schablone)։ Մատթեոսի և Հիսուսի աթոռի մեջ եղած տարածության վրա գրված է «Մար/էոս ծա/ռա Ի/ի»։

Վայելուչ է նաև Ամենակալի ձևակերպությունը։ Քրիստոսը նստած է երկարաձև բարձով (մութաքա) ծածկված աթոռի վրա, խաչազարդ լուսապսակով, մազերը երկար և ուսերի վրա թափած, դեմքը և մորուքը կանոնավոր, օրհնության շարժումը բնական։ Երկար՝ մինչև ոտները հասնող Տունիկան և ծիրանին շնորհալի ձգված ուսերին, մարմնի մասերը համաչափ, որին և համապատասխան է աթոռը իր պատվանդանով և ոտքերի տակ փռված թոռլ։ Ամենակալի այս պատկերագրությունը ավանդական է, իհարկե, ընդհանուր առմամբ, բայց ոչ արտանկարված, այլ ամբողջի հետ նկարված արվեստագետի կողմից, ուստի ոճի և արվեստի միությունը ամբողջության մեջ։ Հունարեն IC, XC գրությունը գլխի վերև՝ ապացույց չէ ընդօրինակության։ Մնկանը բռնած բաց ավետարանի խոսքերն են «Երբ վա/ճառես /զոր ին/չուին/ եւ առ զ/ /աւետար/ան ան fո/ եւ եկ զկնի ի/մ եւ կե/ցցես»։ Իսկ գլխի աջ կողմից գրված է «ես եմ որ չը/նչեմ չան/աւէնութի/ս fո եւ զմե/ղս fողչ եւս յ/իշեցից»։

Այսպիսով, պատկերի ամբողջությունը համարում ենք համաչափ և գեղարվեստական՝ մանրանկարչական իմաստով, առանց հետանկարի հաշվառության, որով այս Թեոդորոսը պետք է համարել կիլիկյան նախնական շրջանի լավագույն արվեստագետներից մեկը։

Ա

Շատ ժամանակ չէ, ընդամենը և ոչ երեսուն տարի, որ համաշխարհային առաջին պատերազմի բերած հանգամանքով, ծվարել ենք այս գեղեցիկ և հյուրընկալ ափերի վրա. բայց մեր փառավոր տաճարը, մեր աստվածաբանական դպրոցը, մեր տպարանն ու վեհարանը, մեր եկեղեցիներն ու դպրոցները, բարեսիրական հաստատությունները լիբանանի և Սյուրիո սահմաններիմեջ, ապացույց են, որ կարողացել ենք կազդուրվել հոգվով և մարմնով լիբանանի այս ազատ բարձունքների և Սյուրիո առողջարար կլիմայի մեջ և հնարավորություն ենք ստացել մինչև իսկ այսպիսի համեստ ցուցահանդեսով մեր սերն ու ձգտումները ցուցաբերել դեպի գրական, հոգևոր և մշակութային կյանքը։

Երկու փայտի շփումից կրակ է հառաջ գալիս, որ նյութական լույս և ջերմություն է տալիս շրջապատին, այնքան կարևոր կյանքի համար. ո՞րչափ ևս առավել կարևոր է մտավոր և հոգևոր կյանքի շփումից հառաջացած իմացական լույսն ու ջերմությունը ազգերի և մարդկության համար։ Այս մտքով և հասկացողությամբ ողջունում ենք ներկա այս հոծ բազմությանն իբրև այս գործի համակրողների, բայց և այն բոլոր մարդկանց, հայ, արաբ, եվրոպացի կամ ամերիկացի, որոնք աշխատում են գիտության և արվեստի, կրոնի և մշակույթի անցատատներում, ջահակիրներ հանդիսանալով և լուսավորելով մարդկության ուղին դեպի կյանք և ճշմարտություն, խաղաղություն և երջանկություն։

Ինչպես անհատներն առանձին-առանձին ապրել, զարգնալ և հառաջադիմել չեն կարող, այնպես էլ ազգերը։ Փոխադարձ շփմամբ է և ազդեցությամբ, որ ընթանում է նրանց կյանքը, ձև ու կերպարանք ստանում հոգևոր կյանքի պատմության մեջ, իրենց առանձնահատկությունների և ունակությունների սահմաններում։

Բ

Այս համեստ ցուցադրությունն իսկ տալիս է շատ շոշափելի ապացույցներ այս մտքերի հաստատության համար, թե ազգային և միջազգային տեսակետներով, պարզելով միևնույն ժամանակ, թե հայ մշակույթը ունի արժեքներ

[1] Այս խոսքով և մտտավոր բովանդակությամբ խոսված է և բացատրություններ տրված ցուցահանդեսի բացման օրը։

ազգային շրջանակից դուրս նշանակությամբ։ Հայ արվեստը ընթացակից է հայ պատմության, ինչպես հոգևոր կյանքի մյուս երևույթները, ուստի և այնտեղ արտացոլված ենք տեսնում ժամանակի հոսանքներն ու փոխազդեցությունները։

Այսպես, օրինակ, գերեզմանական հայկական կոթողները քրիստոնեական նախնական արվեստի աղերսն են ցույց տալիս հելլենիստական կոպտակոն, սիրիական, սասանյան արվեստների հետ, որ հետզհետ բյուզանդական և ապա հեռավոր արևմուտք են անցել այլևայլ ճանապարհներով, պատկերաքանդակի, զարդարանքի և ճարտարապետության մարզերում։ Բավիլիկ հոսանքը հայ ճարտարապետության մեջ սերտ կապված է գերեզմանական այս կոթողների քանդակների և մոտիվների հետ, նաև շոշափելի ապացույցներ, թե վեցերորդ դարի կեսերից առաջ արդեն Սիրիայից եկող բազիլիկականների կամ երկարաձիգ տաճարներից ոմանք գմբեթավորված են Հայաստանում։ Մի երևույթ, որ արտաքո կարգի նշանակություն ունի քրիստոնեական ճարտարապետության պատմության մեջ, և թե հայը պարզ ընդօրինակող չէ, օգտվելով բազիլիկ նկեղեցիների ձևակերպություններից կամ զարդաքանդակներից, այլ նորա գլխին է դրել յուր գմբեթը և ուրույն ձև ու կերպարանք տվել յուր փոխառությանը։

Գերեզմանական այս կոթողներն ունին և ուրիշ արժեք. նրանք պահել են քրիստոնեական պատկերաքանդակների կամ պատկերագրության օրինակներ, ինչպես ծնունդն է, Աբրահամի զոհաբերությունը, Աստվածածնի Հիսուս մանկան հետ պատկերագրության նախնական տիպերը, օդիկիտրիայի կանոնած և նստած ձևերով, որ ռուս ակադեմիկ Կոնդակովի կողմից ծագմամբ սիրիական է համարվել ենթադրաբար, առանց ծանոթ լինելու Հայաստանում գոյություն ունեցող երևույթների հետ։

Հայ ճարտարապետության մասին երկար չենք խոսի, նա գիտությանը արդեն որոշ չափով մատչելի է դարձել Ստրժիգովսկիի, Դիլլի, Միլևի և ռուս գիտնականների նորագույն աշխատանքներով և սկսել է պատվավոր տեղ գրավել քրիստոնեական մյուս արվեստների, բյուզանդականի, րոմանականի և գոթականի կողքին, ոչ յուր հոյակապ և շքեղ կերպարանքով, բայց յուր հատուկագծերի և արտաքին ձևակերպությունների պեսպիսություններով և՛ լուրջ։ և՛ աղնիվ գծերով։ Մեր գողտրիկ Հռիփսիմեն, Զվարթնոցը, Անիի մայր եկեղեցին, Աղթամարի Ս. Խաչը միշտ հիշատակելի պիտի մնան հայ և Մերձավոր Արևելքի ճարտարապետության մեջ։

Բյուզանդական ճարտարապետության, րոմանական և նույնիսկ գոթական արվեստների նախնական շատ տարրերի ծագումը պիտի որոնել Արևելքում՝ Ասորիքում և Հայաստանում։ Արաբական արվեստի մեծ կոթողը՝ Ալհամբրան եվրոպացիներին մոտ է։ Այս հիշեցումով ուզում ենք կրկնել լատինական հին խոսքը, թե Lux ex oriente, որ ճշմարտությունն է հին պատմության համար։

Երկրորդ մեծ արվեստը հայ մանրանկարչությունն է, որ նույնպես յուր սկզբնական ազիրան ունի Մերձավոր Արևելքի հին քրիստոնեական ազգերի հետ։ Բայց այստեղ ևս պիտի կրկնենք այն միտքը, ինչ որ հայտնեցինք ճարտարապետության մասին, այսինքն նույնպես մշակված և ուրույն ձև ու որակ են ստացած։ Պետք չունինք ձեզ բացատրելու, թե աշխարհիս երեսին բոլորովին ինքնյանցից անկախ արվեստ չկա, այլ խնդիրն այն է, թե ավելի ազգը որքան կարողացել է յուր ստացած ազդեցությունները մարսել, վերամշակել և ուրույն ձև ու կերպարանք տալ նորան, նոր ուղիներ գծելով յուր զարգացման համար։ Եթե մանրանկարչական պատկերագրությունն երբեմն ավելի կամ պակաս չափով ազերս ունի սիրիական, հետագայում և բյուզանդական նման արվեստների հետ, մանրանկարչական զարդագրությունը ընթանում է ազգային գծով, սերտ աղերս ունենալով ժողովրդական զարդարանքի և գորգագործության կամ նույնիսկ ճարտարապետական զարդաքանդակի հետ։ Հայաստանը հայտնի է շատ վաղուց յուր գորգերով, մոտիվների, գույների ներդաշնակության և համադրության կողմից նրանք կենդանի կապ են ցուցադրում մանրանկարչական զարդագրության հետ։ Հենց այստեղ մեր մանրանկարչական ցուցադրության մեջ կարող ենք տեսնել կարպետի կամ գորգի պատկեր 1066 թվականից առաջ նկարված։ Նույնպես կենդանական աշխարհը, հատկապես թռչունները մեծ բաժին ունին մանրանկարչական սիմվոլիկ և դեկորատիվ զարդագրության մեջ, հատկապես մանրանկարչական հայ տոհերի ձևակերպության մեջ, որ բարձրագույն նրբության, երևակայական ճկուն ձևակերպման և ոճավորման է հասնում ԺԳ դարում և հետո։ Հայ տոհերի ձևակերպությամբ կարելի է մինչև իսկ հայ մանրանկարչության փոխազդեցությունների ընթացքը պարզել։

Տարաբախտաբար ի դարից առաջ թվականով ձեռագրեր մեր ձեռքը չեն հասել, թեև տեղեկություն ունինք Զ և Ժ դարերի գրչության դպրոցների գոյության մասին, որպիսիք Կամսարականների և Սյունյաց դպրոցներն են։ Բայց թյան մասին, որպիսիք Կամսարականների և Սյունյաց դպրոցներն են։ Բայց մենք կարող ենք անցյալ դարերի մասին որոշ գաղափար կազմել Ժ և ԺԱ դարերից մեզ հասած մանրանկարչությամբ, որոնք աղերս են բերում կոպտական սիրիական, ինչպես Բաբուլայի 568 թվականի ավետարանի նկարչության հետ։ Եվ այդ հասկանալի է արևելյան այս հին եկեղեցիների դավանաբանական մերձավորությամբ։ Չենք ուզում ասել, թե Բաբուլան օրինակ է հանդիսացել մերոնց համար, այլ թե նման հոսանք է եղել, ինչպես ճարտարապետականի համար ասացինք։ Զ դարից ունինք չորս մանրանկար, պահված էջմիածնի № 229/3774 փղոսկրյա կազմով ավետարանի մեջ. ձեռագիրը 989 թվականի գործ է, նշանավոր յուր Ժ դարի մանրանկարներով, Զ դարի հատվածական չորս մանրանկարներով և Զ դարի փղոսկրի քանդակագործ կազմով. վերջինը ոչ հայկական ծագումով։ Ժ դարի որոշ նմանություններով և տարբերություններով

ձեռագրեր ունենք մի քանի հատ։ ԺԱ դարի մանրանկարչությամբ ավետարաններ ունինք ավելի, Բաբուլայի կանոնների կամ խորանների նմանությամբ կամ տարբեր, ինչպես Աղթամարի ավետարանը 1018, Շխնոցի 1033 և 1053 թվականից էջմիածնի 363/3793 ավետարանը, արևելյան, այսինքն սասանյանին մոտեցող զարդանկարչությամբ։

ԺԱ դարի կեսերին հիշատակելի է Կարսի Գագիկ վերջին թագավորի մեծ և փառավոր, երկաթագիր և ճոխ նկարազարդված ավետարանը, մանրանկարներով, լուսանցքի զարդաքանդակներով, թռչուններով, կենդանիներով, վերջիններս արևելյան, այսինքն սասանյանը հիշեցնող դրոշմով։ Բայց ուշադրության արժանի են, մանավանդ, Գագիկ թագավորի, Գորանդուխտ թագուհու և իրենց Մարեմ դստեր խմբանկարը, ուսումնասիրելի արքայական զգեստի և գահույքը զարդարող գորգերի պատկերներով։ Արդեն հիշեցինք, որ ունինք այնտեղ և գոմնազարդ կարպետի նկարներ։

ԺԱ դարի կեսերից ունինք և 1066 թվին գրված և նկարազարդված Գրիգոր Երեց Ակռոնցու ավետարանը բյուզանդական արվեստի դրոշմով։

Հայ մանրանկարչության ամենածաղկյալ շրջանը ԺԲ դարի վերջերից մինչև ԺԴ դարի կեսերին է Կիլիկիայում և Արևելյան Հայաստանում։ Կիլիկիայում ունինք գրչության և մանրանկարչության գպրոցներ. Հռոմկլայում կաթողիկոսարանի, Դրազարկում և Սսում արքայական տան և Լամբրոնի իշխանության մեջ՝ Սկևռայի վանքում։ Եկեղեցին հատուկ կանոններ է հաստատում գրչության համար. բարձրաստիճան եկեղեցականներ, կաթողիկոսներ և եպիսկոպոսներ, թագավորներ և թագուհիներ, իշխաններ և իշխանուհիներ մեկնեսա են հանդիսանում գեղարվեստական գործերի պատրաստության մեջ։ Այնտեղ ունինք և մեկենասների, արքայական տան պատկանող անձերի և կաթողիկոսների մանրանկարներ իրենց դիրքի և աստիճանի համեմատ զգեստավորությամբ, որ աղգագրական և պատմական արժեքներ են։ Կիլիկիայում, բնականաբար, քաղաքական և նոր դրացիների փոխհարաբերության և ազդեցության հետևանքով, որոշ փոփոխության է ենթարկվում արվեստը. նկատվում է աղերս բյուզանդական, մահմեդական, խաչակիրների, միմյանչև իսկ հեռավոր Արևելքի հետ առնչության նշաններ։ Կարող ենք հիշել մի շարք արվեստագետների անուններ, այս կամ այն դպրոցին պատկանող Հռոմկլայից՝ Գրիգոր Երեց, Կյուրակոս, Հովհաննես, Թորոս Ռոսլին, Սկևռայից՝ Կոստանդին «անհաս գրիչ», Ստեփանոս Գունդերիցանց, Դրազարկից՝ Ավետիք գրիչ, մի «հոգնահաճար նկարագերտ», որի անունը չգիտենք, բայց գործերը հասել են մեզ, Սարգիս Պիծակ բազմավաստակ նկարիչ, որ իմիջիայլոց ունի նկարած Լևոն Դ-ի, Հակոբ Բ կաթողիկոսի և Մարիուն թագուհու պատկերները։ Սորան ժամանակակից է Թորոս Հռոմկլայեցի նշանավոր գրիչը, որ գրել է Օշին թագավորի ժամագիրքը 1319 թվին, որ ցուցադրված է այստեղ, նաև գրել է Հեթում Նղբրցու և Նորա

որդի պարոն Կոստանդնի (ապագայի Կոստանդին Դ թագավորի) համար մի շարական, նկարազարդված վերև հիշված Պիծակի կողմից, շատ նշանավոր և բազմաշխատ նկարչի, որի գործերից օրինակներ ունինք այստեղ ցուցադրած։

Նման դպրոցներ ծաղկել են և Արևելյան Հայաստանում ԺԴ դարի քաղաքական և մտավոր վերածննդության շրջանում, ինչպես Հաղբատում, Անիի Հոռոմոսի վանքում, Երզնկայում, մանավանդ Վայոց Ձորի Գլաձորի վանքում, որ Հայոց բարձր վարդապետարանն է եղել։ Հատկապես Պռոշյան և Օրբելյան իշխանությունների մեջ հին Հայաստանի ավանդություններով ծաղկել է մի նոր արվեստ, մի քիչ տարբեր, քան կիլիկյանն է։ Ծաղկել է նաև եռահարկ եկեղեցիների մի ձևը ճարտարապետության։ Այստեղ ևս նկատվում է քաղաքական և պատմական պայմանների ազդեցությունը, մի կողմից մահմեդական, ապա հայ կիլիկիայից եկած հոսանքների, բայց և մինչև իսկ հեռավոր Արևելքից՝ մոնղոլական Չինաստանից։ Ուշադրության արժանի է, որ ԺԴ դարի սկզբում, թեև հազվագյուտ, Աստվածածնի և Հիսուս մանկան, ավետարանիչների դեմքեր ունինք թաթարական, նույնը նաև քանդակագործության մեջ որոնցից օրինակներ ունինք այստեղ ցուցադրած։

Մանր արվեստներից ցուցադրված են փայտի քանդակագործություն Թ, ԺԲ, ԺԳ և ԺԵ դարերից, լուսանկարներով, ոսկերչական կազմեր՝ ԺԳ, ԺԴ և ԺԸ դարի սկզբից, հախճապակյա անոթներ և լուսանկարներ ԺԷ դարի սկիզբից, ասեղնագործության՝ եպիսկոպոսական թագեր, նմիփորոններ ԺԸ դարի սկզբից։

Մենք կանգ չենք առնում պատմական գրականության վերա, առանց որի անկարելի կլինի Մերձավոր Արևելքի ազգերի պատմությունն գրել։ Հարուստ է նաև թարգմանական գրականությունը՝ եկեղեցական հայրերի գործերից սկսած մինչև փիլիսոփայական, բժշկական և այլ գիտությունների հետ կապված աշխատություններ, ոմանց քնագիրներն իսկ կորած։

Ձեր ուշադրությունն ենք հրավիրում հին դրամների վերա. այստեղ ունինք հայ Արտաշիսյան, հայ Ռուբինյան թագավորության շատ հարուստ, ապա հունա-հռոմեական, արաբական, սելջուկյան, խաչակիրների դրամների ժողովածուներ։

Ի վերջո ցուցադրված են նաև Արևելյան Հայաստանի, այսինքն Ղարաբաղի և Մերձակա կովկասյան գորգերի և Փոքր Ասիական գորգերի նմուշներ։

ՀԱՄԱՌՈՏ ԶԵԿՈՒՑՈՒՄ ՀԱՅ ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Ա

Հայ մանրանկարչությանը նվիրված մեր գործը ընդարձակ է. նյութեր ենք հավաքել ժ—ժէ դարերից, մինչև տպագրության կատարյալ տիրապետությունը: Հավաքել ենք գրչության դպրոցների կամ առանձին նշանավոր վարպետների հետ կապված բազմահարյուր ձեռագրերի հիշատակարանները, սև և գունավոր լուսանկարչական պատկերները, նաև շատերի ճշգրիտ արտանկարումները՝ գունազարդ և իսկական մեծությամբ՝ արվեստագետ նկարիչների ձեռքով: Այդ մանրանկարներից ոմանք՝ գեղարվեստականից զատ՝ ունին պատմական-ազգագրական արժեք, լինելով հայ թագավորների, թագուհիների, իշխանների և բարձրաստիճան հոգևորականների պատկերներ, ժամանակակից նկարիչների ձեռքով պատրաստված:

Ամբողջը բաժանված է երեք մասի.

ա) Հայ մանրանկարչությունը Մեծ Հայքում, մինչև Բագրատունյաց անկումը, և նորա հետևանքով՝ մինչև ԺԲ դարի կեսերը: Այդ մասում, շոշափել ենք և ավելի հին շրջանը, հետագայի արտանկարներից դատելով:

բ) Կիլիկյան շրջանը, որ հայ գրչության և մանրանկարչության ոսկեդարն է, հին ավանդների պահպանությամբ և քաղաքական-տնտեսական նոր պայմանների հետևանքով նոր տարրերի յուրացմամբ:

գ) ԺԳ դարի վերածնումը բուն Հայաստանում, հին ավանդների պահպանությամբ և Կիլիկյան արվեստի յուրացմամբ: Սորա երկրորդ մասում տըրված են Ժէ դարի վերածննդի փորձերը և եվրոպական ազդեցության թափանցումը Ս. Գրքի նկարազարդության մեջ:

Առաջին շրջանը արևելյան ենք անվանում, մատնանշելով հայ արվեստի ճարտարապետության և քանդակագործության աղերսը հելլենիստական-սասանյան, ասորական և մասամբ կոպտական արվեստների հետ, դրացիական և դավանաբանական գծերով: Հայ հին քանդակագործությունը գերեզմանական կոթողների վերա, ե—է դար, մեծ լույս է սփռում այդ կողմից[1]: Սորան կցված է

[1] Տե՛ս մեր ընդուներ և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության», պրակ Գ, 1944, Նյու Յորք: Սույն գործը թարգմանված է անգլերենի և շուտով լույս կտեսնի [լույս չի տեսել—կազմող]:

Բագրատունյաց շրջանի վերածնունդը և հայ արվեստի տարածման ընթացքը դեպի Կիլիկիա և արևմուտք։

Կիլիկյան մանրանկարչությունը սկզբում պահում է Մեծ Հայքից բերած ավանդները, ապա նոր վերազարթնում է և ձևակերպություն ստանում նոր պայմանների համեմատ, այսինքն՝ մտմտիզական, բյուզանդական և խաչակրաց հարաբերությունների։ Արքայական տան, իշխանական և հոգևոր բարձր դասի հովանավորությամբ, ստեղծվում են գրչության և մանրանկարչության դպրոցներ՝ ուր նշանավոր են հանդիսանում բազմաթիվ գրիչներ և նկարիչներ։ Այդպիսի վանական դպրոցները շատ են Կիլիկիայում, բայց նշանավոր են՝ հատկապես Հռոմկլան, Դրազարկը, Սկևռան, Դռները։ Վատ և պայծառ գույների ներդաշնակությունն ու դիմագծերի նուրբ գծագրությունը այս շրջանի հատկությունն են կազմում։ Հաղվագյուտ չեն և պատմականազգագրական՝ թագավորների, թագուհիների, իշխանների և կաթողիկոսների արժեքավոր մանրանկարներ, որոնք արտաքո կարգի արժեք ունին հայ տարազի, արվեստի և մշակույթի պատմության համար։

Երրորդ շրջանը ծագել ու ծաղկել է սկսում Արևելյան Հայաստանի քաղաքական և մտավոր վերածնունդի հետ։ Հաղբատի և Անիի դպրոցները, ԺԲ դարի կեսերից սկսած, ունին արևելյան բնույթ, իսկ Գլաձորի դպրոցը, ԺԳ դարի կեսերից մինչև ԺԴ-ի կեսերը, խառնարան է արևելյան և կիլիկյան հայ արվեստների։ Այս դպրոցից ունինք շատ նշանավոր գրիչներ և նկարիչներ, որոնք գործել են նաև Օրբելյան իշխանների հովանավորությունը վայելող Նորավանքի մեջ, թեպետ տեղ-տեղ պահում են ավելի արևելյան ավանդները, Պռոշյանց և Օրբելյանց իշխանությունների մեջ։

Այնուհետև աշխատում ենք առկայծյալ պատրույգի գոյությունը և տարատևությունը հաստատել մինչև ԺԷ դարի վերջին վերածնունդի փորձը Արևելյան Հայաստանում, որին կցվում է եվրոպական արվեստագետների գործերի մուտքը Ս. Գրքի զարդանկարչության մեջ։

Բ

Այս մեծածավալ գործը վերջնական և ամբողջական լրացման հասցնելուց առաջ, կատարել ենք ու կատարում ենք մենագրական ուսումնասիրություններ այս կամ այն դպրոցի կամ անհատ արվեստագետների մասին, որոնցից մի քանիսը արդեն հրատարակված են։ Երընկայի դպրոցին նվիրված ներկա աշխատությունն էլ մեկն է այդպիսիներից. մի քանի խոսքով աշխատենք ամփոփ տեղեկություն տալ այս գործի մասին[2]։

Այս դպրոցի երկու կարևորագույն ձեռագրեր նկարազարդված ունինք ձեռ-

---

2 Հույս ունինք այս աշխատությունը ընծայել սույն գործի ամբողջությունը, որի տպագրության ծախսը հոգացել է բժ. Աստաբյան, Մուսուլից [Լույս չի տեսել—կազմող]։

քի տակ, մեկը 1200 թվականից և մյուսը 1269, երկուսն էլ գրչության ու մանրանկարչական արվեստով շատ բարձր։ Տարաբախտաբար, Երզնկայի դպրոցի մասին ավելի վաղ, քան 1200 թվականը տեղեկություն չունենք։ Բայց միանգամից հնարավոր չէր Երզնկայում այնպիսի մի գործ ստեղծել, ինչպես այդ թվականի ձեռագիրն է։ Երկրորդը՝ Երուսաղեմի թիվ 1925 Աստվածաշունչը է, յուր գրչությամբ շատ ավելի ընդարձակ, իսկ մանրանկարչությամբ ճոխ և բարդ, ինչպես կտեսնենք, որի համար երեք արվեստագետներ են աշխատել, ինքնըստինքյան պակաս հսկանալի, եթե չլիներ գեղարվեստական գործացած դպրոց։ Ուստի և աշխատել ենք մեզ մատչելի աղբյուրներով Երզնկայի դպրոցի պատմությունն իրար բերել, որպեսզի հասկանալի դառնա գեղարվեստական բարձր արժեքով այդպիսի գործերի երևույթը։

Նույնիսկ մեր ձեռք բերած կցկտուր տեղեկություններով, պարզվում է, թե Երզնկան 1200-ից էլ առաջ եպիսկոպոսանիստ քաղաք էր, և այնտեղ կային վանքեր, հատկապես Լուսավորչի անունով Ավագ վանքը, ուր «աստուածային արհնաւք վարժեալ էր ուսմամբ գիտութեան» այդ ավետարանը ստացող Սարգիս Ա եպիսկոպոսը։ Բայց դրանից էլ առաջ ստացել էր մի «Տաւնական գերապայծառ», որ նշանակում է 1200 թվականից էլ առաջ այնտեղ ծաղկած էին գիտությունն ու արվեստը։ Սարգիս Ա-ի նախորդն է նորա հորեղբայրը՝ Ավետիք եպիսկոպոսը, որ «բազում ժամանակս կալեալ զեպիսկոպոսութեան շնորհս»։ Իսկ մի տարի հետո, 1201 թվին գրված ավետարանի հիշատակարանից իմանում ենք, թե Ղազար գրիչը գրել է մի բոլորագիր ավետարան, զարդարած կիսախորաններով և զարդագրերով. «եւ մեծաւ փափաքանօք եւ սրտաջան յուժողութեամբ, բազում աշխատանաւք եւ յոգնատանջ երկաւք, քաջահաւատ յոտսով եւ քրիստոսասէր բազձանաւք գրեցի զսուրբ աւետարանս զայս ի փրկութիւն կենաց ինձ եւ եղբաւր իմոյ Աստուածատոյ» (քահանա է և գրչի հարազատ եղբայրը, ինքն էլ գրչության գործերում մասնակից)։ Խնդրում է հիշել նաև «զգիտնական եւ զարդիւնական վարդապետ մեր զկոստանդ որ եղեւ մեզ վանատու եւ հանդուցիչ, եւ պատճառ այսմ իրագործութեանս»[3]։

Միևնույն Լուսավորչի անապատում, որ Ավագ վանքն է, 1224 թվին Թադեոս գրիչը մի ճառընտիր է գրել, գործակից ունենալով Կոստանդին, Ղազար և Վարդան, որոնք մեզ ծանոթ գրիչներն ու նկարիչներն են, 1200 և 1201 թ.-ի ձեռագրերի աշխատավորները. հատուկ հիշված են Թադեոս և Կոստանդին, «որք ի ծաղկիցն աւժանդակեցին»[4]։

Տուրք վանականը, 1227 թվին, Երզնկայի Ավագ վանքում ստացել է մի Հայսմավուրք, որ ուղղել է նախընթաց Ղազար գրիչը. սա և յուր եղբայր Աստ-

---

[3] Հանդէս ամսօրեայ, 1924, երես 246։

[4] Ջարբհ., երես 729։

վածատուրը Տուրքի վարդապետներն են։ Վանահայր Պետրոսի հետ հիշված են Պետրոս և Հովհան միաբանները[5]։

Վենետիկի Մխիթարյանց թ. 694 «Հաւաքումն Բանից Նախնեաց» հատորիս տեղեկանում ենք թե 1230 թվին, նույն Լուսավորչի վանքում ընդօրինակված է Գրիգոր Վկայասիրի և Կյուրակոս վարդապետի կազմած ճաշոցը կամ Տոնականը։ Հիշատակարանի գրողն է Մխիթարը[6]։

Այնուհետև, մինչև 1266 թվականը մեզ հայտնի չէ Եդեսիայի անցուդարձը, բայց մտավոր և հոգևոր կյանքը ոչ միայն կանգ չէ առել, այլև ավելի զարգացել է։ 1266 թվին նրան է գալիս Հովհաննես Երզնկացին իբրև ընտիր գրիչ, որ հայտնի է դառնում հետո իբրև բանաստեղծ և գիտնական՝ ժամանակի հասկացողությամբ։ Նորա ուսուցիչն էր «վարդապետն տր. Յովհաննէս... որ սպասնալ եղեւ յանուրինաց». ասել է մի վարդապետ, որ ապրում էր 1230-ի և 1266-ի մեջ։ Իսկ սորանից էլ առաջ, նորա առաջին ուսուցիչն էր «Հայր Յակոբ»[7]։ Այստեղ ունինք և առաջին հիշատակությունը «Տն. Սարգսի մարհասիայի մեծի», որ եղմ. ի թիվ 1925 ձեռագրի ստացողն է 1269 թվին։ Այս Սարգիս Բ-ի և նորա որդու «պայոն Յովհաննէս»-ի ժամանակը՝ քիչ հետո Երզնկայի մտավոր և գեղարվեստական կյանքի ամենածաղկյալ ժամանակն է, և ինքն էլ յուր դիրքով նշանավոր հանդիսացած է իբրև Երզնկայի հովանավորը և Հուլաղուի սիրելին։

ԺԳ դարի երկրորդ կեսից մինչև գրեթե ԺԴ-ի կեսերը, մենք ամբողջ մի հույլ ունինք Երզնկացի նշանավոր գրողների, գրիչների, բանաստեղծների և նկարիչների։ Այսպես են Մխիթար Երզնկացին, Կիրակոս և Հովհաննես Երզնկացիները (առաջինը՝ գրիչ և մատենագիր, իսկ երկրորդը՝ Կիրակոսի եղբորորդին և առաջնակարգ գրիչ), Հովհաննես Երզնկացի բանաստեղծն ու մատենագիրը (վերև հիշվածը), հետո Ծործորեցի կոչվածը։ Ապա՝ Ահարոն վարդապետ գրասեր, Կոստանդին Երզնկացի բանաստեղծ նշանավոր, Մովսես Երզնկացի՝ գրիչ և մատենագիր, Բարսեղ գրիչ, Ավետիք գրիչ (Սարգիս Բ-ի հաջորդ Ներսես եպիսկոպոսի ժամանակ), Գրիգոր գրիչ, Կարապետ քահանա (Սարգիս Գ-ի աթոռակալության ժամանակ)։

Այսպիսի լուսաբանությամբ աշխատում ենք պարզել Երզնկայի դպրոցի բարձր զարգացման հանգամանքը, ինչպես և իբրև վաճառականության և հաղորդակցության կետրոն և ենթակա բյուզանդական և սելջուկյան փոխազդեցության։

---

5 Ձեռ. էջմ., թիվ 3779։

6 Հ. Ք. Սարգիսյան, Մայր ցուցակ, Բ, 1214։

7 Ձեռ. էջմ. թիվ 823., տե՛ս նմանահանությունը մեր «Գրչության արվեստը», Գ հատոր, երես 35։

Առաջին ձեռագիրը Կ. Պոլսի Հայոց Ազգային մատենադարանի թ. 6 ավետարանն է, որ այժմ գտնվում է Նյու-Յորք, և սեփականությունն է պրն. Հակոբ Գևորգյանի: Չգիտեմ ինչ կերպով Աղեքսանդրիայի վրայով հասել է այնտեղ: Մենք այդ ձեռագիրը 1911 և 1914 թվերին տեսել ենք Կ. Պոլսում, նկարագրել, լուսանկարել որոշ չափով, և երրորդ անգամ՝ վաշինգտոնի „Freer Gallery of Art"-ում վաճառելու բերված, և վերջապես պրն. Գևորգյանի մոտ, որ սիրալիր կերպով տրամադրեց լուսանկարելու:

Ձեռագիրը, ինչպես հիշել ենք, ավետարան է, 37×28 սմ մեծությամբ, մեսրոպյան մեծ երկաթագրով, մագաղաթի վրա գրված: Հիշատակարանը տալիս է մեզ անհրաժեշտ տեղեկություններ ձեռագրի ծագման մասին, թեև մի թերթ ընկած է մեջտեղից: Սուացողներն են երկնակյալ Սարգիս եպիսկոպոսը և յուր եղբայրը՝ Ամբակում քահանան, իրենց հորեղբայր՝ նշանավոր և օրինակելի հաւատացած Տեր Ավետիք եպիսկոպոսի հիշատակին: Գրիչն է վարդան կրոնավոր, իսկ վայրը՝ Ավագ վանք, «յամի Ռ.որդի չիսներորդի միով թուով պակաս», որ հավասար է փրկչական 1200 թվականին: «Ի նուագեալ և ի դառն ժամանակի, որ աւր ըստ աւրէ աւարումն, սով և սրածութիւն աճէ յամենայն տեղիս»: Ապա ավելացնում է, թե ընդօրինակել է «ի սուտգ և յընտիր աւրինակէ ամենայն սրհեսաիւ լի և պատարուն, բան անհատ, հրամանն և ստորում» (այսինքն կենտագրություն):

Տարաբախտաբար, ձեռագիրը լրիվ չէ հասել մեր ձեռքը, ունինք միայն Եվսեբիի և Կարպիանոսի նամակագրությունը, և չորս խորաններ, փոխանակ տասնի: Չկան և ավետարանիչները. կարծում ենք հենց սկզբից չեն նկարված: Բայց կան ավետարանների սկզբնազարդերը իրենց նշանակներով, շատ ճոխ և շքեղ: Բազմաթիվ են և լուսանցքի զարդերը և մանրանկարչական տառերը՝ հատվածների սկզբում: Մանրանկարչական տառերի իշխող մոտիվները բուսական են — արմավենիկ, եռատերև կամ նշատերև, ութաձևեր՝ գծերի ընդհատման անկյուններում կարմիր գնդակներով, գծերը կանթերով և օղակներով, այսինքն նշաններ, որոնք ավելի հին և արևելյան ծագումն են մատնանշում, ոմանք գործադրված գորգագործության մեջ: Լուսանցքներում, ինչպես և մանրանկարչական տառերի մեջ, կենդանական և ոչ մի զարդ, միայն հազվագյուտ դեպքում թռչուն կամ սիրամարգ, այն էլ ոչ տառերի իսկական կազմության մեջ, այլ նրանցից դուրս, իբրև զարդ կամ պատիվ: Նկարչի սիրած գույներն են կապույտը, լուրթ կանաչը, կարմիրը եզերված ոսկեգծերով: Նույն գույները՝ երբեմն լուրթ, երբեմն բաց:

Բնագիրը՝ խոշոր, կիսաբոլորաձև և ոչ ուղղանկյուն երկաթագիր է, սյունակները երկու գծերի մեջ, տողերի միայն առաջին երեսը երկաթի ձողիկով գծված: Մյուս երեսի տողերը ճիշտ առաջին երեսի տողերի վերա, զարմանալի ճշտությամբ: Այս հանգամանքը հիշում ենք, Վարդան գրչի ձեռնհասու-

թյունը շեշտելու համար։ Հիշատակարանի գիրը, որ նույն գրչինն է, միջին երկաթագիր է, ուղղանկյուն, նույնպես կանոնավոր և համաչափ, ինչպես բնագիրը։ Լուսանցքներում պահված են բոլորակ զարդեր, որոնց մեջ հատվածների բաժանումներն են նշանակված, երբեմն էլ լուսանցքից արմավենիկի զարդ կպցրած մեծ տառին։ Սրանք ավանդներ են, որ ավելի հետ են գալիս, ժ—ժԱ դարից և անհետանում են ԺԳ դարում։

Վարդան գրիչն ու նկարիչը (հիշատակություն չկա առանձին նկարչի մասին), յուր այս մի գործով կարևոր տեղն ունի հայ մանրանկարչության պատմության մեջ։ Այս ձեռագրից դատելով, Վարդանը դիմանկարչության մեջ վարպետ չէ, բայց զարդագրության, հատկապես թռչունների և դրանցից էլ՝ ավելի սիրամարգերի ձևակերպության մեջ, ժամանակի լավագույն ներկայացուցիչներից մեկն է։ Դիտեցեք Մատենադարանի սկզբնաշարդի ձախակի երկու սիրամարգերը, կնարոնի խաչի երկու կողմից (պատկ. 1)։ Նախ որքան շնորհալիությունկա գծագրական կողմից, կյանք, արտահայտություն և ակնապարար գեղեցկություն՝ գույների ներդաշնակությամբ, սիմվոլիկ գաղափարի համապատասխան՝ արտահայտություն՝ սիրամարգերի կողմից։ Ծարավի հոգիների տենչն են խորհրդանշում դեպի խաչից հևող փրկությունը։ Սիրամարգերն այստեղ քրտչուններ չեն, կարծես, այլ կենդանի հոգիներ, խաչից ակնկալված զորության հանդեպ։ Այսպես էլ ամբողջ սկզբնաշարդը, մանրանկարչական Գ-ը, զարդանկարչական մոտիվներով, հյուսվածքներով և ներքևի մասի հետ կապված ծաղկաքարդով ամբողջական գեղեցկություն է ոճի միությամբ։ Արդեն, ձեռագրական նկարչության նպատակն էլ այլ բան չէ, բայց եթե գեղեցկության վայելք և տրամադրություն զարթեցնել ընթերցողի մեջ և պատկերներով նպաստել լուսնդակության յուրացմանը։

Խորանների, ավետարանների սկզբնաշարդերի, ինչպես և լուսանցքի զարդերի և մանրանկարչական տառերի զարդագրության մոտիվները արևելյան են և ըստ մեծի մասի բուսական, եռատերևներ և հնգատերևներ, արմավենիկներ իրենց ցողուններով և կանթերով, նաև ութ թվանշանը հիշեցնող զարդեր, օղակներ, երկրաչափական գծերի հյուսվածքներ։ Սրանք Արևելյան Հայաստանի ավանդներ են մասամբ, բայց և գործադրված հարևան ազգերի արվեստի մեջ։ Այս շրջանի մեջ են թռչունները բազմատեսակ, որոնք ուրիշ ձեռագրերի մեջ հասանչանց նմանությամբ են բերում կամ սիրիական, իսկ ԺՌ դարում կամ ԺԳ-ի սկզբում մահմեդական։ Մեր այս աշխատության մեջ, համեմատական եղանակով փորձում ենք հիմնավորել այս իրողությունը։

Երզնկայից մեզ հասած երկրորդ ձեռագիրը եղեմ-ի թիվ 1925 Աստվածաշունչն է։ Ձեռագիրը նշանավոր է նախ՝ իբրև հին և նոր կտակարանների միացյալ խմբավորության հին օրինակներից մեկը, անհանոն գրքերի, Երկոտասան Նահապետների կտակների և «Մահ երկոտասան մարգարէից» հատվածների հետ և «Մենացորդաց» գրքերի մի տարբեր թարգմանության, քան Յոթանասնից։

նիցն է, որ հրատարակել է Գ. Խալաթյանց։ Սակայն կոթողական պիտի համարել, և Երզնկայի գպրոցի փառքը՝ յուր շատ նոխ զարդանկարչությամբ և պատկերագրությամբ։

Ձեռագրի ստացողն է Մարգիս Բ, որ 1266 թվից առաջ արդեն հայոց Եպիսկոպոս էր, և յուր որդի «պարոն Յոհաննէս»-ի հետ Երզնկայի Հայոց դեկավարն ու ներկայացուիչը։ Նա բարձր դիրք ուներ թաթար իլխանների՝ Հուլաղուի և Ապաղայի աչքում. առաջնի կողմից միշնորդ գնաց Միքայել Պալեոլոգ կայսեր մոտ, նորա գտաեր Դեսպինայի ձեռքը խնդրելու Հուլաղուի կնության համար, բայց, մինչև հարսնացուի հասնելը, Հուլաղուն մեռավ, և նորա որդու՝ Ապաղայի կինը դարձավ Դեսպինան։ Նա 1269—1274 թվականը շինեց Ս. Փրկիչ անունով գմբեթավոր, փառավոր եկեղեցին, այնտեղ ամփոփելով Ներսես Մեծի նշխարների մի մասը, որ գտնվեցավ Թիլն ավանի մեջ։ Նա սպանվեցավ 1279 թվականին, թուրք-սելջուկների ձեռքով, երբ Երզնկան ժամանակավոր կերպով անցավ նրանց ձեռքը։ Նորա անունը և գործը մտած են Երզնկայի հետ կապված ժամանակագրությունների մեջ։ Ահա այսպիսի մի նշանավոր անձ է այս ձեռագրի ստացողը, այստեղից էլ հասկանալի է ձեռագրի ճոխությունը և շքեղությունը թե՛ բովանդակության և թե՛ նկարչության։

Գրված է «ի թուականիս Հայոց ՉԻՀ», փրկչական 1269 թվականին։ Ձեռագրի վերա աշխատել են երեք հոգի իբրև գրիչ և նկարիչ, Հակոբոս, Մխիթար և Մովսես, երեքն էլ նշանավոր, բայց Հակոբոսը համեմատաբար ավելի պակաս գեղարվեստական գրչության և նկարչության մեջ, քան Մխիթարը, իսկ Մովսեսը գերազանց երկուսից էլ, որ և գլխավոր գրիչն ու նկարիչն է։ Մեր ուսումնասիրության մեջ աշխատել ենք որոշել յուրաքանչյուրի աշխատանքը։ Դիմանկարչության, դիրքավորման կամ կեցվածքների, ուժավորության և շարժումների մեջ որոշ նմանություններ ենք տեսնում Մխիթարի և Մովսեսի մեջ, և այդ երևույթը բացատրում ենք ընդհանուր գպրոցի գոյությամբ, որտեղ ուսել են նրանք։ Նրանց ուսուցիչների անունները տալ չենք կարող, բայց տեսանք թե՛ նրանցից առաջ կային գրիչներ և նկարիչներ Երզնկայի վանքերում։

Եթե համեմատելու լինենք Երզնկայի այս գործը՝ Արևելյան Հայաստանի արվեստի հետ, զգալի տարբերություն կգտնենք ոճի և մոտիվների գործածության և ձևակերպության մեջ։ Երզնկան հեռու է Հայաստանի կենտրոնական շրջանների անմիջական ազդեցությունից, նախ բյուզանդական, ապա սելջուկյան իշխանության տակ։ Միայն թաթարական տիրապետությամբ դյուրին էր Երզնկայի կապը կենդանացնել արևելյան և արևմտյան հայության հետ։ Այստեղից էլ՝ այն տարբերությունները, որոնց ակնարկեցինք վերև։ Այս գործի մեջ տեսնում ենք՝ հայկական ավանդների պահպանության հետ՝ բյուզանդական և մուսուլմանական (արաբ-սելջուկյան) թեթև ազդեցություններ։ Բայց այս աղերսը նկատելի չէ այն չափով, որ խաթարե Երզնկայի մանրանկարչության հայկական բնույթը։ Մենք երկասիրության մեջ աշխատում ենք այս հանդա-

մանքներն էլ պարզել, համեմատական և վերլուծական ուսումնասիրությամբ։

Այստեղ մենք տեսնում ենք մի արվեստ, որ զարդարանքի և պատկերագրության կողմից չափվել կարող է որևէ ազգի բարձրարվեստ մանրանկարչության հետ։ Հայկականն էլ, գույների ներդաշնակության և գրավիչ պայծառության մեջ, առաջնակարգ պիտի համարել, ինչպես պարսկականը կամ արաբականը։ Չէ՞ որ այդ երկրները, մանավանդ Պարսկաստանն ու Հայաստանը, զորագործության երկրներ են ամենավաղ ժամանակներից սկսած, իսկ զորագործության արվեստը գույների ներդաշնակության և ակնապարար ծաղկավորության արվեստն է, ժողովրդական հոգու, ճաշակի և գեղարվեստական դիմդրանի զգացմունքի հայտարարը։ Ամեն ազգ յուր գեղարվեստական սպրումների և մարմնավորման կերպն ունի։

Այս գործի համար մի նկատողություն ևս ունենք ավելացնելու։ Արվեստի ազնվության և նրբության համար, շատ մեծ նշանակություն ունին նյութերը, այսինքն մագաղաթն ու թուղթը, մելանը, նկարչական գույները։ Յուր ժամանակի համար, վատ թուղթ չէ այստեղ գործածվածը, բայց, հավատացած ենք, գեղարվեստական հաջողությունը կրնար կրկնակի ավելի բարձր, եթե ազնիվ և նուրբ, հարթված և հղկված մագաղաթի վերա գրված և նկարված լիներ, այս թղթի փոխարեն։

Միայն մի երկու նկարի ցուցադրությունը բավական է գաղափար տալու Երզնկայի դպրոցի այս բարձր ստեղծագործության մասին։ Վերցնենք ձեռագրի Հենց առաջին պատկերը (պատկ. 3), (պատկ. 103), որ Մովսիսի տասնարանյա պատվիրանների ստացումն է. մարգարեի ամբողջ մարմնի կորացման, դիմքի արտահայտության, մեկնած ձեռքերով պատգամների ընդունելության մեջ, խորապես նվիրման և հնազանդության մարմնավորումն է, ներկա մտքով՝ գրեթե ռեալականության հասած։ Իսկ ճակատագրերը՝ իր կապույտ ծաղիկներով ու ներքևի դաշտանկարը՝ կազմված են յուրատեսակ ազնիվ արտահայտություններից մեկը հայ մանրանկարչության, և հանդիսանում են արվեստագետի բազմաշնորհ հատկություններուն ապացույցը։

«Ճեսու Նաւեա»-ի պատկերը (պատկ. 3) հելլենիստական ավանդ է, անցած քրիստոնեության մանրանկարչության, մանավանդ բյուզանդականն։ Յուր պինդորական հագուստով, շարժումներով, ուժազորության արտահայտությամբ, կատարելապես համապատասխան է բնագրի բովանդակության և ոգեպատի կեցվածքին։

Ալեհատարանիշները իրենց տարբեր նստվածքներով, արտահայտություններով, նշանակներով և ճակատագրերով, մեկը մյուսից գեղեցիկ են նկարված։ Մարկոսի երիտասարդ, զվարթ դիմանկարը՝ ամփոփ, հաստատուն բնբռնումի արտահայտություն է, ինչպես յուր ալեհատարանի բնույթն է։ Իսկ Հովհաննեսի պատկառելի դիմքը, դեպի ալեհատարանիչը սլացող արծվի հետ, ման-

բանկարչական գլուխգործոց է։ Ասպա Պողոս առաքյալի աղնիվ, մտացի արտահայտությամբ գլուխը, լայն հակատն ու աչքերը, ինչպես և ճակատազարդի երկու անուշիկ աղջիկները գլխով պարիկները վայելք է դիտել (դունավոր պատկեր), (պատկ. 104)։ Տպագրվածը չէ տալիս գույների և ամբողջի կենդանի արտահայտությունը, ինչպես բնագիրն է։

Զարդագրության մեջ ևս նկատվում են տարբեր նկարիչների աշխատանքները, թեև ընդհանուր առմամբ նույն մոտիվներն են՝ եռատերևներ, արմավենիներ, գծական հյուսվածքներ, երկրաչափական զարդանկարչություններ։ Այդ նկատելի է, հատկապես, ավետարանների համաբարբառների խորաններին մեջ։ Եվսեբիոսի և Կարպիանոսի անդրիների և Մովսեսի պատկերի, ինչպես և նրանց հետ կապված զարդանկարչության մեջ մեծ տարբերություն կա։ Այս հանգամանքը պետք է շեշտվի երզնկայի դպրոցի տարողությունն ու նշանակությունը հասկանալու համար. այստեղ գործում են ոչ թե պատահական, անհատ արվեստագետներ, այլ իրարու ժամանակակից և գործակից մի քանի հոգի միևնույն վանքի կամ կից վանքերի մեջ, և այդ նկատում ենք ամբողջ ժամանակի ընթացքում։ Ի նկատի ունենալով այս հանգամանքը, պետք էր սպասել որ, բացի այս երկու գեղարվեստական գործերից, ուրիշներն էլ պատրաստված են, բայց մեր ձեռքը չեն հասել կամ անծանոթ են մեզ։

Ութերինյանց մեր թագավորներն ու թագուհիները, իշխաններն ու իշխանուհիները, գրեթե բոլորն էլ իրենց հիշատակներն ունին գրչության և մանրանկարչության մեջ։ Նրանց թողած գործերը Լևոն Գ-ի և Կեռանի, Հեթում Բ-ի, Լևոն Դ-ի, Կոստանդին Բ-ի, Մարիուն թագուհու պատվիրած Աստվածաշունչներն ու Ավետարանները, ծաշոցներն ու Սաղմոսարանները, Շարականները հայ գրչության և մանրանկարչության արվեստների գլուխգործոցներ են։ Նույնը կարող ենք ասել արքայական տանը պատկանող իշխանների և եպիսկոպոսների համար, Սմբատ Գունդստապլը, Հովհաննես արքաեղբայրը, Վասակ արքաեղբայրը, իրենց շքեղ և արժեքավոր գործերն ունին թողած, մանավանդ Հովհաննես արքաեղբայրը իբրև Գոռների առաջնորդ։ Ապա Լամբրոնի և Սարվանդուքարի և այլ վայրերի իշխանները ոչ պակաս շքեղությամբ գործեր ունին թողած։

Բայց չունենինք նման հիշատակներ Հեթում Ա-ի կողմից։ Նա ապրում էր ժամանակի գեղարվեստասեր և լուր բարեկամ Կոստանդին կաթողիկոսի օրով, երբ Հռոմկլայի դպրոցը լուր ամենաշքեղ գործերն էր կատարում, բարձր որակով արվեստագետների կողմից, ինչպես Կիրակոսը, Հովհաննեսը, Թորոս Ռոսլինը և լուր աշակերտները։ Մենք հատուկ ուսումնասիրություն ունինք նվիրված Կոստանդին Ա կաթողիկոսի ժամանակի Հռոմկլայի դպրոցին, բայց այդ էլ լրիվ չէ, որովհետև Ամերիկայում, երբ գրել ենք այդ աշխատությունը, ձեռքի տակ չունեինք մեր հավաքած բոլոր նյութերը[1]։ Սպասելի էր, որ Հեթում Ա, նաև լուր բարեպաշտ թագուհին՝ Զապել, իրենց հիշատակն ունենային այդ մարզում։

Ուրախ ենք հայտնելու հայ արվեստի բարեկամներին, որ համաշխարհային առաջին պատերազմի ժամանակ Վասպուրականի վանքերից էջմիածին բերված ձեռագրերից մեկը, Աղթամարի սեփականություն եղած, և այժմ թիվ 5458 ավետարանի մեջ, պահված են Հեթում Ա-ի գրել տված մի ձեռագրի բավական մնացորդներ, որոնցով կարող ենք գաղափար կազմել նրա գրչության և մանրանկարչության մասին, նաև որոշել գրիչն ու նկարիչը։

---

1 «Նյութեր և ուսումնասիրություններ», պրակ Բ, Կոստանդին Ա կաթողիկոս, 1943, Նյու-

* * *

Հեթումի ավետարանը գրված էր հորթի կաշուց պատրաստված աղնիվ մագաղաթի վերա, բոլորաձև ընտիր միջին նրկաթագրով, ինչպես ընթերցողը տեսնել կարող է պատկերից (պատկ. 1), (պատկ. 105)։

Տների գլխատառերը, ապա «ած», «հայր», «այս», «հոգի», «տր» գրված են ոսկով, ինչպես և կիլիկյան շրջանի շքեղ ձեռագրերի մեջ։ Ժամանակն է 1266 թ., տեղը՝ Հռոմկլան, իսկ ստացողը՝ Հեթումը, որ կտեսնենք Հիշատակարանի մեջբերումով և քննությամբ։ Հատվածների մանրանկարչական գունաւարդ տառերը կազմված են բուսական, հյուսկեն, անկյունավոր փակագծերի նման բացվածքը իրար հակառակ ուղղությամբ) մոտիվներից, որոնց ծագումը հին է, և ցույց են տալիս նախընթաց օրինակներից պահված արևելյան մանրանկարչության և արվեստի ազդեցության ավանդական ազդեցություններ։ Թռչնագրեր կամ կենդանագրեր չկան։ Հատվածների մանրանկարչական տառերից հետո, երկու կամ երեք տող ոսկեգիր, ասել է շքեղ մի ձեռագիր։

Մանրանկարչական տառեր և լուսանցքի զարդեր պահված են բավական մեծ թվով, իշխող գույներն են կապույտն ու ոսկին, զարդերը կիլիկյան, սովորական աղնիվ արվեստով, որ հիշեցնում է մասամբ Հռոմկլայի նախընթաց շրջանում գործող Գրիգոր երեցի նկարչությունը, Ներսես Շնորհալու գրիչ աված և Գրիգոր Տղային անցած ավետարանի և Լամբրոնացու Նարեկի նկարչությունը Հռոմկլայում, հատկապես աղնիվ լաջվարդով կապույտով ծաղկազարդերը, երբեմն անոթի մեջ և կողքին թռչուն կամ աքաղաղ, օրինակ, 264ա, երկու այծյամակների մեջ կա մի հրաշալի փոքրիկ թռչուն՝ կոցին ծաղիկ։ Հիշեցնում է և մի ուրիշ նկարչի, որ կհիշենք հետո։

Միայն երկու մանրանկար կա պահված, մեկը 235բ, որ կտրված է բուն ձեռագրից և կպցրած թղթի ձեռագրին, փոքր դիրքով, հավանորեն, Մատթ. Դ 11-ի լուսաբանությունն, և «Հրեշտակ պաշտէր ընա», փոխանակ տպագրվածի հոգնակի ձևի «եւ հրեշտակք պաշտէին ընա»։

Երկրորդ մանրանկարը լուսաբանությունն է Հովհ. Դ 24-ի և շար.։ Հիսուսը կանգնած է ամբողջական հասակով և երես առ երես (en face) աջով խաչակնքում է և ձախով բաց ավետարան բռնել «ես եմ լոյս աշխարհին» մակագրությամբ, լուսո պսակը բոլորակ է և խաչազարդված, դեմքի արտահայտությունը մեղմ և հատուկ Թորոս Ռոսլինի արվեստին, կարճ մորուքով և ազնիվ արտահայտությամբ։ Հագուստը նույնպես ակնապարար յուր կապույտ գույնով, ձախ քղանցքը փողփողուն, ամբողջը զետեղված ավելի բնագրի մեջ, քան լուսանցքում, նույնպես հատուկ Թորոսի սովորության։ Այս մանրանկարը արտանկարել ենք ավել իսկական մեծությամբ և գույներով, որ պիտի հրատարակվի մեր Մանրանկարչական քարտեզի մեջ։

Հիշատակարանը, թեև պակասավոր, թուղթ ընկած լինելու պատճառով,

տալիս է պարզ և որոշ տեղեկություն՝ գրչության, ժամանակի, տեղի և ստացողի մասին. ահա այդ հիշատակարանը։

310բ Փառք և երկրապագութիւն։ Պատիւ եւ գոհութիւն համագոյ սուրբ երրորդութեանն եւ միոյ աստուածութեանն հաւր եւ որդւոյ եւ սուրբ հոգւոյն։

Շնորհիւ տ/եառն սկսալ եւ ողորմութ/համ/բ նորին յանգ հլեալ աւարտեցաւ մատեանս այս աստուածախաւս ա/տու/ածունակ, երկրպագելի եկ պաշտելի սուրբ աւետարանս։ Ցամի ևիմն հարիւր եւ հինգետասաներորդի թուականութ/եան/ս հայկազեան տումարի։ Յ/աստուածապահ զղեկիս եւ յաշխարհս ուտ զղեկիս յաթոռս Հռոմկլա ընդ հովանեաւ ս/ուրբ Փրկչիս եւ ս/ուրբ Ա/ստու/ածածնին եւ սրբոյն Գրիգորի լուսաւորչին մերոյ։

Ի հայրապետութ/եան/ ա/ստու/ծապատիւ տ/եառն Կոստանդեայ կաթողիկոսի որ եւ զարբազան վարուցն իւրոց անհամեմատ ունէր զմաքրութիւն.

Հրամանաւ եւ ծախիւք ա/ստու/ածասէր եւ բարեպաշտ թագաւորին (թուրք բնկած)։

Ոչ մի բացատրության կարիք կա թագավորի անձը որոշելու համար, 1266 թվին Կիլիկիայի թագավորը Հեթում Ա-ն էր, միայն որոշել չենք կարող, թե ի՞նչ առիթով էր գրված ավետարանը։ Ջապել թագուհին շատ վաղուց էր մեռած, 1252 թվին, իսկ 1266 թվի «մերձ յաշնան հղանակն» սկսած սգո տարի էր Հեթումի համար, երբ նա գնացել էր թաթարներից օգնություն խնդրելու, և նորա մահվան համար, երբ նա գնացել էր թաթարներից օգնություն խնդրելու, և նորա թուի

նաև Հեթումի և Սեբաստիայի նախկին և այժմ Բալթիմորի Walters Art Gallery-ի (պատկ. 2), (պատկ. 106) թիվ 539, Երուսաղեմի թիվ 251 ձեռագրերի (պատկ. 3), (պատկ. 107) Հիսուսի պատկերները, ապա մեր ձեռագրի և Բալթիմորի ձեռագրի գրչությունը (պատկ. 1 և 2), (պատկ. 105 և 106) և նկատելի կդառնա նրանց գեղարվեստական ոճի և գրչության նմանությունները: Թորոս Roslինը գրում էր երկաթագիր և բոլորագիր ձևերով, և երկաթագիր ավելի լավ, քան բոլորագիր: Համեմատեցեք ապա Հեթումի ձեռագրի հիշատակարանը և Թորոսի երկու տարի հետո գրած, Մելիտենեի այժմ Երուսաղեմ, 1035 թվականին դեռևս առանց համարի, ավետարանի հիշատակարանի հետ, և կտեսնեք նրանց նմանությունը: Ահա այդ հիշատակարանի համեմատելի մասը.

Փառք համազոյ ու միասնական սուրբ երրորդութեանն եւ միոյ աստուածութեանն հաւր եւ որդւոյ եւ ամենասուրբ հոգւոյն այժմ եւ միշտ եւ յաւիտ:

Շնորհիւ տեառն սկսեալ եւ ողորմութեամբ նորին յանգ ելեալ աւարտեցաւ մատենս աստուածային, երկրպագելի եւ համբուրելի սուրբ աւետարանս:

Յամի ՉԺ եւ է երրորդի թուաբերութեանս հայկազեան տումարի յաստուածապահ գրեանս Հռոմկլա, ընդ հովանեաւ սուրբ տաճար պետիս սուրբ Փրկչին մերոյ եւ սուրբ Աստուածածնայ եւ սուրբ լուսաւորչին մերոյ: Հրամանաւ եւ ծախիւք երջանիկ հայրապետին հայոց տեառն Կոստանդնոյ, որ զաստուածահաճոյ վարուց իւրոց եւ բարի անուան անհամեմատ ունէր զպատմութիւն:

Բայց Հիշատակարանների այս նմանությունները կրկնված են Թորոսի գրած և նկարազարդած ուրիշ ձեռագրերի մեջ ևս, այսպես նմի թիվ 251, գրված 1260 թվին,— Սեբաստիայի նախկին և այժմ Բալթիմորի թիվ 530, գրված 1262 թվին,— նմի թիվ 2660—105. գրված դարձյալ 1262 թվին,— նմի թիվ 1956, գրված 1264 թվին,—նմի թիվ 2027 Մաշտոցը գրված 1266 թվին: Սկսվածքների այս նմանությունը և Կոստանդին կաթողիկոսի նման արտահայտություններով որակումը ցույց են տալիս, թե նա յուրացրել է որոշ ձև, որ կրկնում է, նույնը և Հեթումի ավետարանի հիշատակարանի մեջ, որով և անհերքելի ապացույցն ունինք, թե սորա գրիչն ու նկարիչն էլ Թորոս Roslինն է:

Հեթումի ավետարանի մնացորդները, բոլորն էլ Հովհաննու մասեր, օգտագործված են համապատասխան տեղերում, ընդամենը 38 թերթ, բայց ոչ իրար շարունակությունն, մեր պատկերը Հովհ. Գ 23—28 համարն է: Ավետարանը վերջանում է 308ա—310բ Հեթումի մնացորդով կիսատ հիշատակարանից հետո: Օգտագործող գրչի անձն ու ժամանակը անհայտ է, կարող է ԺԵ—ԺՀ դարում լինել, որ գրել է թղթի վերա բոլորագրով մի ավետարան, 32×24 սմ մեծությամբ, երկսյուն, յուրաքանչյուրը 24×6 սմ թղթի վերա գրված ավե-

տարանն էլ ունի նկարներ ու միագույն զարդեր, միջակ արվեստով։ Մարկոսի կեսից սկսած՝ մանրանկարչական գլխագրերը և լուսանցքի զարդերը կպցրած են համապատասխան տեղերում Հեթումի ավետարանից առնելով, քիչ բացառությամբ հետին գրիչը յուր անարվեստ զարդերն է ավելացնում։

Այդ ավետարանն էլ յուր հերթին նորոգված է հայոց ՌՃԼԹ—1684 թվին, նորոգողն է «Եւ ես գծուսիկ երէցս Թացուհցի նորոգեցի զսուրբ աւետարանս ի թուականիս հայոց ՌՃԼԹ ի դառն եւ ի նեղ ժամանակի, որ կամք ի հարկապահանջութիւնն այլազգաց»։ Նորոգել տվողն է «Տէր Գրիգոր եւ կողակիցն իւր Գօզալ»։ Թացու գյուղի տեղը որոշել չենք կարող։

Արվեստի ուսումնասիրության համար ոչ միայն ճարտարապետական շինքերը, մանրանկարչական ձեռագրերը, այլև մանր արվեստի մնացորդները ունին իրենց կարևոր նշանակությունը։ Ամենայն մի ստեղծագործություն, մեծ կամ փոքր, կրում է յուր ժամանակի դրոշմը, ճաշակը, գեղարվեստական հոսանքի ազդեցությունն ու ըմբռնումը, ուրեմն և սրանք աղբյուր են տվյալ ժամանակի մշակութային և գեղարվեստական ելևէջներն ու փոխազդեցությունները պարզելու համար։

Տարաբախտաբար մեր քաղաքական և պատմական պայմանները նպաստավոր չեն եղել հին ժամանակներից մանր արվեստի վերաբերյալ ժառանգություններ պահելու, երկիրը շարունակ ենթակա լինելով բարբարոս ազգերի արշավանքների և ավերի, կողոպտվել են կամ ոչնչացել մանավանդ թանկագին մետաղներից շինված կամ թանկագին քարերով և մարգարիտներով ընդելուզված և կեռված զարդեր և իրեր, աշխարհիկ կամ եկեղեցական բնույթի անոթներ, խաչեր, սկիհներ, ավետարանի կամ այլ ձեռագրերի կազմեր, մետաքսահյուս կամ այլ տեսակ ասեղնագործություններ և կտորներ։

Մեր մատենադարանի և հիշատակարանների մեջ քիչ չեն տեղեկություններ և նկարագրություններ այդպիսի իրերի և սրբությունների մասին. ո՛ւր են Տաթևի վանքի թանկագին քարերով ընդելուզված խաչերն ու սրբությունները, որոնց մասին տեղեկություն է տալիս Ստեփանոս Օրբելյանը, կամ Արղու Խաթունի և յուր աղջիկների ասեղնագործությամբ նկարակերտված Գետիկա, Մակարա, Հաղբատի և Դոդի վանքերի վարագույրները[1]։ Հազիվ մեր ձեռքն են հասել մի քանի արծաթի գործեր ԺԹ դարից, ինչպես Կոստանդին Կատուկեացու մասանց պահարանը, որ այժմ պահվում է Լենինգրադի էրմիտաժում, կամ էչմի Ոռոշյանի խոտակերաց Ս. Նշանի պահարանը էջմիածնում և մի քանի արծաթի կազմեր ԺԹ և ԺԹ դարերից։ Իսկ ասեղնագործ հյուսվածքներ ԺԸ դարից առաջ չեն հասել մեր ձեռքը։

Բայց ինչ որ հասել է վերջին դարերից, դարձյալ մեծ արժեք են ներկայացնում, ԺԷ—ԺԹ դարերի համար, գեղարվեստականի հետ և պատմական աղբյուրներ դառնալով իրենց արձանագրություններով։ Ահա այսպիսի հասկացողությամբ է, որ ըստ հնարավորության աշխատել ենք փոքր արվեստի

[1] Գանձակեցի, *Վենետիկ, 1865, II, III։*

վերաբերյալ նյութերի ուսումնասիրություններ կատարել, որ մեր մանրանկարչական և զարդարանքի (ornamentasion) արվեստների համար անարժեք չափաի մնան։ Այսպիսի հոդվածների մի ժողովածու արդեն սկսվել է ի մի բերվել, որի նյութերն առնված են ոչ միայն էջմիածնի, Երևանի, Երուսաղեմի ձեռագրաններից, այլև պատահական վայրերից։ Ներկա հոդվածը յուր համառոտությամբ իսկ, ցույց է տալիս թե նույնիսկ ուշ դարերից ի՞նչ թանկագին նյութեր ունինք, որ հայ ժողովրդի գեղարվեստական կենդանի զգացմունքի հայտարարը կարող է լինել, բարեպաշտությամբ օծված։

Այստեղ ցուցադրված պատկերներն են հայրապետական թագեր, կոնքեա, վակաս և արտախուրակներ, բազպաններ, շապկի օձիքներ, սկիհի ծածկոցներ, վարագույրներ, քանդակված գոներ և գրապակ, բոլորն էլ առնված Երուսաղեմից։ Մեր աշխատանքներին, այստեղ ցուցադրված նյութերի հավաքմամբ ժամանակ, ամենամեծ դյուրություն են բերել և օժանդակություն հանգուցյալ Կյուրեղ Պատրիարքը ու ներկա Տեղապահ և լուսարարապետ Տ. Եղիշե վարդապետը։ Օրհնում ենք մեկի հիշատակը և մաղթում մյուսին՝ օգտակար արդյունք յուր նոր պաշտոնի մեջ։

Հայրապետական չքեղ ականակուռ և մարգարտաշար թագ։ Մի կողմը ծնունդն է, մոգերի երկրպագության հետ։ Պատկերը զետեղված է ճաճանչավոր բոլորակի մեջ։ Մարիամը նստած է, Հիսուսը գրկին, իսկ երեք մոգերը ծունկ չոքած իրար ետևից, իսկ սրանց հետևից երեք այլ անձինք (հովիվները չեն, գուցե, հետևորդներ)։ Ապա ավելի վերև մարգարեն նայի, մագաղաթը ձեռքին «ահա կույս յղասցի» վկրատուությամբ։

Երկրորդ տեսարանն, ավելի փոքր դրությամբ, Մկրտությունն է, Հիսուս Հորդանանի մեջ։ Հովհաննեսը մկրտում է, իսկ մյուս կողմից հրեշտակը հանդերձներն է բռնել։ Ավելի բարձր՝ Ս. Հոգին իջնում է, Հայրը վկայում, հրեշտակներով շրջապատված։

Այդ կետտոնական խմբակները բուսական զարդարանքներով ծածկված և մարգարիտներով, իսկ արտաքին շրջանակը մարգարտաշարք, մեջ թանկագին քարերով ընդելուզված։ Ճոխ է, հատկապես, բացվածքի շուրջը ընդելուզումը։

Մյուս երեսը դարձյալ ճաճանչավոր բոլորակի մեջ՝ Երրորդության և Մարիամի թագադրությունը։ Ամենից բարձր ճաճանչավոր բոլորակի մեջ Հոգին սուրբ, աջից Հայր Աստված, խաչազարդ երկրագունդը ձեռքին, իսկ մյուս կողմ՝ Որդին, խաչն, խմբանկարի ներքևը ամպեր և նրանց մեջ երկինքում սերովբեներ, մնացած զարդարանքները կրկնությունն է առաջին երեսի։ Մեծությունը 42×35 սմ թագի բացվածք բոլորակի շուրջը հետևյալ արձանագրությունը կա.

Կերտողի թագիս սրբոյ պսակիս ան Գրիգորի տուժ միշտ զողորմիս մեծ

պատրիարքի սբ Սարգիմի ան վարդանայ վիճ աշակերտի, որ եղ նշանակ անջինջ հիշատակ սբ Յակոբեանց յաթոռն անքատակ. յամին Քրիստոսի հազար երրորդի եօթն հարիւրի եւ երեսուն հինգի ի պարեւագ. կոստան Ոհանէս վարդապ.

Կարմիր ատլաս դաշտի վերա ասեղնագործված վերևը ավետումն է, իսկ բոլորակների մեջ մյուս պատկերներն են Հովհաննես, Ղուկաս, Մարկոս, Մատթեոս ավետարանիչներն իրենց նշանակների հետ, մասը ծաղիկներով ծածկված:

Արձանագրությունն է.

Դեղեցիկ սրտի ուրախ առդամբ ի ան Յօհաննու պարիրքի Բաղիշեցւ: ի վայելումն անձին իւրոյ և յշոկ ի դան սբյն Յկբ. ՌՃՁՔ = 1740: Նուրբ գործ թելերով (չիթիթի). ճակատի և հետևի մասերը բացվածքի շուրջը գույնզգույն քարերով զարդարած, իսկ կետրոնն պատկերների շրջազարդը մինայով (էմալ): Մի երևսի պատկերն է երրորդությունը քառակերպյան աթոռի վերա, իսկ մյուս երեսը՝ Աստվածածինը բազմած աթոռի վերա, Հիսուսը գրկին: Մարիամը թագազարդ, կողքերից մի-մի ծառ: Քառակերպյան աթոռի կենդանիների դասավորությունը վերից վար, եղ և հրեշտակ, արծիվ և առյուծ:

Հայրապետական կոնքեռ, կրում են միայն կաթողիկոսները պատարագի ժամանակ, գոտուց կախելով: Նշանն է այդ հովվակ մախաղի. պատրիարքները կրում են այդ բացառաբար, իբրև Ամենայն Հայոց Կաթողիկոսից ստացած առանձին շնորհ:

Այս կոնքեռը սեփականություն էր Գրիգոր Շղթայակիր. մեկը Երուսաղեմի ամենաարդյունաշատ պատրիարքներից, որի հիշատակները շատ-շատ են: Գեղարվեստական այդպիսի մնացորդներից մեկն է այս նրբահյուս կոնքեռը:

Պատկերի բովանդակությունն է կետրոնում լուսաճաճանչ ճառագայթներ մեջ Հիսուս մանուկը, կողքին մայրը, նորա հետևից Հովսեփը, ապա ոչխարների հոտը: Առաջակողմից երեք մոգերը արքայական զգեստավորությամբ, ծերունին, միջահասակը և սև երիտասարդը: Ավելի բարձր աստղազարդ երկինքը և բազմաթիվ հրեշտակներ, որ «փառք ի բարձունս» են երգում:

Պատկերները շրջանակող բոլորակի վերա կա հետևյալ արձանագրությունը.

Յիշատակ է կոնքս ի սուրբ Երուսաղէմի վանքն եղբօր ան Յկբյ են նորին գահակալին Գրգոր եպիսկոպոսն ի հոգոյն մհսի Մակարին ՌՃՀԵ (= 1726) թվին:

Արձանագրության բոլորակից դուրս կոնքեռի անկյուններում բուսական նուրբ հյուսվածք:

Շապիկի ասեղնագործ օձիք Յովհ. Պատ. Բաղիշեցւոյ

Ջույգ բաղպաններ, հրեշտակի ավետումը կույսին, մեկը մի, մյուսը մյուս

թևի վերա։ Մարիամը չքնաղ, նուրբ դեմքով, սյուները կորնթականի նմանություն բևրող. լուսո պսակները փոքր մարգարիտներով։ Իսկ պատկերների անմիջական շրջապատը բավական ոլորապտույտ, մեջները ծաղիկ։ Նույն մոտիվները և արտաքին նեղ շրջանակը։

Արձանագրությունն է.

Հորինեցաւ բազպաս ի վայելումն Յոհաննու վարդապետին, ի թուականութեան Հայոց ՌՃՀԱ (1722)։

Սարկավագի շապիկ, օձիքը ասեղնագործված կարմիր ատլասի վրա, ծաղկազարդ, ևլնգավոր (բարևլինֆ), ընտիր գործ։

Արձանագրությունը սկսվում է ուսերի հետևի կողմից, նախ խաչ և ապա.

Յշոկ է շապիքս ի սբ էջմ ի գուռն սբյն Յիկ։ Ի վայելումն տն Յոհաննէսի վրդպտի Ռշղցւոյ պտրիարգի Կոստանդնու ՌՀՁԱ (=1701)։

Արձանագրության տառերն էլ ևլնգավոր։

Սկիհի ծածկոց ասեղնագործ, ոսկի և մետաքսի գույնզգույն թելերով։ Մեջտեղը խաչ ճառագայթավոր բոլորակի մեջ, շրջապատված ծաղկազարդերով։ Ապա երկու փոքր և մեծ ծաղկազարդ քառանկյունների մեջ առնված։ Մեծ շրջանակի կողերի վերա հետևյալ խոսքերը փորագրերներով. «Գրիգոր, պատրիարք, յիշեցէք, ի Քս»։ Գրիգորի տակն էլ կարդում եմ, բայց կասկածելով *ՌՃՀԸ = 1736*։

Սկիհի ծածկոց, *ասեղնագործ*։ Մեջտեղը Գառն Աստուծո, մարգարտագործ, ճառագայթարձակ բոլորակի մեջ, շուրջը վեցթևյան հրեշտակներ, ապա շուրջանակի տասներկու առաքյալները, իրարից մի-մի ատաղով բաժանված և առնված գծական մի բոլորակի մեջ։ Այդ բոլորակի շուրջն էլ քանիչորս մարգարեների անդրիները շարված։ Անկյուններում ավետարանիչներն են իրենց նշանակներով բոլորակի մեջ, իսկ երկու կողմից էլ մի-մի ծաղկով կամարաձև կազմած։ Շրջանակը բուսական զարդարանք։

Արձանագրությունն է։

Քս Ած առեամբ քով սրբով սրբեա զՅոպիան Գրիգոր եւ Յոհաննէս ածաբան վարդապետացն սպասուորք սրբոց տեղեաց եւ ամ ողորմութի տուողաց։

Ուշադրության արժանի է, որ այս արձանագրությունը բառացի նմանություններ ունի Հաննայի մեծ վարագույրի արձանագրության հետ, որ պիտի հրատարակենք ուրիշ առթիվ։ Այս համեմատությամբ պարզվում է, որ վերև հիշված Հովհաննես ատավածաբան վարդապետը Հաննա պատմագիրն է։ Չպետք է շփոթել Հովհաննես Կոլոտի հետ, որ նույնպես հիշատակներ ունի Գրիգոր Շղթայակրի հետ հիշված։

Մեծությունն է 98×108 սմ։

Սկիհի ծածկոց, *ասեղնագործ*։ Մեջտեղում մարգարտահեղ գառն Աստու-

Ծո, շուրջը ճառագայթներով։ Ջորս կողմից մի-մի թռչող թևավոր հրեշտակ։ Անկյուններում ծաղկազարդի մեջ ձախից աջ գնալով Համբարձում. խաչելության մի կողմը Հովհաննեսը, մյուսը՝ Մարիամը, երրորդությունն և Հարությունն։

Արձանագրությունն է.

Յշտակ է սկիզբ ծածկոցս, Ովտեն. հնգցլ Պաղտասար ամիրան կողակցոյն Սոֆիա խաթունին, որ ետ վս հնգցլ դատերն Հիւրի խաթունն հգլն ի գուռն սբյն Յակոբայ ՌՄԼԳ (= 1784)։ Մեծությունը 100×102 սմ։

Փայտի ֆանդակազարդ դուռ։ Մեր հին տաճարները զարդարված էին փայտի քանդակազարդ դռներով, մեր ձեռքն են հասել բավական թվով այդպիսի դռներ ԺԲ—ԺԳ, նաև հետագա դարերից։ Նրանք մեր քանդակագործության գեղեցիկ և նուրբ մնացորդներն են և կամ իրենց ժամանակի արվեստի արտահայտություններ։ Նրանք առավելապես նմանություն են բերում մեր խաչքարերի գծագրական քանդակագործության։ Բայց և՛ մարդկային, և՛ կենդանական ֆիգուրներ։ Այսպես են Մշո Առաքելոց վանքի նշանավոր դուռը 1134 թվականից, գծագրական, առասպելական կենդանիների և մարդկային պատմական դեպքերի հետ կապված քանդակներով։ Սևանի Քուրդ իշխանի պատվերով Հովհաննես Հյուսնի ձեռքով 1176 թվին շինել տված դուռը խաչաքանդակ ձևով, Սևանի Առաքելոց Հարավային դուռը Հոգեգալստյան խմբանկարի և այդ քանդակներով Սևանի Դանիել վարդապետի պատվերով շինված 1486 թվականին։

Վերջապես ունինք Տաթևի դուռը[2], Ղրիմի Թեոդոսիա քաղաքի Ս. Սարգիս եկեղեցու դուռը, որ այժմ պահվում է նույն քաղաքի Թանգարանում, Թոքատի Հովակիմ Աննայի դուռը և այլն։

Այսպիսի քանդակազարդ դռներից մեկն էլ պահվում է Երուսաղեմ, Ս. Հակոբյանց տաճարի մեջ։ Ինչպես ընթերցողը տեսնում է, այդ դռան քանդակները գծագրական են և նմանություն են բերում խաչքարերի քանդակներին։

Դռան առաջին փեղկի արձանագրությունն է.

1. Կազմս դռան սբ տաճարի
2. Որ է յանուն սբ Պաւղոսի
3. առաքելոց մեծաց 4... (փչ)
Երկրորդ փեղկի վերա.
4. Սա վիշատակ անջնջելի հն
5. զահոդոյն Յովհաննէս

---

[2] Այս դռների մասին հատուկ ուսումնասիրություններ ունինք տպած։ [Տե՛ս սույն հրատարակության Ա հատորը—կազմող]։

Այս բոլոր դռներն այժմ պահվում են Երևանի թանգարանում, բացի Թոքատինը։

6. եւ որում պնդէ. իր
զաւակի թվին ՊԻ (= 1371)։

Մեծութիւնն է 76×178 սմ։

Փայտի քանդակազործ գրակալ։ Բավական մնացորդներ ունինք փայտի քանդակված գրակալների մի կտորից։ Այդպիսի մեկը հրատարակել ենք մեր Խաղրակյանքի Ա հատորի մեջ (նր. 164, պատկ. 63—64)[3]։ Այնտեղ բացատրել ենք նաև նորա վերա նշած քանդակների զինանշանական ծագումը, այդ գրակալի թվականն է ՉԻԱ — 1272 և բերված է համաթվում Անիի շրջանից։ Ն. Նախիջևանի եկեղեցիների մեջ էլ կային սորա հետևողությամբ գրակալներ, ուշ ժամանակից։ Կա և Անիի հետ կապված և մի ուրիշ գրակալ, լուսանկարը այժմ ձեռքի տակ չունինք, եթե հիշողության վրիպանք չէ, ծև դարու գործ, այժմ որտե՞ղ է, չգիտենք։

Այս գրակալների գծագրական և ֆիդուրատիվ ամենի քանդակներից զատ, առանձին արժեք ունին նրանց հմուտ, ճարտարապետական կերտվածքը մի կտոր փայտից։ Մեր ցուցադրած քանդակազարդ դուռն ու այս գրակալը ցույց են տալիս, թե մանր արվեստի առարկաներն էլ ինչքան կարևոր են հայ արվեստի ուսումնասիրության համար։

Արձանագրությունը մեզ գաղափար է տալիս ժամանակի և «կալմոդ» վարպետի մասին։

Առաջին երեսին.

Յիշատակն է սա Յկ/որին ի յե՛մի դուռն սբ Յկբին.

Մյուս երեսին.

Կազմեցաւ գրա—կալս ձեռամբ։ Յա/կոբ աբեղին թվին ՌԼԱ (= 1582)։

Դիսադրի գաղտակուրի (սաղաֆի) դուռը փակ և բաց տեսարաններով։ Գաղտակուրի դռները նույնպես պետք է ի նկատի առնվին հայ մանր արվեստի ուսումնասիրության մեջ. ըստ նյութի ծագումով նրանք հայկական չեն, այլ պարսկական, բայց մոտիվներն ու գործը՝ հայկական։ Էջմիածնում ևս կան խորանների նման դռներ, Աստվածատուր կաթողիկոսի ժամանակ շինված կաթողիկոսական աթոռի հովանին (eiborium), նույնիսկ մնացած է աթոռ նման արվեստով. այսպես է և Լուսավորչի աջի պահարան արկղը Հակոբ Ջուղայեցու ժամանակ շատ գեղեցիկ և ակնահաճո։ Իսկ Երուսաղեմում նման դռներ կան այլևայլ խորանների դռների, ինչպես այստեղ ցուցադրված, Գրլխադրի դուռն է, մի տեսակ մոզայիկ, սպիտակ գաղտակուրից կազմված. կան և գույնզգույն գաղտակուրի գործեր։

Արձանագրությունն է ձախ փեղկի վերա.

---

[3] Այժմ պահվում է Երևանի թանգարանում։

Դեղեցիկ գուռն շինեցաւ ի պարրգուբե՛/տն Գրիգորի եւ տ՛ն Յովաննու վարդապետեցն/։

Մյուս փեղկի վերա.

Վան(վասն) Գլխադրի սբյն Յկբյ եւ է յիշատակ /Համբկապյցի Նազարէ որդուցն օրհնել։

Ձախ փեղկի վերա.

Մհասնց Մակարին, Առաքելին, Մարտիրոսին / եւ Յրութիւն. եւ ծնո՛ց եւ ա՛մ զր՛միցց —

Աջ փեղկի վերա.

Ընծիրցողդդ (ր ընկած է, փոսը կա) յիշեցէք եւ ած ո (ընկած ո) զորմի ւաասցէք։ ի ՌՃՁ (= 1731) թվին + շինեցւ ի Յկբ ծուխ։

Արձանագրությանս մեջ Գրիգոր պատրիարքի հետ հիշված Հովհաննես վարդապետը պատմագիր Հաննոն է։ Այստեղ ունինք ոչ միայն ժամանակի, այլ շինող վարդապետի անունը։

Գլխավոր ասեղնագործ վաբագույրը։ *Սքանչելի գործ է. անկարելի է նկարագրել քան ամենայնի։ Նախ նկատենք, որ Աստվածածնի աջ կողմի հրեշտակի դեմքը քիչ մաշված է և դրա հետևանքն է լուսանկարի մեջ նկատված սև բծերը և փչացնում է տպավորությունը։ Համբանկարի բովանդակությունը հետևյալն է. ձախ կողմից թևավոր հրեշտակը մատուցանում է նահատակված առաքյալի գլուխը, Աստվածածնին, իսկ մյուսը խնկարկում է, մի ձևաքին բուրվառը, մյուսը կրծքին դրած։ Վերևից իջնում է աղավնակերպ Հոգին Սուրբ, ճառագայթներն ուղղած Աստվածածնի և առաքյալի գլխի վրա։*

Համբանկարի ամբողջությունը գործված է ոսկի և արծաթի թելերով, իսկ դեմքերը սպիտակավուն ամենանուրբ մետաքսի գոբլենի նման։ Ամբողջը բանված է կարմիր ատլասի վերա և հանդերձները ևնդավոր, ծալվածքները շեշտված։ Հրեշտակները փիլոնաձև վերնազգեստ ունին ուսերին ձգված։ Աստվածածինը մատներն իրար անցուցած իբրև սգո նշան։

Համբանկարի շուրջը ծաղիկները բանված են մետաքսի գույնզգույն նուրբ թելերով։ Նույնպես արտաքին շրջանակը մեխակ և մարգարտածաղիկ, միջին ևնդավոր։ Սյումները և շենքի ճակատը եվրոպական ազդեցությամբ, բայց ոչ ծաղիկներն ու ընդհանուր զարդարանքը։ Անկյուններում ոսկի անոթի մեջ ծաղիկներ և տերևներ։

Առաջին շրջանակի ներքևի կողի վերա հետևյալ առձանագրությունը կա։

1. *Յշտակ է վաբագուրս Սեւուա գիւղցի թէվոմանց (ց — ընկած)/*
2. *Տիրացու Պողոսին. եւ Հոգեւոր ծնողին իւրոյ /*
3. *Հննէ վարդապետին. ի գուռն որ Երուսաղէմ/*
4. *ի ըարդ սրբոյ Գլխադրին/.*
5. *Ի թուին ՌՀՁԹ (=1737)։*

Մեծությունն է 179×2,15 սմ։

Երուսաղեմի տաճարի ավագ խորանի Մեծ վարագույրն է, որ կախվում է զատկի առաջին։

1. Մեջտեղը՝ Աստվածածինը աթոռին վերա նստած, Հիսուս գրկին։
2. Դարանից վեր Հաչելությունն է։
3. Ավելի բարձր, Հարությունը։
4. Ապա ավելի վեր՝ Երրորդությունը։

Այս շարքում Աստվածածնի պատկերից ցած.

5. Բարդուղիմեոսը, որմնադրի անկյունաչափով, ձախին ավետարան բռնած։

6. Սորա գլխին. Առաքյալն Հակոբոս, աջին ավետարան բռնած, ձախին գավազան։

Դեպի ձախ, ներքևից վեր.

7. Դարձյալ աջից ներքևից դեպի վեր.

Անդրեաս, Շմավոն, Մարկոս ավետարանիչ, Հովհաննես ավետարանիչ՝ արծիվը կողքին։

8. Ինուդ, Հովսեփ, Հովիվները. մոգերի երկրպագությունը։

9. Աջից երկրորդ կարգ, ներքևից դեպի վեր.

Մարգ. Միքիա, Եղկիել, Եղիսե, Այլակերպություն, ընթրիք, Մկիհի մեջ Քրիստոս, Ծաղիկ։

10. Աջից, երրորդ կարգ, ներքևից վեր.

Սոֆոնիա, Եսայի, Ամաս, Հրեշտակ, Ծաղիկ, Հրեշտակ, զարդ։

11. Աջից չորրորդ կարգ.

Մաղաքիա, Նավում, Ամբակում, Ծաղիկ, Հրեշտակ, Հրեշտակ, ծաղիկ։

Դեպի ձախ կենտրոնի շարքից՝

12. Առաքյալն Հովհաննես, արծիվ կողքին. աջով խաչակնքում է։ Սրանից վեր՝ Առաքյալն Հակոբոս, ձախին ավետարան բռնած, աջին գանակ։

Ապա հետզհետե հետևյալ շարքերը, միշտ ներքևից դեպի վեր հաշվելով.

13. Առաքյալն Մատթեոս, Հակոբոս խաչ ձեռքին, Ղուկաս, Մատթեոս (ավետարանիչ) հրեշտակը կողքին. Ավետումն, Փախուստը, ծաղիկ։

14. Սամվել, Դանիել, Մուտքը Երուսաղեմ, Մկրտություն, Հիսուս և Թոմաս կողերը շոշափող, Քրիստոսն օրհնում է մի կաղի, ծաղիկ անոթի մեջ։

15. Դավիթը թագավարդ և քնարով։

Մարգարեն Ենոք, Եղիա մարգարեն, հրեշտակ, ծաղիկ, հրեշտակ, ծաղիկ։

16. Մովսես մարգարեն, Նաթան, Հովել, հրեշտակ, կրկին հրեշտակ, ծաղիկ, ծաղիկ։

17. Շրջանակը ծաղիկների իրար հետևող շարքով։ Իբրև շրջանակ իրար հետևից յոթ ծաղիկներ անոթի մեջ. լայնքին ութ ծաղիկներ անոթի մեջ։

Վարագույրի դաշտը բաց կապույտ ատլաս է։ Մեծությունը՝ լայնքը վեց մետր և բարձրությունը՝ հինգ։

Յավում ենք, մեր լուսանկարը ամենադյուրն չափով գաղափար չպիտի տա գեղարվեստական այս մեծ գործի մասին։

Արձանագրությունն է.

1. Յղակ է վարագուս (ր—մոռացված) յարեւ ելեան տանէն Ագուլեցի Կովճենց մաճոսի Մովսէսին եւ իւր ծնողացն Յօհաննէսին եւ Եսթէրին. եւ պապոյն Նիկողայոսին եւ մամոյն Մարգարտին եւ հօրաքեռն Մարմաին (ծ). եւ եղբարցն Շմաւոնին, Պետրոսին, Մատթէոսին եւ Մաղաքի/

Մեծ խորանի ասեղնագործ վարագույրը՝

2. յին։ եւ քերցն փառանցեմին, Անանէին եւ եղիսաբեթին եւ կողակից Հերիքնազին, եւ որդւոցն Յօհաննէսին եւ եղսաբեդին եւ նախատուր բեռոյն Կարապետին նաեւ զկարս զորին բանօղ վարպետացն տրցւ եղիային։ ի յնւոմ ի վայելու (մ—չկայ) սրբոյ Յակոբայ թուին ՌՄե (= 1766)։

Նման մի մեծ գործ էլ ունինք էջմիածնի ավագ խորանի համար, որի պատկերագրության նյութը քրիստոնեության հաստատությունն է Լուսավորչի ձեռքով, Տրդատի մկրտությունը, Լուսավորչի տեսիլը և այլն, ասեղնագործված Կ. Պոլսում, Աղեքսանդր կաթողիկոսի ժամանակ (1706—1714) և սորա հաջորդ Աստվածատուր կաթողիկոսի նվիրակությամբ։

Ա

Մագաղաթն ընտիր է, թերթի մեծությունը 27—19 սմ։ Կիլիկյան ընտիր բոլորագրով, ծաղկազարդ 10 խորանով, երկու երես 20Ն-ով, որ գրված է ոսկի դաշտի վրա, երկու կարմիր գծերի մեջ, բոլորաձև երկաթագրով։ Ունի չորս ավետարանների մանրանկարները իրենց համապատասխան գեղեցիկ սկզբնազարդերով և մանրանկարչական տառերով։ Ավետարանական հատվածները սկսվում են մանրանկարչական գեղեցիկ տառերով, գծագրական բուսական ոսկով և գունազարդ, բայց ոչ երբեք թռչնագիր կամ կենդանագիր, միայն մի տառի բացառությամբ Յովհ Հ տառի Հոգի է ասված, որ շատ գեղեցիկ սիրամարգ է։ Լուսանցքի զարդերը բազմաթիվ են և զանազանաձև, դարձյալ բուսական և գծական մոտիվներով։ Ստացող–ն է Ստեփանոս եպիսկոպոս «Ի բան սարկաւագ եւ սպասաւոր» Կոստանդին Ա Բարձրաբերդցի կաթողիկոսի, որի համար գրված է «տայր գրել եւ ստանայր բաղում գրեանս, եւ յոսկւոյ սրբոյ տայր յատկինել բազում աւետարանս ի յիշատակ իւրոյ»։ Կրումբյան ժամանակը «էր թուական Հայոց ՈՂԷ (1248) յորժամ աւարտեցաւ սյուրբ գիրս։ Եւ թագաւորէր Հայոց Քո/ռոսս պսակն Հեթում, որ առաւելեալ էր քաղցր եւ բարի բնութ/եամ/բ, ՆգԻց որդոց լեալ Հայր առաջնոյն Լեւոն, որ յանուն Հաւուն իւրոյ, որ է աւրհնութ/եան շառաւիղ եւ բարի պատանի, եւ այլն միլըսա միոջէ»։ Գրիչն է Կիրակոս, որ իր համար հետևյալ տողերն ունի միայն գրած, «Պաղատիմ յոգնամեղ գրիչս Կիւրակոս տոնել արժանի յիշատակի եւ զիմ զանարժանութիւնս, եւ խնդրել Քողութ/իւն բազում մեղաց իմոց եւ ամենայն երախտաւորաց իմոց»։ Քիչ հետո առիթ կունենանք ավելի տեղեկութիւններ հաղորդելու նորա անձի և գործի մասին. այժմ անցնենք մեր Բարձրաբերդի ավետարանի ոսկերչական-գեղարվեստական կազմի ծանոթության և գնահատության։

Բ

Առաջին երեսին Խաչելութիւնն է, կետրոնում խաչեցյալի աջ կողմից «Մայր Աստուծոյ» բարեխոս, իսկ ձախից՝ «ս(ուր)բ Յովհաննէս» մուսխոր, գլուխը աջ ձեռքի վրա հենած, ձախում ավետարան բռնած. Խաչեցյալի մարմնի և հատկապես գլխի թեքումը դեպի մայրը խաչելության պատկերագրու-

թյան մեջ, ավելի հին չէ, քան ԺԱ—ԺԲ դարը։ Ապա ի նկատի պիտի ունենալ, որ Քրիստոսը չէ խաչված ազատ խաչափայտի վրա, այլ մի ուրիշ խաչի վրա ձևացուցած է բուն խաչափայտ, որի վրա և գամված են Հիսուսի թևերը խաչափայտի հորիզոնական պատվանդանի վրա։ Վերևի թևի մոտ խաչելության մյուս հատկանիշները՝ արեգակ և լուսին, և «սա է թագաւոր հրեից»։ Հիսուսի գլխի վերև իբրև հատակ ծառայող խաչի վրա «ՅՍ», «ՔՍ»։ Հատակ ծառայող խաչի վերևի և ներքևի թևերի ծայրերի կիսաբոլորակների մեջ մի թևավոր հրեշտակի կիսանդրի աջ ձեռքերին խաչագլուխ գավազաններ բռնած, իսկ ձախերին երկրագունդ։

Չորս անկյուններում չորս ավետարանիչներն են ամբողջ հասակով, դեմքերը միմյանց դարձրած, վերևի անկյուններում ձախից աջ «սբ Մարկ» և մյուսը «սբ Ղուկ» պիտի լինեն, պոկված է։ Ներքևի անկյուններում դարձյալ ամբողջ հասակով «սբ Մաթէոս» և «սբ Յով» կես մասով պոկված։ Ավետարանիչների կեցվածքը, հանդերձանքը, շարժվածքը ազնիվ և նախարտակը լավ նկարչի գործ։ Ավետարանիչների աջ վերին կողի վրա մեդալիոնների կամ բոլորակների մեջ կիսանդրիներով «ՍՒ Պաղոս» և «ՍՒ Պետրոս», կողերի միջին մասում աջից «Հարթողիմէոս» և «Անդրիաս», աջից «սբ Յէկոփ» և «սբ Սիմոն», ներքևի կողի վրա «սբ Փիլիպոս» և «սբ Թուման»։ Անդրիների ձևափերպուճյունները էլ նկարչի կարողության հայտարարներն են, ափսոս ան-տեղ ճղմված։

Կենտրոնական խաչի հորիզոնական թևերից վերև և ներքև նաև չորս փոքր խաչերը իրենց քարերով ուշ ժամանակի հավելումներ են, որ խանգարում են գործի գեղարվեստական ամբողջությանը և տարբեր ոճի գործեր են։

Երկրորդ երեսի կենտրոնական պատկերը Ամենակալն է աթոռի վրա նըստած, շուրջը չորս կիսաբոլորակներից խաչաձև կազմված իբրև շրջանակ։ Չորս անկյուններում ավետարանիչների թևավոր նշանակներն են, ազնիվ ձևակերպուճյամբ, երեսներն իրար դարձրած, վերևը՝ Մաթեոսի և Հովհաննեսի, ներքևը՝ Մարկոսի և Ղուկասի։ Կիսաբոլորակներից կազմված խաչաձևի վրա ևնդավոր ռելիեֆ տառերով գրված է, վերին ճակատից դեպի աջ կարդալով՝

Ի թու ՉԻ կազմեցաւ սբ աւետարանս/ ծախուբ Ստեփանոսի դրան եպիսկ. Կոստանդիա կաթողիկ. ի յիշատակ իւրոյ։

Հատկապես գեղարվեստական պիտի համարել այս երեսի պատկերագրուճյունը, շուրջը եղած ծաղկազարդերով։ Ամենակալը աթոռի վրա նստած հիշեցնում է բյուզանդական կայսրերի նստվածքը իրենց գահի վրա, ոտքերի տակ էլ փռվածք կա։

Այստեղ ևս չորս փոքրիկ խաչերը իրենց կողքի բևեռներով ուշ ժամանակի հավելումներ են և խանգարում են ամբողջության միուճյանը ու գեղեցկուճյանը։ Ձեռագիրը գրվաց տեսանք 1248 թվին և ներկա կազմը 1254-ին։

Ավելացնենք, որ ձեռագրի բուն գրչության հիշատակարանի տակը տարբեր գրով, քան Կիրակոսինն է, բայց գեղեցիկ բոլորագրով, հետևյալ տողը կա «Վարդանա կաղմողի ողորմնացի տր Յս»։ Այս խոսքերի հիման վրա պնդել չենք կարող, թե Վարդանն է այս գործի կատարողը, թեև անկարելի չէ։ Բացի դրանից ոսկերչական աշխատանքը կարող է ուրիշինը լինել։

գ

Բայց զարմանալի բախտավոր զուգադիպությամբ ունենք մի ուրիշ ձեռագիր, նույն Կիրակոսի ձեռքով գրված և նկարազարդված մի տարի հետո, նույն Կոստանդին կաթողիկոսի հրամանով գրված, նույն Հռոմկլայում և մի տարի հետո էլ գեղեցիկ արծաթապատ և ոսկեջրած կազմով զարդարած։ Այս ժամանակ Հռոմկլան իբրև գրչության և մանրանկարչական դպրոց իր ամենածաղկյալ վիճակի մեջ էր, սկսած Ներսես Շնորհալու ժամանակից, ինչպես Գրիգոր Լուկց էր, որ 1173 թվին գրել և նկարազարդել է, սքանչելի մանր նրկաթագրով մի Նարեկ Ներսես Լամբրոնացու[1] համար, երբ վերջինս պատանի էր և ուսանում էր Հռոմկլայում։ Նա հայրենիք վերադարձավ 1175 թվին։ Նույն թվականին գրել է նա մի ավետարան, օրինակն ստանալով Ներսես Լամբրոնացուց[2]։ Նույն Գրիգորն է գրել և նկարազարդել Ներսես Շնորհալու համար Թոքաթի նշանավոր ավետարանը, որ Շնորհալուց հետո անցավ Գրիգոր տղային[3]։ Վերջապես 1198 թվին նա գրել է ըստ Ակինյանի և նկարազարդել Լեմբերդի հայ կաթոլիկների արքեպիսկոպոսարանի հայտնի ավետարանը[4]։

Ապա իբրար հետևից գալիս են Կիրակոսը, Հովհաննեսը, Թորոս Ռոսլինը և սրբա աշակերտը, որոնք Հռոմկլայի դպրոցի փառքն են կազմում, հատկապես առաջին երեքը իրենց բազմաթիվ գործերով, Կոստանդին կաթողիկոսի հովանավորությամբ։

Սրանցից ոմանք աշակերտել են իրար։ Օրինակ Կիրակոսի աշակերտն էր նշանավոր Թորոս Ռոսլինը[5]։ Հռոմկլան գրչության և մանրանկարչության իր ավանդներով և վարպետների հաջորդականությամբ կիլիկյան կարևորագույն դպրոցներից մեկն էր։ Թորոս Ռոսլինն իբրև իր ուսուցիչ հիշում է «Եւս եւ զքրիստոսագիր գրիչն Կիրակոս»։ Հովհաննեսի անունը չի տալիս, բայց գործերի համեմատությունը ցույց է տալիս նրանց առնչությունը։ Նույնը նկատվում է նաև Կիրակոսի և Հովհաննեսի նկատմամբ։

---

1 Ձեռագիր էմ-ի № 1561—1568 (Կաթ. 1523)։

2 Մեր Հիշատակարանի Ձեռագրաց թ. 210։

3 Անդ, թ. 209։

4 Ակինյան, Սկեռայի Ավետարանը, Վիեննա, 1930, Հիշատ. Ձ-աց. թ. 278։

5 Ձեռ. էմ-ի № 1956։

Կիրակոսի երկրորդ մեղ հայանի գործը Ն. Նախիջևանի № 2, իսկ հետո Երևանի թանգարանի № 84 ձեռագիր ավետարանն է։ Նյութը մագաղաթ, Հոռմից բերված բոլորագիր նկարազարդված։ Սկզբի խորաններր պոկված են, չկա և Հովհաննես ավետարանիչի պատկերը իր սկզբնաշարդերով։ Նկարչությունը շատ և կողմերով նման բարձրաբերդի ավետարանին, որովհետև նույն նկարչի և գրչի գործ է, այստեղ ևս մանրանկարչական տառերը բուսական են և գծական, աղնիվ։ Գիրը կիլիկյան գեղեցիկ բոլորագիր, տների սկզբնատառերը ոսկեգիր, ինչպես և տր, յս, ած, հոլովումներով, նման մեր բարձրաբերդի ավետարանին։ Ստացողն է Կոստանդին կաթողիկոսը, որ «ետ զսա գրել եւ վայելչուցուցանել յոսկւոյ սրբոյ եւ ի պատուական երանգոց սիրելի առնել զսա ներքոյ եւ արտաքոյ»։ Վերջին խոսքը կազմին է վերաբերում։ Նա գրել է տվել «յոլով աւետարանս եւ գրեանս ի պայծառութիւն սրբոյ եկեղեցւոյ եւ յուրախութիւն մանկաց նորա», որ իրողություն է[6]։

Կիրակոս գրիչը հանձն է առնում գրել այս ավետարանը, ավարտելով գործը «յաշխարհասատ աթոռս Հռոմկա», «ի թուականս թխանի Հայոց ՂՀ(1249) ի թագաւորութիւնս Հայոց Հեթմոյ բարեպաշտի եւ որդւոց նորա բարի շառաւիղաց Լեւոնի եւ Թորոսի եւ սրբահոգի իւրոյ Զապելի»։ Ավետարանը նշանավոր է հատկապես, պատանի Լևոնի պատկերով և Կոստանդին կաթողիկոսի ՁՕՆ-ով, որից իմանում ենք, որ նա նվիրել է իր սան արքայորդուն։ Բուն հիշատակարանի մեջ այդ մասին խոսք չկա։ Արդյո՞ք ավելի ուշ է ձոնված, քան բուն գրչության թվականը։ Ընծայականը իր սկզբնական տեղում չենք տեսել, ձոնն էլ այժմ պոկված է, մենք ունենք միայն նկարիչ Աբծաթպանյանի գունազարդ արտանկարությունը, որից և լուսանկարել ենք։ Բայց հետագայում միայն արքայորդու պատկերը արտանկարել ենք տվել և մենք, և ունինք մեր մանրանկարչական գունավոր ժողովածուի մեջ։

Մի երկրորդ կարևոր հիշատակարանից իմանում ենք, որ Լևոնը 1263 թվականին այս ավետարանը նվիրել է իր քրոջը՝ Տամֆիմիին, որը Սայդայի իշխանուհին էր և պատերազմի պատճառով իր զավակների հետ եկել և ապավինել էր իր հորն ու եղբայրներին։ Լևոնը նվիրում է այս ավետարանը «ի մխիթարութիւն» իր վշտացյալ քրոջը։

Գ

Այս ավետարանը նշանավոր է նաև իր արծաթե գեղեցիկ կազմով, որ կատարվել է Կոստանդին կաթողիկոսի հրամանով բարձրաբերդի ավետարանից մի տարի հետո։ Կազմված մեծությունն է 16½—12 սմ, իսկ հետևի կողմից հաստությունը 7½ սմ, ոսկեջրած։ Առաջին երեսի արձանագրությունն է վերևի ձախ անկյունից սկսած, դեպի աջ կարդալով՝

[6] Մեր «Նյութեր և ուսումնասիրություններ», պրակ Բ, 1913, նյու Յորք։

Ի՛ս Ա.Ծ ողորմեա Տ՛ն Կոստանդեայ կաթողիկոսի եւ ծնուղաց իւրոց նղբարց եւ եղբաւր որդեաց ամէն թուի ՉԳ։ երկրորդ երեսի արձանագրութիւնն է, դարձեալ ձախ անկիւնից վերեկից ձախից աջ կարդալով՝ շուրջանակի. «գրեսյաւ աւետարանս եւ կազմեցաւ հրամանաւ Տ՛ն Կոստանդնա կաթողիկոսի ի յիշատակ իւր եւ ծնողաց իւրոց եւ եղբարց ամմենն»։ Գրերը ելնդաւոր են և զուգ գծերի մէջ առնված։

Առաջին երեսի խմբանկարը բարեխոսի պատկերացումն է, որ այսպիսի խմբակցութեամբ երեան է գալիս ընդհանուր քրիստոնեական արվեստի մէջ Ժ—ԺԱ դարում, մեզանում ավելի ուշ, բայց ԺԳ դարում արդեն ընդհանրացած, համաձայն ժամապաշտական մաղթանքի «Բարեխօս ունիմք սուրբ Զմարիամ զԱստուածածինն... սուրբ զՅովհաննէս Մկրտիչն», ավելանում է նաև երեմն Գրիգոր Լուսաւորիչ «զմեծ խոստովանողն Քրիստոսի»։ Կազմի մյուս երեսը չորս ավետարանիչներն են կանգնած դիրքով, իրար կողքի, որ ավելի ընդունված է մեր հնագույն ավետարանների մանրանկարչության մեջ։ Ավելի չենք ուզում կանգ առնել արտաքին նկարագրության վրա, չկամենալով երկրորդել, ինչ որ գրել ենք շատ տարիներ առաջ։ Հետաքրքրվողներին մատնացույց ենք անում Արտավազդ եպիսկոպոսի «Տաթեև» պարբերականը[7]։

Միայն այս երկու կազմերն են հասել մեր ձեռքը Կոստանդին կաթողիկոսի ժամանակից, բայց տեղեկություն ունինք, որ նա նման ուրիշ գործեր էլ ունի կատարած. ահա ինչ ենք կարդում իր իսկ ձեռքով գրված հիշատակարանի մեջ՝ «Զաւետարանս մեր զոր գրել ենք ծախիւք եւ ծաղկերանգ զարդարել ոսկով և երփներփն գունիւք եւ կազմեալ ոսկւով և արծաթով, տւաք ի սբ ուխտս Անդրիանանց եւ յառաքելաշնորհ եպիսկոպոսն տր. Պետրոս կամաւ եղբաւրորդոյն մերոյ Թորոսի քահանայի, յիշատակ մեզ եւ ծնողաց մերոց»[8]։

Ժամանակակից հիշատակարանները նկարագրում են Կոստանդին կաթողիկոսը իբրև գրչության և մանրանկարչության արվեստների մեծ հովանավոր և բազմաթիվ թանկարժեք ձեռագրերի, մանավանդ ավետարանների ստացող։

---

[7] Տաթեև, վեցերորդ գիրք, մեր հոդվածը «Մի էջ հայ արվեստի և մշակույթի պատմությունից»։ Տպված և առանձին զրքույկով, 1930, Հալեպ։

[8] Ղ. Ալիշան, Սիսուան, եր. 150։

Ա

... Այս երկտողով կամենում ենք հայ մշակույթը և գիտությունը սիրող և պնդահատող հասարակության գաղափար և նախնական տեղեկություններ տալ մեր այս գործի էության և կազմության մասին։ Ամբողջ գործը, կարծում ենք, կարելի պիտի լինի ամփոփել չորս մեծադիր հատորի մեջ, յուրաքանչյուրը ոչ պակաս, քան 1200—1250 երեսից բաղկացած։ Առաջին երկու հատորների տպագրության մոտավոր ծախսը հոգացված է, առաջինը՝ Տեր և Տիկին Տիգրան Տաուրյանների կողմից, Նյու Յորքից, և երկրորդը՝ հանգուցյալ Պազտասար Նալբանդյանից՝ Բոստոնում։

Գուցե անտեղի չէ հենց սկզբից հայտնել, թե այս գործը նախապես ծրագրված չէ եղել հրատարակության համար, այլ այդ միտքը հառաջ է եկել և ձևավորվել հետզհետե բոլորովին տարբեր շարժառիթներով։ Մեր պատմական-մատենագրական և մանրանկարչական ուսումնասիրությունների ժամանակ, ստիպողաբար հետամուտ ենք եղել աղբյուրներ որոնել, նրանց մեջ գիտենալով, որ Հիշատակարանները կարևոր տեղ պիտի բռնեին։ Սորանից հիսուն-վաթսուն տարի առաջ դեռ նոր էին սկսում մեր մեջ Ձեռագրերի գիտական ցուցակ կազմել, ինչպես Քարամյանի Բեռլինի և Տաշյանի Վիեննայի Մխիթարյանց Ձեռագրերների ցուցակներն են։ Էջմիածնի Կարինյան Ցուցակը, թեև ավելի հին, միայն ցուցումներ ուներ Հիշատակարանների մասին։ Ստիպված էինք Ձեռագրերի մեջ անձամբ որոնել մեր նյութերը, մի դժվարին գործ, բայց որը օրհնություն դարձավ մեզ համար, և առիթ՝ ավելի ընդարձակ չափով ծանոթանալու ձեռագրական արվեստի մանրամասնություններուն և առանձնահատկություններուն հետ՝ ավելի հմտություն ձեռք բերելու նրանց հասկացողության մեջ։ Այսպիսով էր, որ հառաջ եկավ և գրչության արվեստի նյութերի հավաքումը և ուսումնասիրությունը, որով հետզհետե սովարացավ մեր ժողովածուն, դառնալով հայ անցյալի և մշակույթի պատմության համար թանկագին գանձարան։ Մեր աշխատությունների ժամանակ լայն չափերով օգտվել ենք և պիտի օգտվինք նրանցից այսուհետև ևս, բայց կամենալով ուրիշներին ևս մասնչելի դարձնել՝ դասավորեցինք ժամանակագրական կարգով և ճոխացրինք ծանոթագրություններով և ցուցումներով, որ և ահա մատուցանում ենք հայ բանասիրության։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԶԵՒԱԳՐԱՅ-ը բովանդակում է նյութեր ե—ԺԸ դարերի ձեռագրերը, սկզբում քիչ—քիչ, ապա Ժ դարից սկսում է բազմանալ և ԺՒ դարի երկրորդ կեսից գտնել բովանդակությամբ ճոխ, հետաքրքրական և բազմակողմանի: Հայաստանի, Կիլիկիայի և գաղութների պատմության, գրականության, արվեստի և մշակույթի, նաև տնտեսական բնույթ ունեցող խնդիրների մասին, կարելի չէ ճիշտ գաղափար կազմել առանց Հիշատակարանների օգտագործման: Նորա մեծ լույս են տալիս նաև դրացի ազգերի Հայոց հետ ունեցած պատերազմների և այլ հարաբերությունների մասին:

Մեր երանաշնորհ հեղինակներն ու մանավանդ գրիչները, բարի սովորություն են ունեցել իրենց գործի վերջավորության, երբեմն և մեծ հատվածներից հետո, համառոտ տեղեկություններ տալ գործի ծագման, ժամանակի, տեղի, ստացողի մասին, հիշելով և այլ մանրամասնություններ, ժամանակակից դեպքեր, առավելապես տեղական, բայց և երբեմն ընդհանուր բնույթի: Կարելի է ասել, այդ փոքրիկ հիշատակարանները իրենց բազմատեսակ մանր տեղեկություններով մոզայիկի գունագույն քարեր են, որոնցից արվեստագետը ի մի բերելով և օգտագործելով հարկավորը յուր նպատակի համար, կազմում է գունազարդ, կենդանի և գեղարվեստական պատկեր: Այդ աղբյուրները առանձին արժեք ունին, որովհետև նրանցից շատերը նույնիսկ սկզբնական, այսինքն ականատես կամ ականչալուր մարդկանց հաղորդագրություններ են, որոնք պատմության ուսումնասիրության համար առաջնակարգ նշանակություն ունին:

Մեր պատմիչները չեն տալիս նույնիսկ իրենց ժամանակի անցքերի և կյանքի լրիվ պատկերը. նրանց հետաքրքրության և նկարագրության նյութերն առավելապես քաղաքական և եկեղեցական դեպքերն են, պատերազմները, բարբարոսների արշավանքներն ու հալածանքները, բայց նույնիսկ այդպիսի նեղ հասկացողությամբ բոլոր դարերի համար պատմիչներ կամ մատենագիրներ չունինք, ինչպես, օրինակ, ԺԴ—ԺԵ դարի սկիզբը, ժե դարում նագիրներ չունինք, ինչպես, օրինակ, ԺԴ—ԺԵ դարի սկիզբը, ժե դարում միայն Թովմա Մեծոփեցին է, բայց նա էլ յուր աշխատությունը նվիրել է Լենկ-Թեմուրի արշավանքների կամ յուր ժամանակի եկեղեցական դեպքերի նկարագրության: Մոնղոլական պետության քայքայման շրջանի, Սև և Սպիտակ Խոյերի, Պարսից և Օսմանցվոց շահատակությունների սկզբնական շրջանների մեր աղբյուրները հայկական գրեթե, միայն Հիշատակարաններն են: Բայց նույնիսկ այն շրջանների համար, երբ մենք պատմագիրներ և ժամանակագիրներ ունինք, Հիշատակարանները տալիս են անգնահատելի նորություններ, մանրամասնություններ, դեպքերի և թվականների ճշտումներ, մեր ներքին, մտավոր և մշակութային կյանքի վերաբերյալ տեղեկություններ, որոնց մասին լռում են մեր պատմիչները:

Այդ ժողովածուների արժեքը գործնականապես հասկանալի դարձնելու համար, պետք է հիշենք, որ սրանց և մասամբ արձանագրությունների հիման վրա են ուսումնասիրված և գրված մեր հայ իշխանական տոհմերին վերաբերյալ աշխատությունները, որի աչքի ընկնող օրինակն է մեր եռահատոր Խաղբակյաճ կամ Պռոշյաճ Հայոց պատմության մեջ աշխատությունը։ Նույն ձևով ունինք հրատարակելի և Օրբելյանց և Վաչուտյանց մասին, չհիշելով ավելի մանր տոհմերը։

Ռուբինյանց շրջանի պատմությունը, որ Ալիշանի Սիսուանի հրատարակությամբ և Հիշատակարաններից օգտվելով ավելի բովանդակալից է դարձել համեմատաբար, թե պատմական և թե մատենագրական տեսակետներով, կարելի է ասել կերպարանափոխ կլինի Հիշատակարանների ավելի լրիվ հրատարակությամբ. որքան նորությունները մեր արքայական և իշխանական տների հետ կապված գործունեության և նրանց ցույց տված հովանավորության արվեստի մարդերում։ Նոր-նոր փորձեր են կատարվում վանքերի պատմություններ գրել, կամ մասնավոր խնդիրների հետ կապված ուսումնասիրություններ։

Մեր գրչության հարուստ արվեստը, յուր պատմությամբ, գրեթե խոպան, անմշակ վիճակի մեջ է, եթե չհիշենք Տաշյանի Ակնարկ մը հայ ճնագրության վրա գործը. քանիից քսանիերիս հազար հայ ձեռագիրներ ունինք այժմ մեր ձեռքը հասած, իսկ ո՞րքան կորել են, ոչնչացել բարբարոսների ձեռքով ոչ միայն հեռավոր անցյալում, այլ հենց մեր ներկա դարում, նախանցյալ պատերազմի ժամանակ։ Վասպուրականի վանքերից և եկեղեցիներից միայն մոտավորապես 1500 ձեռագիր կարելի եղավ փրկել, մինչդեռ նրանց թիվը հազարների էր հասնում։ Մուշի Ս. Կարապետի և Ղազարու կամ Առաքելոց վանքերից միայն մի քանի ձեռագրերներ են փրկված, թեև շատ կարևոր, ինչպես հայտնի Տոնականն է, կամ Ս. Կարապետի Ավետարանը ճոխ նկարազարդությամբ, ԺԳ դարի գործ. մնացածը կորած է։ Ուշ էր արդեն, երբ հատուկ արշավանք կազմակերպեցինք և ուղարկեցինք Ս. Կարապետի պահեստների բովանդակությունը Մ. Աթոռ փոխադրելու. կարևոր պահեստներից մեկը բացված էր և կողոպտված։ Ո՞ւր են Անկյուրիո և Արմաշի ձեռագրերները, որոնց ցուցակներն ունինք ձեռքի տակ, հանգուցյալ Բաբգեն Կաթուղիկոսի և դպտ. Հ. Թոփճյանի կազմած. չգիտենք կեսարիո և այլ վանքերի կամ մասնավոր հավաքածուների ձեռագրերների թիվը, ինչպես օրինակ Տրդատ եպիսկոպոսի հավաքածուն էր, որից միայն մի կարևոր ձեռագիր տեսանք Նյու Յորքում՝ Մորգընի մատենադարանում։ Ո՞ւր են Ագուլիսի Ս. Թումա առաքյալի վանքի ձեռագրերները, որոնք կողոպտվեցան հայ-թաթարական ընդհարումների ժամանակ, որոնց մի քանի հատորներ միայն տեսանք Ամերիկայում։ Երանի թե նրանք բոլորն էլ Ամերիկա հասած լինեին, և պետական հաստատություններին անցած. գոնե չէին կորչիլ գիտության համար։ Գրչության արվեստի և նո-

րա հիշատակարանների ընդհանուր ծանոթությունը միայն հայ մշակույթի մի նոր աշխարհ է բանում մեր առաջ։ Նորա պատմությունը համազոր է, գրեթե, մեր մշակույթի պատմության, առանց ճարտարապետության։

Եվրոպական նման գործերի հետևողությամբ պատրաստել ենք Գրչության արվեստի պատմությունը և աշխատել ենք ամփոփ տեղեկություն տալ նորա ծագման և զարգացման ընթացքի մասին, այսինքն նյութերի պատրաստության՝ մագաղաթի, թղթի, թանաքների, նկարչական գույների, գրիչների, գլուխբոցների, հովանավորների... և առհասարակ հայ արվեստի հետ կապ ունեցող երևույթների մասին։ Ժամանակին դասախոսել ենք էջմիածնի ճեմարանի լսարանական բաժնում, ապա նորաբաց համալսարանի առաջին տարին, երբ հայ արվեստի պատմության ուսուցչապետական աթոռն էր վիճակված մեզ։

Հիշատակարաններով պիտի պարզվին հայ մանրանկարչության պատմությունը, մեր ներքին, մտավոր և մշակութային կյանքի այլևայլ երևույթները, նույնիսկ տնտեսական, փոխարժեքների, հարկապահանջության, վաճառականության և այլ բազմաթիվ խնդիրներ։ Մեր պատմական մատենագրության կողքին հիշատակարանների ժողովածուները հայ պատմության ուսումնասիրության համար կարևորագույն աղբյուրներ են, ինչպես և վիմական արձանագրությունները։

Գ

Հիշատակարաններից օգտվելու և ժողովածուներ կազմելու միտքը նորություն չէ մեր բանասիրության մեջ, չհիշելով մեր հին պատմագրիչներից ոմանք, ինչպես է և Դավրիժեցին։ Ջամչյանն է առաջինը, որ օգտագործում է հիշատակարանները յուր պատմության մեջ, որչափ իրեն մատչելի են եղել. ապա ավելի լայն չափով Ալիշանը յուր պատմական-տեղագրական աշխատանքների մեջ, ինչպես Սիսուանն է, Այտրատան ու Սիսականը, Շիրակն ու Հուշիկների մեջ, ինչպես Սիսուանն է, Այտրատան ու Սիսականը, Շիրակն ու Հուշիկը և հատկապես Հայապատումը։ Հայ ազգային և թարգմանական գրականության պատմության համար՝ Զարբհանալյանը (Հայկ. հին դպրության պատմ. և Մատենադարան հայկ. թարգմանության նախնյաց). այնուհետև ուրիշ շատերը։

Ժողովածուներ են կազմել, և հատվածներով կամ գրքերով հրատարակել Դարեգին Սրվանձտյանց, Փիրղալեմյան, Երվանդ Շահազիզ, Ե. Լալայան, Գիտենք անխոնջ Հ. Ակինյանը հիշատակարանների մեծ ժողովածու ունի, որից օգտվում է ինքը հաճախ յուր ուսումնասիրություններնի մեջ, ինչպես և երբեմն յուր միաբաններից ոմանք։ Մինչև այժմ հրատարակված ձեռագրերի բոլոր ցուցակագրողները տվել են նկարագրության ենթարկված ձեռագրների հիշատակարանները, ամբողջությամբ կամ հատվածներով. այսպես են Քարամյան՝ Բևռլինի, Տաշյան՝ Վիեննայի կայսերական մատենադարանի և Վիեննայի Մխիթարյանց, Արտավազդ Արքեպիսկոպոս՝ Հալեպի, փոքր մասով

Երուսաղեմի և Եվրոպայի մատենադարանների, Բարսեղ Սարգսյան՝ Վենետիկի Մխիթարյանց, Դալեմբյարյան՝ Մյունխենի, Ամատյան՝ Նոր Բայազետի, Կարնո Սանասարյան վարժարանի, Թավրիզի և Թեհրանի, Գուշակյան՝ Սևբաստիայի Ս. Նշան վանքի, դոկտ. Հ. Թոփճյան՝ Հաչիկ վրդ. Գագյանի, Ե. Ալալյան՝ Վասպուրականի, Կոնիբեր՝ Բրիտանական թանգարանի, Ֆինկ և Գանջեցյան՝ Տյուբինգենի և այլն:

Մեր բանասիրական պարբերաթերթերը, էջմիածնի Ա.ռաքելոց, Բազմավեպը, Հանդես Ամսօրեան, Ազգագրական հանդեսը, Բանասերը, Աճառիանը, Լույսը, Լուման իրենց շատ զգալի բաժինն ունին այդ կողմից: Պատահական հերպով նաև մեր առօրյա կամ շաբաթաթերթերը (հատկապես Բյուզանդիոն օրաթերթը): Ուրեմն նորություն չէ հիշատակարանների հրատարակության և ժողովածուներ կազմելու միտքն ու գործը:

Այս թվարկումից արդեն հասկանալի է, թե ինչքան դժվար է այդքան բազմատեսակ և ցրված աղբյուրներից օգտվելը: Մեր այս գործով կամենում ենք դյուրացնել այդ աշխատանքը, ոչ միայն համադրելով և ժամանակագրական կարգով դասավորելով այդ ցրված նյութերը, այլև տալով նոր, մինչև այժմ բանասիրության մատչելի չեղած նյութերը:

Բայց սա լոկ հիշատակարանների ժողովածու չէ սովորական մտքով, դասավորված նույնիսկ ժամանակագրական կարգով, ինչպես Փիրղալեմյանի գործն է, այլ և բանասիրական ընդարձակ աշխատանք. ջանք է գործադրված պատմական-գրական լուացուցիչ տեղեկություններով և ծանոթություններով, թվականների և դեպքերի ճշտումով և համեմատություններով այլ աղբյուրների հետ, հիշատակարանների մեջ հիշված գրիչների, ստացողների, հովանավորների կամ այլ անձերի և դեպքերի մասին ցուցումներով, ավելի պարզել և ընդարձակել նրանց արժեքը և դյուրացնել օգտագործողի աշխատանքը:

Ամեն հիշատակարան ունի յուր համարը ըստ կարգի, եթե թվականով է, հակառակ դեպքում, մատնանշված է ձեռագրին վերաբերյալ ծանոթագրության մեջ:

Նշանակված է ձեռագրի թիվը, մատենադարանը, սեփականատերը, եթե մասնավոր է: Նշանակված է՝ սկզբնագի՞ր է այն, թե հետագայի արտագրություն և միայն ըստ բովանդակության՝ համեմատ նշանակված ժամանակի:

Նույն ձեռագրի հետագա և ժամանակով ավելի ուշ հիշատակարանները եթե թվականով են, դասավորված են ժամանակագրության համաձայն, բայց ծանոթագրության մեջ նշանակված են թվականները:

Հատկապես կամեցել ենք մատնացույց անել, որ ձեռագիրն ունի՞ գեղարվեստական արժեք մանրանկարչության կամ կազմի կողմից:

Գործի վերջում հիշված կլինեն բոլոր ձեռագիրների համարները, համադրված հետագա հիշատակարանների թվականներով և ըստ կարգի թվերով,

րով կարելի կլինի ձեռագրի բոլոր հիշատակարանները հետազոտել և գաղափար կազմել նորա պատմության մասին։

Նանոթագրությունների մեջ հիշված են այն տեղերը կամ գրքերը, ուր օգտագործված է կամ տպագրված տվյալ հիշատակարանը։

Վերև հիշված ցուցակների կամ ժողովածուների այնպիսի հիշատակարաններ, որոնք հազվագյուտ են և պատմական արժեք ունին, առել ենք մեր ժողովածուի մեջ, բայց ընդհանրապես հիշել ենք նրանց տեղերը, տվել ենք հարկավոր գիտելիքները՝ ծանոթագրություններով։

Առհասարակ աշխատել ենք պահել ձեռագիրների ուղղագրությունը և բնագրի նույնությունը. իսկ եթե ակնհայտի սխալ է, գրել ենք ուղիղը, ներքևը նշանակելով ձեռագրի սխալ ընթերցվածը, սովորականից ավելի փոքր շեղումները պահել ենք, շեղագրով ընդգծելով հարկավոր տառը և կամ տառերը։

Չենք պահել սղագրությունները. մանավանդ հետին դարերում այլանդակության են հասել նրանք. չենք պահել կետագրությունը նույնությամբ, որ անկարելի էր շատ անգամ, այլ նախադասություններն ու մտքերը մենք ենք տրոհել. չենք պահել նշանագրերը, որովհետև այդ անհասկանալի կդառնար շատերի համար և անօգուտ։ Դրանք բնագրական խնդիրներ չեն, այլ՝ հնագրական, իսկ այս աշխատությունները պատմական աղբյուրների ժողովածու է և ոչ բուն հնագրության ուսումնասիրություն։

Մեր հիշատակարանների մեջ գործադրված են ժամանակագրության այլևայլ կարգավորություններ (սիստեմներ), ինչպես աշխարհի ստեղծագործության, հռովմեական-բյուզանդական, մահմեդական, նաև հայկական մի քանի տեսակի. վերջում պետք է համառոտ մի բացատրական ուսումնասիրություն տանք, դյուրացնելով նրանց հասկացողությունը, թեպետ կատարված է այդ մասամբ գործի ընթացքում ծանոթագրությունների մեջ։

Տալիս ենք երբեմն լուսանկարչական նմանահանություններ գրչության կամ մանրանկարչության, հեղինակների կամ գրիչների, հիշատակարանի ձեռագրի մասին գաղափար կազմելու, բայց առանց բացատրության կամ ուսումնասիրության, երբեմն հիշատակարանի կամ նույն ժամանակի հետ կապված մանրանկարներ, սկզբնազարդեր, լուսանցքի զարդեր, քանդակներ և այլն, գիրքը ավելի ակնահաճո դարձնելու մտքով։

Վերջապես գործի տպագրությունից հետո կկազմվի հատուկ անունների ցանկ, երբեմն համադրություններով և լրացումներով, հատկապես պատմական անձնավորությունների, նշանավոր գրիչների և արվեստագետների և դեպքերի մասին։

Ա.

Տ. Մկրտիչ Խրիմյան կաթողիկոսի ժամանակ մի մեծ սխալ կատարվեցավ հայ արվեստի նկատմամբ. առանց նախապես հոգալու դրամական միջոցները, նորոգության անհրաժեշտ աւտաղձները, առանց նկարիչների և ճարտարապետների հետ խորհրդակցելու և ծրագիր կազմելու, վար առնվեցավ պատերին կպցրած պաստառների վերա նկարված պատկերները, քանդվեցան որմնանկարները և սրբվեցան որմերի վերա նկարված ծաղկազարդեր, որոնք ժամանակի հնությունից կամ խոնավությունից սկսել էին մասամբ ցած թափվել։ Ուշ էր արդեն, երբ միաբանությունը համարձակություն ստացավ հեղինակավոր կաթողիկոսին արգելք հանդիսանալու՝ շարունակել սխալ որոշումն ու գործը։ Խրիմյանի նպատակը բարի է, տաճարը պէտք ուներ նորագության, բայց առանց այդ գիտակցական նախազգուշության, թե հնությունների նորոգությունը դժվարին գործ է և պէտք է կատարվի գործից հասկացող արվեստագետների և մասնագետների ձեռքով։

Տարաբախտաբար չէր լուսանկարված և նախկին վիճակը, պատկերների, ծաղկանկարների դասավորությունը, թափված և եղծված մասերը, որ շատ օգնել կարող էին նրանց իրական ուսումնասիրության։ Կատր-կատր պատկերների լուսանկարչությունը պարտական ենք մասամբ պրն. Ա. Չոբանյանին, որ հրատարակել է յուր Նաղաշ Հովնաթան Աշուղը և Հովնաթան Հովնաթանյան նկարիչը երկի մեջ[1]։ Ծաղկանկարների և փոքր չափով նաև պատկերների լուսանկարներ ունինք և մենք, որ օգտագործում ենք այստեղ։ Նաև Սահակ ծ. վարդապետ Ասատրյան, որ Խրիմյանի ժամանակ տաճարի կրտսեր լուսարար էր, հրատարակել է «Պատկերացույց Հաւաքածոյ» աշխատությունը[2]։ Գիտենք նաև, որ հանգուցյալ նկարիչ Վարդգես Սուրենյանը գունազարդ նկարած ուներ ծաղկազարդերի մոտիվները, որոնցից օգտվելով, պիտի ծաղկազարդեր Ղուկասյանների շինած Յալտայի եկեղեցին Հոփսիմյանց տաճարի ոճով շինված դրանց նախարտակները պահվում էին հոգաբարձության մոտ։ Մեր առաջնորդական այցելության ժամանակ իբրև նոր նախ-

[1] *Փարիզ, 1910։*

[2] *Երուսաղեմ, 1913։*

չհանի և Ռուսաստանի առաջնորդ, փորձեցինք ստանալ և Երևանի թանգարանն ուղարկել ի պահ, բայց չհաջողեցավ։ Պատերից պոկված կտավի վերա նկարված պատկերներն էլ պահվում էին Խրիմյանի շինած թանգարանում, որ հետո անցավ Սիոնեքերիմ Տ. Հակոբյանի տեսչության, թանգարանը պետականանալուց հետո։

Այսպիսի պայմանների մեջ դժվար է մեզ ճշգրիտ և բավարար պատկերը տալ Նաղաշ Հովնաթանից առաջ և հետո եղած վիճակի մասին, որ մեծ նշանակություն ունի նորա գործի պատմական ընթացքի և ընդհանուր տարրությանց համար։ Մենք մասամբ ևս պետք է օգտվինք մեր երիտասարդության ժամանակ ստացած տպավորություններից, շատ բան աղոտացած մեր հիշողության մեջ, բայց առավելապես, այն աղբյուրներից, որ մատչելի են դարձել մեզ ժամանակի ընթացքում։ Այդ աղբյուրներն են՝ նախ Սիմեոն կաթողիկոսի Ջամբռը[3], ուր կան համառոտ տեղեկություններ այս և այն կաթողիկոսի գեղարվեստական նշանակություն ունեցող նորոգությունների մասին, ապա նույն կաթողիկոսի ժամանակ կազմած Դավթարը[4], որ մի տեսակ նկարագրական ցուցակ է սրբությունների և հնությունների մասին։ Երրորդ՝ Ղուկաս կաթողիկոսի կենսագրական մի կարևոր հատվածք, որ մաս էր եղել հայրապետական Գավազանագրի, և որը հրատարակել ենք Արարատի մեջ[5]։ Չորրորդը՝ Շահխաթունյանի տված տեղեկությունները, քաղած մասամբ արձանագրություններից և մասամբ յուր ժամանակ եղած ավանդություններից։ Համեմատելով այս աղբյուրները իրար հետ և հենվելով մասամբ հիշատակարաններից ստացած ծանոթությունների վերա և ապա նույնիսկ պատկերների արվեստի և ոճի տարբերությունների, կարելի կլինի, եթե ոչ բոլոր պատկերների, գոնե, նրանցից շատերի մասին որոշ եզրակացության հասնել։ Այս փորձն է, որ կատարվում է հետևյալ երեսների մեջ։

Բ

Ամենայն Հայոց հայրապետական Աթոռի Սսից էջմիածին փոխադրվելուց հետո՝ շատ քիչ են շինարարության, հատկապես գեղարվեստական շինարարության հիշատակները ԺԸ դարից, իսկ ԺԹ դարը ամենախեղճ շրջանն էր այդ կողմից, ինչպես և ընդհանուր հայ կյանքի համար։ Եթե համեմատելու լինինք հայ ճեռագրերի թիվը իրենց մնացորդներով, դոցանից ամենից քիչը ԺԹ դարը է, շատ-շատ ավելի քիչ, քան նույնիսկ ԺԵ դարը։ Նույնը կարող ենք ըսել եկեղեցական ճարտարապետության մասին ավելի մեծ չափով։ Վերա-

---

[3] Ջամբռ, ի Սիմէոն կաթողիկոսէ Երևանցւոյ, 1873, Վաղարշապատ։

[4] Դաւթար և հաշուագիր անօթից և սպասուց Սրբոյ և Միածնաիչի տաճարի, կազմուած. ՌՄԺէ = 1768 թուին։

[5] Արարատ, 1901, 183 և 326։

կենդանությունն սկսվում է Մովսես Տաթևացու կաթողիկոսության օրերից։ ԺԴ դարում տաճարի գմբեթի վերին մասը ընկած էր։ Մովսես կաթողիկոսը բարձրացնում է թմբուկը և նորոգում։ Այս մասին խոսում են ոչ միայն Առաքել Դավրիժեցին[6], այլև ժամանակակից հիշատակարանները։

Տաճարը, իհարկե, Աթոռի փոխադրության օրերից առանց պատկերների չէր, գոնե, այն խորաններում, ուր պատարագ էր մատուցվում, բայց հիշատակություններ չունինք այդ մասին։ Ըստ № 981 տարեգրքի՝ «ի բաց էառ (Մովսես կաթողիկոս) զգմբէթ նորին, որ էր նիստ ի քնէ և խախտեալ և բարձրաբերձ իմն տեսակաւ կանգնեաց, յորոյ կատարման և ինքն փոխեցաւ առ անձկալին իւր Քրիստոս»։ Նույնը կրկնում են և ուրիշ հիշատակարաններ, ինչպես Մկրտիչ Լհճացին և այլն[7]։ Ներկա գմբեթը, որ Մովսես կաթողիկոսի շինածն է, կրում է պարսկական ազդեցություն։ Միայն Շահխաթունյանն ընդհանուր կերպով հիշելով յուր ժամանակի պատկերները, հայտնում է. «Յամենեսին ի սոսա քաջապէս փայլին շնորհք ձեռաց մեծանուն վարդապետին Ստեփանոսի Լհճացւոյ, և քաջ նկարչին հօր Յովնաթանու»[8]։ Ուրեմն Շահխաթունյանի ժամանակ ավանդության կար էջմիածնում, թե նորա ժամանակի պատկերների մի մասը Ստեփանոս Լոփացունն է։

Ո՞վ է Ստեփանոս Լհճացին։

Նա մեկն էր էջմիածնի նշանավորագույն վարդապետներից, Փիլիպպոս և Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսների ժամանակ, ուսուցիչ վարժարանի, գրիչ և թարգմանիչ մի շարք գրքերի՝ լատիներենից և լեհերենից։

Իբրև գրիչ, նորա գործն է Շնորհալու Հիսուս Որդին, որ գրել է 1646 թվին. «զձեռն ի գործ արկեալ իմ ձեռամբն գծագրեցի, ևս ոսկենկար ծաղկօք և երփներին գունօք զարդարել եառ...»։ Հիշել է խնդրում նաև «զսիմէոն շնորհազարդ և քաջ բարունի ծաղկող և կարմող սորին[9]»։ Ուրեմն այստեղ նա ծաղկող չէ, այլ միայն գրիչ։ Հետո 1662 թվին նվեր է ուղարկում այս գիրքը Իլովայի Ս. Աստվածածին եկեղեցուն։

Մկրտիչ Լհճացին գրել է 1646 թվին՝ իմաստասիրական մի ձեռագիր, ուր և հիշել է խնդրում «Այլ և գրողի զսկզբնագիրն բանից գլխոց կարմրագեղով տեառն Ստեփաննոսի հոգիբնկալ քահանայի և իմաստից պարապողի, համաքաւառաւ գրոցս գծողի։ Եւ յոսկենկար ծաղկափիքիք որակաւք պաճուճողի, Սիմէոնի վարդապետի և Քրիստոս հանգուցելոյ 1653 թ.»։ Բայց սորա նկարչությունը անկատար է մնում Սիմեոնի մահվան պատճառով և ավարտում է Հայրապետ նկարիչը Շող քաղաքում։ Այս Հայրապետը շատ նշանավոր մանրա-

---

[6] Էջմիածին, 1896, 306։

[7] Մեր «Հավուց թառի Ամենափրկիչը», 1937, եր. 96։ Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի թիվ 547, հավաքմունք Ալինյանի։

[8] Շահխ., Ա, եր. 45։

[9] Ձեռագ. Էջմիածին, թիվ 1524/1549։

Նկարիչ է, հատկապես Աստվածաշունչ գրքերի, և «վարպետաց վարպետ» է կոչվում[10]։

Միրուն բոլորագրով № 2503 ձեռագրի գրիչն է գործ Ստեփանոս Իլովացին, բայց նկարիչն է նույն Սիմեոնը։ Տարաբախտաբար չենք նշանակել, թե ի՞նչ ձեռագիր է։ Պետք է գրված լինի 1653 թվից առաջ, երբ մեռած էր արդեն Սիմեոնը։

Վկայություն ունինք և լատին միսիոնար Pallu եպիսկոպոսի կողմից, որ 1662 հունիսի 6-ին եղել է էջմիածին և տեսակցել է Հակոբ Դ. Ջուղայեցի Կաթողիկոսի հետ, «Ոսկան անունով հայաստանցի եպիսկոպոս մը, որ շատ հավատացյալ կաթոլիկ է, Ստեփանոս անուն հերձվածող լեհ կրոնավորի մը հետ, զուրը եկավ մեզ ընդունելու համար. հայր Ստեփանոս լատիներեն լեզվով բարի գալուստ մաղթեց մեզի։ Կաթողիկոսի հետ տեսակցության ժամանակ թարգմանի պաշտոն էր կատարում գործ Ստեփանոս»[11]։

Նորա լատինագիտության մասին և «ի լատին բարբառոյ» թարգմանած Հայելի վարուց կամ Հարանց վարքի հիշատակարանի մեջ Ստեփանոս Լեհացին հիշվում է որպես «վերակացու և գանձապետ ի ս(ուր)բ կաթողիկոսարանն Էջմիածնի»[12]։ Իսկ 1680 թվին, երբ Հակոբ կաթողիկոսը Պոլիս է գնում, աթոռակալ էր Ստեփանոս Լեհացին և ապա տեղապահ ընտրվեցավ մինչև Նդիազարի գալը[13]։ Ստեփանոսի մահվան ճիշտ թվականը չգիտենք, որովհետև նրծված է թվականը նորա գերեզմանի արձանագրության մեջ, թաղված Հռիփսիմեի վանքի արևելյան կողմը։ Մեր նպատակը չէ այստեղ նորա կենսագրականը գրել, այլ միայն պարզել նորա նկարիչ լինելու և չլինելու հանգամանքը։

Ստեփանոս Լեհացու թարգմանական աշխատությունների հիշատակարանների մեջ ևս խոսք չկա նորա նկարիչ լինելու մասին։ Ավագ ժամանակակից Առաքել Դավրիժեցին, որ մանրամասնություններ է հաղորդում նորա Իլովում ստացած կրթության, էջմիածին գալու և առաջին չորս թարգմանությունների մասին մինչև 1662 թվականը, չունի հիշատակություն նորա նկարիչ լինելու մասին, բայց նաև Իլովացու ձեռքով թարգմանված այս և այլ գրքերի հիշատակարանների մեջ։ Եթե Իլովացին նկարչությամբ զբաղված լիներ այդ ժամանակներում, կամ ուսած լիներ Իլովում յուր պատանեկության ժամանակ, անկարելի էր, որ Դավրիժեցին չհիշեր, մանավանդ լավագույն առիթ ուներ այդ մասին գրելու։ Առաքելը Մինաս և Հակոբջան Ջուղայեցի

---

10 Մեր «Հավուց թառի Ամենափրկիչը», եր. 96—97։

11 Պալլու (Pallu) եպիսկոպոսի տեղեկագրից և 1802 թվին Անթ. Սելևկյան կողմից հրատարակված դեպի Չինաստան կատարած ճանապարհորդությունից քաղվածորեն թարգմանել է պրն. Հայկ Պետրոսյան, Ապագա, 22, 1949, Էջմիածնի վանքը 1662-ին։

12 Ձեռ. էջմ., թիվ 678։

13 Ձեռ. էջմ., թիվ 507։

նկարիչների մասին հիշում է Ստեփանոսի կենսագրությունից անմիջապես հետո, եթե հայտնի լիներ մինչ այդ իբր նկարիչ, պատճառ չուներ չհիշելու և նորա անունը[14] իբր նկարչի։

Մենք կարող ենք թվել նորա թարգմանությունների հիշատակարանները. 1660 թվին նա թարգմանել է Հովսեբոսը. «յառաջագոյն հարկեալ ի հրամանս երիցս երանելաս Տեառն Փիլիպպոսի», ապա «ի թախանձանաց եղբարցն, որք կան ի հրահանգս դեգերանաց իմաստից», «ՌճԹ = 1660 թվին»[15]։

Ըստ № 3159 ձեռագրի 1662 թվին նա թարգմանել է Դիոնեսիոսը լատիներենից. «Ես Ստեփանոս Իլովացի, յետին ի բանասիրաց, տեսանել զգիրս սրբոյն Դիոնիսիոսի այլափոխեալ և բազում տեղիս ապապակեալ, փոյթ յանձին կալայ վերստին թարգմանել ի լատինացւոց բարբառոյ ի մեր լեզուս»։ Այս հիշատակարանի մեջ հիշում է էջմիածնի շատ գիտուն և հմուտ վարդապետների հետ նաև «Առաքեալ վարդապետն, քաջ բարբոնի և վիպասան, որ ջժամանակագրութիւնս հայրապետաց և թագաւորաց գեղեցկայարմար բանիւք զրոշմեաց և իւր յիշատակ անջնջելի եթող»։

Այս հիշատակարանի մեջ հիշում է, որ սորանից առաջ թարգմանել է Հովսեբեոս, «Պատճառաց[16] և Հարանց վարք, որ կոչի Հայելի վարուց ի Լեհաց բարբառոյ ի հայ լեզու», ՌճժԱ թվին։

Դիոնեսիոսի թարգմանության տարեթիվը հաստատվում է և այլ աղբյուրից Իլովացու անձի հետ կապված տեղեկություններով։ Նորա աշակերտներից ներսես սարկավագ գրիչը հայտնում է, թե «ի նախակերտ գաղափարէն գծեցաւ և տպեցաւ, և տինա թէ ձեռամբ նորին սրբագրեցաւ»։ Հիշում է «և զուսուցիչն իմ և զվարժիչն զՍտեփանոս Իլովացի քաջ հռետոր և թարգմանիչ բարբունին, որ էր այր լի շնորհօք և հանճարով և սրբեալ հոգւով սրբով. զի հանապազ ըստ աստուածատուր պարգեօք զա/մենայն/ եղբարս կատարելագործէր փիլիսոփայական կրթութ/եամ/բ»։ Ձեռագիրը գրված է 1662 թվին[17]։

Վերջապես 1668 թվին, դարձյալ լատիներենից թարգմանել է «Յաղագս մարդկային հոգւոյն և հրեշտակաց»։

Միայն մի ձեռագիր ունինք, հավանորեն, նորա կյանքի վերջին ժամանակներում գրված, առանց թվականի, բայց ծաղկագարդված միջակ արվեստով, որ մեփականութ/իւն էր նյութ/որքաբնակ, հնահավաք և գորգավաճառ

---

[14] Առաքել Դավրիժեցի, էջմիածին, 407—409 և շար.։

[15] Բարգեն կաթողիկոսի ցուցակ հայ ձեռագրաց մատենադարանին հայոց ի Ղալաթիա (Կ. Պոլիս), թ. 128, եր. 958, անտիպ։

[16] «Ի գրոց պատճառաց Արիստոտէլի կամ որպէս ոմանց թուի Պրոկղի», Բարգեն կաթողիկոսի ցուցակ ձեռագրաց, մատենադարան կիլիկիո կաթողիկոսարանի, ի Ղալաթիա, թ. 89, եր. 605։

[17] Չեռ. էջմ., թիվ 1524/1549։

պրն. Պարուլրյանի, որ ցույց է տալիս, թե գրչության հետ յուրացրել էր և ծաղկողությունը։

Այդ ձեռագիրը պատարագի խորհրդատետր է, այն էլ ոչ ամբողջությամբ մեր ձեռքը հասած։ Ճիշտ ժամանակը որոշել չենք կարող, բայց հավանորեն գրված պիտի լինի 1668 թվից հետո յուր և ժամանակակից հիշատակարաններից դատելով և 1686 թվից առաջ, երբ տպագրվեցավ Եղիազար կաթողիկոսի ժամանակ խորհրդատետրը Վենետկում։

Տալիս ենք այստեղ նախ Ստեփանոս Իլովացու ինքնաձեռագիր հիշատակարանը (պատկ. 1, 2), (պատկ. 119, 120), մի երես սկզբնազարդով յուր մանրանկարչական տատերի սկսվածքով ապա լուսանցքում նկարված մի վեցթևյան սեռովբև, նորա արվեստի մասին գաղափար կազմելու (պատկ. 3) (պատկ. 121)։ Սկզբնազարդը լավ է, բայց ոչ առաջնակարգ, իսկ վեցթևյանը յուր դիմքով գեղեցիկ։

Եթե նորա նախընթաց հիշատակարանները փաստ չեն տալիս կամ հիշատակությունն նորա նկարիչ լինելու մասին, այս երկու մանրանկարները հաստատուն ապացույցն ունին ոչ անկարելիության և նկարիչ լինելու մասին։ Համենայն դեպս երկոտասան առաքյալների պատկերների Ստեփանոս Իլովացու գործ լինելու միակ վկայությունը մնում է Շահխաթունյանը, որ սկզբնական աղբյուր չէ։ Բայց նրանք գործերը չեն և Նաղաշ Հովնաթանի, որովհետև նորանից առաջ հիշատակված են Սիմեոն կաթողիկոսի Ցուցակի մեջ, որ կազմված է «Ի Մին թուղս և ի յօգ/ո/ստ/ո/սի ԺԳ գրեցաւ» (պատկ. 4, 5, 6), (պատկ. 122, 123, 124)։

Գ

Իրողություն է, որ տաճարի մեջ եղած բոլոր պատկերները Նաղաշինը չեն, հատկապես երկոտասան առաքյալների պատկերները, Ավետող հրեշտակի և Մարիամի (պատկ. 7, 8), (պատկ. գուն. VI), Գաբրիել և Միքայել հրեշտակապետներինը (պատկ. 9,10), որ իրենց կարգին երկու տարբեր վրձինների գործեր են, առաքյալներինը մի և մնացածը երկու կամ երեք տարբեր նկարչի գործեր, եվրոպական ազդեցությամբ։ Կան և ուրիշներ, բայց ասել չենք կարող, թե էջմիածնո՞ւմ են նկարված, թե պատրաստ ներս բերված (պատկ. 11, 12), (պատկ. 125)։

Ինդրի պարզաբանության համար ստիպված ենք միջանկյալ մի բացատրություն տալ։ Ժէ դարի քսանական թվականներից եվրոպական՝ արևմտյան արվեստի ազդեցության մի մեծ հոսանք է գալիս դեպի Հայաստան։ Երեք քաղաքներ, հատկապես, արտաքո կարգի դեր են կատարում այդ ուղղությամբ։ Լվով, լեհացիներից այդպես կոչված, իսկ գերմանացիներից Լեմբերգ, Վենետիկ և Ամստերդամ։ Հայ գաղութներից ամենից նշանավորը յուր բազմամարդությամբ և կատարած դերով Լվովն է, որ մինչև այժմ ծանոթ էր առավելա-

պես Նիկոլ Թորոսովիչի, այդ չէք Ալիսկոպոսի Հայաստանեայց Եկեղեցու գեմ դավաճանող և ազգակործան ընթացքի պատմութիւնամբ, մասամբ լուհական իշխանութեան կողմնակալ հովանավորութիւնամբ, բայց առավելապես Հիսուսյանների ջանքերով։ Վենետիկն ու Ամստերդամն էլ որոշ դեր են կատարել այդ փոխանցման մեջ։

Արդեն խոսք եղավ Մինաս և Հակոբջան նկարիչների մասին. հատկապես, Մինասի, որ Հալեպում աշակերտել է եվրոպացի մի նկարչի. որմնանկարչության վերածնունդը ժէ դարում սկսվել է հենց այդ Մինասի ձեռքով. «Եւ վասն կարի առաւել վայելչակերտ գեղեցկատիպ չքնաղատես յօրինուածոյ արուեստին, մեծամեծքն Ջուղայեցւոց տանէին ի ծաղկել և ի պատկերագրել զյարկս ապարանից և տանց իւրեանց. այսպէս և խոջայ Նազարի որդի խոջայ Սարգսն տարեալ ի տուն իւր առ ի զարդարել զապարանս իւր ծաղկօք և պատկերօք»[18]։ Եվրոպացի ճանապարհորդներն իսկ տալիս են տեղեկություններ այս մասին։ Նրանց պատերը զարդարված էին ոչ միայն պարսկական ոսկորդական կամ սիրահարական կյանքից առնված պատկերներով. այլև մերկ պարանոցներով և կուրծքերով կանանց, եվրոպական ճանապարհորդներն իսկ գայթակղեցնելու աստիճան։ Հանգուցյալ նկարիչ Սարգիս Խաչատրյանը վերականգնել է այդպիսի ապարանքներից շատ մնացորդներ, որ հատուկ ուսումնասիրություններով, գուցե, կարելի լինի պարզել և ճշտել ապարանքների տերերի և նկարիչների անունները։

Նոր հոսանքը ամենից ավելի նկատելի է Աստվածաշունչների պատկերագրության մեջ, որի առաջին և շատ շքեղ օրինակն է էջմիածնի № 179/351 Ղազար Բաբերդացու Աստվածաշունչը, որ նկարազարդել է տվել Լվովում 1519 թվին։ Սորա ընդօրինակություններ ունինք արդեն 1642 և 1649 թթ. Երուսաղեմի № 1933 և 1934, և էջմիածնի № 189 Աստվածաշունչները։ Առաջինը և վերջինը հատուտ Հայրապետ նկարչի ձեռքով. նույն Հայրապետի գործն է և № 9—8 18/2587, հետևողությամբ Բաբերդացու պատկերագրության 1648 թվին, գրչությամբ Աստվածատուր գրչի Շոշ քաղաքում, Փիլիպպոս կաթողիկոսի ժամանակ։ Հայրապետ նկարիչը Նոր Ջուղայի նշանավոր խաչատուր վարդապետի աշակերտն էր, իսկ սա Մովսես կաթողիկոսի, որի նվիրակն էր նա Լեհերգում 1629—31 թթ.[19]։ Համոզված ենք, բայց հատատուն փաստեր դեռ պակասում են մեզ, թե Ղազար Բաբերդացու Աստվածաշնչի պատկերագրությունը արևելք է փոխադրվել այս խաչատուր վարդապետի ձեռքով։ Էջմիածնի № 201 Աստվածաշնչի հիշատակարանի մեջ, գրված 1660 թվին, ստացողն է Հոհաննես վանքի նշանավոր առաջնորդ Զաքարիան, Մովսես կաթողիկոսի աշակերտ, նկարչությամբ «վարպետաց վարպետ Հայրապետի». այստեղ խա-

[18] Դավրիժեցի, եր. 610։

[19] Դավրիժեցի, եր. 371, 398 և 402։

Հատուկը կոչված է «կենդանագրող, քաջ քարտուղար և աստուածաշարդ վարդապետաց վարդապետ»։ Համենայն դեպս մեզ համար կարևոր է այն իրողությունը, որ վերը հիշված Հայրապետ նկարիչը 1642, 1643 և 1649, 1660 թթ. օգտագործել է Ղազար Բաբերդացու Աստվածաշնչի պատկերագրությունը, իսկ սորա Աստվածաշնչի պատկերագրությունը գրեթե ամբողջապես առնված է եվրոպական նկարիչների և փորագրիչների գործերից։ Մենք կարող ենք մատնանշել օրինակ Դյուրերի Հայտնության պատկերագրությունը, որ ըստ լեհացի գիտնական Մայակովսկու առնված է Լվովի նկարիչ Zian Le-ից, իսկ սա էլ օգտվել է Դյուրերին հետևողների գործերից, հատկապես Gerardi de Jode-ի 1588 թվին հրատարակած գունազարդ albomից։ De Jode-ն էլ յուր հերթին օգտվել է ըստ Մարտին Cos-ի Հերոնիմոս Winke-ի փորագրություններից։ Վինկեն (1531—1603) ապրում էր Անտվերպենում։ Բայց Ղազար Բաբերդացու պատկերները միայն Դյուրերից չեն առնված, այլ օգտագործված են և ուրիշների գործեր։

Բայի Ղազարից, կան և պատկերների ուրիշ խմբագրությամբ Աստվածաշունչներ՝ Վոլսում և այլուր պատրաստված եվրոպական ազդեցությամբ։ Գեղարվեստական և մտավոր շարժման մի մեծ խնդիր է այս մեր պատմության մեջ, որ դեռ լուսաբանված չէ։ Այս շարժման մի օղակն է և Ոսկանի Աստվածաշնչի պատկերագրությունը Ամստերդամում 1666—8 թ., որ առնված է հոլանդական Աստվածաշնչից։ Ոսկանից առել է Մխիթար Աբբան։ Աստվածաշունչների պատկերագրության այս խնդիրը առանձին աշխատություն է, ըստ կարելվույն ուսումնասիրված մեր կողմից. հուսանք, թե պիտի հաջողվի մատչելի դարձնել բանասիրության։ Այսքանն էլ հիշեցինք պարզելու էջմիածնի պատկերագրման և ծաղկման երևույթի ծագումը։

Դ

Առաջին հատատուն տեղեկությունը էջմիածնի տաճարի պատկերագրության և ծաղկման մասին կապված է Աստվածատուր կաթողիկոսի (1715—1725) անվան հետ, որ տալիս է մեզ Սիմեոն կաթողիկոսը յուր Ջամբռի մեջ. «Սա զարդարեաց զմէջն մեծի տաճարիս, զի շինեաց և զսուրբ իջման տեղն մարմարեայ քարիւ ի վերայ չորից սեանց, և ծաղկեցոյց ոսկւով և պէսպէս երանգօք և արար զարմանալիս տեսողաց։ Նմանապէս և զճակատ մեծի սեղանոյն (բեմի ճակատը) արար մարմարեայ (կետրոնում Մայր Աստվածածին, Հիսուսը գրկին (պատկ. 14), (պատկ. 126) երկու կողմից առաքյալների շարքը, իսկ ծայրերից Առեփանոս և Փիլիպպոս նախասարկավագները (պատկ. 15, 16)։ Ուշադրության արժանի այս վերջինների հանդերձանքը), սպիտակացոյց բամբ և ծաղկեաց զբոլոր տաճարս ի միջոյ կողմանէ[20]։

---

20 Ջամբռ, եր. 28։

Այս մասին վկայում է և Ղուկասի կենսագրողը, թե նա բռածեփել է տաճարի ներսը, «և պատկերագրեցան ի տեղիս տեղիս և անհեթեթ ծաղկեցան» (Բ(Կ)Դ թվին, իսկ Ղուկաս կաթողիկոսի ժամանակ ջուրը ներս ծծվելով տանիքից, «զբռածեփս և զծաղկունսն դիջացուցանելով, ի վայր թափէին»[21]։

Մեզ թվում է, թե Ղուկաս կաթողիկոսի Գավազանագրքի տեղեկությունները Աստվածատուր կաթողիկոսի նկարազարդումի և ծաղկազարդումի «անհեթեթ» որակումը մի քիչ խիստ է. արվեստի ուսումնասիրությունն ու համեմատությունները ցույց են տալիս, թե իրենց տարբերությամբ հանդերձ Աստվածատուր կաթողիկոսի գործերը գեղեցկությամբ պակաս արժեքավոր չեն։ Թևպետ իշման սեղանի պատկերագրության համար ևս Գավազանագիրքը հայտնում է, թե Ղուկասը «նոր ի նորոյ վերստին ներքոյ և արտաքոյ պատկերօք և ոսկեզօծ ծաղկօք և երանգ երանգ գունով շքեղազարդել եաս, հիանալի տեսողաց», բայց ոճերի տարբերությունը Նաղաշ Հովնաթանի ծաղկազարդումից, ցույց է տալիս, որ նորոգության խնդիր է եղել և ոչ «նոր ի նորոյ» նկարչություն։

Գմբեթի միջի ծաղկազարդումը քիչ նմանություն է բերում բեմի ճակատի արվեստին յուր նոճիներով, բայց բոլորովին տարբեր վրձինների գործ. մենք դիտենք, որ գմբեթի ներսի ներկա ծաղկազարդումը (պատկ. 17), (պատկ. գուն. VII) Նաղաշինն է, որովհետև նրանից առաջ պատկերագրված էր այդ մասը քսաներեք տնօրինակներով և ոչ ծաղկազարդումով[22]։ Նույն նոճիները կրկնված են նաև արևմտյան խորանի առաքելոց պատկերների շուրջը, մեջմեջ, որ Սիմեոն կաթողիկոսի Յուցակի համեմատ, շարված էին արևմտյան աբսիդի կիսաբոլորակում, ինչպես էին մինչև մեր ժամանակները։ Այդ մասամբ պարսկական ազդեցություն էր, որ ընդհանրապես երևում է տաճարի ծաղկազարդման մեջ, Հովնաթանի և սորանից առաջ եղած շրջաններում։ Ընդունում ենք, որ տեղ-տեղ բոլորովին փչացած կարող էին լինել և էին, և նորոգված Հովնաթանի ժամանակ, բայց իրողության համապատասխան չէ «անհեթեթ» անվանել Աստվածատուրի ծաղկազարդումը, նորա ժամանակ կատարված գործը, մնացորդներից դատելով, ինչպես բեմի ճակատի պատկերագրությունն է և ծաղկազարդումը կամ Իշման սեղանի գմբեթի վերա մնացած մասերը։ Մեջ ենք բերում Գավազանագրքի այդ մասը, ժամանակակից վկայությունը իրենից լսելու համար.

«Ես յետ երկուց սեանցն իւրակերտից (Ղուկասի), սկսաւ զբոլոր եկեղեցւոյ վերնակառոյց կամարաց և կամարամիջաց և սեանց և այլ շրջապատ որմոց եղծեալ և ապականեալ և ի մոխիր դարձեալ հնագոյն բռածեփսն, այսինքն գաճան, ի սպառ քակել տալ, և ոչ թողուլ նշմարանք ինչ հնագոյն գաջից և եղծեալ անհեթեթ ծաղկալից, սկսեալ ի մեծ կաթուղիկէէն գմբեթա-

[21] Արարած, 1901, եր. 327։

[22] Սիմեոն կաթողիկոսի Յուցակը և Արարած, 1901, եր. 330։

մէջ կատրոնկն մինչև ի ստորին յատակն եկեղեցւոյն՝ հանդերձ ամենայն խոյրանօք և բեմիւքն, բաց միայն զքանի մի հնագոյն պատկերս մնացին. զայնս ևս ի բաց առին ի տեղացն, առ ի նորոգել»։ Մի քանի տող հետո՝ Ղուկասի կենսագրողը ավելացնում է, որ կիսատ էր մնացել Աստվածատուր կաթողիկոսի գործը «վասն վրդովմանց և պատերազմացն որ ի մէջ Պարսից և Տաճկաց» անկարող լինելով վերջավորել յուր նորոգութեան գործը[23]։ Բարեբախտաբար պահված է Աստվածատուր կաթողիկոսի արձանագրությունը գմբեթի ներքնամասի բոլորակի վերա, որ ավելի ճիշտ տեղեկություն է տալիս կատարված գործի մասին. «Ի թուականութեան հայկական ՌՃԿԹ (= 1720) ես տէր Աստուածատուր Համատանցի կաթողիկոս ամենայն Հայոց, ետու նորոգել զկորնսին խախտեալ սիւնքն սրբոյ եկեղեցւոյս և զբոլոր եկեղեցին նորոգեալ և ծաղկեալ հանդերձ մարմարոնեայ շինուածովք, որ ի մէջ սրբոյ եկեղեցւոյս են, յիշատակ հոգւոյ իմոյ, ի վայելումն տառապեալ ազգի Հայոց և աստ ի սուրբ աթոռս զնեղեալ միաբանից, և որք ընթերնուք զարձանս զայս, յիշեցէք զիս ի մաքրափայլ յաղօթս ձեր, և դուք յիշեալ լիջիք առաջի Քրիստոսի, ամէն»[24]։ Սիմեոն կաթողիկոսը, որ լավ տեղյակ էր էջմիածնի պատմության, նշանակում է, թե «ծաղկեաց զբոլոր տաճարս ի միջոյ կողմանէ»[25]։

Աստվածատուր կաթողիկոսի ժամանակ է շինված և ավազ սեղանի խաչկալը փայտակերտ, քանդակներով, Զմյուռնիա քաղաքի Աբրահամ ամիրայի, քահանաների, ժողովրդի և վաճառականների ծախքով, Սիմեոն Երևանցու Նվիրակության ժամանակ[26], որ քանդվեցավ Խրիմյանի ժամանակ։

Սիմեոն կաթողիկոսի ցուցակի մեջ հիշատակություն ունինք այն պատկերների, որոնք խաչկալի մաս էին կազմում. «Ա. (մի) պատկեր Աստուածածնի, յորոյ վերին կողմն է երրորդական պատկեր. Բ. (երկու) պատկերք ևս՝ յորոց մինն է աղօթիկ Տեառն՝ յՈւրբաթ գիշերին և զօրանալն ի հրեշտակէն, և մինն է իջուցանելն ի խաչէն. են այսք յաջմէ և յահեկէ աւագ խորանին ի մէջ խաչկալին։

Բ. (երկու) պատկերք մեծին Ներսիսի և Նիկողայոսի հայրապետացն, որք են իբրու զրունք, ներքին զրանց մեծ խաչկալին։ Բ. երկու պատկերք՝ Աւետեաց՝ մինն հրեշտակին և մինն Սբ. Աստուածածնին, որք ևս են իբրու զրունք վերին զրանց մեծ խաչկալին»։

Շահխաթունյանի ժամանակ փոխված են խաչկալի դռների պատկերները, որ Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալներն են, ուրեմն և, հավանորեն, Հովնաթանի շրջանի պատկերներ, որ պահված են մինչև մեր ժամանակները[27]։

---

23 Արարատ, 1901, եր. 128։
24 Համ. Շահխաթունյան, եր. 392։
25 Չամրճ, եր. 28։
26 Շահխ., եր. 41—42։
27 Շահխ., Ա, եր. 42։

Աստվածատուր կաթողիկոսի ժամանակ է շինված և ավագ դասի հայրապետական աթոռը 1721 թվին (պատկ. 19)։ Ներքևի մասը զարդարված գաղտակուրի (սադաֆի) ծաղկավարդերով, արևելյան ոճով, իսկ վերևի գմբեթը բուլորովին տարբեր՝ արևմտյան յուր գմբեթի ձևով և արձանիկների շարքով։ Ներձանագրությունը և նվիրատուները տե՛ս Շահխաթունյանի մոտ[28]։ Գաղտակուրի զարդարանքների նման ոճով են շինված և՛ աջ, և՛ ձախ ավանդատան դռները, նույն թվականին (պատկ. 21, 22)։ Միջին դասի հայրապետական շքեղ աթոռը համարվում է Նահապետ կաթողիկոսի ժամանակ ստացված։ Ոճը հայկական չէ, բայց գեղեցիկ է. պահված է էջմիածնի գմբեթների արտաքին դասավորությունը, որ ձևակերպվեցավ Եղիազար կաթողիկոսի ժամանակ։

ՙՀ

Աստվածատուր կաթողիկոսի հաջորդն էր Կարապետ Ջևլիունցին, որի համար Չամբռի հեղինակը գրում է. «Սա եւ նկարել զպատկերս երկոտասան առաքելոցն ի ճակատ աւագ խորանին և եւ ծաղկել ոսկեզօծ և գեղեցիկ գունօք»[29]։ Այս տասներկու առաքյալների պատկերները չափազանց շփոթել արևմտյան խորանի մեջ գետեղված առաքելական պատկերների հետ, վերագրված Ստեփանոս Լեհացուն։

Ջ

Աբրահամ Մշեցին (1730—1734), ըստ Չամբռի հեղինակի մեկն էր էջմիածնի պատկերագրման և զարդագրման մեծագույն մեկենասներից. «Եւ սա էր այր առաքինի և ճգնազգեաց, հեզ և բարեբարոյ, աղօթասէր և ոտնակատար։ Որ ի մէջ տաճարիս զառաջնոյ դասի երկուս սեղանսն կառոյց և անուանեաց սուրբ Յակոբ և սուրբ Լուսաւորիչ։ Զորս և զարդարեաց ծաղկօք և մարգարէական պատկերովք։ Եւ զամենայն պատկերսն՝ որք գոն ի յորմունսն և ի սիւնսն տաճարին նա եւ նկարել»[30]։ Սա մի կարևոր ցուցում է Աբրահամ կաթողիկոսի արվեստասեր ոգու մասին, որ մինչև այժմ ուշադրության չէ արժանացել։ Սիմեոն կաթողիկոսի ցուցակի ութսունութ պատկերների կարևորագույն մասը ուրեմն, սորանն է, հաստատուն բացառությամբ Պետրոս Քյություրի և Սիմեոն կաթողիկոսի նկարել տված ծածկերից, որոնց մասին խոսք կլինի։

Ուշադրության արժանի է, որ միաժամանակ հայ եկեղեցու երեք մեծ աթոռների ներկայացուցիչները՝ Գրիգոր Շղթայակիր Երուսաղեմի, Հովհաննես Կոլոտ կ. Պոլսի և ավելի ուշ՝ Աբրահամ կաթողիկոսը՝ էջմիածնի գեղարվեստական մեծ գործունեություն են ցույց տալիս, կարծես, բարի մրցակիցներ։

---

[28] Անդ, եր. 40—45։

[29] Չամբռ, եր. 28։

[30] Անդ, եր. 30։

Հանդիսանալով միմյանց։ Երուսաղեմի մեջ արվեստի արժաքավոր մնացորդները՝ ոսկերչության, ասեղնագործության, եկեղեցական զգեստավորության, հանճապակյա անոթների, փայտագործության և պատկերագրության գլխավորապես Շղթայակրինն են, բայց մաս ունի և Հովհաննես Կոլոսը[31]։ Իսկ էջմիածնում տաճարի պատկերագործության զարդարողն է Աբրահամ կաթողիկոսը։ Երեքն էլ հոգևկից աշակերտներ Վարդան Բաղիշեցու։

Մենք տեսնում ենք մինչև իսկ պատկերագրական հղացքի և սեղանների նվիրագործման նմանութիւններ, Աբրահամ կաթողիկոսն է շինել, Ս. Հակոբի (Տեառնեղբոր) սեղանը, որի գլխավոր պատկերն էր «բերել հրեշտակին զգուխ արջոյն Յակոբայ առաքելոյն առ սուրբ Աստուածածինն և առաքեալն, ի վերոյ ևս պատկեր երրորդական» ըստ Սիմեոն կաթողիկոսի Յուցակի։ Նույն բովանդակությունն ունի մոտավորապես Երուսաղեմի Գլխադրի ասեղնագործ վարագույրը, միայն առանց առաքյալների պատկերագրության։ Երուսաղեմի գործը սքանչելիք է, պատկերագրությունը եվրոպական ազդեցությամբ, իսկ Ծաղկավորումը՝ արևելյան[32]։

Լուսնիներ Ս. Հակոբի սեղանին հիշված են յոթը պատկեր, ութերորդը նկարել է տվել Սիմեոն կաթողիկոսը, որ Աստվածածնի պատկերն է «Մեծ՝ զարեգական արկեալ վիրաւ՝ և ղուսինն ընդ ոտիւք» «զոր սրբազան Սիմէոն կաթողիկոսն ետ նկարել», գտնվում էր առաջին դասի Տարավարին պատի վերա։ Մնացած յոթը պատկերներից մեկն էր «Պատկեր սրբոյ Կարապետին, որ է ի մէջ ճաճանչաւոր բլրկի, և շուրջ դիրեւ բլր/ա/կք իբ, յորս եւ սուրբ Կարապետի ծնունդն, ի յանապատ փախչիլն, անդ սպանիլն, և այլ ո/ր/պ/ի/սս/ք/ի/ւնքն մինչև ցմահն և թաղումն, և բերիլն նշխարացն ի Հայս։ Է այս յոյժ մեծագոյն»[33]։

Հայ եկեղեցու որմնանկարչության կամ մանրանկարչության մեջ ավանդական էր զարձած որոշ սրբերի կյանքի հետ կապված պատկերագրական խմբակցություններ կազմել միևնույն անձի կամ շրջանի հետ կապված (sycle). այսպես էր Լուսավորչի, Հովհաննես Մկրտչի, Հակոբոս Տյառնեղբոր կյանքի հետ կապված պատկերագրական խմբակցությունները, ինչպես և մարգարեների և առաքյալների դասերի։ Լուսավորչի կյանք՝ց ունինք այդպիսի մի

---

31 Հետզհետե պարզաստվում է և ապա գրվում հայ մանր արվեստի վերաբերյալ մի աշխատություն, կազմված էջմիածնի, Երուսաղեմի, Կիլիկիո Աթոռների մեջ և այլ վայրերում պահված տուիլյան, կազմված էջմիածնի, Երուսաղեմի, Կիլիկիո Աթոռների մեջ և այլ վայրերում պահված տուիլյան համար։ Երուսաղեմի մնացորդներից, որ բավական նորություն պիտի բերե արվեստի և պատմության համար։ Երուսաղեմի մնացորդներից, որ բավական նորություն պիտի բերե արվեստի և պատմության համար։ Երուսաղեմի պատկերագրության մասին տե՛ս մեր հոդվածը, «Գեղարվեստի» վերջին համարներից մեկի մեջ (Լեոնյանի)։

32 Տե՛ս մեր հոդվածը «Մանր արվեստի օրինակներ Երուսաղեմի վանքից», «Պայքար» (Տարեգիրք), 1950։

33 Աբրահամի շինարարության մասին, Շահխ., եր. 33։

ցիկլ Անիում՝ Հոնենց Տիգրանի Լուսավորչի եկեղեցու պատերին, որ 1920 թվին նույնությամբ արտանկարել ենք տվել Թարխաւարյանի ձեռքով, և այժմ պահվում է Երևանի թանգարանում։ Հովհաննես Մկրտչի համար տեսանք չիշ առաջ։ Իրողությունը հաստատվում է և կոնդակների զարդագրության մեջ։ Երուսաղեմի մեջ պահված է մի կոնդակ, որ հրատարակել է Սահակ Ծ.վրդ. Այտընյանցյան, Մշո Ս. Կարապետի մի վանահոր կողմից գրված, որ զարդարված է Հովհաննես Մկրտչի կյանքի պատկերներով[34]։ Ահա այսպիսի մի խմբակցություն է նաև վերև մեջբերված նկարագրությունը Սիմեոն Կաթողիկոսի Յուցակի համեմատ, Հովհաննես Մկրտչի կյանքի հետ կապված։

Լուսավորչի խորանի պատկերագրությունը ըստ Յուցակի, նույնպես համարում ենք Աբրահամ կաթողիկոսի գործ, ինչպես և խորանի շինությունն է։ Ս. (մի) «Պատկեր տէրունական բազմեալ յաթոռ քառակերպական, և ի ներքոյ պատկերք սուրբ Լուսաւորչին և սուրբ Կարապետին»։

Գ. (երեք) պատկերք Սբ. Լուսաւորչին՝ մինն մեծագոյն յոյժ, և Բ-քն քան զայն փոքր, բայց մեծք։ Ի մէջ երկուցն և բժշկելն զՏրդատ արքայն, իսկ ի միումն ինքն միայն է։ Յերիսն ևս են չորեքտասան չարշարանքն իւր ի մէջ բոլորակաց շուրջ զիրեւս։

Ա. (մեկ) պատկեր սուրբ Հռիփսիմյա կուսին, խաչափայտն ի յուսն և Տրդատ արքայն ընդ ոտիւքն»[35]։

Է

Ս. Ստեփանոսի խորանի մեջ ըստ Յուցակի հիշված պատկերները փոխված են Նաղաշի շրջանի գործերով, որ հայրապետների պատկերների շարքն էր (պատկ. 24, 25, 26) և վար առնվեցան Խրիմյանի ժամանակ, սեղանի տեղն էլ փոխվելով արևելք։ Այդ պատկերները պետք է փոխադրված լինին Երևան. երանի թե հետ բերվին էջմիածին և այնտեղ նյութ դառնան զուտ եկեղեցական թանգարանի կազմության։

Նույնը կատարվեցավ և Հովհաննու Մկրտչի սեղանի մեջ։ Այդ խորանի պատկերները Աբրահամ կաթողիկոսի՞, թե այլ ժամանակի գործեր էին, հատուտ ասել չենք կարող։ Բայց հավանական ենք համարում ուրիշինը լինելը, որովհետև, կրկնությունն է մասամբ Ս. Հակոբի սեղանի պատկերագրության։

Համենայն դեպս հետին դասի արևմտյան խորանի, տասներեք պատկերները՝ տասներկու առաքյալները (պատկ. 4, 5, 6), (պատկ. 122, 123, 126) Թոմայի Թերահավատության պատկերի հետ, ինչպես հիշել ենք, Նաղաշինը չեն

---

[34] Պատկերացոյց Հաւաքածոյ, պրակ Բ, Երուսաղեմ, 1913, կոնդակի պատկերը, եր. 48։

[35] Հռիփսիմեի նկարը կա այժմ հյուսիսային դռնից բարձր պատի վերա, բայց առանց Տըրդատի, ասել է, թե նույն չէ վերև հիշված նկարի հետ, այլ Նաղաշի շրջանի գործ է։

և հիշված են նաև Յուցակի մեջ, որ ըստ Շահխաթունյանի Ստեփանոս Իլովցուն էին վերագրվում։

Արեւմտյան խորանից վեր և արեւմտյան պատի վերայի տասներկու առաքյալների պատկերները Հին և Նոր Կտակարանի տեսարաններով, որ հիշված են Յուցակի մեջ, ինչպես և Հյուսիսային դռան գլխի պատկերները, որոնց մեջն էր կամավոր աղքատ Ալեքսանիոս և Փիլիպպոս կաթողիկոսի պատկերները, որոշ չափով փոխված պիտի լինին Հովնաթանի ժամանակ։

Հարավային դռան գլխին ըստ Յուցակի կախված էին վեց պատկեր, ապա սրանց հետ Պետրոս և Պողոս առաքյալների մեծ պատկերները և առջևներ Պետրոսի գլխիվայր խաչվիլը և Պողոսի գլխատումը, հավանորեն այս վերջինները, «յ/ի/շ/ա/տ/ա/կք Քիւթիւր Պետրոս վ/ա/րդ/ա/պ/ետ/ին»։ Նաղաշ Հովնաթանի ժամանակ որոշ փոփոխություն պիտի կատարված լինի այստեղ, որովհետև այդտեղ էր և Մարկոս, ճգնավորի պատկերը հարավային պատին, որի մերկությունը ծածկված էր մինչև ոտները հասնող մորուքով, իսկ այդ պատկերը չկա Յուցակի մեջ, ասել է, թե Հովնաթանի ժամանակ էր նկարված։ Եթե չենք սխալվում, այդտեղ է Նեջումն Կուսին, իբրև Հովնաթանի գործ (պատկ. 42), (պատկ. 129)։

Արդեն հիշեցինք, որ գմբեթի կամ կաթողիկեի միջին մասը նկարազարդված էին Աստվածատուր կաթողիկոսի ժամանակ քսանևերեք պատկերներով, որոնք ամբողջապես փոխված են Նաղաշ Հովնաթանի ձեռքով Ղուկաս կաթողիկոսի ժամանակ և ներկա ձևն ստացած։

Սիմեոն կաթուղիկոսի կողմից ավելացած է և մի պատկեր ևս. «խ/ո/ր /ա/ն/ա/ձև, որ եդեալ է ի գլուխ մեծի դրան ս/ր/բ/ո/յ տաճարին յարտաքին կողմն, որ է իջումն միածնին ի ս/ուր/բ տաճարս այս՝ և պ/ատ/կ/ե/րք հօր Աստուծոյ և հոգւոյն ս/ր/բ/ո/յ, նաև ս/ուր/բ լուսաւորչին և խորհրդածու հրեշտ/ա/կին և Տրդատայ, և թիւ նորին և կնոջն և այլոց բազմաց, և ձեւք ս/ր/ս/ո/յ տաճարիս և ս/ր/ս/ո/ց վանօրէիցն Հռիփսիմե/ա/յ և Շողակաթին։ Զոր ս/ր/բ/ա/զ/ա/ն Սիմէոն կ/աթ/ո/ւղ/ի/կ/ո/սն ետ նկարել նոր /ա/պ/ի/ս, դի առաջինն հնացե/ա/լ և փտեալ էր»։ Այս խմբակցությունը գեղարվեստական այլևայլ ստեղծագործության նյութ է դարձել, ոսկերչության, ասեղնագործության և պատկերագրության, էջմիածնի հետ կապված։

Սիմեոն կաթուղիկոսի ժամանակ պատկերների «զամն է ութսուն և ութ» որ ցուցակագրված է ՌՄԻԵ թուոջս և ի յօգ/ո/ստ/ո/սի ԻԵ գրեցաւ»։

Ը

Գեղարվեստասեր կաթուղիկոսների շարքում պետք է հիշել և Ղազար Ճահկեցին. թեպետ նա տաճարի նկարազարդությամբ չի զբաղվել, բայց նա է շինել ներկա կաթուղիկոսարանը։ Մեզ հետաքրքրում է ոչ այնչափ շինքը, որքան նորա «ծաղկեայ դահլիճ»-ը և կից սրան հարավային կողմից կաթու-

ղիկոսների աշխատության անվյակը, երկուսի առաստաղները և մասամբ պատերն էլ ծաղկազարդված շատ նուրբ արվեստով (պատկ. 27, 28)։ Այս ծաղկազարդումը մենք վերագրել ենք Աստվածատուր կաթողիկոսին, որ սկսել է Գևորգ Չ-ի ընտրության ժամանակ, երբ էջմիածին էինք գնացել, կամեցանք գունազարդ արտանկարել տալ նորա մասերը, բայց հաղիվ կարողացանք «ծաղկեալ դահլիճ»-ի առաստաղի կետրոնական վարդյակը վերջավորել երիտասարդ նկարիչ Ավետիք Դեղամյանի ձեռքով (պատկ. 29)։

Թ

Էջմիածնի տաճարի վերջին և ամենամեծ նկարազարդումն ու ծաղկազարդումը կատարված է Ղուկաս կաթողիկոսի ժամանակ՝ Նաղաշ Հովնաթանի ձեռքով։ Ղուկաս կաթողիկոսի Դավաղանագիրքը, ակնառու և ժամանակակից մարդու ձեռքով գրված, մի կարևոր աղբյուր է մանրամասն տեղեկություններով լի, գործի կատարման մասին։ Այստեղ տեսնում ենք, թե Ղուկաս կաթուղիկոսը ինչպիսի՞ բարեխղճությամբ է մոտեցել գործին. Սիմեոն կաթուղիկոսն արդեն յոթ կյանքի վերջին տարիներում մահահոգված էր տաճարի նորոգության խնդրով, նա նորոգել էր տանիքը և ապա ձախակողմյան երկու սյուները «ի ձեռն քաջավարժ ճարտարապետի Սահակ կոչեցելոյ և մինչ կամէր երանելին զմնացեալսն ևս նորոգել», վրա է հասնում մահը[36]։ Ղուկաս կաթուղիկոսը շարունակում է այս նկերքին նորոգությունը աջակողմյան երկու սյուների՝ Դասպար ճարտարապետի ձեռքով։ Ապա նորոգել է տալիս կամարների և նրանց մեջ եղած առաստաղների բոլոր մասերը, «և ոչ թողուլ նըշմարանք ինչ ի մեծ կաթուղիկէի գմբեթամէջ կեդրոնէն մինչև ի ստորին յատակն եկեղեցւոյն, հանդերձ ամենայն խորանօք և բեմիւքն, բայց զքանի մի հնագոյն պատկերս մնացին. զայն ևս ի բաց առին ի տեղացն առ ի վերանորոգել»։ Հետաքրքրական են տեղեկությունները, թե ինչպես հին բրածախների քանդելուց հետո՝ երևան են գալիս, մանավանդ հետին դասի կամարների «ի վաղնջուց ժամանակաց քակեցեալ տեղիքն և հնագոյն բեկբեկեալ և ջախջախեալ քարինքն և երկիւղալի փուխինքն..., որք ի սպառ փշրեցեալք էին և մեծամեծ քարինքն ի տեղացս իւրեանց ի բաց ոտեցեալք», որ նորոգվում են նույնիսկ կաթողիկոսի աված խորհուրդներով։

Այսպես, պատերն ու կամարները, առաստաղները նորոգելուց և «արծաթափայլ սպիտակութեամբ» բռածախելուց հետո՝ անցնում է ծաղկազարդման և պատկերագործության, նախապես նվիրակների ձեռքով հոգալով, «ղերանգ երանգ և զոգագին դեղորայս և զոսկեայ վարագս մաքուրս ի չեալտուզոյ (ոսկուց)». իբրև նկարիչ կանչում է «ամենայն գովութեանց արժանի և յոյժ անուանի Շօռօթեցի գեղեցկանկար և քաջավարժ Յովնաթանեան շնոր-

[36] Արարատ, եր. 328։

հալի պատկերահան և ծաղկատար վարպետն, որ ի Թիֆլիզ բնակէր», աշակերտների հետ։

Գավազանագրքի հեղինակը նկարագրում է նույնպես սանդուղների պատրաստության մանրամասնությունը՝ «հնարագէտ և ճարտար» Պետրոս և Գաբրիել հյուսների ձեռքով, խորանների կամարների և առաստաղների համեմատ։ Ապա «Աստուծով զօրացեալ Յովհաննան շնորհալին» նախապես պատրաստելով «զբռասմ էլդեցեալ օրինակն և նկարագիրն» ցույց էր տալիս կաթողիկոսին և նորա հավանությունն ստանալուց հետո՝ անցնում գործին։ Հիացմանարժանի է Ղուկասի կենդանի մասնակցությունն ու հետաքրքրությունը։ Հեղինակը տալիս է մեզ ծաղկազարդման ընթացքը կամարների և նոցա մեջ եղած տարածությունների մասերը համապատասխան միմյանց՝ աջ դասը ձախին, միջին և հետին դասերը միմյանց (պատկ. 30, 31 32, 33, 34, 35, 36)։ Այդպես էլ խորանների պատերն ու առաստաղները և որմերն ընդհանրապես, տաճարիս լուսամուտները՝ իրենց կամարներով (պատկ. 37, 38) «զուգահաւասար իւրաքանչիւր կամարքն և ճակատն և կողմունքն հանդէպ միմեանց համանման ընկեր առ ընկեր համահարազատ իրեարաց՝ խորան ընդ խորանացս, ծաղիկ ընդ ծաղկանց, հաշիւքն ընդ հաշիւիցս»։ Մենք արդեն հայտնել ենք, որ գմբեթի միջն նկիւնք ծաղկարարութիւնքը ամբողջապես նաղաշ Հովհաննէսի գործերն են, այդպես չորս այտների ճակատների ծաղկազարդումն ու պատկերագրությունը։

Այս մասին վկայություն ունի և Շահխաթունյանը, հիմնված Ղուկաս կաթողիկոսի արձանագրության վերա, որ գրված է գմբեթի բոլորակի վերա ներսից Աստվածատուր կաթողիկոսի աջձանագրության տակ։

«Ի թուին ՌՄԼԹ, շնորհիւն Աստուծոյ Տէր Ղուկաս կաթուղիկոսս վերստին նորոգել եաու զխախտեալ վերինս սիւնս սրբոյ տաճարիս. ապա և զբոլոր նորոգել եաու զխախտեալ ծաղկեցուցիչ հանդերձ խորմէջս սորին, որ անշքացեալ էր. նորապէս բռնալ ծաղկեցուցիչ հանդերձ խորհրդաւոր պատկերօք իմս գոյիւք ստացելովք ի յօրհնեալ ժողովրդոց մերոց ի յիշատակ ինձ և իմոցն ի վայելս աղգի Հայոց և միաբանից սրբոյ Աթոռոյս։ Արդ խնդրեմ ի վայելողացդ յիշել զիս յարժանահայց յաղօթս ձեր առ Աստուած յորմէ և զոյք յիշեալ լիցիք, ամէն»։

Տաճարի այս ծաղկազարդման և գորգագործության արվեստների մեջ տեսնում ենք մեծ աղերս։ Այդ նորույթն չէ մեր պատմության մեջ, որ նկատելի է մեր ձեռագրական զարդագրության մեջ՝ հնագույն ժամանակներից սկսած։ Հատկապես մենք մատնանշել կարող ենք Գագիկ Կարսեցու ավետարանի լուսանցքների զարդագրության մեջ։ Նույնիսկ այնտեղ արքայական գահույքի և թագավորական ընտանիքի ոտքերի տակ եղած փոմածքները աղերս ունին գորգերի արվեստի հետ՝ արևելյան ավելի հետու մոտիվներով։

Տարաբախտաբար նաղաշի բոլոր պատկերները որոշել և թվել չենք կարող, որովհետև չունինք հատուկ ցուցումներ այդ մասին. եղած տեղեկու-

թյունները շատ համառոտ են և ընդհանուր. դրանցից ոմանք նկարված էին կտավի վերա, և ոմանք որմանկարներ էին, թվով ավելի քան հարյուրքսան, «ըստ աւանդութեան, ըստ ծիսի և ըստ վայելչութեան Հայաստանեայց ուղղափառ եկեղեցւոյ», տնօրինական, հրեշտակների տասներկու առաքյալների, մարգարեների, հայրապետների, վարդապետների, ճգնավորների, կույսերի, թագավորների (որոնց մեջ Նչոյման Կուսին (պատկ. 42), Կոստանդին և Հեղինէ), վիճակորների և «գերահռչակ մարտիրոսաց Հայկաստանեայց», միայն սրանցից «զոմանս, որք հնացեալք և անգիտացեալք էին, նորոգեալ պայծառացոյց (Ղուկաս կաթուղիկոսը)»[37]։

Այդ պատկերները շարված էին չորս սյունների ճակատներին զույգ-զույգ կամ մեկ-մեկ (պատկ. 39, 40, 41), պատկ. գուն. VIII), սեղանների և խորանների ճակատներին կամ որմերի վերա, իսկ ոմանք նկարված էին ուղղափի պատերի բրածեփերի վերա, այսինքն՝ որմնանկարներ էին (fresque) որոնցից տարաբախտաբար միայն երկու կտոր կարող ենք ցուցադրել. Տրդատի արքայական ընտանիքը և Ս. Մինասի (ոչ Հայկի) գլուխը (պատկ. 43, 44), (պատկ. 130, 131)։ Ոմանց տեղը ցույց ենք տվել, ինչպես հայրապետների շարքն էր, Ս. Ստեփանոս խորանի մեջ, ոմանց էլ պիտի ցույց տանք, որքան մեր հիշողությունը ներել կարող է պատկերների տակ։ Նաղաշի մնացած գործերից ոմանք որոշել կարելի է արվեստի ոճն ի նկատի ունենալով, որ այժմ լիովին մեզ համար դժվար է հիշողության վերա հենվելով և միայն լուսանկարների տպավորությամբ։ Այդ ավելի դյուրին կլինի երևանի արվեստագետների և հնագիտների համար։

Մի քանի խոսք էլ Ղուկասի Գավազանագրքի մնացորդի մասին, որից այնքան վավերական տեղեկություններ ստացանք այս գործի ընթացքում։ Մեզ անհայտ ճանապարհով այդ գործը անցել էր վաղարշապատի ոսկերիչ Փիլիպպոսի ձեռքը, և նորանից Սահակ Ամատունի վարդապետի և սորանից մեզ՝ Ղուկաս կաթուղիկոսի գրագրությունների մի տետրակի հետ, որ պահպանում է Գյուտ քահանայի հրատարակած Դիվանի մեջ[38]։ Այդ տետրակը մենք հանձնեցինք մատենադարապետ Սենեքերիմ Տ. Հակոբյանին, իսկ Գավազանագրքի մնացորդը մեր արտասահման գալուց հետո՝ պետք է անցած լինի ձեռագրատուն՝ մեր դիվանի մի մասի հետ։ Բարեբախտաբար Աբարատի մեջ նույնությամբ հրատարակել ենք Գավազանագրքի այդ հատվածը, նպատակ ունենալով, ապա Խրիմյանի ժամանակ պատերից պոկված պատկերների ուսումնասիրության անցնիլ. բայց ուշացավ, և այժմ է, որ փորձում ենք կատարել։ Եթե ժամանակին կատարված լիներ այդ գործը, շատ մութ խնդիրներ,

---

[37] Աբարատ, 1901, 320։

[38] Այդտեղից է օգտվել Արշակ Չոպանյանը յուր «Նաղաշ Հովնաթանը» հատորին մեջ։

մասամբ, պարզված կլինեին՝ Նաղաշի և նախանաղաշյան պատկերների որոշման և ստուգման խնդրում։

Բայց այժմ «որշափ կարեմ, զայն առնեմ»։

ՀԱՎԵԼՎԱԾ Ա[1]

(ՍԻՄԵՈՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ «ԴԱՎԹԱՐ»-ԻՑ)

ՊԱՏԿԵՐՔ ՄԵՆՔ, ՈՐՔ Ի ՅՈՐՄՈՑ ԿԱԽԱՆ Ի ՄԵՋ ՄԵԾԻ ԽՈՐԱՆԻՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ, ԵՆ ԱՅՍՔ։

Ա[2] պատկեր Աստուածածնի, յորոյ վերին կողմն է երրորդական պատկեր։

Բ պատկերք ևս՝ յորոց մինն է ազօթել տեառն՝ յուրբաթ գիշերին՝ և զօրա/նալն ի հրեշտակէն, և մինն է իջուցանելն ի խաչէն։ Են այսք յայմ/ և յահեկ, ասագ խորանին ի մէջ խաչկալին։

Բ պատկերք՝ Մեծին Ներսիսի և Նիկողայոսի հայրապետացն, որք են իբրու զրունք/ներքին դրանց մեծ խաչկալին։

Բ պատկերք Աւետաց՝ մինն հրեշտակին՝ և մինն Սուրբ Աստուածածնին։ Որք ևս են/ իբրու զրունք վերին դրանց մեծ խաչկալին։

Ի ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԱՅ ԽՈՐԱՆ՝ ԵՒ ԱՌՔՆԹԵՐ ՆՈՐԻՆ Ի ՎԵՐԻՆ ԴԱՍՆ՝ ԵՆ ԱՅՍՔ։

Ա պատկեր ի մէջ Սուրբ Յակոբայ խորանին, որ է բերել հրեշտակին զգլուխ — Սրբոյն Յակոբայ Առաքելոյն՝ առ Սուրբ Աստուածածինն և Առաքեալսն։ Ի վերոյ ևս/ պատկեր երրորդական[3]։

Ա պատկեր Աստուածածնի՝ որ է մեծ, զարեգակն արկեալ զիւրեւ՝ և զլուսինն ընդ/ոտիւք, և ի վերայ պատկեր երրորդութեան, և շուրջ զիւրեւ՝ գուշակութիւնք մար/գարէից՝ որք վասն իւր ասացեալ են, մանաւանդ այնք՝ որք ի գիրս Սրգ եր/գոցին են, որպէս շուշան Հովտաց՝ ծաղիկ դաշտաց՝ և այլք։ Նմա/նութիւնքն նկարեալ են՝ և բանքն գրեալ ի ներքոյ ի։ղաբանչիւրոցն։ Զոր սրբազան Սի/մէոն կաթուղիկոսն ետ նկարել։

Ա պատկեր ևս վերափոխման Սուրբ Աստուածածնին՝ յոյժ մեծ, և լուսինն ընդ/ոտիւք։ Է այս հնացեալ։

---

1 Կրճատումները բացել ենք՝ դյուրացնելու համար ընթերցումը։ Տողատումը պահել ենք ձեռագրայաց գծիկներով։

2 Այսինքն՝ մի։

3 Այսինքն՝ երրորդութեան։

Ա. պատկեր ևս, որ է Սուրբ Աստուածածնին, միածինն մեռեալ ի գիրկն, և եօթն / սուր ի սիրտն։

Ա. պատկեր ևս Թաղման տեառն։

Ա. պատկեր Մատթիոսի Աւետարանչին։

Ա. պատկեր Սրբոյ Կարապետին, որ է ի մէջ ճաճանչաւոր բոլորակի, և շո-ւրջ զիւրն / բոլորակք իր, յորս են Սուրբ Կարապետի ծնունդն. ի չանապատ փախչիլն, անդ անալնիլն, և այլ որպիսութիւնքն մինչև ցմահն և Թաղումն, և բերիլն Նշխարացն / ի Հայս։ Այս է յոյժ մեծագոյն։

Ի ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԽՈՐԱՆՆ, ԵՒ ԱՌԸՆԹԵՐ ՆՈՐԻՆ Ի ՆԵՐՔԻՆ ԴԱՄՆ ԵՆ ԱՅՍՔ։

Ա. պատկեր ի մէջ Լուսաւորչի խորանին, որ է պատկեր տէրունական բազ-մեալ / յաթոռ քառակերպանն, և ի ներքոյ պատկերք Սուրբ Լուսաւորչին և Սուրբ Կարապետին։

Գ. պատկերք Սուրբ Լուսաւորչին՝ մինն մեծագոյն յոյժ, և Բ-քն քան զայն փոքր, / բայց մեծք։ Ի մէջ երկուցն է բժշկելն զՏրդատ Արքայն, իսկ ի միւս-մըն / ինքն միայն է։ Յերիսն ևս են չորեքտասան չաբլաւանքն իւր ի մէջ բոլո-րակաց, շուրջ զիւրեւ։ /

Ա. պատկեր Սուրբ Հռիփսիմեայ Կուսին, խաչափայտն ի յուսն, և Տրդատ Արքայն ընդ ոտիւքն։

Ի ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՈՍԻ ԽՈՐԱՆՆ ԵՆ ԱՅՍՔ։

Ա. պատկեր ծննդեան՝ է ի մէջ խորանին Սուրբ Սահիւանոսի։

Ա. պատկեր ընծրեայ տեառն։

Ա. պատկեր Սուրբ Սահիւանոսի՝ որ է փոքր, իւր քարկոծումն ևս առն-Թեր / իւր։

Ի ՍՈՒՐԲ ՅՕՀԱՆՆԻՍԻ ԽՈՐԱՆՆ ԵՆ ԱՅՍՔ։

Ա. պատկեր Աստուածածնի ի մէջ Սուրբ Յոհաննիսի խորանին, միածինն ի գիրկն, / և Սուրբ Կարապետն և Աստուածահայրն Յովսէփ առընթեր իւր։

Ա. պատկեր գլխատման Յակոբու Առաքելոյն, զորոյ զգլուխն բերէ / հրեշ-տակն առ Սուրբ Աստուածածինն, և առ Առաքեալսն։

Գ. պատկերք՝ Բ-քն Աւետեաց, և Բ-քն Տրդատայ և Կոստանդիանոսի / Թագաւորացն։ Ի վերայ ճակատուց սեանց առաջի դասուն են այսք։

Ի ՅԵՏԻՆ ԴԱՄՆ ԵՆ ԱՅՍՔ։

ԺԳ պատկերք, որոց ԺԲ-քն են Սուրբ Առաքելոցն, և մինն է Թերահաւա-տութիւնն / Թոմայի, և ցուցանելն նմա տեառն զձեռն և զկող իւր։ Կախեալք են սոքա ի վերին կողմն մեծի դրան տաճարին ի ներսին կուսէ։

ԺԲ պատկերք են՝ որք կախեցեալք են ի վերոյ քան զվերոյգրեցեալ պատ-կերսն ի / վերայ ոաւթին։ Որոց մինն է ստեղծանելն Աստուծոյ զԱդամ, և առնուլն զեւայ / ի կողէն, և խաբիլն Ադամայ, և ելանելն ի դրախտէն։ Մինն

ՀՂ գալ ջրհեղեղին, և մտանել նոյի ի տապանն։ Մինն է զենումն Իսահակայ և / փոխանակ նորա կախիլն խոյին ի ծառոյն սաբեկայ։ Մինն է ելք ժողովրդեանն / Իսրայելի յԵգիպտոսէ։ Մինն է՝ բարձրացուցանելն Մովսէսի զօձն յանապատին։ Մինն է՝ / ծնունդ տեառն, և շուրջ զնովաւ մարգարէք՝ տախտակք կտակարանաց ի ձեռս / ունելով։ Մինն է փախուստ տեառն յԵգիպտոս։ Մինն որ մեծ է քան զսոսա՝ է / յարութիւնն Ղազարու, որ կախեցեալ է զերեսօք դրան վերին զանկակատանն։ / Մինն է գիւտ մոլորեալ ոչխարին։ Մինն է երևիլ տեառն Աշակերտացն յետ յարութեանն՝ / ի ժամ որսոյ ձկանցն, ի նաւին ի նաւն Պետրոսի, և արկանել տալն / զուկանն յաջակողմն նաւին։ Մինն է խարազանաւ չուանեայ հալեալն տեառն ի տաճարէն զվաճառօղս արջառոց և ոչխարաց և այլ իրաց։ / Իսկ մինն է գոչումն վերջին փողոյն, և յարութիւն համօրէն ննջեցելոց։

Ե պատկերք ի կողմն հիւսիսային դրան տաճարին՝ կախեցեալք կան յորմոյն։ / Յորոց մինն է ըմբռնումն տեառն, և կացուցանելն առաջի քահանայապետին։ Մինն է՝ / փարիսեցւոյ և մաքսաւորի աղօթելն ի տաճարին։ Մինն է անկանիլն է ձեռս / աւազակաց առ այնմիկ՝ որ իջանէր յԵրուսաղէմ յերիքով՝ ըստ աւետարանական առակին. / ի վիրաւորելն յաւազակացն. և առնելն նմա զողորմութիւն սամարացւոյն։ Մինն է / մահ և ծանօթութիւն տալն ծնողացն Սրբոյն Ալէքսիանոսի։ Եւ մինն է Փիլիպպոսի կաթուղիկոսին։

Զ պատկերք ևս ի կողմն հարաւային դրան տաճարին կախեալք կան յորմոյն։ / Յորոց մինն է ըմբռնումն տեառն։ Մինն է տեսիլն Յակոբայ՝ որ ետես սանդուխտ / հաստատեալ յերկրէ յերկինս։ Մինն է մատնելն իմաստուն կուսանացն ի չառագայթ / փեսային, և չիմարացն մնալն արտաքոյ։ Մինն է անկանիլն աղքատին Ղազարոսի ի դուռն մեծատանն, և լիզել շանց զվէրս նորա, և զեփել մեծատանն։ / Մինն է անտեսին՝ որ զհաշիւս փոխատուց տեառն իւրոյ խնդրէ, թէ քանի՞ / ինչ պարտիս տեառն իմոյ։ Իսկ մինն է մեծ քան զսոսա, որ է օրհնել տեառն զաշակերտսն / ի ժամ համբարձմանն, որ է ի մէջ խորանաձև կերտուածոյ։ Իսկ յաջմէ և յահեկէ խորանաձևին, են պատկերք Սրբոց Առաքելոցն Պետրոսի և Պօղոսի, որք են / մեծք։ Եւ առընթեր իւրեանց գլխիվայր խաչին Պետրոսի, և գլխատին / Պօղոսի, է այս յիշատակ քիւթիր Պետրոս վարդապետին։

ԻԹ պատկերք՝ շարեցեալք ի մէջ մեծի կաթուղիկէին ի վերոյ, որք են յորոր տնօրէնութիւնք տեառն։ Այսոքիքն Աւետիքն։ Ծնունդն։ Քառասնօրեայ պաղտատն ի տաճարն։ / Կատարումն մանկանացն Բեթղէհէմի։ Մկրտութիւնն։ Ապաւէրպութիւնն։ Յարուցանելն զՂազար։ Գալն յԵրուսաղէմ յաւանդաւատ։ Ուրուագրեալն։ Ընթրիքն։ Աւօթելն և զօրանալն ի հրեշտակէն և ըմբռնելն։ Կապելն ի սիւնն քարեայ / և ձաղկելն Պսակելն փշով՝ և զգենուլն զքղամիդն։ Բառնալն ի յուս / զխաչն, և երթալն ի Գողգոթայ։ Բևեռելն ի խաչափայտին։ Իջուցանելն ի խաչէն։ Նստեալ մերկ ի վերայ գերեզմանին, և շուրջ զնորա

ամենայն գործիք չարչարանացն։ Աւետիսն գժժոխսն և ազատեալն զհոգիսն։ Յարութիւն։ Համբարձումն։ Գալուստ Հոգւոյն Սրբոյ։ Միւսանգամ գալուստն՝ և դատաստանն / ահաւոր։ Ու վերափոխումն ամենօրհնեալ Սուրբ Կուսին Մարիամու։

Ա պատկեր ևս մեծ ի խորանաձև, որ եդեալ է ի գլուխ մեծի դրան սրբոյ տաճարին. / յարտաքին կողմն։ Որ է իչխումն միածնին ի սուրբ տաճարս այս՝ և պատկերք Հօր / Աստուծոյ և Հոգւոյն Սրբոյ. նաև Սուրբ Լուսաւորչին՝ և խորհրդածու հրեշտակին, / և Տրդատայ, և քեռ նորին և կնոջն, և այլոց բազմաց. և ձախ սրբոյ տաճարիս, և սրբոց վանօրէիցն Հռիփսիմեայ, Գայիանեայ, և Շողակաթին։ / Ջոր սրբազան Սիմէօն կաթուղիկոսն ետ նկարել նորապէս, զի առաջին հնացեալ / և փտեալ էր։

Վերոյգրեցեալ մէկ թուղթ և կէս պատկերացս ջամն է՝ ութսուն և ութ։ Ի Ռմիե թուղթս, ի յօգոստոսի ժ գերգաւ։

ՀԱՎԵԼՎԱԾՔ[1]

(ՄԱՅՐ ԱՔՈՒՌԻ «ԴԻՎԱՆԻՑ»)

Պատմութիւն ինչ գլխաւոր բանից հարկաւորաց ի ժամանակս Տեառն Դուկասու Սրբազան կաթուղիկոսին եղելոց, շինարարութեանց և մեծագործութեանց նորին ի գաւազանագիրքս և ի շարս կաթուղիկոսացն գրելի և նախագիծ օրինակ։

Էր Դուկաս կարնեցի։ Սա էր այր գերահանճար և նրբանկատ, խոնարհամիտ և հեզաբարոյ. բարեկարգութեանն և սրբութեանց կրօնից սիրող, հզօր, վրէժխնդիր և կարգաւորիչ. առ յանցաւորս իւր յոյժ անյիշաչար և համբերող, և քաղցրաբանութեամբ և սիրով և հոգևոր խրատիւք ուղղիչ, և առ կարօտեալս և չքաւորս ողորմած և գթածագունեղ, և հարկաւոր պակասութեանց նոցին լցուցիչ և սրտագիւրիչ, և առորագրեցելոց իւրոց ըստ իւրաքանչիւր չափու և աստիճանի շահօղ և մխիթարիչ թէ ի բանս, թէ ի գործս և թէ յարդիւնս, և ըստ ամենայնի միաբանասէր, որ և էր բնիկ միաբան շնորհաւորն և բազմաշխատ զաւակ Մօրս նուսոյ սրբոյ Աթոռոյս էջմիածնի։ Իսկ և յաւուրս Տեառն Յակոբայ Շաւ՞խախեցւոյ հոգևոյս կաթուղիկոսին առաքեցեալ էր ի յԱւուռումէլիք և ի Գրիմ ի գործ հուիրակութեան սրբոյ Աթոռոյս. որ և լիալիր արդեամբք և յրշատակօք ևկն ի սուրբ Աթոռս։ Բայց ի կենդանութեան լուսաւորի Տեառն Յակոբայ Կաթուղիկոսին ոչ ժամանեաց, այլ եգիտ վախճանեալ և սուրբ մարմինն ի մէջ—«զանգակատանն»[2]—ի դագաղի եդեալ. վասն որոյ փղձնեալ

[1] Ուղղագրությունը պահում ենք նույնը, բացի տպագրական սխալներից։

[2] Շեղագրերով բառերը ձեռագրի մեջ ջնջված են։

սրտիւ կոծ մեծ արարեալ յոյժ կսկծեցաւ. վասն ոի յոյժ սիրեցեալ էր ի նմանէ. և մանաւանդ՝ մինչ կենդանին էր, բազմիցս գրէր զգալն իւր փութացուցանել վասն օրհասին կանխելոյ, առ ի տեսանել աչօք բացիւք և զրկումն իւր լցուցանել, թէպէտ, սակայն չեղև, վասն որոյ մնացին միմեանց կաթօ՝ եւ ապա զկնի քաղման նորին՝ զնուիրակական հաշիւն իւր ի մէջ Աստուածաշնչի տաճարին առաջի սրբոյ Միածնէջ տեղւոյն ! ենդկայութեան սիրագոմար միաբանից և արքեպիսկոպոսաց եւս կարի աւելի քան զնախանձեալ նուիրակութիւնն[3]: Եւ միաբանից գլխաւորքն էին՝ առաջինն ծնունդարդ և վաղնջի բազմաշխատ լուսարար եղիազար արքեպիսկոպոսն, որ էր հոգևոր ծնօղ մեծի սրբազան Հօրս մերոյ, որ զկարգ արեղայութեանն ընդ մեծին Պօղոսոյ Պատրիարք Ջաքարիա արքեպիսկոպոսին ի միասին էին առեալ ի 1200 թուին և ի ամսոյ[4] ումն. և երկրորդ գլխաւորագոյնն էր գիտնական և բանիբուն Սիմէօն արքեպիսկոպոսն Երևանցի, որ ի նուիրակութենէ մեծին Պօղոսոյ ամ մի էր, որ եկեալ էր, և էր աշակերտ նոյնոյ Յակոբ հոգևոյս Հայրապետին Շամախեցւոյ, և այլ արհիապանծ եպիսկոպոսք և շնորհազարդ վարդապետք բազումք, որք և մեծաւ գոհունակութեամբ շնորհակալ եղեալ՝ գովաբանեցին զսրբազան Տէրն մեր սակս լիալիր արդեանցն և յոգնագիմի հարազատութենանցն, մինչ զի՝ նոյն ինքն գերահանճար արքեպիսկոպոսն Սիմէօն ի մէջ տիրակերտի տաճարին առաջի բազմութեան միաբանիցն ասաց լու ի լու, «Եղբարք, յորժամ սուրբ Հոգին Աստուած սրբոյ Աթոռոյս և մեզ նոր փեսայ շնորհեսցէ, այս Ղուկաս վարդապետ սիրելի եղբայրս մեր արժանի է առ ի լինել նոր փեսային նախաքահոյր և անդրանիկ եպիսկոպոս» բոլոր միաբանքն սոսկալեաւ խնդամտութեամբ և բերկրասրտութեամբ որպէս ի միոչէ բերանոյ ասացին. «արժանի է ճշմարտապէս». Եւ ի յասելն զայս, Ղազար արքեպիսկոպոսն Աստապատցի՝ նշխուն կոչեցեալ՝ որ էր այր շնորհալի, խազասաց և ժամօրհնող՝ յարեաւ ի տեղոջէն և բարձր ձայնիւ ասաց «զսուրբ խաչին», և զխաչագոյնն «զպահպանեայն». և սիրով արձակեալք գնացին ուրախութեամբ ի կայեանս իւրեանց: Եւ զայս վասն այնորիկ երկարեցի ասել, զի հոգևոյս ծնօղն մեր էսեռանեալն կաթուղիկոսն Տէր Սիմէօն, որ զայն ասաց ի վարդապետութեան մարգարէական հոգով հրամայեաց. քանզի իմաստնոյն մարգարէութիւն է ի շրթունս թագաւորի: Քանզի՝ ինքն հրաւիրեմամբ Հոգւոյն սրբոյ նովն կաթուղիկոս և Տայրագոյն Պատրիարք, ամենայն հայոց և սրբոյ Աթոռոյս, զկնի քանի մի ամսոց (որպէս և զրեալ եմք ի վերոյ ի տեղւոջ իւրում) և ի նահիկն իւր ի յԱթոռ Հայրապետութեան, զիւր խոստացեալն մարդ

և Բերթումեան Պետրոս գերմաստ վարդապետացն Նախիջևանցւոց. և գեր քան զընաւան կարի սիրելով ի ՌՄԺԳ թուջն և ի մարտի ամսոյ ԻԱ ի վերայ մեծահռչակ և բարելի մայրաքաղաքն Զմիւռնոյ, արհիապանծ առաջնորդ և ծայրագոյն նուիրակ կարգեալ, առաքեաց. և վասն առաւել հարապատութեան և արդիւնաւորութեան, ոչ կամեցաւ զկնի աւարտման առաջին գործոյն, բերել զնա. այլ կրկին և երեքին անգամ նորոգեաց զառաջնորդական և զնուիրակականն գործն նորին, է եթող մնալ անդ մինչև ցԻՀ ամ և կէս. իսկ ինքն սրբազան Հայրս մեր՝ վասն սիրոյ ամենացանկալի և շնորհաւոր ծնողն իւրոյ սրբոյ Աթոռոյս և սիրագոմար և աղաւնեղամ միաբան եղբարցն, ոչ կամէր անդ արկաւոպէս մնալ և կարօտութեամբ մաշիլ: Այլ միշտ գրէր և թախանձանօք աղաչէր ևս թողուլ անդ ի վիճակս իւր մնալ, այլ ի տեղի իւր զայլ ոք առաքել և զինքն խնդրել: Բայց՝ բոլոր իշխանք և ժողովուրդքն վիճակին հոգևոր սիրով կապակցեալ էին ընդ առաջնորդին իւրեանց, և քանիցս բազմակնիք մահասրու խնդրէին ի յերանեալ Հայրապետէն առ ի թողուլ մնալ առ ինքեանս սևպհականապէս ի մխիթարութիւն և ի սփոփանս մեծի վիճակին և ինքեանց, և ի մահսաբոջն գրեալ ևս էին քէ՝ որպէս ըզաքարիա արքեպիսկոպոսն որ ի մեծն Պօլիս նուիրակէր սրբոյ Աթոռոյդ, ըստ խնդրանաց նոցին շնորհեցեր նոցա առ ի մնալ անդ և լինել պատրիարք. նմանապէս և զմեր առաջնորդն մեզ շնորհեսցես, և զայլս այապիսիս: Թէպէտ գրէին իշխանք և ժողովուրդքն, բայց՝ խոնարհամիտ Հայրս մեր սիրահար գոլով սրբոյ ծնողին իւրոյ՝ միշտ գրէր և աղաչէր ոչ անսալ մահարական թղթոց և խնդրանաց ժողովրդականն, այլ ի բաց ասել, և զինքն խնդրել. իսկ ինքն հոգևոյս Հայրապետն ծերացեալ գոլով և պէսպէս վշտօք և ցաւօք և երկար հիւանդութեամբ — «մաշեցեալ» — նախահոգ լեալ, շուտով զնասչի արքեպիսկոպոսն Նախիջևանցի յղեաց ի տեղի նորին, և նմա գրեաց և խնդրեաց առ ի ժամանել առ ինքն ի մխիթարութիւն ինքեան ի կենդանութեան իւրում, և զկնի մահուանն առնել պատրաստ գոցէ, և պիտոյացի սրբոյ Աթոռոյս ի յաջորդութիւն ինքեան: (Վասն զի՝ յայնմ ժամանակի ի մէջ արքեպիսկոպոսաց ընդ իշխանութեամբ սրբոյ Աթոռոյս, երևելի և անուանի՝ արժանաւոր և պատշաճաւոր անձինք երկուք էին, առաջինն պատուական Հայրս մեր էր՝ որ ներկայ էր, և երկրորդն Զաքարիա արքեպիսկոպոսն և պատրիարքն մեծին Պօլսոյ, որ անդ էր. որք ի միասին զսուրբ կարգն ի սուրբ Աթոռոջս էին առեալ ի լուսաւոր եղիազար արքեպիսկոպոսէն, որպէս և գրեցաք ի վերոյ): Արդ՝ ի 1225 թուջն և ի յունուարի ԻԲ ըստ գրեցելոյ և հրամանի երանելի Հայրապետին Սիմէոնի և ըստ բաղձանաց սրբոյ տին իւրոյ, գերերջանիկ Հայրս մեր լիալիր արդեամբք ժամանեաց առ սուրբ Աթոռս մշտաբաղձալի ծնօղս իւր. և մեծահանդէս ընդ առաջելութեամբ և բազում մեծարանօք գերապէս պատուեալ եղև. և զերից նուիրականաւ և առաջնորդական արդեանց հաշիւն յոյժ առատութեամբ և կրկնապատկութեամբ

Եւ սրբազանասուրբ Հայրապետին, և զբոլոր միաբանսն գիր քան զչափն շահել՝ մխիթարեաց եռապատիկ և քառապատիկ ընծայաբաշխութեամբ ըստ հաշուոյ երից և չորից ծայրագունից նուիրակաց, որք և բերանալիր օրհնութեամբ և գոհութեամբ ընկալեալ շնորհակալ եղեն զմեծութենէ նորին։ Այլ և զսուրբ տաճարն Աստուածածնայրա և զտեղին Քրիստոսասէջ զարդարեաց բազմագան յիշատակօք, ոսկեղինեօք և արծաթեղինեօք, մետաքսեղինեօք և ընտիր ընտիր զարդուք հիանալի տեսողաց։ Եւ ինքն հոգեկոյս Հայրապետն Սիմէօն՝ թէ ո՞րպիսաբար ընկալաւ զնա իբրև զնշայր գորովագութ. և կամ ո՞րպիսի սիրով և յատկեղ պատուով և սեղանակցութեամբ իբրև զնորհրդակից և սրատարփուրիչ իւր պահեաց և մեծարեալ պատուեաց. և արգել առ ինքն մինչև ցվախճանն իւր, և ոչ եթող յուրեք երթալ, և կամ թէ՝ ինքն սրբազան Տէրն մեր յայսքան երկար ժամանակս որ էր տարի և ամիս[5] — ո՞րպիսի խոնարհութեամբ և համբերութեամբ և տաժանակիր վշտակցութեամբ եկաց և մնաց մինչև ցօր վախճանի նորին, զայնս ամենայն համարիմ գրել։

Արդ՝ ի ՌՄԻԲ թուին և ի յուլիսի 26 յօր Վարդավառի կիւրակէն, երանելոյ Հայրապետ մեր Սիմէօն ծերական ցաւօք, տարեկան երկար հիւանդութեամբ, հոգալի մոթ, ապագայական երկիւղիւ սակս սրբոյ Աթոռոյս և պէսպէս վշտոթ և երջանիկ մահուամբ մինչ վախճան ընկալեալ, չուեաց առ մշտաբաղձալին իւր Քրիստոս. երկիրս մեր խղճալի էր ի յաւերութեան և ի վրդովման, երկրականացս՝ հաւատացեալքն ի գերութեան և ի վտարութեան, և տաճիկքն ի դառն աղքատութեան և որպէս որդեկորոյս և վիրաւոր արջ կրճամամբ ատամանցն ի կատաղութեան, և սուրբ Աթոռ մայրս մեր և աթոռակիցքս ամենայն ի յերկիւղալի սասանութեան և ի սրտագողութեան, որոց պատճառն եթէ զի՞նչ էին, համառոտակի և կարճ ի կարճոյ գրեալ՝ ծանուսցուք սիրելեացդ փոքր ի շատէ։

Արդ՝ իշխողն Վրաց (արքայն Հերակլէս) քանի ամաց ի վեր զտուրս և զնարիս ինչ՝ առնոյր ի յիշխողէն երկրիս մերոյ, և որպէս թէ՝ ընդ իշխանութեամբ և ենթ հրամանի իւր առնէր, ոչ բռնութեամբ, այլ սիրով և բարեկամական պայմանաւ. և սոքա ևս կամաւորական հարկիւ՝ զնուն ինչ հարկս տային, չամ, չամ,—«մինչև ցԱՒՐ թուական, որ է ՌՄԻԲ թուական»—և հարկատարքն կարի զղուեցուցանէին զսոսա, և ինքեանք ևս գոլով տաճիկք, ներքին մտօք իւրեանց ծանր չանցանք և ամօթ մեծ համարէին կալ ենթ հարկի և ծառայութեան քրիստոնէից, վասն որոյ սնոտի յուսով ի տկար օգնութիւնս շրջակայ երկրացս մերձ և հեռի տաճիկ իշխողաց ոմանց յենլով, սկսան ապստամբել և զհարկ ոմանքն ո՛չ տալ, և զպէսպէս կարկատուն պատճառս չառաջ բերել, զորատուռ բանս գրելով և խօսելով. և զի նմանէ առաքեցեալ պատուարտ իշխանս ոմանս անպատիւ առնել, և ամօթալի չհաս չղել. և այս դաւ և վէճ մնաց քանի

[5] Ձեռագրում բաց է թողնված Տ. Սիմեոն կաթողիկոսի աթոռակալության տարիների և ամիսների որքանությունը։

մի միջոց։ Իսկ իշխողն Վրաց՝ որ էր ի վաղուց հետէ անտի մեծ երախտաւոր երկրիս, որ քանիցս անգամ սաստիկ պատերազմաւ ի յօտար թշնամեաց զերծուցեալ էր զերկիրս և յատկապէս զիշխողս սորին իսկ. և որպէս թէ զիւրն համարելով, քաղցր ակամբ հայէր. իսկ ի լինիլ այսպիսի խռովութեանց և ապստամբութեանց, զբաղցրութիւն իւր դառնութիւն փոխելով, և զսէրն ի յատելութիւն, սաստիկ բարկութեամբ սկսաւ յայլ և այլ տեսակ և բարբարոս աղագաց, լեռնականաց գանձիւ զօրս ժողովել—«եւ ի վարձու ունել» — զորս անուանէին Քո՛ւշ, Գշա՛ւ, Ղարադալա՛ն, Քրի՛սա, Չէրքէ՛զ, Ափխա՛զ բազմաթիւ, և զայլս այսպիսիս, հաւդիրձ բոլոր զօրօքն իւրովք, որք էին վիրք, Սում, խէթք հայազունք, և ի տաճկաց անտի ընդ իշխանութեամբ իւրով եղեալոց. Ղազա՛խ, Բորչալո՛ւ, Բայա՛ր և Դամուրչի, Հասանլու, մինչ գի՛ Եգիպտ ևս զոյին. և միահամուռ ամենայն զօրքն էին անթիւք և անհամարք մինչև ց ... ասէին[6]. Թոփիւք և Թօփխանայիւք հանդերձ, սոսկալի և ահաւոր տեսլեամբ։ Եւ յարուցեալ ի Տփխիզոյ իբրև զկարկաւաբեր և զորոտալի ամբ և զգարնանազայր գետ, ի ՈՄԻՔ Թուին, և յօգոստոսի՞ հանդերձ փողովք և թմպկօք և այլ — «այծանայն» — նուագարանօք նաղարախանայ կոչնգոլովք՝ հնոտ ի յերկիրս մեր. և երկրականքս յառաջագոյն իրաւնկ լեալ գաւառաեան և պատրաստութեան նորա զօրու ծանու՝ սրտադողութեամբ և երկիւղիւ մեծաւ սկսան զերկիրս մեր ի բնակչաց դատարկել. զերկրական տաճիկսն, որք հեռաւորք էին, տանիլ ի դղեակն Երևանու առ ինքեանս. և ամենայն պատրաստութեամբ զբերթն և զզրջակաւս նորին ամրացուցանել. իսկ զմերայղնեալ հայսն ի Բայազիտ անցուցանել, և զերկիրն ի յամայութեան թողուլ, որ էր ի ժամանակս կալոտուլ, զորայն և զգորհանն շնդրակուտեալ յամենայն գեօղորայս. և երկիրս մեր ամենայն բարութեամբ՝ և սեխենոցիւք՝ բամբակօք՝ և բրնձիւք լցեալ, և բուսական բերիւք և արգասիւք ըստ ամենայնի չզրփացեալ։ Իսկ՝ զսուրբ Աթոռս և աթոռակիսն հանդերձ մեղ զիւրին այլ հայկուտ բազմութեամբ, և մերձաւոր աղբատ տաճկօք ոմամբք՝ որք ի սուրբ Աթոռս էին ապաւինեալ, թողին մնալ ի տեղին, այնու յուսով՝ զի թերևս սրբազան Հայրապետն մեր՝ միջնորդ լեալ ի ձեռն բարեխօսութեան, աղաչանաց և խոստմանց՝ կարիցէ զարքայն համոզել ի խաղաղութիւն, և զգալն նորա խափանել, և զերկիրս մեր ազատել. քանզի ինքն իշխողն՝ կոչեաց զՍրբազանն ներիցս առ ինքն, հանդերձ նախարարօքն իւրովք մեծաւ պաղատանօք խընդրեաց ի նմանց կամ զթուղթ աղաչանաց գրել և զմարդ յղել ի Թիֆլիզ, և կամ ի գալն նորին ընդ առաջ գնալ, և որպէս և իցէ կերպիւ զՆարս փրկութեան ջանալ։ Վասն որոյ՝ Սրբազանն նախապէս զգիր աղաչանաց գրեալ ընդ խրդ-

---

[6] Զորքի թիվը բաց է թողնված։

[7] Սմսամբի ս չը բաց է Բողնված։

ձալի և ցաւագար տեղապահ Մկրտիչ Եպիսկոպոսին Շօռօթեցւոյ և ընդ աթոռական Գալուստ Եպիսկոպոսին Աշտարակեցւոյ յղեաց առ արքայն. և նոքա մնան ի Թիֆլիզ ի ձանձապարհին հանդիպեալ էին և պիտոյիցն մատուցեալ նմա. և ի ձօրն հաւատոյ Աբրահամու աղերսանս, որ առ հրեշտակն վասն պատճոյն Սորոմայ՝ պէսպէս պաղատանօք ասացեալ էին, գոնեայ առ ի խնայել ի քրիստոնեայն. թէպէտ սակայն՝ նա ամենևին ոչ էր անսացեալ, այլ՝ զպատասխանիս իղձոցն առ Սրբազանն և առ խանն (խաստասրտութեամբ) գրեալ: Եւ չետ երկուց աւուրց ինքն արքայն հանդերձ Բ որտովքն և անթիւ զօրօք եկն ի սահմանս Նեհաւու. և սկսաւ գ՚ղազախու տաճիկսն և զլէզկիս և զայլ բարբարոսս, որք ծարաւիք էին արեան քրիստոնէից՝ յառաջագոյն ասպատակ սփռել առ ի քակել և աւերել, թալանել և կողոպտել և վերջապէս հրդեհել զգիւղօրայսն նախ քան զնւր հասանելն. որք և եկեալ կողոպտեցին զվանորեայսն և զգիւղօրայս և զեկեղեցիս նոցին. նախ զսուրբ Կարապետ, զսուրբ Գէորգ, զԿարբի, զՄօղնի և զԱշտարակ. զեէրուսեական և զսրբոց պատկերսն և զայլ սրբութիւնսն. զխաչկալս և զամենայն սպասսն ոսկից կոխան առնելով՝ զարդամարկ և անմարդաբնակ արարին և զբոլոր գիւղօրայսն երկրիս, զհնաւօրսն և զմերձաւորս հարց կիզեալ՝ յաւէր գարձուցին: Եւ իբրև ինքն արքայն մերձ եղև, Սրբազան գլխաւոր եպիսկոպոսօք, այսինքն է ցաւակից և խորհրդակից սրբազան հարբն մերով Տէառն Ղուկասու և այլովք, հանդերձ ուսեալի ընծայիւք գնացաք ընդ առաջ, և առ երեսս վայր ի վերոյ սէր ցոյց ետ, և ոչ որպէս երէկն և եռանդն. և եկն բանակեցաւ ի գեղն սրբոյ Աթոռոյս Սշական, և մեք ընդ նմա, և անթիւ զօրօքն անդ մնացին, մինչև ցՀ օր. այնու անօգուտ յուսով (որք և ասէին), որպէս թէ՝ նախարարքն իշխողին մերոյ՝ որք էին ապստամբք ի նմանէ ի ծածուկ, զնա ըմբռնեալ տացեն ի ձեռս որ և էիցեն սուտ: Բայց՝ զվաղեմի՝ զբարելի՝ և զնենգոյն գեղն Սշական և զայրդիան մեր, որ անդ՝ քանդեալ հիմնայատակ արարին, զտունսն ի հիմանց աւերեցին, և զփայտեղէնս այրեցին. և անտի ընդ մեզ եկն ի սուրբ Աթոռս, հանդերձ օրհնեալ որտովքն իւրովք, Դաւիթ սարտար փեսայիւն և այլ երեսելի նախարարօք և ամենայն զօրօք անթուելիօք, և բոլոր եկեղեցական ուխտիւք սպասուք և զարդուք և ամենայն պատրաստութեամբ և զանգագանչմամբ

ագանել առ մեզ և մնալ ի գիշերին, այլ ի նոյն օրն հանդերձ զօրօք իւրովք գնաց ի Փարաբար գիւղն, որ մերձ յերևան, և անդ ի լայնանիստ՝ ի նորաստուն և ի ծառաւէտ յայգւոջն սրբոյ Աթոռոյս քանակիցս սակս մեծապարիսպ գոլոյն և նստաւ անդ մինչև ցամիսս երիս. և ի բազմութենէ բարբարոս զօրացըն ընդ փոշոյ հաւասար եղև ընդ գետին Օշականու և այգեացն մերոց անդ եղելոց. և արմատախիլ արարին զամենայն ծառս և պտուղս, և ապաւառոջ անասնոց լցին. զպարիսպս ծակոտեալ քայքայեցին և յաւեր դարձուցին։ Եւ երանելի Սրբազանն հանդերձ իւր շարշարակից և վշտակից Դուկաս սրբազանիւ հարբն մերով և այլ իւրային հայրապետական բանակաւն՝ վրանօք և ամենայն պատրաստութեամբ գնացեալ ի յօրտու կոչեցեալ բանակն՝ ուր արքայն էր, մերձ առ նա ի յայգւոջ մերում բանակեցաք ի մէջ փոշոյ, այսինքն թօզից և ւարշելի հոտոց. առ օրինեալ արքայն երթայաք և գայաք վասն պիրիճայս առնելոյ և ի խաղաղութիւն համոզելոյ զարքայն և զխանն մեր ընդ միմեանս ի ձեռն երիւեկութեան մարդկանց և պէսպէս թղթոց. մինն զանձիւ զրամս պահանջելով և զպէսպէս անկարելի խնդիրս յառաջարկելով։ Եւ բերդարգել միւսն լսելով զաւերութիւն և զկրկիզութիւն, զքանդումն և զապականումն երկրին և բոլոր գիւղօրէից, խստասրտեալ զընդդէմն պատասխանէր. և լուսահոգի Սրբազանն չերկուց կողմանց զմեծ վնասս, զգաւս և զնդութիւնս (թէ ո՞րքան) կրէր (զայս ծանուցանել ոչ է կարիւք, քանզի՝ որ ինչ պիտոյանայր ի բանակին թէ ուտելի թէ ըմպելի, և թէ այլ ինչ, ի սրբոյ Աթոռոյն գայր, թէ վասն իւրն և թէ վասն այլ քաւատաց, որք էին նախարարք նորին)։ Եւ մեծագոյն վնաս մի ևս այս էր, զի զօրքն արքային յորժամ գնացեալ մարանչէին ընդ բերդարգել զօրացն խանին յարտաքուստ, և երբեմն յաղթեալ զոմանս կոտորէին և զոմանս գերեալ ի բանակն բերէին, յայնժամ այն գերեաց տեարքն որ ի բերդն, ըղձով և գիտութեամբ խանին զաղերսանաց գիրս գրէին առ Սրբազանն առ ի ազատել զգերիս իւրեանց ի ձեռոց գերողացն և չիտս առ ինքեանս դարձուցանել, և Սրբազանն ևս ոչ կարէր ի բաց ասել վասն ապագայական երկիւղին, այլ թէ կամայ և թէ չակամայ յոյժ ծանր գնով և նաղտ դրամով զգերիսն ազատեալ, յղէր և տեարքն անոտի սանատ և գիր տային առ ի վճարել. չետոյ ոմանք տային և ոմանք ոչ. յայսմ կողմանէ բազում դրամազատնութիւն եղև սրբոյ Աթոռոյս և գլխացաւութիւն մեծ։ Այլ և՝ քան զայս մեծագոյն վնաս ցաւ և տրտմութիւն և ահիւ մահաբեր հիւանդութեան այն էր լուսահոգի Սրբազանին, որ թէ ընդ առաջ էլանելն արքային, և թէ ի բանակի անդ ի բազում աւուրս, ողոջ բանիւ և աղերսաբանութեամբ թէ ո՞րքան միջնորդ և բարեխօս եղև և զհաշարժ խօսիւք զիրիճայս արար վասն խղճալի երկրիս և սակս աղքատ ժողովրդոց քրիստոնէից և եկեղեցեացն, առ ի խնայել և ի գութ շարժել և ողորմիլ նոցա. բայց նա վասն մեղաց մերոց խստասրտեալ՝ ամենևին ոչ լուաւ և ոչ անսաց. այլ ի մէջ դիւանի (ընդդէմ բարե-

պաշտութեան իւրոյ) հանդէպ երեսաց Սրբազանին ասաց զսրտառուռ խօսս զայս թէ՝ «ես ի բնէ անտի՝ այսինքն ի մանկութենէ զսովորութիւն և զբարս զայս ի յիս բնաւորեալ ունիմ, զի աղաչաւորաց զաղերսն, զիրեմայս և զբանախօսութիւնսն եթէ կամ եղև ինձ ի յառաջին անգամն լսել, բարւոք է. իսկ եթէ ոչ, թէ բիւրեցս կրկնեսցէ բնաւին ոչ անսամ» և այլն։ Յորմէ կարեվէր խոցեցաւ ի սիրտս և ի միտս կենամաշ Սրբազանն մեր երանեալ։ Բայց առերեսս ոչինչ ասաց, այլ խնդամիտ զինքն երևեցոյց ի հանդիսի. քանզի սո՛յն այս (այր) արքայ, ի յառաջին և յերկրորդ նուագին, յորժամ գայր յերկիրս մեր, սոյն այս Սրբազան ի ընդ առաջ ելանելն և ի տեսանելն զմիմեանս, բացով գլխով և բոկ ոտամբք ի վրանէ անտի ածապարեալ ընդ առաջ ելանէր և ջերմն սիրով զաջսըն համբուրելով մեծաւ բարեպաշտութեամբ զօրհնութիւնսն խնդրէր, և որ ինչ իրիմայ, այս է՝ օրինաւոր խնդիր վասն օգտի հասարակին ելանէր ի բերանոյ Սրբազանին, զայն ոչ երկրորդէր, այլ յօժարակամ սիրով կատարէր։ Նոյնպես և նա՝ սմա կրկնապատիկ առնէր։ Իսկ այսմ նուագի ի մեղաց մերոց բազմութենէ զնշան ինչ այնմ սիրոյ ոչ երևեցոյց, այլ զնորին ներհակն։ Վերջապէս բերդարձակքն մնացին ի խստասրտութեան ի կամս իւրենց յամառեալ. զհնազանդութիւն ինչ ոչ ցուցին երբէք, այլ հրացանիւք, այսինքն թափիւք և թֆանկիւք, միշտ պատերազմէին. մինչ զի՝ զերկուս մեծազգի և զբնախաւոր թաւատս սպանին ի նոցանէ. թէև ինքեանք ևս ի նոցանէ անթիւ սատակէին։ Եւ վասն ամրութեան բերդին նրհանու ո՞ կարէ ճառել, որոյ տեսօղքն վասն անառիկ գոլոյն ապշեալ հիանան (և ասի բան թէ՝ Թամազն այսինքն Շահնաւարին յորժամ եկեալ մտեալ և տեսեալ է զբերդն, հիացմամբ ասացեալ է թէ՝ («սէնն զայրիանն աթասի գեօբագեօ՞ռ օ՞լսուն»)։ Եւ բարեպաշտ արքայն եթէ զի՞նչ հնարս եցոյց իւրով սատուածատուր հանճարեղութեամբն վերջապէս, այս է։ Զի զբանս յուսադրականս պէսպէս գրեաց և գրեցոյց առ մեր երկրացի հայկազուն խղճալի ժողովուրդն որք անցեալ էին ի կողմանս Բայազիտու, հրամանաւ խանին առ ի պահպանել յերկիւղէ, գրելով այսպէս թէ՝ «վասն դիւրութեան, ազատութեան և այցելութեան ձերոյ եկեալ եմ, ուստի՞ս ձեզ. լաւապէս գիտեմ, զի դուք ևս զայս կամիք. ուրեմն փութասջիք ի գալ իւրաքանչիւրքդ ի բնակութիւնս ձեր, զի բարւոք կարգաւորեցից զձեզ. և դուք վարից և վաստակոց ձերոց մուղայէթ լեալ լաւապէս ապրեսջիք». և փաշային վարից և վաստակոց ձերոց մուղայէթ լեալ լաւապէս ապրեսջիք». և փաշային Բայազիտու ևս գրեաց առ ի յղել և ի ծողով ի գալ։ Իսկ մերայինքն զայս իբրև զաւետիս կենաց համարեալ և ի յամենայնիվ † ն Քրիստոսի[8] և ի փրկաւէտ կոչումն քրիստոնէական անուանն ապաւինեալ և ի նոյն խրախուսեալ, յօժարակամ սիրով եկին իւրաքանչիւրքն ի գեօղս իւրեանց. բայց մինչ դեռն ըզտունս իւրեանց աւերեալ, զփայտեղէն, զխոտեղէն, և զայլ պիտանի ինչս և

---

8 Պետք է կարդալ «յամենայնի Աստն Քրիստոսի». հաճախ խալը գործ է դրվում բազավորի կամ կայսեր փոխանակ, բայց այստեղ, ինչպես ընթերցողը նկատել կարող է, այդ միտքը չունի։

այրելիսն հուրբ էիզեալ. զյորևանս, զգարիս և զայլ ինչ և ուտելիս թէ զծածուկս և թէ զյայտնիս ընդ բոլորին յափշտակել, և զամանս անձին որք ի պահպանութիւն տանց իւրեանց մնացեալ էին և կամ յերկիւղէ ի տեղիս տեղիս զոհեալ, զայնս ի յանօրինաց գերեալ, դառն տրտմութեամբ և յոգոց հանելով զկեանս իւրեանց ողբային: Եւ ծայրագոյն քան զայս և առաւել ողբոց արժանի այն էր, զի օրհնեալ արքայն առ երեսս իբր ի պահպանութիւն նոցա առ չիւրաքանչիւր գեօղս զտաճիկ զօրս բազումս եդ իբր զնոյազգին վարս և զվաստակս տալ առնել. բայց ի ծածուկ պատուիրեալ էր առ ի չթողուլ ումեք ցրուիլ, այլ զգուշութեամբ պահել, յաւուր զոր ինչ հրամայիցէ այնպէս առնել: Իսկ երբ եհաս, թէ անհնարին եղև բերթ առնուլն, քանիցս անգամ գրեցոյց Սրբազանին առ խանն, իբր թէ ահա եհաս ժամ, եթէ չնեղանդիցիս կամաց իմոց, զերկիրդ անմարդաբնակ եմ առնելոց և զքեզ ի վերջին թշուառութիւն (այսպես ձեռագրում) հասուցանելոց. և խանն խստասրտեալ զընդդէմն պատասխանէր: Եւ մինչ կամեցաւ վերադառնալ յաւաղ, յաւաղ քան զերիս աւուրս հրամայեաց մեծաւ առարկութեամբ ամենայն անողորմ տաճիկ զօրաց իւրոց շտապ (այսպես) տագնապաւ զբոլոր խղճալի, ագքատ և տառապեալ մերկ և բոկ ժողովուրդն երկրիս չուեցուցանել ի յերկիրն իւր ընդ բարբարոս և խառնիճաղանճ զօրացն իւրոց: Յայնժամ զթուղթ մի ևս — «Վերջին վճիռ» — գրել ետ — «մեծի» — Սրբազանին առ խանն վասն արտասահմանութեան երկրականացն և աւերման երկրին, թէ այսպէս և այնպէս է առնելոց, եթէ ոչ անսայցես. և զայս թուղթ պատշաճ էր ի ձեռն գլխաւոր և պատուամեծար վարդապետաց առաքել — «որպէս և հրամայեալ էր արքայն» — բայց՝ ճանապարհն երկաննու կարի երկիւղալի էր և բարբարոս զօրօք լցեալ. դղեկապետքն հանդերձ ստորագրեցելովքն դառնացեալ, ցասուցեալ և յոյժ սրամտեալ, և թուղթն ևս բօթառու և կսկծեցուցիչ, և ամենեքեան ի բարկութիւն դրդեցեալ: Վասն որոյ կարի դժուարին էր յայնմ դառն սոսկալի և մահաբեր ժամուն ումեք երթալ և տանել զայն թուղթն առ խանն. Սրբազանն հրամայեաց տեղապահ Մկրտիչ վարդապետին Շօռօթեցւոյ առ ի տանել, իսկ նա յառաջագոյն յերեկոյին յանձն էառ և յետոյ զշիւանդութիւն և զերկիւղն պատճառելով չէառ յանձն. ապա տխուր դիմօք և մեղմն բանիւ եհարց ցպատուական Հայրն մեր ասելով՝ «Ղուկաս վարդապետ, դու կ'երթաս»: Յայնժամ համեստ և հեզանձն հայրն մեր ըստ խոնարհ և կամակատար բարուց իւրոց (որ ոչ էր զհրաման ինչ ի մեծագունէ իւրմէ ի բաց ասացեալ) յօժարակամ սիրով յանձն էառ ի գնալ, զերկիւղ մահուան ի բաց դնելով. բայց ի գիշերին այնմիկ յերազի տեսեալ էր, զի երկու ահագին գոմէշք մեծաւ ցասմամբ հարկանել կամէին. իբրև յարեան ի վերայ միմեանց առ հարկանել, ի նոյն կէտն զինքն ի մէջ էին առեալ եղջերօքն իւրեանց, և երկոցունց եղջեր ծայրքն ընդ միմեանս — «դիմակցելով» — մաքառելով, ինքն մնացեալ էր անվնաս ի ճակատամէջս եր-

հուց ահեղ գումշոց։ Իբրև զայս տեսեալ էր յերազի, ի միտս իւր մեկնաբանեալ էր թէ՝ որպէս ի ոգորիլն եղջերաւորացն ինքն ի մէջի գոլով առանց վնասու էր մնացեալ, նոյնպէս և ի գտանիլն իւր ի մէջ երկուց եղջերասաւոր իշխանութեանց ի վերայ միմեանց գայլայլմամբ ոգորելոց, Աստուծով ի գնալն և ի գալն իւր առանց իմիք վնասուց է լինելոց (որպէս և եղև իսկ)։ Վասն որոյ Հայրն մեր պատուական զյոյսն իւր առ Քրիստիշն տիեղերաց Տէրն մեր Յիսուս Քրիստոս դնելով՝ միով — «տղայիւ» — քաւանկլով նկեալ գնաց յերուսաղէմ բերդն. (յայնմ ժամու յորում բանակն արքային ընդ իրեարս էր խառնեցեալ և պատրաստեալ էին ի գնալ. և Ապխազքն ի գիշերի ցրուեալ էին և շուրջ զբերդովն թագթագուր շրջելով զաւարս որոնէին). և ի մերձենալն ի ձորն Երևանու, ուր անցանի գետն Հրազդան, ի յանցանելն ընդ կամուրջն և մօտելն ի գուռն բերդին, բազմութիւնք մարդկանց յաջմէ և յահեկէ, ի դիմաց և ի թիկանց, որք անդ կային, այնք որք կարի վնասակիրք էին, ի յայրուցմանէ սըրտից իւրեանց զատամունսն կրճտելով՝ զպէսպէս տգեղ բանս և զհայհոյութիւնս իւրաքանչիւրեալս յիմարաբար — «ասէին» — բարբանջէին (իբր թէ՝ զձեր հաւատակիցն բերեալ զերկիրս և զտունս մեր աւերեցիք, և զայլս այսպիսիս՝ խաւնիճաղանճ տաճիկքն ահացուցանելով ասէին, բայց՝ ոչ իշխէին մերձենալ յերկուղէ խանին)[9]. և իբրև գնացեալ էր առ խանն՝ շնորհիւ Տեառն յոյժ սիրով ընկալեալ էր, և քաղցրութեամբ զրաղում բանս հարցեալ, և ընդ միմեանս յօգուտ ժամս խօսեցեալ. և — «իբրև» — մինչ զպատասխանին առեալ էր, զչն երեկոյացեալ էր. և ի գիշերի ի մթանն ի դառնալն բազում խումբք լէզգիացց ի ճանապարհին ի տեղիս տեղիս, պատահեալ էին և խօսեցեալ և ոչինչ վնաս հասուցեալ նմա. և եկեալ էր ի բանակն առ արքայն և առ որդիս նորին մինչ հանդերձեալ էին ի գնալ. զոր ինչ տեսեալ և լուեալ էր ծանոյց արքային և վերադարձաւ ի սուրբ Աթոռս առ Սրբազանն՝ բերելով զպատասխանին տալ բղեշն. ընդ այն յոյժ ուրախացեալ օրհնեաց Արդ՝ իբրև չուեաց արքայն լէրկիս տանելով ընդ իւր վերկրականս,—«յայնժամ»—խնդրոյն ելին բերդապետք տաճիկքն ծարաւիքն արեան քրիստոնէից և գտին զեօղս, զտունս և զընակութիւնս իւրեանց աւերեալ և զամենայն ապրուստն յափշտակեալ և ի վերջին թշուառութիւն հասեալ, սկսան այնուհետև խրոխտեալ ի վերայ սրբոյ Աթոռոյս և Սրբազանին և զպէսպէս երկեցուցիչ բանս խօսիլ. վասն որոյ երանելի Սրբազանն և աթոռակիցքս ամենայն հանդերձ գիւղացիօք մերովք և այլովք առ մեզ եղելովք՝ երկնչիլ սկսաք և զպէսպէս զերկիւղս ի միտ բերել. մինչ զի՝ եկեալ ի տանիս հայկաք ի ճանապարհս երևանու մտածելով թէ՝ գուցէ իշխողն բերդին ի դառնութենէ և ի սաստկութենէն սրտմտեալ զղջայ առաքեսցէ ի վերայ մեր ի յապստամբութիւն և կամ զտուգանս առնուլ, զոր առաքեսցէ ի վերայ մեր ի յապստամբութիւն և կամ զտուգանս առնուլ կամիցի. վասն զի ի գլխաւորացն հայոց, առ ինքն եղելոց, որք — «զնա-

[9] Այստեղ փակագիծը մենք ենք փակում, ձեռագրի մեջ մոռացված է։

ցեալ» — մտեալ էին ի բերդն առ ի պահպանիլ. որք էին ժ խղճալի անձինք, զմեծամեծ տուգանս խնդրեաց. զրպարտելով զնոսա թէ՝ զուք հաւատայիք զոլով ընդ մեզ մերոյ դաշնադիր էիք լեալ նմա և զխայինութիւնս առնել կամէիք մեզ և զայլ այսպիսի ստաբանութիւնս բարդելով ի վերայ խղճալեացն և ի վերայ իւրաքանչիւրոցն զնստաբարոյ և զժամնտ զինուորս եդեալ, խըստութեամբ և ճշտիւ պահանջէին ի յոմանց ՅՃ թուման, յոմանց ՃՃ, և յոմանց Ա՛Ճ, ասելի քան զԻՒ՛ թուման պահանջելով նեղէին և չարշարէին զնոսա գանութիւ և բանտիւք: Իսկ ողորմելիքն այնորիկ անճարացեալք զինչ և զստացուածս, զտունս և զայգիս իւրեանց վաճառելով և ի տաճկաց ծանր վերագրօք ղրդամս պարտք առնելով հաղիւ հազ ետուն. և վերջապէս բազումք ի յետին թշուառութիւնս հասեալ հոգօք և տառապանօք վարանեալ փոխեցան ի Տէր, և զընտանիս իւրեանց թողին ի գառն աղքատութեան: Եւ զկնի գնալոյ արքային յերկրէս, մեք առ խանն շուտով զիարդ մխիթարութեան գրեցաք, և զզնալն նորին ծանուցաք. և յետ երկուց աւուրց Սրբազանն հանդերձ եպիսկոպոսօք, խաչիւ և գաւազանաւ և ամենայն հայրապետական բանակօք գնացաք ի տեսութիւն խանին. և ի մտանելն ի բերդն և ընդ անցանելն ընդ խառնիճաղանճ բազմութիւնսն տաճկաց, և ի տեսանելն զխաչըն և զմեզ զամենեսեան, թէ զորքան բարբանջմունս արարին առաջի քմաց իւրեանց. մինն ասէր (օլքեամզ յըխան գեալտի) և միւսն ասէր (բարիքնալա զօճաման խալիֆայ օլքեամըզի յըխտըն խալաթի գէյտըն) և զայլս այսպիսիս. բայց ի մտանելն առ խանն, կարի սիրով ընկալաւ և շնորհակալ եղև վասն ազատելոյ զմնացեալ հայ և տաճիկսն ի գերութենէ, որք ընդ հովանեաւ սրբոյ Աթոռոյն մերոյ ամրացեալք էին. և ծանր խիլայ ևս ետ. և Սրբազանն ևս վասն շիջուցանելոյ զՀուր բարկութեան և դառնութեան որ ի սիրտս բռնաւորին և այլ տաճկաց ի վերայ քրիստոնէիցս, նախահոդ լեալ՝ իբր գին ազատութեան զմեծագոյն թուով դրամս ինչ ետ ի յըմբերանումն նորին կամաւորապէս. զի մի ինքնին յակամայ զնորին կրկնապատիկն խնդրեսցէ, և յընդդիմանալն մեր՝ սրբոյ Աթոռոյն զկրկին վնասս հասուսցէ: Քանզի ի գալն — «և ի գնալն» — արքային յերկիրս մեր և ի գնալն աստի, թողեալ զաւերումն գիւղօրէից, այգեաց և այլ մուլք կոչեցեալոց և միւս մասրաֆիցն սրբոյ Աթոռոյս, յատկապէս նաղտ (բ ու թ.) (= երկու հազար թուման) այսքան վնաս եղև: Եւս զերկրական մերազնեայսն զորս որպէս զգերի առեալ տարան, որոց տեղի բնակութեան ոչ ետուն այլ ի բացեայ ի յանշէն տեղիս յերկար ժամանակս բնակեցուցին պանդխտութեամբ, և զանձնծութիւն ինչ ոչ արարին. վասն որոյ՝ կէսք ժամտաժահիւ, կէսք օդով խստութեան, կէսք սովու և կէսք այլ ինն ցաւօք քան մեծի մասին հանգեան ի Քրիստոս ի յօտարութեան և ի գառն պանդխտութեան կարի հեծեծանօք: Իսկ որք մնացինն, զկնի միջոցաց ինչ՝ միջնորդութեամբ և պէսպէս թղթագրութեամբ և մեծավաստակ աշխատանօք հոգելոյս Հայրապետին, արքայն Վրաց և իշխօղն մեր ընդ միմեանս հաշ-

տելով և յամ ամէ զմնծագոյն տուրս տալ խոստանալով նոյնոյ արքային, քաղցում սպրատութեամբ վերադարձան յերկիրս մեր և մնծաւ հայթայթանօք սկսան աշխատել և զհնարս կեցութեան գտանել. զի վասն անվաստակ մնալոյ երկրիս մերոյ, սովն ևս տիրեալ էր. և յայնմ միջոցի Աստուծով միայն սուրբ Աթոռս էր ի չինութեան. վասն որոյ՝ տաճիկքն տնտեալ զշինութիւնս սորին և զարգատութիւնս իւրեանց, օր ըստ օրէ սկսան կատարել և լրութեամբ յառնել ի վերայ սրբոյ Աթոռոյս և զբազում վնասս հասուցանել չանալ. և սպասէին դիպող ժամու և գիտէին ևս զծանր հիւանդութիւն լուսահոգւոյն երկայ միջոցաւ. և գիտէին մահուան նորին առ ի ջղարութիւնս իւրեանց ի կիր արկանել. ոմանք զոչխարս և զտաւարս էին նշանադրեալ առ ի ասպատակել ի տեղի ասպատակել տաւարաց իւրեանց և ոմանք զայլս. վասն որոյ ընդ ցայգ և ընդ գիշեր ըստ յորս՝ այսինքն ի մարաղ՝ մտեալ գազանի անտիրացեալ ժամու սպասէին և խումբ խումբ երթային և գային: Ահա այս էր պատճառն սասանութեան երկրիս մերոյ և վրդովման զորս ծանուցաք սիրելեացդ փոքր ի շատէ ստուգութեամբ: Արդ՝ հոգելոյս և երանելի Հայիթաղեան մեր Տէր Սիմէօն իւրով խորախորհուրդ և նրբազննին հանճարովն ջայս ամենայն գիտելով ի ստուերք յառաջ քան զերջանիկ մահն իւր, ի հաղորդութիւն մարմնոյ և արեան Կենարարին յօր շաբաթու նաւակատեաց Վարդավառին կոչեաց զբոլոր եպիսկոպոսունսն և ծանոյց զմահն իւր և յիշեցոյց զալեկոծեալ վրդովմունսն երկրիս և զկատաղութիւնսն սինկիքոր տաճկացն, և զկնի վախճանի իւրոյ զանհրութիւնսն սրբոյ Աթոռոյս և պատուիրեաց նոցա զգոյշ լինել յամենայն կողմանց, և յատկապէս — «ճնճաղոյս» — ծերուցա զգոյշ լինել յամենայն կողմանց, և յատկապէս — «ճնճաղոյս» — ծերուցա նազարդ Մարկոս արքեպիսկոպոսին (որ էր յայնմն ներկայոջ լուսարար սրբոյ Աթոռոյս — «և գլխաւոր և պատուականծար ի մէջ բնափց եպիսկոպոսաց ըստ բարձրագոյն պաշտօնի լուսարարութեան» — համանգամայն և խոստովանաւոր — «լուսաճոգոյն» — ինքեան) վճռաբար և որոշակի և կտակօրէն ի խոստովանիլն ասացեալ էր թէ՝ «ես զՂուկաս վարդապետն յայսքան ամս յայս միտս պահեցի ի սուրբ Աթոռոջս և առ իս, և ոչ առաքեցի ուրեք ի նուիրակութիւն, որ զկնի վախճանի իմոյ յաջորդաբար նա լիցի Հայրապետ և կառավարիւն, որ զկնի վախճանի իմոյ յաջորդաբար նա լիցի Հայրապետ և կառավարեսցէ զսուրբ Աթոռս յայսմ վտանգածին և վրդովեալ ժամանակիս»: Զայս ը

գան» — զկուսականն անագան, յապաղումն և յանցումն վարկեալ՝ գուցէ (ասէն) երկար միջոցաւ անտէր և անգուխ մնալով սուրբ Աթոռս՝ վնասու-
իմք և մեծագոյն դիպուածոյ հանդիպիցի, և ի սաստիկ նեղութեանց անտի ոչ կարելով միաբանիցս դիպուածոց տեւել և տոկալ, ի տեղիս տեղիս ցիր և ցան լինիցիմք և վասն որոյ՝ զներկայական երկիրսն և զալեկոծութիւն ի միտ բե-
րեալ՝ և զօգուտն սրբոյ Աթոռոյս խորհեալ հանդերձ երկրականօք մեծամե-
ծօք և փոքումբք զկատակն լուսահոգւոյն ի մէջ բերեալ և մեծահանդէս սիւնո-
դոս արարեալ, ընտրեցին զընտրեցեալն Աստուծոյ, զպարկեշակեալն և զսի-
րեցեալն ի յաղգս մեր և զլուսնաշխատ միաբանն սրբոյ Աստուածակերտի Աթոռոյս զհոգևոր Հայրն մեր զՏէր Ղուկաս — «կարնեցին» — արքեպիսկո-
պոսն Կարնեցի ի Հայրապետութիւն։ Իսկ նա ըստ հին, առանձնակեր և անփա-
ռասիրաղիր բարուց իւրոց սկսաւ զայլ և այլ արգելարիթ պատճառս յառաջա-
դրեալ և զինքն անքաւական, անարժան և ըստ ամենայնի անկարող վարկա-
նել, և ի տեղւոջէն իւրմէ ի սիւնհոդոսէ անտի ի դուրս ելանել կամէր. և զորք-
քան ստիպէին և աղաչէին, նա ոչ անսայր. և յայնմ սիւնհոդոսի, որք նստեալ կային թէ վանականք և թէ աշխարհական իշխանք մեծամեծք և փոքունք և մանաւանդ արքեպիսկոպոսունք համակեալ և միաձայնեալ զլուսահոգւոյ կատա-
կըն ի մէջ բերելով ասէին. «ի յաղգի և ի միջի մերում դու ես ընտրելին և գլխաւորն և ազգն ես զգիզ էին ընտրելոց ի հարկէ, որում արժանի իսկ ես, և մանաւանդ ներկայ ես. եթէ ոչ յանձն առնուցուս յայսմ երկիւղալի և նեղ ժամանակիս լինիլ հոգաբարձու և պահպանիչ սրբոյ Աթոռոյս և պետ և գլուխ մեզ և ազգիս մերոյ, սուրբ Աթոռս և մեք որ ինչ վնասու և հանդիպիցիմք, դու ես — «պարտականն ես» — գլխաւոր պատճառն, և երանելի Հայրապետին կտակին չընդունող» և այլ այսպիսի բանիւք գիսիրեն տպաւորէին ի միտսն (ողորմարհոս բանիւք ըստէպ ըստէպ աղաչէին)։ Եւ նա ոչ կարացեալ ընդդէմ դառնալ աղաչանաց բազմութեան, յակամայ կամս յօժարեցաւ ի խնդիրս նո-
ցա. և նոքա մեծաւ բերկրութեամբ և անպատում ուրախութեամբ, զանգագա-
հնչմամբ եկեղեցական զարդուք և հոգևոր երգօք առեալ տարան Յաստուածա-
կերտ տաճարն երկնանման և առաջի Քրիստոսաիջի տեղւոյն սարսափելւոյն գերասուրբ Աջոյն համբուրմամբ շնորհատրեցին զյանձն առեալ պատուական անունն Հայրապետութեան. և մեծաւ հանդիսիւ և նոյն եկեղեցական զարդուք տարեալ նստուցին ի մեծ Վեհարանն (և զայս այնու դիտմամբ փութացան շուտով առնել այսպէս, երկուցեալ գուցէ ի ծանրութենէ գերաբարձր և Աս-
տուածային լծոյն՝ փոշիմանալ յետս դարձցի)։ Իսկ ի յառաջիկայ կիւրակէին, որ էր Վարդավառի երկրորդ կիւրակէն, ի նոյն 1229 թուին և յօգոստոսի 2, օծմամբ Հոգւոյն Աստուծոյ մեծահանդէս բազմութեամբ կացուցին ընդհան-
րական կաթուղիկոս և ծայրագոյն Պատրիարգ և պատուական Հայրապետ ամենայն Հայոց և սրբոյ Առաքելականի և Աստուածայնոյ Աթոռոյս Էջմիած-

Նէ և նստուցին յԱթոռ սրբոյն Գրիգորի լուսաւորչին[10] հոգւոց մերոց։ Եւ ամենայն բազմութիւն զանդրանիկ օրհնութիւնն առեալ ի հոգիս և ի միտս իւրեանց, ցնծացեալ բերկրասիրտ նղեն, միամտեցան և ի բազում տառապանաց և ի պէսպէս երկիւղալի մտածութեանց ylրծեալ՝ զիառս վերառաքեցին Նախասահմանողին և զայնպիսի գերընտիր փեսայ պարգեղին Աստուծոյ։ Որում Տէր տացէ զկեանս խաղաղականս և ընդ երկայն աւուրս արասցէ։ Ամէն։

Յաղագս անցից ոմանց, որ զկնի օծման մեծի Հայրապետիս եղեն։

Արդ՝ զկնի օծման մեծի Հայրապետիս մերոյ ի ծայրագոյն Պատրիարգութիւն ամենայն Հայոց, սա ըստ օրինի և ըստ բնական հարկի և սովորութեան նորանիստ Կաթուղիկոսաց՝ ընդ ամենայն տեղիս առ ազգս իւր զանդրանիկ օրհնութեան կոնդակս գրեաց՝ ծանուցանելով զորապիսութիւնս անցից՝ և յամենեցունց ընկալաւ զշնորհաւորական և զհամահաճական մանսարս. նոյնպէս և ի մեծն Պօղիս գրեաց, բայց նոցին համահաճական թուղթն և մանսարն երկար միջոցաւ յամեցաւ. որոյ արգելարիթ պատճառն էր օծակից նղբայրն իւր և պատրիարգն մեծին Պօղոսի Զաքարիա արքեպիսկոպոսն։ Քանզի՝ ի ժամանակս լուսաւորչի Սիմէօն Կաթուղիկոսին, որ ի նմանէ կացուցեալ էր երկիցս ծայրագոյն նուիրակ մեծին Պօղոսի, և անդ պատրիարգական պատուոյ ևս էր հանդիպեալ նպաստութեամբ նորին, և ժամանակ ինչ հարազատութեամբ և հնազանդութեամբ ծառայէր — «ժամանակ ինչ» — բայց չետոյ սակս խոտն, ինչ իրաց և իրականութեանց զիտոր ինչ ապստամբութիւն՝ ինքնագլխութիւն և անպատուութիւն ցոյց ետ լուսաւորչոյն. զթուղթ ոչ գրէր առ նա, խրատուց և գրեցելոցն նորին ոչ լսէր և ոչ պատասխանւոյ արժանի համարէր. վասն որոյ ընդ միմեանս ոխացեալ էին, և ի ձեռն սրտառու բանից և պէսպէս թղթոց, զմիմեանս վիրաւորէին. մինչ զի լուսաւորչին կամեցաւ վրէժխնդիր նմա լինել, բայց ցաւն հիւանդութեան օր ըստ օրէ զօրացեալ և երկարձգեալ հանգեաւ ի Քրիստոս, և մնաց նոյն ատելութեան և խռովութեան կրճիմն ի ժամանակս նորոգ սրբազանիս։ Եւ թէպէտ անյիշաչար և խաղաղասէր Հայրապետն մեր չունէր զատելութիւն ինչ—«ինչ» — ընդ նմա, զի օծակից և սիրական եղբայր էր և բաց ի բարերարութենէ զվաստութիւն ինչ ոչ էր արարեալ, այլ մինչ զնա ի մեծն Պօղիս Պատրիարգ էին կարգեալ, սիրառատ սրբազանն ի Զմիւռնի ի յառաջնորդութեան իւրում լսելով զայն, զմեծահանդէս խրախճանութիւնն էր արարեալ և ըստ արժանւոյն զընծայս ևս յղեալ առ պատրիարգն, ի շնորհաւորութիւն. նաև՝ յատկապէս վասն տեսութեան և սիրոյ նորին ի վերադառնալն ի Զմիւռնոյ ի սուրբ Աթոռս ի վերայ մեծին Պօղոսոյ էր եկեալ առ ի տեսանել զեղբայրն իւր։ Իսկ նա ի նստիլն սուրբ յԱթոռ Հայրապետութեան, զորոյ ոչ մնաց, զոր ոչ ի յառաջին ամին, ընդդիմութիւն և վաւաշարութիւն ինչ ոչ արար, զորոց գրել և ծանուցանելն աւելորդ իմն է. զի թէպէտ զկարկատուն

[10] Այս բառը ուրիշ ձեռքով գրված է «արքիպատրին» ջնջված բառի վերա։

պատճառս յօդելով կամէր անբնդունելի առնել, սակայն՝ ըստ որում ճշմարտութիւն յաղթող է, ոչինչ կերպիւ կարաց զանպատուութիւն և զվնաս ինչ հատուցանել. այլ ինքն ըստ արդար իրաւանցն Աստուծոյ, տարապարտ վնասուց մեծաց և ա. պատուութեանց հանդիպակ՝ արբունական հրամանաւ ի պատրիարգական իշխանութենն հանեալ ի Պրուսայ վտարեցաւ, և բազում դրամավատնութեամբ զկնի քանեաց ամսոց վերստին հաստատեցաւ ի պատրիարգական իշխանութիւն իւր: Եւ մինչդեռ ի Պրուսա ի յարտորս կայր, օրհնեալ իշխանապետք, իշխանք և բոլոր ժողովուրդքն մեծին Պոլսոյ—«(հանդերձ իւրեանց նորոգ եդեալ Պատրիարգ Բաղտասցի Յովաննէս)» — զպարծանական պէրաիս և զփէրմանս և զհամահաճական — «մանաւար» — բազմակնիք մանաւար առաքեալ՝ շնորհաւորեցին զարբազնաստուրբ և զծայրագոյն Հայրապետութիւն սրբութեան նորին ի վերայ ամենայն Հայոց, որպիսական խոնարհութեամբ և բազմաւ ուրախութեամբ. և ինքն Պատրիարգն Զաքարիա այնուհետև սկսաւ զղջանալ ի յանպատեհ արարմանցն իւրոց և յաղթեցեալ ի յանյիշաչարութենէ և ի հեղութենէ Տեառն մեծի սրբազանին, վառեցաւ ընդ նման ի յիղձ հոգևոր. և ջանիւ մեծաւ հաստատեցաւ ի յառաջին հարազատական սէրն:

Յաղագս ճիացման արժանի չինութեանց և նորոգութեանցն սրբոյ Աբոռոյս, զոր առար և առնէ or ըստ օրէ բազմաշխատ և սրբազան Հայրապետս մեր ի ժամանակս իւր, զայնս կարգաւ գրեսցուք ի ներքոյ — «կարգաւ» —

Նախապէս ի նստիլն իւր յԱթոռ սուրբ լուսաւորչին սկսաւ ըղձալաւ սիրով և մեծատենչ փափագանօք ձեռն արկանել ի շինութիւն և ի նորոգութիւն ներքոյ և արտաքոյ Աստուածակերտի և Քրիստոսաիջի Տաճարին, առ ի պայծառազարդել և ի շքեղացուցանել. Գիտել արժան է ասա, զի թէպէտ յաւուրս Տեառն Աստուածատրոյ Հոգելոյս Հայրապետին, և ի ժամանակս նախավրդովմանն կալուածոյն զղբաշից թագաւորաց, ի մէջ Աստուածեան տաճարիս շինեցան բոլոր մարմարոնեայ հրաշակերտ շինուածքն և ծաղկեցան, և չորեքեան խախտեալ սիւնքն նորոգեցան, և տանիքն և յատակն սալեցան, և մէջն սրբոյ տաճարիս բոլոր մարմարոնեայ հրաշակերտ շինուածքն և ծաղկեցան, և չորեքեան խախտեալ սիւնքն նորոգեցան, և տանիքն և յատակն սալեցան, և մէջն սրբոյ տաճարիս բոլոր սպիտակեցան և պատկերագրեցան ի տեղիս տեղիս, և անհեթեթ ծաղկեցան հոգաբարձութեամբ նոյն հոգելոյս Տեառն Աստուածատրոյ Հայրապետին ի Ռձ(կ)Ի թուին, որպէս գրի ի պատմութիւնս նորին երանելոյ, ի գաւազանագրքի աստ. սակայն 60 և այլ աւելի ամք անցանելով, յայսքան միջոցում սրբոյ տաճարի տանեաց բոլոր սալքն և քարինքն մաշեցեալք և քայքայեալք էին և տեղի տեղւոյ մտից անձրևաց, և ի հոսիլ յորդաբուղխ անձրևաց և հեղեղաց իսկոյն ի ներքս մտանելով, զբազածփս և զծաղկումն փիջացուցանելով և եղծանելով ի վայր քաշէին, այնքան՝ մինչ զի ի տեղիս տեղիս ի կաթիլ անձրևաց յորդագունից ի յատակս եկեղեցւոյն զանօքըս պղնձեղէնս դնէին ի պարագրութիւն անձրևաջուրց (զոր աչօք մերօք տե-

սաք)։ Զայս տեսանելով Տէառն Սիմէոնի հոգևոյս Կաթուղիկոսի ծնողի մերոյ, նախապէս մեծածախ գրամագնացութեամբ զբոլոր տանիսն սրբոյ տաճարին գիւրահնար մեքենայիւք (այսինքն՝ զգերան մի պնդապէս ի վերայ տանեացն իրրև զչարիս ամրացուցանելով, և զքառանկիւնի փոկակապ թաթ մի ի ծայր գերանոյն կախելով ճախարակաւ, և զուռա փոկին կամ պարանոյն ի լուծ երկուց եզանց կապչին և ուղղակի զեզինսն քշող մի հանդպ գերանին վարէր և թաթ կշռոցն եզանելով և իջանելով զենագոյն քարինսն ի վայր բերէր, և զնոր քարինսն ի վեր տանէր) ևս խարտեալ քարամբք և կրամածիւք ամրապէս սալել հաս. նաև՝ զերկոսին ճախակողման գասուց առաջին և յետին խախտեալ սիմսն մինչև ի վերին կամարսն հաստատապէս վերանորոգել հաւ ի ձեռն քաջավարժ ճարտարապետի Սահակ կոչեցելոյ. և մինչ կամէր երանելին գմնացեալսն ևս նորոգել, անյաջողութիւնք և պէսպէս նեղութիւնք, և մանաւանդ ծանրագոյն վիշաք և հիւանդութիւնք վերաժամանեալ արգելին, և վերջապէս վասն օրհասին կանխելոյ չուեաց առ մշտաբաղձալին իւր Քրիստոս. և — «(գոբձն)» — խորհուրդն մնաց անկատար։ Իսկ ի յաջորդելն զկնի նորին հոգևորհայր Հայրապետին մերոյ Տէառն Ղուկասու սրբազան Կաթուղիկոսին, Աստուծով սկսաւ նա զսիրտ Ջորաբաբէլի սառնալ, և առաստաւէնչ սիրով վառել ի սէր և ի շինութիւն և ի վերանորոգութիւն սրբոյ Քրիստոսահիմն տաճարին. ձեռնարկեալ նախապէս զմնացեալ զերկոսին խախտեցեալ և բեկբեկեալ սիմսն աջակողման գասուն, ուր երկոքին կաթուղիկոսաբանք են շինեցուցանել ի հիմանց անտի և նորոգել հանդերձ իւրեանց քառակուսի վերնակամարօքն, մեծամեծ և անփոյթելի ընտիր ընտիր քարամբք կարմրագունիւք լաւապէս կոփակոփ տաշեցելովք. ծիթաշաղախ և պնդակազմ լոկոնիւք —«(մեծամեծ)»— ամրապահ և հաստահաղոյս երկաթեայ կապիչս բազումս գետեղելով ի մէջ սեանցն առ ի ըմբռնել զքարինս ընդ միմեանս, և կրամածիւք պնդել և քառակուսի հաւասարաչափ ճակատիւք զարդարել ի հիացումն տեսողաց. և այսոքիկ ձեռամբ քաջարհեստ ճարտարապետի Գասպար կոչեցելոյ։ Գիտելի է և այս, զի զչորիսին սիմսն Աստուածեան տաճարին թէպէտ ի հիմանէ շինել գրեցաք, որպէս և է իսկ՝ որքան առ շրջապատ քարինսն, որք բեկբեկեալ և փոշիացեալ իսկ էին, բայց շնորհիւն ճաղատ ճարտարապետին Քրիստոսի, և աղօթիւք սրբոյ Լուսաւորչին մերոյ հոծախիտ և թանձրախուռն խճողն (որ է բոբխատումն) կարի ամրագոյն և պնդակազմ էր, մինչ զի չօժարակամ եթէ մուրճ կամ ուրն և կամ երկաթեայ գործիք հպիւր վասն սերտութեան և ամբողջութեան զձայնս արձակէր և տեսողն զարմացեալք զփառս տային պահպանողին Աստուծոյ։

Եւ յետ երկուց սեանցն իւրակերտիցն՝ սկսաւ զբոլոր եկեղեցոյ վերնակառոյց կամարաց և կամարամիջաց և սեանց և այլ շրջապատ որմոց եղծեալ և ապականեալ և ի մոխիր դարձեալ հնագոյն բանծեփսն, այսինքն գաճան, հապառ քակել տալ, և ոչ թողուլ նշմարանք ինչ հնագոյն գաջից և եղծեալ ան-

հնձին ծաղկանշից, սկսեալ ի մեծ կաթուղիկէի գմբէթամէջ կետրոնէն մինչև ի ստորին յատակն եկեղեցւոյն՝ հանդերձ ամենայն խորանօք և բեմիւքն, բայց միայն զքանի մի հնագոյն պատկերս մնացին. զայնս ևս ի բաց առին ի տեղեացն առ ի վերանորոգել։ Արդ՝ մինչ զբոլոր եկեղեցւոյ որմոց և առաստաղաց և չորեսին սեանց և կամարաց բռածեփան, այսինքն սվաղան, սկսան վարպետքն քակել, յայնժամ երևեցան ի վաղնջուց ժամանակաց քակեցեալ տեղիքն և հնագոյն բեկբեկեալ և ջախջախեալ քարինքն և երկիւղալի փոսուքինքն, մանաւանդ ի յետին գաւուց երկոքին կամարքն, որք խարտ փշրեցեալք էին, և մեծամեծ քարինքն ի տեղեաց իւրեանց ի բաց ոստնեալք, զոմս ի քակելն ի բաց ոստնեալք, զոմս ի քակելն մեծ ճարտարապետին զարհուրեալ վասն երկիւղի մահուան՝ զուսարար Մարկոս եպիսկոպոսն առ սբբազանն էր յղեալ, առ ի ծանուցանել նմա զվտանգաւորութիւն կամարացն. զի մեծ կաթողիկէի գմբէթին ի վերայ այնց չորից կամարացն էր շինեցեալ, յորոյ ծանրութենէն էին բեկոտեալք։ Իբրև լուաւ սբբազանն (զերկիւղալի և) զարմանալիք լուրն զայն, ինքնին յարուցեալ գնաց ի տաճարն. և ելեալ ի գլուխ սանդղոյն և առնս զերկիւղալի տեղիսն, իւրով աստուածպզդեցիկ հանճարովն զդիւրագոյն հնար իմն եղոյց ճարտարապետին առ ի զիւրաքանչիւր քարինսն փայտիւք և այլ մեքենայիւք նախապնդել, և միակ միակ չփշրեալ քարինսն բեկոտեալ հանել, և ի տեղին զնոր պնդացոյն և ընտիր ընտիր կամարաքարինս շարել լոկոնիւք և երկաթապէս առնել. նմանապէս և զայլ տեղիսըն, որք ի ժամանակս Տհառն Աստուածատրոյ Հայրապետին, ի վերանորոգելն զմէջ եկեղեցւոյն, վասն վրդովմանց և պատերազմացն որ ի մէջ Պարսից և Տաճկաց՝ յայնմ սասանման և յերկուղալի ժամանակին անձեռնհաս լեալ ի շրջապատս սեանց և այլ որմոց՝ ի տեղի քարանց ի վաղնջուց քակեցեալ և մաշեցեալ տեղիսն փայտիւք և դիւրափուլ կողմնդերքք էին կարկատեալք և երեսքն բռեալք, որոց զփայտեալ կոտորս տեսաք աչօք մերովք. այնորիկ ևս քարամբք շինեցան պնդապէս և ընդ հնոյն յարմարեցան։ Արդ՝ մինչ այսպէս տաժանակիր աշխատութեամբ զամենայն քարեղէն բեկբեկեալ տեղիսն և զհնագոյն խախտեալսն նորոգել եւ. ապա այնուհետև զքաջահմուտ բռածեփ, այսինքն զգամպալ վարպետս բերել եւ, և զնատուածակերտ տաճարս բոլորապէս ի յատակէ որմոց մինչև ցմիջակէտն մեծ գմբէթին հանդերձ բոլոր կամարօք և կամարամիջօք սեամբք և խորանք արծաթափայլ սպիտակութեամբ բռածեփս առնել եւ։

Յաղագս ծաղկեցուցմանց և հիանալի շէնեղազարդութեանց և նկարակերտութեանց և զանազան պատկերագրութեանցն Քրիստոսանիմն մեծի՝ տաճարին սրբոյ Էջմիածնի ի ձոյնոյ Վենապետէն.

Արդ՝ մինչ նորոգեցան խախտեցեալ սիւնք և կամարք և այլ հնութիւնքն

արբոյ Աստուածեան տաճարին և բոլոր եղեալ ձիւնափայլ և արծաթանիշ սպիտակացան ի ներքուստ անտի բոլորապէս։ Ապա այնուհետև զծագկարարութեան և զպատկերագործութեան պատասուիսիս տեսանելով՝ ի հեռաւոր տեղեաց և ի հոյակապ մեծանուն քաղաքաց զգոյնագոյն, զերանգ երանգ և զգաղափն զեղորայս և զոսկեայ վարագս մաքուրս ի յեալտուղյ ձեռամբ հարատակ նուիրակաց արհիագունից նախապատրաստել հոգալ և բերել ետ։ Եւ ապա ամենայն գովութեանց արժանի և յոյժ անուանի Շօռօթեցի գեղեցկանկար և քաջավարժ Յովնաթանեան Յովնաթան շնորհալի պատկերահան և ծագկարար վարպետն, որ ի Թիֆլիզ բաղկէր, ի մեծազօր աբբայէն Վրաց խնդրեալ՝ բերել եաւ ի սուրբ Աթոռս աշակերտաբար հանդերձ, զորս հայրական սիրով և պատուով մեծաւ ընկալեալ, և զոռճիկս առատս լիաձեռնութեամբ շնորհեալ, և զպատշաճաւոր յարկս զարդարելս ի բնակութիւն նոցա տուեալ՝ հրամայեաց զգանազան և զխորհրդաւոր օրինակս պէսպէս և գեղեցկատեսիլս ձագկանց նախանկարել ի տեսութիւն և ի հաւանումն ինքեան, առ ի ծաղկազարդել զբոլոր Աստուածակառոյց և երկնանման տաճարն հրաշալի։ Այլ և՝ զգերանս մեծամեծս ստուարս և երկայնաձիգս և զտախտակս նոյնպիսիս ի մայր փայտից տաժանակիր աշխատութեամբ և զրամավատնութեամբ նախապատրաստել էր վասն իսկեալայից և այլ մեքենայից ի պէտս նորոգութեան Աստուածեան տաճարին, որովք և նորոգեալ և սպիտակացեալ էր բոլոր եկեղեցին (որպէս և գրեցաք ի վերոյ)։ Նոյն յարմարատեսակ փայտիւք և գերանօքն հրամայեաց խորախոհեմ և հնարագէտ հիւսանց մերոց ճարտարաց Պետքն հրամայեաց խորախոհեմ և հնարագէտ հիւսանց մերոց ճարտարաց Պետրոս և Դաւթիել կոչեցելոց զսաճարն լուսակիր իսկեալայակապ — «և» — միքենայապատ և տախտակաշար առնել, ըստ յարմարութեան և ըստ պատշաճաւորութեան իւրաքանչիւր կամարաց, խորանաց և առաստաղից՝ ի դիւրութիւն և ի ձեռնհասութիւն ծաղկարարաց. և այս ոչ եթէ մի անգամ, այլ բազում անգամ ըստ պիտոյից և ըստ փոփոխման իւրաքանչիւր տեղեաց. և զայս հիւսքն մեր քաջավարժ գոլով՝ պնդակազմ յօրինէին. և այնուհետև Աստուծով զօրացեալ Յովնաթան շնորհալին աներկիւղութեամբ զձեռն ի գործ արկանելով նախապէս զբոլոր կոչեցեալ օրինակն և նկարագիրն ցուցանէր Տիառն մերոյ մեծի սիրավառ սրբազանին, և ըստ հաճութեան և հաւանութեան նորին տաժանի սիրավառ սրբազանին, և ըստ հաճութեան և հաւանութեան նորին տաժանի սիրավառ սրբազանն ոչ գադարէր յորհնելեալ ծաղկազարդէր. և ինքն սիրատափ

լուսակազմ և խաչանիշ կամարամիջաց առաստաղն և վնոցին միջածիրսն, կնօպէկ և պորտ կոչնեալ, սկսաւ ոսկեձոյլ նկարիւք զեղաճաճանչ և բոլորակաձև միջակէտս նկարել, հանդոյն ճառագայթարձակ արեգական. և ոսկեայ թիթղամբք, այսինքն նալատուկեայ վարազու կապուտակ լճվիրթիւք և այլ պայծառագոյն ծաղկօք՝ զարդարեալ և զանազան ձևով նկարակերտել, և իւրաքանչիւր կամարակապ առաստաղաց միջածիրն ընդ իւր հանդիպակաց միջածրին, համեմատ համազդից և միաչափ յօրինեալ, այսինքն՝ աջակողման առաջին դասուն, միջինն ընդ միջնոյն, և վերջինն ընդ վերջնոյն՝ զոյգ զոյգ հանդէպ միմեանց, ոսկեփայլ ճառագայթիւք երկրորդապէս զպատարագամատոյց սրբաղնասուրբ բոլոր խորանսն զարդարել. եւ ոսկեզարդ ծաղկամբք վերնակաոոյց կամարօք,—«միջածիր» — բոլորակաձև ոսկեկազմ և գեղաճաճանչ միջածրիւք, որմովք և առաստաղօք, հանդերձ պայծառափայլ յօրինմամբ՝ հիանալի տեսողաց: Երրորդապէս զ12 լուսակաոոյց և երկնամման ավնիւ կամարաց մէջսն և ճակատն և կողմունսն, հանդերձ չորիւք երկնաբերձ սեամբքն թէ ո՞րպէս ոսկիաձոյլ նշուղիւք և գեղաճաճանչ ճառագայթիւք և պայծառատեսիլ ծաղկօք զանազանիւք զարգարեաց, և ոսկեփայլ գեղեցկութեամբ հիարշալ յօրինուածով պճնապաճոյճ պայծառալարդեաց. զուգահաւասար իւրաքանչիւր կամարքն և ճակատն և կողմունքն հանդիպ միմեանց, ընկեր առ ընկեր համաբաղդատ իւրեանց՝ խորան ընդ խորանաց, ծաղիկ ընդ ծաղկանց, հաշիւք ընդ հաշիւից, և մանաւանդ զբոլոր մէջս և զառաստաղս մեծի լուսակազմ և երկնահանդոյն կաթուղիկէին և բարձրաբերձ գմբէթին — «թէ ո՞րպէս»—ի իջածրէն սկսեալ մինչև ցվերնակաոոյց կամարագլուխսն և անտի սկսեալ մինչև ցստորոտն չորից սեանց, այսինքն ի չատակսն հանդերձ սիմայ անկիւնիւքն, թէ ո՞րպէս չքնաղատեսիլ և հիանալի յօրինուածովք կերպակերպ խորհրդատուր ձևօք — «հիանալի» — նրբատեսիլ զանազան ծաղկօք և ոսկեճաճանչ բոլորակօք, շքեղ և զարմանալի հրանգ հրանգ արփիափայլ փառօք ծաղկազարդեալ վայելչացոյց. զայնցանէ մանրամասնաբար անհնարին է մեզ ճառել ասել քանզի՝ Աստուածանկար և լուսազարդ տաճարն ըստ Աստուածային տեսլեանն և մեծախորհուրդ գերազանցութեան և խաչանիշ ձևակերպութեան, թէպէտ որպէս զսին լուսեղէն և երկին երկնի ի յերկրի վայելչապէս գեղով հրաշակառոյց յօրինմամբ քան զամենայն գեղեցիկս գեղեցկագոյն է ըստ ներքին և ըստ արտաքին տեսութեան. սակայն նոյնն մինչ ոսկենկար պայծառազարդեցաւ, և ևս առաւել որպէս զդրնդէն և զլուսատիպ սին գերափայլեցաւ հանդերձ ամենայն առաստաղօք և կամարովք, խորանօք և —«ձեղնօք» — սեամբք, և շրջապատ որմովք: Այլ և՝ հաւասարաշափ սեանց միջին խարսխացն յորս ոտք կամարացն են եղեալք, ըստ բարձրութեան չափուց — «նոցին» — հինգ և կամ վեց կանգնոց ի վերայ շրջապատ բոլոր որմոց որ ի մէջ սրբոյ տաճարին գօտի գոյր հաստատեցեալ, որ ի բարբա-

ոչ այլազգեաց թախչայ և կամ չինիբեար կոչի, զայն շրջաբոլոր գօտին զուտ ոսկեայ թիթեղամբք և մաքուր լէճուէրթիւք ոսկեզօծ ծաղկել ետ պայծառափայլ տեսլականբք. և որոց ի վեր և ի վայր զմիջամնեծ ծառս և ծաղիկս վայելչագեղս և վարդափթիթս կազմել հրամայեաց, Հանդերձ նոճի ծառովք կանաչագեղիւք սէրվի կոչեցեալովք:

Այլ և ի ճակատս չորից լուսակառոյց սեանց ի ներքոյ վերնախարսխաց բարձրագիտակաց և միջնախարսխաց սալաքոն կոչեցելոց իւրաքանչիւր սեանց քառանկիւնից չորից ճակատուց զոյգ զոյգ — «ի վեր» — և միակ մէկ դէրաշագեղ պատկերս Տէրունականս և տնօրինականս՝ զսէրոբէից, զքրոքէից և զառաքելոց և՝ զայլ սրբոց, ոսկեզարդս և գեղաղէշս խորհրդաբար և վայելչապէս նկարագրել և շքեղազարդել ետ ի վերայ կտաւոց, և ի ճակատս սեանց և — «ոտից» — սեղանոց, խորանաց և շրջաբոլոր ոտից և առաստաղաց վեհագել ետ. և զոմանս ի վերայ ոտից պատկերագրեցոյց, զարմանակերտ և հրաշատեսիլ յօրինմամբ և ոսկեզօծ փայլմամբ, ըստ ընդունելութեան և ըստ աւանդութեան, ըստ ծիսի և ըստ վայելչութեան Հայաստանեայցս ուղղափառ եկեղեցւոյ, որք լինին ընդ ամէնն ՓուտՓ իբրև 120 և այլ աւելիք, որք էին պատկերք Տէրունականաց, տնօրինականաց, հրեշտակաց, առաքելոց երկոտասանից, մարգարէից, հայրապետաց, վարդապետաց, ճգնաւորաց կուսանաց, թագաւորաց, զինուորաց և գերահռչակ մարտիրոսաց հայկասեռից. զորս ըստ մեծի մասին նոր ի նորոյ ըստ ըղձալի և սիրական տենչանացն և ըստ Աստուածաշունչիկ և նրբանկատ հանճարոյն պատկերագրել և յօրինել ետ, և զոմանս որք հնացեալք և անգեղացեալք էին, նորոգեալ պայծառացոյց:

Այլ և՝ զտեղին իջման Բանին Աստուծոյ և զհրաշակերտ մարմարոնեայ գմբէթին որպէս սիւն — «լուսեղեն» — հրեղէն և խորան լուսեղէն, որ ի կեդրոնի, այսինքն ի միջակիտի Աստուածեան տաճարին հրաշակերտեալ է, զայն ևս նոր ի նորոյ վերստին ներքոյ և արտաքոյ պատկերօք և ոսկեզօծ ծաղկօք և նրանգ նրանգ գունով շքեղազարդել ետ — «(նոյնպէս և երեք)» — հիանալի և նրանգ նրանգ գունով շքեղազարդել ետ. և այսպէս մինչև ցյինգ և վեց ամս Աստուածակերտ և երկնանման տեսլեաց. և այսպէս մինչև ցմեծ գմբէթին սկսեալ մինչև ցստորոտս սեանց և բոլոր տաճարն ի միջակիտէ մեծ գմբէթին սկսեալ մինչև ցստորոտս սեանց և բոլոր որմոցն հանդերձ խորանօք և սեղանովք, բեմիւք և նոցին աստիճանօք ծաղկամբ և պատկերագրեալ պայծառացոյց երկնաբաստակ և եռեմասարա կազմարդեալ և պատկերագրեալ պայծառացոյց երկնաբաստակ և եռեմասարա յօրինմամբ. նաև զդրունսն նոյնով տաճարին արտաքին կողմամբք հանդերձ առաստաղան մեծի և հրաշակերտի զանգակատանն, որ պէսպէս ծաղկամբք և զանազան կենդանեաց և թռչնոց պատկերօք քանդակագործեցեալ և նկարագրեալ է, զայնս գունագոյն գեղովք ծաղկափայլ շքեղազարդեցոյց և խորհրդաւոր պատկերս ևս ի յատաստաղս դրանցն նկարագրել ետ, ի վայելչութիւն, ի յուրախութիւն, ի բերկրասրտութիւն և ի պարծանս ազգին իւրոյ Հա-

յոց մնծաց, զոր Տէր Աստուած վայելել տացէ և հաստատուն պահեսցէ մինչև ցմիւս անգամ գալուստն իւր։ Ամէն։

Այլ և՝ ի զարդ և ի պայծառութիւն անօրինականաց և տէրունականաց տօնից և թափօրաց, զամենայն խաչվառսն, որք վասն վաղեմի լինելոյն հնացեալք և անպիտանացեալք էին, թէ մնծամնծքն և թէ փոքունքն, զայնս նոր ի նորոյ պայծառապէս նկարակերտել և շքեղազարդել և գունագոյն կերպասեօք զարդարեալ նո ի վայելչութիւն հոգևոր հանդիսից, որք էին թուով։

Հայ արվեստը քրիստոնեական արվեստի մի ճյուղն է. սարքաբախտաբար մենք շատ քիչ, համարյա չնչին տեղեկություն ունինք նախաքրիստոնեական հայ արվեստի մասին։ Մնացած են բերդեր և մի տաճար Գառնիում, որ հունա-հռոմեական արվեստի դրոշմն է կրում։ Հայ քաղաքակրթության նախնի կետրոններում, Արտաշատ, Նուշնիակ Դվին և Վաղարշապատ, պեղումներ չեն կատարվել։ Բայց անկրկնա է, որ Հայոց եկեղեցական արվեստի մոտիվների, գուցե և տեխնիկայի մեծագույն մասը ժառանգություն է հեթանոսական շրջանից։ 6—7 դարերից կան հայ եկեղեցիների հոյակապ մնացորդներ, որոնք իրենց զարգացման նախընթաց պատմությունն են ունեցել շատ դարեր առաջ։ Բայց և այնպես, ընդհանուր առմամբ հայ արվեստը քրիստոնեական արվեստ է, ինչպես քրիստոնեական արվեստ ենք համարում ռոմանական կամ գոթական արվեստները։

Քրիստոնեական արվեստի, ինչպես և քաղաքակրթության պատմության հնագույն աղբյուրը կապված է գերեզմանատան հետ։ Գրավոր հիշատակարաններն այնքան լույս չեն սփռում ապգերի նախնական կյանքի և քաղաքակրթության վերա, որչափ գերեզմանատան պահված մնացորդները։ Քրիստոնեական կյանքի և արվեստի ուսումնասիրության առաջին աղբյուրները կատակոմբներն են՝ Հռոմում, Նեապոլում, Սիրակուզայում, եգիպտոսում ևն.։ Հալածված քրիստոնեությունը միայն ստորերկրյա գերեզմանատներում և այն էլ միայն սիմվոլիկ նշաններով կարող էր հայտնել յուր գաղափարները։ Բայց քրիստոնեությունը պետական կրոն դառնալով, գեղարվեստը հարություն է առնում գերեզմաններից. ազատության արևը կենդանություն է տալիս նորան, ինչպես մի բույս, որ երկրի տակից հանում է յուր գլուխը և արևի ջերմության տակ ոստեր արձակում և ապա փթթում գեղեցիկ և բուրմունքով լի յուր ծաղկով։ Քրիստոնեության առաջին երեք դարերում հետզհետե ընկնում է անտիկ արվեստը, բայց նորա ավերակների վերա կանգնում գեղարվեստի մի նոր տաճար, հիմքը հեթանության վերա դրված։ Կոստանդին Մեծից մինչև Հուստինիանոս Մեծը քրիստոնեական արվեստի զարգացման առաջին մեծ շրջանն է, ճարտարապետության, մոզայիկ և նկարչական արվեստների, մասամբ և պլաստիկայի։

Այս շրջանից արևելքում ճարտարապետական մեծ կոթողներ չեն մնացած. Անտիոքի, Երուսաղեմի և Աղեքսանդրիայի գլխավոր շենքերի գոյու-

թյան մասին միայն գրական աղբյուրներից գիտենք։ Ավելի շատ, ճարտարապետական և մոզայիկ արվեստի հուշարձաններ կան Հռոմում և Բավիննայում, մասամբ ևս Միլանում։ Արևելքի միակ նշանավոր հիշատակարանը Այա-Սոֆիան է և Սալոնիկի նույնանուն եկեղեցին։ Այս հանգամանքը հիմք է ծառայել ընդհանրանալու այն կարծիքին, թե քրիստոնեական արվեստի օրորանը արևմուտքն է, հատկապես Հռոմը։ Բայց արվեստի պատմության բացատրության մեջ վերջերս մի մեծ հեղաշրջում է կատարվում. «Լույսն արևելքից» լատինական ասացվածքը ճշմարիտ է և արվեստի վերաբերությամբ։ Այս ուղղության համար շատ նյութեր և ցուցումներ են տվել Vogüé-ն յուր La Syrie Centrale աշխատությամբ, Texier-ն, բայց ամենից զորեղ ներկայացուցիչն ու վաստակավորը Վիեննայի համալսարանի ուսուցչապետ Ստրժիգովսկին է։ Անգրիացիներից կարելի է հիշատակել Լեթըրի՝ բյուզանդական և ոոմանական արվեստների ծագման ուսումնասիրությամբ։ Հայ արվեստից մեծ չափով օգտվել են այս տեսության լուսաբանության համար Ստրժիգովսկին և վերջերս Վալտեր Bachmann, Kirche u. Moscheen in Armenien u. Kurdistan, նըկատելով ոոմանական և գոթական արվեստի որոշ նմանություններ հայ արվեստի մեջ։ Ըստ Ստրժիգովսկու, իսկապես Հռոմմնական արվեստ չկա. նա ոչ այլ ինչ է, եթե ոչ հունական։ Հռոմը դեպի արևելք արվեստի մոտիվներ չէ ուղարկել. չկենք է դինվորական Հռոմը շփոթել գեղարվեստական Հռոմի հետ. բայց յուրացնելով հունականը, տվել է նորան որոշ, անհատական դրոշմ։ Ինչ որ հունական չէ, ինչ որ հունականով բացատրել կարելի չէ, նորա աղբյուրը ուրիշ տեղ պետք է որոնել՝ արևելքում։

Բյուզանդիան, արդարև, եղել է արվեստի զարգացման մի հնոց, բայց այդ հնոցի ճառագայթները եկել են արևելքից։ Բյուզանդական արվեստի տարրերն են Փոքր Ասիայի, հատկապես Եփեսոսի և Աղեքսանդրիայի տեղական բնավորություն ստացած հելլենականությունը. ամենամեծ ազդեցությունը սակայն արևելքից էր. Ասորիքը, Միջագետքը, Պարսկաստանը, Հայաստանը, Կապադովկիան, մինչև իսկ Փոքր Ասիայի միջին գավառները մի ամբողջություն են կազմում արվեստի տեսակետով, և իրենց մոտիվներով մեծ զարկ տալիս արևմտյան և բյուզանդական արվեստին։ Աղեքսանդր Մակեդոնացու նվաճումներով հելլենական արվեստը հաստատվեց և այդ երկրներում, բայց քրիստոնեության ծագմամբ և տարածմամբ արևելքն ազատվեցավ այդ հպատակությունից և տեղական ինքնուրույնությունները ոչ միայն գլուխ բարձրացրին, այլև դեպի արևմուտք սկսեցին շարժվել քրիստոնեության հետ։ Արևելյան քրիստոնյա ազգերի մեջ հայերը կարևոր տեղ են բռնում իրենց քաղաքակրթությամբ և արվեստով։ Նորա մնացորդներով հնարավորություն է ստեղծվում պարզելու արևելքի և արևմուտքի արվեստների մեջ եղած կապը, մանավանդ, որ շնչին են ուրիշ քրիստոնյա ազգերի արվեստի մնացորդները

արևելքում։ Ահա հայ արվեստի տեղը և պատմական մեծ արժեքը ընդհանուր արվեստի պատմության մեջ։

Մինչև վերջին ժամանակներս հայ արվեստը բյուզանդական մի ճյուղն է համարվել և այդ ոչ միայն ճարտարապետության, այլև մանրանկարչության մեջ։ Եվ այդ տեսությունը իբրև արտաքուստ դյուրըմբռնելի՝ ընդհանրության է գալ ամեն տեղ։ Չէ՞ որ բյուզանդացիք մի մեծ պետություն էին և հայերը մի փոքրիկ ազգ, երբեմն և ենթակա նրանց քաղաքական ազդեցության. եթե կա նմանություն երկու արվեստների մեջ, բնական պիտի համարել հայերի փոխառությունը բյուզանդացիներից։ Եվ այսպիսի դատողությունը սխալի մեջ է ձգել նույնիսկ բյուզանդական արվեստի պատմության այնպիսի ականավոր ներկայացուցչի, որպիսին Կոնդակովն է, որ հայոց ազգային արվեստի ծագումը մինչև Ը դարն էր հասցնում. այն կարծիքը հայտնել է մի ժամանակ և Սարդիգովսկին, որ հետո իհարկե բոլորովին փոխել է։

Հռիփսիմեի վանքն, օրինակ, շինված է 618 թվին ըստ արձանագրության և ըստ երկու ժամանակակից աղբյուրների. նշանակ ժամանակագիր և Սեբեոս։ Իսկ Կոնդակովի կարծիքով պետք է շինված լինի Ը դարում, մինչդեռ Հռիփսիմեի նախատիպն ունինք Զ դարում շինած, Ավանի եկեղեցին։

Այստեղ ցայտուն կերպով երևան է գալիս այն ճշմարտությունը, թե ազգի հոգևոր կյանքի ոչ մի երևույթ հնարավոր չէ ինքնըստինքյան ուսումնասիրել. նա կապ ունի և մյուս երևույթների ու հոսանքների հետ։ Հայ արվեստի պատմությունն ուսումնասիրելու համար անհրաժեշտ է ի նկատի ունենալ բովանդակ կյանքը յուր բոլոր ավյալներով, նորա պատմությունը, կրոնը, քաղաքակրթությունը, նորա հարաբերությունները դրացի ազգերի հետ և.ն.։ Այս հիմունքներով քննության ենթարկելով մեր արվեստի հիշատակարանները, այլ եզրակացության ենք հասնում։

Բյուզանդական արվեստի էական տարրերը հետին հելլենականության հետ և արևելքն էր։ Բյուզանդական պետությունը կապված չէր մի ազգի հետ. հունը նորա խոշոր տարբերից մեկն էր և ավելի արևմտյան մասում հաստատված, բայց այդ պետության մասերն էին հայերը, ասորիները, վրացիք, եգիպտացիք, որ փոքր դեր չեն կատարել նորա մեջ։ Հայ նախարարներն իրենց զորքերով Հուստինիանոսից սկսած այդ պետության զինվորական և քաղաքական կյանքի մեջ առաջնակարգ դեր են կատարել։ Հայտնի հայագետ Դելբրյուկը յուր բյուզանդական պատմության և Die Genesis der byzantinischen Themenverfassung[1] աշխատության մեջ ցույց է տվել հայերի կատարած մեծ դերը այդ պետության մեջ։ Հուստինիանոսի ժամանակից սկսվում է զինվորական թեմերի կազմակերպությունը, բայց ավելի կատարելության Ե հասնում է դարում, Հերակլ կայսեր օրով։ Կոստանդին Միրանածինը (913—

[1] Leipzig, 1899, U. U.

959) մանրամասնություններ է հաղորդում այդ մասին, ամբողջ բանակը յոթ մասի էր բաժանված և դրանից երրորդը Το Armeniakῶn ΘΕΜΑ-ն էր, որի պետը շատ հաճախ հայ նախարարներից էր նշանակվում: Այդ մասին տեղեկություններ են տալիս բյուզանդացիների հետ և հայ պատմիչները: Հայաստանի զորապետը պետության ամենաբարձր պաշտոնյաներից մեկն էր. ΠΑΤΡΙΚΙΟΣ ΚΑΙ ΕΤΡΑΤΗΓΟΣ ΤΩΝ ΑΡΜΕΝΙΑΚΩΝ, հավասար Անատոլիայի զորապետին կամ Իտալիայի էքզարխին: Ջ, է և Ը դարում հիշվում են մի շարք հայ պատրիկներ, կյուրապաղատներ կամ զորապետներ, Հայոց նախարարական գլխավոր տներից: Ը դարի սկզբին կայսերական գահի վերա բարձրացավ (711—3) Փիլիպպիկոս Վարդանես հայ իշխանը: Կոստանդին Ե-ի ժամանակ (714—775) Արտավազդ կյուրապաղատը մայրաքաղաքի կամ կայսերական թիկնապահ զորքի զորապետն էր, կայսեր փեսան և այնքան ազդեցիկ, որ կայսերական գահին էր ձգտում: Պատկերամարտ կայսրերը իրենց ուժը հենել էին հայ կուսակցության վերա: Ը դարու սկզբում կայսերական գահի վերա բարձրացավ Լևոն Ե, զորքի խնդիրքով: Վերջապես 867—1025 ԹԹ. կայսերական գահի վերա բարձրացավ այսպես կոչված մակեդոնական հարըստությունը, որ ծագումով հայ էր և Փոտ պատրիարքի վկայությամբ՝ նույնիսկ Արշակունի:

Պատմական այս տվյալները պետք է մեզ համար կռվան ծառայեն հասկանալու հայ և բյուզանդական արվեստների հարաբերությունը: Անշուշտ ուրանալ չենք կարող, որ բյուզանդական արվեստը որոշ չափով ազդել է հայ արվեստի վերա, բայց ոչ այն չափով, որ գուցե ու կերպարանք տար Կորա զարգացման ընթացքին, ընդհակառակն, բյուզանդական արվեստը ավելի ստացել է արևելքից, Ասորիքի և Միջագետքի հետ նաև Հայաստանից, քան տվել: Այս իրողությունը հասկանալու համար, պատմական նախընթաց տվյալների վերա պետք է ավելացնենք Հայոց ազգային եկեղեցու հակաբյուզանդական-հակաքաղկեդոնական ընդվզողությունը: Հայոց եկեղեցին չէր կարող յուր դավանաբանությամբ, ծեսերով դեմ լինել բյուզանդականությանը և այնտեղից ընդունել եկեղեցական արվեստը: Եկեղեցական արվեստի պատմությունը համընթաց է և նորա ներքին զարգացմանը, հոգու, դավանաբանության պատմության: Հայոց եկեղեցին յուր դավանական ուղղությամբ դաշնակից էր ասորոց և կոպտական եկեղեցիներին. դորանով էլ բացատրվում է հայ արվեստի ցեղակցությունը ասորական և կոպտական արվեստների հետ, ինչպես կտեսնենք հետո: Մեր հայրերը հոգևոր կենդանի հաղորդակցության մեջ են եղել մի կողմից Ասորիքի և մյուս կողմից Աղեքսանդրիայի հետ: Ասորիքից է եկել քրիստոնեությունը դեպի Հայաստան, և Աղեքսանդրիայի աստվածաբանական դպրոցի ուղղությունը որդեգրվել մեր թարգմանիչների և հելլենոփիլների ձեռքով: Բացի դորանից, հայերը Ջ և է դարերում ամենասերտ կապ են պահպանել նաև Երուսաղեմի հետ:

Այս հոգևոր կապը արտահայտված ենք տեսնում և արվեստի մեջ։ Հայ եկեղեցական հարտարապետության հնագույն երևույթը բազիլիկան է, ինչպես և բրիստոնեական ճարտարապետության մեջ։ Ուշադրության արժանի այդպիսի շենքեր են Տիկորը, Երևրույքը, Քասախ կամ Ներկա Քաշ-Ապարանի, Աշտարակի Միրանավորը և.ն.։ Արդ, համեմատելով մեր բազիլիկաները արևելյան կամ սասրական բազիլիկաների հետ, որոնց մասին գիտնական աշխարհին տեղեկություն ավավ Vogüé-ն մեծ նմանություն ենք գտնում։ Բազիլիկաների երկու տեսակը կա. սասրական և հունական։ Առաջինը կամարակապ է, արևմտյան կողմից աշտարակաձև ֆասադներով և հարավից բացված դռներով, Հերսից կլոր ապսիդով, իսկ դրսից քառանկյունի։ Ճիշտ այդ ձևով է մեր Երևրույքը։ Դորա ծագումը հին է, որոշ մասերով նման Պաղեստինի, Փյո նիկիի և Ասորեստանի ճարտարապետության։ Ապա ուշադրության արժանի է սյուների խոյակների և պատաձև կամարների երևույթը։ Պատաձև կամարը արաբական ճարտարապետության մի բնորոշ երևույթ է համարվել. մինչդեռ արաբների ծագումից շատ առաջ տեսնում ենք ընդհանրացած Հայաստանում, Ասորիքում, Պարսկաստանում և Փոքր Ասիայի արևելյան գավառներում։ Ասորիքում ավերակներ կան 540 թ. պատաձև կամարներով. 586 ներում։ Ասորիքում ավերակներ կան 540 թ. պատաձև կամարներով. 586 թվին գրված է գիտության մեջ հայտնի Բաբուլայի ասորական Ավետարանը, իսրանները պատաձև կամարներով։ Քասախի եկեղեցու հարավային նավի սյուները կապված են իրար հետ պատաձև կամարներով։ Պատաձև կամարները կապված են իրար հետ պատաձև կամարներով։ Պատաձև կամարը նկատվում է և Աշտարակի Միրանավոր եկեղեցում և Տիկորում, բայց առավել Ծոփքում, Սադաքլուի ձոր։

Հայ ճարտարապետության մասին արած մեր այս թեթև ցուցումները պարզեցին, թե ինչ տեղ է բռնում հայ արվեստը ընդհանուր քրիստոնեականի մեջ։ Նույնը պարզում է և մանրանկարչական արվեստը, յուր բնավորությամբ մեջ։ Նույնը պարզում է և մանրանկարչական արվեստը, յուր բնավորությամբ մեջ։ Մանրանկարչական արվեստը քրիստոնեական արևելքի և արևմուտքի մեջ։ Մանրանկարչական արվեստը քրիստոնեության անցել է հեթանոսությունից. miniatura անունը ծագել է minium տոնեությունից անցել է հեթանոսությունից. miniatura անունը ծագել է minium տոնեությունից անցել է հեթանոսությունից. (KHNNABAPHE կիննաբարհուս, հայերեն՝ գիրարից, որ ներկի մի տեսակն է (KHNNABAPHE կիննաբարհուս, հայերեն՝ գիրարից, որ ներկի մի տեսակն է։ Այդ արվեստը փոքր կամ մանր բառի հետ կապ չունի, ինչպես նեմբուր)։ Այդ արվեստը փոքր կամ մանր բառի հետ կապ չունի, ինչպես նեմբուր)։ Այդ արվեստը փոքր կամ մանր բառի հետ կապ չունի, ինչպես նեմբուր)։ մանրանկարչություն բառից եղրակացնել կարելի է։ Հնագիտության պատմությունից էլ հայտնի է, որ առաջ գրում էին պապիրուսի վրա և փաթույթներ էին թյունից էլ հայտնի է, որ առաջ գրում էին պապիրուսի վրա և փաթույթներ էին թյունից էլ հայտնի է, որ առաջ գրում էին պապիրուսի վրա և փաթույթներ էին պատրաստում. բայց պապիրուսին հետզհետե փոխարինում է մագաղաթը և փաթուլիները՝ գրքի ձևը։ Այս վերջին երևույթի հետ է կապված և գրքի կամ մանրանկարչական արվեստի ծագումն ու զարգացումը։ Քրիստոնյաների և հնդիկներին ծանոթ է եղել այդ արվեստը ամենավաղ ժամանակներից, բայց եվրոպական քաղաքակրթության համար նախակարապետ է հանդիսացել եգիպտոսը և ապա Հունաստանն ու Հռոմը։ Սորժիպովսկին հրատարակել է պապիրուսի վրա մանրանկարներ, որ շատ հազվագյուտ են։ Միլանի մատենադարանում

պահված են Հոմերոսի պատկերազարդ ձեռագիրներ, Վատիկանի մատենադարանում Վիրգիլի երկու պատկերազարդ օրինակ կա։

Ս. Գրքի զարդագրության մասին տեղեկություն ունինք Դ դարից. Կոստանդին Մեծը՝ Եվսեբիոս Կեսարացուն պատվիրում է յոթ նոր մայրաքաղաքի եկեղեցիների համար մագաղաթի վրա 50 օրինակ Ս. Գիրք պատրաստել։ Գիտնականների կարծիքով դոցանից երկուսը մեր ձեռքն են հասել. Codex sinaiticus և C. Vaticanus. դոքա պատկերազարդ չեն, բայց պատկերազարդ է Վիեննայի Ծննդոց գիրքը, ե դարու գործ և հրատարակել է Wickhott: Բայց մեր մանրանկարչական արվեստի համար ամենամեծ նշանակություն ունի Բաբուլայի Ավետարանը 586 թվին գրված և նկարազարդված։

Ե՞րբ է ծագել այդ մանրանկարչական արվեստը Հայոց մեջ, դժվար է ասել։ Ս. Գրքի թարգմանության հետ ե դարում, հավանորեն կարող է մուտք գործած լինել նաև զարդագրությունը։ Ճարտարապետական արվեստի ուշադրության արժանի մնացորդները ե—Զ դարերում, հատկապես ճարտարապետական օրնամենտացիայի գոյությունը, մեզ համար կռվան կարող են լինել նաև մանրանկարչության գոյության։ Քասախի բազիլիկան արևմտյան և հարավային դռների ճակատին ունի երկու բարձրաքանդակ, որոնք հին քրիստոնեական սիմվոլիկ արվեստի մնացորդներ են։ Ճարտարապետական օրնամենտների հետ Սասանյան շրջանին հատուկ, ևլնդավոր խաչի երկու կողմից կանգնած են երկու վագր խաղաղ դիրքով, պոչերը բաց թողած, իսկ խաչի պատվանդանից մի-մի խաղողի ոչխ, ողկույզի, տերևի և բարունակի փոխառ փոխ դասավորությամբ։ Արևմտյան դռան ճակատին՝ խաչի երկու կողմից կանգնած են երկու եղջերուներ, դունչերը մեկնած դեպի խաղողի տերևները. նրանց մոտ՝ մի-մի արմավենի։ Շրջանակը ճարտարապետական օրնամենտ՝ սասանյան բնավորությամբ։ Այս մոտիվները ոչ միայն նրանց ծագման հետությունն են ցույց տալիս, այլև հայրենիքը. արմավենին Հայաստանի բույս չէ։ Բայց ավելի հետուն չերթանք. 618 թ. շինված Հռիփսիմեի, 630 թ. Գայիանեի վանքը, 640-ական թվին Զվարթնոց վանքը, մանավանդ վերջինը հարուստ է դեկորատիվ և ֆիգուրատիվ բազմաթիվ քանդակներով։ Մրենի հյուսիսային դռան ճակատին կա մինչև իսկ պատմական մի բարձրաքանդակ։ Հայ ճարտարապետության այն ազատ թռիչքը, բազմազանությունը և գեղարվեստական աղնվությունը, որ տեսնում ենք Զ—է դարերում, իրավունք է տալիս եզրակացնելու, որ մանրանկարչական արվեստն ևս պետք է ծագկեր։ Մինչև վերջերս Զ—է դարերը համարվում էին գրականության և քաղաքակրթական տեսակետից ամուլ դարեր. սակայն նորագույն աղբյուրների գյուտը և քննությունները ցույց տվին, թե հայ գրականության լավագույն շրջաններին են պատկանում այդ դարերը։ Այդ ժամանակ են ծաղկել դավանաբանական թղթերն ու գրությունները, հելլենասերների դպրոցը՝ եկեղեցական հայրերի և

փիլիսոփայական գրվածների թարգմանությունների, բայց ամենից համոզիչ ցույցը այդ գաբերի աւելի ազդեցիկ ուժի և կենդանության համար արվեստների թագուհի ճարտարապետությունն է։ Չ դարու վերջերումն է շինված Ավանի Հիսուսեցին, Դվինի Ս. Գրիգորը, է դարում՝ Հռիփսիմեն, Գայիանեն, Զվարթնոցը, Անոոիի բագրատական, Թալիշի և Ղալարդի հոյակապ եկեղեցիները Գրիգոր Մամիկոնյանի ձեռքով, Թալինի մեծ և փոքր տաճարները Ներսես Կամսարականի, Բագարանի Ս. Թեոդորոսը (624—631 թ.), Մրենի տաճարները։ Ես չեմ հիշում Արագածի շուրջը փռված բազմաթիվ գրսից խաչաձև, սասանյան շրջանի օրնամենտներով և պայտաձև կամարներով վկայարանները՝ Օշականում, Թևղենյաց ձորի քիրաշլու և Ադիամանից ոչ հեռու վկայարանները։ Չկա կաթողիկոս, չկա փոքրիշատե հայտնի իշխան, որ մի կոթող թողած չլինի։ Հնարավո՞ր է, որ քրիստոնեական արվեստի մյուս ճյուղին՝ մանրանկարչությանը, միանգամայն անծանոթ լինին։

Ես հիրավի, ունինք մի գրավոր հիշատակարան Չ դարու վերջին գրված վրթանես քերթողից, որ Ս. Գրքի հիման վրա կամենում է համոզել, թե պատկերների գոյությունը խոտելի չէ։ Ինչպես տաճարը հանուն Աստուծո է, այնպես և պատկերը, «եւ մեք զնոյն ճկաբեմ, զոր ի գիրսն գրեալ է, զի եւ գիրն պ

փղոսկրյա Ավետարանի մեջ պահված են չորս պատկեր, որոնց մասին Սարժիգովսկին այն կարծիքն է հայտնել, թե ասորական ծագում ունին։ Եթե նա ծանոթ լիներ հայ արվեստի պատմությանը, այս դեպքում հայ բաղխիկանների բարձր զարգացման՝ իրենց ասորական-արևելյան բնավորությամբ, նույնատեսակ արվեստի այս մնացորդների հայրենիքը Ասորիքում չէր որոնի։ Ստասովն ավելի իրավունք ունի, երբ միայն ասորական ազդեցություն է նկատում այստեղ։ Մեր ասածի ապացույց կարող են լինել նույն Ավետարանի սկզբի խորանաձարդերը և պատկերները, որոնց համար Սարժիգովսկին դարձյալ նույն կարծիքն է հայտնել. բայց նոքա կրկնված են նաև Երուսադեմի երկու ուրիշ ձեռագրերի մեջ, իսկ մոգերի երկրպագությունը՝ փղոսկրյա Ավետարանի բնագրում։ Խորանների մեջ գրված հայտնիները և մոգերի երկրպագության տարբեր վարիանտը ապացույց (են) հայ արվեստագետի գործ համարելու։ Ասորականի հետ ունեցած ոճի նմանությունը չպետք է միայն փոխառվությամբ բացատրել, այլ նույն կուլտուրայի նմանությամբ, եվրոպական արվեստների մեջ եղած նմանության օրինակով։ Փղոսկրե Ավետարանի խորանի և մատուռի (ինչպես և Երուսաղեմի) նմանություն Ռաբուլայի հետ։ Կարլոս Մեծի Գոդեսկալկի վանականի «կննաց աղոթարը»։ Մերովինգյանց և Կարոլինգյանց մանրանկարչության նմանության պատճառը։

Հայ և ասորի վանականները Հռոմում, հայ ղորապետներ և ղորքեր Բաբելոնում։

Ասորի վաճառականներ, վանականներ Մերովինգյան պետության մեջ Փարիզի ասորի եպիսկոպոսը։ Երուսաղեմի հետ կապ. Հերոնիմոս։ Մոնցայի Թեոդոլինտե թագուհին՝ Երուսաղեմից ստացած շիշը. խաչելության պատկերը Ռաբուլայի նման։

Մեծ թագուհու Ավետարանը 902 թ. կամ 912 թ.։ Շապուհ Բագրատունու դուստրը և Գագիկ Վասպուրականցու ամուսինը։ Պատկերների մեջ մի կողմից նմանություն Ռաբուլայի հետ, մյուս կողմից կոպտական արվեստի։ Ճակատի մեջ կոկորդիլոս։ Ծագումը եգիպտական, Զ—է դարում կարող է մտած լինել. բայց ընդհանրացրած հայ արվեստի մեջ։ Մողնու Ավետարանը կարող է և արևելյան լինի. ապացույց՝ փիղ և ուրիշ կենդանիներ։

Կոպտական արվեստի կապ և ուրիշ հայ ձեռագրերի մեջ. պարսիկը ախոռեն. Տիկանոնի հետ հակված ենք եգիպտական ընդունելու, կան նաև առյուծի մարմնով և կնոջ թագադրդ գլխով աֆինքսներ իբրև բարձրաքանդակներ. Հովհաննավանք, Անի։

Սկիհանման անոթ, երկու կողմից մի-մի թռչուն ջուր են խմում։ Սկիհի ներկայությունը աշլաբանական-խորհրդավոր։ Սիրամարգը անապատականության գաղափարի, սիրամարգը խորհրդավոր նշան՝ շատ գործածական հայ և ասորի արվեստի մեջ, բայց նաև կոպտական, որ հրատարակել է Crum։ Մեծ

նմանությունն նաև քանդակագործության օրնամենտացիայի մեջ։ Գահիրեի թանգարան։

Մլքեի ամուսինն էր Գագիկը՝ Վասպուրականի առաջին թագավորը. քաղաքականապես ընդդեմ Բագրատունյաց, բայց արվեստի պաշտպան և սիրող։ Թովմա Արծրունու տեղեկությունները. Ոստանի ծովահայաց բերդը, մեջը տաճար կամ պալատ «ոսկեզարդ և պէսպէս պանուճեալ դեղովք», լուսամուտներով և գեղեցիկ գռներով։ Արևը մայր մտնելիս ճառագայթները փայլում էին ներսում դրոշմված պատկերների վրա և հիացմունք պատճառում։ Ավելի նշանավոր էր Աղթամար թաղաքը և արքայական պալատն այնտեղ։ Մանվել ճարտարապետի օգնությամբ թագավորն ինքը լարը ձեռքին նշանակում էր շինության տեղերը։ Նորա շուրջն էին հավաքված ամեն ազգի արվեստավորներ։ Պալատը ոսկեզարդ և լուսաճաճանչ գմբեթներով։ Իսկ ներսը նկարված էր «ոսկեզարդ գահոյք»՝ թագավորը վերան նստած, «ճագելի ճոխութեամբ, շուրջ զիւրեաւ ունելով պատանեեակս լուսատեսակս, սպասաւորս ուրախութեան. ընդ նմին եւ դասս գուսանաց», կաքավող աղջիկներ, գլուխտորներ և ըմբշամարտներ։ Ապա կենդանիների և թռչունների դեկորատիվ պատկերներ։ Դեկորատիվը գերիշխող, օրնամենտացիան, սիմվոլիկ և այլաբանական ձևեր և պատկերացումներ, գունագեղ հյուսվածքներ, ծաղիկների և գույների ներդաշնակ և ակնապարար դասավորություն, արևելյան արվեստի էությունը, հա՛տկապես արևմտյան պլաստիկայի և գծերի գեղեցկության։ Գագիկի շինած Ս. Խաչի տաճարը և ըստ ինչի յուր ճոխ քանդակներով ասորական, արաբական և բյուզանդական արվեստների մեջ մի նշանավոր օղակ։ Ի միջի այլ բարձրաքանդակների և Գագիկ։ Ներքուստ ևս զարդարված է եղել «նկարապանոյն դեղով»։

Օրբելյանց, Սյունյաց մասին Տաթևում. Հովհաննես Սյունյաց եպիսկոպոսի ժամանակ ծաղկեց Տաթևի գրչության դպրոցը. գրատունը «ճոխ էր եւ պոսի ժամանակ ծաղկեց Տաթևի գրչության դպրոցը. գրատունը «ճոխ էր եւ վարժարանն վարդապետական կրթութեամբն. նաեւ արհեստաւորք նկարչացն եւ զոդող անհամեմատ»։ Սորա հաջորդ Հակոբ եպիսկոպոսը (918—958) շինեց եպիսկոպոսարանը. «գմբեթայարկ խորան մի յոյժ հրաշակերտ յօրինեաց եպիսկոպոսարանը. «գմբեթայարկ խորան մի յոյժ հրաշակերտ յօրինուածովք, եւ զոմ եւ զձեղուն ճոռա եւ զարդարել նկարչաց զանազան եռաւածովք, եւ զոմ եւ զձեղուն ճոռա եւ զարդարել նկարչաց զանազան երանգօք, նկարել զամենայն տեսօրինական եւ տէրունական պատկերս եւ զաերանգօք, նկարել զամենայն տեսօրինական եւ տէրունական պատկերս եւ զաոաքեալոց եւ զհայրապետաց»։ Նա նկարել է տալիս տաճարի ներսը։

Նույն եպիսկոպոսի օրով Սյունյաց Սոփիա տիկինը շինում է Գնդեվանքը և նկարել տալիս Սղիշն անունով մեկին։ Այդ պատկերներից մնացել է միայն մեկը։

ԺՀ. դարու բարձր արվեստի մասին գաղափար են տալիս մեզ երեք Ավետարաններ.

ա) № 363, գրված՝ 1053 թվին. գրիչն է Հովհաննես, իսկ Թորոս Խաղբակ «զոսկեզեղոն զուգեաց»։ Ունի չորս ավետարանիչների պատկերները։ Բացի

սկզբնազարդերից նաև կենդանագրեր, և երկու խորանազարդեր Ավետարանների սկզբում: Մոտիվները զուտ արևելյան, ինչպես և տեխնիկական. խեցոսկի (ոսկովոյե զդլոտո):

բ) 1066 թվի, Գրիգոր Ակոռեցի գրիչ և նկարիչ. գաղթած Սեբաստիա: Մնացած են միայն Մարկոսի պատկերն ու նկարազարդը և Ղուկասի սկզբնազարդը: Մարկոսի պատկերը մրցել կարող է բյուզանդական ամենալավ մանրանկարների հետ: Ավելի հետաքրքրական են Մարկոսի և Ղուկասի սկզբնազարդերը: Առաջինում ուշադրության արժանի է Ս տառը. առյուծը թևերը վեր է բարձրացրել և Ս տառը կազմել. առյուծի մեջքին կանգնած է մի պատանի: Առյուծը ավետարանչի սիմվոլն է, պատանին՝ Քրիստոս: Անմորուք և մորուքավոր Հիսուսն արևելքում և արևմուտքում. մեզ մոտ և Ասորիքում մորուքավոր, նաև քանդակագործության մեջ: Սկզբնազարդի ճակատին երկրաչափական վանդակազարդ:

Ղուկասի սկզբնազարդը և բացատրություն:

գ) Երրորդ Ավետարանը ԺԱ դարից՝ Գագիկ Կարսեցունը (1028—1064). Կարսի թագավորները՝ Մուշեղ, Աբաս, Գագիկ. գաղթը դեպի Ծամնդավ: Մաթեոս Ուռհայեցին «այր իմաստասէր եւ լցեալ ամենայն շնորհօք փիլիսոփայականացն եւ հռետորական արուեստիւքն», «բովանդակ գիտէր գՀին եւ գնոր Կտակարանսն»:

Ա

Սկզբնական շրջանում հայերը բարեկամական հարաբերություն չէին կարող ունենալ արաբների հետ, այսինքն է և Ը դարերում, ոչ միայն կրոնների մեծ տարբերության պատճառով, այլև քաղաքական։ Թեոդորոս Ռշտունու հարաբերությունները անցողակի էին։ Բայց այդ բշնամական հարաբերությունը չէր կարող մշտաւև լինել. հայ իշխանները շարունակ շփման մեջ էին Քաղդադի հետ, ուրեմն և հետզհետե պետք է ենթարկվեին իշխող պետության ազդեցության։ Մանավանդ Բագրատունյաց գլխավոր քաղաքականությունը երկու ազգերի մտավոր շփման ավելի նպաստավոր պայմաններ պիտի ստեղծեր։ Երկու գիտություն, հատկապես, բժշկությունը և փիլիսոփայությունը, այդպիսի շփման հարմարություն ունեին, կրոնական բնավորություն չունեը, այդպիսի շփման հարմարություն ունեին, կրոնական բնավորություն չունեը, այդպիսի շփման հարմարություն ունեին, կրոնական բնավորություն չունեը, նշանավոր։

Բժշկական գիտությունը, հատկապես մարմնակազմությունը, հայտնի էր քրիստոնյա հայերին, արաբներից էլ առաջ, Գրիգոր Նյուսացու «Ցաղագս բնութեան մարդոց» գործի հայերեն թարգմանությամբ, բայց նաև եկեղեցական հայերեի այլևայլ գրվածքներով՝ բնագիտության հետ կապված խնդիրներով։ Նույնիսկ ե դարի հեղինակ Եզնիկի գործի մեջ ունինք այդպիսի հատվածներ։ Իսկ Ը դարու նշանավոր Ստեփանոս Սյունեցին թարգմանած է Գրիգոր Նյուսացու հիշյալ գործը։ Ստեփանոս Սյունեցին ապրում էր Ը դարու առաջին կեսում. յուր ժամանակի նշանավոր գիտնականներից և թարգմանիչներից մեկն է։ Ը դարում ունինք և հակառակ հանվանեն հիշված մի հայ բժիշկ՝ Հովհաննես անունով, որ որպես առաջին հայ բժիշկը հիշատակվում է 879 թվին, բայց նա իբրև վկայաբանության թարգմանիչ հայտնի է մեզ — Դիոնեսիոս Արիսպագացու.

«Այս պատմութիւն սրբոյն Դիոնիսիոսի ի սուրբ հաղարն Երուսաղեմի թարգմանեալ էր յունականին, իսկ ի մերս թարգմանեաց Յովհաննէս բժիշկ յԵրեմիայէ եսան եւ ոչ թուականութեանն Հայոց (= 879)»։

Ուրիշ տեղեկություն չունինք այս Հովհաննես բժշկի մասին։

Ասել, թե սրանից առաջ հայ բժիշկներ չեն եղել, դժվար է մտածել։ Յունաց, ասորիների և ասորիների հետ հայ մտքի շփումը բոլորովին չէր մարած,

մանավանդ Թ դարում հայ իշխանական տները Բյուզանդիայում կատարում էին մտավոր, զինվորական և քաղաքական կյանքի մեջ շատ կարևոր դեր։ Այսպես, բավական է հիշել Վարդ Մամիկոնյանի օրով հայերի առաջնակարգ դիրքը պատերազմական կյանքի մեջ, ինչպես և գիտական հաստատություններին, այսինքն համալսարանի բացումը հայ գիտնականի՝ Լևոնի տեսչությամբ։

Ը դարի կեսերից հետո հայոց դերը զորանում է բյուզանդական պետության մեջ։ Գնլեցերը և Ադոնցը պարզել են այն մեծ դերը, որ կատարել էն հայերը Բյուզանդիայում։ Լևոն Դ (775—780) յուր մեծ հաղթություններ արաբների դեմ, 778 թվին, պարտական էր հայ զորքին և զորապետներին. բյուզանդական չորս բանակի զորապետներ հայեր էին. Արտավազդ Մամիկոնյան՝ Անատոլյան, Տաճատ Անձևացի, որդի Գրիգորի՝ Բուկելլարիոնի, Վարազտիրոց Բագրատունի՝ Արմենիակոնի, Գրիգոր Մամիկոնյան որդի Մուշեղիկի՝ Ոփսիկիոնի։ Առաջին երկու զորապետների մասին տեղեկություն ունինք Ղևոնդ պատմիչի կողմից ևս։

Թ դարի սկզբից շատ կարևոր դեր է կատարում Մամիկոնյան տոհմի ճյուղը։ Լևոն Հայազնի ժամանակի նշանավոր զորապետ էր Մանուել Մամիկոնյանը, բանակի հրամանատար։ Լևոնը հովանավոր էր Հայաստանի Բագրատունի իշխաններին, Աշոտին կյուրապաղատության պատիվ տալով։ Միքայելը յուր որդու՝ Թեոփիլոսի (829—842) համար կնության է առնում Մանուել Մամիկոնյանի եղբոր դուստրը՝ գեղեցիկ Թեոդորային։ Նորա քույրերն էլ նշանավոր պատրիկների կանայք են։

Թեոփիլոսից հետո մի որդի մնաց, երեք տարեկան, Միքայել Արքեցողը (842—867), Թեոդորա թագուհու խնամակալության տակ. Թեոդորայի Վարդ եղբայրը՝ Վարդ Մամիկոնյանը, որպես առաջին մինիստր և ապա որպես զեղար տաս տարի պետության կատարյալ տերը եղավ. նա գիտության և արվեստի հովանավոր էր. նորա ժամանակ բյուզանդական առաջին համալսարանը բացվեցավ Լևոն մեծ գիտնականի տեսչության տակ, որ հայ էր, Հովհաննես գիտնական պատրիարքի (834—843) եղբորորդին։ Պատրիարքի եղբայրը՝ Արշավիր պատրիկը, նույնպես ուսումնասեր էր։ Սրանց հայրը Բագարատը՝ ատաղձեա, որի գործերից, կարծում եմ, հատվածներ կան հայերեն թարգմանությամբ։

Ըստ հունական աղբյուրների՝ գիտության և արվեստի մեծ սիրահար Մանուն Խալիֆան նամակագրություն է ունեցել Լևոն գիտնականի և Թեոփիլոս կայսեր հետ, Լևոնը հրավիրելով յուր մոտ։

Պատերազմական կյանքով ապրող մի ժողովուրդ, ինչպես հայերն էին, դրնե վիրաբույժներ պետք է ունենային։ Բայց ինչ որ մեր ձեռքն է անցել իրրև մատենագրական փշրանքներ և տեղեկություններ, արաբական դրոշմ են

կրում հին ձեռագրերի մեջ։ Արաբները տիրապետելով Միջագետքին և Ասորիքին և ավելի հեռավոր շրջաններին, կարճ ժամանակից հետո ասորիների, բյուզանդացիների և պարսիկների ազդեցությամբ, մանավանդ պատկերամարտության խռովությունների ժամանակ Բյուզանդիայում, գիտնականների և մտավորականների որոշ հոսանք փախչում է, նաև բժիշկների, անցնում է Բաղդադ՝ ապաստան գտնելով ամիրաների հովանու ներքև։ Սկզբում թարգմանական, բայց քիչ ժամանակից հետո ինքնուրույն զարգացման է հասնում բժշկությունը Բաղդադում և այլուր 8 դարի ընթացքում, նաև աստղաբաշխություն և փիլիսոփայություն։ Նշանավոր բժշկապետներից ոմանց անունը հիշվում է մեր հայ ձեռագիր բժշկարանների մեջ, որոնցից ոմանց անունը առիթ կունենանք հիշելու։

* * *

Այժմ անցնինք մեր հայ բժշկարաններին և նրանց հարաբերության արաբականին հետ։

Մեր ձեռքն է հասել թվականով մի հայ ձեռագիր, գրված 1294 թվականին Կոռիկոսի տիրոջ Օշնի որդի Հեթում իշխանի համար, որ Հեթում թագավորաշն պատմիչն է։ Այդ բժշկարանի վերնագիրն է. «Բժշկարան, զոր փոխած է տաճիկ լեզուէ ի Հայս ի ժամանակս յաղթող թագաւորին Գագկայ»։ Մեր հայ բանասերները, առանց բացառության, այդ «յաղթող» Գագիկ թագավորը նույնացրել են Գագիկ Ա Բագրատունու հետ (990—1020)։

ԺԲ դարից արդեն ունինք հայ բժշկականության հաստատուն գրականություն. այդ Մխիթար Հերացու «Վասն ջերմանց» աշխատությունն է, որ գրել է Ներսես Շնորհալու եղբոր որդի Գրիգոր Տղայի խնդրանքով, 1184 թվին։ Շատ արժեքավոր է Հերացու վկայությունը այդ մասին. «Ահա Հերացու բուն իսկ խոսքերը. «Ես Մխիթար Հերացի, ուրույս ի բժշկաց, որ ի մանկութենէ սիրող եղէ իմաստութեան և բժշկական արուեստից, և վարժեցայ ի դպրութիւն Աստուածոց, Պարսից և Հել(ե)նացուց։ Տեսի յընթերցումն որ առ նոսա գոյն, զի ունէին զարուեստ բժշկութեան լի եւ կատարեալ ըստ առաջին իմաստնոցն, այսինքն զնախագիտութիւն որ է իմաստ եւ վարդապետութիւն բժշկական արուեստից։ Եւ ի Հայմ բնաւ ոչ գտի զվարդապետութիւն եւ զիմաստ նախագիտութեանն, այլ զատածումն միայն, եւ այս՝ ոչ ըստ կարգի եւ լի, այլ համառօտ եւ ծաղկաքաղ, աստի եւ անտի հաւաքեալ յայլ եւ այլ գրչաց եւ (ի) մտաց այլայլած»։ Նա յոյր գիրքը ձոնում է Գրիգոր Տղային. «Յօժարեցի ի պէտս եւ ի յօգուտ սորա առնել զգիրս զայս ի հոռոմ եւ յարապիկ եւ ի պարսիկ գրեանց»։ Բայց, ինարկե, եթե Հերացու ձեռքը չեն հասած բժշկական գրքեր, այդ չի նշանակում, թե ամենևին գոյություն չեն ունեցել։ Հերացին

սխալվում է. Նորանից առաջ էլ Հայոց մեջ եղած է բժշկական գիտություն, ինչպես ցույց են տալիս մատենագրական տեղեկությունները։

Բժշկական գիտության աղբյուրներ Հայոնի էին Հնդացուն երեք լեզվով. արաբացվոց, պարսից և հելլենացվոց կամ հունաց լեզվով։ Բայց Հայ բժշկի գոյության փաստը 879 թվին ինքնին ապացուցյն է, թե բժշկական գիտությունը մուտք պիտի գործած լիներ Հայոց մեջ ավելի վաղ։

Մեր նպատակը չէ այստեղ բժշկական ընդհանուր գիտության մասին խոսել, այլ Հայ և արաբական բժշկական գիտության և մշակույթի հարաբերության մասին, և մենք պիտի տեսնենք, որ թեև ազատ են մեր մատենագրական տեղեկություններն այդ մասին, բայց իրողություն է արաբական բժշկականության աղերսը Հայ գիտության մեջ։

Ինչ առաջ տեսանք Հեթում Կոռիկոսի տիրոջ ձեռագրի վերնագրին համաձայն, որ նա թարգմանված է արաբերենից Հայերեն «ի ժամանակս յաղթող թագաւորին Գագկայ», եթե Գագիկ թագավորը համարենք Նունյանուն Գագիկ Ա (990—1020), ուրեմն մի բժշկարան համենայն դեպս թարգմանված է ժ դարի վերջերում և ԺԱ-ի առաջին տասնամյակներում։ Այսպես են ընդունել մեր բանասերներից Հ. Սուքրյանը[1], Ալիշանը[2], Հովնանյանը[3], դոկ. Թորգոմյանը[4], Հ. Ս. Ֆերահյանը[5] և վերջերս պրոֆ Լ. Հովհաննիսյանը[6] Երևանում։ Հեթում Կոռիկոսցու Բժշկարանի վերնագրից էլ ուրիշ եզրակացության հասնել կարելի չէր։ «Յաղթող» մականունը թագավորի բնականաբար ամենքին տարել է այդ եզրակացության, որովհետև Բագրատունիների մեջ այդ անունով թագավորներից հարմար է միայն այդպես կոչվելու Գագիկ Ա-ը (990—1020), որ իրոք հզոր և պատկառելի արքաներից մեկն էր։ Գագիկ Բ-ի թագավորությունը շատ կարճատև եղավ, իսկ Նունյանուն Գագիկ Կարսեցին համեմատաբար երկրորդական թագավոր էր, թեև Ուռհայեցին[7] Գագիկ Բ-ն էլ անվանում է «ẖqor, ťaջ եւ անյաղթ», գուցե հետագա քաջությունները նկատի ունենալով։

Բ

Կոռիկոսի տիրոջ բժշկարանից զատ ունինք մի ուրիշ ձեռագիր բժշկարան, որ Երուսաղեմի թիվ 370 ձեռագիրն է, տարաբախտաբար ոչ ամբողջությամբ մեր ձեռքը հասած, հատկապես առաջին թերթերը չկան. ուրեմն և ստուգել չենք կարող, թե այս ձեռագիրն էլ նույն վերնագիրն ունի՞ր, թե ոչ։ Այս ձեռա-

[1] *Բազմավէպ, 1881, եր. 33։*

[2] *Սիսուան, եր. 337, Շիրակ, եր. 96։*

[3] *Հետազոտութիւնք Նախնեաց ռամկօրէնի վրայ, Վիեննա, 1897, եր. 135։*

[4] *Բազմավէպ, 1923, եր. 70։*

[5] *Բազմավէպ, 1938, եր. 7, Մնթ. 4։*

[6] Լ. Հովհաննիսյան, Istoria medicini ve Armenii *(ռուսերեն). հ. Բ, երես, 50—1։*

[7] *Ուռհայեցի, տպ. Երուսաղեմ, եր. 112, 193։*

գիրը բաղկացած է չորս մասերից. առաջին երկը մասերը գրված են մեջքմեջ նոտրգրով և բոլորագրով. նոտրգրով մասերը հետո են ավելացրել նորոգության ժամանակ, իսկ բուն ձեռագիրը բոլորագիր է եղել: Ավելացրած է և մի չորրորդ մաս՝ հատվածորեն, որ տեղ-տեղ կրկնություն է դառնում անցած մասերի որոշ հատվածների, ուր և կա Հերացու «Վասն ջերմանց» գործը (պատկ. 1), (պատկ. 32): Ասել է, թե նոքա տարբեր գրվածքներ են: Ահա այդ չորրորդ մասի մեջ մի հատվածի վերնագիրն է.

«Վասն... (երկք տառ) մաց (քէ՞ կաց) եւ պատմէ գիրս այս զպատճառս /ևուիհան իրաց, որ ոչ է յայտնի մարդոյ, իմաստասէր, որ կոչեր են տաճիկ/կ/ երն խասիաթ, զոր հրամայեաց Գագիկ Շահնշահն՝ որդին Ապասայ բարիմ/աձեւ/ ի տաճիկ լեզուէն ի հա/յ/ լեզու: Ասաց Ապուպ/ար Մահմատ Ջահար որդին՝ Ռազիկն, թէ տեսայ եւ լսեցի, որ աճգէտ մարդիկ չատան իմաստնասիրաց եւ արհամարհեն զմեզ. ապայ հարկ եղեւ այրել ինձ գայս գիրս, արկանել հիմն եւ շինել տուն եւ դնել բոյն եւ ցուցանել հացանց իրաց բնութիւն էր աւտար, եւ զայն տեսանեն դեռ իրենց աչերովն, եւ շավտան եւ ջանան ստել գետիկառն: Բայց թէ տեսան իրենք իւրեանց աչ/ եւ շավտան եւ ջանան ստել գետիկառն: Բայց թէ տեսան իրենք իւրեանց աչերովն գիրս որ կոչի խանդումանդ, որ հաշէ գիճիճ երկար. եւ կայ այլ գիր եւ հաշէ յիճիճ զոսկին, եւ կայ այլ գիր, որ հաշէ յիճիճ/ն/ զպղինձն, եւ կայ այլ գիր, որ հաշէ զապիկինն»[8]:

Այս հատվածը շատ խճողված վիճակում է հասել մեզ, բայց կարևոր է մեզ համար այն տեղեկությունն, որ այս բժշկարանի թարգմանել տվողը հացանց իրաց բնութիւն էր աւտար, եւ զայն տեսանեն դեռ իրենց աչերովն, Կարսի վերջին թագավորն է՝ Գագիկ Աբասյանը և ոչ Անիի Գագիկ Առաջինը:

Ունինք և մի այլ աղբյուրից տեղեկություն Գագիկ Կարսեցու մասին, Սեւեփանոս անունով մի բժիշկ 1232 թվին գրել է մի բժշկարան Տաղիկ վերտարված «Վահրամայ որդի Գրիգորի առաջակութեամբ եւ յանձնարարութեամբ Շահնշահ Աբասի որդու Գագիկի»: Բժիշկ Հովհաննիսյանը (Երևան) շիտորում է սորան Գագիկ առաջինի հետ[9]: Ապա հիշվում է նաև Ապուպաքրի, Ապլղարիպի և այլոց գործերի մասին: Այսպիսով մի երկրորդ հիշատակություն ունինք Գագիկ Աբասյանի և Ապուպաքրի անունների:

Բայց այս դեպքում էլ ուրիշ դժվարություն է ծագում: Ապուպաքր Մահմատ Ջաքարի որդին՝ Ռազիկ (Ռայ քաղաքից) շատ հռչակավոր բժիշկ էր և գիտնական, ամիրապետի անձնական բժշկապետը և երկու հարյուրի չափ մեծ

[8] Այս հատվածը համեմատեր Հ. Գ. Հովհաննյան, Հետազոտութիւնք նախնեաց ամկօրհնի վերաբ, մասն առաջին, Վիեննա, 1897, եր. 83, որտեղ նույնպես խոսք կա խասիաթի և խանդումանդ գրքերի մասին, որ խասիաթով վերկանչ կու քաշէր, բայց Գագիկի անունը չկա հիշված, մանր քար

ու փոքր գրվածքների հեղինակ։ Նշանավոր գործն է Էվ—Հավի, երեսուն հատորից բաղկացած[10]. մեռած է 932 թվին. ժամանակով ուրեմն հարմար է Գագիկ Ա-ի (990—1020) և ոչ Գագիկ Կարսեցուն (1028/9—1064), որ մեռած է 1080 թվին։ Մի առեղծված, որ առայժմ մեր ձեռքը եղած միջոցներով անլուծելի է դառնում։

Մի երկրորդ թագավոր ևս հիշվում է բժշկարանների մեջ իբրև մեկենաս թարգմանության. Վենետիկի Մխիթարյանց մատենադարանում մի բժշկարանի հատվածներ կան նման Վիեննայի ձեռագրի ՄԺԹ, ՄԻ և ՄԻԹ հատվածներին, որ սկզբնական մասը պիտի լինի մի բժշկարանի. վերնագրված է «Մեկենաս եւ համանաւ սուրբ թագաւորին Յովհաննիսի», որ կարելի է նույնացնել Հովհաննես Սմբատի հետ, նույնպես մի ուսումնական մարդ։

Գ

Բայց միայն այս թագավորները չէն, որ մեկենաս են հիշվում հայ բժշկականության պատմության մեջ, այլև հայ իշխաններ։ Երուսաղեմի թիվ 370 բժշկարանի առաջին մասի մեջ (երես 16բ) մի դեղատոմս կա Յիսէ բժշկի անունով. «Այլ մապուխ, որ է գրած Յիսէ բժշկին, որ աւտէ բազում ցաւերոյ. առ դեղին հալիլա եւ բապուի հալիլա՝ ե ե դրամ, զիրենմա ի մէկ տեղի ի հաւան արկ. եւ ի վերա Ա դրամ ճշի ձեթ արկ եւ ծեծէ մանր, եւ առ վարդ թէ չոր լինի թէ դալար լինի, այն լաւ է, Գ դրամ...» Եվ։

Նույն Հիսե բժշկի անունով ավելի կարևոր հետևյալ դեղատոմսն է (եր. 17ա).

«Այլ մապուխ թեթեւ եւ աւտակար, զոր կրեց Յիսէ բժիշկն Գրիգորի՝ վահր/ամմայ որդոյն. առ բապուի հալիլա ի կորզէն հանած եւ ձաւձաւած՝ ժ դրամ. բլիլայճ եւ ամլայճ՝ Դ Դ դրամ. ռազիոճ եւ անիսոն՝ Բ Բ դրամ. զարի փերճոկած եւ ծեծած՝ ժ դրամ. մանիշակ չոր՝ դրամ և կես. կուպա /յ/ ի ունդ կտուած եւ ծեծած, եւ ծոր Բ Բ դրամ. եղդական ունդ՝ Ա. դրամ. աճանուխ՝ ե ցախ. զամենա ի մի տեղ ի ֊f/ա/րեղեն մի արկ եւ ի վերայ լիտր եւ կէս ջուր արկ եւ աւր մին ի բոլման պահէ եւ ապա եփէ որ մնա կէս լիտր ի ջրեա. եւ ապա առ ի կրակեն եւ քամե եւ առ տապաշիր կես դրամ, ռեւանդ՝ դանգ եւ կես, շաքար՝ ի դրամ. զայտեր զամենա աղա եւ զմոպրուխտ տաքցու եւ ապա զայտեր ի հերս խառնէ եւ ժամահարաքն խմելոյ տուր պատրաստութեամբ, որպէս այլ դեղերոյ ասացն է եւ ուզնէ Աստուծով»։

Արդ, ո՞վ է այստեղ հիշված «Գրիգոր որդի Վաւր/ա/մայ»։ Բարեբախտաբար դժվար չէ այդ հարցին պատասխանել, որովհետև երկուսն էլ նշանավոր են մեր պատմության մեջ, մանավանդ հայրը։ Վահրամը, Պահլավունին է, Գագիկ Բ-ի օրով Հայոց թագավորության սպարապետը և պաշտպանը Հա-

[10] Հավճանյան, Հետազոտութիւնք, եր. 119։

յաստանի ընդդեմ բյուզանդացիների, որ ապա թագավորի համակերպվելուց հետո, ինքն էլ յուր որդի Գրիգորի հետ հայ զորքերով ստիպված էր բյուզանդացիներին միացած արշավել մահմեդականների դեմ, որ և 1047 թվին սպանվեցան հայր և որդի Դվինի առաջ[11]; «Եւ մեծ սպառապեան Հայոց Վահրամ հանդերձ որդւովն իւրով Գրիգորիւ սպանան ի մեծ պատերազմին ի Դուին քաղաքին»:

Վահրամ Պահլավունու մասին ընդարձակ ներբող ունի նորա եղբոր որդին, նշանավոր Գրիգոր Մագիստրոսը, Սյունյանց Հովհաննես արքեպիսկոպոսին գրած թղթի մեջ։ Յուր այդ թղթի մեջ Գրիգոր Մագիստրոսը հիշատակում է յուր հորեղբոր մարտիրոսական մահը և ներբող հյուսում նորա անձի և քաջագործությունների և շինարարությունների մասին։ Ուրեմն Հիսեի դեղատոմսը գրված է այս թվականից առաջ։

Վահրամա որդի Գրիգորի մասին ունինք մի ուրիշ կարևոր տեղեկություն այս խնդրի հետ կապված։ Վիեննայի Մխիթարյանց 1438 թվին գրված մի ձեռագրի մեջ ոմն Հովհաննես բժշկի համար պահված է Բուասիդ բժշկի մի դեղատոմսը 1037 թվականից, երբ նույն Գրիգորը գնացել է Մուֆարղին (Մեծրոնց Նփրկերտը) բժշկվելու։ Նկարագրված է հիվանդությունը և նշանակված դեղատոմսը[12]։

Այս երկու բժիշկներն ուրեմն ապրում էին ԺԱ դարի առաջին կեսում։ Հիսե անունով բժիշկներ շատ են. Հովհաննեան կարծում է, որ պետք է Ապու Ալի Հ

էր, թշնամի մի դինվոր պատահաբար հանդիպեցավ և սպանեց։ Վասակի որդին էր Գրիգոր Մագիստրոսը, դարձյալ հաղթական ընդդեմ սելջուկների՝ Բջնիի մոտերքը, Հրազդան գետի վերա, Գագիկ Բ-ի թագավորության երկրորդ տարին, իսկ Անիի անկումից հետո՝ բյուզանդացիների կողմից նշանակված զորապետներից մեկն էր Հայաստանի և արևելյան նահանգների պաշտպանության համար, որ ապա Վասպուրականի և Միջագետքի դուքս նշանակվեցավ[14]։ Վաչքերի շինարար, ինչպես Բջնին, Կեչառուքը, Հավուց թառը, փայտաշեն մի եկեղեցի Տարոնում, Մարմաշենի հովանավոր, ինչպես և Սանահնի։ Նա համարվում էր ոչ միայն յուր ժամանակի բյուզանդական բարձր ուսում ստացած գիտնական և փիլիսոփա, այլև հայ եկեղեցական վարդապետության հմուտ մի իշխան. ընթերցում էր յուր ժամանակի բոլոր նշանավոր մարդկանց հետ, թողել է նամակների մի ընդարձակ ժողովածու առաջնակարգ նշանակություն[15]։ կատարել է հույն փիլիսոփաներից թարգմանություններ։

Գրիգոր Մագիստրոսի արաբ գիտնական և գրական բարեկամներից մեկը մի անգամ նորա մոտ է գալիս և բանավեճի են բռնվում երկու բարեկամները՝ Ղուրանի և Աստվածաշնչի գրական արժանավորության նկատմամբ։ Ահա ինչպես է նկարագրում դեպքը.

«ի չոբեհարիր եւ ՂԳ (=1044) թականութեանս Հայոց լինելոյ, իմ Գրիգորի Մագիստրոսի՝ որդի Վասակայ աստուածապահ կինաւի եւ դուքի Պաղլատունոյ, եղեալ իմ յաստուածապահ բաղաքին ի Կոստանդնուպոլիս, ի ժամանակս բաբեպաշտ եւ էհիստոսապսակեալ արքային Կոստանդեայ Մանուէլեանին, գտեալ զմեզ այր ումն Հագարացի, անուն կոչեցեալ Մանազի, յոյժ հմուտ իսմայելական դպրութեան եւ ամենայն իմաստութեամբ պերճացեալ եւ վարժեալ ի տաղասացութիւնս եւ ի ճոխաբանութիւնս եւ ի բանաստեղծութիւն ճզուար գոլով, որ եւ պերճ եւ պաճոյճ շարամանութեամբ զգովասանականս եւ գոսիցն չափս եւ զկշիռ բանից ճոմերական եւ պղատոնական, գրէթէ ասել ճարազատ պարտ վարկանիմ ճոցա, որ եւ այժմ յեզիպտացւոցն եւ ի Բաբելացւոց թագաւորաց յաղագս տաղասութեան ամի ամի ձիրս եւ պարգեւս ընդուներ եւ զայն առատապէս ի Հռովմայեցւոց արքայից պատուեալ աշխի-

---

[14] Ոտնձգեցի, տպ. Երուսաղեմ, եր. 102, 122, 125։

[15] Նա թղթակցել է Պետրոս Գետադարձի, Սյունյաց Հովհաննես արքեպիսկոպոսի (որի ուղղած նամակի մեջ տալիս է Պահլավունյաց տոհմի և վարքաւ իշխանի մասին տեղեկություններ), Մամիկոնյան, Հալանորեն, Տարոնի իշխանի, որ կարմրաթայտ էր ուղարկել, սաղրց կաթողիկոսի, Գագիկ Բ թագավորի, Իբրահիմ արաբ ամիրայի («Վասն իմաստասիրութեանս» և «Վասն հաւատոյ») և մի ուրիշ Հագարացու («անուն կոչեցեալ Մանազի, յոյժ հմուտ իսմայելական դպրութեան եւ ամենայն իմաստութեամբ պերճացեալ եւ վարժեալ ի տաղասացութիւնս եւ ի ճոխաբանութիւնս եւ ի բանաստեղծութիւն ճզուար գոլով»), Սանահնի միաբանության, Մարմաշենի վանահայր Սոսթենեսի, Անանիա Սանահնեցու կամ Հաղբատեցու, Դանիել Երաժշտի, Վեստ վահրամի, Աբասի որդի Գագիկի, Կիրակոս Հույն գործի հետ և այլն։

ճաման, ի խոհարհագունեն հասանէ մինչեւ ցանքիհիպատ պատրիարքեան պատիւ»:

Նախ վերնագրի մեջ հիշված տիտղոսները. Մագիստրոս բյուզանդական պետության մեջ վինվորական բարձր աստիճան էր. կիսատ և դուկ ավելի բարձր, որ կայսերական տան անդամներին և կայսեր կուսակալներին էր հատուկ: Իսկ հագարացի Մանազին մի մարդ, որ յուր բանաստեղծական և գիտական հմտությամբ և կարողություններով արժանացած էր երեք արքունիքների բարձր գնահատության:

Խոսքը անցնում է մահմեդական և քրիստոնեական Ս. Գրքերի գրական և բանաստեղծական գնահատության վերա. Մանազին հայտարանում է, թե և բանաստեղծական լեզվով. «Ի տուչութենէ հոգույն տուաւ, զի նա զայսոսիկ ոգեաց տաղս միայոյն չափաւորութեամբ գծի», մինչդեռ ավետարանները և սաղմոսները հասարակ լեզվով են գրած:

Գրիգոր Մագիստրոսը միագիծ կամ միալանգ ոտանավոր գրելը, որ արաբների կողմից «կափիա» էր կոչվում, վարժության խնդիր է համարում. —Մոհամմեդը, ասում է, Ղուրանը քառասուն տարվա ընթացքում գրեց, եւ ամբողջ Ս. Գիրքը, Ադամի ստեղծագործությունից մինչև Քրիստոսի երկրորդ գալուստը քառասուն օրվա ընթացքում կգրեմ միահանգ: Եվ գրում է յուր Հարտորդությանը, որ բոլորը Ն-ով է վերջանում: Նորա գրածն, իհարկե, բանաստեղծական արժեք չունի, բայց նորա հմտության և նյութի տիրապետության հայտարարն է և փաստացի ապացույցը:

Երկրորդ արաբ ավելի մտերիմ բարեկամ Իբրահիմ Ամիրան էր, ամիրա կամ էմիր արաբական հին նշանակությամբ, որ իշխան էր նշանակում, որին երկու թուղթ ունի գրած. առաջինը «Վասն հաւատոյ» և մյուսը «Վասն իմաստասիրութեան», բայց իսկապես երկուսն էլ համեմատական իմաստասիրական ուսումնասիրություն են կրոնի ծագման և Աստուծո գաղափարի մասին:

Ե

Վերև հիշեցինք թվականով և հնագույն բժշկարանները. ամենից հայտնին Կոռիկոսի տիրոջ՝ Հեթում պատմիչի ձեռագիրն է, 1294 թվին գրված: Երկրորդ ձեռագիրը Վիեննայի Մխիթարյանց 1438 թվի ձեռագիրն է, բայց կա մի երրորդ ձեռագիր ևս Երուսաղեմում՝ թիվ 370, տարաբախտաբար թերի, առանց թվականի և խառը գրչությամբ: Բայց յուր սկզբնական օրինակով հնագույնը, կարծում ենք: Արդեն հիշեցինք, թե հնագույն մասը, որ սույն ձեռագիրն է, բոլորագիր է, իսկ նորագված մասը՝ նոտրգիր, ունի երկու փոքրիկ հիշատակաբան մասին: Այսինքն հնագույն մասում, մեկը երկրորդ մասի վերջում, որ

Հերացու «Վասն չերմանց»-ն է, տարբեր խմբագրությամբ, երբեմն և տեխնիկական բառերի գործածությամբ։

Առաջին հիշատակարանն է.

«Յ/խուս/ս Ք/ր/իստո/ս, որ բժիշկս ես հոգոյ եւ մարմնոց, բժշկեա զվէրս հոգւոյ եւ մարմնոյ ծառային fո՝ Հեթմոյ Սեաստաւսի՝ որդւոյ... շնի եւ ես փառ յաւիտեանս, ամեն»։

Երկրորդ հիշատակարանը չի գրված բուն ձեռագրի մեջ, այլ իբրև պահպանակ ծառայող չորս բժիշկների պատկերների հետևի երեսում։

«Տ/էր Յ/խուս/ս վայելել տացէ զԲժշկարաւս մեծի եւ բարեպաշտ իշխանին Սեաստաւսին Հեթմոյ՝ որդւոյ Աւշնի բարեպաշտի»։

Առաջին եղրակացությունը, որ մենք հանել կարող ենք այս հանգամանքից, այն է, որ բոլորագիր մասը, որ ձեռագրի բուն գրչությունն է, ստացող Հեթումին ժամանակակից չէ. ապա թե ոչ, այս երկրորդ հիշատակարանը, որ բուն գրչության գրով է գրված, չէր գրվի անհամապատասխան տեղում։ Բայց նա արտագրություն է մի ձեռագրից, բայց արտագրություն չէ Կոռիկոսցու օրինակից, ինչպես կտեսնենք։

Ո՞վ է երուսաղեմի ձեռագրի այս Հեթում Սեաստոսը՝ որդի Օշնի։ Նույն անունն ու հայրանունն ունի նախ Հեթում—Հեղին՝ Ներսես Լամբրոնացու եղբայրը, և ապա Կոռիկոսի տերը՝ Հեթում Պատմիչը, 1294 թվին գրված Բժշկարանի ստացողը։ Արդյոք նո՞ւյն են դրանք, և այդ դեպքում լոկ արտագրությո՞ւն է երուսաղեմի ձեռագիրը դորանից։ Երկու անունները նույն է ընդունել դոկտ. Թորգոմյանը[16]. նույն կարծիքն ունի երկու Հեթումների մասին և պրոֆ. Լևոն Հովհաննիսյանը երևանում, բայց մենք համոզված չենք այդ իրողության մեջ հետևյալ հիմունքներով.

Երուսաղեմի նախնական ձեռագրի ստացողը պարզ, լամբրոնի իշխանի Սեաստոսի տիտղոսն ունի, իսկ 1294 թվի Բժշկարանի ստացողը հիշատակարանների մեջ կոչվում է «զքաջազաւրագն այր զԲրիսաուսապաշու, խոհեմ եւ բաջի արաճց պարոն, զբարեճամբաւն Հեթում, ա/է/ր Կոռիկոսոյ», որի հրամանով ծերունի Վարդ Մրտիշցին Ձեռ թվին գրել է նորա Բժշկարանը։

Նույն Բժշկարանի մի այլ հիշատակարանի մեջ կոչված է դարձյալ «բաքաւորազն... Հեթում՝ տէր Կոռիկոսոյ» և յուր մյուս տիտղոսներով. նույնը կրկնված նաև Ստեփանոս երիցի կողմից գրված տոմարի հիշատակարանի մեջ. «Հրամանաւ բագաւորւ իշխանին իշխանաց, բարեպաշտին եւ աստուածասիրին Հեթմո/յ/ տեառն Կոռիկոսոյ... ի թուականիս Հայոց ՉԼՉ» (=1287)։ Նույնիսկ յուր ժամանակագրության վերնագրի մեջ կա. «չարագրեալ պարոն Հեթմոյ տեառն Կոռիկոսոյ»։

Եթե երուսաղեմի ձեռագիրը արտագրված լիներ Կոռիկոսի տիրոջ այս ձեռա-

---

[16] *Բազմավէպ, 1923, եր. 70բ։*

գրից և կրկնված նորա տիրոջ անունը, ինչո՞ւ չպիտի հիշվեր Հեթում Սևաստսի անվան և մյուս տիտղոսները։

Բայց Երուսաղեմի ձեռագիրը ոչ միայն չի արտագրված Կոռիկոսի ձեռագրից, այլև ընդհակառակը, վերջինս յուր նախնական բնագրով պետք է ծագումն առնի Երուսաղեմի օրինակին, հիշատակարանը արտագրված՝ նորա օրինակներից մեկից։

Երեք հիշատակարան ունի Կոռիկոսի օրինակը. դորանից մեկը գրական առնչություն է ցույց տալիս Երուսաղեմի թիվ 370 ձեռագրի մի հիշատակարանների հետ. ահա դեմ առ դեմ այդ երկու հիշատակարանները.

Երուսաղեմի թիվ 370 ձեռագիր	Վենետկի թիվ 1281 ձեռագիր
Յ/իսուս Ք/րիստո/ս, որ բժիշկ ես հոգոց եւ մարմնոց, բժշկեա զվէրս հոգւոյ եւ մարմնոյ ծառայիս ֆո՝ Հեթմոյ Սեւաստաւսի՝ որդւոյ ... շնի / «Աւ» չի գրված / և քեզ փառք յաւիտեանս, ամէն։	Ող բարձր զգաւս հոգւոց եւ մարմնոց հաւատացելոց քոց, Ք/րիստո/ս Ա/ստուա/ծ բժշկեա զհոգւոյ եւ զմարմնոյ ն/իաև/դութիւն ծառա/յ/ի ֆո Հեթմոյ տ/եառ/ն Կոռիկոսոյ՝ ստացողի բժշկարանիս և պահեա զնա իւրովքն ամենեքում/բ/ք անփորձ կրկին կենդանութեամբք կենդանովն և անկենդանեաւն զերկաքանչիւրսն ըստ քումդ հաճոյից կառավարելով...

Պետք է ի նկատի ունենալ և մի ուրիշ հանգամանք. Երուսաղեմի ձեռագրի մեջ կա մի հատված (եր. 19ա), որից երևում է, թե գրիչը Հեթում Սևաստոսն է.

Այլ նշաւիճ պատրաստութեան եւ մոպոլսի, զոր առաբ ծեր բժիշկն Պաղտասինի իճն Հեթմոյ Սեւաստաւսիս, որ է աւխտակար միջացաւի, կոնչոտի սատեցին

Երուսաղեմի Բժիշկարանը ունի բացառիկ արժեքով մի ուրիշ առավելություն. այդ նորան կցված երկու թերթ մագաղաթ պահպանակն է, բժիշկներէ պատկերներով։ Առաջին թերթի վերա նկարված են չորս բժիշկներ՝ իրար կողքի կանգնած դիրքով (պատկ. 5 և 6), (պատկ. 135) իսկ երկրորդ պատկերը ներկայացնում է մահճակալի վերա պառկած հիվանդը, որի բազկերակը բռնել է բժիշկներից մեկը, մյուսը կանգնած՝ դեղերի տուփն է (պատկ. 134) բռնած։

Առաջին հերթին ուշադրության արժանի է բժիշկների զգեստավորությունը, Բագրատունյաց շրջանի իշխանական զգեստավորության նմանությամբ։ Երկու այդպիսի հիշատակ ունինք մենք ԺԱ դարի սկզբից և կեսերից։ Առաջինը Գագիկ Ա-ի մեծ արձանն է կանգնած դիրքով, (պատկ. 8). որ ակադեմիկ Մառը հանեց Անիի Ս. Գրիգորի պեղումներից, շինված Զվարթնոցի նմանությամբ։

Արձանը հագուստի մանրամասնություններ չի տալիս, որովհետև նա կանգնած էր եռահարկ եկեղեցու հյուսիսային երկրորդ հարկի պատի վերա, կոփված մեծ քարերից, 2.26 մետր բարձրությամբ. արձանը ներկված էր, հագուստը և երեսը կարմիր, միրուքն ու բեղերը՝ սեւ։ Չափսն ու սպիտակ, ճակատին կարմիր շերտերով։ Ներքևից նայելիս պետք է երևար բնական մեծությամբ։ Ուշադրություն է գրավում թևերի բացվածքի ճոխ ծալքավորումը սպիտակ։

Համեմատության համար ունինք Սանահնի արևելյան պատին Սմբատ Բ-ի և Հաղբատում (պատկ. 9), (պատկ. 46) թագավորական զույգ՝ մի քիչ կոշտ բարձրաքանդակները, որոշ չափով նմանություն բերելով Գագիկի արձանին։ Ուրեմն հայ թագավորները կրում էին այդ չալման Գագիկից էլ առաջ։

Բայց ունինք և մանրանկարներ։ Կարսի վերջին թագավորը՝ Գագիկը, թողել է մեծադիր և նկարազարդված մի Ավետարան, որ այժմ պահվում է Երուսաղեմի մատենադարանում (№ 2556)։ Ի միջի այլոց այս Ավետարանի մեջ կա Գագիկ թագավորի, նորա կնոջ Թորանդուխտ թագուհու և իրենց Մարեմ դստեր պատկերը։ Արքայական զահույքի մի կողմը նստած է Գագիկը, մյուս կողմը՝ Թորանդուխտ թագուհին, իսկ նրանց մեջ՝ Մարեմ դուստրը։ Տարաբախտաբար կաղմի ժամանակ գլխի կողմերը կտրված։ Պատկերը պակասավոր լինելով հանդերձ, շատ արժեքավոր է արքայական զգեստավորության և թախտի գորգերի զարդարանքի կողմից։ Ունինք դորա գունազարդ և իսկական մեծությամբ նկարը։ Նորություններ ունինք և Թորանդուխտի ազգակցական կապերի մասին վիրական և հայ աղբյուրներով։ Թորանդուխտը Վրաց Բագրատ Դ-ի քույրն է։ Նորա զավակներն էին Գեորգի Ա-ի և Վասպուրականի թագավոր Սենեքերիմի Մարիամ դստեր, որ Գագիկ Ա-ի թոռն էր։ Այս Մարիամը Մարմաշենի մի արձանագրության մեջ կոչված է «Հայոց և Վրաց թագուհի», որովհետև հայ իշխանների մի խումբ Գագիկ Բ-ի գահազուրկ լինե-

յուց հետո՝ կամենում էր նորան թագավորեցնել։ Գեորգի Ա-ի հայրն էր Բագրատ Բ և սորա կինը՝ Գորանդուխտը, որի անունով էլ կոչվել է մեր Կարսի թագուհին։ Իսկ սորա աղջիկը Մարեմ կոչվել էր տատի անունով։

Բժիշկների զգեստավորությունը նման լինելով թագավորական-իշխանական զգեստավորության, միայն գլխների զարդարանքը այնպիսի փառավոր չէլմա չէ, ինչպես թագավորականներն են, և տարաբախտաբար այդ մասով նորոգված է։ Դրանց ծագումը բուն արաբական չէ, այլ՝ արևելյան, որովհետև էջ դարու առաջին կիսում ունենք Մրենի շենքը, որի դռներից մեկի ճակատին բարձրաքանդակ կա, և Մաոի նկատողությամբ իշխանի գլխարկը չամչամանման է։ Մենք անձամբ չենք նկատել, թեև երկիցս եղել ենք այնտեղ։

Չամչամանման գլխարկի ծագումը կարող է սասանյան լինել, ապա մահմեդականության անցած։ Նույն գլխարկը գործադրվում է Պաղեստինի արաբների մեջ, նույնիսկ Հին կտակարանի Երրայեցիների մեջ։ Մաոի երկար ուսումնասիրության եզրակացությունն է, որ նա ծագմամբ դուստ արաբական չէ, որովհետև գործադրված է նախարաբական շրջանում։

Չամչամանման գլխարկը երևան է գալիս և բյուզանդական շրջանում՝ մակեդոնական-հայկական հարստության ժամանակ, թեպետ քննելի է համեմատ հայ։ Սրանք ցուցումներ են, կարող ավելի իրական քննության։ Համենայն դեպս յուր բազմատեսակ ձևերով ընդունված մահմեդական աշխարհում իբրև հարգանքի և պատվո նշան։

Բայց չամչան կրում էին և ոչ մուսուլմանները միայն. մենք մանրանկարչության մեջ ունենք մինչև իսկ հոգևորականների չամչամով՝ մեր մանրանկարչության Ներ ունենք մինչև իսկ հոգևորականների չամչամով՝ մեր մանրանկարչության մեջ։ Հետո օսմանյան պետության քրիստոնյաների չամչամի գույնը փոխել են մեջ։ Հետո օսմանյան պետության քրիստոնյաների չամչամի գույնը փոխել են զանազանելու համար. այդ էլ մի ապացույց է, որ չամչամի գործածությունը արևելքի համար ընդհանուր էր։

ՀԱՎԵԼՎԱԾ Ա

ԳԱԳԻԿ ԿԱՐՍԵՑՈՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ

/Կարսի/ Գագիկ Աբասյան Բագրատունու /ընտանեկան պատկերը, որ գտնվում է/ մագաղաթի կտորի վերա (28⁸×20²), կտրված /է/ նույն թագավորի Ավետարանի վերջին մասից։ Ապացույց/ներ/.

ա) Ֆրագմենտի հետևի հիշատակարանի կտորը, ուր հիշված են Գորանդուխտ թագուհու հետ և Մարեմ անուններ, որոնք հիշված են մյուս հիշատակարաններում։ Կտրված տողից վերի (!) կարդացվում է. «բանիդ[ա]տո սո/տբ...մն»։

բ) Ներքին լուսանցքը հիշատակարանի ճիշտ նույն չափն ունի, ինչ որ բնագրի ներքին լուսանցքինը։

գ) Բնագրի մեջ ևս կան կտրված պատկերներ, ճիշտ այս մեծությամբ հիշատակարանը պետք է շարունակված լիներ և պատկերի երեսին, գուցե հիշատակարանը շարունակվել է և նոր թերթի վերա։

դ) Գորգի տեխնիկական (բոլորակների մեջ փիղ) գույների նմանությունը կա և 206 երեսի խորհրդավոր ընդերքի պատկերի մեջ։

Թագավորը, թագուհին և իրենց մեջ Մարիմը նստած են մի թախտի վերա։ Թախտի առաջին ոտների տակ՝ երկու առյուծ կա նկարված, որոնց ոտները, իրանի ներքին կեսը և գլուխը երևում /են/, համեմատաբար ավելի որոշ՝ աջ անկյունինը։ Առյուծների գլխին ոսկի անոթ, մեջը միրգ դարսած։ Թախտի առաջին ոտները գետնից քիչ բարձր, հառնկյունաձև պատվանդանի վերա խնձոր, ապա քիչ /անդին?/ ոտքի շարունակությունը և եղերող տախտակը։ Կողքից նույն տախտակը իբրև շրջանակ վեր է բարձրանում, դարձյալ քառնակազարդ խնձոր և ապա քիչ շարունակվելուց հետո միացել է մեջքին։ Թախտի նստելու տեղը և թիկունքը ծածկված են քառակուսիներով լցված կարմիր ֆոնի վերա իրար հետ կապված աստղազարդ և խաչազարդ նախշերով. աստղերը՝ քառանկյունիների գծերը կտրած տեղում, իսկ խաչերը՝ մեջը։ Քառանկյունիները խաչված են կարմիր գծերով անկյունից անկյուն։ Թախտի թիկունքի եղերազարդը յուրատեսակ կապերտազարդ է։ Թախտի կողքերից թագավորի և թագուհու ոսկեզարդ և կապույտ երիզների մեջ առնված մի ժապավեն, կապույտ երիզը ալիքաձև զարդով, ինչպես երևում է՝ արքայական նշան։ Նույնը կրկնված է և թագավորի վերարկուի թևերի վերա։ Թագավորն ու թագուհին նստած են դույզ-դույզ մուճաքանների վերա, որոնց ծայրը ոսկի դիպակ էր եղերված կանաչ ֆոնի վերա կապերտի զարդի երկու ժապավենով։ Այդ նույն ժապավենը ավելի լայն ձգված է թախտի առաջը ծածկող բոլորաձև գորգի կամ կարպետի վերա, թագավորի և թագուհու առաջից։ Միայն այստեղ ժապավենը եղերող կանաչ կապերտազարդի հետ զուգահեռական է և մի կարմրագույնը։ Ժապավենի միջին շերտը ոսկեթել էր, արաբական տառերի նմանություն բերող զարդարանքով։

Թախտի երկարությամբ և թախտի վերա նստելատեղում ձգված էր մի բոլորաձև գորգ, բոլորակների մեջ փոխեփոխ թամբած փիղ և թռչուն։ Փիղը շատ նման է, իրական։ Թռչունը գլուխը հետ է դարձրել և հետ է նայում։ Երկրորդ շարքը փոխեփոխ նույն թռչունն է և մի բացված ծաղիկ։ Ծաղկի շրջանակը հարմարեցրած է ծաղկին և աստղաձև է դարձած։

Թագավորը, թագուհին և Մարիմը նստած են արևելյան ձևով, ծալապատիկ։ Թագավորի վերնազգեստն է միայն երևում և պարանոցի մոտ՝ կրծքի վերին մասում շապիկը, նուրբ և գծազարդ։ Վերնազգեստը լայն թևերով էր

մինչև ոտները հասնող, նույն ձևով, ինչպես Գագիկ Ա։ Վերնազգեստի նկարըն է, բոլորակների մեջ առյուծով պոչով և մի մեծ եղջյուրով և թևավոր կենդանի։ Շրջանակի զարդն է փոքր բոլորակ կետերով, ավելի մեծ արտաքին բոլորակ մեջը ոլորապատույտ արմավենիներ։ Այդ բոլորակների շարքի մեջ մի ծաղիկ է չորս՝ խաչաձև կազմով՝ տերևների մեջ։ Թագավորի թևի արքայական նշանի ժապավենը արաբական տառերի նման ոսկեգիծ զարդեր են կան։

թեմի հագուստի վերա։ Փչացած է և ատյուծների մասը։ Մեր արտանկարությունը տարաբախտաբար 1 սանտիմետր ըստ երկարության ավելացած է, թուղթը կպցնելու ժամանակ. ըստ լայնության նույն է։

ՀԱՎԵԼՎԱԾ Բ

ՁՈՐՍ ԲԺԻՇԿՆԵՐԻ ՆԿԱՐԸ

Ամբողջ հասակով կանգնած են չորս բժիշկները, թևերի լայնությամբ՝ իրար կողքի։ Առաջինի գլխի մոտ կապույտ ֆոնի վերա գրված է սպիտակ գրերով. «Ֆա/գա/բա/ռա/ն է», նորա մոտ՝ «Գա/ղ|ևան/ոս/ է»։

Այս երկուսն իրար են դարձած և մյուս երեսուն իրար։ Չորս բժշկի հագուստի ձևը նման է իրար, ինչպես և գլխի փաթթոցները. վերնազգեստը Գագիկ Կարսեցու նման։

Բագարատի վերնազգեստը հասնում է մինչև սրունքները. թևերը լայն, ինչպես Գագիկ Կարսեցունը։ Բոլորակների մեջ թռչուն, իսկ բոլորակների մեջ եղած անկյունները՝ սուր քառանկյունի տարածությունը բացված ծաղիկ։ Բուլչունների շրջանակ բոլորակը սպիտակ բարակ գծերի մեջ կարմիր գնդակների շարք՝ որ բոլորակ է կազմում։ Ուսերին ասեղնագործ, իշխանական նշաններ։ Երծքի մոտ բաց, որ ավելի պարզ է Գաղ/եր/իանոսի պատկերում։ Հագած են ամենքն էլ լայն անդրավարտիք, որի ներքին մասը՝ սրունքների մոտ, նկատելի է։ Կոշիկները պարզ չեն երևում, թվում է, թե սրածայր են։

Բոլորի գլխարկն է չալմայաձև, բայց հետևից փողփողող երկք մասով կամ ժապավենով։ Ճակատի մոտ հանդույց է և զարդարուն, որ ավելի պարզ է երևում մյուս մագաղաթի վերա, հիվանդին քննող բժիշկների գլխարկից։ Տարբեր են բժիշկների վերնազգեստների կտորներն ու զարդարանքները, բայց ընդհանուր ձևը նույն է։

Բագարատը տուփի մեջ դեղեր ունի, ձախով բռնած, իսկ աջով կամենում է վերցնել։ Գաղ/եր/իանոսի ձախին արմատներ կամ բույսեր, աջում՝ մագաղաթի փաթույթ։ Երրորդ բժիշկը ձեռքին սրվակ է բռնել, մեջը հեղուկով, բոլորակ և վիզը նեղ սրվակ։ Չորրորդինը չէ երևում, ներկերը թափած լինելու պատճառով։

Գաղ/եր/իանոսի վերնազգեստի մույգ դարչնագույնն ու սև զարդերը ավելի մոտ են Գագիկ Կարսեցու վերնազգեստին. այստեղ միայն բոլորակների մեջ ծաղիկ ու վահանաձև՝ կետրոնից գծեր դեպի շրջագիծը՝ բոլորակներ են։ Երրորդ բժշկինը նույն ձևով, բայց զարդերը դեղնականաչավուն և կարմիր նուրբ գծերով ձևացրած։ Չորրորդ բժշկի հագուստը պարզ չէ ամբողջը, բայց

մոտիվները պարզ բուսական են, մեծ առատությամբ իրենց ցողուններով շրջապիծ կազմած և ութաձևերի նման շարք։

Երկրորդը $13^2 \times 16^7$ (սանտիմետր)։

Մյուս մագաղաթի վերա երկու բժիշկ քննում են հիվանդին. մահճակալը չորս բարձր հասարակ ոտներով։ Գլխի կողմը բարձր և քառանկյունի, անկյունները զարդարուն բարձ դրած։ Կրծքի մասը միայն շապիկ հագած, թևերը լայն։ Մյուս մասը ծածկած կարմրագույն վերմակով։ Բժիշկներից մեկը, որ հիշտ նույն զգեստն ունի, բայց տարբեր կտորից, բռնել է հիվանդի զարկ֊երակը։ Մյուսը ձեռքին տուփ ունի բռնած դեղերով։ Սոքա էլ լայն անդրավարտիք ունին, որ ծածկում է սրունքը և կոշիկներն են միայն երևում։

Այս երկու մագաղաթը բուն Բժշկարանի մաս չեն, այլ գրությա՜ժամանակ, կարած նույն Բժշկարանի հետ։ Հնթում Սևաստոսի հիշատակարանը և ցանկը առաջին պահպանակի առաջին երեսի վրա ապացույց է այս մասի։

Բժիշկների դեմքը հետո սև գծերով մեկը նորոգել է ուզել կերպով. դեմքի գծերի արվեստն ու շորերինը բոլորովին նույն չեն. օրինակ՝ չորրորդ բժիշկը սպիտակ փառավոր մերուք է ունեցել, որի մի մասը երևում է, իսկ բեղերը՝ սև բոլորովին և բարակ։ Նորոգած է և գլխանոցի գծերը. ձակատի կողմն ունեցել է զարդեր, որի հետքերը երևում են բագարատի գլխարկի վերա, իսկ մյուսներ֊ի գլխարկի ձևը նույնիսկ քիչ փոխված է։ Գլխարկի ձևը համեմատաբար լավ է պահված զննող բժիշկների պատկերի մեջ։ Բայց այստեղ էլ մաշված դեմքերը, ինչպես և հիվանդինը հետո է ուզած մեկի կողմից նորոգված։ Այս հանգամանքի վերա իմ ուշադրությունը հրավիրեց պ. Թադևոսյանը, որը լավ դիտելուց հետո՝ համոզվեցա ճշմարտության մեջ։

1894 թվի ամռանը երուսաղեմի հյուսիսային մասում՝ երեմիայի քարանձավից դեպի արևմուտք, մի գեղեցիկ խճանկար հատակ է հայտնաբերվել հայերեն արձանագրությամբ (տես M u N 1895, էջ 53)[1]: Թիֆլիսում հրատարակվող «Նոր դար» հայերեն թերթը այս տարվա 134-րդ համարում մանրամասն հաղորդում է վերոնշյալ այս մասին, որը համառոտակի բերում ենք ստորև[2].*

*Մուսալման կալվածատեր Յուսուֆը կամենում է իր հողամասում մի նոր շինություն կառուցել: Հողը փորելիս մի լավ պահպանված խճանկար հատակ է բացվում, իսկ դրա տակ՝ ժայռի մեջ փորված դամբարան, որում մեռածի ոսկորներն, ինչպես նաև կավե ճրագամաններ ու ապակե փոքրիկ սրվակներ են գտնվում: Թուրքական կառավարությունը յուրացնում է գտնված իրերը: Խճանկար հատակը (տես № 1 պլուսակը) չափազանց նման է 1892—93-ին Օլբերգի գագաթին գտնվածին**: Նրա երկարությունը արևմուտքից արևելք 7 մետրից քիչ ավելի է, լայնությունը՝ չորս մետրից քիչ ավելի: Չորս կողմից կրկնակի եզրապնդ է: Գծվում, առաջինը 0,25 մ., երկրորդը՝ 0,25—0,30 մ. լայնությամբ: Արևելյան մասում հայերեն հետևյալ արձանագրությունը կա.*

«Վասն յ՛շատակի եւ փրկութեան ամենայն հայոց որոց զանուանս տէր գիտէ»:

Գերմաներեն թարգմանությամբ. „Zum Gedächtniss und zum Heèl aller Armenier, deren Namen (der) Herr weiss".

Խճանկարը ներկայացնում է մի ծառ, որն իր ճյուղերը տարածում է արևմուտքից: Ճյուղերն ընդհանուր թվով քառասուներեք շրջան են գծագրում, որոնցից յոթը՝ միջին շարքում, իսկ ինը՝ չորս մյուս շարքերն են կազմում: Շրջանների մեջ տեսնում ենք զանազան թռչուններ, արծիվ, սիրամարգ, հնդկաքաղաղ, ջայլամ, կարապ, արագիլ, սագ, բադ, փասիան, հավ, թխսամարգ, աղավնի, կաքավ, կաշաղակ, ագռավ և այլն: Մեջտեղի շարքում՝ վանդակով թութակ, այնուհետև ծաղիկներով լի սկահակներ, ինչպես նաև խաղողի ող-

* *Ըստ շինարար խորհրդական Բաուրաթ Ց. Շիկկի* ZDPV, *II, 102* ff. *նկարագրած հողաթմբին:*

** *Տե՛ս* MuN *1895, էր 51*f.

կույններ և ճյուղերին՝ փոքրիկ ոստեր ու տերևներ։ Բացի դրանից, մուսուլմանները գտել են մի հրաշալի մարմարյա, ցավոք, կոտրված սափոր, որը յոթ մասի է բաժանված եղել։ Հաղորդման հեղինակին հաջողվում է բեկորները կրկին իրար միացնել և դրանով հետևյալ արձանագրությունը գտնել.

«Յիշեալ՝ Պետրոս որ արար և Յոհան եւ առնել պնաչս գայս», „der genannte Petros, welcher machte und Yohann, welcher dies Kreuz liess“.

Հեղինակը ենթադրում է, որ այստեղ մի ժամանակ վանք է եղել և ջանում է անցյալի տեղեկությունների հիման վրա այս վանքի գոյությունն ապացուցել։ Նա կարծում է, որ Երուսաղեմից հյուսիս գտնվող սուրբ Պոլիկոտոսի վանքը այստեղ պետք է եղած լիներ։ Երուսաղեմի հայկական վանքերի գրացուցակում, որը կազմել է Անաստաս վարդապետը, այս վանքի կառուցումը Ծոփք գավառի կուսակալ հայ իշխան տեառրաս Արքելայոսին է վերագրում։

Մովսես Խորենացին պատմում է մի Արքելայոսի մասին, որը այսպես կոչված «Չորրորդ Հայքի» (Ծոփքի) կուսակալն է եղել, սպանել է սուրբ Արիստակեսին և Տավրոս (Կիլիկիա) փախել։ Այս նույնը փոքրիկ տարբերություններով պատմում են Ասողիկ պատմագիրը 11-րդ դարում և Վարդան վարդապետը 13-րդ դարում։ Տավրոսից, ինչպես կարծում է հեղինակը, Արքելայոսը Երուսաղեմ է գնացել և այնտեղ իր մեղքերը քավելու նպատակով սուրբ Պոլիկոտոսի անունով վանք կառուցել։ Այս սուրբը կարող էր Արքելայոսին քաջ լիկոտոսի անունով վանք կառուցել։ Այս սուրբը կարող էր Արքելայոսին քաջ ծանոթ լինել։ Պոլիկոտոսը պետք է, որ հենց այս Մելիքենի շրջանում նահատակված լինել։ Իսկ Մելիքենը չորրորդ դարի սկզբին հայոց Տրդատ թագավորի տիրապետության տակ էր գտնվում և այդ պատճառով շատ հավանաբար Արքելայոսի իշխանության տակ էր գտնվում և այդ պատճառով շատ հավանական է, որ այն հարևան Ծոփք գավառի հետ մեկտեղ Արքելայոսի իշխանությունն էր, որ այն հարևան Ծոփք գավառի հետ մեկտեղ Արքելայոսի իշխանությունն էր, որ այն հարևան Ծոփք գավառի հետ մեկտեղ Արքելայոսի իշխանությունն էր, որ այն հարևան Ծոփք գավառի հետ մեկտեղ Արքելայոսի իշխանության տակ գտնվեր։ Հայերը հաճախ էին այցելում Պոլիկոտոսի գերեզմանը Մելիքենում, այդ պատճառով այս սրբի անունը քաջ ծանոթ էր Արքելայոսին, ուստի իր կառուցած վանքը նրա անունով է կոչել։

Ի վերջո, ըստ վերոհիշյալ հեղինակի հաղորդման, վանքը պետք է որ մինչև 551 թիվը կառուցված լիներ։ Այս եզրակացությանը նա հանգում է այն բանից, որ այստեղ գտնված արձանագրության, ինչպես նաև Օլբերգի հայերեն արձանագրության մեջ (ZDP, V. VIII. 157 f[3], MuN, 1895, էջ 51 f) տարեթիվը չի նշվում։ Սակայն, մինչև 551 թիվը հայերը ազգային ժամանակագրություն չունեին, մինչդեռ ամիսների անուններն ընդունված էին դեռ հեթանոսական ժամանակներում։

Հնարավոր է, որ վերը համառոտակի վերարտադրված հաղորդման հե-

---

* Յիշեալ բառը—անվանյալ, այստեղ ոչ մի իմաստ չունի։ Հավանորեն յիշեալի փոխարեն պետք է կարդալ յիշել, որը հայերենի անորոշ դերբայն է։ Այսպիսով՝ հիշատակ Պետրոսի և այլն։

զինակն իրավացի է իր ենթադրության մեջ։ Սակայն դրա որևէ ապացույցի մասին խոսք անգամ չի կարող լինել։ Մենք ցավով ենք նշում տվյալների բացակայությունն այն աղբյուրների մասին, որոնցից հեղինակը գիտե, թե հայտնաբերված մնացորդները կապ ունեն սուրբ Պոլիկառոսի վանքի հետ։ Բացի դրանից, որքան գիտեմ, բացի Մովսես Խորենացուց, հայ հին պատմիչներից ոչ մեկը չի հիշատակում այս Արքելայոսին։ Իսկ այն փիրքը, որ Մովսես Խորենացու անունն է կրում, համաձայն ֆրանսիացի գիտնական Կարրիերի բերած ապացույցների՝ չպետք է որ 7-րդ դարից առաջ գրված լինի։ Այսպիսով հեղինակի պնդումներն իսկապես որ տարակուսելի են թվում։ Արձանագրության հնության մասին կարելի է ասել, որ այն ամենաքիչը 9—10-րդ դարերին է պատկանում։

Հավուց թառի ամենափրկիչը և նույնանուն հուշարձաններ հայ արվեստի մեջ (էջ 5)

Հրատարակվել է 1937 թ. Երուսաղեմում, որտեղից և արտատպվում է։ Ղ. Հովսեփյանն իր աշխատանքը նվիրել է ակադեմիկոս Ն. Յա. Մառի հիշատակին։ Հավուց թառի ամենափրկիչը պահպանվում է էջմիածնի տաճարի բանգարանում։ Աշխատությանը Ղ. Հովսեփյանը կցել է առաջաբան, որը բերում ենք ստորև։

Առաջաբան

Այս երկը անկախ ամբողջություն լինելով հանդերձ, մասամբ կապված է մեր եռահատոր «Խաղրակյանք կամ Պռոշյանք Հայոց պատմության մեջ» աշխատության որոշ մասերի հետ, լրացնելով Ագատ գետի հովտի վանքերի ուսումնասիրությունը։ Ագատ գետի ակունքներում են Գևղարդա և Աղբոց Ս. Աստվածածնի վանքերը, որոնց մեջ է ընկնում և Հավուց Թառի Ամենափրկիչը. առաջինները, որպես Խաղրակյան կամ Պռոշյան տոհմի հոգևոր կենտրոններ, իսկ վերջինը, Պահլավունյաց մնացորդների։

Սակայն սա վանքի պատմություն չէ յուր ամբողջության մեջ, այլ Հավուց թառի Ամենափրկիչ կոչված փայտակերտ սրբության նույնանուն քարե հուշարձանների կամ խաչքարերի հնագիտական-գեղարվեստական ուսումնասիրություն, վանքի պատմությունը միայն մի օժանդակ լուսաբանություն է բուն խնդրի շրջանակի մեջ, որ տարբեր աղբյուրներից նոր լույս է բռնում առաջադրյալ նպատակի լուծման համար։ Ինչպես մեր իշխանական տոհմերի ժամանակագրական հաջորդականության վերա հյուսում ենք մեր մշակույթի պատմությունը (խաղրակյանց կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ» և նման աշխատություններ), ապա Ամենափրկիչ կոչված խաչերի հնագիտական-մասնագիտական ուսումնասիրության մեջ նույն նպատակն է հետևած՝ հետևելով այն ճշմարտության, թե ոչ մի պատմական երևույթ ինքնին, առանց գործադրված, հետևելով այն ճշմարտության, թե ոչ մի պատմական երևույթ ինքնին, առանց մերձավոր խնդիրների կապակցության, հասկանալի չէ։ Արձանագրական, մասնագրական և ձեռագրական հիշատակարանների, գավանաբանական հայացքների և կրոնական արվեստի փոխհարաբերության լուսո տակ դիտված է այս մասնակի երևույթը, իբրև օրինակ մեր անցյալ գեղարվեստական երևույթների ուսումնասիրության նպատակի ճարտարապետական, մանրանկարչական և գրչության արվեստների և ընդհանրապես մշակույթի ուղին է այս, որով պիտի ընթանանք, երի կամենում ենք նրանց ծագման և զարգացման իրական պատմությունն ունենալ։

Բայց այս գործը ուսումնասիրություն չէ միայն սովորական մտքով, այլ նաև գործ հետ կապված նյութերի հավաքում և ճշտում. մեծ ժամանակ չունենալով հանդերձ, ընթերցողը ինքնին

տեսնել կարող է, թե քիչ ժամանակ չէ նվիրված իրար հետ կապված այս երկու խնդիրների համար. վանքի և Ամենափրկիչ հուշարձանների պատմության աղբյուրների, հատկապես արձանագրությունների, մեծագույն մասը առաջին անգամն է լույս տեսնում այստեղ։ Բայց մենք էլ պետք չենք կարող, թե այդ նյութին վերաբերող բոլոր աղբյուրները հայտնագործված են մեր կողմից։ Գիտությունը փշրանքներով է ամրոզցնում յուր կատարելության հանապարհին. պետք է համակերպվինք այս իրողության հետ։

Ներկա գործը յուր համառոտությամբ կարդացված է նախապես Վենինգրադի նյութական կուլտուրայի պատմության ակադեմայում և նվիրված է նույն հաստատության նախագահ, նշանավոր հայագետ և մեծ աշխատավոր ակադեմիկ Ն. Մառի հիշատակին։ Սա մի երախտագիտական նվաստ արտահայտություն է բարեկամական այն բոլոր օգնությունների հանդեպ, որ ստացել ենք մեր աշխատանքների ժամանակ նորա կողմից։ Հենց նորա առաջարկությամբ ենք սկսել Գեղարդի և Աղցոց Ս. Ստեփանոս վանքերի, ինչպես և Հավուց-Թառի արձանագրությունների կարգավորյալ հավաքածոն ու վերստուգությունները, իբրև անդամ նորա գլխավորությամբ կազմված գիտական արշավանքի «Տրդատաց-Թախտ»-ի պեղման և ուսումնասիրության ժամանակ։ Տիխոնովի և Սմիրնովի լուսանկարներն էլ հանված են այդ ժամանակ, որոնք նույնպես մասնակից էին այդ արշավանքին։ Սահմանափակ նպաստավով սկսված աշխատությունը, հետագայում ընդարձակ ծավալ և բովանդակություն է ստացել «Հայոց պատմության մեջ» աշխատությամբ, և առանձին՝ ներկա հատորով։ Նորա բարեկամական գնահատությանն ենք պարտական, որ Ս. Պետերբուրգի նախկին Կայսերական հնագիտական ընկերության անդամ ընտրվելու պատվին էինք արժանացած, ինչպես և Գիտության ճեմարանի պաշտոնական հանձնարարականով դյուրացված էր մեր ուսումնական ճանապարհորդությունը Փ. Ասիայում։ Վերջապես նորան ենք պարտական, որ Վենինգրադի ներկա Նյութական կուլտուրայի պատմության ակադեման որոշել է հրատարակել մեր Հայ մանրանկարչության մեծածավալ և գունազարդ քարտեզը։

Բայց պարտավորություն ունինք շնորհակալություն հայտնելու և հատորիս հրատարակության ծախսերը հոգացող, կահրիեաբնակ շնորհափայլ S. S. Աննա Պոլբրոս կալիի, Սաքենիի Չաղբրի և Նվարդ Յազուբյանի, Ամենապատիվ S. Բորգոմ Ս. պատրիարքի միջնորդությամբ, առանց որու օգնության անհայտ կմնար այս աշխատությունը շատ երկար ժամանակ բանասիրությանը, ինչպես ուրիշներըը։

Մեր ի սրտե շնորհակալությունն ենք հայտնում ի վերջո Ս. Հակոբյանց տաճարի լուսարարապետ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Նշանյանին, որ անձնվիրաբար հանձն է առել այս գործի բարդ և դժվարին սրբագրության պարտականությունը։

Մի ձեռագիր ավետարան
(էջ 108)

Տպագրվել է «Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության» Բ պրակում, Նյու Յորք, 1943, էջ 45—59, որտեղից և արտատպվում է։

Գ. Հովսեփյանի «Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության» խորագրով պրակներից լույս է տեսել հետը՝ Ա, Երուսաղեմ, 1935, Բ, Նյու Յորք, 1943, Գ, Նյու Յորք, 1944, Դ, Ե, Անթիլիաս-Լիբանան, 1951։

Դարձյալ Իգնատիոս Հոռոմոսցի մաճառնկարչի մասին
(էջ 116)

Տպագրված է «Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության» Բ պրակում, Նյու Յորք, 1943, էջ 60—66, որտեղից և արտատպվում է։

Առաջին հատվածը «Բզնունիս մանրանկարիչ և Շոթականց տունը» խորագրով տեղապրված է սույն հրատարակության Ա հատորում, էջ 234։

Պողավանիրը և գմբեթավորումը նախնական հայ տաճարների (էջ 122)

Տպագրվել է «Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության» Գ պրակում, Նյու Յորք, 1944, էջ 7—45, որտեղից և արտատպվում է։ Աչխատությունը հեղինակը նվիրել է Ի. Ստրժիգովսկու և Ր. Թորամանյանի հիշատակին։ Գ. Հովսեփյանը պրակին կցել է առաջաբան, որ բերում ենք ստորև։

Հառաջաբան

Հրատարակում ենք մեր նյութեր և ուսումնասիրություններ ընդհանուր վերնագրով աշխատանքների Գ պրակը։ Նախընթացները արտատպություններ էին մեր նախապես գրած հոդվածների այլևայլ պարբերականների մեջ մաս առ մաս, որ ի մի հավաքելով, հրատարակել ենք առանձին գրքերով։ Այս պրակը տպագրվում է նույն շարքում, առանց նախապես երևան հանած

գործ է կատարված հիշյալ գիտնականների, Մառի, Օրբելիի, Բախմանի[4], Բալտրուշայտիսի[5] և այլոց ձեռքով, բայց դեռ կատարելից շատ գործ կա, անհայտը ի հայտ բերելու, որպեսզի այլևայլ կողմերից եկած մեծ կամ փոքր նառադայթներով լուսավորվի մեր անցյալ ստեղծագործության պատկերը և արժանավոր տեղը բռնե ազգերի և նրանց քաղաքակրթության պատմության մեջ։ Հայ ճարտարապետության զարգացրության ժողովածուն ժամանակագրական կարգով և տեղերի ցուցմամբ, օրինակ, որքան առատ նյութ կտար Առաքելոր Ախայենց ազգերի և հայ արվեստի հարաբերության և լուսաբանության համար։ Մենք գիտենք, որ նկարիչ Տեր-Մկրտչյանը այդպիսի մի մեծ ժողովածու ունի, անձամբ հավաքած յուր ձեռքով հայ վանքերի վրայից և մաքրագրած, որ երկար տարիներև ի վեր մնում է առանց տպագրության[6]։

Այս գործը որքան և մեծածավալ չէ, զգալի նյութական զոհողություն, աշխատանք և ժամանակ է պահանջել մեզանից, բայց այստեղ իրենց բաժինն ունին և ուրիշները. նախ պիտի օրհնենք հանգուցյալ Թորամանյանի հիշատակը, որ յուր նկատմիվները տրամադրեց և նույնիսկ թուլլատու եղավ մեզ նրանցից մի-մի օրինակ արտատպության կատարելու, հայտնելով, որ ինքը մասնագետ չէ պատկերագրության մեջ, ուստի և անկարող օգտագործելուս անձամբ։ Նախապես շատերը դրանցից լուսանկարել էինք անձամբ, բայց ոչ այնչափ հաջող, ինչպես Թորամանյանինը։ Դրքի վերջում պատկերների ցանկի մեջ հիշված են նրանից ստացած լուսանկարները։

Ապա պարտ ունինք շնորհակալությամբ հիշելու և պ.պ. Հայկ Գալուստյանի, Սրվանդ Մավյանի, Ճիմ Ջանգալյանի, Աբրամյաև Բագրատունու, Ներսես Պետրոսյանի, ինչպես նաև Մաճառիթի, Աբլանիթի և Դրաֆիկ լուսափորագրչական տներին, որոնք Տ. Ներսես վարդապետ Սիմոնյանի միջնորդությամբ, ծրիարար պատրաստեցին էրսերը. առանց այդպիսի օգնության դժվար կլիներ մեզ հոգալ տպագրության բոլոր ծախսերը։

Տարաբախտաբար Պողնիի մասին վերջերս մի ռուս գիտնականի կողմից կատարված ուսումնասիրությունը տեսնել չկարողացանք[7], ինչպես և Թ. Թորամանյանի վերև հիշած աշխատությունն օգտագործել, որ միայն վերջին օրերը ևվեր ստացանք պ. Ա. Անդրեասյանից, երբ ամբողջ գործը շարված էր մամուլի տակ։

Գերեզմանական հին կոթողներ և նրանց ճնագիտական արժեքը հայ արվեստի պատմության համար

(էջ 153)

Տպագրվել է «Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության» Գ պրակում, Նյու Յորք, 1944, էջ 46—127, որտեղից և արտատպվում է։

Մի էջ Տիգանի գեղարվեստական պատմությունից

(էջ 190)

Տպագրվել է «Հայաստանյայց եկեղեցի» հանդեսում, 1944 թ. հոկտեմբերի համարում, էջ 7—27, որտեղից և արտատպվում է։

---

[4] Bachmann W., Kirchen und Moscheen in Armenien und Kurdistan. Leipzig, 1913.

[5] Etudes sur l'Art médiéval en Georgie et en Arménie. Paris, 1929.

[6] Ա. Տեր-Մկրտչյանի նյութերը, որոնց թվում նաև «եկեղեցիների հայ ճարտարապետության շուրջը», «Հայ գրքի գեղարվեստը» և այլն չեն հրատարակված։ Պահպանվում են Հայաստանի պետական պատկերասրահում, Ձեռագրային բաժին, ֆ. № 40—կազմող։

[7] *Н. М. Токарский*, Предварительный отчет о поездке в Армению осенью 1923 г. «Известия Российской Академии Истории материальной культуры», т. IV, Л., 1925 г.— կազմող։

Տ. Տէր-Մանճեանին իր ավետարանը նվիրել է Երևանի Մատենադարանին (Ձեռ. № 10520)։ Տես Բ. Լ. Զուզասպյան, Հայերեն ձեռագրեր Ամերիկայի Միացյալ Նահանգներում, «Բանբեր Մատենադարանի», Երևան, 1977, № 12, էջ 253—254։

Սարգիս Պիծակ *(XV դ. I կես), մանրանկարիչ և գրիչ Գրիգոր Պիծակի որդին։ Սարքել և տաճարագրծել է Մխսում։ Հայտնի են տարբեր վայրերում (Մխս, Սկևռա, Դրազարկ, Կոպիտառա, Փոս անապատ) պատկերազարդած նրա շուրջ 30 ձեռագրերը։ Այդ թվում. «Ութ մանրանկարիչների ավետարանը» (1320 թ., Երևան, Մատենադարան, ձեռ. № 7651), 1331 թ. ավետարանը (Վէնետիկ, ս. Ղազար, ձեռ. № 16), 1331 թ. Ամենայն օրինագիրքը (Վէնետիկ, ս. Ղազար, ձեռ. № 107), 1336 թ. Աղթամարի արքունական ավետարանը (Երևան, Մատենադարան, ձեռ. № 5788), 1338 թ. Աստվածաշունչը (Երևան, Մատենադարան, ձեռ. № 5786), Մարիամ Թագուհու ավետարանը (Երուսաղեմ, Ս. Հակոբյանց վանքի մատենադարան, ձեռ. № 1973), Բժշկութեան ավետարանը (1353 թ., Երևան, Մատենադարան, ձեռ. № 6795) և այլն։*

Մի կարևոր ձեռագիր Նյու Յորքի հաճարային Մատենադարանում
(էջ 209)

Տպագրվել է «Նոր գիր» ամսագրի № 1-ում, Նյու Յորք, 1944, էջ 6—24, որտեղից և արտատպվում է։

Գրառում Մատենադարանի տպավորությունների մատյանում
(էջ 219)

Գ. Հովսեփյանն այս գրառումը կատարել է 1945 թ. հուլիսի 18-ին, Մատենադարանում երկու շաբաթ տևող ուսումնասիրական աշխատանքներն ավարտելուց հետո։

Մատյանը պահպանվում է Մատենադարանի Ձեռագրային բաժնում (էջ 58)։

Մոմիկ «սարկավագ» (գրիչ, նկարիչ և արձանագործ—1297—1332)
(էջ 220)

Տպագրվել է «Նախիր» ամսագրի (Հալեպ) 1947 թ. № 4-ում (էջ 115—121), որտեղից և արտատպվում է։

Մոմիկ *(XIII դարի վերջ—1339 թ.), մանրանկարիչ, քանդակագործ, ճարտարապետ։ Մոմիկ անունը առաջին անգամ հանդիպում է Գլաձորում 1283—1284 թթ. պատրաստված ձեռագիր ժողովածուում, որի խորանների նկարազարդման հեղինակն էլ Մոմիկին է վերագրվում 1283 թ. Կիլիկիայի Սկևռայի վանքում կնեան թագուհու պատվերով ստեղծված ձեռագիրը (Երևան, Մատենադարան, ձեռ. № 6764)։ Նրա ստորագրած գործերից են 1302 թ. ավետարանը (Երևան, Մատենադարան, ձեռ. № 2848) և 1302 թ. ավետարանը (Երևան, Մատենադարան, ձեռ. № 6792)։ Մոմիկը XIV դարի սկզբին Նորավանքում կերտել է խաչքարեր, կառուցել է Արենիի եկեղեցին (1321 թ.)։ Մոմիկին են վերագրվում Նորավանքի գավթի վերակառուցումը, Աստվածամոր և Հայր Աստծո քանդակների հետ մեկտեղ (1321 թ.), ինչպես նաև նույն Նորավանքի երկհարկ դամբարան-եկեղեցին իր քանդակագործական աշխատանքներով (1339 թ.)։*

Նկարիչ Սարգիս Խաչատուրյան
(էջ 224)

Տպագրվել է «Հասկ» հանդեսի (Անթիլիաս-Լիբանան) 1947 թ. ապրիլի համարում, էջ 98—100, որտեղից և արտատպվում է։

Խաչատրյան Սարգիս Կարապետի *(1886, Մալաթիա—1947, Փարիզ)*, գեղանկարիչ։ Սովորել է Կարլրհի Սանասարյան վարժարանում, իսկ 1911 թ. ավարտել է Հռոմի գեղարվեստի ակադեմիան։ Փարիզում ոսկի մեդալով ավարտել է Պետական զարդարվեստի դպրոցը։ Առաջին խմբերիպատասխան պատերազմի տարիներին եղել է Կովկասում, որտեղ նկարել է հայ գաղթականներին։ 1929—1934 թթ. կատարել է Սպահանի Ալի-Ղափու և Չհել Սոթուն (Խրան) պալատների, Նոր Ջուղայի մեծահարուստների ապարանքների որմնանկարների, իսկ 1939—40 թթ. Ախանայի (Հնդկաստան) որմնադիր տաճարների որմնանկարների ընդօրինակությունները։ Անհատական ցուցահանդեսներ է ունեցել Կ. Պոլսում, Կահիրեում, Լոնդոնում, Անտվերպենում, Վիեննայում, Փարիզում։ Պարսկական և հնդկական որմնանկարների ընդօրինակությունների ցուցահանդեսները բացվել են Թեհրանում, Բոմբեյում, Փարիզում, ԱՄՆ-ում, ինչպես նաև Երևանում։ Նրա գործերից հայտնի են «Որբերը Հաշի սոպասման ժամին», «Ագռաւոցի մօտ», «Սասունցի կռիւը», «Հայ գյուղացին», «Վանեցի գաղթականը», «Տոնական օր Երևանում», «Հարսանիքից առաջ», «Հարսի երգը», «Տոնական օր Վարագում» և այլն։

Ստեղծագործությունների որոշ մասը պահպանվում է Հայաստանի պետական պատկերասրահում։

Թէոդորոս գրիչ և նկարիչ
(էջ 228)

Տպագրվել է «Կյանք և գիր» տարեգրքում (Կահիրե), 1948 թ., էջ Ա—2), որտեղից և արտատպվում է։

Կաթողիկոսարանի ցուցահանդեսը
(էջ 233)

Տպագրվել է «Հասկ» տարեգրքի 1948 համարում (Լիբանան-Անթիլիաս), էջ 313—317, որտեղից և արտատպվում է։ Ցուցահանդեսը բացվել է Գ. Հովսեփյանի նախաձեռնությամբ, 1948 թ. հոկտեմբերի 28-ին, Անթիլիասի Կաթողիկոսարանի դահլիճում։ Ընդգրկում էր հայ ձարտարապետության, գեղեզմանական կոթողների, խաչքարերի լուսանկարներ, հնատիպ գրքեր, ձեռագրեր (66 հատ), մանրանկարների գեղանկարչական ընդօրինակումներ, հին դրամներ՝ Գ. Հովսեփյանի հավաքածուից, ինչպես նաև Կովկասի և Փոքր Ասիայի հայկական գրքեր (Նալբանդյան եղբայրների հավաքածու)։ Ցուցահանդեսի բացմանը բացառությունններ է ունի Գ. Հովսեփյանը։ Ցուցահանդեսը մեծ հետաքրքրություն առաջ բերից և փակվեց դեկտեմբերի 26-ին։ Տե՛ս «Ցուցահանդես հայ արվեստի և հնաբանության կաթողիկոսարանի մեջ», «Հասկ», 1948 թ., № 11, էջ 306—309, «Հայ արվեստի և հնաբանության ցուցահանդես», նույն տեղում, № 12, էջ 320—339։

Համառոտ զեկուցում հայ մանրաճկարչության նվիրված մեր աշխատանքի մասին
(էջ 238)

Տպագրվել է «Անի» (Բեյրութ) ամսագրի 1948 թ. № 12-ում (էջ 618—625), որտեղից և արտատպվում է։ Աշխատանքը պատրաստվել է որպես Փարիզում 1948 թ. հունիսին կայանալիք բյուզանդական միջազգային կոնֆերանսին ներկայացվելիք զեկուցում։

Հերում Ա.-ի նկարազարդ Ավետարանի մնացորդները
(էջ 247)

Տպագրվել է «Պ. բ.» տարեգրքում (1949 թ., Բոստոն, էջ 7—11), որտեղից և արտատպվում է։ Հերում Ա.-ի ավետարանը ստեղծվել է 1266 թ., Հռոմկլայում, Ձաղկոտ Բոբրս Հոսկին, ւստացող՝ Հերում Ա թագավոր Կիլիկիայի։ Երևան, Մատենադարան, ձեռ. № 5458։

Մաճառ արվեստի օրինակներ Երուսաղեմի վանքից
(էջ 252)

Տպագրվել է «Պայքար» (Նոր տարվա բացառիկ) տարեգրքում, 1950 թ., Բեյրութ (էջ 257—259)։

Հեղինակն իր ուսումնասիրությունը կարդացել է Կյուրեղ պատրիարքի հիշատակին։

Բարձրաբերդի Ավետարանի ոսկեզօծական կազմը
(էջ 261)

Տպագրվել է 1951 թ. «Պայքար» (Նոր տարվա բացառիկ) տարեգրքում (Բոստոն, էջ 257—259), որտեղից և արտատպվում է։ Բարձրբերդի ավետարանը պատրաստվել է Կիլիկիայի Բարձրբերդի վանքի գրչատանը, Կոնստանդին Ա. կաթողիկոսի մերձավոր Մատիանոս սարկավագի պատվերով 1248 թ.։ Մաղկել է ժամանակի անվանի մանրանկարիչ Կիրակոսը։ Ձեռագիրը պահպանվում է Անթիլիասում (Լիբանան)։

«Հիշատակարան ձեռագրաց» գրքի առաջաբանը
(էջ 266)

Տպագրված է՝ «Հիշատակարան ձեռագրաց», Հատոր Ա, Անթիլիաս, 1951, էջ ԺԹ—ԻԲ։ Նպատակահարմար ենք գտել Հատորում զետեղել այս առաջաբանը, նկատի ունենալով հեղինակի նոր մեկնաբանությունները մեր մշակույթի այս կարևոր բնագավառի ուսումնասիրության առաջադեմ։

Էջմիածնի տաճարի նկարազարդումն ու ծաղկազարդումը
ԺԷ—ԺԸ դարերում
(էջ 272)

Տպագրվել է «Ընտիր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության» Ե պրակում, Անթիլիաս-Լիբանան, 1951, որտեղից և արտատպվում է։ Ե պրակին Գ. Հովսեփյանը կցել է առաջաբան, որը բերում ենք ստորև։

Հառաջաբան

Էջմիածնի տաճարի նորոգությունը եղել է Ամենայն Հայոց վերջին կաթուղիկոսների հոգածության առարկան։ Գևորգ Դ. հինել է տաճարի արևելյան պատին կից մի հավելված, երեք բաժանմունքներով, որ նախանված էր իբրև սկևռոցական քանգարան, զգեստեղենի, սրբությունների և պատմական հիշատակների պահպանության համար։ Շենքը յուր ոճով բոլորովին անհարիր էր բուն տաճարի շինության, մեկտև քան նպատակի յուր դերը կատարել է շատ տանելի տարիներու։

Մանար էջմիածինը ապահովելու համար տաճարի պատերի ապահովությունը ճարտարապետ Մալայանցեանի ձեռքով մի քանի քայլ տվավ, տարաբախտաբար փոխելով մեր հին տաճարներին հատուկ երեք կամ հինգ աբսիճաններով շրջապատը։

Երիմյանի ժամանակ կատարված սվաղը պարզված է ետևի գրքույկի առաջին էջերի մեջ։

Գևորգ Ե-ի ժամանակ միայն էր հղացված հրեմյանի մատղաշ ներքին նորոգությունը վերատեսնել, և խոստում կար ծախսերը հոգալու մասին, բայց քաղաքական և տնտեսական պայմանների փոփոխությամբ, անհնար նվավ իրագործել այդ միտքը։ Միայն 1915-ի երկրաշարժից, եղիազար կաթուղիկոսի ժամանակ կառուցված երեք գմբեթներից հարավայինը ընկավ, վնասելով մասամբ և պատերի արտաքին մասերը, որ վերաշինվեցավ առանց գմբեթի վերականգնման։ Ճարտարապետ Թամանյանի, որի ձեռքով նորոգվեցավ այդ մասը, կարծիքն էր, թե եղիազարի կառուցած գմբեթները պետք է վերացնել, որոնք ծանրություն են շենքի պատերի դիմացդիմության համար։

Առանց Հարեւանությունների մանակցության նորոգվեցան արտաքին տանիքի արեւելյան մասերը, որ տարաբախտաբար անհաջող եղավ, պատճառ դառնալով անձրեի ջրերի ըափանցման, կաթիլով Գևորգ Դ-ի շինած քանդարանի բաժանմունքների մեջ, ի վնաս այնտեղ պահված հնությունների և արժեքավոր մնացորդների խոնավությունից ապատ պահպանության։

Տաճարի ներքին և արտաքին նորոգության խնդիրը արծարծվեցավ և հանգուցյալ Տ. Խորէն վաթուղիկոսի ժամանակ։ Մեր դեպի արտասահման կատարած պատվիրակության գլխավոր խնդիրներից մեկն էր, հանգուցյալի հանձնարարությամբ և գումար հայթայթել տաճարի նորոգության համար։ Մենք կատարեցինք մեր պարտքը ըստ ժամանակի պայմանների՝ երուսաղեմ, եգիպտոս, Ֆրանսիա, գլխավորապես Փարիզում, Լոնդոն և Մանչեստր, և ապա նյու Յորքում՝ պ. Հայկ Գավուկճյանի ղեկավարությամբ։ Երուսաղեմինը ուղարկված է էջմիածին, եգիպտոսինը՝ 1000 ե. ո. (եգիպտական ոսկի—կազմող) էջմիածնի կարգադրությամբ ուղարկված է Լոնդոնի էջմիածնական հանձնաժողովին և 750 սոներլինգ պահվում է Առաջնորդարանում։ Անգլիայինը գումարված է էջմիածնի հանձնաժողովի մոտ։ Փարիզի և Ամերիկայի բերած նպաստները պահպանվում են Բարեգործականի մոտ։ Պ. Գավուկճյանի ղեկավարությամբ հավաքված գումարը դրված է բանկում և փորձի տակով է բերում Բարեգործականի հսկողությամբ։ Բրյուսելում հավաքված փոքրիկ գումարը գործադրված է առանց մեր գիտության ազգային որոշ նպատակների համար, այն որոշմամբ, թե հետագայում տեղը կդրվի։

Ի գիտության պիտի հայտնենք, որ մեր հանգանակված գումարները սկզբունքով չենք հավաքել մեզ մոտ, այլ ազգային իշխանությունների մոտ են մնացել ցպահանջ կամ ցկարգադրություն Աթոռի։

Տաճարի նորոգությունը կենդանի հետաքրքրության խնդիր է և այժմ Տ. Գևորգ Ջ-ի ժամանակ։ Մեր հանգանակած գումարներով նորա նորոգությունը չէր կատարվիլ։ Մենք չենք էլ մտածել, թե ժողովրդական հանգանակությամբ կարելի կլինի հիմնական և վայելուչ նորոգություն կատարել։ Մեր ազգայիններից մեկը մեր դիմումների և բացատրությունների հետևանքով, հայտնել էր. «Ինչ կատարելի Ձեր ժողովրդական ճանգանակությունը, մենք էլ մեր պարտքը կկատարենք»։ Առժամանակ հարցը մոռացվեցավ. մեր վերադարձը Ամերիկայից ուրիշ ընթացք ստացավ. բայց էջմիածնում Գևորգ Ջ-ի ընտրության ժամանակ հայտնվեցավ, թե մի բարերար կամենում է հանձն առնել նորոգության ծախսը, և կկամենար իմանալ, թե որքա՞ն գումար կնստե։ Այդ անձը նույնն էր վերև ակնարկածի հետ։

Այժմ էլ հաստատուն տեղեկություններ ունինք, թե նույն պարոնը պատրաստ է այդ մեծ գործությունը կատարել և առանձին հետաքրքրություն է ցույց տվել դեպի գործը, միայն կառավարական-հարաբերական որոշ խնդիրներ պետք է հարթվին և պարզվին։ Էջմիածնից էլ նույնպես լուր ունինք, թե Սրբազան կաթուղիկոսը մտահոգված է այդ խնդիրներով և հույս ունի, թե չպիտի ուշանա գործի անցնել։

Էջմիածնի նորոգության գործը, այդ 1650 տարվա հուշարձանի կյանքի ապահովությունը, հայ ժողովրդի, նորա լավագույն և հասկացող զավակների և հայրենի կառավարության պատվի գործն է։ Աղոթող Լնք, որ գործը շուտ սկսվի. ապա թե ոչ առաջնադների, հատիպապես հյուսիսային պատի քայքայումը, խոնավության հետևանքով, կարող է անդարմանալի դառնալ։ Թամանյանի մահը մեծ կորուստ էր և այս կողմից, բայց անհույս չենք, թե

Հայաստանում գործող հայ ձարտարապետներից և արվեստագէտներից ընտրված խորհուրդը անձնվէր աշխատանքով կարող պիտի լինի այդ գործը գլուխ հանել լավագոյն կերպով։

Հանդուցեալ Ամենայն Հայոց Խորէն կաթուղիկոսը հանձնարարել էր մեզ էջմիածնի արտարին չինարարական պատմութիւնը գրել, որպես նպաստ նորոգութեան գործին. տարաբախտաբար այդ շնաշղթայված մեզ, արտաքսման գալու և ապա կիլիկիո կաթուղիկոս ընտրվելու հանգամանքով։ Այս տեսակի հրատարակութիւնը՝ մեր կողմից՝ փոքրիկ չափով նպաստում է հանդուցեալի ցանկութեան և նորոգութեան գործին։

Այս ուսումնասիրութիւնը կազմում են, իրրև ապրյուր, երկու Հավելված. առաջինը Սիմեոն կաթուղիկոսի ժամանակ կազմված «Դավթարք»-ի մի հատվածն է, ցուցակագրութիւն յուր ժամանակ եղած պատկերների։ Երկրորդը Ղուկաս կաթուղիկոսի Գավազանագրքի մի կարևոր հատվածն է, որ իրրև սկզբնագիր է, ուստի և պահել ենք ձեռագրի նուագութիւնը յուր ջնջումներով, որպեսզի հեղինակի իսկական ձեռագրի պատկերը տանք։ Երկուսն էլ կարևոր վաւերաթղթեր, որոնք ուրիշ աղբյուրների հետ, որ հիշել ենք իրենց տեղում. նպաստեցին մեզ ըստ կարելույն պատկերը տալ գեղարվեստական այն շինարարութեան, որ կատարվել է էջմիածնի կաթուղիկոսների կողմից։

Ստեփաննոս Ակնացի *(հվով—1689, էջմիածին), փիլիսոփա, մանկաբան, հոգևորական գործիչ, գեղանկարիչ։*

Ծնվել է հվովում, Դասպար քահանայի ընտանիքում։ 1632 թ. հետո գալիս է էջմիածին, որտեղ դառնում է հոգևորական, գրավելով պատասխանատու աստիճաններ։ Նկարներ է կատարել էջմիածնի տաճարի համար։ Նրան են վերագրվում առաքյալների մի քանի նկարներ և «Թովմայի Քերահավատութիւնը» կտավը։ Կատարել է մանկութիւններ։

Միհնա *(17-րդ դար, Նոր Ջուղա), գեղանկարիչ։*

Բհրայում (Հալեպ) ուսանել է ֆրանկ (ֆրանսիացի կամ կաթոլիկ) նկարչի մոտ, աշխատել է Նոր Ջուղայում։ Կատարել է դիմանկարներ, թեմատիկ պատկերներ, բնանկարներ, որմնանկարներ, ձեավորել է գրքեր։ Նրա աշխատանքներից պահպանվել են Ոսկան և Հակոբջան Վելիջանյանների դիմանկարները (Նոր Ջուղա, Ամենափրկիչ վանքի թանգարան) և որմնանկարների հատվածներ Նոր Ջուղայի որոշ ապարանքներում։

Հովնաթանյան Նազար, Նազար Հովնաթան *(1661, Շուռոթ—1722, Շուռոթ), գեղանկարիչ, աշուղ։*

Եղել է գրիչ և մանկավարժ Ագուլիսի վանքում։ Աշխատել է Շուռոթում, Ագուլիսում, Երևանում, էջմիածնում, Բիթլիսում։ Եղել է վրաց Վախթանգ 6-րդ Շահնավազի պալատական նկարիչը։ Նկարագործել է Երևանի Պողոս-Պետրոս, Ս. Աննահիտ և Կաթողիկե եկեղեցիները, էջմիածնի տաճարը։ Պահպանվել են «Տրդատը, Աշխենը, Խոսրովիդուխտը», «Հայկ Նահապետը», «Ագռնով զինվորը» որմնանկարչական հատվածները, էջմիածնի տաճարի ավաղ խորանի շամի մարմարի նկարազարդումը, գմբեթի վերի հատվածի որմնանկար-ծաղկազարդերը և Թէհրանում պահպանվող «Աստվածամայրը»։

Գ. Հովսեփյանի հոդվածում նշված նկարները պահպանվում են Հայաստանի պետական պատկերասրահում և էջմիածնի վանքի թանգարաններում։

Հավելված Ա. (Սիմեոն կաթուղիկոսի «Դավթարից») (էջ 289)

Տպագրվել է «Նյութեր հայ արվեստի և մշակույթի պատմության» ե պրակում, Անթիլիաս, 1951, որտեղից և արտատպվում է։ Գ. Հովսեփյանը այս հավելվածը տարիներ առաջ տպագրել էր «Անահիտ», ամսագրում, Փարիզ, 1911, № 3—4, էջ 67—68, փոքրիկ առաջաբանով, որը բերում ենք ստորև։

Էջմիածնի տաճարի պատկերագրությունը Սիմեոն կաթուղիկոսի ժամանակ

Մայր աթոռի Արարատ ամսագրի 1901 թիվ մարտ և մայիս ու հունիր միացյալ համարներում՝ հրատարակեցինք Հայրապետական գավազանագրքի մի ընդարձակ հատված, որ վերաբերում էր Մայր Տաճարի՝ Ղուկաս կաթուղիկոսի ժամանակ և Հովհաննես նկարչի ձեռքով կատարված[1] պատկերագրության և զարդանկարչության Հեղինակը, ականատես և գործին տեղյակ մի անձնավորություն, շատ թանկագին մանրամասնություններ էր տալիս յուր ժամանակի և հատկապես Մ. Տաճարի. Ներքին զարդագրության և որմնանկարչության պատմության մասին։ Տարաբախտաբար այդ հատվածը կիսատ էր և մինչև այսօր չէ հաջողվել գտնել երա շարունակությունը։

Ներկայումս հրապարակում ենք մի այլ հատված «Գավթար և հայվածիր անոթից և սպասուց սրբո և Միածնածիչի տաճարիս» վերնագրով ցուցակից, որ Սիմեոն կաթուղիկոսի հրամանով կազմել են նորա սպասավոր Մկրտիչը, Երեմիա գրագիրը և յուսաբար Գրիգոր վարդապետը։ Այդ «Գավթարի» մեջ թված են ոչ միայն Սիմեոն կաթուղիկոսի ժամանակ եղած պատկերները, այլև տալիս են նրանց դասավորությունն ու երբեմն համառոտ նկարագրություններ։ Այդ պատկերներից մի քանիսը մնացել են մինչև այժմ. բայց տարաբախտաբար հանգուցյալ Մկրտիչ կաթուղիկոսի հրամանով սրանք և Հովհաննեի նկարածները անխնա պոկվելուն տաճարի պատերից և մի անկյուն նետվելուն։ Դրանցից 65 նկարներ, ոմանք թեպետ վնասված, դեռ կարելի է փրկել, եթե շրջանակի մեջ դրվին և պահվին ապագա պատկերասրահի համար, որպես նյութ հայ արվեստի վերջին շրջանի պատմության։ Մի քանիսն էլ արդեն շրջանակի մեջ են դրված և կախված եկեղեցում։ Այս ցուցակի համաձայն Սիմեոնի ժամանակի պատկերների թիվը 88 էր, իսկ Ղուկասի ժամանակ 120՝ վերոհիշյալ Գավազանագրքի հատվածի համաձայն։ Այդ 120-ից քանի՞սը Հովհաննես նոր նկարից և քանի՞սը Նորոգից, պակասում են պարզ ցուցումները. անորոշ է նույնիսկ, թե Սիմեոն կաթուղիկոսի ժամանակից մնացած 88 պատկերները մանո՞ւմ են ամբողջապես 120-ի մեջ։

Մեր հրապարակած այս ցուցակը երկու տեսակետով նշանակություն ունի Մայր Տաճարի Ներքին պատմության համար. նախ գաղափար ենք ստանում, թե ինչ պատկերներ կային Սիմեոնի ժամանակ և որտեղ դասավորված, և երկրորդ միջոց է տալիս մեր ձեռքը հասած պատկերներից որոշելու թե որո՞նք նրանից առաջ եղած արվեստագետների գործեր են։ Բարեբախտաբար հին պատկերներից ոմանք հիշատակի գրություններ ունեն, որ ավելի դյուրացնում են վերաոտագրության գործը։ Այդ վերաոտագրությունը կկատարենք և յուսանկարչական պատկերներով կլուսաբանենք մի այլ հանգամանք, երբ բոլոր պատկերները մաքրված և շրջանակի մեջ դրված կլինեն։

Գ. Հովսեփյանի հրապարակման առիթով առաջարան էր տեղադրել նաև «Անահիտ» ամսագրի խմբագիր Ա. Չոպանյանը։

Հավելված Բ (Մայր Աթոռի դիվանից)

Առաջին անգամ տպագրվել է «Արարատ» ամսագրի (Վաղարշապատ) 1901 թ. հավելվածում (էջ 183—190, 326—330), իսկ հետագայում Գ. Հովսեփյանն այն տեղադրել է «Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության» 6 պրակում (Անթիլիաս-Լիբանան), 1951 (էջ 48—63), որտեղից և արտատպվում է։

---

[1] *Այս հատվածը գրեթե ամբողջությամբ արտատպված է «Նաղաշ Հովհաննես աշուղը և Հովհաննես Հովհաննեանց նկարիչը» գրքիս առաջաբանին մեջ (Ծանոթագրությունը Ա. Չոպանյանի—կազմող)։*

Հովհաբանյան Հովհաբան Հակոբի *(XVIII դարի երկրորդ քառորդ—1801 թ., Թիֆլիս)*, նկարիչ։ Նաղաշ Հովհաննեսի թոռը։ Սովորել է հոր՝ Հակոբի և հորեղբոր՝ Հարությունի մոտ։ 1776 թ. վրաց Հերակլ 2-րդ թագավորի կողմից հրավիրվում է Թիֆլիս, որտեղ նշանակվում է պալատական նկարիչ։ Ուներ բազմաթիվ աշակերտներ։ 1769—1786 թթ. նկարազարդել է էջմիածնի տաճարը, կատարել է բազմաթիվ նկարներ, որոնցից են «Մոգերի երկրպագությունը», «Մուտք Երուսաղեմ», «Խաչելություն», «Համբարձում», «Աբրահամի զոհողությունը», «Մր. Հռիփսիմե», «Դավիթ Անհաղթ», «Մովսես Խորենացի» և այլն։ Նկարազարդել է նաև Երևանի խանի պալատը, նկարներ է կատարել Իրանում։

Հայ արվեստի ծագումն ու ոսկեդարը
(էջ 313)

Տպագրվել է 1954 թ. «Հասկ» տարեգրքում (Անթիլիաս-Լիբանան, էջ 25—33), որտեղից և արտատպվում է։ Հրատարակողը՝ Գ. Հովսեփյանի թարմուցար Ս. Սիմոնյանը հոդվածին կցել է ծանոթագրություններ և բացատրություն։ Վերջինս տալիս ենք ստորև։

«Երան. Հայրապետի դասախոսական այս գրությունը հավանորեն պատրաստված է 1915-ին առաջ, դասելով գիրքն, թուլթի տեսակին և ներկայացված նյութերու ու փաստերու համեմատաբար սահմանափակ քանակին (վասն զի Երան. Հայրապետը 1915-ին նոք ատիճ ու ժամանակ ունեցավ հայ արվեստի, հատկապես հայ մանրանկարչության մասին ավելի շատ նյութեր ուսումնասիրելու)։

Թժբախտաբար այս գրությունը ևս կմնա թերի. Երան. Հայրապետը չարունակության մեջ պետք է որ գրեր հայ մանրանկարչության հաջորդ երկու մեծ շրջաններուն մասին. Կերևի իբրև իրեն շատ ծանոթ շրջանները՝ անոնց մասին ինքզինք ի վիճակի գտած է բեթրանացի, առանց գրավոր նյութերու-արտահայտվելու։

1. Երան. Հայրապետը իր դասախոսական այս անավարտ գրության վերջավորության, մատիտով գրած է հետևյալները, իբրև մասնակի առաջին շարունակությունը կամ ծրագիրը իր նյութին։

Հայ արվեստի ազդեցությունը դեպի արևմուտք՝ Փոքր Ասիա, Եգիպտոս, Հարավային Ռուսաստան։

Սելջուկյան արվեստն ազդված հայկականից։

Արևելյան Հայաստանից որմնանկարներ, ասեղնագործություն, ոսկերչություն, ձեռագրերի կազմեր, լաքի կտորներ, փայտի քանդակագործություն։

2. Երան. Հայրապետի այս գրության վերնագիրը չի գտնվիր Իր ձեռագիրի առաջին էջի. ճակատին, այլ՝ կռնակին այն պահարանի, ուր գրած է Ինքը այս գրության թուղթերը *(12 թուղթ կամ 23 էջ, վերջին թուղթի կռնակի էջը չէ գրված)*։ Արդ, հիշյալ պահարանի վրա այսպես գրված է վերնագիրը.

Ա

Հայ արվեստը

Ծագումն ու ոսկեդարը

Ե—է, Ը—ԺԱ դար

Ապա ավելցուցած է նույն պահարանի կռնակին. «Ծրագիրը մեջը, իմ հոդվածը Ստրյիգովսկու հայ ճարտարապետության գրքի մասին»։

Թժբախտաբար պահարանին մեջ չկար այդ ծրագիրը։ Իսկ Իր հոդվածը Ստրյիգովսկիի հիշյալ գործի մասին տպված է Բանբերի մեջ *(1921—2, էջ 282—294)*։

3. Երան. Հայրապետը Իր այս գրության լուսանցքներուն վրա, մատիտով հաճախ նշանակած է «պատկեր» կամ «պատկերներ». դժբախտաբար չկրցինք պատկերներ հրատարակել Իր այս գրության հետ։

4. Երան. Հայրապետի այս գրությունը արժեքավոր վկայություն մըն է հայ արվեստի ծագման ու ծաղկման հարցերուն նկատմամբ։

Երան. Հայրապետը արտասահմանի մեջ (1934—1950) բազմաթիվ անգամներ դասախոսական արտահայտություններ ունեցած է նույն նյութերու շուրջ։ Իր գիտական արխիվին մեջ գտանք Թրեզնոյի Մշակ թերթի կենտրոնը (1935, օգոստոսի 9, ուրբաթ), ուր տպված է Երան. Հայրապետի տված մեկ դասախոսության ամփոփումը, որ առնված է Թրանսիայի 204 ամսագիրեն։ Այդ դասախոսությունը տրված է Փարիզի Փըթի ժուռնալի սրահին մեջ և խորագիրը կամ նյութը եղած է՝ «Հայ արվեստի ծագումն ու զարգացումը»։

Երան. Հայրապետը իր գիտական արխիվին մեջ բոլորովին անգործ վիճակով ունի ուրիշ գրություն մը, որուն վերնագիրն է. «Անդրվազիծ հայ արվեստի պատմության»։

Հայ-արաբական բժշկական և մշակութային հարաբերության խնդիրները
(էջ 323)

Տպագրվել է 1957 թ. «Հասկ» տարեգրքում. Դ տարի (Անթիլիաս-Լիբանան, էջ 3—20), որտեղից և արտատպվում է։

Ս. Սիմոնյանը անգործ համալրել է ծանոթագրություններով։

Հավելված Ա. Գագիկ Կարսեցու բնտանեկան պատկերը

Տպագրվել է 1957 թ. «Հասկ» տարեգրքում (Անթիլիաս-Լիբանան, էջ 22—24), որից և արտատպվում է։ Հոդվածի անգործը պահպանվել է 1911 թ. Դ. Հովսեփյանի երտաղում կատարած ճանապարհորդության հուշագրքույկում, որից և հրատարակության է պատրաստել Ս. Սիմոնյանը։

Հավելված Բ. չորս բժիշկների նկարը

Տպագրվել է 1957 թ. «Հասկ» տարեգրքում (Անթիլիաս-Լիբանան, էջ 24—25), որտեղից և արտատպվում է։ Նկարը պահպանվել է Դ. Հովսեփյանի 1911 թ. երտաղում կատարած ճանապարհորդության հուշագրքույկում, որտեղից և հրատարակության է պատրաստել Ս. Սիմոնյանը։

Հայերեն արձանագրության խճանկար Երուսաղեմի Ձյութսիում
(էջ 340)

Հոդվածը հրապարակվել է „Zeitschrift Deutschen Palaestina-Vereins", Band XVIII Leipzig, 1895, որտեղից և արտատպում ենք։ Գերմաներենից թարգմանել է Լ. Տեր-Մինասյանը։

Հոդվածը գրված է 1895 թ. գարնանը, Հալլեում։

1. H. Guthe, Mosaiken mit armenischer Inchrift auf dem Ölberge. „Mittellungen und Nachrichten des Deutschen Palästina-Vereins", Leipzig, 1895, s. 51—53. *(Ծան. կազմողի)։*

2. Նոր գտնված հայկական հնություններ Երուսաղեմում։ «Նոր դար», Թիֆլիս, 1894, 11 օգոստոսի։ Մինչև այդ, նույն բովանդակությամբ, մեկ այլ հոդված էր հրապարակվել Հալիսի 23-ի համարում, «Հայկական հնություններ ի Ս. Երուսաղեմ» վերնագրով (Ծան.—կազմողի)։

3. Dr. R. Riess, Reste eines alten armenischen Klosters auf dem ölberg und die dieselbot aufgefundene Inschriften.—„Zeifschrift des Deutschen Palaestina-Vereins", elben VIII, Leipzig, 1885, s. 155—161. *(Ծան.—կազմողի)։*

4. Հոդվածը գրելու ժամանակ տարածված էր այն կարծիքը, որ իրականում V դ. պատմիչ Մովսես Խորենացին իբր ապրել է VII դ. (Ծան.—կազմողի)։

Ագաթանգեղայ պատմութիւն Հայոց, էջմիածին—Տփղիս, 1909։

Ադոնց Ն., *Հ. Ն. Ակինեանի պատասխանին պատասխան, «Սիոն», Բիւրօթ, 1938, Նոյեմբեր, էջ 330—337։*

Ալիշան Ղ., *Այարարատ բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ, 1890։*

Ալիշան Ղ., *Հայապատում, Վենետիկ, 1901։*

Ալիշան Ղ., *Շիրակ, տեղագրութիւն պատկերացոյց, Վենետիկ, 1881։*

Ալիշան Ղ., *Սիսական, տեղագրութիւն Սիսնեաց աշխարհի, Վենետիկ, 1893։*

Ալիշան Ղ., *Սիսուան, Վենետիկ, 1885։*

Ակինեան Ներսես, *Սկզվոյի ավետարանը 1197 թվականեն Լվովի Հայ արքեպիսկոպոսարանի գրադարանին մեջ, Վիեննա, 1930։*

Ակնարկ մը Հայ հնագրության վրա, Վիեննա, 1898։

Անընդհատ շարունակություն Առաքելական հաջողության Ուղղափառ ս. Եկեղեցւոյ Հայաստանյաց, «Արարատ», *1868, Նոյեմբեր, էջ 102։*

Ասողիկ, *Տիեզերական պատմութիւն Ստեփանոս վարդապետի Տարօնեցւոյ, Փարիզ, 1859։*

Ասողիկ, *Ստեփանոս Տարօնեցւոյ Ասողկան պատմութիւն Տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885։*

Աստուածատուրյան Ս., *Պատկերացոյց հավաքածոյ մասնաւոր հնութեանց Մայր Աթոռոյ ս. էջմիածնի և շրջակայից, պրակ Ա, Վաղարշապատ, 1910, պրակ Բ, Սբուսաղեմ, 1913։*

Ավետիքյան Գաբրիել, *Բացատրութիւն շարակնոց, Վենետիկ, 1814։*

Աբիստակես Լաստիվերացի, *Պատմութիւն Արիստակեսայ վարդ. Լաստիվերտցւոյ, Վենետիկ, 1844։ Նույնը՝ Թիֆլիս, 1912։*

Աւետարան ըստ Յարգմանութեան Նախնեաց մերոց։ Աշխատասիրութեամբ Գ. Խալաթեանցի, Մոսկվա, 1899։

Բարխուդարյան Մակար, *Աղվանից երկիր և դրացիք, Թիֆլիս, 1893։*

Բարխուդարյան Մակար, *Արցախ, Բաբու, 1895։*

Գաբրիյան Հովսեփ, *Տիեզերական պատմութիւն ի սկզբանէ աշխարհի մինչև ցմեր ժամանակս, հատոր Ա—Բ, Վիեննա, 1840—1852։*

Գառագաշյան Ա., *Քննական պատմութիւն Հայոց ըստ նորագույն պատմական, լեզվաբանական ու բանասիրական տեղեկութեանց, մաս 1—2—3—4, Կ. Պոլիս, 1880, Թիֆլիս, 1895։*

Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901։

Գրիգոր Մագիստրոսի թղթերը, ինագիրն առաջաբանով ու ծանոթագրութիւններով առաջին անգամ ի լույս ընծայեց Կ. Կոստանյանց, Ալեքսանդրապոլ, 1910։

Գույումյան Թորգոմ, *Յուցակ հայերեն ձեռագրաց ս. Նշանի վանուց ի Սեբաստիա, «Հանդես ամսօրյա», 1924, Վիեննա, մայիս—հունիս, էջ 245—249։*

Դավրիժեցի Առաքել, *Գիրք պատմութեանց շարադրեալ վարդապետին Առաքելոյ Դաւրիժեցւոյ, Ամստերդամ, 1669։*

Խավրիժեցի Առաքել, Պատմութիւն Առաքելոյ վարդապետի Դաւրիժեցւոյ, Վաղարշապատ, 1896։
Խարաճաղցի Երիզոր, Ժամանակագրութիւն.... Սրուսաղէմ, 1915։
Երասխաձորեցի Հ., Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտացւոյ պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912։
Երզնկյան Թոստոմ, Հնախոսական տեղեկագրութիւն Հաղբատայ աշխարհահռչակ վանից ս. Նշանի, Վաղարշապատ, 1886։
Եվսեբիոս Կեսարացւոյ պատմութիւն եկեղեցւոյ, Վենետիկ, 1877։
Զարթանկարք աւետարանի Մլէի Բագուենց, Վենետիկ, 1902։
Զարպհանալյան Գարեգին, Հայկական հին դպրութիւն պատմութիւն (Դ—ԺԹ դ.), Վենետիկ, 1897։
Զաքարեայ սարկաւագի պատմութիւն, հատոր 1—3, Վաղարշապատ, 1870։
Թովմա Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց ի Թովմայ վրդ. Արծրունւոյ, Կ. Պոլիս, 1852։
Թովմա Մեծոփեցի. Թովմա Մեծոփեցւոյ հիշատակարանը, հրատ. յուր առաջաբանով Կարապետ Կոստանյանց, Թիֆլիս, 1892։
Թովմա Մեծոփեցի, Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց, Փարիզ, 1860։
Թորամանյան Թորոս, Նյութեր հայկական ճարտարապետության, Երևան, 1942։
Թորգոմյան Վահրամ, Հայ բժշկական ձեռագիրը ս. Ղազարու վանքին «Բազմավեպ», Վենետիկ, 1923, № 1, էջ 7—10, № 2, էջ 39—43, № 3, էջ 69—71, № 4, էջ 104—107, № 5, էջ 138—142, № 6, էջ 157—169, № 7, էջ 204—206, № 8, էջ 229—230, № 10, էջ 301—303, № 11, էջ 328—331 և այլն։
Թոփճյան Հակոբ, Յուցակ ձեռագրաց հաւրիկ վարդապետի Դադեան, 1878—1898, Վաղարշապատ, 1898։
Թուղթ Յովհաննու Սրուսաղեմի եպիսկոպոսի առ Աբաս Աղուանից կաթուղիկոս, «Արարատ», Վաղարշապատ, 1896, մայիս, հավելված, էջ 252—256։
Լալայան Ե., Բորչալուի գավառ։ «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1901, № 7—8, էջ 271—435։
Լալայան Եղիազ, Սևան, «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1908, գիրք 17։
Լալայան Եղիազ, Յուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի, պրակ 1, Թիֆլիս, 1915։
Կիրակոս Գանձակեցի, Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ համառօտ պատմութիւն ի սրբոյն Գրիգորէ ցատուրս իւր լուսաբանեալ, Վենետիկ, 1865։
Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Ախալեալ Կիրակոս վարդ. Գանձակեցւոյ, Թիֆլիս, 1909։
Կյուլեսերյան Բաբգեն, Կոլոտ Յովհաննէս պատրիարք, Վիեննա, 1904։
Կյուկսերյան Բաբգեն, Յուցակ ձեռագրաց Ղալաթիո ազգային Մատենադարանի հայոց, Անթիլիաս—Լիբանան, 1961։
Կյումուշխանեցի Մանվել, Պատմութիւն անցից անցելոց Մչխանայ վանուց արարեալ Մանուել վարդապետի Կիմիւշխանեցւոյ ի 1840 ամի ի Մչխան, Վաղարշապատ, 1871։
Կ[ոստանյանց] Կ., Հին հիշատակներ, «Արարատ», Վաղարշապատ, 1897, հուլիս, էջ 289—296, օգոստոս, էջ 339—343։
[Կոստանյան Կ.], Վիմական տարեգիր, Յուցակ ժողովածոյ արձանագրութեանց հայոց, Ս. Պետերբուրգ, 1913։
Կորյուն, Պատմութիւն վարուց եւ մահուան սրբոյն Մեսրոպայ վրդ. մերոյ Քարգմանչի, Վենետիկ, 1894։
Հաննա, Հովհաննես, Գիրք պատմութեան սրբոյ և մեծ քաղաքիս Աստուծոյ Սրուսաղեմիս, Կ. Պոլիս, 1807։
Հարությունյան Իսահակ, Գողա վանք կամ Նոր Գետիկ, «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1903, գիրք 10, էջ 5—37։

Հացունի Վարդան, Պատմություն հին հայ տարազին, Վենետիկ, 1923։
Հիշատակարան Հանդես ամսօրեայի քառասնամեակի, նվիրված օտարազգի հայագետներու։ Վիեննա, 1927։
Հնութիւնք վանէրիից Գողեան գաւառ։ Ընդմէջ լուսանկարիչ Մ. Փափազեանց. Վաղարշապատ, 1801, գիրք 4։
Հովհան Ոսկերեւանց, Յովհաննու Ոսկերիրանի յաւետարանադիրն Մաշտէնոց, Վենետիկ, 1826։
Հովհան Օձնեցի, Յովհաննու Իմաստասիրի Օձնեցու Մատենագրութիւնք, Վենետիկ, 1793։
Հովհաննես Երզնկացի, Տետրակ համառօտ եւ լի իմաստախոհ բանիւք, Արարեալ Հոգելից և իմաստուն վարդապետին Յովհաննի Երզնկացւոյ..., Նոր Նախիջևան, 1792։
Հովհաննիսյան Վահեդ, Հետազոտություններ նախնական ոսոկօրենի վերաբեր։ Մաս Ա, տետր 1—2, Վիեննա, 1897։
Հովսեփյան Գարեգին, Ազգագրականք և նրանց շինարարական գործը (պատմահնագիտական ուսումնասիրություն) «Բանբեր էջմիածնի գիտական ինստիտուտի», էջմիածին, 1921—1922, էջ 177—206։
Հովսեփյան Գարեգին, Անդրանիկ կոնդակի զարգանկարչության մասին։ «Հովիտ», Թիֆլիս, 1910, № 4։
Հովսեփյան Գարեգին, Գառնիի ավերակները։ «Հովիտ», 1908, № 8
Հովսեփյան Գարեգին, Գիտություն և ևկեղեցի։ «Արարատ», Վաղարշապատ, 1900, օգոստոս—սեպտեմբեր, էջ 373—378։
Հովսեփյան Գարեգին, Գրիգորիս Աղիամարցի։ «Արարատ», 1919, № Ա—ԺԲ։
Հովսեփյան Գարեգին, Գրչությիան արուեստը Հին Հայոց մեջ։ Մաս Գ, Վաղարշապատ, 1913։
Հովսեփյան Գարեգին, Դավիթ փիլիսոփա (Հարթացի)։ «Արարատ», 1916, № ԺԱ—ԺԲ։
Հովսեփյան Գարեգին, Դավիթ փիլիսոփայի բան հատուած ընդդեմ Հերձուածողաց։ «Արարատ», 1906, մարտ, հավելված, էջ 261—272, 1907, հունվար, էջ 84—93, մարտ, 274—289։
Հովսեփյան Գարեգին, Դավիթ Փիլիսոփա (Հարթացի). Ե դարու մատենագիր։ «Արարատ», 1907, հունվար, էջ 81—93, մարտ, 274—289։
Հովսեփյան Գարեգին, Դավիթ Փիլիսոփա Հարթացին և Պիտոյից գիրքը։ «Արարատ», 1908, № Բ։
Հովսեփյան Գարեգին, Թովմա Մեծոփեցու կյանքը։ Վաղարշապատ, 1914։
Հովսեփյան Գարեգին, Թուղթ Մխիթար վարդապետին, որ Գոշն կոչիւր։ «Արարատ», 1900, հավելված, հոկտեմբեր, էջ 497—504, նոյեմբեր, էջ 562—569, 1901, հունվար, էջ 55—61, փետրվար, էջ 121—127։
Հովսեփյան Գարեգին, Ժողովրդական բանահյուսության հետքերը միջնադարյան տաղարաններում։ «Արարատ», 1899, № ԺԲ։
Հովսեփյան Գարեգին, Խաղրակյանք կամ Պողոսյանք Հայոց պատմության մեջ։ Մաս I, Վաղարշապատ, 1928, մաս II, Երուսաղեմ, 1944, մաս III, Նյու Յորք, 1942—1943։ Նույնը՝ առանձին գրքով. Անթիլիաս—Լիբանան, 1969։
Հովսեփյան Գարեգին, Խոսրովիկ Թարգմանիչ և Լուկասիրությունք նորին։ Վաղարշապատ, 1903։
Հովսեփյան Գարեգին, Կոմիտաս կաթողիկոսի մի նոր արձանագրությունը։ «Արարատ», 1917, փետրվար—մարտ, էջ 193—198։
Հովսեփյան Գարեգին, Կոմիտաս վարդապետի երաժշտական ճանապարհորդությունը Եվրոպայում։ «Արարատ», 1907, հոկտեմբեր—նոյեմբեր, էջ 906—909։
Հովսեփյան Գարեգին, Հայագիտական այլք և այլք։ «Արարատ», 1914, № Ժ։
Հովսեփյան Գարեգին, Հայագիտական տեղեկություններ։ «Արարատ», 1899, մարտ—ապրիլ, էջ 151—156, մայիս, էջ 207—210, փետրվար, էջ 76—84, մայիս, էջ 267—268։

Հովսեփյան Գարեգին, Հայ եկեղեցիների զմբեթավորման խնդիրը։ «Հայաստանի կոչնակ», Նյու Յորք, 1939, 14 հոկտեմբերին։
Հովսեփյան Գարեգին, Հիշատակարանք մնռագրաց։ Հատոր Ա, Անթիլիաս—Լիբանան, 1951։
Հովսեփյան Գարեգին, Ջառազանից ժողովը։ «Շողակաթ», ժողովածու, գիրք Ա, Վաղարշապատ, 1913, էջ 22—46։
Հովսեփյան Գարեգին, Ձեռագրական նորություններ։ «Արարատ», 1917, փետրվար—մարտ, էջ 193—198։
Հովսեփյան Գարեգին, Մայր Աթոռի տպարանը։ «Արարատ», 1908, մարտ, էջ 245—254։
Հովսեփյան Գարեգին, Մատենախոսություն։ «Արարատ», 1900, դեկտեմբերը, էջ 592—596։
Հովսեփյան Գարեգին, Մատենախոսություն։ «Հովիտ», 1910, № 55։
Հովսեփյան Գարեգին, Մխիթար Այրիվանեցի, Սրուսգրիմ, 1931։
Հովսեփյան Գարեգին, Մխիթար Սասնեցի (Կերմանցի), Վաղարշապատ, 1899։
Հովսեփյան Գարեգին, Մի նոր պատմագիր։ «Հովիտ», 1910, № 35։
Հովսեփյան Գարեգին, Մկրտիչ Նաղաշի թուղթը Ցլոր Նետիոյ ժողովի առթիվ։ «Արարատ», 1916, № Ե, Զ։
Հովսեփյան Գարեգին, Յովսապ Սերաստացի։ «Արարատ», 1918, № Դ—ԺԱ։
Հովսեփյան Գարեգին, Նորագյուտ հայերեն մի կարևոր արձանագրություն Անբերդի մեջ։ «Սիոն», Երուսաղեմ, 1936, դեկտեմբեր։
Հովսեփյան Գարեգին, Նորից Գրիգորիս Աղթամարցու մասին։ «Հանդես ամսօրյա», 1930, Հունվար—փետրվար, էջ 42—60։
Հովսեփյան Գարեգին, Նոր նյութեր Թովմա Մեծոփեցու կենսագրության։ «Արարատ», 1913, № Ը—Թ, 1914, № Ա։
Հովսեփյան Գարեգին, Պատմութիւն Յովհաննու Մայրագոմեցւոյ։ «Արարատ», 1917, №Ի—ԺԲ։
Հովսեփյան Գարեգին, Ռոստով Չալ, ժողովրդական վեպ, Թիֆլիս, 1905։
Հովսեփյան Գարեգին, Սասնա Մոների հազարամյակը։ «Հայաստանյաց եկեղեցի», 1939, № X—XI
Հովսեփյան Գարեգին, Սասնա ծռեր, Սասունցի Դավիթ ժող. վեպի երկու նոր վարիանտներ։ Թիֆլիս, 1892։
Հովսեփյան Գարեգին, Ս. Հարությանի անդրանիկ կոնդակի զարդանկարչությունը։ «Արարատ», 1910, № Բ։
Հովսեփյան Գարեգին, Սամսոյ Մոների հազարամյակի կատարման առթիվ նյու Յորքում։ «Հայաստանյաց եկեղեցի», 1940, № Ե։
Հովսեփյան Գարեգին, Վախթանգ որդի Ումխայ եւ նորա տոհմը։ «Սիոն», մարտ էջ 84—90։
Հովսեփյան Գարեգին, Տարսայիճ Օրբելյանի և Մինա Խաթունի սերունդը։ Անթիլիաս—Լիբանան (1947)։
Հովսեփյան Գարեգին, Փշրանքներ ժողովրդական բանահյուսությունից։ Թիֆլիս, 1892։
Հովսեփյան Գարեգին, Քարտեզ հայ հեղգրության։ «Շողակաթ», ժողովածու, գիրք Ա, Վաղարշապատ, 1913, էջ 170—219, Ղ տախտակ։
Հովսեփյան Գարեգին, Քննություն և գրախոսություն։ «Արարատ», մարտ, էջ 329—336։
Ղազար Ջահկեցի, Գիրք Աստվածաբանական, որ կոչի Դրախտ ցանկալի։ Շարադրեալ ի Ղազար Աստվածաբան վարդապետի Ճահկեցւոյ, էջմիածին (1735)։
Ղազար Փարպեցի, Ղազար Փարպեցւոյ պատմութիւն Հայոց եւ թուղթ առ Վահան Մամիկոնեան։ Աշխ. Գ. Տեր-Մկրտչյան և Ստ. Մալխասյան, Տփխիս, 1904։
Ղևոնյան Առաե, Կանոնագիրք Հայոց, Թիֆլիս, 1913։
Ղևոնդ, Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց, Ս. Պետերբուրգ, 1887։

Մաղաքիա արեղա, *Մաղաքիա արեղայի պատմութիւն վասն ազգին Նահապետաց*, Սկր, 1870։
Մաքենոս Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն*, Վաղարշապատ, 1898։
Մաքենոս Ուռհայեցի, *Պատմութիւն Մատթէոս Ուռհայեցւոյ*, Երուսաղեմ, 1869։
Մատիկյան Հ., *Արևն ու լուսին*, «Հանդես ամսօրյա», Վիեննա, 1920, № 9, էջ 260—279։
Մխիթար Այրիվանեցի, *Մխիթարայ Այրիվանեցւոյ պատմութիւն ժամանակագրական*, Ս. Պետերբուրգ, 1867։
Մխիթար Հոյ, *Բառաստանագիրք Հայոց*, Վաղարշապատ, 1880։
Մխիթարյան Ստեփանոս, *Մատենագրութիւն հոյակապոյ մեծի ուխտին Այրիվանից սրբոյն Գեղարդայ*, Վաղարշապատ, 1873։
Մովսես Խորենացի, *Սրբոյն Հռոմ մերոյ Մովսէսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց*, Տփխիս, 1913։
Մովսես Կաղանկատուացի, *Մովսէսի Կաղանկատուացւոյ պատմութիւն Աղուանից աշխարհի*, Փարիզ, 1860։
Յովհաննու Իմաստասէրի աւանդեցւոյ մատենագրութիւնք, Վիեննէի, 1833։
Յովհաննիսիկ վարդապետ, *Պատմութիւն ազգին Հոմբրինեանց, թէ որպէս տիրեցին Կիլիկիոյ, «Ամսուել քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրոց» գրքի Հավելվածը*, Վաղարշապատ, 1893, էջ 204—212։
Ներսես Լամբրոնացի, *Տես. Ներսես Լամբրոնացւոյ Տարօնէն եպիսկոպոսին առաքելական աստուածաբանութիւն եւ թուղթ եւ ճառք*, Վիեննէի, 1865։
Ներսես Շնորհալի, *Թուղթ ընդհանրական, զարմանալ երից երանելի սուրբ Հայրապետին մերոյ տեառն Ներսիսի Շնորհալւոյ*, Էջմիածին, 1865։
Շահազիզ Սրվանդ, *Հին Երևան*, Երևան, 1951։
Շահազիզ Սրվանդ, *Պատմական պատկերներ*, Թիֆլիս, 1903։
Շահխաթունեանց Հ., *Ստորագրութիւն կամուղիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, Գաւառ Ա, էջմիածին*, 1842։
Շարաթան ... *էջմիածին*, 1861։
Շողակաթ, *Հայագիտական ժողովածու, Ա գիրք*, Վաղարշապատ, 1913։
Ջամչյան Մ., *Պատմութիւն Հայոց*, Վիեննէի, Հատոր 1, 1784, Հատոր 2, 1875, Հատոր 3, 1829։
Ղազիկյան Ա., *Նաղաշ Հովնաթան աշուղը և Հովնաթան Հովնաթանեան Նկարիչը*, Փարիզ, 1910։
Պատասխան ի Հայոց Լրիոյն Ադուանից Վրթանէսի Քերդողի, «Արարատ», 1896, Հոկտեմբեր, էջ 474—488։
Պատմութիւն վարուց Ներսիսի եպիսկոպոսին երգոցս սաղմոսիս քննութիւն, «Արարատ», Վաղարշապատ, 1878, Հունվար, էջ 89—100։
Չալալյանց Ս., *Ճանապարհորդութիւն ի Մեծ Հայաստան, մասն Ա—Բ*, Տփխիս, 1842—1858։
Սամվել Անեցի, *Սամուելի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց*, Վաղարշապատ, 1893։
Վարգիսյան Բարսեղ, *Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարյանց ի Վենետիկ*, Հատոր Ա, 1914, Հատոր Բ, 1924։
Վարգսյան Ներսես, *Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս*, Վիեննէի, 1864։
Վեբերս, *Պատմութիւն Սեբեոսի եպիսկոպոսի ի Հերակլն*, կ. Պոլիս, 1851, Ս. Պետերբուրգ, 1879։
Ս. ե. խ., *Երուսաղեմի ամենաբանը՝ «Արարատ»*, 1901, փետրվար, էջ 33—35։
Սիմեոն Երևանցի, *Ջամբռ, էջմիածին*, 1873։
Սիսիլյան Կղեմես, *Դասավորելյուն Ռուբինյան դրամոց*, Վիեննա, 1892։
Սմբատ Սպարապետ, *Սմբատայ Սպարապետի եղբօր Հեթմոյ առաջնոյ Աբգայի Հայոց*, Պատ-

մութիւն յումաց Կոստանդնուպոլիս եւ Հայոց մեծաց ըստ կարգի ժամանակաց, Մոսկվա, 1856։

Սմբատյան Մեսրոպ, Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի, որ այժմ Նոր Բայազետ գաւառ, Վաղարշապատ, 1895։

Սյուրմեյան Առտավազդ, Կիլիկյան գրչագրերը Երուսաղեմի մէջ, «Հայաստանեայց Եկեղեցի», Նյու Յորք, 1942, օգոստոս, էջ 346—349, սեպտեմբեր, էջ 374—379։

Սյուրմեյան Առտավազդ, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Հալէպի և Անթիլիասի ու մասնավորաց, հատոր Ա—Բ, Հալեպ, 1936։

Սյուրմեյան Առտավազդ, Ցուցակ հայերէն ձեռագրաց Հալէպի ս. Քառասուն մանկունք եկեղեցւոյ և մասնաւորաց, Երուսաղէմ, 1935։

Սառժիգովսկի Ի., Էջմիածնի ավետարանը, Վիեննա, 1891։

[Սառժիգովսկի Ի.], Էջմիածնի ավետարանը, «Հանդես ամսօրյա», Վիեննա, 1891, № 7, էջ 204—210, 1892, № 7, էջ 198—204, № 8, էջ 236—240։

Սրվանձտյանց Գաբրիէլ, Քորոս աղբար Հայաստանի ճանապարհորդ երկու մասով, Կ. Պոլիս, 1879—1884։

Ստեփաննոս Սերբիչյան, Պատմութիւն նահանգին Սիւնեաց արարեալ Ստեփաննոսի Օրբելեան, արքեպիսկոպոսի Սիւնեաց, Փարիզ, Հ. Ա, Բ, 1850։ Նույնը՝ Թիֆլիս, 1910։

Սուրյան Աբսեն, Պատմութիւն հայ բժշկութեան, «Բազմավէպ», Վենետիկ, 1881, հատոր ԼԹ։

Վարդան Բաբերաբերդցի, Մեծին Վարդանայ Բաբերաբերդցւոյ պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861։

Վարդան վարդապետ, Հաւաքումն պատմութեանն Վարդանայ վարդապետի լուսաբանեալ, Վենետիկ, 1862։

Վրթանես Քերթող, Յաղագս պատկերամարտից, «Սիոն», Բեյրութ, 1927։

Վրթանես Քերթող, Պատասխան ի հայոց թղթոյն ազուանից Վրթանէսի Քերթողի, «Արարատ», 1896, № 10, էջ 477—488։

Տաշյան Հակոբոս, Ակնարկ մը հայ հնագրութեան վրա, Վիեննա, 1898։

Տաշյան Հակոբոս, Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանի Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895։

Տեր-Ավետիսյան Սմբատ, Ցուցակ հայերէն ձեռագրաց նոր Ջուղայի ամենափրկիչ վանքի, հատոր Ա, Վիեննա, 1970։

Տեր-Մովսիսյան Մեսրոպ, Գագիկ Բագաւորի ավետարանը, «Արարատ», Վաղարշապատ, 1910, № 4, էջ 332—340։

Տեր-Մովսիսյան Մեսրոպ, Կեռան Բագուհու ավետարանը, «Անահիտ», Փարիզ, 1907, № 10—12, էջ 200—204։

Տեր-Մովսիսյան Մեսրոպ, Հայկական մանրանկարներ (Լեոն Գ Բագաւորի, Կեռան և Մարիոն Բագուհիների և Լամբրոնյան Վասակ իշխանի մանրանկարները), «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1910, գիրք XX, էջ 5—32։

Տեր-Մովսիսյան Մեսրոպ, Հայկական մանրանկարներ (Կիլիկյան հայոց Բագաւորների և Կոստանդին Ա կաթողիկոսի համար գրված ձեռագրերը), «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1913, գիրք XXIV, էջ 61—82։

Փավստոս Բուզանդ, Փաւստոսի Բուզանդացւոյ պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883։

Փիրղալեմյան Վանոյ, Նոտարք հայոց, Կ. Պոլիս [1888]։

Քարամյանց Նիկողոս, Ցուցակ Պոլսի արքայական մատենադարանի հայ ձեռագրաց, Վենետիկ (ա. թ.)։

Չյուրդյան Հ., Իգնատիոս մանրանկարիչ, «Անահիտ», Փարիզ, 1939, № 3, էջ 432—444։

Օրմանյան Մաղաքիա, Ազգապատում, Կ. Պոլիս, 1913։

Ներաիյան Հ. Ս., Հին բժշկարան կամ բժշկարան Գագիկ Հեթումյան, «Բազմավեպ», Վենետիկ, 1938, № 1—3, էջ 6—12։

Байе Ш., Византийское искусство. СПб., 1888.

Буслаев Ф. И., Сочинения. Т. I, СПб., 1909.

Кондаков Н. П., Иконография Богоматери. Т. I, СПб., 1914, т. II, Петроград, 1915.

Кондаков Н. П., Историческое сложение итало-греческой иконописи и собрание Богоматери. 1911.

Кондаков Н. П., История византийского искусства и иконографии по миниатюрам греческих рукописей Н. Кондакова. Одесса, 1976.

Кондаков Н. П., Миниатюры греческой рукописи псалтыря IX века из собрания А. И. Хлудова. М., 1878.

Кондаков Н. П., Русские древности в памятниках искусств. СПб., 1891.

Кондаков Н. П., Указатель отделения средних веков и эпохи Возрождения (Императорского Эрмитажа). СПб., 1891.

Курничников К., Иконография сошествия Святого духа. «Древности московского археологического общества», т. XV, вып. I.

Линч Х. Ф. Б., Армения. Т. 1, 2, Тифлис, 1910.

Марр Н. Я., Аркаун, монгольское название христиан, в связи с вопросом об армяно-халкедонитах. СПб., 1905.

Марр Н. Я., Новые материалы по армянской эпиграфике. СПб., 1893.

Марр Н. Я., О раскопках и работах в Ани, летом 1906 г. СПб., 1907.

Марр Н., Разные известия и заметки. «Христианский Восток», 1912, СПб., I, кн. III, стр. 348—353.

Марр Н. Я., Реестр предметов древностей из VI-й (1907) археологической компании в Ани. «Анийская серия», СПб., 1908, № 2.

Меликсет-Бек Л. М., О междоусобице в Тифлисе в 1197 г. по поводу Кривой пасхи. «Известия Кавказского Историко-Археологического Института. Тифлис, 1925, т. III, стр. 49—60.

Овсепян Г., Потомство Тарсанча Орбеляна и Мина-Хатуны. «Христианский Восток», т. II, СПб., 1914.

Оганесян Л., История медицины в Армении с древнейших времен до наших дней. ч. I—V, Ереван, 1946—47.

Орбели И. А., Бытовые рельефы на хаченских крестных камнях XII—XIII вв. СПб., 1915.

Орбели И. А., Фрагмент крестного камня с арабской надписью в Тифлисе. «Христианский Восток», СПб., 1918, т. VI, вып. II.

Орбели И. А., Тревер К. В., Сасанидский металл. М.—Л., 1935.

Покровский Н., Очерки памятников христианского искусства и иконографии преимущественно византийских и русских. СПб., 1910.

Поездка в Пшавию, Хевсуретию и Сванетию графини Уваровой. «Материалы по археологии Кавказа», М., 1904, вып. X.

Ренан Э., Жизнь Иисуса. СПб., 1911.

Смирнов Я. И., Восточное серебро. Атлас древней серебряной и золотой посуды восточного происхождения, найденной преимущественно в пределах Российской империи. СПб., 1909.

Х. В., Ж. «Христианский Восток», СПб.

Христианские памятники. Экскурсия Е. Токиашвили. 1902 г. «Материалы по археологии Кавказа» М., 1909, вып. XII.

Altas zum Katalog der armenischen handsdhriften. I. Armenische palaeographie-Erläuterungen zu den Schriftproben aus den armenischen Handschriften der Königlchen Universitätsbliothek in Tübingen. V. Franz Nikolaus Fink. 2. Kleinarmenische Miniaturenmalerei. Die Miniaturen der Tübingen Evangeliars Ma XIII, 1 von l. 1113 bezw. 893. N. Chr. von Josef Strzygowski; Tübingen, 1907.

Bachmann W., Kirchen un l Moscheen in Armenien und Kurdistan. Leipzig, 1913.

Baltrusaitis J., Etudes sur l'art médival en Géorgie et en Armenie. Paris, 1929.

Baroness Ravensdalle, Old and new in Parsia. „The National Geographie Magazine", 1935. sept.

Beissel, Geschichte der Evangelienbücher Freiburg 1 B, 1905.

Gayet A., L'Art persian. Paris, 1895.

Grundriss der Iranischen Philologie. Unter Mitwirkung von Hl Bartholomae. Strasburg, B I, 1895—1901, b. II, 1896—1904.

H. Guthe, Mosaiken mit armenischer Inchrift auf dem Ölberge —"Mittellungen und Nachrichten des Deutschen Palästina-Vereins", Leipzig, 1895

Der-Nersisian S, Manuscrits Arméniens: Illustrés, Paris, 1936.

Die frühchristlichen Darstellungen der Krenzig un Christi. Leipzig, 1904.

Gelzer H., Die Genesis der Byzantischen Themen verfassung. Leipzig, 1899.

Die Ch., Manuel d'art Byzautin, Paris, 1910.

Hefele. Carl Joseph, Conciliengeschichte. Freiburg, bb. 1—1X, 1877—1890.

Harnack A., Kritik des Neues Testaments von einigen griechischen Philosophen des 3. Jahrhunderts. Leipzig, 1911., IV. Texte und Untersuchungen zur Geschich , te der altchristichen Literatur.

Horn P., Neupersische Philologie-Grundriss der iranichen Philologie.

Hübschmann, Armenische Grammatik. Strasburg, 1895.

Karamianz N., Die Handschriften-Verzeichnisse der Königlichen Bibliothek zu Berlin. Zehnter Band. Verzeichniss der Armenischen Handschriften. Berlin, 1888.

Kaufmann Carl Maria., Handbuch der christlichen Archäologie F. Schoningh, 1905.

Kraus F., X., Geschichte der christliche Kunst. B, I—II, Freiburg in Dresden, 1896 1908.

Macler F., Abdullah S., Etudes sur la miniature arménienne. Paris, 1909.

Macler F., Miniatures arméniennes vies du Christ peintures ornamentales (X^e au XVII siècle). Paris, 1913.

Müller U., Kirchengeschichte. Bb. 1—3, /s.l./, /s.d./ /1892/. Patrologiae Curaus. Completus, aeu Bibliotheca universalis, integra, uniformis, comoda ueconomoca, omniumsa, patrum doctorum scriptorumque seclesiasticorum, sive latinorum, sive concilii Tridentini (anno 1515) pro latinis grecorum, quiab sevo apor-tolikoad tempora.

Pope A. U., A survey of Persian Art. London and New York, 1938.

Reil, Kreuzigung Christi., Leipzig, 1904.

Riess R., Reste eines alten armenischen Klosters auf dem Ölberg und die diesebelben auf gefundene Inschriften.—„Zeifschrift des Deutschen Palästina-Vereins" band VIII, Leipzig, 1885.

Sarre F., Die Kunst des alten Persiens. Berlin, 1922.
Sarre F. und Herzfeld E., Archäologische Reise in Euphrat und Tigris-Gebiet.
Spiegel Fr., Eranische Alterthumskunde. Bb. 1—3, Leipzig, 1871—1878.
Strzygowski J., Altai-Iran und Völkerwanderung Ziergeschichtliche Untersuchungen über der Eintritt der Wander-und Nordvölker in die Treibhäuser geistigen Lebens Leipzig, 1917.
Strzygowski J., Das Edschmiatsin-Evangeliar, Beiträge zur Geschichte der armenischen, Ravennatischen und Syro-Ägyptischen kunst. Wien, 1891.
Strzygowski J., Die Baukunst der Armenier und Europa. Unter benützung von Aufnahmen des Architekten Thoros Thoramanian. Mitarbeiter: Assistent Dr Heinrich Glück und Leon Lissitzian. Wien, B. I, 1913, b. II., 1918.
Strzygowski J., Hellenistische und koptische Kunst in Alexandria. „Bulletin de la sosièzè Archèologique d'Alexandrie", Wienne, 1902, № 5.
Strzygowski J., Kleinarmenische Miniaturenmalerei. Die Miniaturen des Tübingen Evangeliars MA XIII, vom, Jahre 1113, Berw 893 n., Chr. Tübingen, 1907.
Strzygowski J., L'ancien Art chrètien de Syrie. Paris, 1936.
Strzygowski J., Die Koptische Kunst. Leipzig, 1904.
Strzygowski J., Origin of Christian Church Art. Oxford, 1923.
Systematisch alphabetischer Hauptkatalog der Königl. Universitätsbibliothek zu Tübingen XIII. Verzeichnis der armenischen Handschriften. Tübingen, 1907.
Winekler H., Das alte Westasien. Leipzig, 1901.
Tchobanian A., La Rozeraie d'Arménie. T. I, II, III, Paris, 1918—1929.
Tschubinaschwili G., Untersuchungen zur Geschichte der Baukunst. Band I, Heft 1— Die kleine Kirche des heiligen Kreuzes von Mzchetha. Tiflis. 1921.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հավուց Թառի ամենափրկիչը և նուշնանուն հուշարձանները հայ արվեստի մեջ . . 5
Մի ձեռագիր ավետարան 108
Դարձյալ Իգնատիոս Հոռոմոսցի մանրանկարչի մասին 116
Պաղավանքը և զմբեթավորումը նախնական հայ տաճարների 122
Դերեզմանական հին կոթողները և նրանց հնագիտական արժեքը հայ արվեստի պատմության համար 153
Մի էջ նիգանի գեղարվեստական պատմությունից 190
Մի կարևոր ձեռագիր Նյու Յորքի Հանրային մատենադարանում 209
Գրառում Մատենադարանի տպավորությունների մասյանում 213
Մոմիկ «սարկավագ» (գրիչ, նկարիչ և արձանագործ) 220
Նկարիչ Սարգիս Խաչատրյան 224
Թէոդորոս գրիչ և նկարիչ 228
Կաթողիկոսարանի ցուցահանդեսը 233
Համառոտ դիտողություն հայ մանրանկարչության նվիրված մեր աշխատանքի մասին . 238
Հեբոնի Ա-ի նկարազարդ ավետարանի մնացորդները 247
Մանր արվեստի օրինակներ Երուսաղեմի վանքից 252
Բարձրաբերդի ավետարանի ոսկերչական կազմը 261
«Հիշատակարան Զեռագրաց» գրքի առաջաբանը 266
Էջմիածնի տաճարի նկարազարդումն ու ծաղկազարդումը ԺԷ—ԺԸ դարերում . . 272
Հայ արվեստի ծագումն ու ոսկեդարը 313
Հայ-արաբական բժշկական և մշակութային հարաբերության խնդիրները . . . 323
Հայերեն արձանագրության խճանկար Երուսաղեմի Հյուսիսում 340
Ծանոթագրություններ 343
Գ. Հովսեփյանի օգտագործած գրականության ցանկ 355

ՎԵՐԱՏՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ



1. Հավուց Թառ Աստվածատուր կաթողիկոսի անավարտ շենքը, XIII դ.



2. Խաչքար Հավուց Թառի արևելյան պատի մեջ, XI դ.։

3. Խաչքար՝ Հաղպատ Բառ՝ 1081 թ.։



4. Հավուց Թառի բլրի եկեղեցին արևելքից



5. Հավուց Թառի բլրի հկհղեցին արևմուտքից։



6. Հավուց Թառի բլրի եկեղեցու արևելյան ճակատի արձանագրություններ։

8. Հավուց Թառի պարսպից դուրս գտնվող արևելյան մատուռի հյուսիսային պատի արձանագրությունը։



7. Հավուց Թառի ժամատան խոյակներից։



9. Հավուց Թառի բլրի եկեղեցու արևմտյան պատի առաջ կանգնեցված Սարգիս բահանայի խաչքարի արձանագրությունը, 1211թ.։

Նկ. Խաչ-Լուսյուս՝ Հայոց Տաթև առաջապրկված, ԺԱ դ.
Էջմիածնի Մայր տաճարի թանգարան։



11. Բրոնզե բուրվառներ։ Անի, XI—XII դդ.։



12. Համայց Թառի խաչք, XVI դ.



14. Խաչքար։ Կարմրաշեն, 1291 թ.։



13. Խաչքար։ Հերհեր գյուղ, 1291 թ.։

16. Խաչքար։ Սևան, XVI—XVII դդ.։



15. Խաչքարեր Ցախաց քարի ու Կարապետ Եկեղեցու մոտ, XI դ.



17. Խաչելություն։ Ավետարան։ Տարոն (?), 1038 թ. Երևան, Մատենադարան. ձեռ. № 6201, թերթ 7բ։

18. Ֆրանսիա. Պրովանսի Էքս-էն-Պրովանս քաղաքի Սուրբ Սաթուրնինի տաճարի արևմտյան դռնափեղկ. 14 դ.



20. Խաչելություն։ Մադիոզ Ավետիք։
Ավետարան, XIII դ.
Երևան, Մատենադարան, ձեռ. № 7644

19. Խաչելություն։ Ավետարան, 1057 թ.
Երևան, Մատենադարան, ձեռ. № 3784, թերթ 9ր



21. *Խաչելություն։ Նկարիչ Թորոս Հոսլին։*
Կեռան թագուհու ավետարանը, 1272 թ.
Երուսաղեմ, ար. Հակոբյանց վանքի մատենադարան, ձեռ. № 2563/8։



22. Խաչքար «Ամենափրկիչ»։ Հաղբատ 1273 թ.։



24. «Սահի խաչ»։ Աշտարակ, 1286 թ.։

23. Խաչքար «Ամենափրկիչ»։
Ջինգյոլ, 1279 թ.



26. Մուտք Երուսաղեմ։ Նկարիչներ Իգնատիոս և Աբրահամ։
Ավետարան, 1237 թ.
Չիկագո, Համալսարանի մատենադարան, ձեռ. № 949, թերթ 5ա։



25. Մնուման Նկարիչներ Իգնատիոս և Աբրաամ
Ավետարան, 1237 թ.
Ձիկագո, Համալսարանի մատենադարան, ձեռ. № 949, թերթ 2ա



27. Խորան։ Նկարիչներ Իղնատիոս և Աբրահամ։
Ավետարան, 1237 թ.
Չիկագո, Համալսարանի մատենադարան, ձեռ. № 949, թերթ 13ա։



28. Մաթևոս ավետարանիչ։ Նկարիչներ Իզնատիոս և Արբաս։
Ավետարան, 1237 թ.
Ջիլգեր, Համալսարանի մատենադարան, ձեռ. № 949, թերթ 1բ։

30. Մարկոս ավետարանիչ։ Նկարիչներ Իգնատիոս և Աբրահամ։ Ամենափրկչի վանք, 1237 թ.։
Չիկագո, Համալսարանի մատենադարան, ձեռ. № 949, թերթ 84բ։

29. Պատանի՝ Մաթևոս ավետարանիչի մանրանկարի վերին մասը։ Նկարիչներ Թդնատիոս և Աբրաս։ Ավետարան, 1237 թ. Չիկագո, Համալսարանի մատենադարան, ձեռ. № 949, թերթ 16բ։



31. Ղուկաս ավետարանիչ։ Նկարիչներ Իգնատիոս և Աբբաս։ Ավետարան, 1237 թ.։
Չիկագո, Համալսարանի մատենադարան, ձեռ. № 949, թերթ 139բ։



32. Հնդկաց լուսանցազարդ Զուգաբեր նկարիչներ Իգնատիոս և Աբրահամ Ամիտպան, 1237 թ.
Չիկագո, Համալսարանի մատենադարան, ձեռ. № 949, թերթ 179 ա։



33. Հովհաննես ավետարանիչ։ Նկարիչներ Իգնատիոս և Աբրաամ։
Ավետարան, 1237 թ.։ Չիկագո, Համալսարանի մատենադարան, ձեռ. № 949, թերթ 23բ։



34. Զաքարեան Հարութիւնը։ Նկարիչ Իշխանիշոյ Ավետարան, 1236 թ.։ Նոր Ջուղա, Ամենափրկիչ վանքի մատենադարան, ձեռ. № 36, թերթ 2ա։



35. Հիշատակարան Իրմաստիա նկարիչի։ Ավետարան, XIII դ. Կալիֆոռնիա, վ. Միմոնյանի հավաքածու։



36. Պտղնի։ Տաճարի արևելյան կողմը, VI դ.



37. Պադնի, VI դ.



38. Պտղնիի Տաճարի հյուսիսային կողմը, VI դ.



39. Արուճի տա. Գիքորը տաճարը հարավ-արևելքից, VII դ.



40. Հռիփսիմէի տաճարը, 618 թ.



41. Բարձրաքանդակ Աղցի Արշակունիների դամբարանից, 364 թ.



42. Մոփքի բազիլիկան, VI դ.



43. Աղթամար։ Սբ. Խաչ եկեղեցու արևմտյան կողմը, X դ.

44. Խոյակ Տոփր, VI դ.



15. Գեղարդ Սբ. Աստվածածնի տաճարի Հարավային պատի բարձրաքանդակները, 1215 թ.



46. Սմբատ և Կյուրիկե թագաժառանգները։ Սանահին, X դ.



47. Մաշտոցի-կրթոց. Օձուն V դ.

48. Օձունի տաճարը արևմուտքից, V դ.

49. Ծամախի աստվածամոր հայոց-ուղղափառ եկեղեցին Վ դ.

50. Աստվածամայր Օձուն, V դ.



51. Հնդիանոսական ոգի կամ հրեշտակ։ Գևրևդմանական կոլոզ, Ագարակ գյուղ, IV—V դդ.

52. Մաշտոցի-կոթողը Աղուդի, VI դ.

ՁՅ. Խոզագլուխ մարդը համբուրում է սրբի ոտքը։ Գևեզմանական կոթող, Թալին, IV դ.



54. Եռգլուխ մարդը համբուրում է սրբի ոտքը։ Գևրևմանական կոթող, Թալին, IV դ.

56. Զպատական մահարձան։
Կաշիրի, Զպատական արվեստի թանգարան։

55. Խոզապլուխ կին։ Գևրևզմանական կոթող, IV դ.

57. Սբ. Հոգին պատկ է գնում Հիսուսի գլխին։ Գևորգմանեական կոթող, Բաշին, V դ.

58. Միանավ բազիլիկ եկեղեցի՝ Խոժոռնի, XI դ.



59. Գևրևզմանեական կոթողների բևևռները։ Խոժոռնի, V դ.

60. Գևրևմաձորական կոթողների բնկարներ։ Կազբ, V—VIդդ.

61. Խաչակի բեկոր։ Կոզբ, V—VI դդ.

62. Խոյակի բրգաձոր, V—VI դդ.



64. Գևրևդյանական կոթող։ Կողք, V—VI դդ.

63. Խոյակ։ Բրդաձոր, V—VI դդ.



65. Խաչաքանդակ։ Թալին, V—VI դդ.



66. Հովհաննես Մկրտիչ։ Գևրևզմանական կոթող։
Թալին, V—VI դդ.

67. Հրեշտակ։ Գերեզմանական կոթող։ Թալին, V—VI դդ.

68. Գևրևդմանական կոթող։ Թալին, V դ.



69. Գևրևդմանական կոթողի պատվանդան։ Թալին, V դ.



70. Աստվածամայրը գահի վրա։ Դևրևմանական կոթողի պատվանդան։ Թալին, V դ.։



71. Գերեզմանական կոթողի պատվանդան։ Թալին, V դ.



72. Գևրևզմանական կոթողի պատվանդան։ Թալին, V դ.



73. Վերհզմանական կոթողի պատվանդան։ Թալին, V դ.

74. Վերնշմանական կոթողի պատվանդան։ Թալին, V դ.



75. Յուղարեր կանայք։ Գերեզմանական կոթողի պատվանդան։ Թալին, IV—V դդ.

76. Յուզարիր կանայք։ Գերեզմանական կոթողի պատվանդան։ Թալին, V դ.

77. Դանիելը առյուծների գրկում։ Գերեզմանական կոթող։ Հառիճ, IV դ.

78. Քրիստոսը և Դանիելը առյուծների հետ կոթող Հառիճից, VII դ. Երևան, Հայաստանի պատմության պետական թանգարան։

79. Աստվածամայր՝ կրծող Հառիճից, VI դ.
Երևան, Հայաստանի պատմության պետական թանգարան։



80. Դևրևգմանական կոթող։ Ադիաման, IV—V դդ.

81. Գևղզմանական կոթող։ Ադիաման, IV—V դդ.



82. Գևրևդմանական կոթող Ադիամանի, IV—V դդ.



53. Քրիստոսի անվան փակագիրքը։ Դպրոցական հյուսվածք, V դ.



84. Աննայի և Հռափսիմի աղոթքը։ Նկարիչ Սարգիս Պիծակ։ Շարականոց։ Սիս, 1348 թ. նյու Յորք, Հանրային մատենադարան, ձեռ. № 622։

86. Ներսես Շնորհալի։ Նկարիչ Սարգիս Պիծակ։
Շարակնոց։ Սիս, 1348 թ. Նյու Յորք, Հանրային մատենադարան, ձեռ. № 622։

85. Կանոնի սկզբնազարդ։ Նկարիչ Սարգիս Պիծակ։
Շարականոց։ Սիս, 1348 թ. Նյու Յորք, Հանրային մատենադարան, ձեռ. № 622։



87. Կանոն Նավակատեաց։ Նկարիչ Սարգիս Պիծակ։
Շարակնոց։ Սիս, 1348 թ. Նյու Յորք, Հանրային մատենադարան, ձեռ. № 622։



87. Կանոն Նավակատեաց։ Նկարիչ Սարգիս Պիծակ։
Շարակնոց։ Սիս, 1348 թ. Նյու Յորք, Հանրային մատենադարան, ձեռ. № 622։



89. Ղուկաս ավետարանիչ։ Նկարիչ Սարգիս Պիծակ։



90. Աստուածամայր։ Նկարիչ Սարգիս Պիծակ։
Շարակնոց։ Նյու Յորք, Հանրային մատենադարան, ձեռ. № 1480։



91. Հովհանը ձկան որովայնում։ Նկարիչ Սարգիս Պիծակ։
Նարեկնոց։ Նյու Յորք, Հանրային մատենադարան, ձեռ. № 1480։



92. Լուսանցազարդ՝ Նկարիչ Սարգիս Պիծակ։
Շարակնոց։ Նյու Յորք, Հանրային մատենադարան, ձեռ. № 1480։



95. Թորոս Հռոմկլայեցու ինքնագիրը։

96. Մոմիկ, խաչքար, 1308 թ., Նորավանքի



97. Մոմիկ, Աստվածածին եկեղեցին։ Նորավանք, 1339 թ.



98. Ս. Գևորգ և ս. Կարապետ եկեղեցիներին կից գավթի մուտքը։ Նորավանք, XIV դ.

99. Աստվածամայրը հրեշտակների հետ։ Սրբ. Աստվածածին եկեղեցու մուտքի բարավորը։ Նորավանք, 1339 թ.



100. Քրիստոսի հայտնությունը պաթմեղում։ Նկարիչ Թևոդորոս։
Ավետարան XI դ. վերջ։
Երուսաղեմ սրբ. Հակոբյանց վանքի մատենադարան, Հձռ. № 1796։



102. Մովսես մարգարեն ընդունում է տաճարականա պատվիրանները։
Աստվածաշունչ, 1279 թ.
Երուսաղեմ, սր. Հակոբյանց վանքի մատենադարան, ձեռ. № 1925

101. Մաշեու ավետարանիչն ժառուցումը Հիսուսին։ Նկարիչ Թեոդորոս։ Ավետարան, XI դ. վերջ։
Երուսաղեմ, սբ. Հակոբյանց վանքի ժառնագրարան, ձեռ. № 1796, թերթ 288բ։

103. Նուռ Նավաւ
Աստվածաշունչ, 1269 թ.
Երուսաղեմ, սր. Հակոբյանց վանքի մատենադարան, ձեռ. № 1925։

104. Պողոս առաքյալի սկզբնագրվը։
Առավածաշունչ, 1269 թ.
Երուսաղեմ, սբ. Հակոբյանց վանքի մատենադարան, ձեռ. № 1925։



106. Մանրանկարչ Նկարիչ Թորոս Իռոպէնց
Սեբաստիայի Ամեւտարան, 1262 թ.
Բալթիմոր, Ուոլթըր արվեստի թանգարան, ձեռ. № 539, թերթ 24բ.



105. Մանրանկար։ Նվարիչ Թորոս Ռոսլին։
Ավետարան, Հռոմկլա, 1266 թ.,
Երևան, Մատենադարան, ձեռ. № 5458, թերթ 252ա։

107. Մանրանկար։ Նկարիչ՝ Թշրաս Բոսլին։
Ավետարան, 1260 թ.
Երուսաղեմ, սբ. Հակոբյանց վանքի մատենադարան, ձեռ. № 251։



108. Վասակն ու իր ընտանիքը Քրիստոսի առաջ։
Վասակ արքայիկըրար ավետարան, XIII դ.
Երուսաղեմ, սբ. Հակոբյանց վանքի մատենադարան, ձեռ. № 2568 (Կիրի 320։



110. Հովհաննես պատրիարք Բաղիշեցու շապկի ասեղնագործ օձիքը։ 1701 թ. Երուսաղեմ, սբ. Հակոբյանց վանք։



109. Հովհաննես Կոլոտ պատրիարքի խայրը։ 1735 թ.
Երուսաղեմ, սբ. Հակոբյանց վանք։



111. Սկիհի ծածկոց, 1736 Ք.
Երուսաղեմ, սբ. Հակոբյանց վանք։



112. Դուռ 1371 թ.
Երուսաղեմ, սր. Հակոբյանց վանք



114. Դուռ Գաղտիկուռ Վաբպետ
Հակոբ, 1731 թ.
Երուսաղեմ, սր. Հակոբյանց վանք



113. Գրակալ, 1582 թ.
Երուսաղեմ, սբ. Հակոբյանց վանք:

121. Մանթաանոս Վահացի, Լուսանցազարդ պատարագի խորհրդատետր, 1668—1686 թթ.
Նյու Յորք, Նախկինեում Պարսկյանի սեփ.



115. Ս. Մինաս եկեղեցու մուտքը Երուսաղեմի սր. Հակոբյանց վանքում։



116. Գլխադիրի վարագույր, 1737 թ.
Երուսաղեմ, սբ. Հակոբյանց վանք։



117. Բարձրաբերդի ավետարանի կազմը, 1254 թ. Ա. երես



118. Բարձրաբերդի ավետարանի կազմը, 1254 թ. Ը կիսա։



119. Ստեփանոս Լեհացու ինքնագիրը՝ Պատարագի խորհրդատետր, 1668—1686 թթ. Նյու Յորք, Պարսկրյանի անվ.



120. Ստեփանոս Լեհացի, Պատարագամատույցի սիրննազարդ։ Պատարագի խորհրդաւոր, 1668—1686 թթ. Նյու Յորք, Պարսկյանի տեփ.



122. Սահմանոս Լեհացի, Բարդուղիմեոս Էջմիածնի վանքի նոր վիճակում



124. Սբ. Պողոս Առաքյալ։
Էջմիածնի վանքի նոր վիճակում։



123. Ստեփանոս Լեհացի, Աստքյալ։ Էջմիածնի վանքի նոր վեհարանին։

125. Հովնաթան Հովնաթանյան, Աստվածամայրը գահի վրա։ Երևան, Հայաստանի պետական պատկերասրահ։

126. Նադաշ Հովնաթան, Աստվածամայր։ Էջմիածնի Մայր տաճարի կենտրոնական լսմի յուժի նկարազարդում։



127. Նազաշ Հովնաթան, էջմիածնի Մայր տաճարի գմբեթի նկարազարդումը։

128. Հովհաննա Հովհաննիսյան, էջմիածնի Մայր տաճարի գմբեթի թմբուկի նկարազարդումը։



129. Նադաշ Հովհաննան, Ննջումն կույսի։ Էջմիածնի վանքի վիճարան։

135. Բագարատ բժիշկը Բժշկարանիցի։ Երուսաղեմ, սբ. Հակոբյանց վանքի մատենադարան, ձեռ. № 370։

130. Տաղաշ Հովնաթան, Տրդատ, Աշխեն և նոտրովիգյան Երևան, Հայաստանի պետական պատկերասրահ։

131. Նադաշ Հովհաննես, Ս. Մինաս
Երևան, Հայաստանի պետական պատկերասրահ:



132. Թերթ բժշկարանից։
Երուսաղեմ սբ. Հակոբյանց վանքի մատենադարան, ձեռ. № 370։



133. Թերթ բժշկարանից։
Երուսաղեմ ար. Հակոբյանց վանքի մատենադարան, ձեռ. № 370։

134. Մահճակալին պառկած հիվանդը երկու բժիշկների հետ Բժշկարանից։ Երուսաղեմ, սբ. Հակոբյանց վանքի մատենադարան, ձեռ. № 370։



136. Թագավորական ընտանիք։
Գագիկ Կարսեցու ավետարան, XI դ.
Երուսաղեմ, սբ. Հակոբյանց վանքի մատենադարան, ձեռ. № 2556։

ԳԱԲՐԵԼԻ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության

Հատոր Բ

Հրատ. խմբագիր Ա. Վ. Հովսիսյան
Նկարչական ձևավորումը Կ. Կ. Գաֆադարյանի
Տեխ. խմբագիրներ Հ. Մ. Մանուչարյան, Հ. Պ. Համալեյան
Սրբագրիչ Զ. Ի. Նարանյան

ИБ № 659

Հանձնված է շարվածքի 11.06.1986 թ.։ Մատրագրված է տպագրության 27.10.1987 թ.։ ՎՖ 05870։ Ձափը 70×90¹/₁₆։ Թուղթ № 1։ Տառատեսակ «գրքի սովորական», բարձր տպագրություն։ Պայմ. 34,25 մամ., տպագր. 22,75+ներդիր 8,5 մամուլ սև+8 գունավոր ներդիր։ Նկար։ Նևրկ. մամուլ 34,25։ Հրատ.-հաշվարկ. 29,35 մամուլ։ Տպաքանակ 2000։ Հրատ. № 7006։ Պատվեր № 430։ Գինը 5ռ. 05 կ.։

ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24 գ.։
Издательство АН АрмССР, 375019, Ереван, пр. Маршала Баграмяна 24 г.
ՀՍՍՀ ԳԱ հրատարակչության տպարան, 378310, ք. Էջմիածին։
Типография Издательства АН Арм ССР, 378310, г. Эчмиадзин.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0230843

A II 76071